

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳԻՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

17

Խմբագրություն
Ս. ԱՐԵՎՇԱՏՅԱՆԻ



«ՄԱԳԱՂԱԹ»
ԵՐԵՎԱՆ 2006

«Բանբեր Մատենադարանի»
գիտական ժողովածուի սոյն հատորը տպագրում է

«ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ» ԲՀ
ԲԱՐԵԳՈՐԾ ԱՆԴԱՄ
«ՍՐԲՈՅ ՆԱՀԱՏԱԿԱՅ» ՀԱՅՍՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ
(Նիւ Եօբ, ԱՄՆ)

նիւթական աջակցութեամբ եւ հովանաւորութեամբ:



Տպագրվում է Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական խորհրդի որոշմամբ

*«Բանբեր Մատենադարանի», շ. 17 Մաշտոցի անվան հին ձեռագրերի ին-տ. –
եր.: «Մագաղաթ» հրատ., 2006:
Շ. 17/ խմբ. Ս. Արեւշատյանի, 2006:*

*Մաշտոցի անվան Մատենադարանի «Բանբեր Մատենադարանի» գիտական
նյութերի ժողովածուն կոչված է որոշակիորեն պատասխանելու միջնադարյան
հայ մատենագրության հետ առնչվող ամենատարբեր մասնագիտության տեր
գիտնականներին հետաքրքրող հարցերին, ինչպես նաև գիտական ոլորտի մեջ
ներգրավելու ցարգ պատշաճ ուշադրության շարժանացած բազմաթիվ
միջնադարյան բնագրեր:*

Հ Ո Ւ Վ Ա Ծ Ն Ե Ր

Ս Ե Ն Ա Ր Ե Վ Շ Ա Տ Յ Ա Ն

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԵՎ ՀԱՅ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄԻՏՔԸ

Աստվածաշունչը, նրա Հին եւ Նոր կտակարանները մեծ ազդեցություն են ունեցել հայերի հոգեւոր կյանքի գրեթե բոլոր բնագավառների վրա: Այն վճռական դեր է խաղացել նաեւ հայ փիլիսոփայական մտքի ձեւավորման գործում: Իր համապարփակ, հանրագիտարանային բնույթով Աստվածաշունչը շոշափում էր այն ժամանակվա հասարակական գիտակցության բոլոր ասպարեզները՝ բարոյականությունը, իրավունքը, փիլիսոփայությունը, պատմագրությունը, հասարակական-քաղաքական միտքը եւ այլն: Սուրբ Գիրքը նոր կրոնի գրավոր հիմքն էր, առանց որի այն չէր կարող հաստատորեն արձատավորվել եւ հարատեւել: Հին եւ Նոր կտակարանների հայ թարգմանիչները ապահովեցին քրիստոնեության վերջնական հաղթանակը Հայաստանում: Աստվածաշունչից վերընձյուղեցին նոր աշխարհայացքի բոլոր ճյուղերը, էությունը ու բովանդակությամբ նոր հավատի եւ նոր գիտության բնագավառները: Հայ թարգմանիչները առաջին լուրջ փորձը կատարեցին բազմաթիվ ու տարաբնույթ գրական ու գիտական բնագավառների տերմինաբանության ստեղծման ուղղությամբ:

Աստվածաշունչը դարձավ կրթության բոլորովին նոր, հնից էապես տար-

բերվող դպրոցի հիմքը, մի դպրոց, որի բովով պարտավոր էր անցնել յուրաքանչյուր ուսյալ քրիստոնյա: Եթե նկատի ունենանք այն հեղինակությունը և ուժը, որն ավատատիրական հասարակության մեջ ուներ եկեղեցին, և այն անվիճելի փաստը, որ եկեղեցու ձեռքում էր գտնվում ողջ կրթական, գրական և քարոզչական գործը, ապա պարզ կդառնա Աստվածաշնչի դերը միջնադարյան գրականության և գիտության զարգացման ասպարեզում, մանավանդ վաղ ավատատիրության շրջանում, երբ քրիստոնեության ընդունումից հետո, հատկապես գրերի գյուտից հետո, եկեղեցու հայրերի նախաձեռնությամբ, անմիջական մասնակցությամբ ու հսկողության ներքո դրվեցին գրավոր մշակույթի, գրականության և գիտության հիմքերը: Այդ ժամանակաշրջանի բոլոր հեղինակների մտածելակերպը, աշխարհայացքը ներթափանցված և հագեցած էր Սուրբ Գրքի բովանդակությամբ: Ամեն մի գիտնական, մեկնիչ ու մտածող, իսկ այդպիսիք լինում էին վարդապետները և եկեղեցու այլ սպասավորները, պարտավոր էր իր մտքերը համաձայնեցնել Աստվածաշնչի դրույթների հետ, իսկ յուրաքանչյուր շեղում դիտվում էր որպես միտումնավոր կամ ակամա հերետիկոսություն: Այդ հանգամանքը, հասկանալի է, շափազանց կաշկանդում էր մտքի ազատ զարգացումը և վերածում գիտությունը եկեղեցու սպասավորի, հատկացնում փիլիսոփայությանը բիրլիական դրույթների մեկնաբանողի, «աստվածաբանության աղախնի» դեր, որը և սիրով ու ներքին համոզմամբ բարեխղճորեն կատարում էին ինչպես հայ, այնպես էլ այլ եկեղեցիներին պատկանող փիլիսոփաները և գիտնականները¹:

Եկեղեցական, աստվածաբանական մտածողության կնիքն արդեն իսկ կար թարգմանության ենթակա գործերում, վերջինս իր արտահայտությունն էր գտել այն գրականության ընտրության մեջ, որը պետք է թարգմանվեր առաջին հերթին, և, բնականաբար, հայ հեղինակների առաջին ինքնուրույն ստեղծագործություններում:

Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի, իսկ այնուհետև նրանց ավագ և կրտսեր աշակերտների ջանքերով ստեղծված բազմահարուստ թարգմանական գրականության ետնախորքի վրա հստակորեն ուրվագծվում է մի որոշակի ծրագիր, որը թարգմանչաց դպրոցի կողմից ընդունվել էր ի ղեկավարություն: 405 թվականից մինչև 460 թվականը, այսինքն՝ գրաբարի դասական շրջանում կատարված թարգմանությունները կարելի է հստակորեն տեղադրել ըստ քրիստոնեական գիտության և դպրության այն ժամանակ ընդունված դասակարգման ութը բաժինների.

¹ St' u Gilson E., La philosophie au Moyen Age (Des origines patristiques a la fin du XIV siècle). Paris, 1952, pp. 9-14.

- ա) աստվածաշնչագիտություն (բիրլիկա),
- բ) մեկնաբանություն (հերմենեւտիկա),
- գ) շատագուվություն (ապոլոգետիկա),
- դ) արարողագիտություն (լիտուրգիկա),
- ե) հայրաբանություն (պատրիստիկա),
- զ) սրբախոսություն (հագիոգրաֆիա),
- է) կանոնագիտություն (կանոնիկա),
- ը) պատմություն (հիստորիա)².

5-րդ դարի առաջին կեսի հայ դպրության քննությունը այդ դասակարգման լույսի տակ ցույց է տալիս, որ հայ գործիչների գրական-թարգմանչական աշխատանքը իրականացվում էր ոչ թե տարերայնորեն, այլ մտածված, նախապես մշակված պլանով եւ հետապնդում էր որոշակի հստակ նպատակ՝ թարգմանությունների միջոցով, հնարավորին շափ կարճ ժամկետում, ստեղծել նախադրյալներ սեփական, ազգային եկեղեցական գրականության համար, որն անհրաժեշտ էր հայոց եկեղեցու դիրքերի ամրապնդման համար:

Այդ ծրագրի համաձայն, որը Սահակ Պարթևի եւ Մեսրոպ Մաշտոցի կողմից դրվել էր թարգմանչաց դպրոցի գործունեության հիմքում, առաջին հերթին անհրաժեշտ էր իրագործել Աստվածաշնչի թարգմանությունը, բարդ եւ իր կառուցվածքով բազմաշերտ մի հուշարձանի, որը հանդիսանում էր պաշտոնապես ընդունված կրոնի հիմքը: Ծրագրի կարեւորագույն առաջին կետը՝ բիրլիկան, սկսեց իրականացվել գրերի գյուտից անմիջապես հետո, եւ այն, որպես հրատապ հասարակական, գիտական, գրական, եկեղեցական մի խնդիր, երեք տասնամյակ՝ 405-435 թվականներին, գտնվում էր ուշադրության կենտրոնում, մինչեւ որ հիմնականում շիրագործվեց երկրորդ, վերջնական թարգմանությունը:

Ծրագրի երկրորդ կետն ընդգրկում էր Աստվածաշնչի տարբեր մասերի, նրա Հին եւ Նոր կտակարանների մեկնաբանությունը, որն անհրաժեշտ էր Սուրբ Գրքի էության, կարեւորագույն գրույթների եւ առհասարակ քրիստոնեական ուսմունքի ճիշտ ըմբռնման համար: Ծրագրի այդ բաժինն սկսեց կատարվել առաջին կետի հետ գրեթե միաժամանակ: Թարգմանչաց դպրոցի գործունեության 40-50 տարիների ընթացքում թարգմանվեցին մեծ թվով մեկնողական գործեր, որոնք պատկանում էին եկեղեցու ճանաչված հայրերի գրչին, ինչպիսիք էին Բարսեղ Կեսարացին, Հովհան Ոսկերեբանը, Եփրեմ Ասորին, Կյուրեղ Ալեքսանդրացին եւ այլ մեծ հեղինակություններ:

² Տե՛ս Ակիմյան Ն., Դասական հայերենը. Վիեննա, 1932, էջ 26-27: Տե՛ս նաև Аревшатян С. С., Формирование философской науки в древней Армении. Ереван, 1973, с. 40-43.

Մեկնության հետ սերտորեն կապված էր շատագույությունը՝ ծրագրի երրորդ բաժինը, որի նպատակն էր հեթանոս կրոնի և աշխարհայացքի հետևորդների հարձակումներից քրիստոնեական ուսմունքի պաշտպանությունը, քրիստոնեական ուսմունքի արդարացումը և փիլիսոփայական հիմնավորումը՝ այլ կրոնների հետ մղած պայքարում: Ջատագույության գծով թարգմանվեցին Արիստիդես Աթենացու, Մեթոդիոս Ուլիմպացու, Եպիփան Կիպրացու, Հիպոլիտի և այլոց երկերը: Ջատագույների աշխատություններում առավել ցայտուն էր դրսևորվում քրիստոնեության փիլիսոփայությունը, որը իրեն հակադրում էր անտիկ փիլիսոփայությանը և պոլիթեիզմին, հատկապես մատերիալիստական ուսմունքներին: Հունական շատագույների բացած ճանապարհով ընթացան և առաջին հայ մտածողները, Մեսրոպ Մաշտոցը և Եզնիկ Կողբացին, որոնք իրենց ինքնուրույն երկասիրություններում առատորեն օգտագործել են հույն շատագույների երկերը:

Այնուհետև, ըստ վերը նշված ծրագրի, հնագույն թարգմանությունները խմբավորվում են հետևյալ բաժիններով. պաշտոնեղություն-արարողագիտության ճյուղին վերաբերող գրականություն (պատարագամատույց, ժամագիրք և այլն), հայրաբանություն (եկեղեցու հայրերի բարոյագիտական երկեր, ճառեր, թղթեր, կրոնափիլիսոփայական խորհրդածություններ), սրբախոսություն (սուրբ հայրերի, անվանի քրիստոնյաների վարքեր և հավատքի համար զոհվածների վկայաբանություններ), կանոնական երկեր (եկեղեցական ժողովների և եկեղեցու հեղինակավոր գործիչների կողմից սահմանված կանոններ, որոշումներ, կանոնական սահմանադրություններ), պատմական երկեր, որոնք նվիրված են եկեղեցու պատմությանը, նրա ձևավորմանը, հեթանոսության դեմ մղած պայքարին ու հաղթանակին, տարբեր երկրների և ժողովուրդների պատմության լուսաբանմանը՝ աստվածաշնչյան դրույթների և եկեղեցու պատմության կարեւոր փուլերի ետնախորքերի վրա):

Այս հարուստ և բազմաբնույթ թարգմանական գրականությունը մեծ դեր խաղաց հայ փիլիսոփայության ձևավորման գործում: Այն հանդիսացավ յուրատեսակ մի դպրոց ինքնուրույն երկերի ստեղծման համար, նպաստելով ժամանակի կենսական նշանակություն ունեցող, հոգեւոր ու գիտական լիցք կրող գաղափարների, հասկացությունների և տերմինաբանության բյուրեղացմանը:

Եթե մինչև 430-ական թվականների կեսերը հայ գործիչների հիմնական ուշադրությունը կենտրոնացված էր թարգմանությունների վրա, ապա 430-ական թվականներից և հատկապես 40-ական թվականներին, երբ նախանշված թարգմանությունների մեծագույն մասը արդեն կատարված էր, գրական ասպարեզում երեւան են գալիս հայ հեղինակների գործերը, գրված

նույն դասական հայերենով, որը բնորոշ է նշված հնագույն շրջանի թարգմանություններին:

Հայ հեղինակներին մինչև 430-ական թվականների երկերին են պատկանում «Սահակ Պարթևի կանոնները», «Հաճախապատում ճառերը»: 430-ական թվականներին հրապարակի վրա էին Ագաթանգեղոսի անունով հրապարակված «Հայոց պատմության» առաջին, հնագույն տարբերակը եւ Սահակ Պարթևի Թղթերը՝ ուղղված Պրոկլ և Ակակիոս եպիսկոպոսներին:

440-ական թվականներին են ստեղծվել Կորյունի «Մաշտոցի վարքը», Շահապիվանի կանոնները եւ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը»:

Բոլոր այդ հնագույն հայկական երկերը ճշտորեն համապատասխանում են այն ծրագրին, որը դրված էր թարգմանական գործունեության հիմքում: Նրանք իրենց հերթին հիմք հանդիսացան հայ ջատագովության, հայրաբանության, վարքագրության, կանոնագիտության եւ պատմագրության համար:

Այդ երկերից Աստվածաշնչի ուղղակի օգտագործմամբ եւ նրա կարեւորագույն դրույթների արծարծմամբ աչքի են ընկնում «Հաճախապատում ճառերը», «Գրիգոր Լուսավորչի վարդապետությունը» եւ «Եղծ աղանդոցը», հայ ջատագովության եւ հայրաբանության ամենակարեւոր հուշարձանները: Նրանց հեղինակները, Մաշտոցն ու Եզնիկ Կողբացին հայ փիլիսոփայական մտքի հենց ակունքներում, ինչպես քրիստոնեական փիլիսոփայության հիմնադիրները, հետապնդել են երկու հիմնական նպատակ: Առաջինը՝ քրիստոնեության կարեւորագույն դրույթների հիմնավորումը եւ նրանց փիլիսոփայական-աստվածաբանական մեկնաբանումը: Ակներախ է հեղինակների ձգտումը իրագործել հայրաբանության հիմնական խնդիրը, այն է՝ փիլիսոփայորեն ըմբռնել կրոնական դոգմաները, ամրապնդել հավատը բանական փաստարկներով եւ ընդունելի դարձնել մտքի համար: Երկրորդ նպատակը՝ քրիստոնեական ուսմունքի հիմքերի պաշտպանությունը տարբեր հեթանոսական պատկերացումների հետ մղած պայքարում, քրիստոնեական մոնոթեիզմի դիրքերից հերքել պարսից կրոնը, նրա դուալիստական ուսմունքը:

Հայրաբանական ուղղության մեջ հստակ ձեւավորվել է քրիստոնեական փիլիսոփայության՝ Աստվածաշնչի վրա հիմնված մեկնողական բնույթը, նրա ուղղվածությունը հակադիր ուսմունքների եւ այլ կրոնների դեմ: Այդ բնույթը եւ քննադատական մեթոդը շատ լավ ձեւակերպել է Եզնիկ Կողբացին, հատուկ շեշտելով, որ «Աստծո եկեղեցու գործն է արտաքիններին հերքել առանց Ս. Գրքի օգնության, իսկ ներքիններին՝ կարծեցյալ եւ մոլորյալ (քրիստոնյաներին) մերկացնել Ս. Գրքի միջոցով»³:

³ Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց. Թիֆլիս, 1914, էջ 78:

Այդ սկզբունքը լայնորեն կիրառվում էր ողջ միջնադարի ընթացքում, սկսած Մեսրոպ Մաշտոցից, Եզնիկից ու Եղիշեից, այսինքն՝ հայ շատագուժության եւ հայրաբանության ձեւավորման շրջանից մինչեւ Հովհան Որոտնեցի եւ Գրիգոր Տաթևացի: Միջնադարյան փիլիսոփայության մեկնողական բնույթը, աստվածաբանությանը ծառայելու, կրոնական ճշմարտությունները փիլիսոփայորեն քննելու եւ հիմնավորելու ձգտումը եղավ բավականին արգասավոր: Այդ փիլիսոփայությունը հատուկ ավանդապաշտությունը եւ հեղինակապաշտությունը, մոտավորապես մեկ հազարամյակ նույն խնդիրների արժարժումը պարտադրում էր հայ մտածողներին նորից ու նորից քննել ու մեկնաբանել Աստվածաշունչը, օգտագործելով եւ հայ դասականներին, եւ թարգմանությունների շնորհիվ հարազատ դարձած հույն եւ ասորի քրիստոնյա մտածողների ժառանգությունը, ինչպես նաեւ քրիստոնեություն ընկալված անտիկ փիլիսոփայության ներկայացուցիչներից Պլատոնի, Փիլոն Ալեքսանդրացու ու Պլոտինի գաղափարները⁴:

Քրիստոնեական փիլիսոփայությունն իր բոլոր հիմնական կարեւորագույն գրույթներով եւ բնորոշ հատկանիշներով հենվում էր Աստվածաշնչի վրա եւ զարգացնում նրա գաղափարները՝ մեկնողական սկզբունքով: Բայց ոչ բոլոր գրքերը հավասարապես: Հայրաբանության ամենավաղ շրջանից սկսած քրիստոնյա տեսաբանների եւ գաղափարախոսների ուշագրությանն էր արժանացել Աստվածաշնչի հենց առաջին կոթողը՝ Ծննդոց գիրքը, որը ծնել ու սնել է փիլիսոփա-աստվածաբանների տիեզերաբանությունը: «Վեցօրյա արարչագործությանը» նվիրված մեկնաբանությունները պարունակում են միջնադարի քրիստոնյա փիլիսոփաների տիեզերաբանական խորհրդածությունները, աշխարհի արարման գաղափարը, որը քննվում եւ լուսաբանվում է բուն արարչի գաղափարի հետ միասին: «Ծննդոց գրքի» առաջին, երկրորդ եւ երրորդ գլուխները հիմք եւ ելակետ են հանդիսացել միջնադարյան փիլիսոփայության համար, բնորոշելով նրա իմաստաբովանդակային, գաղափարախոսական այնպիսի առանձնահատկությունները, ինչպիսիք են ստեղծապաշտությունը (կրեացիոնիզմ), միաստվածականությունը (մոնոթեիզմ) եւ նախախնամապաշտությունը (պրովիդենցիալիզմ), ինչպես եւ քրիստոնեական տիեզերաբանությունը (կոսմոգոնիա) եւ մարդաբանությունը (անթրոպոլոգիա): Ցայտուն ձեւով այդ առանձնահատկությունները դրսևորվել են «Հաճախապատում ճառերում», շատ վաղ թարգմանված եւ հայ փիլիսոփաների համար հարազատ դարձած Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայք»-ում, «Գրիգոր Լուսա-

⁴ Ավելի մանրամասն տե՛ս Արևշատյան Ս. Ս., Формирование философской науки в древней Армении, сс. 119-131, 150-153, 225-227.

վորչի Վարդապետություն»-ում, եղիշեի «Արարածոց մեկնության» մեջ: Շուրջ մեկ հազարամյակ, մինչև Գրիգոր Տաթևացու «Հարցմանց գիրքը» և նրա հանձնարարությամբ գրված Մատթեոս Զուղայեցու «Վեցօրեա արարչության մեկնությունը», այդ հիմնախնդիրները եղել են հայ իմաստասերների ուշագրության կենտրոնում, հարստացնելով հայ փիլիսոփայության շտեմարանը:

«Հնգամատյանի» մյուս գրքերում՝ Նլից, Աետացոց և Երկրորդ Օրենքում պարունակվող գաղափարները, ինչպիսիք են՝ Աստծո էության, նրա անիմանալի լինելու, աստվածահաճո վարքի և բարոյականության, հնազանդության, Արարչին անվերապահորեն ընդունելու և հավատալու հիմնադրույթները կազմեցին ողջ միջնադարյան, այդ թվում և հայ քրիստոնեական փիլիսոփայության ատաղձը: Նույն այդ գաղափարներն ավելի մանրամասն քննվում են Հին կտակարանի մյուս գրքերում, հատկապես խրատական (դիդակտիկ) և մարգարեական գրքերում, որոնցից առավել շատ մեկնությունների էին արժանացել Հորի գիրքը, Նսայու մարգարեությունը, Գավթի Սաղմոսները, Սողոմոնի Առակաց, Ժողովողի և Իմաստության գրքերը:

Մեկնողական գրականության մեջ, քարոզներում և ճառերում ետդասական շրջանի հեղինակների մոտ, Հովհան Մանդակունուց, Մամբրե Վերձանողից սկսած մինչև Ներսես Շնորհալի և Լամբրոնացի, այնուհետև Հովհաննես Երզնկացի և Տաթևյան դպրոցի իմաստասիրող վարդապետներ, քննվում և մեկնաբանվում են վերոնշյալ գրքերից բխող գաղափարները, այն է՝ դեպի իմաստություն և գիտություն տանում է հավատը, իմաստության աղբյուրը աստծո խոսքն է, աստված մի է և միասնական, նա է ամեն ինչի արարիչն ու տերը, որ ստեղծել է տիեզերքը իր հղացած ծրագրով, ստեղծել է մարդուն իր նմանությամբ ու կերպարանքով, ստեղծել է նրան անձնիշխան, ազատ կամքով, շարն ու բարին զանազանելու և ընտրություն կատարելու կարողությամբ՝ հավերժական կյանքի համար, իսկ մահը եկավ սատանայից՝ նրա գայթակղություններին ենթարկվելու պատճառով, մարդն ինքը պատասխանատու է իր մեղքերի համար, որոնք պետք է քավի բարի գործերով: Երկրային կյանքը ունայն է, «ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է»: Առաքինի, իմաստուն և աստվածավախ հավատացյալների տանջանքները և մեղսագործ, շարագործ մարդկանց անպատիժ ապրելը ժամանակավոր են, հանդերձյալ ահեղ դատաստանը բոլորին կհատուցի ըստ արժանվույն, աստվածային գերիմաստությունը նախախնամությամբ վարում է մարդկության պատմությունը⁵:

⁵ Ст'ю Майоров Г. Г., Формирование средневековой философии. Москва, 1979, сс. 37-38, 42.

Հին կտակարանից եկող այս գաղափարները մեծապես ազդել են քրիստոնեական փիլիսոփայության եւ աշխարհայացքի ձեւավորման վրա, նրա տիեզերաբանական, գոյաբանական, մարդաբանական հասկացությունների եւ ուսմունքների վրա:

Ինչ վերաբերում է նոր կտակարանին, ապա այն հանդիսացավ քրիստոնեական փիլիսոփայության բարոյագիտության հիմքը: Մատթեոսի Ավետարանի մեջ պարունակվող Լեռան քարոզը բարոյական նոր ուսմունքի, աշխարհը հեղաշրջող, հուղայականությանը հակադրվող սիրո փիլիսոփայությունը դարձավ աստվածաբան-փիլիսոփաների միտքն անընդհատ սնող աղբյուր: Քրիստոնեության բերած սիրո հասկացությունը, նրա վրա հիմնված բարոյական նոր ուսմունքը դարեր շարունակ մնաց միջնադարյան մտածողների եւ բանաստեղծների ներշնչանքի կիզակետում, հատկապես խորհրդապաշտ փիլիսոփաների եւ պոետների համար: Փիլիսոփայական առումով ոչ պակաս կարեւոր են նաեւ Հովհանու Ավետարանը եւ Պողոս առաքյալի թղթերը: Այդ հոգեւոր մասունքներից իրենց գաղափարներն էին քաղում միջնադարի քրիստոնյա փիլիսոփաները, Հովհանու Ավետարանից՝ մարմնացված աստծո, Քրիստոս-Մեսիայի՝ լոգոսի նույնացման մասին, աստվածային խոսքի, մտավոր լույսի վերաբերյալ ուսմունքը, իսկ Պողոսի թղթերից՝ ազատության եւ նախախնամության, բնության եւ աստվածային շնորհի, գիտության եւ հավատի առնչակցության վերաբերյալ բուն քրիստոնեական գաղափարները, դարձնելով դրանք բազմաթիվ խորիմաստ եւ նրբահյուս մեկնությունների առարկա⁶:

Ի վերջո պետք է նշել, որ հայ փիլիսոփայական միտքը, ինչպես եւ այլ միջնադարյան քրիստոնյա ժողովուրդների փիլիսոփայությունը, արդեն իր ձեւավորման շրջանից օգտվել ու հարստացվել է հելլենիստական փիլիսոփայության համահունչ գաղափարներով, հատկապես աշխարհի վերջալույսին ծնված նորպլատոնական ուսմունքից: Այդ տեսակետից հայ իրականության համար բնորոշ էր Դավիթ Անհաղթի դերը, մի փիլիսոփայի, որը կապող օղակ հանդիսացավ անտիկ աշխարհի գիտության եւ քրիստոնեական փիլիսոփայության միջեւ⁷: Նրա շնորհիվ փիլիսոփայության ինքնուրույնությունը պահպանվեց իմացաբանության եւ տրամաբանության ոլորտներում, թեեւ նրանք էլ ի վերջո օգտագործվում էին նույն աստվածաշնչական ճշմարտությունների բանական հիմնավորումների համար: Աշխարհիկ ճյուղն իր

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 44-45:

⁷ Տե՛ս Արեշատյան Ս., Դավիթ Անհաղթը՝ հին Հայաստանի ականավոր փիլիսոփա. Երեւան, 1980, էջ 45-49, 60-63, 97-102:

հարաբերական ինքնուրույնությունը պահպանեց մինչև միջնադարի վերջը, չձուլվելով կրոնափիլիսոփայության հետ:

Հարուստ մեկնողական գրականությունը, որ հայ իրականության մեջ ստեղծվեց Աստվածաշնչի գաղափարների բացատրության և հիմնավորման համար, դարձավ հայ հոգեւոր մշակույթի արժեքավոր բաղադրիչը, փիլիսոփայական մտքի կողմից հայոց եկեղեցուն և մշակույթին բերած մեծարժեք ավանդը:

Մ. ԳԱՐԲԻՆՅԱՆ-ՄԵԼԻՔՅԱՆ

ՔՈՎՄԱՅԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՆՆ ԱՐԾՐՈՒՆԵԱՅ»-Ի ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ԱՐԾՐՈՒՆԻ ԻՇԽԱՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՍՊԵԼԸ¹

Սկսելով «Պատմութիւն տանն Արծրունեաց»-ի շարադրանքը, Քովման առաջաբանում հետեւյալ կերպ է ներկայացրել իր առջեւ դրված խնդիրները՝ «...ներքադրեալ ի յիշատակարանս մատենից զնախնեացն քոց զազգաբանութիւն կարգաւ ածել, զթիւան ըստ ծննդոց իւրաքանչիւրոց մինչ առ մեզ զբովանդակութիւնն շափաբերել, եւ որ վասն անցիցն Հայոց ի տաճկաց պետութիւնէն ներգործեցաւ ... եւ ի հին պատմագրաց զմեր բնիկ տերանցն տոհմին Արծրունեաց զիրն եւ զտեղին բացայայտեսցուք ի պատմութեան աստ, զի յայտ յանդիման երեւեսցին արիութիւնք առաքինութեանց ըստ անուանց եւ տեղաց եւ ժամանակաց» (I, էջ 10): Այսպիսով, նա իր առջեւ երկու խնդիր է դնում՝ 1. ստեղծել Արծրունիների տոհմի ծագումնաբանությունը, ցույց տալով նրանց տեղն ու դերը հայոց պատմությունում եւ 2. գրել ժամանակակից պատմությունը: Այդ խնդիրները լուծելու համար «...որ ինչ ընդ այսոքիւք պատկանի ստորագութիւնք զբուցատրութեանց՝ համառօտեսցուք ի մատեանս այսոսիկ, ըստ կարի մերում օժանդակեալ ի գրոց պատմութեանց մարգարէականաց եւ նորուց վարդապետաց եկեղեցւոյ Քրիստոսի, եւ արտաքին վիպապատմացն աշխատասէր եւ մտահարուստ արանց» (I, էջ 10): Այսպես, Քովման պարագծում է աղբյուրների այն շրջանակը, որի վրա հենվել է իր գիրքը գրելիս:

Աղբյուրագիտական տեսակետից «Պատմութիւն տանն Արծրունեաց»-ը կարելի է բաժանել երկու մասի: Առաջին, կոմպիլյատիվ մասի մեջ մտնում են առաջին եւ երկրորդ գրքերը, ինչպես նաեւ երրորդ գրքի մոտավորապես սկզբնական 20 գլուխները, որից հետո, կարելի է վստահ ասել, սկսվում է Քովմայի ինքնուրույն շարադրանքը, այսինքն՝ աղբյուրագիտական

¹ Սույն հոդվածը մեր՝ Քովմայի «Պատմության» ուսերեն քաղցմանությանը կից (Երևան, 2001) առաջաբանի մի մասի վերամշակված տարբերակն է:

տեսակետից երկրորդ մասը:

Իր գործը գրելիս Քովման օգտվել է բոլոր մատչելի աղբյուրներից՝ գրավոր, բանավոր (ավանդույթներ, առասպելներ, ականատեսների վկայություններ) եւ նյութական (քաղաքների, տաճարների, ջրարաշխման համակարգերի, պաշտպանական կառույցների նկարագրություններ):

Հին հայոց մատենագրության հուշարձաններից Քովմայի Պատմության առաջին գրքի հիմնական աղբյուրներն են՝ 1. Մովսես Խորենացու «Հայոց Պատմությունը», որտեղից նա փոխ է առնում պատմական տվյալներ եւ որին ձգտում է նմանվել ստեղծագործության կառուցվածքի, լեզվի, ոճի, ինչպես նաեւ պատմական նյութերի մշակման ձևերի տեսակետից, 2. Եվսեբիոս Կեսարացու երկմասնյա Քրոնիկոնը, որից նա քաղել է բազմաթիվ տեղեկություններ հին աշխարհի, հատկապես Ասորեստանի պատմությունից եւ ասորեստանյան թագավորների անվանացանկերը: Այս երկու հիմնական աղբյուրներից քաղած նյութերը հարստացվում են լրացուցիչ աղբյուրների նյութերով, ինչպիսիք են՝ Փավստոս Բուզանդը, Ղազար Փարպեցին, Փիլոն Ալեքսանդրացին, Եպիփան Կիպրացին, Եղիշեն, Ագաթանգեղոսը, «Պատմութիւն Աղէքսանդրի Մակեդոնացոյ», 7-րդ դարի «Անանուն աշխարհագրութիւն»-ը, «Անկանոն գիրք Հին կտակարանի», Աբրահամ Խոստովանողի «Համառօտութիւն»-ը, «Պատմութիւն վասն Դաւթի եւ Մովսէսի» անվավեր պատմվածքը:

Քովման միշտ չէ, որ հիշատակում է իր աղբյուրները: Այսպես, գրքի սկզբում հիշատակելով Մովսես Խորենացուն եւ Եվսեբիոս Կեսարացուն, նա իր հետագա շարադրանքի ընթացքում հղումներ է անում այն դեպքում, երբ հաղորդվող, իր տեսակետից կարելու փաստը կարոտ է որեւէ հեղինակավոր աղբյուրի լրացուցիչ վկայակոչման, ընդ որում, նա հաճախ վկայակոչում է ոչ միայն տվյալ տեղեկության իրապես գոյություն ունեցող աղբյուրը, այլ նաեւ աղբյուրներ, որոնք չէին կարող ծառայել նրան որպես այդպիսիք, ինչպես, օրինակ, Հուլիանոս Հալիկարնացու 4-րդ գիրքը: Երբեմն ինչ-որ մի աղբյուրից քաղած տեղեկությունը նա վերագրում է մեկ ուրիշին, օրինակ՝ պատմելով ինչպես Սեմը տեղափոխել է Ադամի ոսկորները տապան, իսկ ջրհեղեղից հետո թաղել Գողգոթայում, Քովման վկայակոչում է Փիլոն Ալեքսանդրացուն, մինչդեռ սույն տեղեկությունը քաղել է Հին կտակարանի անվավեր գրքերից²:

² Տե՛ս՝ «Քանգարան հին եւ նոր նախնեաց. Ա. Անկանոն գիրք, Բ. Անկանոն գիրք Հին կտակարանի», էջ 26. Վարդան պատմիչը նույնպես գրում է, որ երբ Նոյը դուրս եկավ տապանից, ապա բաժանեց երկիրը իր երեւ որդիների միջեւ, «Եւ մասն ինչ յարեւմտից հատեալ՝ եւ Մանիսոնի, որ խնդրեաց յոսկերացն Ադամայ, որ ունէր Նոյ ի տապան...» /Մեծին Վարդանայ Բարձրաբերդեցոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1911, էջ 15:

Սովորաբար այդ տեսակ ճշմարտանման, սակայն անվավեր հղումներ Քովման անում է այն դեպքում, երբ ձգտում է ավելի շահավետ լույսի տակ ներկայացնել Արծրունյաց տոհմի իշխաններին եւ հիմնավորել նրանց քաղաքական նշանակալիությունն ու սեփականատիրական իրավունքը:

Պատմելով, օրինակ, թե ինչպես 871 թ. Աշոտ Արծրունին փորձեց վերագարձնել Վասպուրականի իշխանների տիրակալության ներքո Ամյուկ ամրոցը, որտեղ մոտ հարյուր տարի դրանից առաջ հաստատվել են Ութմանիկ արաբական ցեղի ներկայացուցիչները, Քովման գրում է. «Բայց Աշոտ գնացեալ տալ պատերազմ ընդ ծովեզրեցիսն, որք Ութմանիկ կոչին, որք ամրանային ի յԱմիւկ անկասկածելի քարանձախն, վասն զի ըստ Պտղոմեայ եւ Աղէքսանդրի (Պապպի) սահմանադրութեանն, կամ թէ մեր Արտաշէսի որդւոյ Սանատրկոյ՝ ի Վասպուրական գաւառացն համար թուեալ է գաւառն այն, զոր ճ ամոյ առաջ հանեալ էր բռնկալութիւնն տաճկաց ի Վասպուրական պետութենէ», (III, էջ 18): Սույն հատվածում նկատելի է Քովմայի որոշակի միտումը՝ հիմնավորել Արծրունյաց իշխանների տիրակալական իրավունքը Ամյուկ ամրոցի նկատմամբ հղումով հին հեղինակությունների վրա: Աշխարհագրական առումով այդպիսիք էին Պտղոմեոսը եւ Պապպը, իսկ քաղաքական տեսակետից, որպես այդ իրավունքի երաշխավորողը ներկայացվում է Արտաշես թագավորը: Այդ անունները Քովման քաղել է 7-րդ դ. հայոց աշխարհագրությունից, որտեղ բազմիցս հիշատակվում են Պտղոմեոսը եւ Պապպը, մի անգամ Ամյուկ բերդը, մի անգամ էլ Արտաշես թագավորը: Քովման օգտագործել է Աշխարհագրությունում հիշատակված այդ անունները եւ դրանք միացրել իրեն անհրաժեշտ իմաստավորմամբ: Ի դեպ, դա Քովմայի երրորդ գրքում գրավոր աղբյուրի միակ հղումն է:

Նույն տեսակի վկայակոչումների շարքը պետք է դասել նաեւ Քովմայի հղումը Մամբրե Վերձանողի, Մովսեսի եւ Թեոդորոս Քերթոզի վրա: Հստ Քովմայի՝ Կղեոպատրան «...թագաւորեալ Եգիպտոսի եւ Աղէքսանդրի եւ բացեալ գտուն զիւանապահ մատենիցն եւ գտեալ զսերունդն Սենեքերիմայ, ...ես տանել զդիւանն մագաղաթեայ յունարէն գրով հանդերձ պատարագօք՝ Տիգրանայ թագաւորի Հայոց, որ շորրորդ կացեալ թագաւոր ի Վաղարշակէ Պարթեւէ... Իսկ առ մեզ հասին զրոյցքս այս ըստ մնացորդաց պատմագրացն առաջնոցն, ի Մամբրէէ Վերձանողէ եւ ի նորուն եղբօրէ Մովսէս կոչեցելոյ, եւ միւսումն Թէոդորոս Քերթոզ, որք լեալ էին յաշակերտութենէ Ղեւոնդ քահանայի... Սոքա հրամանաւ Վահանայ Արծրունւոյ փոյթ յանձին կալեալ՝ խուզել քննել կարգել ի համառօտ բանս զաճմունս ազգացն անցելոց...», եւ դրանց թվում, պետք է ենթադրել, նաեւ Արծրունյաց տոհմին: Քննվող հատվածը զուգորդվում է Մովսես Խորենացու 2-րդ գրքի 10-րդ գլխի հետ,



որտեղ վերջինս սկսում է «...պատմել քեզ ի հինգերորդ գրոցն Ափրիկանոսի ժամանակագրի, որում վկայէ Յովսեպոս եւ Հիւպոդիտայ եւ այլք բազումք ի Յունաց: Քանզի նա բովանդակ փոխադրեաց որ ինչ քարտեսս դիւանին եղեսիայ ...որ յաղագս թագաւորաց մերոց պատմեր ... եւ վկայ քեզ ի մօտոյ երաշխաւորեսցէ եկլէսիաստէ գիրք Եվսեբի Կեսարացոյ, զոր ետ թարգմանել երանելի վարդապետն մեր Մաշտոց ի հայ լեզու: Խնդիր արացես ...ի գաւառն Սիւնեաց, եւ գտցես յառաջին հագներգութեան յերեքտասաներորդ թուին, զի վկայէ յեղեսիայ դիւանին լինել ամենայն գործոց առաջնոց թագաւորացն մերոց մինչեւ ցԱբգար, եւ զկնի Աբգարու մինչեւ Երուանդ: Որ եւ այժմ կարծեմ գտանի պահեալ ի նոյն քաղաքի»: (II, 10)³:

Ինչպես Մովսես Խորենացու, այնպես էլ Թովմայի մոտ հանդես են գալիս հին արխիվներում հայտնաբերված ձեռագրերը, երկուսի մոտ էլ դրանք թարգմանվում են համապատասխանորեն՝ ասորերենից հունարեն եւ հունարենից՝ հայերեն: Մով. Խոր. որպես աղբյուր է օգտագործում Ափրիկանոսին, որը իրագործել է թարգմանությունը, ինչը վկայում են Հովսեփը եւ Հյուպոդիտը, իսկ Թով. Աբձ.՝ Մամբրեի զրույցների գիրքը, որի թարգմանությունը Մամբրեն կատարել է Մովսեսի եւ Թեոդորոս Քերթոզի օգնությամբ (որպես զուգահեռ Մով. մոտ ներկայացրած անունների), վերջապես Մով. Խոր. հիշատակում է երանելի ուսուցիչ Մաշտոցին, Եվսեբիոս Կեսարացու վկայաբերված եկեղեցական պատմության թարգմանչին, իսկ Թովման՝ Ղեւոնդ քահանային, երեք վերոհիշյալ ժամանակագիրների ուսուցչին: Սյուժետային գծերի նմանությունը ակնհայտ է:

Մամբրեն, ինչպես հայտնի է⁴, ծնվել է 5-րդ դ. երկրորդ կեսին, ուսումը ստացել է Հունաստանում, որտեղ նրա աշակերտակիցներն էին Մովսեսը, Դավիթը, Աբրահամը եւ Պողոսը (այսպես կոչված աշակերտների երկրորդ խումբը, առաջին խումբը ուղարկվել է Հունաստան Սահակ Պարթևի օրոք), որոնց հետ նա վերադարձել է Հայաստան Վահան Մամիկոնյանի մարզպանության (485-506) օրոք⁵: Նրա գրական գործունեությունը համընկնում է 5-րդ դ. վերջի - 6-րդ դարի առաջին տասնամյակների հետ, ինչը հաստատվում է

³ Եկեղեցական պատմության առաջին գրքի 13-րդ գլխում եվս. Կես. գրում է «Ունիս հեզ վկայութիւն յիշատակաց ի դիւանէ անտի եղեսիայ հաղաքէ, յորում բազատեացն Աբգար: Ի յիշատակարանս հասարակաց յորս վաղեմի անց պատմութեան հաղաքին եւ գործի հաշութեան Աբգարու դրոշմեալ կային, գտաք եւ զայսոսիք պահեալ մինչև մեր ժամանակս. եւ չէ ինչ անդէպ լսել զնոյն բողոք, զոր առեալ է մեր ի տանէ անտի դիւանին, եւ յԱսորոց բարբառոյն յղեալ ի Յոյն ...» (էջ 60-61):

⁴ Տե՛ս Ն. Անդրիկյանի հանգամանալից հոդվածը՝ «Մամբրէ Վերձանող», «Բագմավկայ», Վենետիկ, 1904, էջ 298-304, 352-358:

⁵ Նոյն տեղը, էջ 301-302:

նաեւ նրա «Վերծանող» մականվամբ, որը, ինչպէս նաեւ «Քերթող» ու «Քերթողահայր» բառերը գրական շրջանառութեան մեջ է մտել սկսած 6-րդ դարից⁶:

Թովման, առաջինը հայ միջնադարյան պատմիչներից, հիշատակում է Մամբրե Վերծանողին, ընդ որում, որպէս սուրբ Սահակ Պարթևի եւ սուրբ Մեսրոպ Մաշտոցի ժամանակակցի, մինչդեռ այդ անունը անձանոթ է 5-րդ դ. մատենագիրներին⁷: Դա մտածել է տալիս, որ գոյութիւն ունէր ինչ-որ մի աղբյուր, որը պետք է փնտրել 7-8-րդ դարերում: Թվում է, որ այդ աղբյուրն է անվավեր մի գրվածք, որը մեզ հասել է հետեւյալ վերնագրի տակ. «Պատմութիւն սուրբ վարդապետաց Հայոց Մովսէսի Քերթողի եւ Դաթի Անյաղթ փիլիսոփայի, որ կոչի էակք»⁸, «Սուրբ վարդապետաց Մովսիսի եւ Դաթի հարցմունք ընդ երկաթնակ շարափառսն»⁹, «Վիճաբանութեան գիրք Դաթի եւ Մովսէսի հորենացոյ ընդ Քաղկեդոնս»¹⁰, «Յաղագս սրբոց վարդապետաց Հայոց Մովսէսի եւ Դաթի»¹¹:

Սույն անվավեր գրվածքին կից ձեռագրերում առկա է հիշատակարանը, որը պահպանվել է մի քանի տարբերակներով¹²: Ըստ երեւույթին, իր նախնական տեսքին ավելի մոտ է այն տարբերակը, որը պահպանվել է 1313 թ. Երուսաղեմի ձեռագրում. «Եւ այդ յետ բազում ժամանակաց գրեաց զգիրս զայս, իբրեւ Աստուած հասոյց զմեզ ի ժամանակս յայս, յորում եւթանասուն ու վեց էր թուականն հայոց (-627): Ես քարտուղարս Հայոց եւ սուրբ թագաւորացն պռտոտսպաթար ստացող եղէ գրոցս այսմ: Բայց զարմանալի է ի նախկի յիշատակի գրոցս յայսմիկ, եթէ գրեցաւ (գիրքս այս) էակս հրամանաւ թարգ-

⁶ Նույն տեղը, էջ 304: Պ. Անանեան, Մովսէս Քերթողահայր եւ Մովսէս Խորենացի, «Բազմավեպ», Վենետիկ, 1991, քիվ 1-2, էջ 20-21:

⁷ Ն. Անդրիկյանը ենթադրում է, որ Մամբրեի անունը կարող է հիշատակված լինել ի քիվս այլ աշակերտների, Վահան Մամիկոնյանին հասցեագրված Ղազար Փարպեցու Թղթի (6-րդ դ. սկիզբը) այն երկու կոտաված էջերում, որտեղ գտնվում էր աշակերտների անվանացանկի շարունակությունը (էջ 302-303):

⁸ Գարեգին Ա. կաթողիկոս. Յիշատակարանն ձեռագրաց, հ. 1, Անթիլիաս 1951, էջ 17-18:

⁹ Հայ ձեռագրերի հիշատակարաններ. կազմեց Ա. Ս. Մաթեոսյան, Եր., 1989, էջ 13:

¹⁰ «Հնոց եւ նորոց». հրատարակեց Գարեգին վ. Սրուանձտեանց. Կ. Պոլիս, 1874, էջ 147-149: Սույն վերնագիրը մեջ է բերվում Մշո սուրբ Կարապետի ձեռագրերի ցուցակում (էջ 140-149):

¹¹ Նույն տեղում, էջ 87:

¹² Դրանցից երկուսը իր ուսումնասիրությունում ներկայացնում է Ն. Անդրիկյանը, ընդգծելով, որ հիշատակարանի տեղեկություններն անվավեր են ու ոչինչ չեն հաղորդում Մամբրեի կյանքի ժամանակի եւ նրա երկերի մասին: Ելնելով գրվածքի նեստորականների դեմ բանավիճական ուղղվածությունից, Ա. Անդրիկյանը այն քվագրում է 6-րդ դ. 30-ական քվականներով (նույն տեղ, էջ 301):

մանեալ ի յունաց ի հայս տէառն Յովհաննիսի Հայոց կաթողիկոսի Գարեղենացոյ ի քսանուհինգերորդի (-576) թուականութեան Հայոց»¹³:

Հիշատակարանի երկրորդ տարբերակը ներկայացրել են Գ. Սրվանձտյանցը¹⁴ եւ Ա. Մաթեոսյանը¹⁵. այն նախորդից տարբերվում է վերջում ավելացրած նախադասությամբ՝ «վկայէ այսմիկ Սարգիս Արաբացի եպիսկոպոս ճշմարիտ վկայութեամբ», ինչպես նաեւ սկզբնական տողով¹⁶:

Հիշատակարանում հստակ նշմարվում են երկու ժամանակային շերտ՝ 6-րդ դարի վերջին քառորդը¹⁷ եւ 7-րդ դարի առաջին քառորդը: «Պատմութիւն սբ. վարդապետաց»-ի հետ անմիջականորեն կապված է հիշատակարանի առաջին կեսը, որը վերաբերում է 627 թվին, ինչը հաստատվում է որոշ մանրամասներով, քաղված, ինչպես վերը նշվեց, քննության առարկա գրվածքից: Վերջինը բավականին բազմազան բովանդակություն ունի, այն է՝ հայոց գրերի գյուտի պատմությունը, Կարին-Քեոզոսիոպոլի կառույցի ավանդությունը, քաղկեդոնականության դեմ Մովսեսի եւ Դավթի պայքարի բանավեճերում նրանց փայլուն հաղթանակի մասին պատմվածքը, որը, թերեւս սույն գրվածքի հիմնական կորիզն է հանդիսանում¹⁸:

«Պատմութիւն սբ. վարդապետաց»-ից եւ դրան կից հիշատակարանից թովման քաղել է հետեւյալ տեղեկությունները. Մամբրե Վերձանողը սբ. Սահակի եւ սբ. Մեսրոպի, ինչպես նաեւ 451 թ. Վարդան Մամիկոնյանի գլխավորած ապստամբության ժամանակակիցն է, նա գրել է հունարենից հայերեն թարգմանված զրույցների գիրք, մնացած մանրամասները նրա երեւակայության պտուղներն են: Այսպիսով, ստեղծագործաբար մշակելով անվավեր

¹³ Գարեգին Ա. կաթողիկոս, Յիշատակարանի ձեռագրաց, հ. 1, Անթիլիաս, 1951, էջ 17-18:

¹⁴ «Հնոց եւ նորոց», Կոստանդնուպոլիս 1874, էջ 87:

¹⁵ Հայ ձեռագրերի հիշատակարաններ, Եր., 1989, էջ 14:

¹⁶ Գ. Սրվանձտեանցի մոտ՝ «Արար եւ Մամբրէ Պաղոս եւ Արահամ ճառս ոչ սակաւս պէս պէս խորհրոց»: Իսկ Ա. Մաթեոսյանի հրատարակած հիշատակարանի սկզբին կցվել են բուն բնագրի վերջին երեք պարբերությունները, համապատասխանորեն՝ ձեռագրի 376ա-376բ եւ Գ. Սրվանձտյանցի հրատարակած բնագրի 84-86 էջերը:

¹⁷ Հիշատակարանի այդ երկրորդ մասը, ինչպես համոզիչ ապացուցում է Ս. Արեւշատյանը, ոչ մի կապ չունի ֆննոսյան առարկա անվավեր գրվածքի հետ, այլ ուղեկցել է Կոստանդնուպոլիսի հայրապետ Եվտիմեի (550-575, 577-582) «Գիրք էակի»-ին՝ փիլիսոփա-աստվածաբանական տրակտատին, գրված ի պաշտպանություն ֆաղկեդոնականության (տե՛ս՝ "Формирование философской науки в древней Армении (V-VI вв.)", 229-240:

¹⁸ Պատեմառը, թե ինչու ֆննվող գրվածքի հիշատակարանին կցվել է «Գիրք էակի»-ի հիշատակարանը, թերեւս պետք է փնտրել գրվածքի հակաֆաղկեդոնական ուղղվածության մեջ, որը հենց այդ պատեմառով ձեռագրերում կարող էր կցված լինել, որպես հակակշիռ Եվտիմեի տրակտատին:

գրվածքը, իր հիշատակարանով հանդերձ եւ Մով. Խոր. Պատմութեան վերոհիշյալ հատվածից քաղած տեղեկությունները, Քովման հնարել է իր հղումը Մամբրեի հին աշխատության վրա:

«Պատմութիւն սր. վարդապետաց»-ի հետ սերտ կապի մեջ է գտնվում նաեւ Քովմայի կողմից Մովսէս Խորենացու նույնացումը Մովսէս Քերթոզի, Քերթոզահոր հետ¹⁹, որովհետեւ Քովմայից առաջ Մովսէս Խորենացին ու Մովսէս Քերթոզը հանդես են գալիս որպէս միեւնույն անձնավորություն հենց այդ գրվածքում, իսկ դրա էջ 73-ում Մովսէսը անվանվում է նաեւ «Քերթոզահայր»: Եվ քանի որ Քովման Մով. Խոր. Պատմութեան հետ միաժամանակ օգտվում էր նաեւ այդ անվամբ գործից, որտեղ սկզբից Մովսէսը ներկայացվում է որպէս սր. Սահակի ու սր. Մեսրոպի աշակերտ, հետո հիշատակվում է որպէս Քերթոզ, Քերթոզահայր, իսկ ապոկրիֆի վերջում էլ պատմվում է, թէ ինչպիսի հանգամանքներում է Մովսէսը գրել իր Պատմութիւնը, ապա Քովման կարող էր վստահորեն նույնացնել երկու Մովսէսներին: Բացառված չէ, որ ձեռագրերում նա տեսել է նաեւ Մովսէս Քերթոզահոր անվամբ պահպանված մի շարք գործեր, ինչպէս «Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց», «Գիրք Պիտոյից» եւ այլն²⁰:

Հայագետների ուշադրությունն են գրավել նաեւ Քովմայի հղումները Մով. Խոր. շորթորդ գրքի վրա: Այդ հարցի վերաբերյալ ծավալված միճարանութեան մանրամասները հանգամանալից ներկայացված են Ա. Ս. Մաթեոսյանի ուսումնասիրությունում «Մովսէսի Խորենացույ վերագարծութիւն ի վերայ երեցունց դրուագեալ հատուածին», որը լույս է տեսել որպէս հավելված, Մով. Խոր. 1997 թ. հրատարակությունում²¹: Հավելվածին կից համառոտ ներածական խոսքում հրատարակության խմբագիր Գ. Սարգսյանը գրում է. «Վերջերս Մատենադարանի աշխատակից Արտաշես Մաթեոսյանը հնագույն նյութերից շորթորդ գրքի վերականգնման փորձ կատարեց՝ ծանոթագրությամբ եւ ուսումնասիրությամբ, որը ներկայացնում ենք ընթերցողի ուշադրությանը»²²:

Անդրադառնալով Մովսէս Խորենացու շորթորդ գրքի խնդրին, ակա-

¹⁹ Հ. Պ. Անանյանը իր «Մովսէս Քերթոզահայր եւ Մովսէս Խորենացի» հոդվածում («Բագմավէպ», Վենետիկ, 1931, 1-2), նշելով, որ Քովմա Արծրունին առաջինը նույնացնում է նրանց (էջ 7), ապացուցում է, որ դրանք տարբեր անձնավորություններ են եղել, որոնք ապրել են առաջինը՝ 7-րդ դ., երկրորդը՝ 5-րդ դ.: Նման տեսակետ է հայտնում նաեւ Նորայր եպ. Մովականը («Վանատուր», Երուսաղեմ, 1993):

²⁰ Տե՛ս՝ նույն տեղում, էջ 26:

²¹ Մովսէս Խորենացի, Հայոց պատմություն: Քարգմ. ներած. եւ ծանոթ. Ստ. Մալխասյանց. Եր., 1997: Հավելված Ա. Դրուագ շորթորդ. Մովսէսի Խորենացույ վերագարծութիւն ի վերայ երեցունց դրուագեալ հատուածին: Բնագրի վերականգնման փորձ, ուսումնասիրություն եւ ծանոթագրություններ Արտաշես Մաթեոսյանի:

²² Նույն տեղում, էջ 334:

նավոր հայագետ Գ. Տեր-Մկրտչյանը նշել է, որ *Քովմա Արծրունու* ակնհայտ վկայության դեմ շատ դժվար է պայքարել ենթադրությունների եւ տրամաբանական կառուցվածքների օգնությամբ, արդարացիորեն նկատելով, որ ոչ *Խորենացու Պատմության*, ոչ էլ հենց իր՝ *Քովմայի* գրքի բովանդակությունը հիմքեր չեն տալիս եզրակացնելու, որ գոյություն է ունեցել չորրորդ գիրքը²³ :

Հավակնություն չունենալով լուծել 4-րդ գրքի խնդիրը, կցանկանայի ընթերցողի ուշադրությունը գրավել *Քովմայի* առաջին գրքի շարագրանքի յուրահատկության վրա: *Քովմայի* վկայակոչումների առանձնահատկություններից երեւում է, որ նա շատ ազատ էր վերաբերվում իր աղբյուրների տեղեկություններին, եւ իր գործը բազում դեպքերում չի համապատասխանում իրական պատմական փաստերին, շնայած առաջին հայացքից թվում է ճշմարտանման, ինչը, ընդհանրապես, բնորոշ է ապոկրիֆիկ ժանրին պատկանող ստեղծագործություններին (իսկ *Քովմայի Պատմության* առաջին գիրքը, որ գրված է «ըստ ազգաբանութեան Արծրունեաց սեռի», որոշ իմաստով հենց այդպիսին է), հնարանքը ներկայացնել հնարավորին չափ ավելի ճշմարտանման, որովհետեւ միայն այդ դեպքում այն ընթերցողի վրա կունենա ցանկացած ազդեցությունը:

Այժմ անդրադառնանք *Խորենացու Պատմության* այն երեք հատվածներին, որոնք անմիջական առիթ են տվել *Քովմային* խոսելու չորրորդ գրքի մասին:

Ա. «Արդ օրէն էր մեզ աստանօր զկարծիս (այսինքն՝ Բերոսոսի, Բազմավէպի եւ Արշուղենոսի) յայտնել ըստ կարողութեան ... այլ վասն երկարութեան առաջիկայ գործոյս՝ այլում տեղւոյ եւ ժամանակի զայսորիկ թողեալ» (I, 4): Այստեղ մենք գործ ունենք սովորական էտիկետային բանաձեւերից (Ֆորմուլաներից) մեկի հետ՝ բանաձեւ, որ օգտագործվում էր միջնադարյան մատենագիրների կողմից, անկախ իրենց ազգային պատկանելությունից²⁴ : Այդ

²³ Գ. Տեր-Մկրտչյան, *Խորենացու Պատմության* ուսումնասիրություն, Վաղարշապատ, 1890, էջ 20

²⁴ Գրական էտիկետի բանաձեւերի համար բնորոշ է, որ դրանք, որպես օրենք, ավարտում են որեւէ որոշակի բովանդակություն ունեցող հատվածը՝ դա կարող է լինել ներքոյան, ողբ, վկայաբանություն, կամ էլ տվյալ երկի շրջանակներից դուրս եկող հարցի ավելի մանրամասն բնութայն, եւ պետք է՝ ա) համոզեն ընթերցողին, որ հեղինակը համեստ է, որ նրա մոտ բացակայում է մեծամտության մեղքը, այստեղից բխում է նվաստացող ինքնաներկայացումը (ինչպես օրինակ՝ «Ապա փոյթ ինձ Քովմայի, որ ոչ վերջտունեալ կալայ ամօթով գլետին տեղին, այլ փոխանակ սոցա մատեայ ի տեղիս այս, ձեռն արկեալ անիմաստաբար լի անմտութեամբ եւ անհաննարութեամբ բուն հարկանելով զմեծ այս բերածութենէ» (I, 11). բ) պետք է արդարացնի անցումը ավելի վեհ ժանրից (ներքոյան, ողբ եւ այլն) դեպի ավելի հասարակ՝ ժամանակագրականը. սովորաբար, որպես արդարացուցիչ հանգամանք է ծառայում ժամանակի սղությունը (Յով.

խոսքերը հեղինակի տուրքն է միջնադարյան գրականությունում ընդունված քաղաքավարութեան ճարտասանական ձևերին:

Շարունակելով իր խոսքը, հաջորդ պարբերության վերջում Մով. Խոր. այդ բանաձևեր կրկնում է փոքր ինչ ձեւափոխված տեսքով.

Բ. «Արդ զայլսն վասն սորա (խոսքը Աբելի ու Ենովսի կոչված լինելու մասին է) ի տեսութեանց ի հրաւիրեալն մեր յուղարկեսցուք տեղի, իսկ որ առ ձեռն պատրաստն է՝ ասացուք»:

Մով. Խոր. նույն էտիկետային բանաձև պարունակող հատվածներին Քովմայի մոտ համապատասխանում են հետեւյալ երկու վկայակոչումները.

1. «... եւ նինոս ի զաւակէ Քամայ ըստ Արիդոնեայ Քաղղեացոց եւ ըստ Եվսերեայ Կեսարացոյ, եւ ըստ Մովսէսի Խորենացոյ, եւ ըստ Յուլիանու Աղիկարնացոյ ստուգաբանի»: Մովսես Խորենացին Աբյուղենոսին հղում է 1-ին գրքի 4-րդ գլխի սկզբում, այդ անվանը Քովման ավելացնում է Եվս. Կես., որից օգտվել են եւ Մով. Խոր. եւ անձամբ ինքը, իր հիմնական աղբյուր՝ Մով. Խորենացուն եւ Հուլիանոս Հալիկաոնացուն: Վերջինիս անվամբ Քովման նենգափոխում է Հերոդոտոս Հալիկաոնացուն, որին հիշատակում է համապատասխան տեղում Եվս. Կես.: Մինչդեռ Հուլիանոս Հալիկաոնացին՝ 5-րդ դ. վերջի եւ 6-րդ դարի առաջին տասնամյակների եկեղեցական գործիչ, ամբողջովին կլանված դավանաբանական պայքարով, ոչ մի պատմական գործ, մանավանդ Ասորեստանի վերաբերյալ, չի գրել, սակայն Քովման վկայակոչում է նրան, թերեւս այն պատճառով, որ համարում էր ավելի հայտնի եւ հեղինակավոր անձնավորություն²⁵:

2. «...եւ առանձին թագաւորեն Ասորեստանեայքն՝ ի կանոնի (Եւսերեայ) անդ գտցես զնինոս եւ զՇահամիր եւ զԱբրահամ եւ զվեշտասաներորդ

Դրասխ.՝ եւ արդ մի եւս ինձ այլ յիւս յառաջաբանութիւն եղիցի ծախել զժամանակս, վասն զի ծերութիւն ցաւագիւն՝ մահ առ դուս պատրաստ ունի», էջ 5: Եւ մեզ զկարգ պատմութեանց ... յառաջ վարեացում, զի ոչ է ժամ մեզ դեզերումն առնել» (Քով. Արծ., 1, էջ 6): Կամ էլ ընթերցողին ավելորդ մանրամասներով ձանձուրյթ պատճառելու մտավախությունը, ինչպէս նաև, «... ի կարգ բանին ...» վերադառնալու անհրաժեշտությամբ: Վերջապէս մանրամասն ֆննելով որևէ հարց, հեղինակը խոստանում է ընթերցողին կրկին անդրադառնալ դրան «յայլում տեղի» եւ «յայլում ժամանակի», միաժամանակ կարծես թէ ակնարկելով իր գիտելիքների խորության մասին: Նման բանաձևերը ընդունված էին միջնադարյան գրականություններում եւ ամենեւին պարտադրական չէին հեղինակի համար, այնպէս որ սխալ կլինի անվերապահորեն հավատալ հեղինակի ինքնանվաստացնող հայտարարություններին, ինչպէս նաև նրա խոստումներին՝ վերադառնալ արդեն բավականաչափ լուսաբանված հարցի ֆննությամբ «այլ ժամանակին» եւ «այլ տեղում»:

²⁵ Հուլիանոս Աղիկարնացու եւ հուլիկանոսյան մասին տե՛ս Տեր-Մինասյան Ե., Հայոց եկեղեցու հարաբերությունները ասորոց եկեղեցիների հետ, էջմիածին, 1908, էջ 227-228:

հարստութիւն Եգիպտացոց, եւ ի շորրորդ դպրութեանն Յուլիանու Աղիկարնացոյ եւ ի շորրորդ դպրութեանն Մովսէսի»: Առաջին մասով այդ հղումը (Եվս. Կես. կանոնի վրա) ճշմարիտ է, սակայն երկրորդ մասում Հուլիանոսի գոյութիւն չունեցող շորրորդ գրքի կողքին հայտնվում է Մով. Խոր. շորրորդ գիրքը: Հարց է ծագում, թե ինչու շորրորդ գիրքը չի հիշատակվում առաջին դեպքում: Թվում է, որ միակ պատճառը թաքնված է Մով. Խոր. օգտագործած էտիկետային ֆորմուլաների ձեւում: Առաջին անգամ նա ուղղակի գրում է, որ ընդհատում է իր խոսքը, «... այլում տեղոյ եւ ժամանակի զայսոսիկ թողեալ...», եւ Թովման ընկալում է այն հենց այնպես, ինչպես որ պետք է, այսինքն՝ որպէս անցում հաջորդ հարցի քննութեանը: Երկրորդ անգամ Մով. Խոր. ներկայացնում է էտիկետային բանաձեւը, որպէս հղում նախորդի վրա՝ «... ի հրաւիրեալն մեր տեղի յուղարկեսցուք»: Այստեղ Թովման արդէն հնարավորութիւն է տեսնում մտցնել սեփական ճշգրտումը՝ շորրորդ գիրքը, որը Մով. Խոր. խոստանում է գրել «այլ տեղում» եւ «այլ ժամանակին»: Իր շարադրանքի հետագա ընթացքում Թովման չի անում հղում Մով. Խոր. շորրորդ գրքին եւ միայն, երբ հասնում է իր առաջին գրքի ավարտին, որը համապատասխանում է Մով. Խոր. երրորդ եւ վերջին գրքին, նա այդ գրքի 67-րդ գլխում կրկին հանդիպում է էտիկետային բանաձեւին, որով Մով. Խոր. ամփոփում է իր սր. Սահակ Պարթեւին նվիրված գովքը:

3. «Ձորմէ պարտ էր մեզ հրաշափառագունիւ անցանել բանիւ, ըստ արժանի սրբոյ հօրն դրուատից այլ զի մի յերկարութիւն ճառիցս լիցի ձանձրութիւն ընթերցողաց՝ այլում տեղոյ եւ ժամանակի զայսոսիկ թողցուք, արտաքոյ այսց գրոց, ուր զսկզբանն հրաւիրեցաք առնել թելադրութիւն», (III, 67): Մով. Խոր. սույն հղմանը՝ Թովմայի մոտ համապատասխանում է հետեւյալ հատվածը. «Սահակս այս այն Սահակ է, որոյ հրամանաւ գրեաց մեծ վարդապետն Մովսէս տիեզերահռչակեալ քերթողն զգիրս Պատմութեան հայոց մեծաց, հրաշագան հորինուածով, սկսեալ յԱդամայ մինչ ի կայսր Զենոն ... որպէս գրեալ աւանդեցաւ մեզ այս ի շորրորդ դրուագի խոստարանեալ պատմութեանն Մովսէսի Խորենացոյ, վերադարձութեան ի վերայ երեցունց դրուագեալ հատուածին»:

Ինչպէս տեսնում ենք, Մով. Խոր. շորրորդ գրքի հետ կապված Թովմայի հղումները հայտնվում են զուգահեռաբար Մով. Խոր. բնագրում նշված էտիկետային բանաձեւերին²⁶, ինչից կարելի է հետեւեցնել, որ Թովման իր առջեւ

²⁶ Որոշ իմաստով այս բանաձեւերի կապակցությամբ հնարավոր է զուգահեռ անցկացնել նաեւ Հովսէփոս Ֆլաբիոսի «Հնախօսութիւն հրէից» գործում օգտագործվող բանաձեւերի հետ: Այսպէս, օրինակ՝ 1-ին գրքի 7-րդ գլխում մանրամասն շարադրելով Մովսէսի օրենքների պատմությունը, նա ավարտում է այն համապատասխան էտիկե-

ուներ մեզ հայտնի եռամասնյա Խորենացու Պատմութիւնը եւ շարադրանքի ընթացքում հզում էր շորրորդ գրքի վրա այն ժամանակ, երբ հանդիպում էր նշված բանաձեւերին: Բովանդակութեան տեսակետից Քովմայի բնագրի տվյալ հատվածը բաղկացած է երկու մասից. 1. «...Սահակս այս այն Սահակ է, որոյ հրամանաւ գրեաց մեծ վարդապետն Մովսէս տիեզերահռչակեալ քերթողն զգիրս Պատմութեան հայոց մեծաց, հրաշագան յօրինուածով, սկսեալ յԱզամայ մինչ ի կայսր Զենոն...»: Այստեղ Քովման, ըստ էութեան, նկատի ունի ոչ միայն մեզ հայտնի Մով. Խոր. եռամասնյա Պատմութիւնը, այլ նաեւ շորրորդ գիրքը, որտեղ Խորենացին իր շարադրանքը հասցնում է մինչեւ Զենոն կայսրի օրերը: Դա նշանակում է, որ Քովման, իմանալով Խորենացու մահվան ժամանակը, հասկանում է, որ շորրորդ գիրքը պետք է բովանդակի սբ. Սահակ Պարթևի մահվան եւ Զենոն կայսրի գահակալութեան (474-491) միջեւ ընկած ժամանակաշրջանը: Դա հենց այն է, ինչ սպասելի կլինէր նաեւ մեզ՝ Քովմայից բազում դարերով հեռացված ընթերցողներիս համար, ընդ որում գրված նույն գիտական եւ գեղարվեստա-գրական մակարդակով: Սակայն, ինչպես այդ նշում են շատ հայագետներ, նման գրքի ոչ մի հետք անգամ չի նշմարվում ոչ Քովմա Արծրունու, ոչ էլ Հովհաննէս Դրասխանակերտցու մոտ, մինչդեռ երկուսի համար էլ Խորենացու Պատմութիւնը համապատասխան ժամանակագրական շրջանակներում ծառայում էր որպէս հիմնական աղբյուր: Ավելին՝ երկուսն էլ, այսպէս կոչված «շորրորդ գրքի» փոխարեն, օգտագործում են անվավեր, անախրոնիզմներով լի մի գրվածք՝ ժողովրդական ավանդույթ Շավասպ Արծրունու, պարսից մարզպան Վնդոյի, վերջինիս որդի Շերոյի եւ նրանց դեմ պայքարող Վարդան Մամիկոնյանի մասին: Այդ գրվածքը գոյատեւել է ինչպէս բանավոր, այնպէս էլ գրավոր ձեւով: Դրա հիման վրա

տային բանաձեւով. «Այս օրենքների մեծամասնության բնությունը, սակայն, ես ձեռնարկելու եմ այլ երկասիրություններում, որտեղ մտադիր եմ հատուկ խորհրդածել դրանց մասին» ("Иудейские древности", Москва, 1996, т. 1, с. 113): Հաջորդ՝ 8-րդ գլխի վերջում նա կրկին գրում է. «Սակայն նկատի ունենալով գրել հատուկ ուսումնասիրություն այդ օրենքների մասին, ես այլևս կանգ չեմ առնելու այդ (հարցերի) վրա»: Նման էտիկետային բանաձեւին հանդիպում ենք նաև իր Հնախոսության 2-րդ հատորի վերջին՝ 20-րդ գլխում, որն ավարտվում է հետևյալ խոստովով. «Ես մտադրություն ունեմ ներկայացնելու չորս գրքից բաղկացած շարադրությունում մեր՝ հրեական դավանությունը Աստուծո եւ նրա էության մասին, ինչպէս հավասարապէս խոսելու եմ նաև օրենքների՝ մեզ որեւէ բան թույլատրող կամ արգելակող պատճառների մասին» (անդ, 20, էջ 305): Այդ կապակցությամբ ծանոթագրությունում կարդում ենք. «Ինչպէս երևում է, Ֆլաբիոսը այդ մտադրությունը չի իրագործել, - համենայն դեպս իրեն պատկանող նման գիրք չի պահպանվել» (էջ 306): Գրքի թարգմանիչ եւ վերջաբանի հեղինակ Գ. Գենկելը համարում է, որ «Ֆլաբիոսի սույն արտահայտությունները պարզապէս հարմար բանաձեւեր են որեւէ պատմվածք ավարտելու համար» (էջ 323):

գրված երկու գլուխները **Քովման տեղադրում է երկրորդ գրքի սկզբում**²⁷, ընդ որում այդ երկու գլուխները, որոնց հիմքում, ըստ էության պետք է լիներ Մով. Խոր. 4-րդ գիրքը, **Քովման տեղադրում է ոչ թե իր պատմության Արժրունիների ծագումնաբանությանը նվիրված առաջին գրքի վերջում, ինչը սպասելի էր, այլ հաջորդ՝ երկրորդ գրքում: Դրանից կարելի է եզրակացնել միայն այն, որ նշված երկու պատմիչներից ոչ մեկը չի տեսել Խորենացու 4-րդ գիրքը: Մով. Խոր. բնագիրը նույնպես ոչ մի առիթ չի տալիս ենթադրելու 4-րդ գրքի գոյությունը, քանի որ էտիկետային բանաձևեր պարունակող քննվող հատվածներում Ջենոն կայսրը չի հիշատակվում, եւ եթե հետեւենք դրանց բովանդակությանը, ապա Խորենացու ենթադրյալ 4-րդ գիրքը պետք է բովանդակի Բերոսի, Աբյուղենոսի ու Բագմավեպի կարծիքները Նոյի եւ նրա որդիների անունների մասին, Ենովսի եւ Աբելի կոչման վերաբերյալ եւ, վերջապես, այն պետք է պարունակի նաեւ սբ. Սահակ Մեծին նվիրված ավելի ընդարձակ ներբող: Նման բովանդակության 4-րդ գիրքը բավականաչափ տարօրինակ կլիներ: Որ **Քովման դա շատ լավ էր հասկանում, երեւում է վերոբերյալ հատվածի 2-րդ մասից. «... որպէս գրեալ աւանդեցաւ մեզ այս ի շորրորդ դրուագի խոստարանեալ պատմութեան Մովսէսի Խորենացույ, վերադարձութեան ի վերայ երեցունց դրուագեալ հատուածին»:****

Այսպիսով, նա փորձում է հաստատել 4-րդ գրքի արժանահավատությանը, հղելով Մով. Խոր. խոստացված 4-րդ գրքի վրա, այսինքն՝ մեկ անհայտի գոյությունը հաստատում է մեկ այլ անհայտով: Դա նշանակում է միայն այն, որ ինչպես իր ծննդաբանության գրքի համար բնորոշ մի շարք դեպքերում, **Քովման դիտավորյալ կերպով մոլորեցնում է ընթերցողին: Կարծում եմ, որ Քովմայի վկայությունը Խորենացու «շորրորդ գրքի» մասին կարելի է դասել Արժրունիների ծագումնաբանության՝ իր գրքի համար ամենասովորական կեղծիքների թվում:**

Հղումներ, որոնցում ճշմարտության ինչ-որ շնչին մասը զուգորդվում է հնարանքների զգալի չափի հետ, հանդիպում են ոչ միայն Քով. Արժ. մոտ, երբեմն վերածվելով յուրատեսակ մի կաղապարի, դրանք շրջում են ստեղծագործությունից ստեղծագործություն: Այդպիսին է, օրինակ, վկայակոչումն այն մասին, թե Արգարը «... առաջին ի հեթանոսական թագաւորաց սկիզբն արար ի Քրիստոս հաւատոց...», ինչի մասին վկայում են «յիշատակարանք հաւատարիմ պատմագրաց», ինչպես նաեւ, հատկապես, Հովհաննէս ավետարանիչը, եւ, այնուհետեւ, **Քովման մեջ է բերում Հովհանի համապատասխան տունը՝**

²⁷ Քովմայի Պատմության 2-րդ գրքի 1-ին գլխի մանրամասն աղբյուրագիտական բնութայունը տե՛ս՝ Գր. Տեր-Պողոսեան, «Նկատողութիւններ Եղիշի Պատմութեան վերաբերեալ», «Հանդես Ամսօրեայ», Վիեննա, 1895, 5, էջ 129-133:

«...էին ոմանք յելելոց անտի հեթանոսաց, որք եկեալ էին յերուսաղէմ ի տօնն, զի երկիրպագանիցեն. որք եւ մատուցեալ առ Փիլիպպոս որ ի Բեթսայիդայն, ասէն՝ կամիմք զՅիեսուս տեսանել»²⁸, որը հիմք ծառայեց պնդելու, թե իբր «ոմանք յելելոց անտի հեթանոսաց» եղել են Արգարի պատվիրակները: Նույն այդ վկայակոչմանը հանդիպում ենք Մով. Խոր. (II, 31), Եվս. Կես. (Եկեղեց. պատմ., I, 12) մոտ, ինչպես նաեւ Արգար թագավորի եւ Աստծո խիտոնի մասին առասպելի սիրիական, հայկական, վրացական զանազան տարբերակներում: Այդ կապակցութեամբ Ն. Մառը նկատում է. «Պատմական արժանահավատութեան տեսակետից մեր հուշարձանը այնքան էլ շատ չի շահել, ակնարկելով ավետարանական տները (Հով., 12, 20-21)»²⁹:

Ակնհայտ է, որ նման վկայակոչումների նպատակն է հեղինակավոր աղբյուրի օգնութեամբ հաստատել անվավեր փաստը, եւ միջնադարյան հեղինակները կանգ չէին առնում նույնիսկ Աստվածաշնչի բնագիրը խեղաթյուրելու առաջ:

*

* * *

Պատմութեան առաջին գրքում, կատարելով իր առջեւ իշխան Գրիգոր-Ղերենիկի կողմից դրված խնդիրը, Քովման ստեղծում է, ընդ որում համարյա թե դատարկ տեղում, Արծրունյաց տոհմի իշխանների ծագումնաբանութունը:

Որպես ելակետ նրան ծառայել են Մով. Խոր. վկայութիւնը, որ Արծրունիները սերում են ասորեստանյան թագավոր Սենեքերիմից³⁰, եւ աստվածաշնչային ավանդույթը Սենեքերիմ թագավորի մասին³¹:

Առաջին հերթին Քովման պետք է հետամուտ լիներ Սենեքերիմի ծագումնաբանութեանը, բացահայտեր նրա արմատները մինչեւ Նոյի որդիների ժամանակը, եւ այդ առումով նա դժվարութիւնների չի հանդիպել, որովհետեւ իր տրամադրութեան տակ ուներ Աստվածաշունչը՝ իր աստվածաշնչային հայրապետների ծագումնաբանական ցուցակներով հանդերձ, Եվս. Կես. Քրոնիկոնը, որը պարունակում էր նախաշրջեղեղային մարդկութեան եւ, հատկապես, Ասորեստանի պատմութիւնը ու ասորեստանյան թագավորների անվանացանկերը, եւ, վերջապես, Մով. Խոր. պատմութիւնը: Այնուհետեւ նա Սենեքերիմին եւ իր որդիներին անմիջականորեն պետք է կապեր Արծրունյաց տոհմի հետ, եւ

²⁸ Քով. Արծ., էջ 76: Հմմտ. Յովհ. Դրասխ., ԺԲ, 20-21:

²⁹ Март Н. Я, Хитон Господень в книжных легендах армянских, грузинских и сирийских. "Сб. статей учеников Бар. В. Розена", СПб., 1897, с. 82-83.

³⁰ Տե՛ս՝ Պատմութիւն, I, 23:

³¹ Դ թագ., 19: 36-37:

այս խնդիրը լուծելիս նրա առջև ծառայան զգալի դժվարություններ, որովհետև վերջինիս մատչելի օտար աղբյուրներում անհրաժեշտ տեղեկությունները բացակայում էին, իսկ ինչ վերաբերում է հայկական աղբյուրներին՝ Փավստոս Բուզանդին, Ազաթանգեղոսին, Եղիշեին, Ղազար Փարպեցուն, Մով. Խոր., ապա նրանց գրվածքների մեջ թեկուզ պարունակվում էին Արժրունյաց իշխանների մասին շատ թե քիչ ընդարձակ տեղեկություններ, եւ Քովման օգտագործել է դրանք, հաճախակի ամբողջությամբ ընդգրկելով իր պատմածում, սակայն իր տեսակետից դրանք ամենեւին էլ բավարար չէին իր առջև ծառայած խնդիրները լուծելու համար: Քովմային անհրաժեշտ էր բազում դարերի միջով անցկացնել մի թեւ, որը կապեր Սենեքերիմին այն ժամանակների հետ, երբ հայտնվել են արժանահավատ տեղեկություններ Արժրունիների մասին, եւ ստեղծել Գրիգոր-Դերենիկ իշխանի նախնիների, իրենց գործերով եւ իմաստությամբ փառաբանված, մի պատկերասրահ:

Այդ խնդիրը Քովման լուծում է հետեւյալ կերպ: Ժամանակի այդ մեծ հատվածը նա բաժանում է մի քանի ժամանակաշրջանների, որոնք իրարից սահմանազատվում են իր տեսակետից կարեւոր որեւէ ճակատագրական իրադարձությունով: Այդ ժամանակաշրջաններից յուրաքանչյուրի համար նա հնարում է Արժրունյաց նախնիների անվանացանկեր, ընդ որում, ամեն ցանկում հիշատակված վերջին անձնավորությունը դուրս է գալիս համապատասխան ճակատագրական իրադարձության ժամանակակիցը, եւ հենց նրան էլ Քովման օժտում է տվյալ իրադրությանը համապատասխանող ճակատագրով եւ բնավորությամբ, նվիրելով նրանց շատ թե քիչ ընդարձակ հետաքրքիր նովելներ: Քովման հնարել է նման հինգ անվանացանկեր: Ի սկզբանե նկատենք, որ 4-5-րդ դդ. հայկական աղբյուրներում հիշատակված Արժրունիների ներկայացուցիչներից ոչ մեկին Քովման չի ընդգրկել իր անվանացանկերում, սակայն նրանք համարյա միշտ հանդես են գալիս իր պատմության համապատասխան տեղերում:

Ծագումնաբանության գիրքը Քովման սկսում է հայոց թագավոր Տիգրան Հայկազնի եւ նրա ժամանակակիցներ՝ պարսից թագավոր Կյուրոսի եւ մեդական թագավոր Աժդահակի ժամանակից, պատմելով, թե ինչպես Աժդահակի դեմ պատերազմելիս Տիգրանը գերի է վերցրել երկու մեդական արքայազներ. «...ոմանք ի զաւակէ Աժդահակայ ձերբակալ արարեալ, Տիգրանայ առեալ ածէ ի Հայս ...որոյ զփոյթ հպատակութեան ցուցեալ՝ կարգէ զնոսա ի գործ ծառայութեան, կրել արծուիս եւ բազէս. եւ ի գինարբուան ի տեղի մատուակութեան յառաջացուցեալ՝ ի գահ նախարարութեան ձգեալ կացուցանէ, եւ բնակեցուցանէ զնոսա ի գաւառն Աղբակ...» (I, 5): Քովման ուղղակիորեն չի ասում, որ այդ մեդական արքայազները Արժրունի իշխանների

նախնիներն են, սակայն այն հանգամանքը, որ նրանք «կրել են արծուիս»³² եւ բազես», եւ որ Տիգրանը բնակեցրել է նրանց Աղբակում՝ Արծրունիների տոհմական տիրույթում, որոշակիորեն մատնանշում է այդ: Սակայն «... մինչդեռ շե առ միմեանս հասեալ Տիգրան եւ Կիրոս՝ յղէ Աժդահակ պատարագս Կիրոսի եւ խոստանայ տալ նմա զտէրութիւնն զշորրորդ մասն Սենեքերիմանցն զկողմամբքն նինուէի եւ զՏմորիս ամրոցան, որ ի նմա...» (I, 5):

Աժդահակի գաղտնի մտադրությունների մասին Տիգրանին հաղորդում են Սենեքերիմի որդիներ՝ Աղբամեղեքն ու Սանասարը՝ Տիգրանի զորավար ոմն Քսերքսեսի միջոցով: Այդ անձնավորությունը հայտնվում է Քովմայի պատմությունում բավական անսպասելի, առանց ակնհայտ կապ ունենալու նախորդ պատմածի հետ: Քիչ հետո պատմության ընթացքում հայտնվում է նաեւ նրա որդի Արշեզը: Բրոսսեն ենթադրում է, որ Քսերքսեսը ու Արշեզը մեղական արքայազներ են³³: Քվում է, որ նրանց հնարավոր է նույնացնել վերոհիշյալ մեղական արքայազների հետ: Որպես հիմք ընդունելով Մովսես Խորենացու պատմածը Աժդահակի դեմ Տիգրանի պատերազմի մասին եւ, հատկապես, այն մասը, որտեղ խոսվում է, թե ինչպես Տիգրանը հաղթելով Աժդահակին, այնուհետեւ բնակեցնում է իր՝ ժամանակին Աժդահակին կնություն տված քրոջ՝ Տիգրանուհուն մայրաքաղաք Տիգրանակերտում, իսկ վերջինիս կնոջը՝ Անուշին, իր ծառաներով եւ մեղական գերիներով Մասիս լեռան ստորոտում, Քովման իր ստեղծագործական մտահղացմանը համաձայն փոփոխում է այն, դեն նետելով պատմվածքից Անուշին եւ նրա փոխարեն Մասիս լեռան ստորոտում բնակեցնելով Տիգրանուհուն, իր ծառաների եւ մեղական գերիների հետ³⁴: Հենց այդ գերիներից էլ առաջ են գալիս վերոհիշյալ անանուն արքայազները՝ Աժդահակի որդիները: Քսերքսեսի եւ Արշեզի մասին Քովման հնարում է մի պատմվածք, որտեղ նրանց ներկայացնում է որպես տաղանդավոր, քաջարի

³² Արծրունյաց տոհմի անունը «արծիվ» անվան հետ առաջին անգամ կապել է Մով. Խոր. (II, 7):

³³ Brosset M. Collection d'Historiens Armeniens. T. Ardzrouni, X-es. Histoire des Ardzrouni. par M. Brosset. T. I, S. Petersburg, 1874, p. 33, com. 2.

³⁴ Նույն ձևով Քովման փոփոխում է նաեւ, օրինակ, Մով. Խոր. պատմությունը ոմն Տուրի մասին, որը լրտեսություն է անում երվանդ թագավորի տնից ապագա Արտաշես թագավորի դայակին՝ Սմբատին, տեղեկություններ ուղարկելով, եւ այդ պատճառով սպանվեց երվանդի կողմից: Արտաշեսը թագավոր դառնալուց հետո, Տուրի ծառայության համար նրա 15 որդիներին նախարարական պատիվ է շնորհում, կոչելով ցեղը նրանց հոր անունով՝ Տիրունի (I, 48): Քովման (I, 7) բաց չի բողոքում մի հնարավորություն եւս ներկայացնելու Արծրունիներից մեկին՝ Վաչեի որդի Սահակին որպես Արտաշես թագավորի փրկության մասնակից եւ Տուրին փոխարինում է Սահակով, որը նույնպես հնարած անձնավորություն է:

զորավարների, որոնց շնորհիվ Տիգրանը եւ Կյուրոսը հաղթանակ են տանում Աժդահակի, ինչպես նաեւ լյուդացոց թագավոր Կրեսոսի դեմ պատերազմելիս: Այդ երկու զորավարներին Քովման կապում է նույնիսկ աստվածաշնչյան պատմության հետ, վերագրելով նրանց շատ կարեւոր դեր այնպիսի մի իրադարձությունում, ինչպիսին էր Աստվածաշնչում մանրամասն նկարագրված հրեաների վերադարձը բաբելոնյան գերութունից: Համաձայն Քովմայի, Կյուրոսը հենց Քսերքսեսին է հանձնարարել գերի հրեաներին տանել Երուսաղեմ, տեղ հասցնել ոսկե եւ արծաթե սպասքները, որ ժամանակին դուրս է բերել այնտեղից նարուզոզոնոսորը, եւ միայն դրանից հետո Երուսաղեմում Քսերքսեսը հանձնում է իր լիազորությունները Զորոբաբելին եւ այնուհետեւ վերագանում Կյուրոսի արքունիք: Իր հերոսի ճակատագիրն աստվածաշնչյան պատմության հետ կապելու հնարավորությունը Քովման տեսել է հենց Աստվածաշնչի բնագրում: Եզր. Ա գրքում ասվում է. «Եւ բերել զայն ամենայն Կիրոս թագաւոր Պարսից ի ձեռն Միթրադատայ գանձաւորի, եւ համարեալ ետ ցՍամանասար» (տարընթ. ցՍասրասար) (8): Հինգերորդ զլխում նույն կոնտեքստում կրկին հիշատակվում է Սամանասարը. «Եւ առաջնում ... Կիրոս թագաւոր հրամայեաց շինել զտունս զայս Տեառն Աստուծոյ (13), ... առեալ զայն Կիրոսի թագաւորի եւ ետ ցՍամանասար գանձաւոր (տարընթ. էջ 512-9 եւ ետ ցՍասրացար), զոր էր կարգել հրամանատար»: «Յայնժամ Սամանասար (Սասրասար) եկն եւ արկ զհիմն տաճարիս Տեառն Աստուծոյ յԵրուսաղէմ»: 2-րդ զլխում, որտեղ թվարկվում են Բաբելոնից Երուսաղեմ վերադարձած հրեաների սերունդները, նրանց ելքի ողջ ղեկավարությունը վերագրվում է միմիայն Զորոբաբելին: Աստվածաշնչի գրաբար եւ աշխարհաբար, ինչպես նաեւ ուսերեն հրատարակությունների մեծամասնությունում Սասրասարի եւ Զորոբաբելի անունները կողք-կողքի շեն հիշատակվում, ինչը առիթ է տվել մի շարք ուսումնասիրողների ենթադրելու, որ խոսքը միեւնույն անձնավորության մասին է, սակայն, ոմանք էլ համարում են, որ դրանք տարբեր անձնավորություններ են³⁵: Աստվածաշնչի գրաբար հրատարակություններից մեկում³⁶ Եզրասի Ա գրքի 6-րդ զլխում կարդում ենք. «Յառաջնում ամի թագաւորութեան Կիրոսի ի Բաբելոն, գրեաց արքայ Կիրոսն եւ հրամայեաց շինել զտաճարս զայն, եւ զամենայն կահ եւ սպաս տաճարին զոսկեղէն եւ զարծաթեղէն՝ զոր առ նարուզոզոնոսոր արքայի տաճարէն Տեառն Երուսաղեմէ եւ ետ ի պահեստ ի տան կոռցն բաբելացւոց, դարձեալ Կիրոս առ ի տանէ կոռցն բաբելացւոց, եւ

³⁵ Մանրամասները տե՛ս՝ Толковая Библия или комментарий на все книги Св. Писания Ветхого и Нового Завета в 3-х томах. Стокгольм, 1987.

³⁶ Գիրք Աստուածաշունչի հին եւ նոր կտակարանաց. ի Վենետիկ, ի վանս Մխիթարեանց ի սուրբ Ղազար, 1860:

ևտ զԶորորբարել եւ ցՍամանասար³⁷, եւ հրամայեաց նոցա բերել եւ դնել զկահս եւ զսպասս ի տաճարին Տեառն յերուսաղէմ. եւ տաճարն Տեառն հրամայեաց շինել ի տեղւոջ իւրում. յայնժամ Սամանասար ելեալ յերուսաղէմ արկ հիմունս տաճարիս այսորիկ»։ Ահա այս Սամանասարին Քովման հնարավոր համարեց փոխարինել Արծրունիներին՝ իր հնարած նախնիներից մեկին՝ Քսերքսեսի անվամբ։

Հենվելով այն հանգամանքի վրա, որ Մով. Խոր. իր վերոհիշյալ տեղեկությունը Սենեքերիմի եւ նրա որդիների մասին, որպես Արծրունիների նախնիների, տեղադրում է Տիգրան Հայկազնի թագավորությանը նվիրված պատմվածքը նախորդող գլխում (I, 23), Քովման իր քննության առարկա պատմությունում ներկայացնում է նաեւ Ադրամելիքին ու Սանասարին, որոնց կապում է ընդհանուր շահերով Քսերքսեսի եւ Արշեղի հետ՝ վերջինները իրենց զինվորական վաստակի համար ստացել են որպես պարգև «... զՏմորիս ամրոցան եւ զգետափնեայն նինուէի»³⁸։ Այսպիսով, Քովմայի սույն պատմվածքում կարծես նշագծվում են Արծրունյաց տոհմի երկու գծերը՝ մեղականը եւ ասորեստանյանը։

Այդ առաջին պատմվածքը, որտեղ Քովման սկսում է Արծրունիների ծագումնաբանությունը, ավարտվում է առաջին անվանացանկով, որը ընդգրկում է Տիգրան Հայկազնին հաջորդող շրջանը մինչեւ Աղեքսանդր Մակեդոնացին (336-323) ներառյալ։

Առաջին անվանացանկի վերջին հիշատակված անձնավորությունն է Աղեքսանդր Մակեդոնացու ժամանակակից Ասուղը։ Օգտվելով Մով. Խոր.՝ Տիգրանի սերունդների անվանացանկի վերջում տեղադրված Վահեին վերաբերող թուղթիկ դիտողությունից, թե ապստամբելով Մակեդոնացու դեմ մեռնում է նրա ձեռքով³⁹, Քովման Վահեին փոխարինում է Ասուղով եւ նրան է ներկայացնում որպես Աղեքսանդրի ախոյան, այնուհետեւ, զարգացնելով պատմվածքի սյուժեն, նա օգտվում է Աղեքսանդր Մակեդոնացու Պատմության այն հատվածից, որտեղ նկարագրվում է, թե ինչպես ոմն պարսիկ, իրեն ձեռացնելով մակեդոնացի, գաղտագողի մուտք է գործում նրա բանակը եւ հարձակվում Աղեքսանդրի վրա. վերջինս հիացած պարսիկի խիզախությամբ, ազատ է

³⁷ Աստվածաշնչի գրաբարյան ձեռագրերում այդ անունը համընկնում է նաեւ Սաղմանասար եւ Սասքացար (Շեշքացար) ձևերով։

³⁸ Տմորիքը իր համանուն ամրոցով 5-րդ դարում, որպես տոհմական տիրույթ, պատկանակում էր 451 թ. Վարդանանց պատերազմի մասնակից Ներշապունի Արծրունուն, որին հիշատակում են իրենց գործերում Եղիշեն եւ Ղաղար Փարպեցին եւ որի պատմական վավերականությունը կասկածներ չի հարուցում։

³⁹ Տե՛ս I, 31։

արձակում նրան, որպես օրինակ⁴⁰ բերելով նրան իր զորավարներին: Գերի ընկած Ասուդի հետագա ճակատագիրը հիշեցնում է աստվածաշնչյան Հովսեփին: Աղեքսանդրի զորավարներ Պաղոմենոսը եւ Սելեւկիոսը թագավորից խնդրեցին Ասուդին իրենց պարգևել, որից հետո Պաղոմենոսը նրան «... տայ տանել յնգիպտոս ... եւ կարգել նմա ոռճիկս առատապէս ... տալով ի ձեռս նորա զբոլոր իշխանութիւն եգիպտոսի եւ Հնդկաց»: Իսկ Ասուդը թեպետ եւ «... շքեղութեամբ ճոխանայր եգիպտական եւ հնդկային հարստութեամբն՝ այլ յիշելով զբուն իւր սեպհական թագաւորութիւն Ասորեստանի՝ ոչ հաճոյանայր կեալ եգիպտացի գահակալութեամբ... Կեցեալ անդ ամս բազումս մեռանի յնգիպտոս եւ կայ անդէն» (I, 6): Այսպես Քովմայի ստեղծած Ասուդի կերպարում միահյուսվել են Խորենացու Վահեի, «Աղեքսանդրի պատմության» ոմն պարսիկի եւ աստվածաշնչյան Հովսեփի ճակատագրերը:

Երկրորդ անվանացանկի օգնությամբ Քովման կամուրջ է գցում Աղեքսանդրի ժամանակից մինչեւ Արշակունյաց հարստության հիմնադիր՝ սարթեւական թագավոր Արշակ Ա (247-227 թ. մ. թ. ա.) եւ նրա եղբոր՝ առասպելական հայոց թագավոր Վաղարշակի ժամանակը, որը «... լնու բարեկարգութեամբ զաղմկեալ եւ զշիտթեալ երկիրս Հայոց: Եւ նախարարութիւնս յօրինէ, յանուն եւ ի բարձ եւ ի գահ յառաջ մատուցեալ»: Երկրորդ ցուցակի հերոսն է դառնում այն փակող Կյուրոսը, որն իր անունն է ստացել ի հիշատակ իր նախնիի՝ Քսերքսեսի եւ վերջինիս թագավոր Կյուրոսի հետ բարեկամության: Այդ Կյուրոսը «... գրէթէ ... զանցուցանէր զքաշութեամբ...» Արշակ Պարթեին եւ ցուցաբերելով «զհանճարեղութեանն խոհեմութիւն», արժանացավ նրանից գահի եւ պատվի: Հայոց թագավոր Վաղարշակը «խնդրէ զնա ... եւ առնու ածէ զնա ընդ իւր ի Հայս, եւ անուանէ զնա Արծրունի»: Քովման օգտագործում է, փոքր-ինչ փոխելով, Մովսես Խորենացու՝ Վաղարշակ թագավորի գործունեության մասին պատմությունը (II, 7), որպեսզի իր հնարած Աժդահակի հետնորդ Կյուրոսի միջոցով ցույց տա՝ երբ եւ ինչ հանգամանքներում Արծրունի իշխանները իրենց վայել դիրք են գրավել

⁴⁰ «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ»: Հայկական խմբագրություններ: Աշխատասիրությամբ Հասմիկ Սիմոնյանի, Եր., 1979, էջ 396-397: Ասուդի պատմությունը գրավել է Հ. Տաշյանի ուշադրությունը, որը իր Կեղծ Կալիսթենեսին նվիրված ուսումնասիրությունում (էջ 41) նշում է Քովմայի՝ Ասուդի մասին պատմածի նմանությունը Աղեքսանդրի պատմության որոշ հանգամանքներին, ընդ որում, նրան ոչ Ասուդի անձնավորության վավերականությունը, ոչ էլ Արծրունյաց տոհմին նրա պատկանելությունը չէին հետաբերում (տե՛ս՝ «Ուսումնասիրութիւն ստոյն Կալիսթենեսայ վարուց Աղեքսանդրի, Վիեննա, 1892, էջ 41): Հ. Անառյանը ներկայացնելով Քովմայի տեղեկությունները Ասուդի մասին, այնուհետեւ կտրուկ ամփոփում է «կեղծիք» (Անձն. բառարան, I, էջ 229-230):

Հայաստանի ֆեոդալական հիերարխիայում եւ որտեղից է երեւան եկել Արծրունի ազգանունը:

Երրորդ անվանացանկը մեզ փոխադրում է առասպելական Արշամ թագավորի, նույնքան առասպելական Արգար թագավորի՝ Քրիստոսի ժամանակացի հոր ժամանակը: Այդ անվանացանկը փակում է Զաչուրը, որը դառնում է Քովմայի հնարած հաշորդ պատմութեան հերոսը, եւ որում մեր հեղինակի նպատակն է ապացուցել Արծրունիների եւ Բագրատունիների ազգակցական կապերի վաղեմութիւնը: Այդ պատմվածքի հիմքում ընկած է Մով. Խոր. պատմութիւնը Ենանոս (Անիանոս) Բագրատունու մասին, որը շնորհազուրկ է լինում թագավորից: Զրկելով Ենանոսին բոլոր պատիվներից, թագավորը բանտ է դնում նրան, սպառնալով նրան, եթե չհրաժարվի հրեական հավատքից, կախաղան բարձրացնել, իսկ նրա ողջ տոհմը ոչնչացնել: Մինչեւ այդ տեղը Քովման կրկնում է Մով. Խոր., սակայն շարունակութիւնը տալիս է իր մեկնաբանութեամբ: Ենանոսին բարձրացնում են կախաղան, բայց եւ այնպես Զաչուրը, խնդրելով նրան եւ ողջ նրա տոհմը թագավորից, հասցնում է հանել Ենանոսին կախաղանից դեռեւս կենդանի վիճակում եւ փոխադրելով նրան ու ողջ նրա տոհմը Հայաստան, փրկում է նրանց ոչնչացումից եւ իր Սահակ որդուն ամուսնացնում Ենանոսի դստեր՝ Սմբատուհու հետ⁴¹:

«Այս առաջին խնամանալ եղեւ ընդ միմեանց,- գրում է Քովման,- Բագրատունեաց եւ Արծրունեաց»: Այսպիսով, Քովման առաջին երեք անվանացանկերի օգնութեամբ ապացուցելով Արծրունիների ազնվատոհմութիւնը, վաղարշակ թագավորից հաստատված բարձի եւ գահի օրինականութիւնն ու Բագրատունիների հետ իրենց ազգակցութեան վաղեմութիւնը, հիմք է կառուցում Հայոց նախարարական տների մեջ առաջնային տեղ գրավելու եւ հայոց միապետի գահը ստանալու Արծրունյաց իշխանների հավակնութիւնների համար:

⁴¹ Այս պատմութիւնը բավականաչափ բնորոշ օրինակ է, թե ինչպես միտումնավոր նպատակներից ելնելով՝ Քովման մշակում է իր աղբյուրների տվյալները: Հայտնի է, որ դինաստիական ամուսնությունները Արծրունիների եւ Բագրատունիների միջև սկիզբ են առել 9-րդ դ., երբ Աշոտ Մսակերի դուստր Հռիփսիմեն կնության էր տված Համագասպ (Համգա) Արծրունուն: Հաշորդ ամուսնությունը կայացավ Գրիգոր-Գեորգի Արծրունու եւ ապագա թագավոր Աշոտ 1-ի դստեր՝ Սոփիի միջև: Վերջապես, Գագիկ Արծրունու առաջին ամուսնությունը եղել է Ամբատ 1-ի եղբոր՝ Շապուհի դստեր հետ: Ակնհայտ է, որ Քովման, ձեռքի տակ չունենալով Արծրունիների եւ Բագրատունիների ազգակցական կապերի վաղեմութիւնը հաստատող աղբյուրներ, ինքը ստեղծեց այդպիսի, հետ տանելով 9-րդ դ. առաջացած ամուսնական կապերը Արծրունիների եւ Բագրատունիների միջև Արշամ թագավորի ժամանակները, հաղորդելով այդ կապերին իր տեսակետից անհրաժեշտ վաղեմութիւն, միաժամանակ, ներկայացնելով նաեւ Արծրունիներին Բագրատունյաց տոհմը ոչնչացնելուց փրկարարների դերում:

Արշամ թագավորին հաջորդում է Աբգարը, որի մասին հորինել են բազմաթիվ առասպելներ ասորական, հայկական եւ վրացական մատենագրություններում, եւ դրանց լիակատար տարբերակներից մեկը տալիս է Մով. Խոր., Աբգարին ներկայացնելով որպես Հայոց թագավոր (I, 26-33): Առասպելը Աբգարին վերագրում է առաջնություն մյուս հեթանոսական թագավորների մեջ քրիստոնեությունը ընդունելու հարցում, ինչպես նաեւ նամակարգություն Հիսուս Քրիստոսի հետ, որն ուղարկել է Աբգարին իր անձեռագործ պատկերը եւ Քաղեոս առաքյալի միջոցով բուժել նրան ծանր հիվանդությունից: Քովման, իհարկե, չէր կարող ձեռքից բաց թողնել Արծրունիներից եւս մեկին որպես Քրիստոսի եւ Աբգարի ժամանակակից ներկայացնելու հնարավորությունը: Տվյալ դեպքում նոր անվանացանկ հնարելու անհրաժեշտությունը վերանում էր, անհրաժեշտ էր միայն գտնել Ջաջուրի հաջորդին, որին եւ գտավ Մով. Խոր. պատմությունում (II, 29), որտեղ վերջինս պատմում է, թե ինչպես Աբգարը ուղարկում է Հերովդեսի դեմ պատերազմող Պետրայի թագավոր Արետին օգնական զորք՝ ոմն Խոսրան Արծրունու գլխավորությամբ: Այս Խոսրան Արծրունուն, որը ջախջախիչ պարտության էր մատնել Հերովդեսին, Քովման վեր է ածել Խուրանի. վերջինիս նա ներկայացնում է, որպես «զայր իմաստուն եւ քաջամարտիկ, կորովի յաղեղն եւ ի զէն եւ յասպազէն...», եւ ամենակարեւորը, որը առաջինն էր հայոց նախարարներից հավատացել Քրիստոսին⁴²: Ճիշտ այնպես, ինչպես Աբգարը հեթանոս թագավորներից առաջինը հավատաց Քրիստոսին:

Քովման Խուրանին մի կողմից օժտել է քաջարի ռազմիկի հատկանիշներով, որին ռազմական սխրագործությունների համար Տիբերիոս կայսրը պարգևատրել է «ծիրանեօք եւ բրաբիոնա», մյուս կողմից՝ քրիստոնյա ճգնավորի, որն իր կյանքի վերջին տարիները անց է կացրել Երուսաղեմում Աբգար թագավորի տիկնոջ Հեղինեի միջավայրում. «... եւ առեալ ոսկի զտիկնոջն եւ զիւր՝ գնաց յԵգիպտոս գնել ցորեան յաւուրս սովոյն որ եղեւ առ Կղոզեաւ բաշխել զայն որրոց եւ այրեաց» (I, 6)⁴³:

⁴² Գ. Խալաթյանցը այդ կապակցությամբ գրում է. «Հետաքրքիր է նկատել, թե ինչպես Խոսրանի մասին (Մով. Խոր.) ի միջի այլոց արված դիտողության հիման վրա Քովման մշակել է այդ իշխանի հետագա բավականաչափ ֆանտաստիկ պատմությունը»: ("Армянские Аршакиды". Москва, 1903, с. 98): Մով. Խոր. իր հերթին այդ տեղեկությունը փաղել է կարուբնայից, ըստ որի Աբգար թագավորը օգնություն է ուղարկում մի գունդ զինվորներ «ոմն Խոսրանի գլխավորությամբ» (Լաբուրնա, Քուլթ Աբգարու թագավորի Եդեսիայի փաղափ: Եդեսիա, 1868, էջ 29): Խոսրան = Xesron (Հ. Անառյան, Անձ. ան. բառ., II, էջ 528):

⁴³ Քովման Հեղինե թագուհու մասին տեղեկությունները փոխ է առնում Մով. Խոր. «Այս Հեղինե զարդարեալ հաւատով, որպէս եւ զայր իւր զԱբգար, ոչ հանդուրժեաց բնակել ի մէջ կռապաշտիցն, այլ շոգաւ յԵրուսաղէմ յաւուրս Կղաւթեայ, ի սովին՝ զոր

Որպես պատմական ֆոն օգտագործելով Մով. Խոր. Պատմության 2-րդ գրքի 37-47 եւ 60-րդ գլուխները, Քովման այնուհետեւ ներկայացնում է Խուրանի որդու՝ Վաչեի եւ վերջինիս որդու՝ Սահակի, ինչպես նաեւ Խուրանի եղբոր՝ Արշավիրի եւ եղբորորդու՝ Համամի պատմությունը, շնայած Խուրանի հետնորդներին Քովման չի ներկայացնում հատուկ անվանացանկով, սակայն այդպիսին հեշտությամբ կարող է կազմել ինքը՝ ընթերցողը: Խուրան, Արշավիր, Վաչե, Սահակ, Աշոտ, Համամ⁴⁴: Նրանք բոլորն էլ առասպելական Արտաշես թագավորի ժամանակակիցներն են եւ ի տարբերություն նախորդ երեք ցանկերում հիշատակվածների, նրանցից յուրաքանչյուրի մասին Քովման հնարում է շատ թե քիչ ընդարձակ պատմություն: Նրա նպատակն էր ցույց տալ նախ, որ Արծրունիները ոչ պակաս դեր են խաղացել Երվանդ թագավորի հետապնդումներից մանուկ Արտաշեսին փրկելու գործում, այնուհետեւ, որ Արտաշեսը հաստատեց Արծրունիների իշխանական իրավունքը Աղբակ գավառի նկատմամբ եւ Համամի «նախնեացն ջան եւ վաստակ ... Համամայ յառաջ մատուցեալ ի գահ եւ ի բարձ հայրենեացն ձգեալ զնա՝ ժառանգեցուցանէ զերկիրն Աղբակ...»:

Քովմայի հաջորդ՝ շորրորդ անվանացանկը, ավարտվում է Բարգեն անունով: Բարգենը՝ Տիգրան վերջինի որդու՝ Վաղարշակ թագավորի ժամանակակիցն է եւ վերջինիս «հիւսիսայինն Հազրաց» դեմ վարած պատերազմի

մարգարէացան Ազարոս, եւ տունալ զամենայն զանձս իւր յեգիպտոս՝ զնեաց ցորեան բազում յոյժ եւ բաշխեաց ամենայն կարօտելոց. որում եւ վկայէ Յովսէպոս» (II, 35):

«Զայսու ժամանակաւ,- գրում է Եվս. Կես. - եւ սով մեծ լինել ի Հրէաստանի, ասէ, յորոս եւ դշխոյն Հեղինէ զնեաց ցորեան յեգիպտոսէ բազում ոսկոյ եւ բաշխեաց կարօտելոց: Եւ միաբան գտանես զբանս ընդ Գործոց Առաքելոցն, յորում գրեալ է այսպէս. Բայց յաշակերտաց անտի՝ որ էին յԱնտիոք քաղաքի, որպէս զիարդ կարող էր, մի մի ի նոցանէն ընտրեցին տալ տանել սպաս պաշտաման աղբատացն որ էին յԵրուսաղէմ եւ արարին այնպէս, եւ ետուն տանել առ երիցունսն ի ձեռն Պօղոսի եւ Բառնաբայ» (Եկեղեցական պատմութիւն, Ա, 12): Իսկ «Գործ Առաքելոց» -ում (II: 28-30) գրված է. «Յարուցեալ մի ոմն ի նոցանէ՝ անուն Ազարոս, նշանակեաց հոգւովն՝ սով մեծ լինել ընդ ամենայն աշխարհ, որ եղև առ Կղաղեաւ: Բայց աշակերտաց անտի՝ որպէս զիարդ կարող ոք էր, իւրաքանչիւր ոք ի նոցանէ՝ որոշեցին առաքել ի պէտս եղբարացն՝ որ բնակեալ էին ի Հրէաստանի գոր եւ արարին իսկ՝ առաքեալ առ երիցունսն ի ձեռն Բառնաբայ եւ Սաղոսի»: Ինչպէս Մով. Խոր., այնպէս էլ Եվս. Կես. որպէս աղբյուր օգտագործել են կարուբնայի «Քուղթ Աբգարու բագաւորի» (Տե՛ս՝ Մատենագիտություն, I, էջ 3):

⁴⁴ Ինչպէս նշում է Հր. Անառյանը (Անձնան. բառ., III, էջ 23), հնարավոր չէ, որ 2-րդ դարում հայերը օգտագործած լինեին արաբական Hamam անունը: Ի դեպ, ըստ իր սովորության, Քովման փոխարինել նրանով Մով. Խորենացու Արեղյանների տոհմի նահապետ ոմն Արեղոյին, մի նարպիկ շողոփորք եւ հանոյախոս մարդու. բնավորության նման գծերով Քովման օժտել է նաև Համամին՝ «սէգ եւ ամբարտաւան, յոյլ եւ թոյլ առ պատերազմի գործ...», (I, 8):

մասնակիցը⁴⁵: Բարգենը Աշոտ Բագրատունու հետ միասին (երկուսի մասին էլ եւս վկայում է միայն Քովման), փրկվելով, թագավորի մահվան գույժը բերել, հասցրել են Հայաստան: Եվ քանի որ այն, ինչ կատարվել է Արծրունյաց տոհմի հետ հետազայում, Քովմային մնացել է անհայտ, ապա «... զազգին շարս ըստ գիւտի աշխատութեանն բաւական համարեցաք յառաջ վարել մինչ ի թագաւորել Տրդատայ եւ սկիզբն լինել լուսաւորութեանն Հայոց աշխարհիս ի ձեռն մեծի Գրիգորի Լուսաւորչին» (Ա, 9): Նրա քննական աշխատանքի արդյունքն էր հինգերորդ եւ վերջին անվանացանկը, որի օգնությամբ նա անցնում է Հայաստանում քրիստոնեության տարածման եւ պետական կրոնի վերածման կարեւորագույն շրջանը: Նախորդ ցուցակների նման, այստեղ էլ հերոսի դերում հանդես է գալիս ցուցակի վերջում հիշատակված Տիրոցը, որը իր բնավորության հատկանիշներով լիովին համապատասխանում է քրիստոնեության ընդունման եւ սուրբ Գրիգորի լուսավորչական գործունեության ժամանակին՝ «...այր հեզ, խոհական, խորհրդական, համեստ ի բանս, համեստ ի նայեցուածս, որ ոչ բազմաց քան եթէ միոյն, այսինքն Քրիստոսի՝ զինքն ծանօթ ջանայր կացուցանել: Քանզի եւ ի ժամու անդ, յորում զմեծն Գրիգոր առեալ տանէին ի քաղաքն Կեսարացոց ձեռնադրել զնա ի քահանայութիւն, ի լուսարար վարդապետութիւն աշխարհիս Հայոց՝ էր ընդ մեծ նախարարսն երթեալ եւ Տիրոց»։ Թվարկելով իր Պատմությունում սբ. Գրիգորին ուղեկցող նախարարական տոհմերի ներկայացուցիչներին, Ագաթանգեղոսը 16-րդ տեղում հիշատակում է Արծրունի իշխանին⁴⁶, ինչի հիման վրա էլ, ըստ երեւույթին, Քովման ստեղծել է հանգամանքներին համապատասխանող Տիրոցի վարքագրական կերպարը. նա «... ոչ յառաջանայր ի բարձր նախագահ ճոխանալ երեւելեօքս եւ լքանելեօքս, սրբոյ Աւետարանին հետազօտեալ կրթականին՝ մի բազմել յառաջին բարձին, ոչ եթէ ոչ ունէր նազելի եւ բարձրագահ պատիւս ի մէջ մեծ նախարարութեանց Հայոց, զի ո՛վ ոք այլ ճոխ քան զՍենեքերիմայսն, զոր համարձակախօսն Նսայիաս հրապարակէ առ Իսրայէլեան զարմն զսորայս մեծափառութիւն. այլ եւ Մակեդոնացին Աղեքսանդրոս ոչ սակաւ դրուաթեօք արձանս գրէ ի մատեանս դիւանապահ աւանդութիւնս զսորայս մեծափառ գլխաւորութիւն» (I, 10):

Քովմայի Պատմության առաջին գրքում Տիրոցը վերջինն է իր ստեղծած կերպարներից, առաջին գրքի 10-րդ գլխի շարունակությունում եւ վերջին՝ 11-րդ գլխում, ընդհուպ մինչեւ սբ. Սահակի եւ սբ. Մեսրոպի մահը, Քովման բավարարվում է, աննշան բացառությամբ, Արծրունիներին վերաբերվող այն տեղե-

⁴⁵ Տե՛ս՝ Մով. Խոր., II, 65:

⁴⁶ Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1909, # 795, 796, էջ 414-415:

կուսիցուններով, որոնք պարունակվում են Փափստոս Բուզանդի, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու գործերում (Շավասպ Արծրունի, Մեհրուժան Արծրունի, Աղան եւ այլն):

Պատմության վերջին՝ 11-րդ գլուխը ավարտվում է հետեւյալ նախադասութեամբ. «Կատարեցաւ Դպրութիւն առաջին Պատմութեան Հայոց ըստ ազգաբանութեան Արծրունեաց սեռի», սակայն բովանդակության եւ աղբյուրների մշակման ու ներկայացման տեսակետից Արծրունիների ծագումնաբանության գրքի մեջ պետք է մտնեին նաեւ երկրորդ գրքի առաջին երկու գլուխները: Առաջին գլխում, ուր խոսքը վերաբերում է 451 թ. Վարդանանց պատերազմի իրադարձություններին, սպասելի էր որպէս աղբյուր⁴⁷ եղիշեի գործը, սակայն Քովման, ինչպէս նաեւ Հովհ. Դրասխ., նախընտրել է օգտվել մի ժողովրդական ավանդույթի անվավեր տվյալներից: Սույն ավանդույթից օգտվել են նաեւ Վարդանը եւ Ստեփանոս Օրբելյանը: Հովհ. Դրասխ. լինելով Մամիկոնյան իշխանների բազմադարյան ախոյանների՝ Բագրատունյաց տոհմի ջերմեռանդ շատագույր, չի հիշատակում եղիշեին, որի աշխատությունից այսուհանդերձ քաղել է բազմաթիվ գեղեցիկ արտահայտություններ, որովհետեւ նա Մամիկոնյանների պատմիչ էր⁴⁸: Քովմայի դեպքում նման պատճառաբանությունը բացակայում է, քանի որ Մամիկոնյանները 9-րդ դարում քաղաքական ասպարեզում այլեւս գոյություն չունեին եւ հետեւաբար չեն եղել Արծրունիների ախոյաններ: Սակայն մնում է մեկ այլ կարեւոր հանգամանք. Քեպետ եղիշեի գործում Արծրունյաց տոհմի ներկայացուցիչները բազմիցս են հիշատակվում, սակայն նրանք բոլորովին կորչում են այն փառքի լուսապսակի ճաճանչներում, որով եղիշեն օժտել է սբ. Վարդան Մամիկոնյանին: Մինչդեռ Քովմային ցանկալի էր, որ վերջինիս կողքին կանգնած լինի նրան ոչնչով չզիջող Արծրունյաց տոհմի ներկայացուցիչ: Այդպիսի դրական հերոսի նա պատկերում է ի դեմս իր իսկ հնարած Վահան Արծրունուն⁴⁹, որին 451 թ.

⁴⁷ Այդ գլխի աղբյուրագիտական մանրամասն վերլուծումը տե՛ս՝ Գր. Տեր-Պօղոսեան, Նկատողութիւններ եղիշեի պատմութեան վերաբերեալ, «Հանդէս ամսօրեայ», (Վիեննա, 1896, 5):

⁴⁸ Ճիշտ նույն ձևով Հովհ. Դրասխ. իր Պատմության 12-րդ գլխում համարյա բառացի մեջ բերելով սբ. Ներսէս Պարթևի համառոտ տարբերակը, բաց է թողնում Մամիկոնյաններին վերաբերող բոլոր հատվածները: (Տե՛ս՝ Иованнес Драсханакертци. История Армении. Перевод с древнеармского, вступительная статья и комментарий М. О. Дарбинян-Меликян, Ер., 1986, с. 266, прим. 3 к гл. XII).

⁴⁹ Քովմայի հնարած Վահան Արծրունուն առաջին անգամ հանդիպում ենք 1-ին գրքի 6-րդ գլխում, որտեղ նա հանդես է գալիս որպէս Մամբրեի անվավեր գործի նույնքան անվավեր պատվիրատուն. «Այս Վահանս, զոր յիշեցաք, - գրում է Քովման, - այն Վահան է, զոր քագատրեցուցին նախարար Հայոց յաւուրս սրբոյ Վարդանայ...»:

պատերազմի նախօրեին հայոց նախարարները միտք հղացան թագավոր կարգելու, սակայն հետո, ինչ-ինչ պատճառներով փոխելով մտադրությունը, որոշեցին ընտրել Վարդան Մամիկոնյանին: Վահանը ազնվորեն միացավ նախարարների այդ որոշմանը եւ, երբ սկսվեց պատերազմը պարսիկների դեմ, նա որպէս Վարդանի մտերիմ զինակիցը «խոյակապ եւ յականաւոր քաջամարտութեամբ ընդ սրբոյն Վարդանայ ճակատ առ ճակատ վարեալ զպատերազմն...»: Իսկ երբ պարսիկների զինված շոկատը շրջապատում է սր. Վարդանին, «... քաջն Վահան Արծրունի ընդ նմա նիզակակցեալ՝ մեռանին ի միասին քաջքն եւ ընտիրքն, մեծ նահատակք Վարդան եւ Վահան...» (I, 6):

Թե ինչու այդ մասին ոչինչ չի ասվում Եղիշեի գրքում հարցը կանխելու համար Քովման 2-րդ գլխում հնարում է պատմություն, իբր նեստորական Բարձունման, որը այդ նույն ժամանակ փորձել էր գործունեություն ծավալել Վասպուրականի հարավային շրջաններում, սակայն վտարվել է այնտեղից Տմորիք բերդի տիրոջ՝ Ներշապուհ Արծրունու կողմից, խնդրել էր Եղիշեից իր երկի ձեռագիրը եւ այնտեղից դեն նետել Արծրունիներին եւ, հատկապէս, Վահանին վերաբերող բոլոր տեղեկությունները⁵⁰: Նման միջադեպի հանդիպում ենք նաեւ Մով. Խոր. մոտ, որը Հայկի ծագումնաբանության կապակցութեամբ գրում է. «Եւ զայս մեզ Արիւղենոս յիւրում առաջնում առանձնականի իմն մանր ազգաբանութեան ասէ. զոր աստ ուրեմն յետոյ ոմանք բարձին» (Ա, 21): Ըստ երեւույթին հենց սույն հատվածն է հուշել Քովմային վարվել նոյն ձեւով եւ այս դեպքում:

Այսպիսով, 2-րդ գրքի առաջին երկու գլուխներում մենք տեսնում ենք նույն այն միտումներն ու ձեւերը, որ բնորոշ են առաջին գրքին: Իսկապէս ասած, հենց այս երկու գլուխներով է ավարտվում Քովմայի աշխատության այն մասը, որը պետք է անվանել «Դպրութիւն առաջին Պատմութեան Հայոց ըստ ազգաբանութեան Արծրունեաց սեռի»: Դա ճիշտ կլինի ինչպէս բովանդակության, այնպէս էլ նյութերի մշակման տեսակետից: Սակայն իր գրքի ավարտը Քովման հարմարեցնում է Մով. Խոր. Պատմության երրորդ գրքի ավարտին, ինչը կրկին ապացուցում է, որ Մով. Խոր. 4-րդ գիրքը գոյություն չի ունեցել, քանի որ վերջինիս գործն է, որ Քովմային ծառայել է որպէս իր առաջին գրքի հիմնական աղբյուրը:

Առաջին գրքում օգտագործված աղբյուրների ընդգրկումը ցույց է տալիս Քովմայի խորագիտակությունը, նրանցում պարունակված հսկայական նյութի

⁵⁰ Հերժումը տե՛ս Եղիշէ, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին. քարգմ., ներածական հոդվածը, ծանոթագր. Ե. Տեր-Մինասյանի., Եր., 1946, էջ 11-13: Եղիշէ աբեւպ. Դուրեան, Ոստումնասիրութիւնք եւ Բնադատութիւնք, 4. Եղիշէ եւ Բարձունմայ: Երուսաղէմ, 1934, էջ 37-49:

օգտագործման հմտությունը, նա մեծ խնամքով աղբյուրներից, հատկապես Մով. Խոր., քաղում է ամեն մի ակնարկ, ամեն մի նախադասություն, որը կարող է օգտակար լինել, եւ վերափոխում այն իրեն անհրաժեշտ ձևով, համապատասխանեցնելով սեփական պատկերացումներին, թե ինչպիսին պետք է լինի իր հովանավորներ եւ, թերեւս, ազգակիցներ՝ Արծրունյաց իշխանների ծագումնաբանությունը:

Սակայն Քովման օգտվել է ոչ միայն գրավոր աղբյուրներից, այլ նաեւ մեզ չհասած Արծրունիների տոհմական ավանդույթներից: Դա մի տեսակ վերապրումներ եւ հիշողություններ են Արծրունյաց տոհմի իշխանների հեռավոր անցյալի, երբեմնի իրենց պատկանող տիրույթների, արմատների մասին, թե ինչ հանգամանքներում նրանք հայտնվել են Վասպուրականում, որոնք Քովման քաղել է կիսաառասպելական-կիսապատմական ավանդույթներից եւ զգալիորեն վերամշակել իր ստեղծագործական ձեւերին հատուկ եղանակով:

Հայկական պատմագրությունում մինչեւ 20-րդ դարը իշխում էր Մով. Խոր. տեսակետը Արծրունյաց տոհմի ասորեստանյան ծագման մասին⁵¹: Առաջինը այդ վարկածի ճշմարտությանը կասկածել են Հ. Մարկվարտը եւ Ն. Ադոնցը, որոնք ենթադրել են, թե Արծրունիները ծագում են Մոփքի թագավորական հարստությունից⁵²: Այդ տեսակետը ընդունել է նաեւ Գր. Ղափանցյանը, որ համարում է նրանց Մոփքի Շահիդյան հարստության շառավիղներ: Միեւնույն ժամանակ նա չի բացառում նրանց տեղական ծագումը. «...ուրարտական Artsuniuni (կամ Artsuini) քաղաքի անունից⁵³: Գր. Ղափանցյանի ենթադրությունը Արծրունյաց տոհմի ուրարտական ծագման մասին շատ համոզիչ ապացուցում է Ս. Բարխուդարյանը⁵⁴: Վերլուծության ենթարկելով ուրարտական թագավորներից մեկի՝ Մենուայի սեպագիր արձանագրություններում հիշատակվող Artsuniuni ցեղի, տեղանքի ու քաղաքի անվանումը, որ վերաբերում է մ. թ. առաջ 9-րդ դ. վերջին, այսինքն՝ Սենեքերիմ թագավորի սպանությունից 120 տարի ավելի վաղ, նա հերքում է «ամեն մի հնարավորություն կապելու Արծրունիներին Սենեքերիմ թագավորի

⁵¹ «Յորոց զմինն յարեւտից հարաւոյ աշխարհիս մերոյ, մերձ ի սահմանս նորին Ասորեստանի բնակեցուցանէ Սկայորդին մեր քաջ նախնին, այսինքն է զՍանասարն ... Իսկ Արդամոզանն յարեւելից հարաւոյ նորին կողմանն բնակեալ, ի սմանէ ասէ պատմագիրն լինել զԱրծրունիս եւ զԳնունիս» (Ա., 23):

⁵² Ն. Ադոնց, Հայաստանը Հուսիսիսիանոսի դարաշրջանում: Եր., 1987, էջ 461:

⁵³ Гр. Капанцян. Историко-лингвистические работы, т. II, Ер., 1975, с. 99-113.

⁵⁴ С. Бархударян. Урартское происхождение нахарарского рода Арцируни "Исследования по истории народов Востока". Сборник в честь академика И. А. Орбели. М.-Л., 1960, с. 29-37.

որդիների հետ»⁵⁵: Ս. Բարխուդարյանի ենթադրությամբ, Artsuniuini քաղաքը պետք է գտնվեր Վանա լճի հարավային ծայրի մոտ, Սղգա գյուղից ոչ հեռու, որտեղ եւ հայտնաբերված են եղել այդ քաղաքը հիշատակող արձանագրերից մեկի բեկորները: Artsuniuini քաղաքի հետ Ս. Բարխուդարյանը նույնացնում է Սղգա գյուղի մոտ գտնվող լեռան գագաթին պահպանված երբեմնի հզոր բերդի մնացորդները, որտեղից, ինչպես նա ենթադրում է, եւ տեղափոխված են եղել արձանագրությունները պարունակող բեկորները: «Բացի վերոհիշյալ արձանագրություններից, - շարունակում է նա, - հայտնաբերված է եղել նաեւ մեկ այլ ստելայի մաս, որի արձանագրությունում հիշատակվում է ձիարշավ «Մենուան իր Արցիբինի ձիով ուսույուն է կատարել 22 կանգուն հեռավորությամբ»: Քովմա Արծրունին ունի այդ ձիարշավարանի հետեւյալ հետաքրքիր նկարագրությունը՝ նա «... դաշիկ արարեալ յայնկոյս քան զՎանտոսպ, ի տեղւոջն արձանաշար քարակարկառ գոգաձեւ միջոցի երկուց բլրակաց, որ հայի յնրիվարաց արկման դաշտն, ի վերայ լեզուոյ գեաւղջն» (III, 18): Նախքան առաջին համաշխարհային պատերազմը այնտեղ դեռեւս տեղի էին ունենում մրցումներ եւ ձիարշավներ, իսկ ձիարշավարանի տեղը կոչվում էր «Ավագաքար»⁵⁶: Հողվածագրի միակ պնդումը, որի հետ դժվար է համաձայնել, վերջինիս կշտամբանքն է Քովմայի հասցեին, որն իբր «...ոչինչ չի ավելացնում տոհմի ծագման վերաբերյալ Մով. Խոր. հաղորդած տեղեկությունների վրա եւ միայն երկու անգամ կրկնում է Խորենացու պատմածը Սենեքերիմի եւ նրա որդիների մասին»⁵⁷: Իրականում Քովման օգտվել է մեզ չհասած տոհմական ավանդույթներից, ընդ որում, նրա պատմությունում նշմարվում են ավանդույթների երկու ցիկլ՝ ուրարտա-մեդական եւ ասորեստանյան: Առաջին ցիկլը Արծրունիներին կապում է մեդական թագավոր Աժդահակի, իսկ երկրորդը՝ Ադրամելիքի եւ Սանասարի միջոցով ասորեստանյան թագավոր Սենեքերիմի հետ: Այդ երկու ցիկլերը սեղմ ձեւով ներկայացված են Քովմայի պատմվածքում. թե ինչպես Արծրունիների երկրորդ անվանացանկը փակող Կյուրոս Արծրունին Արշակ Պարթևի օրոք աչքի է ընկել իր քաղաքործություններով եւ խոհեմությամբ եւ «խնդրէ զնա Վաղարշակ յԱրշակայ եւ առնու ածէ զնա ընդ իւր ի Հայս, եւ անուանէ զնա Արծրունի, առաջին լինելով նորա ի դաշտավայրին Արծուիք կոչելոյ, դարձեալ ըստ պատահման եւ տարբերութեան արձուունզն կերպարանօք...», «Երկրորդ վասն բնակութեան նախնեաց նորա Ադրամելեայ եւ Սանասարայ Արզն՝ կոչեցին Արզրունիք»: (Ա, 6): Այդ բացատրության կապակցությամբ Քովման նկատում

⁵⁵ Անդ, էջ 37:

⁵⁶ Անդ, էջ 37:

⁵⁷ Անդ, էջ 30:

է «այլ ինձ զառաջինն ախորժելի զհաւատարմութիւնն ի մէջ առնուլ»: Այսպիսով, Քովման համոզված է, որ ավելի ստույգ է այն առասպելը, որը կապում է Արծրունի անունը Արծուիկ դաշտավայրի անվան հետ: Ինչպես գրում է Գր. Ղափանցյանը, «Ուրարտական Artsuniuini - ից կամ Artsuini -ից անցումը հայկական Artsruni-ի լիովին հնարավոր է երկու «ո» -ի դիսիմիլյացիայի դեպքում»⁵⁸:

Քննության առարկա առասպելի Արծուիկ դաշտավայրը թվում է, հնարավոր է նույնացնել վերոհիշյալ այն դաշտավայրի հետ, որտեղ անց էին կացվում ձիարշավները եւ որը, Ս. Բարխուդարյանի կարծիքով, տեղայնացվում է Artsuniuini քաղաքի մոտ: Եթե Արծրունի անունը ըստ առաջին բացատրության ծագում է ուրարտական Artsuini ցեղի, տեղանքի, վայրի անունից, ապա առասպելի երկրորդ մասը հետաքրքիր է նրանով, որ մատնանշում է Արծրունի տոհմական անվան սերումը «Արզն» անվանումից, ինչը տանում է դեպի Արծրունիների ծովենական (ըստ էության՝ ասորեստանյան) արմատները: Քովմայի պատմվածքները Քսերքսեսի եւ Արշեզի, երկու մեղական արքայազների, Քսերգսեսի հետնորդ Կյուրոս Արծրունու, Աժդահակ մեղական թագավորից սերող Ջլմար ամրոցի տիրուհի Ջայլամայրի մասին կարելի է վերագրել տոհմական ավանդույթների ուրարտա-մեղական ցիկլին: Ծովենական ցիկլին, որը, ըստ էության, կապում է Արծրունիների ծագումը Սենեքերիմ թագավորի հետ, վերաբերում են պատմվածքներ Ասուդի, Ջաշուրի, Խուրանի եւ վերջինիս որդու, թոռան, եղբոր, եղբորորդու մասին:

Սկսելով Արծրունյաց տոհմի բուն ծագումնաբանական պատմությունը Տիգրան թագավորի ժամանակներից, Քովման ներկայացնում է այդ գլխում պերսոնաժների զուգահեռ երկու զույգ՝ մեղականը՝ հանձինս Քսերքսեսի եւ Արշեզի եւ ասորեստանյանը՝ հանձինս Ադրամելիքի եւ Սանասարի, որոնք կարծես խորհրդանշում են Արծրունյաց տոհմի երկու ճյուղերը՝ իզականը եւ արականը: Արդ երկու ճյուղերը միանում են այն ավանդույթում, որը Քովման պատմում է Տ-րդ «Թագաւորելն Արտաշէսի ի վերայ Հայոց» գլխում: Խուրանի թոռ Սահակի «... ձեռն հաւատաց Արտաշէս զգաւառն Ադրակ»⁵⁹, զի յայն վայր ոմանք ի զարմիցն Աշդահակայ Մարի բնակէին անդ»⁶⁰, արք քաջք, կորովագէնք

⁵⁸ Гр. Капанцян. Историко-лингвистические работы, т. II, с. 100.

⁵⁹ Ս. Բարխուդարյանը Ադրակ անվանումը կապում է ասորեստանյան սեպագրերում հիշատակվող Arbaku տեղանքի եւ Arbak`ku երկրի անունների հետ, որոնք տեղայնացվում են Մ. Ջաք գետի վերին հոսանքում, որտեղ եւ գտնվում էին Մ եւ Փ Ադրակ գաւառներն (տե՛ս նշվ. աշխ., էջ 37):

⁶⁰ Ուրարտական սեպագրերի ժամանակաշրջանում եւ ավելի ուշ՝ Արարատից դեպի հարավ մինչեւ Նախնավան, Ուրմիա լճի առափնյա շրջաններում եւ հետագա Մոկֆի եւ

եւ դիպաղեղունք, բայց նուազեալ ազգին՝ ոչ ոք ունէին, որ կարող լինէին զգործ պատերազմին վճարել եւ զպաշտօն թագաւորին... Բայց կին ոմն յազգէն Աշդահակայ բնակէ յամուրսն Զլմար եւ ի Սրինգ, ի գաւարին ի Փոքր Աղբակ, եւ յանուն կնոջն Զայլմար ... նորա դուստր մի Անուշ անուն, առնու զնա Սահակ կնութեան հրամանաւ Արտաշէսի, եւ կնքեալ աշխարհն հաստատէ Սահակայ ի սեպհական ժառանգութիւն...»⁶¹:

Հետեւապես, ըստ տոհմական ավանդույթների, Արծրունիները արական գծով սերում են ասորեստանյան թագավոր Սենեքերիմից, իսկ իգականով՝ մեղական թագավոր Աժդահակից: Իրականում կատարվել է տեղային իշխանական տոհմի, որի ակունքները սկիզբ են առնում ուրարտական ժամանակաշրջանից եւ Ծոփքի Շահիդյան հարստությունից ծագող իշխանական տոհմի միաձուլումը⁶²:

Մեծ հավանականությամբ կարելի է ենթադրել, որ Արծրունի իշխանների տոհմական ավանդույթների ողջ հարստությունից Քովմայի երկում իր արտացոլումն է գտել միայն փոքր մասը, որն ինքը այնպես է վերամշակել, որպեսզի այն համապատասխանի Արծրունի իշխանների՝ Սենեքերիմ թագավորից ծագելու Մովսես Խորենացու վերսիային:

Յուրովի օգտագործելով բազմաթիվ պատմական, ապոկրիֆիկ եւ առասպելական աղբյուրների տվյալները՝ Քովման գրում է Արծրունի իշխանների ծագումնաբանության գիրքը, որտեղ ապացուցում է, որ Արծրունյաց տոհմը ունի երկու կարեւորագույն հատկանիշներ՝ ազնվատոհմություն՝ շնորհիվ ասորեստանյան թագավոր Սենեքերիմից եւ մեղական թագավոր Աժդահակից ծագելուն եւ վաստակ՝ զինվորական ու պալատական (արծվակիրներ) ծառայությունում: Այսպիսով, նա հաղորդել է Արծրունյաց տոհմին շուք,

Կորնայի տարածքներում, բնակվում էին մարերի (մեղացիների) ցեղերը (տե՛ս՝ Դր. Капанцян, նշվ. աշխ., էջ 78, ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 463-466):

⁶¹ Ուշագրավ է, որ մանրամասն խոսելով մեղական արեւայազներ Քսերեսեսի ու Արշեզի մասին, Քովման ոչ մի անգամ ուղղակի չի ասում, որ նրանք Արծրունիների նախնիներն են, բողնելով ընթերցողին ինֆուորույն կռահել այն: Բացատրությունը, թերեւս, պետք է տեսնել Քովմայի ասածում. «... ոչ էր օրէն թագաւորացն եւ օրինադրացն զկանանց ազգի թիւ ազգաբանութեան շարել, բայց միայն ըստ ժամանակագրության կանոնի, որպէս ... զՓրկիչն մեր Տեառն Յիսուսի Քրիստոսի զըստ մարմնոյ ազգաբանութիւնն գրելով աւետարանիչն Մատթէոս՝ եւ թուէ մի ըստ միոջէ, սկսեալ Աբրահամէ եւ գայ անցանէ մինչ ի Յովսէփ եւ լո՛ւ վասն Մարիամայ զազգաբանելն ... նոյն զունակ եւ զՂուկա...» (Ա, 1):

⁶² Ն. Ադոնցը խոսելով նախարարությունների տոհմական հիմքերի մասին, անդրադառնալով Արծրունի իշխանների հարցին, նշում է, որ «Ծոփաց իշխանական տան մի նյութի տեղափոխությունը Աղբակ, տեղի է ունեցել ոչ թե Տիգրանի ժամանակ, ինչպես կարծում է գիտնականը (Հ. Մարկվարտը), այլ ավելի երիտ Արշակունիների օրոք: Արծրունի բառի ստուգաբանությունը դեռ նշտված չէ»: (Նշվ. աշխ., էջ 461, ծն. 1):

նշանակայնություն, ազնվագարմություն եւ դրա հետ կապված գերադասություն՝ Հայաստանի քաղաքական, սոցիալական եւ տնտեսական կյանքում առաջատար դերը խաղալու հավակնությունում: Հենց այդպիսի ծագումնաբանություն էր անհրաժեշտ Արծրունի իշխաններին, որոնք 9-րդ դարի վերջին քառորդում պատմական ասպարեզում հանդես գալով որպես Բագրատունյաց տոհմի ախոյաններ, կարիք ունեին ապացուցելու իրենց իրավունքները տոհմի հնությունը եւ ազնվագարմությունը: Քովման պատվով է կատարել իր առջեւ դրված խնդիրներից առաջինը՝ ստեղծել Արծրունյաց նախարարական տոհմի ծագման առասպելա-քաղաքական կոնցեպցիան, ընդ որում, եթե նա երբեմն դիմում էր «սեփական ֆանտաստիկ հավելումներին»⁶³, ապա դրանում նա միայնակ չէր. «նման հնարանքները խորթ չէին նաեւ հեռավոր անցյալի պատմիչներին, իսկ հին քրիստոնյա գրողների միջավայրում հանդիսանում էին համընդհանուր երեւույթ»⁶⁴: Ուսումնասիրողի խնդիրն է նման պարագայում հետազոտել, թե ինչպես, տվյալ դեպքում Քովմայի մոտ, «...միահյուսվում են տարատեսակ տարրերը, ինչ շափով են ներկայացված ... նրա երեք հիմնական աղբյուրները, այսինքն՝ ժողովրդական ավանդույթները, գրավոր աղբյուրները եւ նրա սեփական ստեղծագործությունը, որպես իրեն ժամանակակից ձեւ»⁶⁵: Քննելով Քովմայի երկի առաջին գիրքը, պետք հիշել, որ իր առաջին գիրքը ոչ թե հայոց հնագույն շրջանի պատմությունն է, այլ պատմվածք Արծրունիների ծագումնաբանության մասին: Այստեղից բխում է նրա ազատ վարվելակերպը փաստերի նկատմամբ, եւ երբ նա հիշատակում է որեւէ աղբյուր, ապա ամենեւին էլ չի հետապնդում ինչ-որ բիրտորակ նպատակներ: Աղբյուրների վկայակոչումները լոկ պատմվածքի գրական

⁶³ Гр. Халатянц. Армянский эпос в "Истории Армении Моисея Хоренского", Москва, 1896, с. 151.

⁶⁴ Н. Марр. Арабское извлечение из сирийской хроники Марибаса. СПб., 1902, с. 87-87. Նույն երեսույրը նկատում է նաեւ Հ. Տաշյանը, որը անդրադառնալով այն հարցին, թե ինչ մեծ ազդեցություն է ունեցել ասորական, հատկապես, ապոկրիֆիկ գրականությունը հայկական միջնադարյան մատենագրության եւ ընդհանրապես երեսուտնետական գրականության վրա, նշում է, որ հենց այդ պատճառով ինչպես ասորական, այնպես էլ հայկական պատմություններում զգալի շափով տեղ են գտել շատ թե՛ բիշ հնարված պատմվածքներ (տե՛ս՝ «Վարդապետութիւն առաւելոց անվավերական կանոնաց մատեան»-ը Վիեննա, 1896, էջ 2-3): Նման կեղծիքների օրինակ է բերում նաեւ Դ. Լիխաչովը. «Ահա, օրինակ, սիրիյան տարեգրություններից մեկում գերագնահատվում է առևտրականներ Ստրոգանովների դերը 16-րդ դ. Սիրիի յուրացման գործում: Կեղծի՛ք: Եթե ուզում եմ կեղծիք է, սակայն մի կեղծիք, որը բնորոշ էր այն ժամանակի համար, երբ Ստրոգանովները 17-րդ դ. երմակի արշավանում հատուկ դեր խաղալու հավակնություն ունեին» («Поэтика древнерусской литературы» Л. 1979):

⁶⁵ Н. Марр, նույն տեղում:

տարրերն են, որոնք կոչված են փոխարինելու հեղինակին պատմողի դերում. նա հիշատակում է այս կամ այն հեղինակի անունը պատմածը գեղարվեստորեն ձեւավորելու, աշխուժացնելու եւ նրան ճշմարտացիութեան պատրանք հաղորդելու նպատակով:

Քովմայի օգտագործած պատմական նյութը, լինի դա գրավոր աղբյուր կամ էլ առասպելներ ու ավանդույթներ, իրականում շատ ավելի բազմազան ու լայնածավալ է, քան այն, ինչ երեւում է մակերեսում: Քովման առատորեն օգտվում է ձեռքի տակ եղած փաստերից, սակայն, երբ փաստերը չեն համապատասխանում իր նպատակներին, նա հղումների եւ հիշատակումների անորոշութեան շնորհիվ ազատորեն փոփոխում է դրանք կամ էլ հնարում նորերը: Այդպիսին է Քովմայի պատմողական ձեւը իր Պատմութեան առաջին գրքում: Ժամանակակիցների համար նրա հնարանքները եւ փոխառութիւնները նույնքան ակնհայտ էին, որքան էլ ինքնըստինքյան հասկանալի: Թվում է, որ Հովհաննես Դրասխանակերտցին խոսելով հետտորական ոճի մասին, նկատի ուներ շարադրելու հենց նման ձեւը:

Ստ. Մալխասյանցը Քովմայի հիշատակած 4-րդ գրքի կապակցութեամբ, նշում է, որ «...Արժրունին հայտնի է իբրեւ անհավաստի տեղեկութիւններ հաղորդող հեղինակ»⁶⁶: Ի պաշտպանութիւն Քովմայի՝ կարելի է ասել, որ ոչ ոք չի պահանջի պատմական վեպեր գրող ժամանակակից հեղինակից պատմական փաստացի ճշգրտութիւն կամ էլ մատենագրական տվյալներ: Քովման իր առաջաբանում պարզ գրում է, որ իր առաջին գիրքը Արժրունիների ծագումնաբանութիւնն է: Գոյութիւն ունեցող ծագումնաբանութիւններից ո՞ր մեկն է ճշմարտացի:

Եթե Քովմա Արժրունու Պատմութեան առաջին գիրքը չի ծառայում որպէս ստույգ պատմական փաստերի աղբյուր, ապա պատմա-մշակութային եւ քաղաքական զարգացումների տեսանկյունից այն բացառիկ երեւույթ է միջնադարյան հայկական մատենագրութիւնում:

Ի տարբերութիւն առաջին գրքի, երկրորդ (բացառութեամբ առաջին երկու գլուխների) եւ երրորդ գրքերում աղբյուրների ուղղակի վկայակոչումները բացակայում են: Քովման բավարարվում է անորոշ հիշատակումներով, ինչպէս, օրինակ՝ «Եւ զրոյցք ժամանակաց սոցա յայլոց գրեալ յառաջագոյն, աւելորդ համարեցաք երկրորդել» (Բ, 4): Բարեբախտաբար, պահպանվել են երկրորդ գրքի աղբյուրները:

Վերը արդեն նշվել է, որ 2-րդ գրքի սկզբնական երկու գլուխներն իրենց բովանդակութեան եւ աղբյուրների մշակման տեսակետից հանդիսանում են

⁶⁶ Տե՛ս՝ Մովսէս Խորենացի, Հայոց պատմութիւն, Եր., 1940, էջ 18:

առաջին գրքի օրինաչափ շարունակությունը: Հետեւաբար, բուն երկրորդ գիրքը կազմում են հաջորդ հինգ գլուխները: Երրորդ գլուխը ամբողջությամբ գրված է ըստ Սերեոսի, որի ստեղծագործությունից Քովման քաղում է ոչ միայն առանձին արտահայտություններ եւ հատվածներ, այլ արտագրում է ամբողջ էջեր: Երբեմն նա ավելացնում է այնպիսի մանրամասներ, որոնք մեզ հասած Սերեոսի բնագրում բացակայում են⁶⁷:

Հաջորդ՝ 4-րդ գլխում, Քովման հենվում է ինչպես Սերեոսի, այնպես էլ Ղեւոնդի ստեղծագործությունների վրա: Գլխի սկզբնական մասում, մինչեւ Մոհամմադի երեւան գալը, Քովմայի հիմնական աղբյուրն է մնում Սերեոսը: Մոհամմադի կենսագրությունը, որը բացակայում է ինչպես Սերեոսի, այնպես էլ Ղեւոնդի մոտ⁶⁸, Քովման շարադրում է բավականաչափ ընդարձակ, հենվելով ըստ երեւույթին բազմաթիվ ձեռագրերում պահպանված Մոհամմադի մասին ավանդույթի տարատեսակներից մեկի վրա⁶⁹: Դրան հաջորդող մասի տեղեկությունները քաղված են Ղեւոնդից եւ Սերեոսից. վերջինս դադարում է Քովմայի աղբյուր լինելուց, հետեւյալ հատվածից հետո. «... զՅազկերտ սպանին, որ կալաւ զթագաւորութիւնն ամս. Ի, եւ բարձաւ տէրութիւնն Պարսից եւ ազգին Սասանաց, որ կալան զթագաւորութիւնն ամս Շեխ»⁷⁰: Սույն գլխի վերջին հատվածում Քովման ներկայացնում է Ղեւոնդի Պատմության հիման վրա կազմված արարական խալիֆների ցանկը, սկսած Մուավիայից եւ վերջացած Ահարոնով (Հարուն ալ-Ռաշիդ): Յանկը իրենից ներկայացնում է խալիֆների անունների հասարակ թվարկումը, որը երբեմն ընդհատվում է շատ թե քիչ ընդարձակ, ծանոթագրությունների բնույթ կրող այս կամ այն խալիֆի անձը եւ գործունեությունը բնութագրող տեղեկություններով, ամբողջությամբ քաղած Ղեւոնդի երկից: Ղեւոնդի Պատմությունը վերջանում է կաթողիկոս Ստեփանոս Դվինեցու (788-790) եւ Հարուն ալ-Ռաշիդի (788-809) հիշատակումով, ուրեմն հաջորդ շորս խալիֆների անունները քաղած են ինչ-որ մի

⁶⁷ Նման փոխառությունների մանրամասն վերլուծությունը տե՛ս՝ «Պատմութիւն Սերեոսի»: Աշխատասիրությամբ Գ. Վ. Արզաբեյանի, Եր., 1979:

⁶⁸ Ղեւոնդի երկի վերնագիրը՝ «Պատմաբանութիւն Ղեւոնդեա մեծի վարդապետի հայոց, որ յաղագս երեւելոյն Մահմետի, եւ զկնի նորին: Թէ որպէս եւ կամ որով օրինակաւ տիրեցին տիեզերաց եւ առաւել թէ հայոց ազգիս» (Մատ. ձեռ. ք. 1902) խոստանում է ներկայացնել Մոհամմադի պատմությունը, որը, սակայն, բնագրում բացակայում է: Սույն հանգամանքը մատնանշելով, Ք. Պատկանյանը իր Ղեւոնդի Պատմության ողջ տեքստը բարգմանությունում (տե՛ս՝ էջ 188, ձեռ. 1) ենթադրում է, որ թերեւս Մոհամմադի պատմությունը պարունակող Ղեւոնդի գրքի առաջին գլուխը մեզ չի հասել:

⁶⁹ «Պատմութիւն ձերնդեան եւ սնընդեան արբանեկին նեռան Մահմատին եւ քազաւորելն» (Մատ., ձեռ. ք. 6961). տե՛ս նաեւ՝ ձեռ. քք. 234, 2506, 3206, 3447, 8100, 8387:

⁷⁰ «Պատմութիւն Սերեոսի», էջ 164:

այլ աղբյուրից: Սակայն հնարավոր է, որ արաբական խալիֆների ողջ ցուցակը քաղած է այդ այլ աղբյուրից: Այդ դեպքում տրամաբանորեն արդարացված կլինի 4-րդ գլուխն ավարտող պարբերությունը՝ «Բայց մեզ կայ առաջի ասել վասն Ջափրա եւ շար գործոց նորա, անդիրս մնացեալ յայլոց...»: Ոչ թե Քովման, այլ իր նոր աղբյուրի հեղինակն է խոստանում նկարագրել «անգիրս մնացեալ յայլոց» իրադարձությունները: Մի հանգամանք եւս մտածել է տալիս, որ Քովման այդ տողերի հեղինակը չէ:

Սովորաբար Քովման պահպանում է իր աղբյուրների ժամանակագրական համակարգը: Առաջին գրքում այն հիմնված է Եվս. Կես. եւ Մով. Խորվրա, այսինքն՝ հնագույն ժամանակի համար ցանկը կազմվում է ոչ թե ըստ տարիների, այլ աստվածաշնչյան հայրապետների եւ տիրակալների սերունդների, հետագա շարադրանքի ընթացքում շատ թե քիչ սինխրոնիկ արշակյան-սասանյան ներկայացուցիչների, հռոմեական կայսրերի եւ ավելի մանրամասն հայոց թագավորների եւ կաթողիկոսների շարքերով: Երկրորդ գրքի 3-4-րդ գլուխներում պահպանվում է իր աղբյուրներ Սերեոսի եւ Ղեւոնդի ժամանակագրությունը, որը տարվում է ըստ այս կամ այն տիրակալի տարիների (օր.՝ «Եւ եղեւ յամի շորեքտասաներորդի Խոսրովա արքայի», «ի քսաներորդ ամի Մուրկա թագաւորութեան» եւ այլն):

Երրորդ գրքում, որտեղ Քովմայի շարադրանքը հիմնականում պետք է, որ լիներ ինքնուրույն եւ աղբյուրներից անկախ, նա սովորաբար բոլոր իրադարձությունները թվագրում է ըստ հայկական տոմարի: Այս տրամաբանորեն արդարացված ժամանակագրական համակարգից դուրս են մնում երկրորդ գրքի 5-6 գլուխները եւ երրորդ գրքի 14-րդ գլուխը, որտեղ Քովման օգտագործում է հունա-հռոմեական թվագրությունը: Այսպես՝ հինգերորդ գլուխը վերնագրված է «Վասն թագաւորին Ջափրայ, զոր ինչ խորհեցաւ ի վերայ աշխարհիս հայոց եւ ի գլուխ եհան զկամս շարութեան եւ որ ինչ ընդ սովաւ նախքան զլնուլ վեցերորդ յորելեան, եւ եօթանասուներորդ ոլոմպիադին, յետ իննեւտասն ընդիկտիոնին, յորում բովանդակին ժամանակք բռնակալութեան տաճկաց ամք ՄԻԲ ըստ թուոց հայերէն տումարի. թագաւորէ տաճկաց Քոքլոմն Ջափր անուն»: Հաջորդ՝ 6-րդ գլխում, մենք կրկին հանդիպում ենք հունա-հռոմեական թվագրությանը՝ «Արդ ի գալ միւսոյ ամին, որ յորելեանք Զ եւ ոլընպիատք ՀԲ, ընդիքտիոնք Ի, որ է ըստ հայերէն թուարանութեան ամք 3...»: Եվ, վերջապես, նույն թվագրությունը օգտագործված է երրորդ գրքի 14-րդ գլխի սկզբում. «Եւ եղեւ ի լնուլ վեցերորդ ամի գերութեան հայոց որ է 39, եւ ոլիմպիադք եւ ընդիկտիոնք...»:

Ակնհայտ է, որ այս գլուխները շարադրելիս, Քովման օգտվել է ինչ-որ

մի՛ մեզ անհայտ աղբյուրից⁷¹: Ավելին, կարելի է պնդել, որ այս անհայտ աղբյուրը հիմք է ծառայել երկրորդ գրքի 5-րդ գլխի եւ երրորդ գրքի 14-րդ գլխի միջեւ ընկած ողջ ծավալուն հատվածի համար, որը բովանդակում է 851-858 թթ. տեղի ունեցած իրադարձությունների պատմությունը:

Ընթերցողի համբերությունը շարաշահելով պետք է մեջ բերենք նաեւ մի տեղեկություն Հովհաննես Դրասխանակերտցու Պատմությունից: «... Վասն զի հաճեցաւ բանս ոչ երկրորդել միւս անգամ զհետեւանս ցրուցաց Շապուհ Բագրատունույ եւ մերումս ժամանակի պատմագիր, որ յայտապատում իսկ արարեալ է զրոյցս պայազատութեան որդույ Աշոտոյ սպարապետին Սմբատայ զիշխանական պատմութիւն, եւ զթագաւորացն զհանգամանացն զկարգս, եւ կամ զդարձ գերելոցն ի Բուխայէ զՀայաստանեայցս իշխանաց եւ նախարարաց յիրաքանչիւր սեպհական իշխանութիւնս առեալ կացեալ հաստատեալ, եւ թէ ոչք ի նոցանէ հոյակապք եւ հարուստք եւ ուժեղակք ընդդէմ հակառակորդաց հինից գտան եւ կամ ոչք յումեքէ եղեն հարստահարեալք եւ կամ վախճան նոցա յիրաքանչիւրումն տեղ»⁷²: Սույն հատվածում Հովհ. Դրասխ. համառոտակի ներկայացնում է Շապուհի Պատմության այն մասը, որը բովանդակում է՝ 1. Թագաւորաց կարգը (թվում է, որ այդ «Թագաւորաց կարգը» վերաբերում է նաեւ արաբական տիրակալների հաջորդականությանը, որը եւ ներկայացնում է մեզ Քովման իր երկրորդ գրքի 4-րդ գլխի վերջին հատվածում, ճիշտ այնտեղ, որտեղ ավարտվում է Աւետիկի Պատմությունը: Այստեղից է, որ նրա տեղեկությունների միակ աղբյուրն է դառնում Շապուհ Բագրատունին), 2. Աշոտ Մսակերի որդի Սմբատ սպարապետի իշխանական պատմությունը, 3. Գերեվարված հայոց իշխանների դարձը Հայաստան եւ նրանց հետագա ճակատագրի հանգամանքները: Հովհ. Դրասխ. սույն համառոտությունը լիովին համապատասխանում է Քովմայի Պատմության երկրորդ գրքի 5-րդ գլխի - 3 գրքի 14-րդ գլխի, ինչպես նաեւ մի շարք հաջորդ գլուխների բովանդակությանը: Այնպես, ինչպես, առանց անունները տալու, Քովման կազմել էր իր կոմպիլյատիվ երկրորդ գրքի 3-4 գլուխները, երբեմն արտագրելով ամբողջ էջեր, ճիշտ նույն ձևով, պետք է ենթադրել, նա օգտագործել է նաեւ Շապուհի գործը:

Քովման անկասկած տվյալ իրադարձությունների ժամանակակիցն էր եւ թերեւս դրանց մի մասի ականատեսը. սակայն այդպիսի մանրամասն եւ

⁷¹ Որ այդ աղբյուրը պետք է լինի Շապուհ Բագրատունու Պատմությունը կարծիք են հայտնել Ն. Ադոնցը, Հ. Մարկվարտը, Հ. Օրբելին: Ն. Ակիմյանը իր հանգամանալի հոդվածում (տե՛ս՝ Մատենագրական հետազոտություններ, Քննություն եւ բնագիր. հ. Ա., Վիեննա, 1922, էջ 195) նշում է «Մինչեւ 788 շրջանի համար անշուշտ Աւետիկ ամենէն ակզի շեշտուած պիտի ըլլայ, իսկ յաջորդ շրջանի պատմութիւն է Շապուհ»:

⁷² Յովհաննէս Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 131:

գործող անձանց ու դեպքերի աշխարհագրական տեսակետից լայն ընդգրկում ունեցող գիրք գրելու համար բավական չէ լինել ժամանակակից եւ ականատես, նման գործ կարող է գրել համապատասխան կրթություն ստացած եւ հասուն անձնավորությունը: Արդ, ի՞նչ տարիք կարող էր ունենան 850 թ. Քովմա Արծրունին: Քովմայի Պատմության վերջին, անավարտ մնացած 29-րդ գլխում դեպքերի նկարագրությունը հասցվում է մինչեւ 908 թ., Գագիկ Արծրունին հիշատակվում է միայն որպես Վասպուրականի իշխան, իսկ Յուսուֆ Սաշիդի մասին խոսք անգամ չկա: Կարող է այն տպավորությունը ստեղծվել, թե Քովմա Արծրունին մահացել է նախքան 908 թ.: Սակայն նույն այդ 29-րդ գլխում Քովման գրում է՝ «... իսկ զնախնձավան քաղաք եւ զԳողթն գաւառ հանեալ էր ի Վասպուրականէ բազում ժամանակօք առաջ, ՄԺԱ ամօք, յամի այրման եկեղեցւոյն Գրիգորի...»: Քանի որ հայոց նախարարների այրումը նախնականի եւ Խրամի եկեղեցիներում տեղի է ունեցել 705 թ., հետեւաբար այդ տողերը Քովման գրում է 915/916 թ. (705+211), ինչը հաստատվում է նույն գլխում փոքր-ինչ անց՝ Վարագա խաչի հայտնության մասին պատմվածքի հետեւյալ տողերով. «Այս այն խաչ է զոր վերագոյնն գրեցաք վասն սորա, ՄՄԹ ամօք յառաջ զսորայս բացայայտեալ զրոյցս յայտնութեանն, յամս ներսեսի Երրորդի Հայոց կաթողիկոսի եւ Վարդանայ Ռշտունեաց պատրկի եւ յամի ունելութեանն տաճկաց զհայկական աշխարհս»: Հայոց կաթողիկոս ներսես Գ հայրապետության տարիներն են 641-661 թթ., Վարդ Պատրիկը հայոց սպարապետի պաշտոնն է ստանձնել 658 թ., իր հոր՝ Թեոդորոս Ռշտունու մահից հետո. դա այն ժամանակաշրջանն էր, երբ արարները խախտելով 652 թ. պայմանագիրը, ներխուժել են Հայաստան եւ 658 թ. մոտ հիմնականում գրավել այն: Հետեւաբար Քովման այդ տողերը գրել է 652-658 թթ., 250 տարի անց, այսինքն՝ 911-917 թթ.: Սակայն շատ հնարավոր է, որ իր տեղեկությունը Վարագա խաչի հայտնության մասին Քովման քաղել է մի շարք ձեռագրերում պահպանված «Պատմութիւն զղջման Վարդ Պատրիկին» պատմվածքից⁷³ «Ի սորա (Վարդ Պատրիկի) աւուրս յայտնեցաւ սք. Խաչն ի Վարագայ եւ էր թուականն ճԲ: Եւ բարեպաշտ Վարդ Պատրիկ գնաց յերկրպագութեան սք. Նշանին Վարագայ»: Այդ դեպքում Քովման նկատի ուներ 653 թ. եւ, ուրեմն, սույն տողերը գրում էր 912 թ.: Զուգահրեւ ձեռ ստացած տարեթվերը, կարող ենք ասել, որ վերջին՝ 29-րդ մեզ անավարտ հասած գլուխը Քովման գրում էր 10-րդ դարի երկրորդ տասնամյակի կեսերին, երբ նա հագիվ թե 75-80 տարեկանից անցած լիներ եւ,

⁷³ Մատ. ձեռ. ք. 1487, էջ 7050, էջ 18բ, ք. 268ա, ք. 8100, էջ 244ա եւ մի շարք այլ ձեռագրերում:

ուրեմն, 851 թ., մոտ 10 տարեկան պատանի էր: Ամենայն հավանականությամբ, կարող ենք ենթադրել, որ Քովմայի ինքնուրույն, գրավոր աղբյուրներից անկախ շարադրանքը սկսվում է մոտավորապես այն պահից, երբ նա անցնում է 886/7 թվից հետո տեղի ունեցած իրադարձությունների նկարագրությանը: Առաջարկում Քովման դիմում է «...Գրիգոր Արծրունեաց տէր եւ Վասպուրական իշխան»-ին որպես իր պատվիրատուի: Սակայն արդեն առաջին գրքի 6-րդ գլխում նա գրում է՝ «Զոր եւ մեր ըստ հրամանի քում, Գագիկ զօրավար Հայոց եւ Վասպուրական իշխան, ջան յանձին տարեալ ընդ համառոտութիւն գրուցատրութեանցն անցեալ...», ինչից կարելի է եզրակացնել, որ նա Գրիգոր-Դերենիկի օրոք հասցրել է գրել միայն առաջին հինգ գլուխները, որից հետո նրա աշխատանքը ընդհատվել է մեզ անհայտ պատճառներով: Համենայն դեպս նա, ըստ երեւույթին հենց այդ ժամանակաշրջանը նկատի ունենալով, երբ 3-րդ գրքի 27-րդ գլխում պատմելով Ռշտունյաց ոստանում հրաշքի հայտնության մասին, գրում է՝ «... որ ցուցաւ ի զօրավարութեանն Գագկայ, եւ ապաշափանք ոչ սակաւք դիմեցին հոլովեալ ի վերայ իմ», այսինքն՝ այն տարիները, երբ Գագիկը դեռեւս միայն սպարապետ էր, իսկ Վասպուրականի իշխանն էր Սարգիս-Աշոտը: Դա նշանակում է, որ իր առաջին գրքի 5-րդ գլխից հետո գրված ողջ աշխատության շարադրանքը կատարվել է Աշոտի մահվանից՝ 906/7 թ. հետո, երբ իշխանությունը ժառանգած Գագիկը առաջարկել է նրան շարունակել գրքի շարադրանքը, որը եւ տեւել է մոտ 10-12 տարի, եւ թվում է, ընդհատվել է նրա մահվան պատճառով 920 թ. ոչ ուշ:

Ի՞նչ չափով եւ ի՞նչ ձևով է օգտագործել Քովման Շապուհի Պատմությունը: Հարցին պատասխանելիս պետք է նշենք, որ, ի տարբերություն առաջին գրքի, երկրորդ գրքում (սկսած 3-րդ գլխից), Քովման՝ 1. ոչ մի անգամ չի հիշատակում հանվանե իր աղբյուրները⁷⁴, 2. քաղում է դրանցից ոչ միայն առանձին պարբերություններ, այլ նաեւ ամբողջ էջեր. իր սեփական միջամտությունն աննշան է: Թվում է, որ սխալված չենք լինի, եթե ենթադրենք, որ նույն չափով եւ նույն ձևով նա օգտվել է նաեւ Շապուհի գործից⁷⁵: Իհարկե

⁷⁴ Այդ կապակցությամբ Հ. Ներսես վ. Ակինյանը գրում է՝ «Զարմանալի է, որ Քովմա Արծրունի չի յիշէր զինքը յանուանէ, որ այնպէս մերձատր էր Շապուհոյ: Այս լուսինը սակայն չի կրնար նկատուիլ հետեւեցնելու, քէ անձանօր մնացած է իրեն Շապուհոյ Պատմութիւնը: Ինձի կերեայ քէ Քովման կարդացած է Շապուհոյ պատմական երկասիրութիւնը» («Մատենագրական ուսումնասիրութիւններ. Քննութիւն եւ բնագիր. Հ. Ա. Վիեննա, 1922, էջ 198):

⁷⁵ Այդ կապակցությամբ Հ. Օրբելին գրում է՝ «Քովմա Արծրունու անվամբ մեզ հայտնի գործում կան բազմաթիվ ծավալուն մեջբերումներ, որոնք պատկանում են այլ... պատմիչ՝ Շապուհի Բագրատունու գրչին...» (Избранные труды», т. II, Ереван, 2002, с. 434):

հնարավոր չէ տող առ տող նշել Քովմայի փոխառությունները Շապուհի Պատմությունից, սակայն մոտավոր շափով դա հնարավոր է անել: Օրինակ՝ երկրորդ գրքի 5-րդ գլխի վերնագիրը՝ «Վասն թագաւորին Ջափրա...անուն» եւ առաջին պարբերությունը՝ Շապուհինն է, 2-րդ պարբերությունում «ի սորա ժամանակս տիրէր Վասպուրական աշխարհիս Աշոտ ի տանէն Արծրունեաց, այր քաջայայտ եւ ճոխ...եւ հոյակապ եւ անուանի եղեալ քան որ յառաջագոյն քան զնա էին կացեալ իշխանք ընդհանուր Հայաստանեայցս, որ յարեւելս եւ ի կողմանս հիւսիսոյ...» զգացվում է Քովմայի առաջին գրքի համար բնորոշ միտում՝ վերագրել Արշրունյաց իշխաններին հատուկ նշանակություն ունեցող դեր բոլոր կարեւոր իրադարձություններում, եւ այդ միտումը պահպանվում է մինչեւ վերջ: Թերեւս այդ ձեւով է նա հիմնականում միջամտում Շապուհի շարադրանքի մեջ, միաժամանակ անփոփոխ պահպանելով հիմնական պատմական նյութը: Նույն ձեւով կազմված են երկրորդ գրքի 6-7-րդ գլուխները, իսկ 7-րդ գլխի այն ծավալուն հատվածը, որտեղ նկարագրված է սասունցիների նիստուկացը, անկասկած, բառացի արտագրություն է Շապուհի Պատմությունից: Նույնը կարելի է ասել նաեւ 3-րդ գրքի 2-րդ գլխի մասին, որտեղ Քովման ներկայացնում է Մոկաց իշխան Սմբատ Բագրատունու պատմությունը: Ինչպես նշում է Ն. Աղոնցը, Գուրգեն Արծրունու (Աբուբելջի) արկածավոր կյանքը գրի է առել «... հաւանօրէն Շապուհ Բագրատունին, որից քաղում է Քովմա Արծրունին»⁷⁶:

Այսպիսով, Քովմայի Պատմության 2-րդ գրքի վերջին երեք գլուխները եւ 3-րդ գրքի քսան գլուխները, որտեղ նկարագրված են 850-855/56 թթ. արաբական արշավանքները, հայոց իշխանների գերեվարությունը, նրանց դարձը Հայաստան եւ հետագա ճակատագիրը, բովանդակության տեսակետից լիովին համապատասխանում են Հովհ. Դրասխ. ներկայացրած շրջանակներում Շապուհի Պատմությանը⁷⁷: Միայն 21-րդ գլխից սկսվում է Քովմայի Պատմության ինքնուրույն շարադրանքը⁷⁸: Նախորդ, ըստ էության Շապուհի

⁷⁶ «Պատմական ուսումնասիրություններ. Բագրատունյաց փառքը, Փարիզ, 1948, էջ 74: Լիովին հիմնավոր է Ն. Ակինյանի կարծիքը, թե «Շապուհ՝ Պատմութիւն, որ է գիրք սրբոյն Սմբատայ ստրատելատին եւ այլ նահատակացն թուին Հայոց ԳՃԲ» պատկանում է Շապուհի գրչին եւ ոչ թե առանձին գիրք է, այլ նրա Պատմության մասերից մեկն է (տե՛ս՝ նշվ. աշխ., էջ 189):

⁷⁷ Նկատելի է, որ ինչպես Յովհ. Դրասխ., այնպես էլ Քովմայի երկերում չեն արտացոլվել Աշոտ Մսակերի եւ նրա եղբոր՝ Շապուհի իշխանության տարիները: Այդ բացը իրենց Պատմություններում լրացնում են Ասողիկը եւ Վարդանը, որոնց աղբյուրը տվյալ դեպքում կարող էր լինել միայն Շապուհի Պատմությունը:

⁷⁸ Մենք ելնում ենք Ն. Ակինյանի շատ հավանական ենթադրությունից, որ «Շապուհ Աշոտ Մեծի ուղիղ ժամանակակից եւ ընկերակից կ'իյնայ: Իր ծնունդը կրճանք դնել

գրչին պատկանող, մասի համեմատությամբ Թովմայի գրքի վերջին 22-29-րդ գլուխները զգալիորեն ավելի աղքատ են ներկայացված փաստական նյութի եւ դրա ընդգրկման աշխարհագրական շրջանակների տեսակետից. հիմնականում, շատ թե քիչ բացառություններով, այն սահմանափակվում է Վասպուրականի բուն տարածքով: Եթե, ելնելով Թովմայի վերոհիշյալ ցուցմունքներից, հիշենք, որ կան հիմքեր ենթադրելու, թե նրա ամբողջ աշխատությունը, բացառությամբ առաջին հինգ գլուխների, գրված է 906/907-916/918 տարիների ընթացքում, ապա ուրեմն, վերջին 22-29-րդ գլուխները նա գրել է ոչ թե անմիջականորեն հետեւելով կատարվող դեպքերին, այլ հիշողությամբ: Դրանով կարելի է բացատրել, օրինակ այն, որ Սարգիս-Աշոտի իշխանության օրոք տեղի ունեցած Ափշինի արշավանքները Հայաստանում ներկայացված են ընդհանուր ձևով, որոշ անճշտություններով ու սխալներով, օրինակ, Ափշինի մահվան թվագրումը՝ 898-ը 901-ի փոխարեն: Ի տարբերություն Թովմայի, Հովհ. Դրասխ. տանում է իր պատմածը դեպքերի թեժ հետքերով, մանրամասն եւ աշխույժ, որպես դրանց անմիջական եւ եռանդուն մասնակիցը:

Արդ ո՞րն է Թովմա Արծրունու Պատմության երկրորդ եւ երրորդ գրքերի աղբյուրագիտական նշանակությունը: Անպայման այն, որ յուրովի օգտագործելով Շապուհ Բագրատունու Պատմությունը, երբեմն միջամտելով, խմբագրելով, կրճատելով, քաղելով անփոփոխ առանձին արտահայտություններ, փոքր կամ մեծ հատվածներ, երբեմն էլ արտագրելով ամբողջ էջեր, նա հետագայի համար պահպանել է Շապուհ Բագրատունու երկի թերեւս ամենածավալուն եւ կարեւոր մասը՝ 9-րդ դ. Հայաստանում արաբական արշավանքների մանրամասն նկարագրությունը, դրանց հետ կապված հայոց նախարարական տների ճակատագիրը եւ Աշոտ Ա Բագրատունու իմաստուն, զգույշ քաղաքականության շնորհիվ հայոց անկախ պետականության հաստատումը:

Պետք է այստեղ նաեւ ըստ արժանվույն գնահատել Հովհաննես Դրասխանակերտցուն, որը, թերեւս, միակը հայ միջնադարյան պատմիչներից, համառոտ, բայց եւ շատ բովանդակալից ներկայացրել է իր ժամանակակից մեկ այլ պատմիչի աշխատությունը եւ իր դարաշրջանի պատկերացումների տեսանկյունից քննադատորեն արժեքավորել այն:

մեծաուրուպես 830 շրջանին եւ վախճանը 885-էն ոչ շատ վերջը, հասանօրէն 900-էն յառաջ, մեռած իբր 60-70-ամեայ (տե՛ս՝ նշվ. աշխ., էջ 171):

Մ. Է. ՇԻՐԻՆՅԱՆ

«ՍԵՂՐԵՍՏՐՈՍԻ ՎԱՐՔ»-Ը ԵՎ «ԴԱՇԱՆՅ ԹՈՒՂԹ»-Ը

Թե՛ «Սեղրեստրոսի վարք»-ը եւ թե՛ «Դաշանց թուղթ»-ը մեզանում սակավ ուսումնասիրված երկերից են: Թերեւս դրա գլխավոր պատճառներից մեկն այն է, որ երկուսն էլ կեղծ գրվածքներ են: Առասպելարնույթ այդ գործերում պատմական փաստը եւ լեզենդն այնքան են շաղկապված, որ իրական պատմությունը մեզ է հասնում որպէս հրաշապատում, իսկ լեզենդը պատմություն է դառնում: Որպէս կանոն, այդ միահյուսվածությունը դժվար է տարանջատել:

Ժամանակակից գիտությունն այդպիսի ավանդազրույցների նկատմամբ խիստ քննադատական վերաբերմունք ունի եւ դրանք համարում է պատրանք, ժխտելով մեկնաբանության «էվհեմերական»¹ մեթոդը: Այնուամենայնիվ, նման մոտեցումը լիովին չի բացառում, որ այդ լեզենդները կարող են պարունակել որոշ պատմական ստույգ փաստեր: Ըստ իս, կեղծ գրվածքներից կարելի է քաղել տվյալ դարաշրջանը բնութագրող եւ, ինչու չէ, նույնիսկ որոշ խնդիրներ բացատրող բազմազան հետաքրքրական տեղեկություններ եւ առնվազն անարդարացի կլիներ ժխտել դրանց ուսումնասիրությունը: Պակաս կարեւոր չեն նաեւ այդպիսի երկերի երեւան գալու գրդապատճառների հետազոտումը:

Այսպէս, «Սեղրեստրոսի վարքի» եւ «Դաշանց թղթի» համար ուշագրավ է ընդգծել երկու գրվածքների հռոմեամետ բնույթը, ինչպէս նաեւ առաջինի դեպքում թարգմանության համար ընտրությունը, իսկ երկրորդի դեպքում ստեղծման դրդապատճառները: Մեծ հետաքրքրություն է հարուցում նաեւ դրանց միջեւ առկա ընդհանրություններն ու կապը, որի մասին եւ խոսվում է

¹ Առասպելների մեկնաբանության մերոզ (անվանումը կապված է էվհեմեր արեայի անվան հետ), ըստ որի ժողովրդական բանահյուսության մեջ առկա նյութը, մեծ մասամբ իրական եղելության արտահայտություն է. օրինակ, հունական աստվածներից շատերն իրականում հեռուներ են համարվում:

ներկայացված հոդվածում:

«Պատմութիւն վարուց սրբոյն Սիղբեստրոսի եպիսկոպոսի Հռովմայ» հունարան թարգմանությունը, ըստ Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց վանքի ձեռագրատան թիվ 2014 գրչագրի հիշատակարանի տվյալների, կատարված է Գրիգոր Չորոփորեցու կողմից եւ թվագրվում 678 թվով²: Այս թվագրումը համարվում է ստույգ եւ հաստատվում է նաեւ Ռ. Վարդանյանի կողմից կիրառված շափազանց հետաքրքրական նորամուծությամբ՝ թարգմանական բնագրերի ժամանակը որոշվում է ըստ հիշատակարաններում օգտագործված տոմարական եղանակների³: Սերտորեն կապված լինելով Սոկրատ Աքուլաստիկոսի «Եկեղեցական պատմության» հետ եւ նույնիսկ միահյուսվելով այդ երկի հայերեն թարգմանության համառոտ խմբագրությանը, «Վարք»-ը կազմում է, այսպես կոչված, Փոքր Սոկրատի բաղադրիչ, սկզբնական մասը⁴:

«Վարք Սեղբեստրոսի» հայերեն թարգմանությունը կատարվել է հունարենից, որը, իր հերթին, «Գործք Սեղբեստրոսի» (*Acta Silvestri*) վավերական համարվող լատիներեն սկզբնագրի⁵ թարգմանությունն է, ավելի ստույգ՝ խմբագրությունը: Լատիներեն տեքստը պապական փաստաթղթերի ժողովածու է ստացված նվիրատվությունների վերաբերյալ, սակայն պարունակում է նաեւ որոշ կենսագրական տեղեկություններ Սեղբեստրոսի մասին:

Հունարեն տարբերակը, որից կատարվել է նաեւ ասորերեն թարգմանությունը, ընդհակառակը, չի ներառում այդ փաստաթղթերից եւ ոչ մեկն ու մանրամասն պատմում է Սեղբեստրոսի կյանքի եւ գործունեության մասին: Թերեւս, այս պատճառով երկը չի արժանացել մասնագետների առանձնահատուկ ուշադրությանը: Սկիզբ առնելով բազմաթիվ ավանդազրույցներից ու լեգենդի բնույթ ունեցող գրվածքներից, հունարեն խմբագրությունը, իր հերթին, հիմք է ծառայել Հռոմի առաջնությունը փառաբանող հետագա մի

2 Մ. Տեր-Մովսէսեան, Սոկրատայ Մոլաստիկոսի Եկեղեցական Պատմութիւն եւ Պատմութիւն վարուց սրբոյն Սիղբեստրոսի եպիսկոպոսի Հռովմայ, Վաղարշապատ 1897, տե՛ս նաե՛ւ Բ. Սարգսեան. Տեսութիւն Սեղբեստրոսի Պատմութեան եւ Մ. Խոռենացոյ աղբերաց, Վենետիկ 1893:

3 Ռ. Վարդանյան, Հայոց տոմարական եղանակը. բարգմանական բնագրերի ժամանակը, Երևան 1993: M. Shirinian, The Armenian Versions of *Vita Silvestri*" (10-th Anniversary Conference of AIEA, September 1-5, 1993, London) - Armenian Perspectives, ed. by N. Awde, Curzon, Caucasus World, 1997, pp. 69-75:

4 Մեծ ու Փոքր Սոկրատների ինչպես եւ «Սեղբեստրոսի վարք»-ի մասին, դրանց միջև եղած խառնաշփոթի եւ առաջադիվող նոր բնագրման մասին տե՛ս՝ Մ. Շիրինյան, Краткая редакция древнеармянского перевода *Церковной истории* Сократа Схоластика, Византийский Временник, 43 (1982), сс. 231-241:

5 Առաջին հրատարակությունը 1479 թ. կատարել է Բ. Մոմբրիտիուսը, երկրորդը՝ Դյուլշենը (*Le Liber Pontificalis. Texte, Introduction et commentaire par l'Abbe L. Duchesne. Publiées par Cyrille Vogel. Paris, 1957, 1, 2, 3*).

քանի կեղծիքների՝ Իսիդորյան «Դեկրետներ»-ի, «Կոստանդնի նվիրատվության» (*Donatio Constantini*) երեւան գալու համար: Վերջինս, դեռեւս 15-րդ դարում, Լորենցո Վալլայի⁶ կողմից կեղծ է համարվել:

«Վարք Սեղբեստրոսի» եւ հայերեն տարբերակներին նվիրված գրականությունը սակավաթիվ է⁷: Լատիներեն բնագիրն առաջին անգամ հրատարակվել է Մոմբրիտիուսի հավաքածուում⁸: Այն ընդգրկված է նաեւ Դյուշեի «*Liber Pontificalis*»-ում⁹: Ոչ լատիներեն երկը, ո՛չ էլ դրանից կատարված թարգմանություններն ու խմբագրությունները չունեն քննական բնագրեր: Վերջինիս դեպքում, հավանաբար, պատճառն այն է, որ այս տեքստի ձեռագրերի թիվն անցնում է 300-ից: Սակայն, ինչպես տեղեկացնում է Գ. Ֆաուդենը, մի շարք հոդվածներով հանդես եկած Վ. Պոհլկամպը պատրաստում է լատիներեն բնագրի քննական հրատարակությունը¹⁰:

Հունարեն տեքստի ճակատագիրն ավելի անմխիթար է: 17-րդ դարում երկի հունարեն տեքստի Ֆ. Կոմբեֆիի հրատարակությունը¹¹, կարծես, անկատ մնաց հետազոտողների համար: Երկու դար անց, արձագանք գտնելով հայագետների միջավայրում, այն վերատպվեց Բ. Սարգիսյանի կողմից՝ հայերեն տարբերակներից մեկին զուգահեռ¹²: Խիստ հետաքրքրական եւ կարեւոր այդ հրատարակությունը, որի ընդարձակ առաջաբանում ակնարկված ու հաճախ լուծված են շատ խրթին հարցեր (օրինակ, թարգմանության մեջ առկա եւ հունարեն բնագրում բացակայող մի աղբյուրի՝ Նվսեգնիոսի վկայության մեծ հատվածի մատնանշումը), այդուամենայնիվ, զերծ չէ թերություններից:

⁶ Ch. B. Coleman, *The Treatise of Lorenzo Valla on the Donation of Constantine*, Renaissance Society of America, 1993.

⁷ Այդ գրականության ցանկը տե՛ս՝ M. E. Shirinian, *Parallel Aligned Text and Bilingual Concordance of the Armenian and Greek Versions of Vita Silvestri*, pp. 69-75, M. C. Ширинян, *Краткая редакция древнеармянского перевода Церковной истории Сократа Схоластика*, *Византийский Временник*, 43 (1982), Москва, 239-241: Հմմտ. նաև Ստ. Մալխասյանի Սեղբեստրոսի վերաբերյալ արված ծանոթագրությունները՝ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, աշխարհաբար բարգմանությունը Ստ. Մալխասյանի, Երևան, 1981, էջ 504-506:

⁸ G. Eis, *Die Quellen für das Sanctuarium des Mailänder Humanisten Boninus Mombritius, Eine Untersuchung zur Geschichte der grossen Legendensammlungen des Mittelalters*, *Germanische Studien* 140, Berlin 1933.

⁹ *Liber Pontificalis* բառացի՝ «Գիրք ֆահանայապետական»:

¹⁰ G. Fowden, *The last days of Constantine: Oppositional versions and their influence*, Princeton 1994, էջ 154, ծան. 43, W. Pohlkamp, *Textfassungen, literarische Formen und geschichtliche Funktionen der römischen Silvester-Akten*, *Francia* 1992 (19), SS.115-196.

¹¹ F. Combefis, *Illustrium Christi Martyrum lecti triumpho, Vetustis Graecorum Monumentis confignati*. Parisiis, 1660.

¹² Բ. Սարգսեան. Տեսութիւն Սեղբեստրոսի Պատմութեան եւ Մ. Խորենացոյ աղբերաց, Վենետիկ 1893:

Ակնառու թերութիւնն է, որ արժանահիշատակ Բ. Սարգիսյանը հունարեն տեքստի դիմաց զետեղել է ոչ թե հայերեն թարգմանութիւնը, այլ վերջինիս խմբագրութիւնը, որն էապես տարբերվում է բուն հունարան թարգմանութիւնից, ուստի եւ՝ հունարեն բնագրից: Որպես հետեւանք հայերեն ու հունարեն տեքստերը ներկայանում են միանգամայն տարբեր:

Խնդրո առարկա երկի ուսումնասիրութեան համար ինչ-որ շափով աննպաստ էր հայերեն «Վարք»-ի արժարժումը՝ գլխավորապես Մովսէս Խորենացու հետ կապված խնդիրների տեսանկյունից: Մի կողմից, հենց դրա շնորհիվ էր, որ հրատարակվեցին Խորենացու առեղծվածի հետ կապված բազմաթիվ անտիպ երկեր, սակայն մյուս կողմից, այդ գրվածքները հետազոտվեցին հիմնականում միայն վերոհիշյալ հարցի ներքո, ինչից տուժեցին այդ աշխատութիւններում արժարժված խնդիրների պարզաբանումները:

Դա հիմք հանդիսացավ ձեռնարկելու համար «Վարք Սեղբեստրոս»-ի հայերեն եւ հունարեն տարբերակների մի նոր հրատարակութիւն (ոչ քննական, քանզի եւ՝ հունարեն, եւ՝ անգամ հայերեն ձեռագրերը մատչելի չեն):¹³

«Վարք Սեղբեստրոսի» լատիներեն եւ հունարեն տեքստերին ու դրանց հետ կապված հարցերին է նվիրված Վ. Լեւիսոնի հիմնավոր հետազոտութիւնը¹⁴: Երկին ու հայ պատմագրութեան հետ դրա կապերին անդրադարձել են Մ. վան էսբրուկը¹⁵ եւ Ռ. Քոմսոնը¹⁶:

«Վարք Սեղբեստրոսի» հունարան թարգմանութեան ու դրա խմբագրութեան հետ սերտորեն առնչվում է, ըստ իս, այսպես կոչված «Դաշանց Թուղթ» կեղծ գրվածքը, որը թեեւ հրատարակվել է մի քանի անգամ, սակայն ուսում-

¹³ M.E. Shirinian, Parallel Aligned Text and Bilingual Concordance of the Armenian and Greek Versions of *Vita Silvestri* երկհատորյա հրատարակութեան առաջին գիրքը պարունակում է ընդարձակ առաջարան, հայերեն (թե՛ թարգմանությունը, թե՛ դրա խմբագրությունը) ու հունարեն (մի քանի ձեռագրի բաղադրութեան հիման վրա) տեքստերը եւ ծանոթագրութիւններ: Երկրորդ հատորը տրամադրված է երկի համարարարին ու մի քանի ցանկերին: Այդ հատորի աշխատանքը կատարված է Յ. Վայտենբերգի համահեղինակութեամբ:

¹⁴ W. Levison, "Konstantinische Schenkung und Silvester-Legende", *Miscellanea Francesco Ehrle*, Studi e Testi, Bibliotheca Apostolica Vaticana, Roma 1924.

¹⁵ M. van Esbroeck. Legends about Constantine in Armenian. *Classical Armenian Culture*, ed. Th. J. Samuelian, (Armenian Texts and Studies 4), University of Pennsylvania, 1982, pp. 79-101.

¹⁶ Moses Khorenats'i. *History of the Armenians*. Translation and Commentary on Literary Sources by R. W. Thomson. Cambridge, Mass., London, 1978, R. W. Thomson, Constantine and Trdat in Armenian Tradition, *Acta Orientalia*, tomus L, fasciculi 1-3, 1997, pp. 277-289, R. W. Thomson, *The Crusaders through Armenian Eyes*, Dumbarton Oaks, Washington, D.C. 2001, pp. 71-82. Ռ. Քոմսոնը, հետևելով Աշ. Հովհաննիսյանին, դաշինքի պատմությունը համարում է «մի գրույց հանդիսավոր այն ընդունելութեան մասին, որին մեր քրիստոնէական առաջին դարում արժանացել էր հեթանոս Տրդատ I-ը, քրիստոնէականացումը ներդրող կայսրի կողմից» (Ա. Հովհաննիսյան, Գրվածքներ, 1957, էջ 68):

նասիրվել է նեղ, զուտ դավանաբանական տեսանկյունից: Գրվածքի հոռմեամետ ուղղվածությունը մշտապես պայմանավորել է երկի նկատմամբ եղած դիրքորոշումը: Ոչ-կաթոլիկներն այն համարել են անվավեր, կեղծ մի փաստաթուղթ¹⁷, իսկ կաթոլիկները պնդել են, որ ստույգ ու վավերական գրվածք է կապված Հռոմի և Հայաստանի միջև եղած «սիրո և միաբանության» (*unitas et concordia*) ավանդության հետ¹⁸: Ժամանակ առ ժամանակ այդ ավանդության «վերակենդանացման» գլխավոր շարժառիթը հիմնականում եղել է քաղաքական: Հռոմի և Հայաստանի միջև կնքված դաշինքը միշտ հիշվել է (ըստ որում ոչ միայն հայերի կողմից) քաղաքական անհրաժեշտության ի հայտ գալու դեպքում: Այդ կեղծ փաստաթղթի «վերակենդանացումը» հայերի համար փրկության միջոց էր թվում՝ դժվարին քաղաքական կացության խնդիրները լուծելիս:

Մասնավորապես, 17-րդ դարի երկրորդ կեսին, երբ Հռոմի եկեղեցին Ֆրանսիայի դաշնակցությամբ պայքարում էր «Ռեֆորմացիա»-ի դեմ, ջանալով նվազեցնել Մեծ Բրիտանիայի և Հոլանդիայի ազդեցությունն Արևելքում, նման մի փաստաթղթի խիստ անհրաժեշտությունն առաջացավ: Գրվածքի «վերակենդանացումը» ձեռնտու էր նաև հերթական բարդ քաղաքական իրավիճակում հայտնված հայերին: Հավանաբար, դա էր պատճառը, որ հենց այդ ժամանակ, Իտալիայում փոքր ընդմիջումներով հայտնվեցին երկի մի քանի հրատարակություններ:

Բնագրի *editio princeps*-ը (առաջին հրատարակությունը), Հովհաննես Հոլովի կողմից նկատելիորեն ազատ կատարված իտալերեն թարգմանությամբ, լույս տեսավ 1683 թ. Վենետիկում¹⁹: Հրատարակությունը հայտնաբերել է Անասյանը²⁰ ՄՄ թիվ 2272 ձեռագրում, որտեղ այն կցված է գրչագրին²¹: Նույն վերնագրով հաջորդ հրատարակությունները երևան եկան

17 Մ. Օրմանեան, Հայոց եկեղեցին և իր պատմությունը, վարդապետությունը, գրականությունը ու ներկայ կացությունը: Կոստանդնուպոլիս, 1912, էջ 15:

18 Հարկ է նշել, որ կան նաև բացառություններ, օրինակ՝ Կոզեանը, լինելով կաթոլիկ, դեմ է այս ավանդությանն ու «Դաշանց Քուղթ»-ը համարում է կեղծիք (Ա. Ս. Կոզեան, Հայոց եկեղեցին, Քեյրոս 1961, էջ 86-88):

19 Իտալերեն թարգմանության վերնագիրն է. *Lettera dell'Amicitia e dell'Unione di Constantino gran Cesare, e di S. Silvestro Sommo Pontefice (sic!), e di Tridade Re dell' Armenia, e di S. Gregorio Illuminatore della Nazione armena scritta nell' Anno del Signore 316. In Venetia, 1683. Appresso Michiel' Angelo Barboni. Con Licenza de' Superiori.*

20 Տե՛ս՝ Հ. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն Արեւմտյան Հայաստանում, Երևան 1961, էջ 51:

21 ՄՄ, թիվ 2272, 215ա-236ա (այս ձեռագրում կան նաև այլ տպագիր երկեր): Գուցե այս պատճառով է, որ Զարպիսանյանի (Գ. Զարպիսանյան, Հայկական մատենագիտություն, Վենետիկ 1883, էջ 148-149) և Թոմսոնի (R.W. Thomson, *A Bibliography of Classical*

1690-ին եւ նույն տեղում²², 5 տարի անց՝ նորից վենետիկում²³, հետո դարձյալ վենետիկում 1700-ին²⁴: Այդ հրատարակությունների հայտնվելն Իտալիայում, թերեւս, պայմանավորված էր գրվածքի նկատմամբ Հռոմի ունեցած մեծ հետաքրքրությամբ: Նման վերաբերմունքն արտացոլված է նաեւ «*De Propaganda Fide*»-ի («Հավատոս պրոպագանդա») գործունեության մեջ, որի ակնառու ջատագովներից էր հայագետ Կ. Գալանոսը: Ի թիվս այլ հետազոտությունների²⁵, նա լատիներեն թարգմանեց նաեւ «Դաշանց թուղթ»-ը²⁶: 1824 թ. Կոստանդնուպոլսում Ջանիկ Ամիրան հրատարակեց Ազաթանգեղոսի «Պատմություն»-ը, որին հավելված էր «Դաշանց թուղթ»-ը: Հրատարակումը բազում վեճերի առիթ հանդիսացավ հայագետների միջեւ: Լույս տեսան աղբյուրի վերաբերյալ եւս երկու իրարամերժ հրատարակություններ՝ «Դաշանց թղթի ստուգութեան հաստատութիւն»-ը²⁷ եւ «Դաշանց թղթի քննութիւնն ու հերքումը»²⁸:

Այս երկին անդրադարձել եւ ուշագրավ եզրակացություններ են արել նաեւ Մ. Չամչյանը²⁹, Մ. Օրմանյանը³⁰, Ա. Հովհաննիսյանը³¹, Հ. Անասյանը³², Լ. Ս. Կոզեանը³³, Ռ. Թոմսոնը³⁴, Գ. Ուլուհոջյանը³⁵: Սույն հոդվածը ավարտված եւ

Armenian Literature to 1500 A.D. (Corpus Christianorum, Turnhout: Brepols, 1995, p. 149)

մատենագիտական ցուցակներում այն չի հիշատակվում:

22 Այս հրատարակությունը, հայերեն եւ իտալերեն տեխստերով, երեւի առաջինի վերահրատարակումն է:

23 Lettera dell'Amicitia e dell'Unione, In Venetia, 1695. Appresso Bortoli, con Licenza dei Superiori. Հրատարակությունը ինձ համար մատչելի չէ: Ըստ Զարպհանայանի (Զարպհանայան, 1883, էջ 149) այն պարունակում է միայն հայերեն տեխստը, բայց Թոմսոնը նշում է նաեւ իտալերեն թարգմանությունը (Thomson, Bibliography, p. 149):

24 Սույն հրատարակության մասին տեղեկացել եմ Ա. Հովհաննիսյանից (Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Գիրք I-ին, Երևան 1957, էջ 80):

25 C. Galanus, *Conciliatio ecclesiae Armenae cum Romana*, Pars I, Rome 1690. Նույն քվին հետազոտությունը հրատարակվեց հայերեն թարգմանությամբ:

26 Autographum Amoris et Concordiae - C. Galanus: J. D. Mansi. *Sacrorum conciliorum nova et amplissima collectio*, Reprint, Graz, 1960, II, p. 461.

27 Դաշանց թղթի ստուգութեանն հաստատութիւն, երկասիրութեամբ Մատթէոս, սրբազան Կաթողիկոս ամենայն Հայոց, ձոռաղ, Մոսկոս, 1860(1), էջ 237-244, 253-260:

28 Կ. Վ. Շահնազարեանց, «Դաշանց» թղթի քննութիւնն ու հերքումը», Պարիզ, 1862 (=K. V. Chahnazarian, *Réfutation de la prétendue alliance entre s. Grégoire et s. Sylvestre*, Lutetiae Parisiorum 1862):

29 Մ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, հտ. Ա, Վենետիկ, 1784, 636-642:

30 Մ. Օրմանեան. Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարդապետութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը, Կոստանդնուպոլիս, 1912, էջ 15:

31 Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Գիրք I-ին, Երևան 1957, էջ 58-80:

32 Հ. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն Արեւմտյան Հայաստանում, Երևան 1961, էջ 49-52:

33 Կոզեան, 1961, էջ 86-87:

տպագրության փուլում էր, երբ լույս տեսան Գ. Ուլուհոջյանի և Հր. Բարթիկյանի հոդվածները³⁶, ինչի հետեանքով էլ նշված աշխատանքները մանրամասնորեն շեն քննարկված այստեղ: Հր. Բարթիկյանի հոդվածը, թերեւս, ցայժմ հարցի վերաբերյալ ամենահետաքրքրական ուսումնասիրությունն է: Ծավալուն այս հոդվածում հեղինակն առաջարկել է սրամիտ մի մոտեցում, որի շնորհիվ, կարծես թե, բացատրվում են ուսումնասիրվող երկում առկա եւ ստույգ վավերական տեղեկությունները, եւ կեղծիքները: Այսինքն՝ հոդվածագիրը համարում է, որ «Դաշանց թուղթ»-ը բաղկացած է երկու՝ վավերական և կեղծ մասերից, ընդ որում հնարավոր է, որ նրա կողմից թվագրված 4-րդ դարի 20-ական թվականներով վավերական բնագիրը կազմված է եղել լատիններենով: Ուշագրավ է նաեւ Հր. Բարթիկյանի առաջ քաշած այն գաղափարը, թե դաշինքը կնքվել է ոչ թե Հռոմում, այլ Նիկոմիդիայում:

Հարկ է նշել նաեւ, որ վերջերս Եվրոպայի Կենտրոնական համալսարանում Զ. Պողոսյանի պաշտպանած ատենախոսությունը³⁷ ոչ միայն «Դաշանց թուղթ» երկի խորազնին և համապարփակ ուսումնասիրությունն է, այլև երկի գիտա-քննական հրատարակության նախնական փորձ: Այն, համալրվելով մինչև պաշտպանությունը ատենախոսին անմատչելի ձեռագրերի տվյալներով, կառաջարկվի ընթերցողին:

Սեղբեստրոս պապի անձն առանձնահատուկ նշանակություն ունի Հռոմ կատարած ենթադրյալ այցի պատմության մեջ: Դաշինքի մասին խոսելիս, հայ հեղինակները, բացի Ագաթանգեղոսից, հիշում են Սեղբեստրոսին: Վերջինիս անունը հաճախ է հանդիպում հայկական աղբյուրներում՝ ոչ միայն դաշինքի հետ քննարկվող հարցերի առնչությամբ: Օրինակ, հայոց ավանդության մեջ Սեղբեստրոսի անունը սերտորեն կապված է Նիկիայի ժողովի հետ: Կարելի է ենթադրել, որ հենց այդ դաշինքի պատճառով է, որ հայ հեղինակներն այդպիսի ուշադրության են արժանացրել Հռոմի պապին: Սակայն այդ պարզելու

³⁴ R. W. Thomson, Constantine and Trdat in Armenian Tradition, Acta Orientalia, tomus L, fasciculi 1-3, 1997, pp. 277-289, R. W. Thomson, The Crusaders through Armenian Eyes, Dumbarton Oaks, Washington, D.C. 2001, pp. 77-82.

³⁵ G. Uluhogian, *Un Tardo apocrifo armeno relative a Costantino il Grande: la Lettera dell'amicizia e dell'unione*, in *la Lettera dell'amicizia e dell'unione*, in *Bizantinistica* 5 (2003), 369-385.

³⁶ Հր. Բարթիկյան, «Դաշանց թուղթ». կազմը, ստեղծման ժամանակը, հեղինակն ու նպատակը, ՊԲՀ, N 2, Երևան, 2004, էջ 65-116:

³⁷ Doctoral dissertation by Zaroui Pogossian: *A Revised-Diplomatic Edition, and a Historical and Textual Investigation of "Letter of Love and Concordance between the Emperor Constantine the Great and Pope Sylvester and the King of the Armenians Trdat the Great and St. Gregory the Illuminator"*. The Critical Edition, Historical Analysis and Textual Investigation, ELTE-CEU, Medieval Library, Budapest 2004.

համար պետք է քննարկել մեզանում առկա Սեղբեստրոսի վերաբերյալ նյութը:

«Սեղբեստրոսի վարք»-ի հոռոմեամետ հունարեն³⁸ տարբերակը կոչված էր հաստատելու Հռոմի առաջնությունը եւ Հռոմի պապի՝ Սեղբեստրոսի ձեռքով Կոստանդին կայսեր մկրտվելու հանգամանքները: Կոստանդին կայսեր մկրտության պատմությունն այնպես է շաղախված հրաշապատումներով, որ հաճախ դժվար է պատմականը սահմանազատել լեգենդայինից: «Պատմություն»-ն ունի արեւելյան եւ արեւմտյան տարբերակներ, որոնց բացատրությունները հիմնականում դավանաբանական ու քաղաքական նպատակներ են հետապնդում: Առանց բոլոր տարբերակները քննարկելու, խառնիխուռն ու փոփոխվող տվյալներից անհնար է հասկանալ եղելությունը:

Վաղ բյուզանդական պատմիչները կա՛մ շեն հիշատակում Կոստանդինի մկրտողի անունը, կա՛մ էլ նշում են Եվսեբիոսին՝ Նիկոմիդիայի արիոսական եպիսկոպոսին: Նկատվում է, որ հետագայում միտում է եղել հրաժարվելու Եվսեբիոս Նիկոմիդացու տարբերակից, որպեսզի առաջին քրիստոնյա կայսրը ներկայանա ուղղափառություն դավանող: 6-րդ դարում, օրինակ, Եվագրիոսը եւ Թեոդոր Անագնոստեսը (Վերձանողը) խոսում են Կոստանդին կայսեր մկրտության մասին Նիկոմիդիայում առանց նշելու մկրտողի անունը³⁹: Թեոդոր Անագնոստեսը հայտնում է նաեւ արեւմտյան պատմիչների հայտնած տեղեկություններն առ այն, որ կայսրը մկրտվել է Հռոմում: Առաջին պատմիչը, որը նույն՝ 6-րդ դարում, վկայում է կայսեր մկրտությունը Սեղբեստրոսի կողմից, Հովհան Մալալասն է⁴⁰:

7-րդ դարում, «Ջատկական ժամանակագրություն»-ում (*Chronicon Paschale*), Կոստանդին կայսեր մկրտությունը վերագրվում է Եվսեբիոս Կոստանդնուպոլսեցուն: «Ժամանակագրություն»-ը, ինչպես եւ «Վարք»-ի հայերեն տարբերակները, Կոստանդինին համարում են Կոստանդի ապօրինի որդի: 9-րդ դարում, Թեոփանես ժամանակագիրը վճռականորեն բողոքարկում է այդ հայտարարությունը: Ներկայացնելով մկրտության երկու տարբերակները՝ Եվսեբիոս Նիկոմիդացու եւ Սեղբեստրոսի կողմից, նա եզրակացնում է, որ Կոստանդինին Հռոմում մկրտել է Սեղբեստրոսը⁴¹:

Մկրտության պատմության արեւմտյան տարբերակը, որը մինչեւ 6-րդ դար համահունչ է վաղ բյուզանդական պատմիչների վարկածին, առաջին

³⁸ «Վարք»-ը բարգմանվել է հենց հունարեն, քերես, ավելի համոզիչ թվալու նկատառումով:

³⁹ G.Ch.Hansen, Theodoros Anagnostes Kirchengeschichte, Berlin: Akademie, 1971, SS., 2,15, 5,25, 43,25, И. С. Чичуров, Место «Хронографии» Феофана в ранневизантийской историографической традиции. (IV-начало IX в.). В кн. Древнейшие государства на территории СССР. Москва 1981, с. 100.

⁴⁰ Чичуров, 1981, с. 102.

⁴¹ Чичуров, 1981, с. 102.

քրիստոնյա կայսեր մկրտիչ է համարում Եվսեբիոս Նիկոմիդացուն: Հետագայում, Հռոմն ընդունում է Սեղբեստրոսի տարբերակն ու ամրապնդում այն կեղծ փաստաթղթերով, իր քաղաքական նկրտումների համար կարեւորագույն խաղաքարտ դարձնելով Կոստանդինի՝ Հռոմում մկրտվելու վարկածը:

«Վարք Սեղբեստրոսի» թե՛ հունարեն, թե՛ հայերեն տարբերակները, մեկը մյուսին լրացնելով, կարեւոր նշանակություն ունեն բնագրագիտական որոշ խնդիրների լուծման համար: Հունարեն տեքստի համար, հատկապես, անգնահատելի է հայերեն թարգմանության հունարան լեզվի առկայությունը: Այն հաճախ թույլ է տալիս ճիշտ կողմնորոշվելու բազմազան տարբերակների մեջ ու նույնիսկ տեղ-տեղ վերականգնելու սկզբնական շարադրանքը: Հայերեն թարգմանությունը կարող է նաեւ *terminus ante quem* ծառայել հունարեն տեքստի համար, քանի որ հունարեն թարգմանության ստեղծման ժամանակն անհայտ է, եւ մասնագետները երկի թվագրման համար առաջարկում են 6 - 9-րդ դարերը:

Չնայած «Սեղբեստրոսի վարք»-ի վարկածային եւ լեզենդային բնույթին, երկը, այնուամենայնիվ, կարեւորագույն նշանակություն ունի Հայաստանի, Հռոմի, Բյուզանդիայի պատմության եւ այդ երկրներում քրիստոնեության հռչակման, դավանաբանական խնդիրների հետ կապված բազում հարցերի լուսաբանման համար հետեւյալ պատճառներով: «Վարք»-ի հենքը կրկնում է Ազաթանգեղոսի գրքի ու «Թաղղեի վարդապետության» բովանդակությունը: Դա Աբգար եւ Տրդատ թագավորների ու Կոստանդին կայսեր նույն դարձի պատմությունն է: Այս գրվածքների միջեւ կարելի է բազում զուգահեռներ անցկացնել. Գրիգոր Լուսավորչի ու Սեղբեստրոսի նկարագրությունների, նրանց կյանքի, գործունեության ու կրած շարշարանքների, Տրդատի ու Կոստանդինի հիվանդության, համապատասխանաբար Գրիգոր Լուսավորչի ու Սեղբեստրոսի ձեռքով նրանց հրաշարար բուժման, Աբգար թագավորի ու Կոստանդինի առաքյալների միջոցով բարի լուր ստանալու եւ պատկերներում առաքյալների ճանաչման վերաբերյալ: Սույն ընդհանրությունները բերվում են նաեւ այլ քրիստոնեական աղբյուրներում (օրինակ, վրաց դարձում Միհրանը):

Հնարավոր է նաեւ ենթադրել, որ «Վարք Սեղբեստրոսի» երկն ուշագրավ էր հայերի համար, քանզի այն պատմում էր Հայաստանի բավականին փառահեղ եւ ծաղկուն շրջանի մասին, երբ Հայաստանը բարիգրացիական հարաբերությունների մեջ էր Հռոմի հետ:

Այս ամենն է, որ բացատրում է հայերի հետաքրքրությունը քննարկվող հոմեոմետ գրվածքի հանդեպ: Հունարեն տարբերակը ոչ միայն թարգմանվել, այլեւ խմբագրվել է, ենթարկվելով դավանաբանական փոփոխությունների

«Փոքր Սոկրատ»-ում:

Ի դեպ, այս առումով, նշենք նաև երկի նկատմամբ հետաքրքրության առաջացման մեկ այլ հնարավոր պատճառ. «Վարք Սեղբեստրոսի» հունարեն տարբերակը ոչ միայն հոռմեամետ էր, այլև հակաբյուզանդական ուղղվածություն ուներ (հենց այդ նպատակով էլ ստեղծված էր հունարեն բնագիրը): Օրինակ, թե՛ հունարեն տարբերակը եւ թե՛ «Վարք»-ի հունարան թարգմանությունը չեն նշում Կոստանդնուպոլիսը որպես աթոռանիստ մայրաքաղաք⁴²: Ուստի հակաբյուզանդական այդ միտումը հայերին կարող էր հետաքրքրել նաև իրենց հակաքաղկեդոնական պայքարում: Թերեւս, ավելի ստույգ կլիներ նշված պատճառը՝ հակաբյուզանդական դիրքորոշումը, դիտելու որպես խմբագրության՝ «Փոքր Սոկրատ»-ի ստեղծման, կարեւորագույն պարագաներից մեկը:

Ասվածի ապացույց կարող է ծառայել նաև այն փաստը, որ թեև հունարեն տեքստում Հայաստանի վերաբերյալ չկա եւ ո՛չ մի տեղեկություն, սակայն «Վարք»-ը, մասնավորապես «Փոքր Սոկրատ»-ի կազմում ընդգրկված դրա համառոտ տարբերակը, տարածված է եղել մեզանում եւ անգամ օգտագործվել որպես դասագիրք:

Հակառակ հունարեն տարբերակի «լուծյանը» Հայաստանի վերաբերյալ, լատիներեն բնագրում առկա է մի հատված, որում հիշատակվում է *Armenia* տեղանունը: Թվարկելով արեւելյան գավառների նվիրատվությունները, որոնք Կոստանդինը հանձնեց (*obtulit*⁴³) Հռոմի եկեղեցուն, ասվում է.

"per Aegyptum, sub civitatem Armenia:

possesio Agapi, quod donavit Augusto Constantino;

*possesio Passinopolimse, praest. sol. DCCC, charta decadas CCCC, piper medemnos I. crocum lib C, storace lib.CL, aromata cassia lib.CC, oleu nardinu lib CCC, balsamu lib.C, linu saccus C, cariophylu lib. CL, oleu Cypriu lib.C..."*⁴⁴

Առաջին հայացքից նախադասությունն աղճատված է թվում: Անհասկանալի այս համատեքստում տարօրինակ է եգիպտոսի եւ Հայաստանի միատեղ

⁴² Սակայն խմբագրության մեջ այն առկա է (Սոկրատ, էջ 693):

⁴³ Liber Pontificalis, v.3, p. 177.

⁴⁴ Liber Pontificalis, v.3, p. 178. Այս տեղը ունի տարբերակներ՝ v.l. 2: *Egyptum A1C2-civitatem B13C13D, civitate cet.- Armenia A1: Armentam C1--* որոնք չեն օժանդակում հասկանալու արտահայտությունը, չնայած ֆրականոնեն ավելի նիշտ են: Ի դեպ՝ *Armentam* ընթերցումը, կարող է ընկալվել որպես նույն *Armeniam*-ի տարբերակը, i եւ t տառերի շփոթության պատճառով: Ռոշ մասնագետներ առաջարկում են նոր տարբերակ մտցնել՝ *Armenia* բառի փոխարեն կարգալ *Hermontis* (Davis, 1989, p. 20), որը հավանական է՝ կառուցված է *C1* ձևագրի տարբերակման նմանությամբ, սակայն ավելի անհասկանալի է եւ անընդունելի:

հիշատակումը: Armenia բառը համաձայնեցված չէ հայցական հոլովով արտահայտված civitatem-ի հետ, այդ իսկ պատճառով Թարգմանության համար նախընտրել էմ վերցնել A1 ձեռագրի ընթերցումը, որը ներկայացնում է Armenia բառը հայցական հոլովով (Armeniam):

Ի՞նչ է նշանակում sub civitatem Armeniam: Civitas, civitatis բառն ունի «քաղաքացիություն, քաղաքացիության իրավունք, քաղաքացի, քաղաք, պետություն, հասարակություն, ժողովուրդ ու համայնք» իմաստները: Այստեղ բառի նշանակությունը դժվար է որոշել ըստ համատեքստի, քանզի նախորդ թվարկումներում առկա են, օրինակ, sub civitatem Antiochiam, sub civitatem Alexandriam⁴⁵ ձևերը, որտեղ civitatem բառը պետք է հասկանալ «քաղաք» իմաստով «քաղաքի ներքո, մոտ, շրջակայքում գտնվող»: Per Aegyptum կարող է նշանակել «ամբողջ եգիպտոսի», «եգիպտոսով», «եգիպտոսի միջով կամ միջոցով»: Ըստ այդմ, նախադասությունը կարող է մեկնաբանվել հետևյալ տարբերակներով.

1. «ողջ եգիպտոսից Արմենիա քաղաքը՝ Ագապիոսի կալվածը, որ նվիրեց Կոստանդին Օգոստոսին⁴⁶, Պասինոպոլիս կալվածը ...» եւ հետո թվարկում է կատարված նվիրատվությունները («Թուղթ, պղպեղ, յուղ» եւ այլն) ու դրանց քանակությունները: Այս դեպքում ստացվում է, որ Armenia-ն եգիպտական քաղաքի անվանում է, ինչը զարմանալի է, եթե ոչ անհասկանալի:

2. Թարգմանության երկրորդ տարբերակում, նախադասության սկիզբը կհնչի այսպես՝ «ամբողջ եգիպտոսի, Հայոց համայնքը (կամ, բառացի՝ Հայաստանի քաղաքացիության ներքո գտնվողները...»: Բնագրում առկա է նման իմաստով եւս մի օրինակ. sub civitate Aegyptia⁴⁷ «եգիպտոսի քաղաքացիության, իրավասության ներքո գտնվողները»: Ստացվում է, որ հեղինակը նկատի ունի եգիպտոսում ապրող հայերին, որոնց մասին չի պահպանվել որեւէ տեղեկություն:

3. Ամենահավանական թարգմանությունն է. «եգիպտոսով (կամ եգիպտոսի միջոցով), Հայաստան պետությունը...», այն է՝ մատնանշվում է Հայաստանի հետ հարաբերության աշխարհագրական հնարավոր ճանապարհը, որը անցնում էր եգիպտոսի տարածքով: Նշենք, որ աշխարհագրական իմաստով վերջին տարբերակը չպետք է զարմացնի, քանի որ հենց քննարկվող հատվածից հետո խոսվում է եփրատ գետի ավազանի տարածքում գտնվող Ասորիքի 7 գավառներից մեկի՝ եփրատեսիայի մասին: Այսինքն՝ եթե հետեւենք համա-

⁴⁵ Liber Pontificalis, v.3, p. 177.

⁴⁶ Կամ «Կոստանդին Օգոստոսի միջոցով», քանզի Augusto Constantino կարող է լինել եւ տրական, եւ գործիական հոլով:

⁴⁷ Liber Pontificalis, v.3, p. 177.

տեքստին, ապա դժվար չէ նկատել, որ թվարկված արեւելյան գավառները, որոնք իրենց նվիրատվությունները մատուցեցին Հռոմում կառուցված «երանելի Պետրոսի բազիլիկային»⁴⁸, հաջորդում են միմյանց ըստ աշխարհագրական դիրքորոշման՝ Անտիոք, Աղեքսանդրիա, Հայաստան, Եփրատեսիա: Սակայն Հայաստանի դեպքում «Գործք»-ի հեղինակը նշում է «Եգիպտոսի միջոցով կամ միջով» (*per Aegyptum*), թերեւս հասկանալով, որ դա Հռոմի ու Հայաստանի միջեւ ամենակարճ եւ ընդունված ճանապարհը չէր: Այս տեղեկությունը հնարավորություն է ընձեռում կարծելու, որ 4-րդ դարի սկզբում, երբ Հայաստանից Փոքր Ասիայի միջով (դարան մտած բռնակալ Մաքսենտիոսի պատճառով) դեպի Հռոմ անհնար էր ճանապարհորդել, հայերը Հռոմի հետ կարող էին հաղորդակցվել Եգիպտոսի միջոցով: Ուստի Տրդատի ու Գրիգոր Լուսավորչի Հռոմ ուղեւորության վերաբերյալ հին ավանդագրույցն այնքան էլ անվավեր չէ:

Պակաս ուշագրավ չէ հետաքրքրական զուգահեռներ պարունակող նախադասության երկրորդ մասը, ուր նշվում է. «Ազապիոսի կալվածքը, որ նվիրեց Կոստանդին Օգոստոսին, Պասինոպոլիմսե կալվածք...»: Դա նշանակում է, որ Հայաստանում եղել են անձինք, որոնք Հռոմի Պետրոս առաքյալի տաճարին կալվածքներ են նվիրել եւ այլ նվիրատվություններ արել: Սա նույնպես արտառոց տեղեկություն է:

Թվում է, որ եւ՛ Ազապես կամ Ազապիոս անունը (*possessio Agapi*), եւ՛ *possessio Passinopolimse* մատնանշված են Ազաթանգեղոսի երկի նույն ժամանակահատվածին վերաբերող հետեւյալ հատվածում.

«Որ յաստիճան եպիսկոպոսութեան լինէին արժանի կալոյ, առեալ ձեռնադրութիւն ի նմանէ. որոց առաջնոյն՝ Աղբիանոս անուն, որ ապա կողմանցն Եփրատական զեսոյն լինէր վերակացու. երկրորդին՝ Եւտաղիոս, որ ի կողմանս վայրացն Բասենոյ կացեալ լինէր հովիւ. երրորդն՝ Բասոս. չորրորդն՝ Մովսէս. հինգերորդն՝ Եւսերիոս. վեցերորդն՝ Յովհաննէս. եօթներորդն՝ Ազապես...»⁴⁹

Այսինքն՝ հավանական եմ համարում, որ բնագրի *possessio Passinopolimse* բառակապակցությունը նույն տեղանունն է, ինչ եւ «ի կողմանս վայրացն Բասենոյ»: Աղբյուրներում այն առկա է նաեւ Բասեն, Փասիան եւ հատկապես Պասեն ձեւերով:⁵⁰ Ուստի ստացվում է, որ Ազապես⁵¹ եւ Եվթապիոս

⁴⁸ Liber Pontificalis, v.3, p. 176.

⁴⁹ Ազաբանգեղոս, Հայոց Պատմություն, Ա. Տեր-Ղեւոնդյան, Երևան 1983, էջ 470:

⁵⁰ Այս տեղանվան մասին տե՛ս՝ Adontz, 1970, pp. 255-8, 260, 262, 267, 269, 459 n.47, 467n. 20, 87*, 89*, 93*, 102*.

եպիսկոպոսները, ինչպես եւ արեւելյան հայտնի մյուս քրիստոնեական կենտրոնները (Աղեքսանդրիան, Անտիոքը), որոշակի նվիրատվություններ են արել Հռոմի Ս. Պետրոսի տաճարին: Հայտնի չէ, թե որքանով է ստույգ այդ երկուսն հաղորդված սույն տեղեկությունը, սակայն շափազանց հետաքրքրական է *Armenia* տեղանվան հիշատակումը բավականին վաղ լատինական բնագրում:

Բերված նկատառումները գայթակղիչ են Հռոմի ու Հայաստանի միջեւ եւս մեկ առնչություն գրանցելու առումով, բայց կարոտ են ավելի խորը ուսումնասիրման:

Վերադառնանք այն հարցին, թե ինչ են հաղորդում հայկական աղբյուրները Սեղբեստրոսի մասին: Արդեն նշվեց, որ Սեղբեստրոսի անունը զարմանալիորեն բացակայում է Ագաթանգեղոսի երկում: Զարմանալիորեն, քանզի հետագա ավանդապատումները հիմնված են գլխավորապես հենց այդ երկի տվյալների վրա: Ի միջի այլոց, Սեղբեստրոսի անունն առկա է «Ս. Գրիգորի վարք»-ի հունարեն տարբերակում: Բացի այդ, Մովսես Խորենացին, անդրադառնալով Կոստանդնի մկրտության պատմությանը, այն ներկայացնում է գրեթե կրկնելով «Սեղբեստրոսի վարք»-ի համապատասխան դրվագը, որը վերջանում է այսպես. «...որպէս համառօտ ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս»⁵²: Խորենացու «Պատմության» մեջ հայտնի են նման այլ հղումներ⁵³, ըստ որում, Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» մեջ նշված հաղորդումը հաճախ բացակայում է, ինչպես, օրինակ, այս դեպքում: Որոշ մասնագետներ համարում են, որ այս հատվածներն առկա էին Ագաթանգեղոսի սկզբնագրում: Արդարացիորեն այդպես էր կարծում նաեւ Ա. Տեր-Ղեւոնդյանը, հիմնվելով Ագաթանգեղոսի «Պատմության» արաբական թարգմանության նորահայտ ձեռագրերի վրա:⁵⁴

Այս եւ Ագաթանգեղոսի գրքի հետ կապված մի շարք խնդիրներ (օրինակ, միջնադարում երկի հանդեպ եղած աշխույժ հետաքրքրությունը կամ Ագաթանգեղոսի երկի, «Աղդայի վարդապետության» ու «Սեղբեստրոսի վարք»-ի միջեւ ակնհայտ ընդհանրությունները), դեռեւս շունեն վերջնական պատասխաններ:

Հետագա հայ հեղինակները, օրինակ, Սամվել Անեցին, Ուխտանեսը,

51 Ագապես անունը հայկական աղբյուրներում վկայված է նաեւ որպես Խաբիր (զարմանալի է, ինչու ո՞չ Հաբիր, միգուցե՞ հունարենից է վերցրած)՝ փաստորեն հունարեն բառի առաբերեն բարզմանությամբ:

52 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, աշխարհարար բարզմանությունը Ստ. Մալխասյանի, Երևան, 1981, էջ 227:

53 Մովսես Խորենացի, նշվ. հրատ., էջ 202, 203, 212, 219, 221, 234:

54 Ա. Տեր-Ղեւոնդյան, Ագաթանգեղոսի արաբական խմբագրության նորահայտ ամբողջական բնագիրը. ՊԲՀ 1973 Ու(60), հմմտ. նաեւ՝ Н. Марр, Крещение армян, грузин, абхазов и аланов, С.-Петербург 1905, сс. 63-64:

Սամվել Կամրջաձորեցին, Մովսես կաթողիկոսը, Գրիգոր Աբասյանը, Վարդան Այգեկցին, Վանական Վարդապետը, Կիրակոս Գանձակեցին, Վարդան Բարձրբերդցին, Թովմա Մեծոփեցին եւ այլք, խոսելով Կոստանդնի մկրտության մասին, նշում են Սեղբեստրոսի անունը: Սեղբեստրոսի նկատմամբ թվարկած հեղինակների հետաքրքրությունը պայմանավորված է մի շարք հարցերով, ուստի նրանց հայտնած տեղեկությունները բազմաբնույթ են: Օրինակ, Սեղբեստրոսի անունը Գրիգոր Աբասյանը հիշատակում է «սպահոց» օրերը քննարկելիս («Իսկ առ նորս ետ պահել Սեղբեստրոս, զի մկրտեսցէ զԿոստանդիանոս»⁵⁵): Սամվել Կամրջաձորեցու համար վերջինս «հաւատոյ» սյուններից մեկն է: Ի դեպ, «Սիւնք հաւատոյ»-ի ցանկում Սեղբեստրոսը միակ Հռոմի պապը չէ: Ցանկում նշվում են նաեւ Կղեմես I (*sedit* 88-97), Հուլիոս I (*sedit* 337-52), Գամասոս I (*sedit* 366-83) եւ Կելեստինոս I (*sedit* 422-32)⁵⁶:

Հետաքրքրական է նաեւ, թե ինչ սկզբունքով է առաջնորդվել Սամվել Կամրջաձորեցին (կամ նրան նախորդող հեղինակները⁵⁷), այս պապերի անուններն ընտրելիս: Ցանկում նշված մյուս անունները, մեծ մասամբ հայրապետներ ու եպիսկոպոսներ են, հիմնականում կարեւորագույն աթոռանիստ քաղաքներից՝ Նրուսաղեմի եպիսկոպոս Մակարը, Աղեքսանդրիայի եպիսկոպոս Դիոնիսիոսը, Կոստանդնուպոլսի եպիսկոպոս Նեկտարիոսը եւ այլք: Այդ ցանկից տեսանելի է, որ բոլոր ընդգրկված անձինք ապրել եւ գործել են մինչեւ Քաղկեդոնի ժողովը եւ նրանց դավանանքը համընկնում է նիկիական «հավատո հանգանակին»: Նրանցից շատերը հավատի վերաբերյալ նշանակալի թղթեր են գրել, ոմանք էլ այդ թղթերն առաքել են Հայաստան: Այսինքն՝ ակնհայտ է, որ հիմնական սկզբունքը դավանաբանական է, սակայն ընտրության սկզբունքը մինչեւ վերջ հստակ չէ:

Կային եւ այլ հեղինակներ, որոնց երկերը, դավանաբանական տեսանկյունից, ընդունվում եւ թարգմանում էին հայերի կողմից: Արդ, ինչո՞ւ են ընդգրկված եվսեբիոս Կեսարացին եւ Գրիգոր Աքանչելագործը, սակայն բացակայում են, ասենք, Բարսեղ Կեսարացու կամ Սոկրատ Աքոլաստիկոսի անունները: Պարզ չէ նաեւ Հռոմի պապերի ընտրությունը. արդյոք պատճառն այն չէ՞, որ Հայոց եկեղեցին այդ պապերի, ինչպես նաեւ ցանկում հիշատակված մյուս հայրապետների ու եպիսկոպոսների օրոք չի ունեցել դավանաբանական կամ այլ կնճռոտ խնդիրներ: Ինչեւէ, մեր թվարկության առաջին շորս դարերի հայերեն աղբյուրների բացակայության պատճառով, ի թիվս այլ խնդիրների,

⁵⁵ ՄՄ, քիվ 1879, 289բ:

⁵⁶ Գիւրբ քղբոց, երկրորդ հրատարակություն, Նրուսաղեմ, 1994, էջ 555-556:

⁵⁷ Հավանական է, որ նշված անունների ավանդական ցուցակը գոյություն ուներ արդեն Սամվել Կամրջաձորեցուց առաջ:

քիչ են հետազոտված նաև Հայաստանի հարաբերություններն այլ երկրների ներկայացուցիչների հետ:

Սեղբեստրոսի անձը հետաքրքրություն է ներկայացրել բոլոր քրիստոնյաների համար՝ եկեղեցական ծիսակատարության մեջ նրա ունեցած մեծ ներդրման շնորհիվ: Շարաթվա օրերի հեթանոսական անունների անվանափոխությունն եւս կապված է նրա հետ, ինչը վկայված է Սեղբեստրոսի «Վարք»-ում: Սույն թեմային անդրադարձել են Ուխտանեսը և Վանական Վարդապետը: Վերջինս գրում է հետևյալը.

«Իսկ ար և տիւ Մովսէս անուանեաց առաջին և երկրորդ, և զմինն առանձինն՝ շարաթ, և հեթանոսք Կռանոս. և այլ մի ըստ միոշէքն և զեւթն՝ Ափրողիտեայ: Եւ հաւատալ մեծին Կոստանդիանոսի՝ սուրբն Սեղբեստրոս առեալ զանուն շարաթուն ևդ ի վերայ իւրաքանչիւրոցն, ասաց՝ միաշարաթ, երկշարաթ, այլաքն հանդերձ:»⁵⁸

Հայերի համար Սեղբեստրոսի անունը հատուկ նշանակություն ուներ և այլ տեսանկյունից: Սկսած 12-րդ դարից նրա մասին առկա տեղեկությունները հիմնականում առնչվում են «Դաշանց թղթի»⁵⁹ հետ: Այդ ժամանակից ի վեր, հայ հեղինակները, խոսելով Հռոմի հետ հարաբերությունների մասին, հիշատակում են այդ երկը: Կիրակոս Գանձակեցին, օրինակ, քաջ տեղյակ է «Դաշանց թղթին» և մի քանի անգամ հիշատակելով Հայաստանի ու Հռոմի միջև կնքված դաշինքը, խոսում է հին պայմանագիրը վերստին նորոգելու մասին.

«...սուրբն Գրիգորիոս՝ յետ լուսաւորելոյ նորա զՀայաստան աշխարհս աստուածգիտութեամբ և ամենայն ուղղափառ կարգօք և օրէնսդրութեամբ, և ձեռնադրելոյ եպիսկոպոսս աւելի քան զշորս հարիւր և երեսուն, զնալ ևղի նմա և մեծի արքային Տրդատայ ի Հռոմ ի տեսութիւն նշխարաց սրբոց առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, և մեծ թագաւորին Կոստանդիանոսի, և սրբոյ հայրապետին Սեղբեստրոսի, զնել ուխտս և դաշինս ի մէջ

⁵⁸ Լ. Խաչիկյան, Աշխատություններ, հատ. Ա, Երևան 1995, հտ. I, էջ 185: Այս տեղեկությունը փաստում է, որ Վանական Վարդապետը ծանոթ է Սեղբեստրոսի անվան հետ կապված օրերի վերանվանման ավանդությանը: Այստեղից, սակայն, պարզ չէ, արդյո՞ք Վանական Վարդապետը օգտվել է «Սեղբեստրոսի վարք»-ի՞ց, թե՛ այլ աղբյուրից, քանզի հատվածը տարբեր է «Վարք»-ում ներկայացվածից (մանավանդ Վանականի կողմից օգտագործված «միաշարաթ» («կիրակի» բառի փոխարեն) տեղիքը, որը առկա էր արդեն նոր Կտակարանում):

⁵⁹ «Դաշանց թղթի» վերաբերյալ այստեղ ներկայացված դրույթները հիմնականում արտացոլված են հետևյալ հոդվածներում՝ M. E. Shirinian, "The Letter of Love and Concord" Between Rome and Armenia: A Case of Forgery from the Period of Crusaders, *Orientalia Lovaniensia Analecta* 125, East and West in the Crusader States, Context-Contacts-Confrontations, III, (Acta of congress held at Hernen Castle in September 2000), ed. K.Ciggaar, H. Teule, A.A. Bredius Foundation, Peeters, Leuven 2003, pp. 79-99:

իւրեանց:»⁶⁰

«...սկսեալ ի սրբոյն Սեղբեստրոսէ Հոռոմայ հայրապետէն»⁶¹

«...զի սուրբն Գրիգոր եւ Սեղբեստրոս աղ օրհնեցին»⁶²

«...զհին դաշինսն Տրդատայ եւ սրբոյն Գրիգորի եւ Կոստանդիանոսի կայսեր եւ Սեղբեստրոսի հայրապետին վերստին նորոգեցին առ սովաւ:»⁶³

Վարդան Վարդապետ Բարձրբերդցին եւս խոսում է «Ղաշանց թղթի» մասին, Տրդատի ու Կոստանդինի նրուսադէմ կատարած ուղեւորութիւնը նկարագրելիս.

«Ասեն դարձեալ թէ երկու ինքնակալքն Կոստանդիանոս եւ Տրդատես, եւ պապքն երկօքին Գրիգորիս եւ Սեղբեստրոս եկին ի Հոռոմայ յերուսադէմ եւ վիճակաւ բաժանեցին զտնօրինական տեղիսն. եւ Հայոց անկաւ սնարքն եւ Գողգոթա, եւ Սուրբ Կարապետն եւ Սուրբ Յակոբն: Եւ սուրբն Գրիգոր կանթեղ կախեաց ի սնարսն, եւ խնդրեաց զիշումն լուսոյն յԱստուծոյ ի նշան յատութեան իւրոյ ամիամի...եւ յաղագս այնորիկ կոչեցաւ Լուսավորիչ:»⁶⁴

Հոռոմի քաղաքականութեան, Կիլիկիայի հայկական թագավորութեան ու հարեւան պետութիւնների մասին հետաքրքրական տվյալներ պարունակող այս երկի վերաբերյալ հարկ է նշել հետեւյալը: «Թուղթ սիրոյ եւ միաբանութեան մեծի կայսերն Կոստանդիանոսի եւ սրբոյն Պապին Սեղբեստրոսի եւ Տրդատայ Հայոց արքայի, եւ սրբոյն Գրիգորի Հայոց Լուսավորչի» խորագրի ներքո պահպանված այս անվավեր գրվածքը մեզ է հասել բազմաթիվ ձեռագրերով, տարբեր խմբագրութիւններով: Այն կցվել է նաեւ Ազաթանգեղոսի գրվածքի ու խմբագրութիւններին: Գիտնականները համամիտ են, որ «Ղաշանց թուղթ»-ը կեղծիք է⁶⁵, քանզի դրանում կան այնպիսի իրողութիւնների եւ անցքերի նկարագրութիւններ, որոնք կարող են վերաբերել միայն խաչակիրների ժամանակին:

«Ղաշանց թուղթ»-ը հավանաբար գրվել է 11-13-րդ դարերում, Կիլիկիայում, միաբարական միջավայրում: Այդ դարերում, հատկապէս Ֆրանկների

⁶⁰ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 10-11:

⁶¹ Կիրակոս Գանձակեցի, էջ 5:

⁶² Կիրակոս Գանձակեցի, էջ 12:

⁶³ Կիրակոս Գանձակեցի, էջ 118:

⁶⁴ Սոփերի հայկական, Վենետիկ, 1853, հտ. Ե, էջ 78-79:

⁶⁵ Դա ակնհայտ էր արդեն 17-րդ դարում, տե՛ս՝ *Histoire critique de la creance et des coutumes des nations du Levant*, publiée par le Sr. De Moni, Francfort 1631, p. 134: Տե՛ս նաեւ Շահնազարեանց, 1862, էջ 115գ, Հովհաննիսյան, 1957, էջ 58-80, Անասյան, 1961, էջ 49-52, Կոզեան, 1961, էջ 86-87, Thomson, 1997, pp. 277-289:

կայսրությունում, այդօրինակ կեղծ թղթերը շափազանց տարածված էին: Դրանցից մեկը՝ «Կոստանդնի նվիրատվություն» (*Donatio Constantini*) կոչված հայտնի կեղծ փաստաթուղթը, բովանդակությամբ խիստ նման է «Դաշանց թղթին», սակայն դրանում բացակայում է հայկական նյութը: Երկու գրվածքի հիմքում ընկած է նույն գաղափարը՝ Հռոմի առաջնության փառաբանումը: Կոստանդին կայսեր անունից գրված երկու երկերն էլ հաղորդում են, որ Հռոմի եկեղեցուն ու պապին լայն արտոնություններ ու հարուստ կալվածքներ են շնորհվում, իսկ «Դաշանց թղթի» դեպքում նաեւ հայոց կաթողիկոսին:

Ի տարբերություն բազմիցս ուսումնասիրված «Կոստանդնի նվիրատվության» (*Donatio Constantini*), «Դաշանց թուղթ»-ը չի արժանացել գիտական մանրազնին քննության եւ շունի քննական հրատարակություն: Թեպետ, այն հրատարակվել է բազմիցս, սակայն մղիչ հանգամանքներն են եղել դավանաբանական մոտեցումները:

«Դաշանց թղթի» բովանդակությունն Ագաթանգեղոսի համապատասխան հատվածի ավելի ճոխացված (ավելի շեշտված է պապի փառաբանությունը) տարբերակն է: «Թղթում» ասվում է, որ Հռոմի պապը գլխավոր առաքյալների հետնորդն է, որին հանձնված են Արեւմուտքից մինչեւ Արեւելք բնակվող բոլոր քրիստոնյա ազգերին իշխելու երկնային եւ երկրային բանալիները⁶⁶: Այս դրվագը շափից ավելի հիշեցնում է «Կոստանդնի նվիրատվության» հետեւյալ բառերը.

"et tibi dabo claves regni caelorum; quodcumque ligaveris super terram, erit ligatum et in caelis, et quodcumque solveris super terram, erit solutum et in caelis."⁶⁷

«Եւ քեզ կտամ երկնային արքայության բանալիները. յուրաքանչյուր (դաշինք) որ կնքես երկրի վրա, կլինի կնքված նաեւ երկնքում, ինչ (հարց) որ կլուծես երկրի վրա, կլինի լուծված երկնքում եւ»:

Ըստ «Դաշանց թղթի»՝ պապի իշխանությունը տարածվում էր ոչ միայն բոլոր հայրապետների, այլեւ կայսեր վրա: Կոստանդինն այստեղ տալիս է յոթ հայրապետների անուններ, որոնք «մեր օրերի» աշխարհի յոթ սյուներն են՝ Սբ. Սեղբեստրոսն՝ Արեւմուտքում, Սբ. Գրիգորն՝ Արեւելքում, Սբ. Անտոնիոսը՝ հարավում, Սբ. Նիկողայոսը՝ հյուսիսում, Սբ. Մակարն՝ Երուսաղեմում, Սբ. Հակոբը՝ Մծրինում եւ Սբ. Եփրեմը՝ Եգեսիայում:⁶⁸ «Թղթում» նույնչափ

⁶⁶ Շահնազարեանց, 1862, էջ 12, ՄՄ թիվ 2272, 222բ:

⁶⁷ Coleman, 1993, p. 232.

⁶⁸ ՄՄ, թիվ 2272, 226բ, Շահնազարեանց, 1862, էջ 23՝ այս տարբերակում Սբ. Մակարիոս Երուսաղեմացու եւ Սբ. Եփրեմ Եգեսիացու անունները չկան, սակայն ՄՄ, 3078 (211ա) ձեռագիրը նշում է բոլոր անունները:

գովարանված են նաև Հայոց կաթողիկոսն ու արքան, եւ նրանց անհավատալի արտոնություններ ու կալվածքներ են շնորհված:⁶⁹ Ըստ այս փաստաթղթի՝ կայսրը թագադրել է Տրդատին եւ դիմել է նրան «փառաւոր Ֆրերս մեր Տրդատես»⁷⁰: Թերեւս միայն «Ֆրեր» ֆրանսերեն բառը, որը միակը չէ այս տեքստում, բավական է «դաշինք»-ի գրվելու ուշ ժամանակի մասին գաղափար կազմելու համար: Սեղբեսորոսը, համաձայն «Դաշանց թղթի», ձեռնադրում է Գրիգոր Լուսավորչին, որն այստեղ անվանված է «կենդանի վկա»⁷¹, ինչպես նաև պապի գլխավոր ներկայացուցիչը Փոքր Ասիայում⁷², իսկ նրա աթոռը հավասար է հայտարարվում Երուսաղեմի, Անտիոքի եւ Աղեքսանդրիայի աթոռներին⁷³: Ի դեպ, «կենդանի վկա» հորջորջը, ինչպես, ընդ հանրապես, հայ մատենագրության մեջ անվանում էին Գրիգոր Լուսավորչին, վկայված է ներսես Շնորհալու վերաբերյալ եւս, ինչից կարելի է ենթադրել, որ Գրիգոր Լուսավորչի փոխարեն «Դաշանց թղթում» նկատի է առնված Շնորհալին:

Ուշադրության է արժանի նաև «Դաշանց թղթի» լեզուն. այն գրված է միջին հայերենով եւ լի է փոխառություններով լատիներենից (պրետորին⁷⁴ *praetorium*, սիգնալիք⁷⁵ *signis*, բուսկանիայ⁷⁶ *vulcanus*), հունարենից (խրուսկէֆալոք⁷⁷ *χρυσοκέφαλοις*, պրոտայ պապս⁷⁸ *πρωτόπαπο*“, գպրոտոն Արմենիան⁷⁹ *πρώτη Ἀρμενία*), ֆրանսերենից (շամբրն⁸⁰ (= *chambre*), ֆրէր⁸¹ *frère*). Հանդիպում են նաև փոխառություններ պարսկերենից եւ թաթարերենից:⁸² Այս փոխառությունները կարելի է տեղեկություններ են հաղորդում «թղթի» հեղինակի մասին. նրա հայերենի իմացությունը կատարյալ չի

69 Շահնազարեանց, 1862, էջ 16-18, 27, հմմտ. ՄՄ, թիվ 3078, 214ա:

70 Այլ տեղերում Տրդատը անվանված է «եղբայր», որը որպես կանոն օգտագործված է գովեստարանական մակդիրներով, Շահնազարեանց, 1862, էջ 20, ՄՄ, թիվ 2272, 224բ:

71 Շահնազարեանց, 1862, էջ 12, ՄՄ, թիվ 2272, 218բ, 222բ: Այսպես է անվանում Գրիգոր Լուսավորչին եւ ներսես Շնորհալին:

72 Շահնազարեանց, 1862, էջ 25, ՄՄ, թիվ 2272, 228բ:

73 Շահնազարեանց, 1862, էջ 24, ՄՄ, թիվ 2272, 227բ-228բ: Ասված է, որ Գրիգոր Լուսավորչին Սեղբեսորոսը շնորհեց «պապի, պատրիարքի եւ հայրապետի» կոչումները:

74 Շահնազարեանց, 1862, էջ 24, ՄՄ, թիվ 2272, 227բ:

75 Շահնազարեանց, 1862, էջ 24, ՄՄ, թիվ 2272, 219բ:

76 Շահնազարեանց, 1862, էջ 24, ՄՄ, թիվ 2272, 227բ:

77 Շահնազարեանց, 1862, էջ 24, ՄՄ, թիվ 2272, 219բ:

78 Շահնազարեանց, 1862, էջ 24, ՄՄ, թիվ 2272, 227բ, *crusokevfaloi*“ բառացի «ոսկեգլուխ», այսինքն՝ ոսկե բազ կրող:

79 Շահնազարեանց, 1862, էջ 18, ՄՄ, թիվ 2272, 223բ:

80 ՄՄ թիվ 3078 (216ա) ֆրանսերեն բառը փոխարինված է «ծմամբարն» անհասկանալի բառով:

81 Շահնազարեանց, 1862, էջ 14, ՄՄ, թիվ 2272, 224բ, հմմտ. նաև 217բ - «գիրս գայս գրեցաք միմեանց ֆրերս»:

82 Շահնազարեանց, 1862, էջ 92-97:

եղել, բայց նա տիրապետել է մի քանի այլ լեզուների: Հավանական է, որ նման մեկը պետք է ապրած լիներ Կիլիկիայում: Սակայն հիմնական պատճառը, որ գրվածքը պետք է ստեղծված համարել Կիլիկիայում, անշուշտ Կիլիկիայի հռոմեամետ քաղաքականությունն էր:

Հարց է ծագում, արդյոք քննվող փաստաթուղթը կազմվել է միայն հայերի՞ նախաձեռնությամբ, ու արդյոք միա՞յն Ազաթանգեղոսի գիրքն է հանդիսանում դրա աղբյուրը. թերեւ՝ ո՛չ, հետեւյալ պատճառներով: Նախ՝ գլխավոր աթոռանիստ քաղաքները հիշատակելիս, հեղինակը չի նշում ո՛չ Կոստանդնուպոլսի, ո՛չ եփեսոսի աթոռները: Վերջինս, սակայն, ժամանակին (մինչեւ իր իրավունքները Կոստանդնուպոլսի աթոռին փոխանցելը) եղել է գլխավոր աթոռներից մեկը: Այս հանգամանքը կարող է նշանակել, որ տվյալ «Թուղթ»-ը կազմվել է 1204 թ. հետո, երբ խաչակիրները գրավեցին Կոստանդնուպոլիսը: Այսպես ենթադրում են որոշ մասնագետներ:⁸³ Դրանց հիշատակման բացթողումը կարող է միտումնավոր լինել, ինչպես դա արված է «Սեղրեստրոսի վարք»-ում (Կոստանդնուպոլիսը պարզապես չի նշվում):⁸⁴ Երկու դեպքում էլ բացատրությունը նույնն է՝ այդ կեղծ գրվածքների նպատակն է եղել ապացուցել, որ երկերը կազմվել են 4-րդ դարի սկզբում, երբ Կոստանդնուպոլիսը դեռ փոքրիկ Բյուզանդիոն էր, այլ ոչ աթոռանիստ մայրաքաղաք: Այսինքն՝ ճիշտ ժամանակաշրջան է ընտրված հնարավորինս նսեմացնելու Կոստանդնուպոլսի նշանակությունն ու շեշտելու Հռոմի առաջնությունը:

Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ սա միակ աղբյուրը չէ «Դաշանց թղթի» եւ «Վարք Սեղրեստրոս»-ի միջեւ: Ավելին, վերջինս (ըստ որում նաեւ դրա հունարեն տարբերակը) աղբյուր է ծառայել «Դաշանց թղթի» հեղինակի համար, ինչը չի նկատվել հետազոտողների կողմից: Օրինակ, մյուս աթոռների նկատմամբ Հռոմի եպիսկոպոսական աթոռի առաջնության, ընդարձակ կալվածքներ եւ արտոնություններ շնորհելու գաղափարները վերցված են «Վարք»-ից: «Թուղթ»-ը կրկնում է Սեղրեստրոսի վիշապին հաղթելու պատմությունը, հավելելով, որ Տրդատը նույնպես սպանել է մեկ այլ վիշապի:⁸⁵ Պատմելով Կոստանդնի հիվանդության մասին՝ «Թղթի» հեղինակը բորոտությունը անվանում է «զեղափանդեան»⁸⁶. հունարեն «Վարք»-ում ունենք

83 Հովհաննիսյան, 1957, էջ 70:

84 «Վարք»-ի հունարեն բարգմանությունը, հետեւելով բնագրին եւս չի նշում Կոստանդնուպոլիսը, սակայն խմբագրության մեջ, այսինքն՝ Փոֆր Սոկրատում, այն առկա է (Մ. Տեր-Մովսիսեան, Սոկրատ, էջ 693):

85 Շահնազարեանց, 1862, էջ 19-20, ՄՄ, թիվ 2272, 224բ:

86 Շահնազարեանց, 1862, էջ 22, ՄՄ, թիվ 2272, 226բ:

«ἐλεφαντικῆ»:⁸⁷ «Արիողևեանն կախարդք եւ Մարսիկեանն բժիշկք»⁸⁸ (հմմտ. հունարենը *οἱ μάγοι οἱ λεγόμενοι ἀρίολοι καὶ οἱ ἐπαιδοὶ καὶ οἱ Μαρσικοὶ ἰατροὶ*⁸⁹), բացասական նշանակություն ունեցող եւ բժիշկներին (որոնք չկարողացան բուժել Կոստանդինին) բնութագրող խրթին ու օտարոտի բառերը «Թղթում» փոխարինված են ավելի մեղմ իմաստ ունեցող «ճարտարքն ճեմարանին եւ սոփիստեայքն սոկրատեանք»,⁹⁰ այսինքն՝ «ճեմարանի ճարտարները եւ Սոկրատյան իմաստասերները» արտահայտությունը:

Հեղինակն օգտվել է նաեւ «Վարք»-ի հայերեն թարգմանությունից եւ, մասնավորապես, դրա խմբագրությունից⁹¹: Այս դեպքում անհասկանալի է, թե ինչու նա չի փոխանցում այդ խրթին արտահայտությունը հայերեն «Վարք»-ից փոխ առնված բառերով: Բերենք եւս մեկ օրինակ, որն աներկբա է դարձնում «Դաշանց թղթի» հեղինակի հունարեն «Վարք»-ի իմացությունը: «Թղթում» վիշապի սպանությունը նկարագրելիս, ասված է. «Դարձեալ էր վիշապ մի մեծ վնասակար ի Կապետոլին...»⁹²: Հունարեն «Սեղբեստրոսի վարք»-ում կարդում ենք. «*Ἦν δράκων παμμεγέθης ἐν τῷ Ταρπέϊῳ ὄρει, ἔνθα τὸ Καπετώλιον ἵδρυται*»⁹³ «Վարք»-ի հայերեն թարգմանության մեջ ունենք. «Վիշապ էր մեծ յոյժ ի Տարսոն լեռինն, յորում եւ տաճար գոյր նմա»:⁹⁴ «Վարք»-ի հայերեն թարգմանության խմբագրությունում. «Վիշապ էր մեծ յոյժ ի Տարսոն լեռինն»⁹⁵: «Կապետոլին»⁹⁶ բառը, որն առկա է թե՛ հունարեն «Վարք»-ում, թե՛ «Թղթում» բացակայում է «Սեղբեստրոսի վարք»-ի հայերեն թարգմանության եւ դրա խմբագրության մեջ: Բավական համոզիչ այս օրինակները թույլ են տալիս ենթադրել, որ «Թղթի» հեղինակն օգտվել է ինչպես

⁸⁷ Combefis, p. 273. Հայերեն քարգմանությունն ունի՝ «եղափանտական» (Մ. Տեր-Մովսէսեան, Սոկրատ, էջ 722), իսկ խմբագրությունը՝ «եղափանդական» (նույն տեղում), հմմտ. «եղեփանդական», հոր., 1991, էջ 226:

⁸⁸ Մ. Տեր-Մովսէսեան, Սոկրատ, էջ 722, հմմտ. խմբագրությունը՝ «արիոկեան կախարդք եւ արխատկեանն բժիշկք» (նույն տեղում):

⁸⁹ Combefis, p. 273.

⁹⁰ Շահնազարեանց, 1862, էջ 22, ՄՄ, թիվ 2272, 226բ:

⁹¹ Տե՛ս Մ. Տեր-Մովսէսեան, Սոկրատ, էջ 696, 708-709, 714-715, ըստ որում «Դաշանց քղբում» արտացոլված տեղեկությունները հաճախ առկա են միայն Փոֆր Սոկրատում (օրինակ, էջ 696):

⁹² Շահնազարեանց, 1862, էջ 22, ՄՄ, թիվ 2272, 224բ:

⁹³ Combefis, p. 269.

⁹⁴ Մ. Տեր-Մովսէսեան, Սոկրատ, էջ 704-705:

⁹⁵ Մ. Տեր-Մովսէսեան, Սոկրատ, էջ 704-705, հմմտ. նաեւ «այսու յաղթնայ» հայտնի արտահայտությունը, որ առկա է այստեղ (Շահնազարեանց, 1862, էջ 22, ՄՄ, թիվ 2272, 210բ) եւ «Սեղբեստրոսի վարքի» հայերեն քարգմանության մեջ (Մ. Տեր-Մովսէսեան, Սոկրատ, էջ 715): Հունարենում այս հատվածը բացակայում է (տե՛ս Սարգիսեան, 1893, էջ 19): Խաչաձե սյունի կամ խաչի նշանի երկնում հայտնվելու առասպելի մասին եւ դրա արտացոլումը հայկական աղբյուրներում տե՛ս van Esbroeck, 1982, էջ 79-101:

⁹⁶ Խոսքը Կապիտոլիում տանաթի մասին է:

«Սեղբեստրոսի վարք»-ի հունարեն բնագրից, այնպես էլ «Կոստանդնի նվիրատվություն» երկից: Այլապես ինչ կերպ բացատրել «Դաշանց թղթում» հիշատակված հատվածների համընկնումը «Վարք»-ի հունարեն բնագրին և ոչ թե թարգմանությանը, և կամ ինչպե՞ս մեկնաբանել «Թղթի» և «Կոստանդնի նվիրատվության» (*Donatio Constantini*) միջև առկա նմանությունները:

Մյուս կողմից, «Թղթում» առկա են «Սեղբեստրոսի վարք»-ում բացակայող կամ չպահպանված տեղեկություններ⁹⁷: Օրինակ, «Թղթում» Կոստանդին կայսրը, ի թիվս այլ թանկարժեք ընծաների, Տրդատին է նվիրում իր հոր գոտին:

«Եւ եւ զանգին զօտի՝ հօրն իմ հօրի՝ ածի ընդ մեջ Տրդատայ քաշի:»⁹⁸

Հայերեն «Վարք»-ում այդ «անգին» գոտու փոխարեն առկա է «պարեգաւտ»-ը, որ Կոստանդը նվիրել էր Հեղինեին, և որի շնորհիվ նրա հավատարիմ ծառաները գտնում են Կոստանդին մանկանը:⁹⁹ Հունարենում այս տողերը չկան: Բացի այդ, խնդրո առարկա նախադասությունն առկա է հենց այն հատվածում,¹⁰⁰ որը Բ. Սարգիսյանը վերցրած է համարում «Վկայաբանութիւն Եւսիգնիոսի» երկից ու իր հրատարակության մեջ գետեղում է այդ «Վկայաբանության» համապատասխան հունարեն տեքստը¹⁰¹: Այսինքն՝ այս պատումը կարող էր վերցված լինել նաև հունական աղբյուրից:

Համենայն դեպս, պարզ է դառնում, որ «Դաշանց թղթի» քննությունը պետք է կատարվի ոչ միայն հայկական աղբյուրների, այլև ավելի լայն համատեքստում, ներգրավելով վավերական ու նշված նպատակների համար ստեղծված այլ կեղծ գրվածքներ: «Թղթի» սակավաթիվ ուսումնասիրողներն ուշադրություն չեն դարձրել այս հանգամանքներին և երկի հետ կապ ունեցող որոշ աղբյուրներին ու հետազոտություններին: Որոշակի աղբյուրներ նշվել են Շահնազարեանցի գրքում¹⁰² և Մատթեոս կաթողիկոսի հոդվածներում¹⁰³: Հարցին անդրադարձել ու այն լրջորեն քննարկել են Ա. Հովհաննիսյանն¹⁰⁴ ու

97 Սարգիսեան, 1893, էջ 19, տե՛ս նաև էջ 15-27:

98 ՄՄ, քիվ 3078, 207ա:

99 «Եւ առաւատուն յարուցեալ ետ նմա զանկողնոյն պարեգաւտ մի ծիրանի», Մ. Տեր-Մովսէսեան, Սոկրատ, էջ 709: «Ցուցեալ և զանկողնոյ նորա զվարձ, զոր ի գիշերին առ ի Կոստայ զպարեգաւտն ծիրանիս», Մ. Տեր-Մովսէսեան, Սոկրատ, էջ 711:

100 Սարգիսեան, 1893, էջ 16:

101 Սարգիսեան, 1893, էջ 15-27:

102 Շահնազարեանց, 1862, էջ 64-111:

103 Դաշանց թուղթ, 1860(1), էջ 240-244:

104 Հովհաննիսյան, 1957, էջ 58-80:

Ռ. Թոմսոնը¹⁰⁵: Այստեղ, ի հավելումն վերջին ուսումնասիրողի տեսակետի, նշենք անուշադրության մատնված մի քանի լրացուցիչ աղբյուրներ:

1) Ա. Հովհաննիսյանի ուշագրավ միտքն առ այն, որ մեզանում առկա է նույն վերնագիրը կրող մեկ այլ հին աղբյուր՝ ««Դաշինք Տրդատայ եւ Կոստանդինոսի եւ թեմ Առաքելոց վանաց Տարոնի», իբրեւ թե թարգմանված է 1080 թ. Չորտուանել Թոռնիկյանի հրամանով հունարեն բնագրից»¹⁰⁶ անտեսվել է: Հռոմ ուղեւորության մասին այդ երկում պատմվում է Գրիգոր Լուսավորչի անունից, եւ պատմության հենքը, հիմնականում, նույնն է: Նշված է նաեւ, որ դաշինքը կնքվել է «Քրիստոսի արեամբն, զի անգրելի լիցի ուխտ եւ միաբանութիւն հայոց եւ Ֆրանկաց, մինչեւ ի կատարած աշխարհի»: Ա. Հովհաննիսյանն արդարացիորեն նկատում է, որ «Ֆրանկ» անվան հիշատակումը կասկածելի է դարձնում թարգմանության հարազատությունը»¹⁰⁷:

2) Ստեփանոս ու Ներսես Մեծոփեցիները «Լանկ Թամուրի արշավանքը Հայաստան» երկում հիշատակել են Կոստանդնի ու Սեղբեստրոսի կողմից Տրդատին եւ Գրիգոր Լուսավորչին շնորհված արտոնությունները¹⁰⁸:

3) Նրրորդ աղբյուրը, որը հիշատակված չէ եւ ոչ մի տեղ, Ուրբանոս VIII պապին (*sedit 1590*) հղված Մովսես կաթողիկոսի նամակն է: Այդտեղ, ընդունելով պապի առաջնությունը, հայոց կաթողիկոսը ցանկություն է հայտնում վերանորոգելու Գրիգոր Լուսավորչի ու Սեղբեստրոս պապի միջեւ կնքված հին «սիրո եւ միաբանության դաշինքը»¹⁰⁹:

4) Առկա է նախնական վերագրվող, բացառապես հայերենով պահպանված մի կեղծ գրվածք, որում ընդարձակորեն քննված են Հռոմի ու Հայաստանի միջեւ կնքված դաշինքը եւ Տրդատի ու Գրիգոր Լուսավորչի ուղեւորությունը Հռոմ եւ Նրուսաղեմ:¹¹⁰

Ի դեպ, Նրուսաղեմ կատարած այցի մասին Կիրակոս Գանձակեցու «Պատմության» մեջ կա ծավալուն մի պարբերություն, որի տվյալները բացա-

105 Thomson, 1997, pp. 277-289, Thomson, 2001, pp. 77-82.

106 Հովհաննիսյան, 1957, էջ 76:

107 Հովհաննիսյան, 1957, էջ 77:

108 Խաչիկյան 1995, էջ 283, 285:

109 Armeno-Turcica, Selected Studies. Ed. Schutz, Indiana University 1998, p. 288.

110 Երկի «դիվանագիտական» (diplomatic) հրատարակությունը առաջաբանով եւ լատիներեն քարգմանությամբ լույս է ածել Գ. Ֆրասսոնը (G. Frasson, Pseudo Epiphaniï Sermo de Antichristo, Bibliotheca Armeniaca, 2, Venezia - S. Lazzaro 1976, pp. 20, 22, 24-26, 38-42, 54 etc.) Վենետիկի Մատենադարանի երկու ձեռագրերի հիման վրա: Առաջաբանում աշխատասիրողը գալիս է այն եզրակացության, որ այս կեղծ գրվածքը ստեղծվել է 1113/14-1149/50 թթ. (տե՛ս էջ LIV): Այս հրատարակության գրախոսությունը տե՛ս՝ Հ. Բարթիկյան, գրախոսություն՝ «G. Frasson, Pseudo Epiphaniï Sermo de Antichristo, Bibliotheca Armeniaca, 2, Venezia - S. Lazzaro 1976», Լրաբեր, N 5, 1978 էջ 105-109:

կայում են «Դաշանց թղթում» և Գանձակեցու երկից ավելի վաղ աղբյուրներում:¹¹¹ Այդտեղ թվարկված են Երուսաղեմի¹¹² այն կալվածքները, որոնք Կոստանդինը և Սեղբեստրոսը շնորհել են հայերին¹¹³: Նույն ավանդությանն է պատկանում Գրիգոր Լուսավորչի և Սեղբեստրոսի ուղեւորությունը Երուսաղեմ, որտեղ նրանք բաժանել են սրբավայրերը լատինների, հայերի և հույների միջև: Այդ սրբավայրերից շատերը ցայսօր հայերինն են:

5) Հնուց ի վեր գոյություն ունի նաև բանավոր ավանդապատում այդ տեղերը հայերի սեփականություն լինելու մասին: Ավանդության հետքերն առկա են և ոչ-հայերեն երկերում, որոնց հնարավոր աղբյուրը կարող են լինել կամ «Դաշանց թուղթ»-ը, կամ բանավոր ավանդազրույցները: 15-րդ դարի գերմանացի ճանապարհորդ Հանս Շիլդբերգերը, Հայաստան կատարած իր այցից հետո, հայտնել է մանրամասնություններ, որոնք բացակայում են «Դաշանց թղթում»: Նա օգտագործել է իր ճամփորդության ընթացքում լսած պատմվածքները և պատմազրույցները: 18-րդ դարի հայտնի գիտնական Շառլ Կոկելենը նույնպես հիշատակում է այդ ավանդությունը.

*"Sane Armeniorum gens numero amplissima, ac prope infinita; antiquitate et nomine celeberrima, Christianae Religionis studio et constantia supra universos Orientis Populos laudatissima, cum initio nascentis Ecclesiae gloriosis Apostolis Bartholomaeo et Thaddaeo docentibus, evangelicam degustasset Fidem, ac deinde Beati Silvestri Pontificis et Constantini Magni Imperatoris tempore, publico omnium consensu una cum Rege suo Tiridate (ita videtur dicendum) ut apud eos traditum est, recepisset, ac tanta praeterea veneratione, Pontificem Romanum omni tempore est prosecuta."*¹¹⁴

111 Կիրակոս Գանձակեցի, 1961, էջ 5, 11:

112 Տրդատի և Կոստանդինի Երուսաղեմ ուղեւորության մասին տե՛ս նաև Վարդան Վարդապետ Բարձրբերդցի, Սոփերֆ, V, 1853-1861, Գրիգոր Լուսավորիչ, էջ 78-79.

113 Thomson, 1997, pp. 285-286.

114 Carolus Cocquelines, Bullarium, Romae 1747, IV, 78-80. «Իհարկե հայերի ազգը, թվով այնքան բազմամասնակ [բառացիորեն՝ ամենաշատ] է, որ համարյա անսահման է: Այդ հնագույն և ամենահամբավվոր անուն ունեցող, քրիստոնեական կրոնի վարդապետությունը և հաստատությունը [անասանությունը] բոլոր առեւելյան ժողովուրդներից ամենաշատ փառաբանող (ազգին), եկեղեցու ծննդյան սկզբից ուսուցանեցին փառավոր Բարթողոմեոսը և Քաղեոսը ու նրանց ավետարանչական հավատը հայտնի դարձավ, իսկ հետո երանելի Սեղբեստրոս Պապի և Կոստանդին Մեծ կայսրի ժամանակներին, պետական դաշինք կնքվեց [ընդունվեց] նրանց բազմավոր Տիրիդատի (կարծես թե այսպես պետք է ասել) հետ, ինչպես որ հենց իրենց միջավայրում է ավանդված, որին մշտապես (բառացի՝ բոլոր ժամանակներում) այնքան հարգանքով հետևել է Հռոմի Պապը»: Այս հատվածին հետևում են է՛լ ավելի զովասանական բառեր հայերի հասցեին. "... nulla Natio, nullus Populus promptius, alacriusve eis (sc. Cruciatibus) suppetias tulit, quam Armenii, qui viris, equis, armis, commeatu, consilio, ac denique omni ope Christianos sacro

Խնդրո առարկա հարցով զբաղվող հետազոտողները, համակարծիք լինելով «Դաշանց թղթի» կեղծ բնույթի վերաբերյալ, միաբան շեն ավանդության վավերական լինելու հարցի շուրջ: Վաղ պատմագրությունը բնորոշ ավանդագրույցներով պաճուճված այդ պատումը, հետագայում ավելացրած ընդմիջարկությունները եւ, ընդհանրապես, խնդրի քաղաքական բնույթը շեն խոսում հօգուտ ավանդության վավերականությանը: Հարցը սակայն չի սահմանափակվում միայն դաշինք կնքելու կամ չկնքելու խնդրով:

Այդքան էլ պարզ չէ, 3-րդ դարի վերջում եւ 4-րդ դարի սկզբում ի՞նչ հարաբերություններ կամ կապեր են եղել Հայաստանի եւ Հռոմի միջեւ: Թերեւս արդարացի է կարծել, որ այդ ժամանակաշրջանում Հայաստանի եւ Հռոմի միջեւ որոշ հարաբերություններ եղել են, որոնց հետքերը պատմականորեն փաստված են: Որպես 297 թվի հաջող ճակատամարտի արդյունք, հայկական եւ հռոմեական բանակները միասին ջախջախել են պարսիկներին եւ 298 թ. Մծրինում ստորագրել 40 տարվա խաղաղության պայմանագիրը:¹¹⁵ Հռոմը նկատելիորեն թուլացած էր, իսկ Պարսկաստանը գնալով հզորանում էր, ուստի, Հայաստանի հետ դաշնակցությունը խիստ անհրաժեշտ էր Հռոմին: Հայաստանը՝ պաշտոնապես առաջին քրիստոնյա պետությունը, 4-րդ դարի սկզբում պետք է ունենար բավականին սերտ կապեր Հռոմի հետ՝ մինչեւ դավանաբանական (իմա՝ քաղաքական) հարցեր ծագելը: Եվ իրոք, հռոմայեցիներն էին, որ սատարեցին Գրիգոր Լուսավորչին ու Տրդատ արքային:¹¹⁶ Հաշտության այդ տարիներին Հայաստանը խաղաղ եւ ծաղկուն շրջան է ապրել, ինչը նշել են անգամ ոչ-հայագետները. Կոլեմանը, օրինակ, գրում է.

«Հայաստանում, Կոստանդնի օրոք Տրդատի իշխանությունը ազգային փառավոր վերածննդի շրջան էր: Այդ ժամանակ, ինչպես եւ ապագայի որոշ հատվածում Հռոմեական կառավարությունն աջակցում էր հայկական թագավորությանը՝ դիմադրելու պարսիկներին, եւ երկիրը, իր վերջնական քաղաքական բաժանումից առաջ, շունչ քաշելու ժամանակաշրջան ունեցավ:»¹¹⁷

Հարկ է ընդգծել նաեւ, որ Հայաստանում եւ Հռոմում քրիստոնեությունը

illo in bello fortissime ac fidelissime iuverant.՝ «...եւ՝ ոչ մի ազգ, եւ՝ ոչ մի ժողովուրդ ավելի անխոնջ, ավելի պատրաստակամ չէ սատարելու տանջանքներին ինչպես հայերը, որոնք առամբ, այրուծիով, զենքով, հանդերձանքով եւ պարենով, խորհրդով, եւ ընդհանրապես ամեն ինչով խիզախ եւ հավատարիմ կերպով օգնեցին բրիտոնյաներին այս սրբազան պատերազմում»:

115 Ադոնց, 1970, էջ 349:

116 Ինչպես հայտնի է, կաթողիկոսի արքոպի համար եղել է եւս մեկ թեկնածու՝ Աղրիանոսը:

¹¹⁷ Ch. B. Coleman, *Constantine the Great and Christianity*, Studies in History, Economics and Public Law, NY 1914, p. 157.

զարգացել է նույն համատեքստում: Սեղբեստրոս պապի¹¹⁸ օրոք ստեղծված առաջին վկայարանությունները եւ նահատակների նշխարների վրա կառուցված վկայատներն ու եկեղեցիները պատմական, վավերական փաստեր են համարվում: Այս տեղեկություններն առաջին անգամ վկայակոչված են «Սեղբեստրոսի վարք»-ի հունարեն տարբերակում¹¹⁹: Համանման, բայց ավելի մանրաքնին տեղեկություններ է պարունակում Ագաթանգեղոսի երկը՝ սուրբ Հռիփսիմյանց կույսերի վկայատների վերաբերյալ:¹²⁰ Ավելին. 4-րդ դարի սկզբին Հայաստանում ու մերձակա շրջաններում նահատակների մասին տվյալներն ավելի հարուստ են: Հիշենք նաեւ «Վարք Սեղբեստրոսի» լատիներեն բնագրի հիշատակումը Հայաստանի մասին (*per Aegyptum, sub civitatem Armenia*), քառասուն կույսերի Հռոմից Հայաստան ժամանելը (Ագաթանգեղոսն ինքն էլ Հայաստան է եկել Հռոմից): Արդյոք դրանք փաստեր չե՞ն, որ վկայում են Հայաստանի եւ Հռոմի միջեւ հնարավոր հարաբերությունների մասին:

Արդ, Հռոմի հետ «սիրո եւ միաբանության» դաշինք կնքած եւ պաշտոնապես քրիստոնեության հռչակման առաջնությունը ձեռք բերած (ինչն աներկբայորեն վկայակոչված է Սոզոմենոսի կողմից¹²¹) Հայաստանն այդ ժամանակ դեռեւս բավականին հզոր պետություն էր: Սա է պատճառը, որ հետագայում այդ փառահեղ ժամանակների մասին հիշողությունը պարբերաբար «վերակենդանացվել» է, եւ, գրանցված ստույգ փաստեր շունենալու հետեւանքով, ստեղծվել են այդ իրադարձությունները հաստատող կեղծ երկեր:

¹¹⁸ Ի դեպ, նշված պապերի անունների ընդգրկումը «Մինք հաւատոյ»-ի ցանկում եւս յուրովի ապացույց կարող է ծառայել հօգուտ Հռոմի ու Հայաստանի միջեւ եղած հարաբերությունների:

¹¹⁹ Combefis, p. 261, 287, Մ. Տեր-Մովսէսեան, Սոկրատ, էջ 695-696, 747:

¹²⁰ Ագաթանգեղոս, 1983, էջ 426-428:

¹²¹ Sozomenus. Kirchengeschichte. J. Bidez, G. Ch. Hansen, Berlin 1960, S. 149.

ՊՈՂՈՍ ԼԵՎՈՆ ԶԵՔԻՅԱՆ

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՂԻՇԵԻ ԸՆԾԱՅՎԱԾ ԳՐԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

Այն պահից ի վեր, երբ հայ բանասիրության ուսումնասիրության ասպարեզում գերակշիռ դեր է ստանձնել քննական եւ, հատկապես, բանասպաշտական քննական մեթոդը, Եղիշեն դասվել է այն հեղինակների շարքը, որոնց խուսիթյունը եւ ավանդական թվագրումը լրջագույն կերպով կասկածի տակ են առնվել:

Խնդրի հիմքում են ընկած այն անհամապատասխանությունները, որոնք առկա են Եղիշեի Վարդանանց պատերազմի շարագրանքի եւ 5-րդ դարի վերջում կամ էլ 6-րդ դարի հենց սկզբում Ղազար Փարպեցու շարագրած Պատմության միջեւ: Ղազարի ակնհայտորեն ավելի զուսպ, նվազ զգայնոտ եւ հռետորականությանը պակաս հակված ոճը հաղթանակ է տարել Եղիշեի գունեղ, հազվադեպ գրական որակ ներկայացնող, պատումի ընթացքին նրբորեն հարմարող երանգներով օժտված, հորդորականից վարքագրականին, էպիկականից դրամատիկին անցնող ոճի վրա:

Որպես արդյունք հետեւություններ են արվել, որոնց համաձայն Եղիշեի Պատմության թվականը տատանվել է 7-րդ դարից (այս տեսակետը կիսում է նորարար քննադատների մեծամասնությունը) մինչեւ Ակինյանի առաջադրած 8-9-րդ դարերը՝ վերջին խմբագրության համար:

Եղիշեի ստեղծագործության ամբողջության հիմնական բաղկացուցիչ մասերի միասնության հարցը չի գրավել բանասերների այդպիսի սեւեռուն ուշադրությունը եւ նման համառությամբ կասկածի տակ չի առնվել: Դա հետեւանքն է նաեւ այն բանի, որ Եղիշեի մեկնողական եւ, հատկապես, ճառական ժառանգությունը ցայսօր չի գնահատվել իր իրական շափով, բացառությամբ Պայծառակերպության ճառի¹, որը վերջերս դասվել է այդ թեմային վերաբերող լավագույն հայրախոսական ճառերի շարքը²:

Այս ուսումնասիրությանը մենք ձեռնամուխ կլինենք երեք հիմնական փուլերով: Առաջին մասում կուսումնասիրենք Եղիշեի Պատմությունը՝ հաշվի

առնելով դասական հիմնարար դիտողությունները, այն դիտողությունները, որոնք հիմնվում են հատկապես պատմական տվյալների վրա: Հայր ներսես Ակինյանի կողմից արմատական կերպով մշակված այս դիտողությունները, որոնք ներշնչված են Եղիշեի եւ Ղազարի շարադրանքների միջեւ եղած անհամապատասխանություններով, տատանել են ավանդական թվագրումը: Դրանք մինչ օրս էլ հանդիսանում են Եղիշեի վաղ թվագրման դեմ առաջ քաշվող փաստարկների կորիզը, չնայած այն բանին, որ արդի բանասիրությունը, ընդհանուր առմամբ, այդքան արմատական չէ, որքան Ակինյանի բանասիրությունն էր, եւ հրաժարվել է, հիմնականում, այն տարօրինակություններից, որոնք հաճելի մտամարզանքներ էին Վիեննայի վաստակաշատ բանասերի համար³:

Երկրորդ մասում մենք կշանանք պատասխանել դիտողությունների հաջորդ շարքին, որոնք մշակվել են լեզվաբանական եւ բանասիրական տվյալների հիման վրա: Մեր ուշադրությունը հատկապես կկենտրոնանա այն դիտողությունների վրա, որոնք առաջ են քաշվել հունարան դպրոցի սկզբնավորման եւ գործունեության կապակցությամբ: Մենք դրանց կավելացնենք որոշ լրացուցիչ նկատառումներ⁴:

Երրորդ մասը նվիրված կլինի Եղիշեի ստեղծագործության ամբողջության միասնության հարցին: Մեր ուսումնասիրությունը մեզ հնարավորություն է տալիս հաստատելու այդ փաստը համոզվածության այն սահմաններում, որոնք կարող են ընձեռել բանասիրական տվյալները:

Մեր որդեգրած մեթոդաբանական սկզբունքը հետեւյալն է. շարժվել ավելի լավ ծանոթ փաստերից դեպի անծանոթները եւ լուսաբանել նվազ պարզ հարցերը առավել պարզ եւ հաստատ ձեռքբերումների լույսի ներքո: Չնայած այն բանին, որ խոսքը վերաբերում է իր ակնհայտությամբ եւ պարզությամբ գրեթե շփոթեցնող սկզբունքի մասին, այնուամենայնիվ պետք է արձանագրել, որ միշտ չէ, որ այն հաշվի է առնվել եւ երբեմն նույնիսկ անտեսվել է:

I. ԵՂԻՇԵԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՂԱԶԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՀԱՆԴԻՄԱՆ

Այս բաժնում մեր առաջ դրված խնդրի ուսումնասիրությանը ձեռնամուխ լինելուց առաջ պետք է, նախ նշենք, որ 1951 թ. Հայր Պողոս Անանյանի Բազմավեպում լույս տեսած հոդվածը⁵ մեր կարծիքով հիմնարար նպաստ է բերել այս հարցի լուծմանը: Արեւմուտքի գիտական շրջանակները ծանոթ չեն եղել այս հոդվածին⁶, երբեք այն չեն քննարկել եւ գրեթե երբեք չեն մեջբերել: Ի դեպ, սա բավականաչափ հաճախ հանդիպող երեւույթ է հայագիտության

ասպարեզում (չնայած այն բանին, որ դա, անկասկած, նորմալ երեւոյթ չէ) հայերենով հրատարակված ուսումնասիրությունների համար, բացառությամբ, ինչ-որ շափով, Հայաստանում հրատարակված ուսումնասիրությունների:

Հայր Անանյանի վերոհիշյալ հոդվածը, որը վերջերս վերատպվել է նրա «Հոդվածների ժողովածու»-ում⁷, վերաբերում է 450 թ. Արտաշատի ժողովին եւ Հովսեփի հայրապետության հարցին:

Այս ժողովի վերաբերյալ Եղիշեի եւ Ղազարի հաղորդած տեղեկությունների անհամապատասխանությունները ստիպել են Անանյանին դրանք մանրակրկիտ ուսումնասիրության նյութ դարձնել: Արդյունքում պարզվել է, որ առաջին հեղինակի անհամապատասխան շարադրանքը ամեն անգամ ավելի լավ է համապատասխանում իրադրությանը եւ ավելի լավ է տեղադրվում քննարկվող ժամանակաշրջանի պատմական համատեքստում, որոնց մենք ծանոթ ենք այլ աղբյուրներից: Հաշվի առնելով այն փաստը, որ Եղիշեի դեմ առաջ քաշվող հիմնարար գիտողությունը գալիս է Ղազարի հետ անհամապատասխանությունից, ապա Պատմության թվագրման խնդիրը այդ տեսակետից, հիմնականում, լուծված էր:

Ուստի մենք կհետեւենք Հայր Անանյանի շարադրանքի հիմնական ուղղությանը: Նրա ելակետն են հանդիսանում Ակինյանի ձեւակերպած գիտողությունները, որոնց կարեւորությունը, նույնիսկ արդիականությունը մենք արդեն ընդգծել ենք, չնայած այն բանին, որ նորագույն բանասիրությունը ինչ-որ շափով վերանայել է իր դիրքորոշումը եւ այն ավելի ճկուն է դարձրել⁸: Մինչդեռ Անանյանի փաստարկման հիմնական ընթացակարգին հետեւելու համար գոյություն ունի մեթոդաբանական տեսակետից ոչ պակաս էական մի նկատառում. փաստորեն Ակինյանի առաջ քաշած գիտողություններին տրված նրա պատասխանները վերածվում են դրական փաստարկների, որոնք հենց հուշում են Եղիշեի ստեղծագործության ամբողջության վաղ թվագրումը եւ իրենց ամբողջության մեջ այդ վարկածին հաղորդում բանասիրական համոզվածության բարձր աստիճան: Մենք կջանանք այդ փաստարկները լրացնել նորերով, որոնք առաջ են քաշվել կամ այլ հեղինակների, կամ էլ մեր կողմից:

Ա. Արտաշատի ժողովի պատմական համատեքստը

Եղիշեի եւ Ղազարի շարադրանքներում տեղ գտած տվյալների բոլոր տարբերությունները, որոնք քննարկել է Հայր Անանյանը, վերաբերում են Արտաշատի ժողովի պատմական համատեքստին: Այստեղ մենք ներկայացնում ենք այդ քննական շրջահայման հիմնական ամփոփումը, այնտեղ քննարկված խնդիրները եւ առաջարկված եզրակացությունները:

ա) Առաջին խնդիրը վերաբերում է Վարդանանց պատերազմից քիչ առաջ տեղի ունեցած Արտաշատի ժողովի գումարման վայրին: Ղազարը չի նշում գումարման վայրը, մինչդեռ Եղիշեի համար ժողովը տեղի է ունեցել ի թագավորանիստ տեղին յԱրտաշատ: Ակինյանի համար, որը թագավորանիստ տեղին մեկնաբանում է որպես «մայրաքաղաք» կամ «մետրոպոլիս», դա հանդիսանում է ուշ շրջանի բանաբաղի կողմից կատարված կեղծիքի եւ նրա տգիտության վառ ապացույց, քանի որ նա չէր էլ հիշում, որ 428 թ. սկսած Հայաստանը արքա չուներ: Իսկ Անանյանը ցույց է տալիս, որ այդ բնորոշումը, որը Եղիշեն օգտագործում է երկու այլ հատվածներում եւս, բոլորովին էլ «մայրաքաղաք» չի նշանակում, այլ պարզապես թագավորական սեփականություն, ավատ կամ նստավայր է նշանակում: Բացի դրանից, գրեթե նույնատիպ համատեքստում արքունի մակդիրը փոխարինում է թագավորանիստ բառին: Դրանից հետեւում է, որ ժողովին վերաբերող մի մանրամասնի վերաբերյալ Եղիշեն ավելի քաջատեղյակ էր, քան Ղազարը եւ, միեւնույն ժամանակ, նա ավելի լավ էր կողմնորոշվում քիչ առաջ մարած թագավորական տանը վերաբերող «տեխնիկական» տերմինների կիրառման հարցում⁹:

բ) Երկրորդ խնդիրը վերաբերում է ժողովին մասնակցած եպիսկոպոսների թեմերի հարցում Եղիշեի եւ Ղազարի հաղորդած տեղեկությունների տարբերություններին: Փաստորեն Ղազարի Զավեն Մանանաղեացը ծանոթ չէ Եղիշեին, իսկ Ղազարը չի հիշատակում Եվզաղ Մարդաղեցուն: Քանի որ Մանանաղը գտնվում էր բյուզանդական Հայաստանում, ապա այդ շրջանի եպիսկոպոսի մասնակցությունը ժողովին պետք է, որ առաջին հայացքից անհավանական թվար: Սակայն տարբերությունը Ղազարի օգտին բացատրելու համար Ակինյանը առաջ է քաշում Եղիշեի ավելի ուշ շրջանի բանաբաղի հնարագիտության վարկածը, ըստ որի նա Մանանաղը փոխարինել է Մարդաղով Պարսկահայքի մի թեմով, նպատակ ունենալով տպավորություն ստեղծել, որ ինքը տեղյակ է ստեղծված իրավիճակին, հատկապես Հուստինիանոսի ձեռնարկած միջոցառումներից հետո, որոնք էլ՝ ավելի էին դժվարեցրել պաշտոնական հաղորդակցությունը երկու Հայաստանների միջեւ: Մինչդեռ այդ բանաբաղին հենց ինքը՝ Ակինյանը, անշնորհ եւ անտաղանդ էր անվանել: Հետո Անանյանն անցնում է մի շարք տեքստային դիտարկումների եւ Շահապիվանի ժողովի (444/445) եպիսկոպոսների ցուցակի մնացորդների համեմատությունը, հիմնավորելու համար իր վարկածը այն մասին, որ Եղիշեի հաղորդած տեղեկությունները ավելի լավ են դասակարգվում պատմական համատեքստում:

գ) Անանյանի կողմից ուսումնասիրված երրորդ տարբերությունը վերաբերում է երկու պատմիչների հիշատակած եպիսկոպոսների տիտղոսներին եւ տարակարգի հերթականությանը: Նախ, Սուրբ եւ Տեր տիտղոսների բացա-

կայությունը Եղիշեի մոտ, որոնք Ղազարը կիրառում է եպիսկոպոսներին ներկայացնելու համար, կարծես թե ինքնին վկայում է ավելի հնարույր համատեքստի մասին (հմմտ. վարը Բ. 2): Դրան է ավելանում մի որոշակի տարբերություն երկու հեղինակների կողմից եպիսկոպոսներին ներկայացնելու հերթականության հարցում: Եվ իսկապես, Ղազարի մոտ Կաթողիկոսից անմիջապես հետո ներկայացվում է Սյունիքի եպիսկոպոս Անանիան: Դա բացատրվում է նրանով (եւ դրա հետ լիովին համաձայն է Ակինյանը), որ այդ ժամանակաշրջանում Սյունիքի նախարարը զբաղեցնում էր Հայաստանի մարզպանի պաշտոնը: Դրանից կարելի է եզրակացնել, որ Ղազարը եպիսկոպոսների հարցում եւս հետեւում է նախարարական տների տարակարգի հերթականությանը: Սակայն ոչ մի երաշխիք չկա, որ եկեղեցական տարակարգի հերթականությունը համապատասխանում էր այդ պահի աշխարհական մեծատոհմիկ անձանց տարակարգին: Հակառակը, եպիսկոպոսների տարակարգի հերթականությունը, ըստ Եղիշեի, համապատասխանում էր, ամենայն հավանականությամբ, Հայաստանի ամենահին եկեղեցական թեմերի համարման հերթականությանը: Եղիշեն Տարոնի եպիսկոպոս Սահակին թվում է կաթողիկոսական, այսինքն՝ գահերեց թեմ Այրարատի եպիսկոպոս Հովսեփից հետո: Սյունիքի թեմը ոչ այնքան վաղուց կազմավորված մի թեմ էր, որն ըստ Կորյունի¹⁰ ընդամենը տասը տարվա պատմություն ուներ, եւ Անանիան նրա առաջին տիտղոսավորն էր: Մինչդեռ Տարոնի թեմը Հայաստանի առաջին թեմերից մեկն էր եւ, ինչպես վկայում է Փավստոսը¹¹, դրա առաջնորդը ամբողջ 4-րդ դարի ընթացքում առանձնահատուկ վերաբերմունքի էր արժանանում: Նույնը կարելի է ասել, պահպանելով բոլոր համամասնությունները, մյուս թեմերի մասին, որոնք Եղիշեի ներկայացմամբ առաջնություն ունեն՝ Մանազկերտ, Բագրեւանդ, Բզնունիք, Տայք, Բասեն: Այս թեմերը հայտնի էին արդեն 4-րդ դարում, մինչդեռ Արծրունիքը եւ Ռշտունիքը, որոնք Ղազարը թվարկում է մյուսներից առաջ, չեն հիշատակվում այդ ժամանակաշրջանի թեմերի շարքում:

դ) Չորրորդ կետը հանդիսանում է, միգուցե, Եղիշեի եւ Ղազարի միջեւ գոյություն ունեցող ամենապարզորոշ սահմանաբաժան գիծը: Վերջինիս համար Հովսեփը հասարակ մի քահանա է, որը կաթողիկոս է ընտրվել եւ կաթողիկոսական գահն է բարձրացել առանց եպիսկոպոս ձեռնադրվելու: Այս միտքը Ղազարը կրկնում է բազմիցս, միգուցե այն պատճառով, որ այդ փաստը հենց իրեն՝ Ղազարին, տարօրինակ է թվում: Նա նույնիսկ ավելորդաբանության է դիմում, ասելով՝ զարդարել Կաթողիկոսն Հայոց (Բ, խէ), կարծես թե իրագրությունը կարող էր այդ առիթով կասկածների տեղիք տալ: Ավելին, խոսելով Հովսեփի մասին, նա գրեթե միշտ ավելացնում է որոշ պնդումով. չնայած

այն բանին, որ նա հասարակ քահանա էր, այնուամենայնիվ, նա արժանի էր Կաթողիկոսի գահին: Եղիշեն, ընդհակառակը, մեզ ներկայացնում է միանգամայն այլ պատկեր: Հովսեփը եպիսկոպոս է, նա Այրարատի թեմի առաջնորդն է, ինչպես արդեն ասացինք՝ կաթողիկոսի նստավայրի թեմի, նրա գահերիցական իրավասության թեմի առաջնորդն է: Այսինքն՝ սա նշանակում է, որ Հովսեփը կաթողիկոսն էր, չնայած այն բանին, որ դա ասված է քողարկված ձևով: Սակայն ինչու՞ է Եղիշեն կանոնավոր կերպով խուսափում Հովսեփին կոչել նրա կարգին համապատասխանող կաթողիկոս կամ բացահայտորեն եւ ոչ քողարկված կերպով, համազոր հայրապետ, քահանայապետ, եպիսկոպոսապետ տիտղոսներով, որոնք ավելի հաճախ էին կիրառվում մինչեւ 5-րդ դարի կեսերը:

Այս հարցը վերաբերում է Հայոց հին եկեղեցու պատմության ինչ-որ տեսակետից ամենամութ պահերից մեկին¹²: Այնուամենայնիվ, մենք ունենք մի քանի բավականաչափ պարզորոշ տվյալներ, որպեսզի կարողանանք դրանց հիման վրա բացատրական վարկածներ առաջ քաշել եւ դրանք համեմատության մեջ դնել մեր հեղինակների հաղորդած տեղեկությունների հետ:

Այս խնդրում կա մի պահ, որը հաստատ կերպով մենք գիտենք. դա Սասանյան արքունիքի բարեհաճ հավանությունն ստանալու հարցն էր, որը ակնհայտորեն ծառայած էր կաթողիկոսի առջեւ: Բացի դրանից մենք գիտենք, որ իր կյանքի վերջին տարիներին Սբ. Սահակը հեռացվել էր իր պաշտոնից այդ նույն արքունիքի կողմից, որպես անցանկալի անձնավորություն, եւ նրան փոխարինել էին այդ արքունիքի կողմից հովանավորվող կաթողիկոսներ: Ի հառաջագունե չափազանց անհավանական, եթե ոչ անհնարին է թվում, որ Սահակի մահվանը հաջորդած եւ Վարդանանց պատերազմի ցնցումներին նախորդած տարիների ընթացքում Սասանյան արքունիքը համաձայներ իր թեկնածուն շհանդիսացող, սակայն ընտրված կաթողիկոսին պաշտոնապես ճանաչել: Այդ հիմնարար դժվարությունը չի բացառում նաեւ այն դժվարությունները, որոնք կարող էին հարուցվել հայկական կողմից, որպեսզի նորընծան կարողանար պաշտոնապես ստանալ կաթողիկոսի տիտղոսը: Օրինակ, Ե. Տեր-Մինասյանցը առաջ է քաշել մի վարկած, ըստ որի Լուսավորչի տոհմին պատկանող ավատների ժառանգման հարցը (չմոռանանք, որ Սահակը այդ տոհմի արական վերջին շառավիղն էր) պետք է, որ խոչընդոտեր նորընծային՝ կրելու Կաթողիկոսի տիտղոսը, մինչ այդ հարցի վերջնական կարգավորումը¹³: Ամեն դեպքում Սասանյան արքունիքի հետ կապված դժվարությունը մնում էր հիմնական խոչընդոտը:

Մյուս կողմից էլ մի նշանակալից դժվարություն էր ծագում, ամենայն հավանականությամբ, եկեղեցական կարգապահության տեսակետից: Մենք

գիտենք, որ Սահակն ու Մեսրոպը, որոնք վախճանվել էին վեց ամսվա տարբերությամբ, վճռել էին, որ իրենց աշակերտներից երկուսը՝ Հովսեփը եւ Հովնանը, պետք է իրենց հաջորդելին որպես տեղապահ, որոնցից առաջինը կամ գլխավորը պետք է լիներ Հովսեփը, եւ որին Կորյունը անվանում է գլխավոր ժողովոյն: Ճիշտ այնպես, ինչպես եղել է Սահակի մահից հետո, երբ Մեսրոպը մնալով վարդապետ եւ եպիսկոպոսի կարգ շատանալով, կառավարել է հայրապետական գահը՝ որպես տեղապահ: Այն փաստը, որ իրար հետեւած երկու տեղապահ անմիջապես եպիսկոպոս չէին ձեռնադրվել, ինչպես պահանջում էր նրանց կարգը եւ որը, միեւնույն ժամանակ, հանդիսանում է Հայաստանի հին ավանդույթը, բացատրվում է, ամենայն հավանականությամբ, այն փաստով, որ Հայոց կաթողիկոսի ինքնավար օժուժը դեռեւս կանոնական տեսակետից վավերացված չէր հենց Հայոց եկեղեցու կողմից եւ ճանաչված չէր սահմանակից արքեպիսկոպոսական եկեղեցիների կողմից, չնայած այն փորձերին, որոնք արվել էին այդ ուղղությամբ 4-րդ դարում թագավորական ճնշման ներքո եւ որոնք, սակայն, հանդիպել էին այդ ժամանակաշրջանում Սր. Բարսեղ Կեսարացու եպիսկոպոսական առաջնորդության ներքո գտնվող Կեսարիոյ եկեղեցու բուռն բողոքներին¹⁴: Եպիսկոպոսական ձեռնադրման այդ նրբին հարցը կարող էր, անկասկած, ավելի դյուրին լուծում գտնել, եթե սկզբում Սահակի, հետագայում Մեսրոպի հաջորդ նշանակվեր մի հոգեւորական, որն արդեն եպիսկոպոս ձեռնադրված կլիներ: Սակայն, քանի որ Սահակը Լուսավորչի տոհմի վերջին ժառանգն էր, եւ ծառայած խնդիրը այդքան լուրջ էր, ապա գերագույն իշխանությունը պետք է անցներ անվերապահորեն վստահելի այնպիսի մի անձի ձեռքը, որը առավելագույն կերպով վստահություն կներշնչեր այն բանում, որ կապահովեր Գրիգորից մինչեւ Սահակը Լուսավորչյան տոհմի հայրապետների ոգեշնչած գաղափարների շարունակականությունը: Այստեղից էլ՝ Սահակի կողմից իր հաջորդի նշանակումը եւ այդ ակտի շատ նշանակալից կրկնումը Մեսրոպի կողմից: Այս հարցը իր վերջնական լուծումն է ստացել, ամենայն հավանականությամբ, Շահապիվանի ժողովում, ուր, ինչպես մենք կարող ենք ենթադրել, որոշում էր կայացվել ինքնավար կերպով ձեռնամուխ լինել Հովսեփի օժմանը: Եվ իսկապես, այդ ժողովում նա հիշատակվում է որպես երեց՝ հասարակ քահանա, ուրիշ այլ քահանաների շարքում, որոնք հետագայում հայտնվում են Արտաշատի ժողովում որպես եպիսկոպոսներ: Օրինակ, երեցներ Մլետը, Երեմիան, Եղիշե Շահապիվանցին: Ի դեպ, դրա մասին զարմանալի ժամանակագրական ճշգրտությամբ վկայում է Դիեգեսիսը¹⁵:

Բ. Եղիշեի եւ Ղազարի միջեւ եղած որոշ տարբերությունների գնահատումը Եղիշեի Պատմության թվագրման տեսակետից

ա. Երկու հեղինակների միջեւ եղած աչքի զարնող տարբերությունների շարքում առանձնահատուկ տեղ են գրավում Սբ. Գրիգոր Լուսավորչի պաշտամունքի բացակայությունը մեկում եւ առկայությունը մյուսում: Այս փաստարկը առաջ է քաշել Խաչիկյանը¹⁶, եւ մենք այն զարգացնելու փորձ կկատարենք:

Ղազարի պատմության հենց առաջին էջերից մենք հանդիպում ենք Սրբի զարգացած պաշտամունքի բազմաթիվ վկայությունների: Մենք ընդգծում ենք՝ զարգացած: Դա չի նշանակում միայն այն, որ Գրիգորի անունը շատ հաճախ ուղեկցվում է «սուրբ» տիտղոսով, որը համատեքստում չի օգտագործվում որպես քրիստոնեության վաղ շրջանի պարզ որակման մի արձագանք, այլ հանդես է գալիս որպես պաշտամունքային լիարժեք արտահայտություն, ինչպես օրինակ՝ սուրբ նահատակ (Ա, ա, ժա), զբանտն եւ զկապանսն զսրբոյն Գրիգորի (Ա, ժգ), ի զաւակէ սրբոյն Գրիգորի յաշորդեն զաթոռ քահանայութեան (Ա, ժէ) եւ այլն: Սա ոչ տարօրինակ է, ոչ էլ զարմանալի. շատ բնական է, որ Գրիգորը, որպես սուրբ, պետք է պաշտամունքի առարկա լիներ, եւ որ նրա հիշատակը դեռեւս շատ վաղ շրջանում պետք է փառաբանված լիներ Հայոց Եկեղեցու կողմից: Իսկ ինչ որ Ղազարի շարադրանքի առանձնահատկություններից մեկն է կազմում, ընդհակառակն, այն է, որ Գրիգորի անձը՝ հիշատակված ավելի քան քսանհինգ անգամ, ներմուծվում է պատմական շարադրանքի զարգացման ներքին տրամաբանությունից անկախ՝ որպես հայկական բարեպաշտության առաջնային աղբյուր, որպես առաքինությունների գերագույն իդեալ, որպես քրիստոնեական իդեալներ ոգեշնչող հայր եւ ժողովրդի երկնային հզոր պաշտպան:

Դժվար չէ նկատել, որ սա ինչ-որ նոր երեւույթ էր 5-րդ դարի հայ գրականության համայնապատկերում, Փավստոսի, Կորյունի եւ նույնիսկ Ազաթանգեղոսի հայերեն խմբագրության համեմատությամբ, որը Լուսավորչին հիմնականում Գրիգոր է անվանում վաղ խմբագրության ազդեցության տակ եւ եթե նրան սուրբ կամ երանելի է անվանում, ապա դրա պատճառը 5-րդ դարի խմբագրություններն են, որոնցից վերջինը, ամենայն հավանականությամբ, հաշորդում է 492 թ. Սրբի մասունքների հայտնագործությանը¹⁷: Ամեն դեպքում, Լուսավորչի պաշտամունքը այն ձեւով, ինչպես այն դրսևորվում է Ղազարի մոտ, ծավալվում է, անկասկած, 5-րդ դարի երկրորդ կեսին: Գրիգորի հայրապետական տոհմի մարումը, Հայոց կաթողիկոսի ինքնավար օժման

փշոտ հարցը, Վարդանանց պատերազմի կործանարար հետեւանքները, որոնք, անկասկած, ազդել են Գրիգորի տեսիլքի վրա Ազաթանգեղոսի վերջին խմբագրության մեջ, այդ խմբագրության մեջ ներմուծված Վարդապետության վերագրումը Գրիգորին եւ վերջապես Սրբի մասունքների հայտնաբերումը, կարող են դիտվել որպես որոշիչ գործոններ եւ Սբ. Գրիգորի պաշտամունքի զարգացման փուլեր այդ պաշտամունքի դասական արտահայտության ճանապարհին: Ղազարի՝ որպես դրա առաջին պատմական վկայի մոտ այս պաշտամունքը շատ որոշակի ձեւ ունի, որը, դարերի ընթացքում, անընդհատ շարունակվել է Հայոց եկեղեցու բարեպաշտության մեջ: Սակայն մենք չենք գտնում այդ պաշտամունքի եւ ոչ մի հետք Եղիշեի մոտ: Գրիգոր անունն անգամ չի հայտնվում նրա գրչի տակ: Մինչդեռ մենք չենք կարող Եղիշեին վերագրել Գրիգորի դեմ ուղղված որեւէ նախապաշարմունք: Վարդանը՝ նրա հերոսը, Գրիգորի ուղղակի շառավիղներից է: Փաստորեն այն, ինչ բնորոշում է հայ հին պատմագրությունը, Լուսավորչի կերպարի ներկայությունը կամ բացակայությունը չէ որպես այդպիսին կամ էլ նրան բնութագրող մակդիրի տիպը, այլ, առավելաբար, նրա ներկայությունը պատմության կամ պատմված իրադարձության հենց ներքին տրամաբանության մեջ: Այդպես է Փավստոսի, Կորյունի (եթե կարելի է բնագրային խմբագրության մասը համարել Սուրբ Գրիգորի միակ հիշատակությունը, որին մենք հանդիպում ենք Մաշտոցի մահվան նկարագրության մեջ) մոտ, եւ այդպես է նույնինքն Խորենացու Պատմության մեջ: Ընդհակառակը, Ղազարին տարբերում եւ բնորոշում է այն, որ Լուսավորչի անձը եւ գործունեությունը նրա համար հանդիսանում են հայոց քրիստոնեական աշխարհի աստվածաբանական համապարփակ հայեցակետի առաջնային տարրերը՝ անկախ իրադարձությունների պատմական համատեքստից: Նման «թեոլոգումենայի» բացակայությունը Եղիշեի մոտ, անկասկած, արժեքավոր փաստարկ է Ղազարի համեմատ նրա շատ ավելի վաղ լինելուն ի նպաստ:

Եղիշեի պատմության միակ հատվածը, ուր Լուսավորիչը կարող էր հիշատակված լինել հենց իրադարձությունների տրամաբանության բերումով, Թեոդոսիոսին հասցեագրված նամակն է, որով հայերը նրա օգնությունն են հայցում, եւ որը բերված է 3-րդ եղանակում (տես վարը ծան. 65): Նամակում հայերը հիշեցնում են Կայսերը Հայաստանի եւ Տրդատ արքայի դարձը եւ այն բարեկամական կապերը, որոնք այդ ժամանակից ի վեր հաստատվել էին հռոմեացիների եւ հայերի միջեւ: Չնայած այն բանին, որ կարող է զարմանալի թվալ Գրիգորի մասին հիշատակության բացակայությունը նման համատեքստում, այնուամենայնիվ, ավելի խորը մտածելուց հետո այդ բացակայությունը մեզ այնքան էլ տարօրինակ չի թվա. Թեոդոսի մոտ, անկասկած, ավելի մեծ հետաքրքրություն պետք է առաջացնեն Տրդատը եւ ոչ թե Գրիգորը:

Բացի դրանից «բոլոր եպիսկոպոսների առաջնորդ Հոռմի եպիսկոպոսի» հիշատակությունը, որից Տրդատը «ստացավ» (ընկալեալ) իր հավատքը, հաստատում է, մեկ անգամ եւս, հիշատակված անձանց կոնկրետ գործառույթունը առաջադրված նպատակի լույսի ներքո եւ ոչ թե հավաքական հոգեբանության առումով, որը, որոշակի համատեքստից բխելով, կարող էր պարտադրվել: Սա եւս անդրազույն մի փաստարկ է Եղիշեի շարադրանքի ավելի վաղ բնույթի օգտին:

բ. Ինչպես նկատում է դարձյալ Խաչիկյանը (ծան. 16, էջ 152-153), նույնը կարելի է ասել, դիտարկելով Սուրբ մակղիրը, որը Ղազարը շատ հաճախ է օգտագործում Վարդանին եւ Վարդանանց պատերազմի հերոսներին հիշատակելիս (հմմտ. վերը, Ա, գ): Այս երեւույթին մենք գրեթե երբեք չենք հանդիպում Եղիշեի մոտ, նույնիսկ այն տեսարաններում, ուր այն առավել անհրաժեշտ կլիներ: Դա այն տեսարանն է, ուր Վարդանը, Արտակը եւ Խորենը երեւում են քրիստոնեական հավատը նոր ընդունած մոզպետի տեսիլքում (Պատմ. Ը): Իսկ ընդհակառակը, «սուրբ» բառը պահպանում է Եղիշեի մոտ իր նախնական բուրմունքը եւ նշանակում է «սրբերի համայնք» զինվորեալ Եկեղեցու ծոցում: Օրինակ, երբ մոզպետը իր տեսիլքից անմիջապես հետո «զարթոյց զսուրբսն ի քնոյ անտի» (էջ 117) կամ էլ է. եղանակի սկզբում, երբ պատմիչը հիշատակում է «սուրբ քահանայքն՝ որ անդ դիպեցան»: Միակ անձը, որը Ե. եղանակից սկսած որոշակի հետեւողականությամբ բնորոշվում է «սուրբ» մակղիրով, Այրարատի եպիսկոպոս Հովսեփն է: «Սուրբ» տիտղոսը կրում է նաեւ Ղեւոնդ Երեցը, սակայն, իհարկե, պակաս հաճախականությամբ, քան Հովսեփը եւ դարձյալ Ե. եղանակից հետո, ուր նա ասպարեզում է հայտնվում առաջին անգամ: Ամեն դեպքում Եղիշեն Ղազարի համեմատությամբ անհամեմատ ավելի զուսպ է «սրբադասիչ» մակղիրների օգտագործման հարցում:

գ. Ելնելով Եղիշեի եւ Ղազարի միջեւ եղած տարբերություններից, Ե. Տեր-Մինասյանցը¹⁸ մի այլ փաստարկ է առաջ քաշել Եղիշեի՝ ավելի վաղ շրջանի պատկանելուն ի նպաստ: Տարբերությունը վերաբերում է երկու ժողովուրդների՝ քուշանների եւ հեփթաղների հիշատակությանը: Հայտնի է, որ քուշանների թագավորությունը, որը գտնվում էր Պարսից կայսրության արեւելյան սահմանի մոտ, 468 թ. անկում է ապրել հեփթաղների հարձակումների հետեւանքով, որոնք նոր հարստություն են հիմնել: Ղազարը հիշատակում է այդ ժողովուրդներին՝ նրանց պատմական հաջորդման կարգով: Սա մի մանրամասն է, որը գալիս է հաստատելու նրա շարադրանքի հիմնավորվածությունը, որն, ընդհանուր առմամբ, բոլորի կողմից ճանաչված է: Այսպես, երկրորդ դրվագում նա խոսում է քուշանների մասին (խը), մինչդեռ

երրորդ դրվագում ձ. հատվածից սկսած, այսինքն՝ 80-ական թվականների հենց սկզբից, նա արդեն մի քանի անգամ հիշատակում է հեփթաղներին: Հետագայում նա հիշատակում է միայն հեփթաղներին, առանց նրանց շփոթելու քուշանների հետ, ինչպես դա նկատվում է հետագայում հայկական (օր. Սեբեոսի մոտ) եւ ոչ միայն հայկական պատմագրության մեջ այն պատճառով, որ հենց իրենք՝ հեփթաղները, իրենց հաճախ քուշան էին անվանում: Իսկ ինչ վերաբերում է Եղիշեին, ապա նա գիտի միայն քուշաններին, որոնց մասին եւ բազմիցս խոսում է:

Ակնհայտ է, որ պարզապես «հեփթաղ» ցեղանունի բացակայությունը չէ, որը կարող է շատ արժեքավոր փաստարկ հանդիսանալ Եղիշեի վաղեմության օգտին, այլ երկու ցեղանունները շփոթելու փաստը:

Ինքնին պարզ է դառնում, որ բերված փաստարկները, իրենց ամբողջությամբ, իրենց դինամիկ հարաբերակցության մեջ, նույնիսկ անկախ նրանց աճող թվից, ավելի մեծ արժեք են ներկայացնում, քան դրանցից յուրաքանչյուրը առանձին-առանձին. դրանք լրացնում են միմյանց եւ սատարում մեկը մյուսին:

Գ. Եղիշեի եւ Ղազարի մի ընդհանրություն, որը դրական փաստարկ է առաջինի ավելի վաղ թվագրմանը ի նպաստ

Մինչ այժմ մենք դիտարկել ենք մեր երկու պատմիչների շարագրանքների տարբերությունները միայն: Եվ ամեն անգամ մենք տեսել ենք, որ Եղիշեի պատումը եւ այդ պատումի ձեւը օժտված են հնության առավել եզակի բույրով, որը մեզ թելադրում է կոնկրետ պատմական համատեքստին մերձավորության ավելի բարձր մակարդակ:

Այժմ մենք կփոխենք ստեղծաշարը: Հիմա կնշենք մի առանձնահատկություն, որը միավորում է երկու պատմիչներին: Խոսքը գնում է «կարմիր» տիտղոսի բացակայության մասին, որը, որպես Վարդանի ժողովրդական մականուն, վկայված է 7-րդ դարի փաստաթղթերում¹⁹:

Հրավիրում եմ ձեր ուշադրությունը այն բանի վրա, որ «կարմիր» մականվան բացակայությունը «լուծության փաստարկ» չէ (տես վարը՝ II, Ա, ա. II, Գ): Խոսքը Վարդանին տրվող այնքան ժողովրդական եւ այնքան տարածված մակդիրի մասին է, որը հասել է մինչեւ մեր օրերը, եւ որի բացակայությունը Վարդանին եւ նրա սխրանքները նկարագրող երկու ամենախորհրդանշային պատմիչների մոտ դրական ցուցանիշ է թե՛ մեկի, եւ թե՛ մյուսի 7-րդ դարից վաղ լինելու օգտին, հատկապես որ Ղազարի ժամանակաշրջանը երբեք չի վիճարկվել:

II. ԵՂԻՇԵԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ԵՂԻՇԵԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋՏԵՔՍԱՅՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Մենք քննության առանք այն հիմնական խնդիրները, որոնք ծառանում են ուսումնասիրողների առջև Եղիշեի եւ Ղազարի Պատմությունները համեմատելիս: Մնում է քննարկել միջտեքստային խնդիրների մի շարք, որոնք առաջադրում է Պատմությունը եւ, առավել եւս, Եղիշեի ստեղծագործության ամբողջությունը այն տեքստերի համեմատությամբ, որոնց հետ Եղիշեի ստեղծագործությունները որոշ ընդհանրություններ ունեն²⁰: Այս բաժնում մենք դիտարկում ենք այդ խնդիրները Եղիշեի ստեղծագործության ամբողջության նկատմամբ, մեզ իրավունք վերապահելով քննարկել դրա փաստական միասնության խնդիրը հաջորդ բաժնում:

Ա. Եղիշեն եւ հունարան դպրոցի խնդիրը

1. Հարցին մոտեցման մեթոդաբանության հիմնարար խնդիրը. ներփակումներ եւ հետեւանքներ

Ոչ ոք չի կասկածել եւ չի էլ մտածել կասկածի տակ դնել այն փաստը, որ Եղիշեի ստեղծագործության ամբողջությունը, ինչպես նաեւ Պատմությունը, կապ ունեն այն տեքստերի հետ, որոնք լեզվաբանական տեսակետից պարզորոշ կերպով դասվում են, այսպես կոչված, հունարան դպրոցի շրջանակներում: Իհարկե, այս դեպքում ընդունելի չէ ի հառաջագունե սկզբունքը, որը երբեմն ներքոյադրվում է որոշ բանասիրական դատողությունների, ըստ որի, Եզնիկից բացի մնացած հայ հեղինակները չէին կարող անմիջականորեն օգտվել օտար աղբյուրներից, եւ դա արվում էր միայն հայկական թարգմանությունների միջնորդությամբ: Վատ չէր լինի ճշտել յուրաքանչյուր առանձին դեպքում տվյալ հեղինակի տեքստային կախման հավանականության աստիճանը հայտնի թարգմանությունից, առանց բացառելու, բնականաբար, ի հառաջագունե նրա այդ թարգմանության հեղինակը լինելու հնարավորությունը:

Այս նախնական ճշտումներից հետո, այնուամենայնիվ, շատ հնարավոր է թվում, որ Եղիշեն ծանոթ է եղել հունարան դպրոցին վերագրվող հին քրիստոնեական եւ ոչ քրիստոնեական, աշխատություններից շատերի հայերեն թարգմանություններին: Թեկուզ միայն Արարածոց մեկնության Խաչիկյանի

մանրակրկիտ վերլուծությունը (ծան. 16, էջ. 124-151), ուր նա գաղափարներին եւ բովանդակությանը վերաբերող ընդհանրություններից բացի փորձում է ճշտել հենց տեքստային ընդհանրությունները, կասկած չի թողնում Եղիշեի եւ հունարան դպրոցի մեկից ավելի թարգմանությունների միջեւ գոյություն ունեցող այդ ընդհանրությունների վերաբերյալ, նույնիսկ եթե Խաչիկյանի փաստարկներից ոչ բոլորը նույն արժեքն ունեն եւ որոշ մերձեցումների հարցում իրավացիորեն վիճարկվել են²¹: Ամեն դեպքում, դեռ վաղուց այնպիսի առաջնակարգ հեղինակություններ, ինչպիսիք են Ադոնցը, Մանանդյանը եւ այլոք հաստատել էին, ճիշտ է տարբեր արժեք ներկայացնող միջոցներով եւ հետեւություններով, լեզվաբանական եւ տեքստային ընդհանրությունները Եղիշեի, ինչպես նաեւ ավանդաբար 5-րդ դարով թվագրվող այլ հեղինակների, Փիլոնի, Դիոնիսիոս Թրակացու եւ հունարան դպրոցի մի շարք այլ տիպիկ ստեղծագործությունների միջեւ²²:

Հետեւաբար, խնդիրը ընդհանրությունների գոյությունը չէ, այլ դրանց բացատրության ձեւն է: Այլապես, սա հունարան դպրոցի սկզբնավորման եւ զարգացման դժվարին եւ վիճահարույց հարցն է:

Այս խնդրի վերաբերյալ լեզվաբանների եւ բանասերների ունեցած տարբեր դիրքորոշումները բավականաչափ հայտնի են, որպեսզի մենք այստեղ դրանք ներկայացնենք կամ նորից ամփոփենք: Ոչ էլ տեղին է կամ անհրաժեշտ է նորից լույս աշխարհ հանել, իբր առաջնահերթ խնդիր, հին եւ անպարփակ վեճը Տիմոթեոս Կուզի թարգմանության թվականի վերաբերյալ. թե արդյո՞ք այն արվել է 482-486 թթ., թե 552-556 թթ., կամ էլ 560 եւ 564 թթ. միջեւ: Այնուամենայնիվ, հունարան դպրոցի վերաբերյալ, մեր կարծիքով, ամենից էականը ասելուց հետո, մենք հպանցիկ կերպով կանդրադառնանք այս հարցին, դրա մի քանի ակնհայտորեն խառնաշփոթ կողմերի լուսաբանմանը՝ մեր նպաստը բերելու հույսով:

Մեր կարծիքով խոսքը, նախ եւ առաջ, ուսումնասիրությունների այս բնագավառի հիմնարար մեթոդաբանությունը դարձյալ եւ նորովի վերանայելու մասին է, որպեսզի կարողանանք ավելի համաչափ կերպով գնահատել այն բազմաթիվ տվյալները, որ ունենք այսօր: Ուսումնասիրության ներկա փուլում մեզ թվում է, որ խնդրի էությունը ոչ այնքան նոր հնարավոր հայտնագործությունների, որքան արդեն արված հայտնագործությունների մեկնաբանության անհրաժեշտության մեջ է: Այդ նպատակով մենք կգիտարկենք իր տեսակի մեջ ամենանշանակալից վերջին ներդրումներից մեկը հունարան դպրոցի ակունքների եւ զարգացման հարցի վերաբերյալ: Դա Աբրահամ Տերյանի «The Hellenizing School. Its Time, Place, and Scope of Activities reconsidered»²³ աշխատությունն է:

Տերյանը սկսում է քննադատության ենթարկել Մանանդյանի կիրառած մեթոդաբանությունը՝ հունարան դպրոցին նվիրված նրա հիմնարար աշխատության մեջ: Նա այնտեղ վեր է հանում «առանձին բաղկարարների կարեւորության անհարկի շեշտում» (էջ 176), «փոխանակ ավելի մեծ ուշադրություն դարձնելու տարբեր թարգմանություններում համանման կառուցվածք ունեցող բաղկարարների համեմատական հաճախականության վրա» (նույն տեղում): Նա եզրակացնում է, որ երեք հաջորդական խումբ եւ առաջինների համեմատությամբ մեկ ատիպիկ խումբ տարբերակելու փոխարեն «ավելի ճիշտ կլիներ խոսել երկու մեծ խմբերի մասին. առաջին երեքի եւ շորրորդի մասին» (նույն տեղում): Տերյանը չի հիշատակում ժամանակին տարբեր գիտնականների կողմից Մանանդյանի մեթոդաբանության դեմ հնչած քննադատական խոսքերը, որոնք հիմնականում վերաբերում էին նրա մեթոդաբանության գրեթե բացառապես ներլեզվարանական եւ բառապաշարային բնույթին²⁴:

Հետո Տերյանը փորձում է հնարավորին շափ ճշգրիտ կերպով որոշել այդ դպրոցի սկզբնավորման վայրը եւ թվականը, ի տարբերություն մինչ այդ արված փորձերին, որոնք շատ հեղհեղուկ արդյունքի էին հանգեցրել վայրը որոշելու հարցում, իսկ ինչ վերաբերում է թվականին, ապա այդ փորձերը հնարավորություն էին տվել պարզել ավելի շատ ժամանակաշրջանը, քան որոշակի տարեթիվը: Տերյանի ելակետն է հանդիսանում Գիրք էակաց-ի թարգմանության հիշատակարանը. թարգմանությունը կատարվել է հայոց թվագրության 25-րդ տարում (576/577 թթ.) Կոնստանդնուպոլսում (անդ, էջ 178): Հրաժարվելով հունարան դպրոցի թողած արտադրանքի ժամանակագրական կարգով իրար հետեւող երեք խմբերի դասական բաժանման սկզբունքից եւ հաշվի առնելով մի կողմից Գիրք էակաց-ի եւ Դավթի ստեղծագործության ամբողջության (Դավիթ Անհաղթին վերագրվող աշխատությունները եւ թարգմանությունները) միջեւ գոյություն ունեցող ընդհանրությունները, իսկ մյուս կողմից Մանանդյանի «առաջին խմբի» թարգմանությունների հետ եղած ընդհանրությունները, Տերյանը այդ թարգմանությունը համարում է հունարան դպրոցի առաջին գործերից մեկը: Այս վարկածին կշիռ տալու համար նա դիմում է 7-րդ դարի խոշորագույն գիտնական, «Հայաստանում ճշգրիտ գիտությունների հայր» կոչմանը արժանացած Անանիա Շիրակացու ինքնակենսագրական մի վկայությանը: Իր ինքնակենսագրական տեղեկանքում Անանիան պատմում է այն դժվարությունների մասին, որոնց նա հանդիպել է իր պատանեկության տարիներին Հայաստանում գիտնականների, բավարար գիտելիքներ տալու ունակ ուսուցիչների եւ նույնիսկ գիտական գրականության բացակայության պատճառով: Տերյանը այսպես է մեկնաբանում Անանիայի հաղորդած

տեղեկությունները. «Այժմ մենք Անանիայի վկայությունից կառանձնացնենք այն տարրերը, որոնք համապատասխանում են մեր թեզին: Նախ, եթե մենք հավատանք նրան, ապա 7-րդ դարի սկզբում Հայաստանում փիլիսոփայությանը քաջածանոթ անձինք չկային եւ չկար նաեւ գիտական գրականություն» (անդ, էջ 181):

Մենք կարծում ենք, որ այս պնդման մեջ զգալի անհամապատասխանություն կա Անանիայի վկայության նախադրյալի եւ դրանից արգո հեղինակի արած հետեւության միջեւ: Ինքնակենսագրական վկայությունն ինքնին հատուկ գրական ժանր է: Դրա տառացի մեկնաբանումը, կարծես հանրահաշվական հավասարում լիներ, կարող է լուրջ թյուրիմացությունների հանգեցնել: Այդ կարգի վկայությունները, լինեն դրանք ինքնակենսագրություններ, թե պարզապես կենսագրություններ, հաճախ են հանդիպում գրականության մեջ, եւ անհրաժեշտ է բազմաթիվ այլ փաստերի առկայությունը դրանք տառացիորեն մեկնաբանելու համար: Այս միտքը հաստատելու համար քննարկենք մի պարագա՝ դուրս չգալով հայկական շրջանակներից, որի պատմական համատեքստը բավականաչափ պարզորոշ է: Դա Մխիթար Աբբահայր Սեբաստացու (1676-1749) պարագան է, եթե հիշենք նրա կենսագրությունները եւ այն հարուստ պատմա-ներբողական գրականությունը, որ գոյություն ունի նրա մասին: Դրանք լի են պնդումներով այն մասին, որ պատանի Մխիթարը գիտելիքների եւ հոգեւոր կյանքի ծարավով համակված, ապարդյուն շրջելով Հայաստանի վանքերով եւ այնտեղ իրեն բավարարող գիտելիքներ չգտնելով, որոշել է գնալ Նվրոպա: Դժվար չէ հասկանալ, թե ինչ պատմական անզգուշություն թույլ կտայինք մենք, եթե ելնելով նման վկայությունից, պատկերացնեինք մի երկիր, ուր չկար դասավանդելու ունակ գոնե մեկ գիտնական, եւ որը զուրկ էր իմաստուն ուսուցիչներից եւ գրադարաններից:

Վերադառնանք 5-6-րդ դարերի Հայաստան: Ինչպե՞ս կարելի է բառացիորեն ընկալել Տերյանի մեջբերած Անանիայի խոսքերը այն մասին, որ հայերը «չէին սիրում ոչ ուսումը, ոչ գիտելիքները», եթե հաշվի առնենք ոչ միայն 5-րդ դարի գրական ծաղկումը, այլեւ ավելի մասնավոր կերպով 7-րդ դարի սկզբի գրական եւ մշակութային բուռն զարգացումը արվեստի գրեթե բոլոր ասպարեզներում երաժշտություն, ճարտարապետություն, որի մասին մենք, ի դեպ, քաջ տեղյակ ենք. զարգացում, որը ծնունդ է տվել այնպիսի գլուխգործոցների, ինչպիսիք էին Հռիփսիմեի եկեղեցին (618), Զվարթնոց տաճարը (642-662), Անձինք նվիրեալք շարականի բյուրեղյա տաղաչափությունը եւ նրա մեղեդին, որը հանդիսանում է բարձր զարգացում ունեցող երաժշտականության արտահայտություն: Ճիշտ է, Անանիա Շիրակացու այդ խոսքերը վե-

րարերում էին այդ ժամանակաշրջանի փիլիսոփայության եւ ճշգրիտ գիտությունների վիճակին: Սակայն այդ խոսքերի երանգը, որը հռետորական բնույթ է կրում, մեզ պարտադրում է զգուշավորություն ցուցաբերել դրանց մեկնաբանության հարցում, խուսափելու համար շուտափույթ եզրակացություններ անելու սխալից, որոնք դուրս կգային նախադրյալի թույլատրելի սահմաններից: Բացի դրանից մենք, հիրավի, չենք կարող մոռանալ անտիկ շրջանի գիտությունների խորը միասնականությունը: Քերականությունը, հռետորական արվեստը, ճարտարապետությունը, երաժշտությունը, երկրաչափությունը, ֆիզիկան եւ այլն, առանձին բնագավառներ չէին հանդիսանում, ինչպիսիք դարձան հետագայում: Այդ իրականությունը անուշադրության մատնելը հղի է լուրջ սխալների վտանգով: Սա նշանակում է, որ դժվար կլինեք պատկերացնել մտավոր գործունեության մի ասպարեզի ծաղկումը առանց մյուս բնագավառների զարգացման գոնե միջին մակարդակի գոյությունը մեզ հետաքրքրող դարաշրջանում: Եվ վերջապես, ինչ վերաբերում է գիտական գրականության նմուշներին, ապա մենք հաստատ գիտենք, որ Անանիայից առաջ էլ գոյություն ունեին գիտական մեծ արժեք ներկայացնող աշխատություններ հենց փիլիսոփայության եւ տիեզերաբանության ասպարեզներում. օրինակ՝ եզնիկի Ընդդէմ Աղանդոց-ը կամ Յաղագս Աստուծոյ-ն²⁵ եւ Սբ. Բարսեղի Վեցօրեայք-ի թարգմանությունը, որի նկատմամբ հենց ինքը՝ Անանիան, մեծ ակնածանք է ցուցաբերում, եւ որը նա անընդհատ հիշատակում է: Ուստի մենք կարող ենք եզրակացնել, որ Անանիա Շիրակացու ինքնակենսագրությունը չի կարող լուրջ հիմք հանդիսանալ հաստատելու կամ ենթադրելու համար, որ Գիրք էակաց-ի 576/577 թթ. թարգմանությունը կարող է համընկնել հունարան դպրոցի սկզբնավորման հետ:

Այսպիսով, մեզ թվում է, որ մենք ակնառու կերպով ցույց տվեցինք, որ Տերյանի առաջարկած «Հունարան դպրոցի դարաշրջանի, դերի եւ վերջնական նպատակների վերանայումը», որի մասին գրվել է, որ «Տերյանի սխեման տեղիք չի տալիս քննադատության»²⁶, հեռու է իր նպատակին հասնելուց: Այսուհանդերձ, 576/577թթ. հունարան դպրոցի սկզբնավորման կամ գրեթե սկզբնավորման մասին Տերյանի հիմնական թեզի այս քննադատությունը դեռ չի նշանակում այդ ուսումնասիրության մեջ արտահայտված բոլոր տեսակետների մերժում: Դրանցից մի քանիսը մեծ հետաքրքրություն են առաջացնում: Մեզ առանձնապես հետաքրքիր է թվում Տերյանի առաջադրած գաղափարներից հետեւյալը. հունարան դպրոցի արտադրանքի ստորաբաժանումների հարաբերականացումը: Տերյանը մեկ խմբի մեջ է միավորում Մանանդյանի երեք դասական ստորաբաժանումները: Եվ իսկապես, խնդրո առարկա գրական արտադրանքը ունի էական տարբերություններ: Ժամանակին Մանան-

դյանի կողմից համակարգված այդ տարբերություններից շատերը հաստատվել են նաև հետագա ուսումնասիրողների, օրինակ Ա. Մուրադյանի, Ս. Արեւշատյանի ուսումնասիրություններում: Սակայն մենք ոչ մի անհրաժեշտություն չենք տեսնում, որպեսզի այդ տարբերությունները դիտվեն որպես ժամանակագրական հաջորդման նշան, եթե չապացուցվի հակառակը, յուրաքանչյուր տվյալ դեպքում, կոնկրետ կերպով եւ որոշակի փաստերի հիման վրա: Եվ դարձյալ այս հնարավորության շրջանակներում, բոլորովին էլ պարտադիր չէ ի հառաջագունե, որ լեզվաբանական տեսակետից նույն խմբին պատկանող տեքստերը համաժամանակյա լինեն եւ, ընդհակառակը, բազմաթիվ տասնամյակներ չբաժանեն դրանք: Եվ իսկապես, եթե մենք մեր վեճը սահմանափակենք հայոց գրական լեզվի պատմության շրջանակներում, ապա կարող ենք արձանագրել, որ այդ պատմությունը հենց սկզբից վկայում է նույնիսկ դասական հայերենի, որը հայտնի է նաև որպես ոսկեդարյան կամ մեսրոպյան/մաշտոցյան, միմյանցից զգալի կերպով տարբերվող միտումների, դպրոցների, կիրառումների համակեցության մասին: Նման երեւույթի մենք կարող ենք հանդիպել հետագայում հայոց լեզվի, ինչպես նաև այլ լեզուների հեղաշրջման ընթացքում: Լեզվաբանական տարբերակված չափանիշների այդ համակեցության ամենացայտուն վկայություններից է, նույնիսկ մեկ հեղինակի ստեղծագործության մեջ, Խորենացու Պատմության ԿԲ. գլխի գ. հատվածը, ուր հեղինակը հանկարծ անցնում է հունարան հայերենին: Դժվար է նույնիսկ մտաբերել, թե կարելի էր ավելի լավ վկայություն ունենալ այդ լեզվի «ակադեմիական դպրոցի» բնույթի մասին, որը Խորենացին ինքը բնորոշում է «նոր լեզվական արվեստ»: Մյուս կողմից էլ չեն բացառվում դեպքեր (թեկուզ լինի դա գրեթե մեկ սահմանափակ դեպք), երբ մոտավորապես երկու հարյուրամյակ անց, մենք վերագտնում ենք, օրինակ Սեբեոսի Պատմության մեջ, դասական լեզվի, հատկապես եզնիկյան ոճաբանության, այնքան հմուտ վերարտադրություն, որ նույնիսկ փորձված մասնագետը դժվարությամբ է կարողանում գլխի ընկնել դրանց բաժանող ժամանակահատվածի մասին:

Ուստի մենք կարող ենք եզրակացություն անել: Չկա եւ ոչ մի կոնկրետ փաստ, ոչ էլ վճռական պատճառ հունարան դպրոցի սկզբնավորումը 6-րդ դարին վերագրելու համար: Ընդհակառակը, այն տեղադրելով 5-րդ դարի երկրորդ կեսին, մենք կարողանում ենք շատ ավելի լավ հասկանալ հայ գրականության եւ հատկապես պատմագրության մեջ որոշ կարեւորագույն զարգացումների համատեքստայնությունը:

Սա այն դեպքը չէ, երբ կարիք կա մեկ անգամ եւս կրկնել այն, ինչ կրկնվել է ձանձրանալի դառնալու շափ, սակայն միզուցե ոչ միշտ հանիրավի կերպով, որ լռության փաստարկները այն ամենավտանգավոր ծուղակն են,

ուր կարող է ընկնել բանասերը: Մի դասական օրինակ մեր նյութի վերաբերյալ. ամբողջ 6-րդ դարի ընթացքում Փիլոնի հայերեն թարգմանության վերաբերյալ պահպանվող լուսությունը եւ այն փաստը, որ առաջինը, որքան մենք գիտենք, այն հիշատակում է Անանիա Շիրակացին: Տվյալ դեպքում մենք ունենք մեկից ավելի հունարան տեքստեր, որոնք հիշատակվել են միայն 7-րդ դարից սկսած: Դա լուսության փաստարկն է, որին հաճախ են բանասերները դիմել սիրահոժար, առանց նկատելու ասպացույցի կարոտ փաստարկի վկայակոչման հանգամանքը, երբ մերժում են եղիշեի կամ Խորենացու վաղ թվագրումը. մի կողմից Փիլոնի կամ որոշ այլ հունարան տեքստերի հետ նրանց ունեցած ընդհանրությունների եւ մյուս կողմից այդ տեքստերի 7-րդ դարից շուտ հիշատակումների բացակայության պատճառով:

2. Փակագիծ Տիմոթեոս Կուզի Հակաճառության հայերեն թարգմանության թվագրման վերաբերյալ

Հաշորդ կետին անցնելուց առաջ, կցանկանայինք հպանցիկ կերպով կանգ առնել Տիմոթեոս Կուզի Հակաճառության թարգմանության տարեթվի հարցի վրա: Այն արժանի է *crux philologorum* (բանասերների խաչ)-ի անվանմանը: Չնայած դրան, խնդրի էությունը կարելի է վերածել հետեւյալ հիմնական երկատման²⁷: Մի կողմից մենք ունենք թարգմանության հենց համատեքստում գտնվող ժամանակագրական տվյալի մասին պարզորոշ վկայություն, իսկ մյուս կողմից ունենք շատ հին արտաքին վկայություններ, որոնք նույնպես շատ պարզորոշ են իրենց ձեւակերպման մեջ, թարգմանության ժամանակի եւ հանգամանքների վերաբերյալ: Խնդիրը բարդացնող հիմնական գործոնները հետեւյալ երկուսն են. ա) տեքստում գտնվող տեղեկություններին վերաբերող ժամանակագրական բոլոր հայտնի տվյալների զուգադիպման դժվարությունը, բ) արտաքին եւ տեքստում գտնվող վկայությունների համաձայնեցման դժվարությունը, առանց վերջինիս մեջ անպատշաճ ուղղումներ կատարելու:

ա) Տեքստում պարունակվող ժամանակագրական տվյալի արժեքը

Տեքստում զետեղված ժամանակագրական տվյալը վերաբերում է Աղեքսանդրիայի պատրիարք Դիոսկորոսի մահվանը: Այն տեղադրվում է եգիպտական Թովթ ամսի 5-ին, որը համապատասխանում է հռոմեական տոմարի սեպտեմբերի 2-ին եւ հայկական տոմարի Հոռի 6-ին: Գ. Տեր-Մկրտչյանը առաջինն է ուշադրություն հրավիրել այս համապատասխանության վրա եւ բացահայտել դրա հետեւանքները: Ըստ հայկական շարժական տոմարի²⁸ համար

կազմված համեմատական աղյուսակների, այն ցույց կտար շորս տարվա մի ժամանակաշրջան, որը կսկսվեր 480 թ. հուլիսի 29-ին (1 նավասարդի) եւ կավարտվեր 484 թ. հուլիսի 27-ին: Հենվելով այս տվյալների վրա, Տեր-Մկրտչանը (որը տարին սկսում է փետրվարի 29-ից՝ նահանջ տարին նշելու համար), իսկ նրանից հետո Մ. Արեղյանը եւ Կ. Սարգսյանը եղել են այս թվագրության ամենավճռական պաշտպանների շարքում:

Զնայած այս ընթերցման ծայրաստիճան պարզությանը, Ակինյանը առարկել է, որ Դիոսկորոսի մահվան իրական թվականը ոչ թե Թովթի 5-ն է, ինչպես նշված է այս վկայության մեջ, այլ նույն ամսի 7-ը, որը կհամապատասխաներ սեպտեմբերի 4-ին²⁹: Այս առարկությունը Տեր-Մկրտչանը իրավացիորեն պատասխանել է, որ տվյալ դեպքում կարելորդ ոչ թե Դիոսկորոսի մահվան ճիշտ թվականն է, այլ երեք տարբեր տիպի տոմարներում նշված թվականների համապատասխանությունը³⁰:

Այստեղ մենք կարող էինք կանգ առնել եւ 5-րդ դարի 80-ական թվականները նշել որպես Կուզի Հակաճառության թարմանության ժամանակաշրջան: Սակայն կան արտաքին վկայություններ, որոնք մենք չենք կարող վերացնել երկու բառով, եւ որոնք մեզ պարտադրում են վերադառնալ այս խնդրին: Նրանք, ովքեր մեծ համոզմունքով պաշտպանել են տեքստի ժամանակագրական վկայության բացարձակ արժանահավատությունը, դժբախտաբար բավարար ուշադրություն չեն դարձրել արտաքին վկայությունների կշռին, եւ այդ տարբերությունները նրանց դիրքորոշման հետեւանքով մնացել են առանց բացատրության: Մյուս կողմից էլ բացատրելու միակ լուրջ փորձը, որը կատարել է Հայր Ակինյանը, բերել է նրան, որ արտաքին վկայությունները գերակշիռ արժեք են ձեռք բերել տեքստի վկայության համեմատ: Այս բացատրությունը եւս մեզ բավարար չի թվում. իրականում նա մեզ բացատրություն չի տալիս, այլ, ավելի շատ, հետեւելով Մանանդյանին, առաջարկում է տեքստային վկայությունը ուղղել, այն արտաքին վկայություններին համապատասխանեցնելու համար³¹:

Ընդունված է համարել, որ այն վկաները, որոնց կարծիքով Հակաճառությունը թարգմանվել է ոչ թե 5-րդ դարի վերջին քառորդում, այլ 6-րդ դարի երկրորդ կեսին տեղի ունեցած Դվինի Բ. Ժողովի³² տված խիստ հակաքաղկեդոնական ազդակի ներքո, հետեւյալներն են. Դիեգեսիսը³³, Անանյանի կողմից հրատարակված Դվինի Ժողովին վերաբերող հակաքաղկեդոնյան բնույթի մի հիշատակարան, որը վերնագրված է Գիր մերոց Հարցն որ ի Դուին ժողովեալ յաւուրս Մեծին Ներսեսի Հայոց Մեծաց եւ վասն Քաղկեդոնի³⁴, Փոտի (կամ Կեղծ-Փոտի) նամակը Զաքարիա Կաթողիկոսին եւ Արսեն Սափարացին³⁵:

Նախ, պետք է ասել, որ վերջին երկուսը մոտավոր կերպով կրկնում են

ավելի վաղ վկաներին: Սակայն այստեղ, մեզ հուզող մասնավոր խնդրի վերաբերյալ, Արսեն Սափարացին բերում է մի վկայություն, որը բանասիրության մեջ մեծ հեշտությամբ ձուլվել է նրան նախորդողների բերած վկայություններին, մինչդեռ, մեր կարծիքով, այն, ընդհակառակը, դրանցից առանձնանում է: Այսպես, պարզվում է, որ այդ վկայությունը շատ մեծ արժեք է ներկայացնում, ինչպես մեր կողմից առաջարկվող բացատրության փորձի համար, այնպես էլ ընդդեմ արտաքին դասական վկայությունների վրա հենվող գերակշռող կարծիքի:

Ինչ վերաբերում է ավելի վաղ վկայություններին, ապա դրանք նույնպես, անկասկած, իրենց հերթին կախում ունեն բազմաթիվ անձանոթ աղբյուրներից, որոնք փաստերին ավելի մոտ տեղադրված լինելու առավելություն ունեն: Մասնավորապես Անանյանի կողմից հրատարակված հիշատակարանը, չնայած պարունակած խառնաշփոթություններին (ամենից ծանրակշիռը՝ Տիմոթեոս Կուզին Պողոսի աշակերտ Տիմոթեոսի հետ շփոթումը), որոնք ամենայն հավանականությամբ տեքստային սխալների հետեւանքն են հանդիսանում, այնուամենայնիվ, մնում է որպես կարեւորագույն վկա, հատկապես այն պատճառով, որ հնարավոր չէ նրան կասկածել քաղկեդոնականությանը համակրելու մեջ:

Բացատրության փորձ կատարելուց առաջ տեսնենք, թե ինչ են ասում աղբյուրները: Ըստ Դիեգեսիսի, Դվինի ժողովի ժամանակաշրջանում թարգմանվել էին Տիմոթեոս Կուզի եւ Փիլոքսենես Ասորու (Մաբբուզցու) ստեղծագործությունները, որոնք ներկայացրել էր ասորի Արդիշոն: Այդ ստեղծագործությունները այնպիսի մեծ տպավորություն էին թողել ժողովի Հայրերի վրա, որ այդ ժողովի ընդունած հակաքաղկեդոնյան որոշումները պետք է, որ այդ ստեղծագործությունների համոզմունքի ուժի արդյունքը լինեին: Ուստի մենք պետք է ենթադրենք, որ թարգմանությունը կատարվել էր ժողովի ընթացքում: Եթե հաշվի առնենք, որ 553-555 թթ. հարուստ էին ժողովներով, եւ որ Արդիշոն հայտնվել էր այդ ժողովներին 555 թ. առաջ, ամենայն հավանականությամբ 553 թ., ապա նման հավանականությունը պետք չէ, որ զարմանք հարուցի:

Մեր կարծիքով նման վկայությունը, եթե հաշվի առնենք մոտակա եւ հեռավոր ամբողջ պատմական համատեքստը, անպայման չէ, որ պետք է հակասի քննարկվող ստեղծագործությունների կամ դրանցից մի քանիսի ավելի վաղ թարգմանության հավանականությանը: Հայր Անանյանը բացառում էր այդ հավանականությունը մի դատողությամբ, համաձայն որի 5-րդ դարի վերջում Հայոց եկեղեցին դեռեւս որոշակի եւ վճռական դատապարտման դիրքորոշում չէր ընդունել Քաղկեդոնի նկատմամբ: Մյուս կողմից, նա համարում է,

որ Քաղկեդոնին վճռականորեն հակադրվող նման աշխատության թարգմանության համար անհրաժեշտ էր եկեղեցական հեղինակության միջամտությունը: Մենք չենք կարծում, որ դա հենց այդպես է եղել: Ամբողջ կայսրությունը, ծայրամասերը ներառյալ, Եգիպտոսից մինչև Միջագետք, ցնցվում էր քաղկեդոնյան վեճից՝ հասնելով նույնիսկ մինչև Ֆիզիկական բռնություն: Ամենուր կային Քաղկեդոնի կողմնակիցներ եւ հակառակորդներ: Եվ եթե Հայաստանը այդ տեսակետից, որքան մենք գիտենք, ավելի խաղաղ երևույթ էր պարզում (նկատի ունենք Հայաստանի հենց սիրտը եւ ոչ միայն նրա սահմանամերձ շրջանները), ապա դա պետք չէ մեկնաբանվի այնպես, կարծես այդ վեճերի արձագանքը այնտեղ չէր հասնում, եւ որ երկու խմբավորումները չէին կարող այնտեղ ունենալ իրենց համակիրներին: Այս բանը, ի հառաջագունե, մեզ շատ հնարավոր է թվում, եթե հաշվի առնենք Հայաստանի սերտ կապերը հարեւան երկրների հետ, ինչպես մեզ հետաքրքրող տասնամյակներից առաջ, այնպես էլ հետո (տե՛ս նաեւ Դվինի առաջին ժողովը), նաեւ նրա սահմաններից աշխույժ կերպով ներթափանցող գաղափարները եւ կրոնական շարժումները, որոնք տարածվում էին Բուրգերի երկրից եւ Վոսփորից մինչև Իրանական անապատը: Հավանականությունը գրեթե վստահության է վերածվում, երբ ի հայտ է գալիս պարզորոշ մի վկայություն, որը զետեղված է հենց դիտարկվող տեքստում, եւ, մեր կարծիքով, Տիմոթեոս Կուզի Հակաճառության հայերեն թարգմանությունը հենց այդ դեպքն է: Մենք խոսում ենք գրեթե վստահության մասին, միզուցե շափազանցված զգուշավորությունից ելնելով, ավելի շատ հնարավոր սխալի դեպքում նահանջի տեղ թողնելու համար (տե՛ս նաեւ ծան. 28-ի վերջին մասը), քան թե Դիոսկորիոսի մահվան իրական թվականի հետ երկու օր կազմող տարբերության պատճառով. փաստորեն հետեւելով Գ. Տեր-Մկրտչյանի կարծիքին, մենք եւս համարում ենք, որ այդ տարբերությունը չի վերաբերում խնդրի էությանը:

բ) Գիրք Թղթոց-ի «Ողորմելիս Պետրոս»-ի նամակի վկայությունը

Որպես այս դրույթի հետագա հաստատում ուզում ենք առաջարկված փաստարկները լրացնել արտաքին մի վկայության ավանդով, որը, տարօրինակ կերպով, վրիպել է հետազոտողների ուշադրությունից, եւ որը մենք ինքնին արժեքավոր ենք համարում: Խոսքը որպես «Ողորմելիս Պետրոս» ներկայացող Պետրոսի նամակի մասին է, որը պահպանվել է Գիրք Թղթոց-ում (էջ 99-107, էջ 60-72 ն. Պողարյանի նոր հրատարակության մեջ, Երուսաղեմ, 1994):

Օրմանյանը (Ազգապատում, Ա, սյուն. 606) այս նամակը վերագրում է հակաքաղկեդոնյան տրամադրություններով համակված վրաց եպիսկոպոս Պետրոսին, որը հիշատակված է Գիրք Թղթոց-ում երկու եկեղեցիների միջեւ հարաբերությունների ճգնաժամի եւ դրան հաջորդած խզման ժամանակաշրջանում, սակայն, ամենայն հավանականությամբ, ըստ հանգուցյալ Նորայր Պողարյանի³⁶ համոզիչ փաստարկների, այն պատկանում է Թափիչ հորջորջված Պետրոս Անտիոքացուն († 488): Վերջերս Անդրեա Շմիդտը առաջարկել է 630 թ. հետո ընկած թվագրում, այնտեղ տեսնելով միաներգործության եւ միակամության³⁷ վերաբերյալ բանավեճի արձագանքը: Սակայն այս նկատառումը մեզ վճռորոշ չի թվում³⁸:

Ըստ էության, նամակը վերագրելու այս հարցը չի չքացնում Պետրոսի նամակում պարունակվող վկայության հիմնական արժեքը, շնայած այն բանին, որ ավելի ուշ թվագրումը այն կնվազեցնէր: Եվ իսկապես, այդ դեպքում խոսքը կվերաբերեր մի վկայության, որը ամենից ուշը 7-րդ դարի վկայությունն է, ըստ որի Տիմոթեոսի աշխատությունը հայտնի կլինէր Հայաստանում 5-րդ դարի վերջին քառորդից ի վեր: Այն վարկածը, համաձայն որի այս վկայությունը կարելի էր կասկածել կողմնակալությամբ, մեր կարծիքով կրում է ժամանակավրեպության կնիքը, քանի որ Տիմոթեոս Կուզի աշխատության թարգմանության վերաբերյալ վեճը եւ հատկապես այն, որպես բանավեճի նյութ օգտագործելը, նորերս է ի հայտ եկել. փաստորեն այդ թվագրման միտումնավոր օգտագործումը, որպես համապատասխան դիրքորոշումների արդարացում, չի հանդիպում հին գրականության մեջ, նույնիսկ ամենաբուռն բանավեճերի ընթացքում:

Այս ճշգրտումից հետո հակիրճ կերպով դիտարկենք այն փաստարկները, որոնցից դրդված մենք Պետրոսի նամակը տեղակայում ենք 5-րդ դարում: Դրանք հենվում են, նախ եւ առաջ, Պետրոս Անտիոքացուն վերագրելու օգտին Պողարյանի բերած փաստարկների վրա: Խոսքը վերաբերում է շատ հին վկայություններին, որոնք փաստում են, որ վերջինս գրել է հայերին: Չնայած այն բանին, որ այդ վկայություններում մեր քննարկման առարկա նամակը բացահայտ կերպով նշված չէ, այնուամենայնիվ, Ողորմելիս Պետրոսի նամակը ունի բոլոր անհրաժեշտ պայմանները Պետրոս Անտիոքացու գրած նամակի հետ նույնացվելու համար: Պարզ է, որ այս բանն ասում ենք այն պատճառով, որ միաներգործական վեճերի ժամանակաշրջանով թվագրելու օգտին առաջ քաշված փաստարկները անբավարար ենք համարում: Ավելին, հետեւյալ մատնանշումները, իրենց հերթին, դրդում են մեզ մտածել ավելի վաղ ժամանակաշրջանի մասին: Նամակը գրվել է այն ժամանակ, երբ նեստորականները նվաճել են Մծբինը: Դա համապատասխանում է Բար Շաումայի եպիսկո-

պոստությանը, վերջինս Մծբինի եպիսկոպոսն է դարձել 457 թ. եւ պաշտոնավարել է մինչեւ իր մահը, որը վրա է հասել դարավերջին: Ամեն դեպքում, նամակը գրվել է 477 թ. հետո, որովհետեւ Տիմոթեոս Կուզը այնտեղ հիշատակվում է որպես «Երանելի Հայր» (էջ 101, 103): Բացի դրանից, ենթադրվում է, որ Թեոդորես Կյուրացին նույնպես արդեն մահացել էր († մոտ 466 թ.) (էջ 103): Ուստի մենք կարող ենք նամակը տեղագրել 477-488 թթ. միջև: Հասցեատերը նշված չէ: Սակայն, նախ եւ առաջ, ոչ մի կասկած չի հարուցում այն հարցը, որ խոսքը մի անձի եւ ոչ թե մի խումբ անձանց մասին է: զրուցակիցը միշտ եզակի թվով է նշված: Բացի դրանից նա տարեց անձնավորություն է (էջ 99), որը մեծ հեղինակություն է վայելում. դա երեւում է ինչպես արտահայտությունների ակնածականությունից, այնպես էլ ընդհանուր տոնից, որով կարելի է դիմել գործընկերոջը կամ նույն կարգն ունեցող մարդուն. դա երեւում է նաեւ հետապնդվող նպատակից, որն է նեստորականության եւ քաղկեդոնականության տարածմանը խոչընդոտելը, կամ «որք քեզն հաւանին» ակնարկից եւ, վերջապես, Մծբինի եպիսկոպոսական աթոռի մասին արված ակնարկից, որը նույնպես որոշակի նշանն է այն բանի, որ Պետրոսի զրուցակիցը բարձր եկեղեցական պատասխանատվությամբ օժտված անձնավորություն է: Այդ եկեղեցական պաշտոնյան գրեթե հաստատապես հայ է, եթե դատելու լինենք Գիրք Թղթոցում այդ նամակի զբաղեցրած տեղից: Սակայն, եթե նույնիսկ ենթադրենք, որ այդ նամակի առկայությունը կարող է բացատրվել ընդհանրապես «միաբնակ» աշխարհի համար դրա կարեւորությամբ, ինչպես միաբնակությանը վերաբերող վեճերի առաջին տարիների այլ փաստաթղթերի դեպքում, ապա Հայաստանի սահմանակից կարեւորագույն նստավայրերից մեկի՝ Մծբինի հիշատակությունը գրեթե բացառում է կասկածի իսկ հնարավորությունը, որ Պետրոսի նամակի հասցեատերը հայ չէ: Ոչ էլ Ակակիոս Մելիտինեցու հիշատակությունը, «որ ի Հայոց աշխարհին քահանայապետ եղելոյ», կարող է ծանրակշիռ փաստարկ լինել զրուցակցի հայ լինելը բացառելու համար: Հակառակը, դա լրացուցիչ նշան է այդ ինքնության օգտին, եթե հաշվի առնենք Մելիտինեի եւ հենց Ակակիոսի երկրորդական դերը խոշոր պատրիարքական նստավայրերի եւ դրանց տիտղոսակիրների համեմատությամբ, որոնք վկայակոչվում են որպես ճշմարտության տեր եւ վկա: Եթե զրուցակիցը հայ չէր, ապա Կյուրեղի կողքին Ակակիոսի ներկայության հնարավորությունը նվազ կլիներ:

Եթե դա այդպես է, եւ եթե մենք հիմնվենք այն ամենի վրա, որ հենց նոր պարզեցինք, ապա հասցեատերը պետք է, որ լիներ Հայոց եկեղեցու բարձրաստիճան եւ հեղինակավոր մի պաշտոնյա³⁹: Նման վարկածը չպետք է, որ զարմանալի թվա մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի համար, եթե հաշվի

առնենք արդեն հիշատակված այն սերտ կապերը, որ պահպանում էր Հայոց եկեղեցին իրեն շրջապատող երկրների եւ քրիստոնյաների հետ: Այս բանը վերջերս վերստին հաստատվել է Թեոդորեոսու Կյուրացու երկու նամակների (451-466 միջեւ) ուսումնասիրության շնորհիվ, որոնք հասցեագրված են հայ նվիրապետության գագաթին գտնվող Պարսկահայքի երկու եպիսկոպոսների, որոնցից մեկը հավանաբար ինքը՝ Գյուտ Կաթողիկոսն է⁴⁰:

Մենք այսքան հանգամանալից կերպով ներկայացրեցինք Պետրոսի նամակը, որպեսզի այն կարողանանք տեղադրել պատմական համատեքստում եւ որպեսզի հարկ եղածին պես ընդգծենք դրա կարեւորությունը: Արդ, նամակի հեղինակը երկու անգամ կրկնում է իր գրուցակցին, որ նա իր ձեռքի տակ ունի երանելի Հոր՝ Տիմոթեոսի Հակաճառությունը. «Եւ ունի քո աստուածասիրութիւնդ զամենապատուականին եւ զերանելի Հօրն մերոյ Տիմոթէի զգիրս՝ որ ընդդէմ Քաղկեդոնի ժողովին» (էջ 101), «զիտէ քո իմաստութիւնդ յառաջասացելոց գրոցն երանելոյն Տիմոթէոսի» (էջ 103): Ինչպես արդեն ասել ենք, եթե նույնիսկ նամակը պարականոն գրվածք է, ապա միեւնոյն է, այն իրենից ներկայացնում է Կուզի թարգմանության թվականի վերաբերյալ շատ հին վկայություն: Իսկ եթե, ընդհակառակը, նամակը գրվել է 5-րդ դարում, ինչպես մենք ենթադրում ենք, ապա խոսքը շափազանց պարզորոշ վկայության մասին է: Ընդգծենք, որ *termini ante quem*-ը եւ *post quem non*-ը, որ մենք նշել ենք Պետրոսի նամակի կապակցությամբ, կատարելապես համապատասխանում են Կուզի թարգմանության մեջ նշված ժամանակագրական համեմատությանը: Եվ վերջապես, Պետրոսի վկայությունը հերքում է նաեւ Հայր Անանյանի առաջ քաշած դիտողությունը Հակաճառության թարգմանության վաղ թվագրման դեմ, որովհետեւ այն անձը, որի մասին խոսվում է, որ նա իր ձեռքի տակ ունի այդ աշխատությունը, եթե դա նույնիսկ Կաթողիկոսը չէ, այնուամենայնիվ, եկեղեցու ծոցում մեծ հեղինակություն վայելող մեկն է: Դա ամենեւին չի նշանակում, որ Հայոց եկեղեցին այդ թվականներին արդեն պաշտոնապես դեմ էր դուրս եկել⁴¹ Քաղկեդոնին. նա այդ բանը կանի Դվինի Բ ժողովի ժամանակ: Սակայն այդ բանի նախանշանները ինչ-որ չափով արդեն սկսվում էին ուրվագծվել: Փաստորեն, Բարգենի երկրորդ նամակից սկսած՝ բացահայտվում է հայերի հարելը Հենոտիկոնին եւ նրանց տակավ հակումը դեպի հակաքաղկեդոնականություն: Այդ տեսակետից, եթե Պետրոսի նամակը թվագրվում է 5-րդ դարով, ապա այն դառնում է արժեքավոր մի օղակ դարավերջում Հայոց եկեղեցու վարդապետության դեպի հենոտիկյան դիրքորոշումը զարգացման, որով այդ վարդապետությունը պարզորեն բնորոշվում է 6-րդ դարի արշալույսին:

գ) Մեր ունեցած տվյալների վերակազմավորման փորձ

Հասնելով այստեղ եւ հաշվի առնելով ձեռք բերած մեր բոլոր տվյալները, կարծում ենք, որ Դվինի Բ ժողովի ընթացքում արված թարգմանությանը վերաբերող վկայությունները հնարավորություն են տալիս առաջ քաշելու ավելի քան մեկ վարկած:

1. Խոսքը վերաբերում է ժողովի Հայրերի անմիջական պահանջների համար կատարված մասնակի կամ ամբողջական թարգմանություններին, որոնք միգուցե արվել էին հենց ասորերեն բնագրից, քանի որ այդ գրվածքները բերել եւ ներկայացրել էր ասորի Աբդիշոն, մինչդեռ Տիմոթեոսի այն թարգմանությունը, որը մենք ունենք այսօր, ենթադրում է, իհարկե, հունարեն բնագիր: Միգուցե չի կարելի բացառել նաեւ, որ խնդրո առարկա ստեղծագործությունների հանպատրաստից արված թարգմանությունները կամ դրանցից մի քանիսը մեզ չեն հասել:

2. Քանի որ Հայրերը արդեն ծանոթացել եւ գնահատել էին Տիմոթեոսի ստեղծագործությունը, ապա դրա՝ արդեն գոյություն ունեցող թարգմանությունը պաշտոնապես ներկայացվել եւ հավանության է արժանացել՝ «մեկնաբանվել», «բացատրվել», «կանոնացվել» է ժողովի կողմից: Վերը հիշատակված աղբյուրներում տրված ժողովի ընդունված փաստաթղթերի հակիրճ եւ ընդհանրացված նկարագրություններում, «նրանք թարգմանեցին» արտահայտությունը նույն հաջողությամբ, մեր կարծիքով, կարող է նշանակել՝ «նրանք բացատրեցին, մեկնաբանեցին, հավանություն տվեցին եւ հանրությանը ներկայացրեցին թարգմանությունը»:

Արսեն Սափարացու շարադրանքը կարծես թե հաստատում է այս վարկածը. նա ասում է՝ «*da masve c'els ganacxades c'igni igi targmnilil T'imotes da Pilakson mc'valebeltani*»⁴²: Ժ. Գարիտը այսպես է թարգմանել այս տեքստը. «Եվ նույն տարում նրանք մեկնաբանեցին հերձվածողներ Տիմոթեոսի եւ Փիլոքսենեսի գրքի թարգմանությունը» (*La Narratio*, նշված ծան. 31-ում, էջ 133): Սա շատ ճիշտ թարգմանություն է, շնայած այն բանին, որ *ganacxades* բայի միտքը ավելի լավ կարտահայտվեր, եթե թարգմանված լիներ որպես «հանրությանը հանձնեցին, լույս ընծայեցին»: Եվ դժվար է բացատրել, թե ինչու է հենց ինքը՝ Գարիտը, իր ծանոթագրության մեջ հրաժարվում տեքստում տված իր վարկածից, այս անգամ *ganacxades*-ը որպես «թարգմանեցին» մեկնաբանելով եւ այդպիսով դժվար կացության մեջ է հայտնվում եւ ստիպված է լինում *t'argmnilil* ածական դերբայը արտահայտել «բացատրական, մեկնաբանական» մակդիրների միջոցով, հետեւելով Մելիքսեթ-Բեկին, նույնաբանությունից խուսափելու համար, սակայն

հարցական նշանով (նույն տեղը, ծան. 2 եւ 3): Իսկ վերջինս, որը ընդհակառակը, շատ լավ է թարգմանել *ganacxades* բայը «երեւան հանեցին» արտահայտությամբ⁴³, հետո շատ տարօրինակ կերպով, մեկնողական ածականը գերադասել է թարգմանել⁴⁴ ածական դերբային: Ուստի, եթե մենք ընդունում ենք *ganacxades* բայի սկզբնական՝ «երեւան հանել» իմաստը (մեկնաբանություն, որն ավելի կապակցված է հասկանալի է դարձնում նախադասության դինամիկան), ապա Արսենի տեքստը, իր հերթին, գալիս է, շնայած եւ ուշացումով, ավելացնելու մեկ վկայություն եւս այն վարկածի օգտին, որի համաձայն Դվինի Բ. Ժողովի ժամանակաշրջանում Տիմոթեոս Կուզի Հակաճառությունը արդեն թարգմանված էր հայերեն: Արսենի դիրքորոշումը, որն ավելի երանգավորված է, քան հիմնական աղբյուրը՝ Դիեգեսիսը, կարող է բացատրվել անհայտ կամ դեռեւս չբացահայտված մի աղբյուրով, որի լույսի ներքո նա փորձում է մեկնաբանել իր հիմնական աղբյուրը:

Ավելացնենք, որ այստեղ առաջարկված երկու վարկածները, որ մենք առաջ քաշեցինք որպես հնարավոր եւ համատեքստին համապատասխանող մեկնաբանություններ, ձգտելով բացատրել եւ տրամաբանորեն վերադասավորել ու վերհամադրել տարբեր աստիճանի արժանահավատություններ կայացնող իրարից զարտուղող վկայությունները, միմյանց հանդեպ իրարամերժ այլընտրանքի մեջ չեն գտնվում: Փաստորեն շատ հնարավոր է, որ Արգիշտյի կողմից Տիմոթեոսի եւ Փիլոքսենեսի տեքստերը ներկայացնելուց անմիջապես հետո, հայերը ձեռնամուխ են եղել դրանց մասնակի եւ հատվածական թարգմանությանը, իսկ հետագայում «բացահայտել» կամ «երեւան» են «հանել» գոյություն ունեցող ամբողջական թարգմանությունը, որը միգուցե խմբագրվել է վերջնականապես «կանոնացվելու» համար:

Չնայած ժամանակակից աղբյուրների սղությունը եւ դրանց մեկնաբանական երկկողմնակիությունը, որոնք դժվարացնում են մեկնաբանական որեւէ վարկածի ստուգությանը վերածվելուն, այնուամենայնիվ, մենք կարծում ենք, որ այստեղ առաջարկված վարկածները հնարավորություն են տալիս խնդիրը միասնական կերպով ընկալելու եւ բավականաչափ կապակցված լուծում տալու փորձ կատարելու համար, որը հաշվի է առնում տարբեր տվյալները իրենց ճիշտ համամասնության մեջ: Փաստորեն, Հակաճառության թարգմանության մեջ զետեղված պարզորոշ վկայությունը, որի մեկնաբանությունը գրեթե վստահություն է ներշնչում, եւ որը հաստատվում է Պետրոսի նամակով, նույնիսկ այն դեպքում, եթե դա պարականոն գրվածք է, չի կարող, մեթոդաբանական տեսակետից, զոհաբերվել պակաս պարզորոշ վկայություններին, որոնք, ամեն դեպքում, կարող են մեկնաբանվել տեքստի թարգմանության մեջ պահպանված ժամանակագրական հիշատակարանին

համապատասխան, առանց դրանց մեջ քիչ թե շատ կամայական ուղղումներ եւ ձեւափոխություններ կատարելու:

Բ. Վասակ Մամիկոնյանի հիշատակության հետեւանքով առաջացած խնդիրը

Վերջին դիտողությունը, որը մենք պետք է հաշվի առնենք, վերաբերում է Վասակ Մամիկոնյանի հիշատակությանը, որին Եղիշեն անվանում է «սպարապետ ստորին Հայոց եւ հաւատարիմ զօրացն Հոռովմոց ի սահմանին Պարսից» (Պատմ. Գ.): Հարցը առաջ է քաշվել Ադոնցի կողմից, նրա «Арменія въ эпоху Юстиниана»⁴⁵ հիմնարար աշխատության կարճ մի ծանոթագրության մեջ, հետեւաբար գրեթե հպանցիկ կերպով: Այս դիտողությունը որոշակի կարեւորություն ունի այն պատճառով, որ այն հաճախ է վկայակոչվել Եղիշեին վերաբերող վեճերում: Ադոնցը կարծում է, որ «ստորին Հայք» արտահայտությունը մատնանշում է Հայաստանի հարավային գավառները, որոնք անվանվում էին սատրապություններ կամ *gentes*: Բյուզանդական այդ գավառներում մինչեւ 529 թ. Հուստինիանոսի վարչական կարգափոխությունը զորք, որպես այդպիսին, չէր պահվում: Սակայն, Եղիշեի տեղեկության եւ նախորդող իրավիճակի անհամապատասխանությունը ցուցադրելու համար ավելի կարեւոր է այն, որ Ադոնցը, հիշատակված ծանոթագրության մեջ ավելացնում է, որ 529 թ. Հուստինիանոսը «առաջին անգամը լինելով Հայաստանի համար մի սպարապետ (ստրատեգ) նշանակեց եւ երեք դուքսեր (*duces*), որոնք ենթակա էին նրան»:

Այս դիտողությանը Աբեղյանի տված պատասխանը, ինչպես մեզ թվում է, մինչեւ օրս էլ պահպանում է իր արժեքը: Այստեղ մենք վերարտադրում ենք Աբեղյանի պատասխանի էությունը: Աբեղյանը իր պատասխանը կառուցում է ելնելով գրեթե *ad hominem* փաստարկից: Փաստորեն, այդ ծանոթագրությանը նախորդող եւ հաջորդող էջերում (էջ 118, 131, 139) Ադոնցը բազմիցս հաստատում է 529 թ. առաջ «Հայաստանի դուքս» (*dux Armeniae*) տիտղոսը կրող մի իշխանավորի գոյությունը, որի նստավայրն էր Մելիտինե քաղաքը՝ Երկրորդ Հայքում: Իհարկե, անպայման չէ, որ ստորին Հայքը Երկրորդ Հայք նշանակի: Սակայն չկա նաեւ ոչ մի ապացույց, որ դա սատրապություն լինի: Ընդհակառակը, Կորյունի մոտ նույնպես մենք հանդիպում ենք Եղիշեի հիշատակած պաշտոնի նման մի պաշտոն, գրեթե նույն անվանումով «սպարապետ», փոխարեն «սպարապետ»ի, եւ այդ պաշտոնյան նստում է «կէս

ազգին Հայոց» շրջանում: Ուստի չենք տեսնում եւ ոչ մի պատճառ, որպեսզի Նդիշեի հիշատակած պաշտոնը չհամապատասխաներ Կորյունի հիշատակած պաշտոնին: Հատկապես, որ ստորինը չափազանց ընդհանուր, ոչ մի իրավաբանական պարունակություն չունեցող ածական է, որն ընդամենը նշում է աշխարհագրական կողմնորոշում:

Գ. Նդիշեն եւ քաղկեդոնյան վեճը

Եթե գոյություն ունի մի հարց, որում մեր հեղինակի ուսումնասիրողները, եթե կարելի է այսպես արտահայտվել, համամիտ են, ապա այն է, որ Նդիշեի Պատմության մեջ չեն արտացոլվում քաղկեդոնյան վեճերը, ինչպես եւ ավանդույթյամբ նրան վերագրվող ստեղծագործությունների ամբողջության մեջ: Կառարկե՞ն մեզ արդյոք, որ դա նույնպես լուծյան փաստարկ է: Հավանաբար, այո, եթե ցանկանան. սակայն այս լուծյունը էապես այլ բովանդակություն ունի: Եվ իսկապես, «լուծյունը» այս դեպքում վերածվում է պերճախոս մի փաստարկի՝ ի հետսագունե ճշտված մի փաստի շնորհիվ. 7-9-րդ դարերի միջև ապրած եւ քիչ թե շատ նշանակալից ոչ մի հայ հեղինակ չի խուսափում քաղկեդոնյան քրիստոսաբանության հանդեպ իր մտքերի դիրքորոշմանը մեջ վերձանված լինելու հնարավորությունից: Սակայն Նդիշեն, ինչպես եւ Խորենացին, Ղազարը կամ Ագաթանգեղոսի հայերեն տարբերակը խույս են տալիս դրանից, բացառությամբ քիչ թե շատ վիճելի, քիչ թե շատ հաջողված հետեւությունների, որ կարելի է անել, օրինակ, Խորենացու վերաբերյալ, ինչպիսին է Մալխասյանցի կատարած հայտնի փորձը: Առեղծվածն իր լուծումն է գտնում, եթե առաջին երկու հեղինակներին մենք տեղադրենք 5-րդ դարի երկրորդ կեսում: Դա Հայոց Եկեղեցու դեռեւս «նախաքաղկեդոնյան» շրջանն է, երբ նրա ամենանշանակալից եւ ամենից իմաստուն ներկայացուցիչները, հետեւելով իրենց նախորդների եւ մասնավորապես Սահակի ու Մեսրոպի ավանդույթներին, միջեկեղեցական հարաբերություններում ձեռնպահ էին մնում քաղկեդոնյան վեճերի հորձանուտի մեջ անվերապահորեն նետվելու գայթակղությունից. մի վեճ, որը ծվատում էր Կայսրությունը:

Այն, ինչ մենք ասացինք այստեղ, չի հակասում Տիմոթեոս Կուզի թարգմանության վերաբերյալ մեր դիրքորոշմանը: Ինչպես արդեն նշել ենք, այդ աշխատության թարգմանությունը, եթե նույնիսկ այն կատարվել է Հայոց Եկեղեցու այդ ժամանակաշրջանի բարձրաստիճան պաշտոնյայի հովանավորության ներքո, դեռեւս պաշտոնական դիրքորոշման որդեգրում եւ առավել եւս Հայոց Եկեղեցու Քաղկեդոնի դեմ ուժգին ներգրավումը չէր նշանակում:

Այս երկու հանգամանքները շատ կարեւոր են. հանգամանքներ, որոնք, ընդհակառակը, Դվինի Բ. Ժողովից հետո կրնորոշեն Հայոց եկեղեցու դիրքորոշումը: Այն դեղեկոտությունը, որով Քաղկեդոնն իր առաջին, որոշակի մուտքն է կատարում հայ գրականության մեջ Բարգեն Կաթողիկոսի մոտ 508 թ. գրած երկրորդ նամակով, բավարար սպասկերացում է տալիս մեր ասածի մասին: Անկասկած, մենք կարող էինք 5-6-րդ դարերի սահմանագծում ունենալ Հայոց եկեղեցու ներքին իրավիճակի ավելի պարզ պատկերը, եթե մեզ հաջողվեր վերծանել Բարգենի հիշյալ նամակից քիչ ավելի վաղ գրված Ղազարի նամակի բազմաթիվ խորհրդավոր ակնարկները: Ինչ էլ որ լինի, հաստատ է այն, որ խոսքը վերաբերում է մի ժամանակաշրջանի, երբ մենք չենք արձանագրում Հայոց եկեղեցու⁴⁷ կողմից Քաղկեդոնին միանալու եւ ոչ մի արտահայտություն կամ որոշակի նշաններ եւ, միեւնույն ժամանակ, չենք արձանագրում նաեւ Քաղկեդոնի դեմ ուղղված կրքոտ, կատաղի արտահայտություններ, ոչ էլ մեկ կամ մյուս կողմին հարող խմբակցություններ, որոնք ներգրավված լինեին բուռն բանավեճերի մեջ: Գերակշռում է հանդարտությունը գոնե արտաքնապես, նույնիսկ եթե այդ հանդարտությունը չի բացառում ապագա ընդհարումների օջախների դանդաղ եւ հարաճուն սաղմնավորումը:

Եղիշեի մոտ քաղկեդոնյան վեճերի հետքերի բացակայությունը արձանագրելով, մենք պետք է դրան ավելացնենք նաեւ նրա ուժեղ հունասիրությունը: Իրականում, այդ վաղ ժամանակաշրջանի համար շատ կարեւոր է հստակորեն տարբերակել հակաբյուզանդական կամ հակահունական զգացմունքները, որպես այդպիսիք, հակաքաղկեդոնյան քրիստոսաբանությունից: Եթե վերջինը իրեն զգացնել է տալիս Բարգեն Կաթողիկոսի հայրապետության (506-508) օրոք կայացած Դվինի ժողովից սկսած, ապա հայերի «սաշտոնական» հակաբյուզանդականության մասին խոսելու համար անհրաժեշտ կլինի սպասել մինչեւ 6-րդ դարի 50-ական թվականներին տեղի ունեցած Դվինի ժողովը, որից հետո միայն այդ երկու դիրքորոշումները համընկնում են⁴⁸: Ինքնին հասկանալի է, որ այն ամենը, ինչ մենք հենց նոր ասացինք, ամենեւին չի նշանակում բոլոր կապերի խզում բյուզանդական աշխարհի հետ, ոչ էլ կույր ատելություն, այլ պարզապես ինքնաբուխ համակրանքի գրեթե նախի եւ ուտոպիկ դիրքորոշման (որը մենք, տարբեր շեշտադրումներով եւ երանգներով, տեսնում ենք, օրինակ, Ղազարի, Եղիշեի, Խորենացու մոտ) փոփոխություն դեպի կանխակալ անվստահության դիրքորոշումը, որը, այնուամենայնիվ, չի կարողանա հաճախ խոչընդոտել անկեղծ հիացմունքի զգացման սաղմնավորմանը եւ այդ զգացմունքի առաջացրած հետեւանքներին: Անանիա Շիրակացին իր վճռական հակաքաղկեդոնականությանը եւ հակաբյուզանդական բանավեճով մի կողմից, իսկ մյուս կողմից հունական գիտության հանդեպ

իր գրեթե խանդազանց հիացմունքով կարող է խորհրդանշական օրինակ հանդիսանալ պարզաբանելու համար այն միտքը, որ մենք ցանկանում էինք ձեւակերպել: Եղիշեի հունասիրությունը էլ ավելի նշանակալից է թվում նրանից հետո, որ նա չի վարանում, ի դեմս Վարդանանց պատերազմի նախօրեին բյուզանդացիների «դավաճանություն» եւ հակառակ իր գրչի սովորական մեղմությունը, Մարկիանոս կայսեր խորհրդականներին ամենից անպատվիչ պարսավանքով մեղադրելու՝ նրանց կոչելով «անաստվածներ», իսկ իրեն՝ Մարկիանոսին, «փոքրոգի» անվանելու (Պատմ. Գ.)⁴⁹:

Մեր արած դատողությունը չի հենվում պարզապես որոշակի պատմական կամ գաղափարախոսական համատեքստի վրա, որի թելադրանքներն անպայման ունեն առավելաբար ցուցանշային արժեք: Մեր կողմից հենց նոր հիշատակած պատմա-կրոնական իրավիճակը դարեր շարունակ եղել է հայերի *forma mentis*-ը (մտածելակերպը) եւ վարվելակերպը, որից հեռանում էին հատկապես հայ քաղկեդոնականները եւ Կիլիկյան թագավորության ազնվականության որոշ շրջանակները, որոնց, ինչ-որ տեսակետից, մենք կարող ենք կցել Բյուզանդիայի հետ քաղաքական «կոլաբորացիոնիստներին» օրինակ Բագրատունյաց թագավորության հոգեվարքի ժամանակ: Ուստի, ցանկանում ենք ուղղել այն, ինչ գրել ենք տասը տարի առաջ (կամ միգուցե ճշգրտել դրա իմաստը) այն հնարավոր եզրահանգումների կապակցությամբ, որոնք կարելի է անել խորենացու հունասիրության վերաբերյալ՝ ազուցելով այն «քաղկեդոնյան վեճի հետքերի բացակայության» հետ. «Ինքնին հասկանալի է, որ բոլոր նման դատողությունները ունեն ընդամենը ցուցանշային արժեք: Ահա թե ինչու մենք խոսում ենք հավանականության եւ հնարավորության տերմիններով: Փաստորեն պատմական եւ գաղափարական համատեքստերի հիշատակությունը չի կարող կատարյալ չափանիշ հանդիսանալ, որը կբացառեր ցանկացած այլ հնարավորություն»⁵⁰: Արդ, նախ եւ առաջ, ակնհայտ է, որ բանասիրության կամ պատմության ասպարեզում խոսել «կատարյալ չափանիշի» մասին, «որը բացառում է այլ հնարավորություն», կարելի է միայն առավել բարոյական ստուգության սահմաններում, մինչդեռ վիճարկվող եւ վիճահարույց հարցերում, անկասկած, նույնիսկ այդ բնույթի ստուգությունը չի կարող գոյություն ունենալ: Մենք համամիտ ենք բոլոր նրանց հետ, ովքեր խոհեմաբար նախազգուշացնում էին, որ «մենք ոչինչ չենք շահի, եթե սկսենք կամայական կերպով լուծել այն հարցերը, որոնք դեռ չեն հասունացել»⁵¹: Մյուս կողմից էլ համարում ենք, որ եթե հիշատակվում է ոչ թե ինչ-որ պատմական կամ գաղափարական համատեքստ, այլ խոսքը վերաբերում է դարեր շարունակ հանդես եկող հաստատուն մի դիրքորոշման, ապա այդ դեպքում մենք գործ ունենք մի փաստարկի հետ, որն այլեւս

պարզապես ցուցանշային չէ, այլ ընդհակառակը, այն իրենից ներկայացնում է, բառի բուն իմաստով, պատմական մի փաստարկ այնքանով, որքանով նման մի փաստարկը կարող է ստուգություններ առաջ բերել երկար ժամանակ քննարկվող հարցերում, մինչ դրանց «հասունանալը»: Եվ վերջապես, պետք չէ մոռանալ այն սկզբունքը, որը մենք հիշատակեցինք վերը, եւ որի էությունն այն է, որ պատմական կամ բանասիրական բնույթի փաստերը առավել համոզմունքի ուժ են ձեռք բերում այն ժամանակ, երբ դրանք ներգծված են լինում փաստարկների ամբողջության տրամաբանական դինամիկայի մեջ, եւ այդ փաստարկները փոխադարձաբար միմյանց լրացնում եւ սատարում են:

III. ԵՂԻՇԵԻՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ԳՐԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂ-ՋՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մեր ուսումնասիրության առաջին մասում մենք, հիմնականում, անդրադարձել ենք Եղիշեի Պատմությանը եւ, հատկապես, արդի քննադատական մտքի կողմից վեր հանված պատմական բնույթի այն դժվարություններին, որոնք խոչընդոտում են այդ ստեղծագործությունը 5-րդ դարին վերագրելուն, ինչպես նաեւ այն լուծումներին, որոնք կարող է հուշել ավելի խորացված ուսումնասիրությունը՝ այդ դժվարությունները հաղթահարելու համար: Մեր հետազոտությունը մեզ բերել է այն համոզմանը, որ այդ կապակցությամբ առաջ քաշված դիտողությունները ոչ միայն անլուծելի չեն, այլեւ գոյություն ունեն բազմաթիվ պատմական ցուցմունքներ, որոնք պահանջում են, որ այդ Պատմությունը տեղադրվի այն ժամանակաշրջանում, ուր ավանդությունը այն տեղադրել է:

Երկրորդ մասում փորձել ենք պատասխանել ավելի ուշ առաջ քաշված դիտողություններին, որոնք մշակվել են հատկապես լեզվաբանական եւ բանասիրական տվյալների հիման վրա: Մենք հատկապես մեր ուշադրությունը կենտրոնացրել ենք այն դիտողությունների վրա, որոնք առաջ են քաշվել հունարան դպրոցի սկզբնավորման եւ գործունեության կապակցությամբ եւ եկել այն եզրակացության, որ դպրոցի սկզբնավորման ուշ թվագրման օգտին առաջ քաշված փաստարկներից եւ ոչ մեկը, կարծես թե, բավարար հիմքեր չունի: Հակառակը, գոյություն ունի ծանրակշիռ փաստարկների մի շարք, այդ դպրոցի սկզբնավորումը առնվազն 5-րդ դարի վերջին քառորդով թվագրելու համար: Ավելին, մենք կարողացել ենք վեր հանել մեկից ավելի տարբեր կարգի նշաններ, որոնք հուշում կամ պահանջում են ավելի վաղ թվագրում:

Այս՝ երրորդ մասում, մենք կքննարկենք Եղիշեի ստեղծագործության ամբողջականությունը, որպեսզի կարողանանք պարզել, թե Պատմության

վերաբերյալ արված հետեւությունները կարող են արդյոք վերաբերել նույն հեղինակին վերագրվող գրվածքներին եւ որքանով:

Եղիշեի ստեղծագործության ամբողջության միասնականությունը բխում է հատկանիշների կրկնակի շարքից, որոնցից մի քանիսը վերաբերում են լեզվին եւ ոճին, իսկ մնացածները՝ բովանդակությանը:

Եղիշեի ստեղծագործության ամբողջությունն ասելով, նկատի ունենք Եղիշեին կամ Պատմության հեղինակին ավանդաբար վերագրվող ստեղծագործությունները: Իրանք հիմնականում հավաքված են «Սրբոյ Հօրն մերոյ Եղիշէի Վարդապետի Մատենագրութիւնք ըստ ընտրելագոյն ընթերցուածոց գրչագրաց»-ում, Սբ. Ղազար, Վենետիկ, 1859² (1838թ. առաջին հրատարակությունը ավելի բարակ է): Այս ժողովածուի լույս տեսնելուց հետո հրատարակվել են նաեւ այլ գրվածքներ, որոնք վերագրվում են Պատմության հեղինակին կամ ոմն Եղիշեի: Ահա այդ գրվածքներից կարեւորագույնները⁵².

ա) Եղիշէ Վարդապետ, Հարցմունք եւ Պատասխանիք ի Գիրս Ծննդոց-թարգմանվել եւ հրատարակվել է ՀՀ. Ն. Ակինյանի եւ Ս. Կոզյանի կողմից, Վիեննա, 1928: Հետագայում, իր Եղիշե Վարդապետ (ծան. 3) աշխատության 3-րդ հատորում Ակինյանը հրաժարվել է այդ վերագրումից եւ այդ ստեղծագործությունը դասել անհավաստի գրվածքների շարքը (էջ 451-458): Դեռեւս 1945 թ. Լ. Խաչիկյանը, հետմահու հրատարակված մի աշխատության մեջ (տես վարը, բ), համոզիչ կերպով ապացուցել է, որ այդ Հարցմունք-ը, ամենայն հավանականությամբ, ավելի ուշ գրված ստեղծագործություն է եւ ոչ մի դեպքում չի կարող պատկանել Արարածոց Մեկնութիւն-ի հատվածների հեղինակի գրչին (էջ 22-26). մինչդեռ, վերջինիս կապակցությամբ բերելով ծանրակշիռ փաստարկներ, նա ապացուցում է, որ խոսքը վերաբերում է Պատմության հեղինակին:

բ) Ծննդոց գրքի մեկնության հատվածներ, որոնք հրատարակված են Եղիշէի «Արարածոց Մեկնութիւնը» վերնագրով: Սա Լեւոն Խաչիկյանի աշխատությունն է, որը հրատարակվել է հետմահու՝ 1992 թ., Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմից, մինչդեռ այն գրվել է 1945 թ. եւ ձեռագիր վիճակում շրջանառության մեջ է եղել Մատենադարանին մոտ բանասիրական շրջանակներում: Այդ սեղմ, սակայն իր բովանդակությամբ աչքի ընկնող աշխատության մեջ Խաչիկյանը հավաքել է մեծ մեկնաբանական եւ աստվածաբանական արժեք ներկայացնող այդ կորած ստեղծագործության հայտնի հատվածները, դրանք ուղեկցելով ձեռագիր ավանդությանը, գրական աղբյուրներին, հայ գրականության վրա այդ ստեղծագործության թողած ազդեցությանը, վերագրմանը եւ թվագրմանը վերաբերող մանրակրկիտ քննական վերլուծությամբ: Խաչիկյանի կարծիքով, ինչպես արդեն նշել ենք, այդ ստեղծագործության հեղինակը այն

անձնավորությունն է, ով ստեղծել է «Վասն Վարդանայ եւ Պատերազմին Հայոց»-ը ու հայտնի է Եղիշե Վարդապետ անվան տակ (էջ 108-113) եւ պետք է տեղագրվի 5-րդ դարում (էջ 150-167): Մենք ավելի կխորացնենք թվագրման հարցը. ինչ վերաբերում է Պատմության եւ Արարածոց Մեկնության հեղինակի ընդհանրության հարցին, ապա, ինչպես արդեն ասել ենք, Խաչիկյանի ներկայացրած փաստերը մեզ լիովին բավարար են թվում: Մենք ընդամենը մի քանի ճշգրտումներ կանենք այն բառերի վերաբերյալ, որոնք, Խաչիկյանի կարծիքով, օգտագործում է միայն Եղիշեն (էջ 112):

Ա. Եղիշեի ստեղծագործության ամբողջության որոշ լեզվաբանական եւ ոճական առանձնահատկություններ

Եղիշեի ստեղծագործության ամբողջությունը, նախ եւ առաջ, առանձնանում է մի շարք լեզվաբանական եւ ոճական առանձնահատկություններով: Մենք նույնիսկ կարող ենք ասել, որ այդ գրվածքների հեղինակը, որին, պարզապես հարմարության համար, առայժմ կարող ենք Եղիշե անվանել, հանդիսանում է հայ հին գրականության համայնապատկերում լեզվի եւ ոճի, ինչպես նաեւ գաղափարների եւ բովանդակության տեսակետից ամենավառ անհատականությամբ օժտված հեղինակներից մեկը:

I. Եղիշեի գրվածքների աչքի ընկնող առանձնահատկություններից է, ի դեպ հենց առաջին հայացքից, *hapax legomena*-յի (մեկ անգամ ասված) եւ, հատկապես, հազվադեպ, նույնիսկ չափազանց հազվադեպ օգտագործվող բառերի հաճախականությունը:

Ըստ նոր Հայկազեան բառարանի՝ ճշգրիտ իմաստով *hapax*-ների շարքում հիշատակենք հետեւյալները. ապարթանեմ (Պատմ. Ա.), առստուերագիր (Պատմ. Բ.), անդաճեմ/ընդաճեմ (Պատմ. Գ., Բ.), բարակ (Պատմ. Ը.) (4), գիշաքարշ (Պատմ. Ա.), գոմէզ/գումէզ (Պատմ. Բ.), դեհպետ կամ դեհապետ, դեհեպետ (Պատմ. Բ.), մարձիկ (Պատմ. Ա.), փանդուրակ կամ փակդուրակ (Պատմ. Բ.), փուրսիշ (Պատմ. Է.), տհալ (Բան խրատու առ միանձունս):

Հազվադեպ կամ չափազանց հազվադեպ բառերի շարքում հիշատակենք հետեւյալները. նուազ (Պատմ. Ը.) գավաթ իմաստով, պնդադեսպան (Պատմ. Ա.), ռատ (Պատմ. Ը.), տեսաւորութիւն (Պատմ. Բ., ի Մկրտութիւնն Քրիստոսի, ի Քարոզ. Առաք.) տեսիլք իմաստով (*visus, ὄρασις*), փքումն (Պատմ. Բ.), քաղէութիւն (Պատմ. Բ.), այլակութիւն (առ Միանձունս), մրգուզ (առ Միանձունս), դուղակ (առ Միանձունս) թաքցնել իմաստով:

Նոր Հայկազեան-ում բացակայող, սակայն Առձեռն-ում առկա բառերի շարքում հիշատակենք աշկարայ (Պատմ. Բ.) բառը:

ել վերջապես, որոշ քանակությամբ բառեր չկան ոչ Նոր Հայկազեանում, ոչ էլ Առձեռն-ում: Դրանցից են՝ մայպետ (Պատմ. Ը.), վայրատիմ (Պատմ. Ա.):

Սրանց մենք կարող ենք ավելացնել հազվադեպ օգտագործվող 12 բառերի ցուցակ, որը կազմել է Խաչիկյանը՝ վերը հիշատակված իր աշխատության մեջ (էջ 112): Այս բառերը հանդիպում են ինչպես Արարածոց Մեկնութիւն-ում, այնպես էլ Նղիշեի ստեղծագործության ամբողջության մի քանի այլ գրվածքներում եւ: Ճիշտն ասած, այս ցուցակը Խաչիկյանը ներկայացնում է որպես բացառապես Նղիշեի ստեղծագործության ամբողջությանը պատկանող բառերի ցուցակ: Հեղինակը հայտարարում է, որ ինքը հիմնվում է Նոր Հայկազեան-ի վրա: Հավանաբար, նա ժամանակ չի ունեցել ստուգելու կամ հետազայում ճշգրտելու իր պնդումը, քանի որ վերջինս իրավացի է, սեղմ առումով, նշված բառերից միայն մի քանիսի վերաբերյալ: Այնուամենայնիվ, ճիշտ է այն, որ գրեթե միշտ խոսքը հազվադեպ օգտագործվող բառերի մասին է, բացառությամբ «կենդանածնիմ», «հրձգութիւն», «վայրաբեր» եւ «պատ առնում» բառերի, որոնք հաճախ են հանդիպում տարբեր հեղինակների մոտ, կամ որոնք դժվար է որակել որպես հազվագյուտ օգտագործվող բառեր:

Խաչիկյանի առաջարկած ցուցակում մենք կարող ենք գտնել երկու բառ, որոնք պատկանում են տարամերժորեն Նղիշեի ստեղծագործությանը. ձրձիտ (Արարածոց Մեկն., Մեկն. Յեսուայ եւ Դատաւորաց), տեռեմ (Պատմ. Ը., Արարածոց Մեկն.): Մնացած բոլոր հազվադեպ օգտագործվող բառերը, որոնք վերցված են Արարածոց Մեկնութիւն-ից եւ Նղիշեի ստեղծագործության ամբողջության այլ գրվածքներից, հետեւյալներն են. ազատորդի (Պատմ. Ա.), անծախական (Պատմ. Բ.), կաթնածուծ (յԱղօթսն որ ասէ՛ Հայր մեր որ յերկինս), վայրավատիմ (Պատմ. Ա.), հրային (Պատմ. Ը.), պատկանդարան (Պատմ. Ա.): Վերջին երկու բառերը կարող են հազվադեպ համարվել մոտավորապես մինչեւ 9-րդ դարը:

Ինչպես ասում է Խաչիկյանը, կարելի է շարունակել այս ցուցակը եւ հեշտությամբ կրկնապատկել դիտարկված օրինակները: Դրանից բացի մենք շատ լավ գիտակցում ենք, որ բառապաշարային հաճախականության եւ բնութագրերի սպառիչ պատկերը կարելի կլինի ստանալ միայն համաբարբառների օգնությամբ: Սակայն այն հնարավորությունը, որ, ինչ-որ մի առանձնահատուկ դեպքում, մանրակրկիտ ուսումնասիրության հետեւանքով հազվադեպ կամ ծայրաստիճան հազվադեպ օգտագործվող բառերի շարքը դասված մի տերմին հետազայում կարող է ի հայտ գալ որպես առօրեական կիրառության մի բառ, չափազանց սահմանափակ է: Այսպիսով հարաժ-ը կարող է վերադասվել

հազվագեյ կամ ծայրաստիճան հազվագեյ օգտագործվող տերմինների շարքը, սակայն այս դեպքում եւս այն հավանականությունը, որ այդ բառը կարող է դառնալ խոսակցական լեզվի բառույթ, հավասար է գրեթե զրոյի, եթե հաշվի առնենք նաեւ հին հայերենով եւ գրականությամբ երկար ժամանակ զբաղված մարդկանց բառապաշարային հիշողությունը: Ուստի մենք կարծում ենք, որ նկատի առնված օրինակները բավարար են մի քանի դիտարկումներ անելու եւ դրանցից հետեւություններ քաղելու համար: Ահա այդ հետեւությունները.

ա) Եղիշեի *հարաք*-ների եւ հազվագեյ օգտագործվող բառերի գերակշռող մեծամասնությունը, եթե ոչ ամբողջությունը, իրանական փոխառություններ են եւ դրանց զգալի մասը տեխնիկական բառեր են, որոնք վերաբերում են պաշտամունքին եւ վարչարարությանը:

բ) ներկա բառապաշարային ուսումնասիրությունը ընթացքի մեջ է: Սակայն մենք կարծում ենք, որ կարելի է պնդել, որ գոյություն ունի հազվագեյ կամ ծայրաստիճան հազվագեյ օգտագործվող բառերի որոշակի քանակ, որոնք ընդհանուր են Պատմության եւ Եղիշեի ստեղծագործության ամբողջության որոշ գրվածքների համար: Բացի դրանից, ինչպես մենք հենց նոր ասացինք, դրանք առանձնանում են բոլորի համար ընդհանուր մի բնութագրով. գրեթե միշտ իրանական ծագում ունեցող *հարաք*-ների եւ հազվագեյ, նույնիսկ ծայրաստիճան հազվագեյ օգտագործվող բառերի սովորականից հաճախակի օգտագործումը:

գ) Ինչ վերաբերում է *հարաք*-ներին հաշորդող բառույթների շարքին, ապա մեր արձանագրած ինը հազվագեյ օգտագործվող բառերից վերջին վեցը ընդհանուր են Եղիշեի ստեղծագործության ամբողջության, ինչպես նաեւ Փիլոնի հայերեն թարգմանված աշխատությունների համար: Հաշվի առնելով այդ բառերի հազվագեյությունը, նման ընդհանրությունը, անկասկած, շատ ծանրակշիռ նշան է հանդիսանում ոչ միայն պարզապես բառապաշարային մերձավորության, այլ նույնիսկ ավելի սերտ կապի Փիլոնի հայերեն հատվածների (լինեն դրանք վավերական, թե ոչ) եւ Եղիշեի ստեղծագործության ամբողջության կամ գոնե Պատմության եւ Բան խրատու առ միանձունս-ի միջեւ: Փաստորեն վերջին ստեղծագործությունը միշտ էլ համարվել է Պատմության հեղինակի գրչին պատկանող ստեղծագործություն: Մենք կարող ենք այդ ցանկին ավելացնել «հրձգութիւն» բառը, որը հիշատակվել է հետագայում. այս բառը, որն ըստ Խաչիկյանի, օգտագործում է միայն Եղիշեն, իրականում հանդիպում է Փիլոնի թարգմանության մեջ եւ, բացի դրանից, Գիրք Պիտոյից-ում եւ Թովմա Արժրունու մոտ: Ինչ վերաբերում է վերջինիս, ապա կարիք չկա այստեղ հիշատակելու նրա մտավոր եւ հոգեւոր կապերը Եղիշեի հետ:

Իսկ ինչ վերաբերում է դարձյալ Փիլոնի հայերեն թարգմանությանը, ապա Եղիշեի Արարածոց Մեկնութիւն-ը, ըստ Խաչիկյանի, պարունակում է ավելի քան իննսուն բառ, որոնք հաճախ են հանդիպում Փիլոնի ստեղծագործության մեջ (նույն տեղում, էջ 135):

դ) նուազ բառը գավաթ իմաստով հատկանշական է Կորյունի դպրոցի դասական կամ ոսկեդարյան հայերենի ծիրում: Այդ իմաստով այն հանդիպում է նաև Մակարայեցվոց Գրքերում, որոնց հետ Եղիշեի Պատմության «գաղափարական» կամ գրական կապերը դեռևս շատ վաղ ժամանակաշրջանից գրավել են հետազոտողների ուշադրությունը⁵³: Իսկ Մակարայեցվոց գրքերը համարվում են կորյունյան դպրոցի բնորոշ արտադրանքը, եւ մենք կտեսնենք, որ կորյունյան դրոշմ կրող այլ դարձվածքներ եւ ոճույթներ եւս հանդիպում են Եղիշեի մոտ:

Ավելացնենք կորյունյան դպրոցի հետ ընդհանուր երկու բառ եւս. մազդէզ եւ նորաթեւ: Առաջինը, որը հաճախ է հանդիպում Փալստոսի⁵⁴ մոտ, մենք հայտնաբերում ենք նաև Խորենացու ստեղծագործության մեջ: Դարձյալ խոսքը իրանական ծագում ունեցող բառի մասին է, որը վերաբերում է պաշտամունքին: Երկրորդը՝ հազվադեպ օգտագործվող մի բառ է, որն ըստ Նոր Հայկազեան-ի, Եղիշեից բացի, հանդիպում է նաև Ագաթանգեղոսի մոտ:

Ի տարբերություն կորյունյան դպրոցի հետ որոշակի խտություն ունեցող այդ առանձնակի բառապաշարային կապերի, մենք նման բառապաշարային ընդհանրություն չենք նկատում Եղիշեի ստեղծագործության ամբողջության եւ եզնիկյան դպրոցի միջեւ, չնայած այն բանին, որ առաջին երկուսի եւ հենց եզնիկի միջեւ կարելի է արձանագրել բազմաթիվ ոճական եւ գաղափարական ընդհանրություններ⁵⁵: Դրանք արժանի են հատուկ հետազոտության, որի կարեւորությունը դուրս է գալիս տվյալ ուսումնասիրության շրջանակներից: Քննադատները ուշադրություն են դարձրել այն ընդհանրությունների վրա, որոնք առկա են Ճառ ի Վկայան Արեւելից-ի հետ, որը մասնագետների կողմից դարձյալ դասվել է եզնիկյան դպրոցի արտադրանքի շարքը⁵⁶: Եզնիկյան դպրոցի հետ բացառիկ կամ գրեթե բացառիկ բառապաշարային ընդհանրության միակ օրինակը, որ մենք կարող ենք բերել տվյալ պահին, անարգ ածականն է (Պատմ. Գ.), որը դասական լեզվում հայտնվում է միայն Եզնիկի մոտ, եւ հետագայում եւս այն հաճախ չի հանդիպում:

II եթե hapax-ները եւ բառապաշարային հազվադեպ երեւույթները մեզ հնարավորություն են տալիս պնդելու Եղիշեի ստեղծագործության ներսում որոշակի ընդհանրության եւ նույնիսկ հարազատության մասին, ապա որոշ դարձվածքներ եւ ոճույթներ, որոնք բնորոշ են այդ գրվածքներին, հաստատում են առաջին հետեւությունը եւ այն էլ ավելի են ամրապնդում:

Դիտարկենք դրանցից մի քանիսը.

1. Պատմության մեջ շատ հաճախ գլուխները սկսվում են իբրեւ, եւ իբրեւ, իսկ ավելի հաճախ ավելի բնորոշ (եւ) իբրեւ ետեւ, եւ իբրեւ (այս) ամենայն ..., եւ իբրեւ այսպէս դարձվածքներով, որոնք հանդիպում են նաեւ այլ գրվածքներում. առ Միանձունս, էջ 160⁵⁷, ի Չարչար., էջ 248, 259, 263, 264, 266. ի Խաչել., էջ 284, 289, 298, 311.

2. անհատ ածականի օգտագործումը անվերջ, անսպառ իմաստով. օրինակ, Պատմ. Ը., 149, առ Միանձունս, 160. ի Չարչարանս, 244.

3. անդատին ի տղայ տիոց/ի տղայութեան դարձվածքը ճգնավորական խիստ հանձնառության ստանձնումը նշելու համար. Պատմ. Ը., 149, առ Միանձունս, 159.

4. բայց այն գոր աւացի/աւացեք դարձվածքը. Պատմ. Բ, յերեւ. առ Աշակ., 219.

5. ներկուած փոխաբերությունը օգտագործված «նախանձի» համար «կապուտակ» ածականի հետ եւ օգտագործված «հին տրամութեանն» համար. յԱյլակերպ. էջ 222.

6. ցայտուն հանգիստությունները վանականների եւ վանական կյանքի նկարագրության մեջ ոչ միայն բովանդակության առումով, այլեւ օգտագործված բառերի եւ պատկերների առումով, Բան խրատու առ Միանձունս-ի եւ յԱյլակերպութիւն ճառի միջեւ, ինչպէս նաեւ վերջինիս (հատկապէս էջ 237) եւ Հայաստանի ազնվատոհմ կանանց ճգնավորության նկարագրության միջեւ նմանությունները (Պատմ. Ը., 160, 164), նրանց ամուսինների նահատակությունից եւ արտաքսումից հետո:

7. Գոհութիւն յետ սեղանոյ աղոթքը, որը հանդիսանում է միեւնույն ժամանակ այժմյան ծեսի մեջ պարունակվող այդ աղոթքի ամենահին ձեւը, որը պահպանվել է հայկական աղբյուրներում:

8. Աստվածաշնչի գործող անձանց, որոնց հետ հեղինակը գրուցում է, «Տէր իմ» դիմելու ձեւը. յԱյլակերպ., էջ 215, 225, ի Թաղումն, էջ 293. յերեւումն Աշակ., էջ 314. յերեւումն ի Տիրեր., էջ 329.

9. յայսմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախտել (Բ., 31) դարձվածքը Պատմության մեջ, որն իր համարժեքն է գտնում Պայծառակերպության ճառի մեջ՝ յայսմ պատերազմէ ոչ ումեք օրէն է զանգիտել (էջ 221), առավել եւս որ վերջինիս համատեքստում շատ բնական ձեւով ի հայտ են գալիս Հազկերտ Բ-ին հայերի գրած պատասխանի հիմնական զաղափարները. սեր, անմահութիւն եւ, եթե դա հնարավոր է, հանուն Տիրոջ նահատակվել ցանկանալու պարագոքսը, նույնիսկ եթե դու անմահ ես: Պատմության մեջ այս ամենը ասվում է մարդկանց կապակցությամբ, իսկ Պայծառակերպության ճառում

հրեշտակների: Առաջին ստեղծագործության մեջ հատկապես ձեւակերպված միտքը քողարկված կերպով ենթադրվում է երկրորդ ստեղծագործության մեջ. քանի որ նա՝ անմահ Տերը, իրեն մահկանացու է դարձրել հանուն մեզ: Այս հանգամանքը եւս մի շարք այլ հատկանիշների հետ, ինչպիսիք են լեզվի սահունությունը, ոճի ինքնաբուխությունը, իր հերթին նույնպես հուշում է, որ խոսքը ոչ մի դեպքում չի վերաբերում ստրկաբար կատարված նմանակման:

10. Նման դատողություններ պետք է արվեն հետեւյալ զուգահեռ արտահայտությունների վերաբերյալ, որոնցից մեկով սկսվում է Պատմության Ե. եղանակը, իսկ մյուսով՝ տերունական աղոթքի մեկնության առաջին տան մեկնաբանությունը: Դրանք համապատասխանաբար սկսվում են հետեւյալ բառերով. Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն երկրաւոր - Մեծ է պարգևս այս քան զամենայն պարգևս առ մարդիկ: Առանձնահատուկ կերպով պետք է նշել երկու նախադասությունների սկզբի հանդիսավորությունը: Ե. եղանակը տեղադրված է Պատմության կենտրոնում թե՛ կառուցվածքային, թե՛ գաղափարական իմաստով. դա Հոգեգալստյան տոնի գիշերվա նկարագրությունն է պատերազմի հենց նախօրեին: Իսկ ինչ վերաբերում է տերունական աղոթքի առաջին տանը, ապա դրա կարեւորությունն ընդգծելու կարիքը չի զգացվում:

11. Նույնը կարելի է ասել Պատմության մեջ Վասակի մահվան (է.) եւ ի Զարչարանս (էջ 261) ճառում Հուդայի մահվան նկարագրությունների միջեւ գոյություն ունեցող աչքի զարնող բառապաշարային եւ ոճական զուգահեռների վերաբերյալ: Այս համանմանությունը չի նվազեցնում եւ չի խաթարում երկու դեպքերից եւ ոչ մեկում, յուրաքանչյուր շարադրանքին հատուկ թարմությունը եւ պաթոսը:

Ընդհանուր առմամբ եղիշեի ստեղծագործության մեջ մենք հաճախ ենք հանդիպում բնորոշ ոճական մի հնարքի, որն իրենից ներկայացնում է զուգահեռ զույգ տներից կազմված հակադրություններ, որոնք ունեն բազմաթիվ բառապաշարային եւ պատկերային ընդհանրություններ՝ քաղաքական, եկեղեցական, անձնական-հոգեւոր հուսալքումի վիճակը նկարագրելու համար: Այլ աչքի ընկնող օրինակներ կարող են հանդիսանալ Բան խրատու առ Միանձունս եւ Պատմության եզրափակիչ հատվածները՝ Վասակի ուխտադրության (Պատմ. Դ.) եւ Հուդայի դավաճանության (ի Զարչար. էջ 260-261) նկարագրությունները:

12. «Սկիզբն, միջոց, կատարած» ոճույթի բնորոշ օգտագործումը, որը հանդիսանում է ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգեւոր ասպարեզներում իրադարձությունների, պատումի, մարդկային կյանքի եւ առաջընթացի եռատիչ տնտեսում: Այն հայտնվում է նախաբանում, հանդիպում է ամբողջ

շարադրանքի ընթացքում (երբեմն երկրեւեռված, տես Գ., էջ 62 որպէս սկսաբն ի նմին եւ կատարեցում) եւ եզրափակում է Պատմությունը (տես է., 149, 158), այն հայտնվում է Տերունական աղոթքի մեկնության մեջ (էջ 204), Մկրտության ճառում (երկրեւեռված, էջ 209) ու շատ ցայտուն կերպով ի Չարչարանս ճառում (էջ 240, 242, 243, 244) եւ, վերջապես, այն որպէս մեկնաբանական հենարան է հանդես գալիս ի Քարոզ. Առաք. ճառում (էջ 351-352) մեկնաբանելու համար ըստ Հովհաննու Ավետարանի Աստծո կողմից Պետրոսին վստահված առաքելությունը՝ իր հոտը արածեցնելու:

13. Հուսկ հիշատակենք այն ոճույթները, որոնք իրենցից ներկայացնում են հիշատակի թեմայով լավ կազմակերպված տարափոխումներ: Յիշել եւ ժխտական ձեւով ոչ յիշել, յիշատակ, յիշատակարան, մոռացումն/մոռացոնք հանդիսանում են այն բառերը, որոնք հաճախ են հանդիպում միաժամանակ հոգեբանական, բարոյական եւ աստվածաբանական իմաստով, ելնելով նման գրվածքների մարդկային եւ աստվածաբանական համատեքստերից: Ահա մի քանի օրինակ. Պատմ. Բ., 34, Գ., 70-71, է., 97, 106, 107, 109, Ը., 155-156, ի Պայծառակերպ., 217-218 (տես վերը ծան. 2), ի Թաղումն, էջ 293, 294:

Կարելի էր շարունակել այս ցուցակը, սակայն մենք դարձյալ կարծում ենք, որ ներկայացված օրինակները ավելի քան բավարար են ոճական վերլուծության տեսակետից եւ այնքանով, որքանով ոճական փաստարկները կարող են կշիռ եւ զորություն ունենալ հետեւություն անելու համար, որ Եղիշեի ստեղծագործության ամբողջությունը հանդիսանում է միեւնույն գրչի արգասիքը: Այլ խոսքերով այն ունի «էական ընդհանրություն» իր բաղադրյալների մեծ մասի հեղինակության հարցում⁵⁸:

Այս հետեւությունը հետազայում կհաստատենք Եղիշեի ստեղծագործության ամբողջության բովանդակության եւ գաղափարների ընդհանուր գծերի վերլուծությամբ:

Այս հետեւությունը կարող ենք ավելացնել, որ խոսքն, անկասկած, վերաբերում է հայ հին գրականության խոշորագույն գրողներից մեկի գրչին, ոճի մեծագույն վարպետի: Այս Հեղինակին մենք այլեւս կարող ենք Եղիշե անվանել ոչ թե պարզապես հարմարության համար, այլ վարկածի կարգով: Վարկածը դրույթ կդառնա այն պահին, երբ մենք կկարողանանք պարզել այդ ստեղծագործության ամբողջության թվագրումը:

Բ. Բովանդակության եւ գաղափարների ընդհանրությունը Եղիշեի ստեղծագործության ամբողջության գրվածքներում

Այս բաժնում մենք պարզապես կբավարարվենք Եղիշեի ստեղծագոր-

ծուծյան որոշ թեմաների, մոտիվների, թեոլոգումենաների թվարկությամբ, որոնք կարող ենք բնորոշ համարել Նղիշեի գրվածքների համար, առանց կարողանալու սակայն, ծավալի սահմանափակության պատճառով, խորացնել դրա ներհղացային վերլուծությունը եւ նշանակությունը, այն հասցնելով մինչեւ ընդհանրապես մտքի եւ, մասնավորապես, աստվածաբանական մտքի մակարդակը:

1. Այդ իմաստով առաջին ընդհանրությունը մենք արդեն անդրադարձել ենք հիշողության եւ մոռացության սեմանտիկ դաշտին վերաբերող բառեզրերի օգտագործման մասին խոսելիս: Այդ ստեղծագործության ամբողջության մեջ կա նույնիսկ մի գործ, որը նվիրված է ննջեցյալների հիշատակին. Վասն յիշատակաց մեռելոց:

2. Նղիշեի պատմական եւ աստվածաբանական մտքի ամբողջական կառուցվածքի հիմնաքարային հայեցակետը եկեղեցու գաղափարն է. նրա Պատմության հենքն են կազմում եկեղեցու «փառքի», նրա ամբողջականության, նրա ազատության լայտմոտիվները: Վերջինս գրված է հասնելու համար մի ուրույն «ծանոթություն-գիտություն». «առնուցումք զգիտութիւն ի փրկութիւն անձանց եւ ի փառս ամենայաղթ եկեղեցւոյ» (Նախաբան): Ուստի Պայծառակերպության ճառի գազաթնակետին, երբ հեղինակը ցանկանում է բացատրել Սուրբ Գիրքը, ավելի ճշգրտորեն՝ «զգօրութիւն բանին» ուսումնասիրողների վերջնական նպատակը, ապա այդ նպատակը դարձյալ հետեւյալն է. «ի շահն անձանց եւ ի փառս սուրբ եկեղեցւոյ»:

Այդ խորհրդանշային պնդմանը հաջորդում է մի տեղեկություն «ուխտաւոր մանկունք Հայոց Մեծաց» մասին, որոնք ուսման ծարավով համակված, դեզերում էին տարբեր վայրերում եւ հատկապես Սուրբ Վայրերում «դեզերէին յուսումնասիրութեան»: Ուստի, «Ուխտ»ը, ինչպես մենք արդեն ցույց տվեցինք, հանդիսանում է Նղիշեի եկեղեցաբանության առանցքային գաղափարը՝ արտացոլելով հին ասորական թեոլոգումենա⁵⁹: Սա մի գաղափար է, որը զարգացել է Նղիշեի մոտ անկասկած Մակաբայեցիների Գրքի ազդեցության ներքո⁶⁰: Չնայած այն բանին, որ տվյալ համատեքստում խոսքը չի վերաբերում հատուկ Նղիշեի եկեղեցաբանությանը, ինչպես դա երեւում է մեր ուսումնասիրությունից, ուխտ բառի բովանդակահեղձ օգտագործման մասին, այնուամենայնիվ այն փաստը, որ այդ բառը հայտնվում է քրիստոնեական ուսումնառության նպատակի՝ նույնիսկ Աստծո հոսքը ուսումնասիրելու հավաստումից հետո, նշանակալից է ընդգծելու համար այդ երկու գրվածքների միջեւ գոյություն ունեցող թեմատիկ կապը:

3. Մկրտության աստվածաբանությունը առանձնահատուկ զարգացում է ստացել Նղիշեի գրվածքներում: Ի Մկրտություն Քրիստոսի⁶¹ ճառը հանդիսա-

նում է դրա էպիկենտրոնը, եւ այն արձագանքվում է Պատմության եւ յԵՐԵՒՈՒՄՆ ՏԵՒՈՒՆ Ի ՏԻՔԵՐԻԱ ՃՈՒԻ մեջ: Այս աստվածաբանությունը իրենից ներկայացնում է ուրույն երանգ ունեցող թեոլոգումենաներ, որոնք, օրինակ, տարբերվում են Վարդապետութիւն Գրիգորի՝ մկրտության ընծայակրթության այս գլուխգործոցի երանգներից, որը մխիթարյան Բարսեղ Սարգսյանի⁶² կարծիքով, որին հետագայում միացել է նաեւ Ռ. Վ. Թոմսոնը, հավանաբար պետք է վերագրվի Սբ. Մեսրոպ Մաշտոցին⁶³: Պատմության մեջ (Բ.) Սուրբ Հոգին ընկալվում է որպէս արական սկզբունք՝ որպէս Հայր, որը մկրտության ավագանով խորհրդանշվող Մայր եկեղեցու արգանդում սաղմնավորում է իր հավատացյալներին (մինչդեռ Վարդապետութիւն-ում Սուրբ Հոգին հանդես է գալիս որպէս իգական սկզբունք՝ հենց ինքը արգանդը, որտեղից նորածինները լույս աշխարհ են գալիս):

Վարդապետության համեմատությամբ Եղիշեի ստեղծագործության ամբողջության խիստ ընդգծված շափանիշներից է մկրտության ջրի տիպաբանական կապը արարչագործության ջրերի հետ, որոնց վրա սավառնում է Հոգին: Այնուամենայնիվ կա մի էական տարբերություն. Եղիշեի մոտ Հոգին է արական սկզբունքը, որը սավառնելով ջրերի վրա, տիրում է դրանց: Վարդապետության մեջ Հոգու իգական բնությանը համապատասխան ջրերն են սեղմում նրա ընդերքին, կյանք վերարտադրելու նպատակով, դրանք բացելու համար:

Մկրտության ջուրը ներհակադիր տիպաբանության այլ զուգահեռներ ունի Հին Կտակարանում. մարդկությունը իրենց տակ առնող ջրհեղեղի ջրերը եւ, վերջապէս, Հորդանանի ջուրը, որը հանդիսանում է Մկրտության ավագանի մեջ Հոգու ներթափանցման գրավականը, քանի որ առանց այդ ներթափանցման չի կարող լինել քրիստոնեական մկրտություն: Այս վերջին բավականաչափ ինքնատիպ հանգամանքը, որը, սակայն, հանդիսանում է նախորդ խորհրդագործության գաղափարական շարունակությունը, իր հետագա զարգացումն է ստանում յԵՐԵՒՈՒՄՆ ՏԵՒՈՒՆ Ի ՏԻՔԵՐԻԱ ՃՈՒՈՒՄ:

Իր ամբողջության մեջ սա մկրտության աստվածաբանություն է, որը, միգուցէ, նվազ ինքնատիպ է Վարդապետության համեմատությամբ, սակայն ոչ պակաս տրոփող եւ խորը: Վարդապետության հետ ունեցած նրա տարբերությամբ եւ իր ներքին կապակցվածությամբ ու միասնականությամբ այն ներկայանում է որպէս Հայոց հնագույն եկեղեցու մկրտության աստվածաբանության գերագույն հանգրվաններից մեկը:

4. Եղիշեի ստեղծագործության ամբողջության մեջ առանձնահատուկ շերմեռանդություն կա Պետրոս առաքյալի նկատմամբ, որը, ի դեպ, հատուկ տեղ է գրավում եկեղեցական կյանքում: Պայծառակերպության⁶⁴ եւ յԵՐԵՒՈՒՄՆ

Տեառն ի Տիրերիա ճառերում նա հեղինակի գլխավոր գրուցակիցն է, իսկ ի Քարոզութիւն Առաքելոց ճառում գլխավոր գործող անձը: Նա մեծ յերկոտասանսդ է (յԱյլակերպութիւն, էջ 224). նա բանականությունն է մարդկային մարմնում, որովհետեւ նա գլուխն է (առաջնորդը). «միտք ի գլուխ են եւ գլուխ աշակերտաց դու ես» (յերեւումն Տեառն ի Տիրերիա, էջ 329). նրան է Տերը վստահել «զսկիզբն եւ զմիջոցն եւ զկատարածն, զտղայութիւն, զերիտասարդութիւն եւ զծերութիւն» (ի Քարոզ. Առաք., էջ 351). մանավանդ թե «նոքին իսկ Առաքեալքն»՝ հենց իրենք՝ Առաքյալները վստահված էին նրան (նույն տեղում, էջ 352): նա հիմնեց եկեղեցի Հոռոմում, այնպես, ինչպես մնացած Առաքյալները եկեղեցիներ հիմնեցին աշխարհի այլ անկյուններում, այնտեղ, ուր նրանց սահմանված էր հիմնել (անդ, էջ 348): Հոռոմ քաղաքը, որը մի քանի անգամ հիշատակվում է այս ճառում, հիշատակվում է նաեւ Պատմության մեջ (Գ., էջ 55), դարձյալ եկեղեցաբանական համատեքստում⁶⁵:

Մենք, հետեւյալ հաշորդականությամբ, կարող ենք ամփոփել այն գլխավոր հետեւությունները, որ մեզ հուշում է մեր ուսումնասիրությունը.

I. մի շարք լեզվաբանական (*hapax-legomena*-ներ, հազվագեպ կամ շափազանց հազվագեպ բառույթներ, սեմանտիկ իմաստներ), ոճական (դարձվածքներ, արտահայտություններ, պատկերներ, խոսքի հնարքներ, նկարագրություններ, հռետորական ձեւեր, փոխաբերություններ) եւ բովանդակությանը վերաբերող բնութագրեր (գերադասված սեմանտիկ դաշտի հաճախականություն, սիրված գաղափարներ, թեոլոգումենաներ) մեզ համոզում են եղիշեի ստեղծագործության ամբողջության հիմնական եւ էական միասնության մասին: Այդ միասնությունը չի բացառում գլոսսաների, ընդմիջարկումների, անհարազատ հատվածների առկայությունը, ինչպես նաեւ հետագա ուսումնասիրության հնարավորությունը, հատկապես որոշ գրվածքների իսկությունը ստուգելու համար:

II. եղիշեի ստեղծագործության ամբողջության հեղինակն անկասկած մեծ գրող է. մի գրող, որն օժտված է գրական արվեստի շատ նուրբ զգացողությամբ եւ աչքի ընկնող ոճական ու աստվածաբանական ինքնատիպությամբ: Մենք, հիրավի, կարող ենք եղիշեին վերագրել այն խոսքերը, որ շատ հեղինակավոր մի մասնագետ գրել է եզնիկի կապակցությամբ. «Այնուամենայնիվ հզոր մի միտք... ղեկավարում է բանավեճի ամբողջ ընթացքը: Եթե նույնիսկ ապացուցվի, որ եզնիկի ամբողջ աշխատությունը կազմված է փոխառություններից, ապա միեւնույն է, դրանց դասավորությունը եւ տեղադրումը մնում է նրա ստեղծագործությունը: Այսքան պարզ ու վեհ մտահղացումը, այսքան խորաթափանց եւ ճշգրիտ ընտրությունը... բավարար կլինեին հաստատելու նրա ինքնատիպությունը ինչպես նաեւ նրա գրական

անձին առաջնակարգ արժեք տալու համար»⁶⁶ :

III. Եղիշեի եւ Ղազարի միջեւ եղած տարբերությունների խորացված ուսումնասիրությունը, լինեն դրանք իրադարձությունների եւ գործող անձանց նկարագրությունների տարբերություններ, թե Գրիգոր Լուսավորչի եւ Վարդանանց պատերազմի նահատակների հանդեպ Հայոց Եկեղեցու ծիսական մթնոլորտի արտացոլման ձեւի մեջ *եղած տարբերությունները, ակնհայտ է դարձնում, որ առաջինը ունի կոնկրետ պատմական իրավիճակի մանրամասների ավելի հարիր եւ խորաթափանց իմացություն եւ ավելի լավ է բացատրում պատմական համատեքստը: Հետեւաբար, նա արժանի է ավելի մեծ վստահության եւ մենք պետք է բացառենք այն ենթադրությունը, որ նա կարող է Ղազարի ավելի ուշ նմանակողը կամ նրան շճանաչող մի կեղծարար լինել:

IV. բառապաշարային, պատմական եւ աստվածաբանական բազմաթիվ հատկանիշներ բացահայտում են աչք զարնող «արխաիզմ»:

ա) բառային հնարանություններ. մենք տեսանք, որ Եղիշեի մոտ հանդիպող *hapax*-ների եւ հազվադեպ բառերի բացարձակ մեծամասնությունը, եթե ոչ ամբողջությունը իրանական փոխառություններ են, եւ դրանց մի զգալի մասը պաշտամունքին եւ վարչարարությանը վերաբերող տեխնիկական տերմիններ են: Դա մեզ դրդում է ենթադրելու, որ այդ փոխառություններն արվել են արաբական արշավանքից առաջ, երբ իրանական եւ, հատկապես, զրադաշտական իրականությունը ավելի մոտ եւ սովորական երեւույթ էին հայերի առօրյայի եւ պատկերացումների համար, քան հետագայում, մահմեդականության ի հայտ գալուց հետո:

բ) Պատմական հնարանություններ. բացի այն պատմական հնարանություններից, որ մենք նշեցինք նախորդ պարագրաֆում, եւ որոնք ավելի ցցուն են դառնում Ղազարի հետ համեմատությունից հետո, կան այլ պատմական հնարանություններ, որոնք հանդես են գալիս հօգուտ Եղիշեի ավելի վաղ թվագրման: Դրանցից մենք թվարկել ենք երկուսը. «կարմիր» մականվան բացակայությունը (ինչպես Ղազարի մոտ), որը վկայված է 7-րդ դարի փաստաթղթերում, որպես Վարդանի ժողովրդական մականուն. այն փաստը, որ Եղիշեն ճանաչում է միայն քուշաններին, որոնց թագավորությունը անկում է ապրել 468 թ., մինչդեռ Ղազարը ճանաչում է ինչպես քուշաններին, այնպես էլ նրանց նվաճող Հեփթաղյաններին, իսկ ավելի ուշ շրջանի պատմիչների մոտ այդ երկու ժողովուրդները խառնվում են: Մեկ անգամ եւս ընդգծենք, որ «կարմիր» մականվան բացակայությունը պարզապես լռության փաստարկ չէ, ինչպես մենք բացատրեցինք վերը:

գ) աստվածաբանական հնարանություններ. թեոլոգումենաների շարքում իր արխայիկ բնույթով հատկապես պետք է նշվի ուխտ Եկեղեցվոյ տե-

սուբյուկներ: Այստեղ խոսքը ոչ միայն հին ասորական թեոլոգումենայի մասին է, այլև մի թեոլոգումենայի մասին, որը շատ վաղ շրջանում անհետանում է նաև ասորական միջավայրից⁶⁷: Սակայն մենք այս հնարանությունը առաջ ենք քաշում որպես համատեքստային փաստարկ, որովհետև այն աղբյուրները, որոնք կարող էին ներշնչել ծավալելու այս տեսությունը, ազատ դաշտ են թողնում տարբեր մեկնաբանությունների համար: Մեր ուսումնասիրության այս փուլում մենք չենք կարող բացառել այն վարկածը, որի համաձայն ներշնչի գաղափարի հիմքում ընկած են միայն Մակաբայեցոց Գրքերը:

Մեկ այլ հնարանություն էլ կապված է ձեռքից հաղորդվելու մասին արված պարզորոշ ակնարկի հետ (Հայր Մեր-ի մեկնության մեջ), չնայած այն բանին, որ մենք ի վիճակի չենք ճշտելու, թե երբ է Հայոց եկեղեցին հրաժարվել այդ սովորույթից: Դրա անհայտանալը, անկասկած, համընկնում է հաճախ հաղորդվելու սովորույթի կորստի հետ, որը կապված է Պատարագի հաճախակի մատուցման հետ: Հետևաբար դարձյալ խոսքը այնպիսի հնարանության մասին է, որից դժվար է որեւէ պարզորոշ ցուցմունք քաղել:

Սակայն կա արխայիկ մի գիծ, որը, Հայոց եկեղեցու շրջանակներում, չի կարող տեղադրվել ավելի ուշ ժամանակաշրջանում. դա քաղկեդոնյան վեճի բացակայությունն է ներշնչի մոտ, վեճ, որը որոշակի ժամանակաշրջանից հետո ողողում է հայ գրականությունը: Ավելին, եթե մենք դիտարկենք այս հատուկ «նախաքաղկեդոնականությունը»՝ կապակցելով այն մեր հեղինակի հունասիրության հետ, ապա ավելի վաղ թվագրումը հանդես է գալիս որպես գրեթե միակ հնարավոր վարկած:

V. Այն առարկությունները, որոնք ոմանց կարծիքով կարող են խոչընդոտել ներշնչի ստեղծագործության ավելի վաղ թվագրմանը հունարան դպրոցի արտադրած տեքստերի պատճառով, չեն դիմանում լուրջ քննադատության, որովհետև այդ դպրոցի ուշ թվագրման օգտին մինչ օրս առաջ քաշված փաստարկներից եւ ոչ մեկը չունի վճռական ուժ: Հակառակը, գրեթե հաստատ է թվում այն, որ Տիմոթեոս Կուզի Հակաճառության թարգմանությունը արվել է 480-484 թթ.:

Եվս մեկ վերջին դիտարկում: Ճիշտ է, մեր կողմից առաջ քաշված ոչ բոլոր փաստարկներն են, որ համոզվածության նույն մակարդակը ունեն, եւ որ դրանց հուշած կամ պարտադրած ժամանակաշրջանը անպայմանորեն 5-րդ դարն է: Երբեմն, ինչպես Վարդանի Կարմիր մակդիրի դեպքում, պարզապես պահանջվում է 7-րդ դարից առաջ ընկած ժամանակաշրջան: Սակայն, մեզ թվում է, որ մեր կողմից առաջ քաշված փաստարկների մեծամասնությունը բավարար վստահություն են ներշնչում կամ ունեն հավանականության բարձր մակարդակ եւ թույլ են տալիս ներշնչի ստեղծագործության ամբողջությունը

Թվագրել 5-րդ դարի երկրորդ կեսով: Իրենց ամբողջության մեջ կապակցվածության դինամիկայով, միմյանց լրացնելու եւ սատարելու առանձնահատկությամբ օժտված այդ փաստարկները Նդիշեի հարցը մեզ են ներկայացնում նոր լույսի ներքո:

Մի խոսքով, մեզ թվում է, որ մենք կարողացանք ապացույցել, որ չկա եւ ոչ մի բավարար պատճառ Նդիշեի ստեղծագործության ամբողջությունը 5-րդ դարից հետո տեղադրելու համար: Նման տեղաշարժը, փաստորեն, ավելի շատ պրոբլեմներ է առաջացրել, քան դրանք լուծել: Ինչ վերաբերում է, մասնավորապես, Պատմությանը, ապա մենք կարող ենք հետեւել դրա ներքին ժամանակագրությանը, ըստ որի, առաջին յոթ եղանակները գրվել են 457 թ. հետո, իսկ ութերորդը պետք է որ գրված լինի 464 թ.՝ վտարված նախարարների հայրենիք վերադառնալուց հետո եւ 468 թ.՝ Հեփթաղյանների հարվածների տակ Քուշանների թագավորության անկման տարեթվից առաջ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

* Սույն հոդվածի կորիզը կազմում է Հռոմի վատիկանյան Արեւելագիտական Ինստիտուտում, ի պատիվ երջանկահիշատակ Գարեգին Ա. Կաթողիկոսի Վատիկան այցելության, կայացած գիտաժողովին հեղինակի ներկայացրած զեկույցը, որի ֆրանսերեն բնագիրը լույս է տեսել գիտաժողովի գործերի հատորում. B.L. ZEKIYAN, «*Quelques observations critiques sur le 'corpus elisaeum'*», *The Armenian Christian Tradition. Scholarly Symposium in Honor of the Visit to the Pontifical Oriental Institute, Rome, of His Holiness KAREKIN I, Supreme Patriarch and Catholicos of All Armenians, December 12, 1996*, ed. by R.F. Taft, Roma, 1997

1. Եղիշեի ճառերի նյութն են կազմում, հիմնականում, Տիրոջ կյանքի խորհուրդները: Այդ ճառերը գրեթե մի անընդհատ շարք են բաղկացնում, որոնց բովանդակությունը, «գրական ժանրը» լավագույնս կրնորոշվելին որպես «մտքի բարձրացումներ», որպես այդ խորհուրդների վրա «մտածություններ», նկատի ունենալով հատկապես վանական կյանքը:

2. *Joie de la Transfiguration d'après les Peres d'Orient*, ed. par Dom M. Coune, (*Spiritualité Orientale*, 39), vol. I, Abbaye de Bellefontaine, 1985, pp. 121-150. Այստեղ մենք կարդում ենք. «Եղիշեն, գրելով Աստվածաշնչի աղոթասուն ուսումնասիրության հանդեպ հայերի ցուցաբերած հետաքրքրության մասին, միեւնույն ժամանակ մեզ սովորեցնում է ... բացում է մեր առջեւ մեծ արդիականություն ունեցող աստվածաբանական հեռանկարներ՝ Աստծո խոսքը եւ դրա բացակայությունը, հավատացյալների մոտ մոռացությունը եւ հիշողությունը, Աստծո արքայության վայրը եւ անվայրունակությունը» (Նախարան, էջ XI): Արժանահիշատակ Դոմ. Լուի Լելուարի կատարած թարգմանությունը հրատարակվել է նաեւ REArm - ում, «*L'homilie d'Elisè sur la montagne de Thabor*», XX (1986-87) 175-182, տեքստը՝ էջ 183-207:

3. Եղիշէ Վարդապետ եւ իւր պատմութիւնն Հայոց Պատերազմի, մատենագրական-պատմական ուսումնասիրութիւն - *Elisäus Vardapet und seine Geschichte des armenischen Krieges. Eine litterarisch-historische Untersuchung, Anhang; Zusammenfassung in deutscher Sprache, I-II*, (Ազգային Մատենադարան, *Nationalbibliothek*, 133, 140, 168), Wien, 1932, 1936, 1960: Ակինյանից առաջ Եղիշեի ստեղծագործության ամբողջության քննադատության ճանապարհին առաջին լուրջ քայլերն է արել Բարգեն Կյուլեսերյան Էպիսկոպոսը, Եղիշէ. քննական ուսումնասիրութիւն, (*Nationalbibliothek*, 57), W., 1909:

Ահա Ռորերտ Քոմսոնի դատողությունը Ակինյանի քննադատության վերաբերյալ. «Although these arguments have the advantage of fitting all the traditions about Eliše and the later confusions of the two Vardans into one (not so simple) scheme, they have the disadvantage that the literary coherence of the History is entirely lost» (*History of Vardan*, նշվ. ստորեւ, ծան. 4, Introduction, էջ 24 - «Չնայած այն բանին, որ այս փաստարկները ունեն այն առավելությունը, որ մի սխեմայի մեջ են միավորում Եղիշեի հետ կապված բոլոր ավանդությունները եւ երկու Վարդաններին մեկ անձի մեջ միավորելու հետագա խառնաշփոթը, այնուամենայնիվ նա ունի այն թերությունը, որ այդ դեպքում ամբողջովին կորսվում է Պատմության գրական կապակցվածությունը»):

Ակինյանն իրավացիորեն նշում է, որ Եղիշեի մտադրությունն էր ավելի ճառագրել, քան պատմագրել: Դա համապատասխանում է իրականությանը, եւ այն ճիշտ լույսի ներքո լուսաբանել են հայ հին գրականության պատմության խոշոր մասնագետներ Քիպարյանը եւ Աբեղյանը իրենց աշխատությունների՝ Եղիշեին նվիրված բաժիններում: Այս Պատմությունը, միեւնույն ժամանակ, պատկանում է տարբեր ժանրերի. դա եւ՛ վարքագրություն է, եւ՛ եղերերգություն, եւ՛ ներբող, սակայն այն հատկապես պատմության աստվածաբանություն է, այս բառի ամենախորը իմաստով գործողության մեջ գտնվող պատմության աստվածաբանություն, որը զարգանում է հենց շարադրանքի ընթացքում: Սակայն Ակինյանը իր ճիշտ դիտարկումից բավականաչափ տարօրինակ հետեւություններ է հանում (տե՛ս նաեւ վարք, ծան. 31): Նա եզրակացնում է, որ այն պատմությունը, որ մենք ունենք այսօր ի սկզբանե, ոչ թե 451 թ. պատերազմի նկարագրությունն է, այլ 570-578 թթ. հայերի ապստամբության նկարագրությունը, որի ղեկավարը նույնպես Վարդան Մամիկոնյան անունով մի զորավար էր: Ավելին, Եղիշեի Պատմության այդ բնագիրը կորել է, եւ Եղիշեի անվան տակ մեզ հասած աշխատությունը իրականում մի խմբագրություն է, ապաշնորհ մի գրչի պատկանող ավելի ուշ շրջանի մի կեղծիք, որը հետեւելով Ղազարի շարադրանքին, հարմարեցրել է Եղիշեի իսկական ստեղծագործությունը 451 թ. պատերազմին:

4. Եղիշեի ստեղծագործության ուսումնասիրության *status quaestionis*-ի համայնապատկերը, ավանդությանը պատկանող տվյալների դեմ մինչ այժմ առաջ քաշված դիտողությունների համադրությամբ եւ հեղինակի մուծած անձնական ավանդով տրված է Ռ. Վ. Քոմսոնի կողմից. *Eliše, History of Vardan and the Armenian War*-ում (*Harvard Armenian Texts and Studies*, 5), *Translation and Commentary* by R. W. Thomson, Harvard Univ. Press, Cambridge, MA - London, 1982, Introduction, էջ 1-53; Եղի-

շեի ստեղծագործության նախընթաց քննական ուսումնասիրության համայնապատկերի համար տես, հատկապես, էջ 19-29:

5. «Արտաշատի ժողովքը եւ անոր մասնակցող եպիսկոպոսները», Բազմավէպ, 109 (1951), 256-262, 110 (1952), 4-10, վերատպ.՝ Պ. Անանյան, Քննություն Հայ եկեղեցույ Պատմութեան Ե. և Զ. դարերու շրջանին, (Հայագիտական գրադարան «Բազմավէպ», 34), Վենետիկ - Սբ. Ղազար, 1991, էջ 11-27:

6. Հոդվածը չի հիշատակվում Ռ.Վ. Թոմսոնի վերջին մատենագիտությունում R. W. Thomson: *A Bibliography of Classical Armenian Literature to 1500 AD (CCH)*, Brepols-Turnhout, 1995.

7. Տես ծան. 5:

8. Տես ծան. 3, Թոմսոնի դատողությունը Ակինյանի կառույցի վերաբերյալ:

9. REArm-ում, XX (1989-89), 251-270, վերջերս տպագրված հոդվածում նինա Գարսոյանը հմուտ եւ մանրակրկիտ վերլուծության ենթարկելով քննարկվող բառեզրերի ամենավաղ վկայությունները, եզրակացնում է. «Նույնիսկ այդ կցկտուր նկարագրությունը մեզ հնարավորություն է տալիս նշմարելու հայ Արշակունիների սովորական միջավայրը IV դ.: Միջավայր, որի կենտրոնում էր ձիարշավարանը եւ տոնախմբությունների դահլիճը, զարդարված՝ փառահեղ, սակայն շարժական վրաններով, որը ճշգրտորեն համապատասխանում էր այդ ժամանակաշրջանի Պարսկաստանի միջավայրին: ... Արշակունիների բացառիկ իրավունքը Այրարատի ժառանգական ավատի, այսինքն՝ այդ շրջանի քաղաքների նկատմամբ, շարունակում էր պահպանվել խիստ կերպով պաշտպանվելով ավանդույթներով, սակայն պալատական կյանքն ու արարողությունները ընթանում էին «արքունի բանակատեղիներում» եւ «անտառային պալատներում», որոնք հաճախ գտնվում էին երկրի խորքում» (էջ 267): Այս տեսակետի կապակցությամբ առանց մանրամասն վիճարանություն ծավալելու (միգուցե չէր խանգարի հաշվի առնել որոշակի տարբերություն «Թագաւորանիստ կայեան»ի կամ «տեղի» եւ «բանակ արքունի»ի միջեւ), ընդունենք, որ այն գալիս է հաստատելու, գոնե անուղղակի կերպով, որ «Թագաւորանիստ կայեան»ը կամ «տեղի»ն «մայրաքաղաք» չէր նշանակում: Ամենայն հավանականությամբ օրիորդ Գարսոյանը նույնպես ծանոթ չէ Անանյանի հոդվածին (տես ծան. 6):

10. Վարք Մաշտոցի, XVI: Մատենագիտական տեղեկությունների համար տե՛ս G. Winkler, *Koriwns Biographie des Mesrop Maštoc*՝. *Übersetzung und Kommentar*, (OCA 245) Roma, 1994, էջ 285-2865.

11. Օրինակ III, iii, iv, xiv, xv, xvii; IV, iv. տե՛ս *The Epic Histories*

attributed to Pawstos Buzand (Բուզանդարան Պատմութիւնք) transl. and commentary by N. G. Garsoïan, Harvard Univ. Press, Cambridge, MA, 1989, Introduction: էջ 16, 46-47; Commentary: III, xiv, ծան. 11, էջ 257-258; Technical Terms: Մայր Եկեղեցեաց, էջ 545: Տե՛ս նաեւ P. Ananian, «La data e le circostanze della consercazione di S. Gregorio Illuminatore», *Le Muséon*, 74 (1961) 333; եւ, Մայր Եկեղեցու գաղափարի կիրառման վերաբերյալ հետազոտարեբու՛ M. Van Esbroeck, «Témoignages littéraires sur la 'Mayr Ekeghetsi' ou de l'origine de Zouartnots», *Atti del Terzo Simposio Internazionale di Arte Armena*, 1981, Milano/Vicenza/Castelfranco V./Piazzola sul Brenta/Venezia, 25 sett. - 1 ott., redazione: G. Ieni, G. Uluhogian, San Lazzaro - Venezia, 1984, էջ 615-627: Դ. դարում Հայաստանի թեմերի մասին բացի J. Markwart-ի դասական «Die Entstehung der armenischen Bistümer. Kritische Untersuchung der armenischen Überlieferung» աշխատությունից, herg. von Messina, *Orientalia Christiana XXVII/2* (1932) 141-236, տե՛ս նաեւ Ա. Ա. Ղազարյանի վերջերս լույս տեսած «Հայ Եկեղեցու թեմական բաժանումը Դ. դարում» հոդվածը, Պատմա-բանասիրական հանդես, 1996, 1-2 (143-144), 193-206:

12. Խնդրո առարկա ժամանակաշրջանի եւ այստեղ անմիջականորեն մեզ հետաքրքրող տարիներին նախորդող տարիների որոշ իրադարձությունները ծածկող խավարը միշտ էլ տանջել է պատմաբաններին, եւ նրանք չեն զլացել ընդգծել այդ բանը: Վերջերս այդ խավարը դարձել է G. Winkler-ի հոդվածի վերնագիրը. «An Obscure Chapter in Armenian Church History (428-439)», *REArm XIX* (1985), 85-150: Մենք հույս ունենք, որ մերձավոր ապագայում հնարավորություն կունենանք ավելի մոտիկից ուսումնասիրել այդ հոդվածում բարձրացված հարցերը (տե՛ս վարը ծան. 47): Այս պահին մենք կցանկանայինք միայն նշել, որ այդ ժամանակաշրջանի ուսումնասիրությանը հիմնարար նպաստ բերող Պ. Անանյանի «Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի» (Վենետիկ - Սբ. Ղազար, 1964) մենագրությունը հիշատակված չէ ո՛չ ընդհանուր մատենագիտությունում, ո՛չ էլ ծանոթագրություններում (տե՛ս վերը ծան.ներ 6 եւ 9):

13. Ա. Տեր-Մինասյանց, Եղիշէի Վարդանանց Պատմութիւնը, Կահիրե, 1950, ներածություն, էջ 78:

14. Հմմ. Pawstos, V, xxix: Տե՛ս «The Epic Histories», ծան.11, Commentary; V, xxix, ծան. 3-7, էջ 322-323; նույնի (N. G. Garsoïan), «Secular Jurisdiction over the Armenian Church (IVth - VIIth Senturies)», *Okeanos: Essays Presented to Ihor Sevcenko on His Sixtieth*

Birthday by His Colleagues and Students, (Harvard Ukrainian Studies, VII), ed. by C. Mango and O. Pristak, Cambridge, MA. 1983, էջ 230-233; նույնի, «Nersès le Grand, Basile de Césarée et Eusthate de Sébaste», REArm XVII (1983) 155, ծան. 56; Histoire des Arméniens, sous la dir. de G. Dédéyan, Toulouse, 1982, p. 152; R. Pouchet, Basile le Grand et son univers d'amis d'après sa correspondance. Une stratégie de communion, (Studia Ephemeridis «Augustinianum», 36), Roma, 1992, էջ 276-278.

15. Տե՛ս Պ. Անանյան, «Յովսէփ Կաթողիկոս Հողմացին եւ կաթողիկոսական ինքնավար ձեռնադրութեան հարցը», Քննութիւն, (նշվ. ծան. 5-ում), էջ 7-10. նույնի, «Արտաշատի ժողովքը», էջ 18:

16. Եղիշէի «Արարածոց Մեկնութիւնը», հրատարակվել է հետ մահու լեւոն Տեր-Պետրոսյանի կողմից, Երեւան 1992, էջ 153-155:

17. Տե՛ս Ananian, «La data e le circostanze», (նշվ. ծան. 11-ում), էջ 320-321, որը հաշորդում է Ակինյանի «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ», Հանդէս Ամսօրեայ, LXIII (1949), N^o 4-12, Մխիթար Տօնազիրք, էջ 14, 19 (3-58): Ազաթանգեղոսի հայերեն տարբերակում Սրբի մասունքների հայտնաբերման մասին ակնարկը տրված է հենց իր՝ Գրիգորի «մարգարեական» գուշակության միջոցով, ուր նա առաջադրում է իր փառաբանումը Աստծո կողմից, իր կրած նվաստացումների համար եւ իր «հանգստությունը» [Թորդանի գերեզմանում հայտնաբերված իր մասունքների տեղափոխության միջոցով] «ընտրության օրը, առանց ժամկետի, անժամանակ, առանց թվի, յոթներորդ դարի մուտքին» (դարին մտելոյ եօթներորդին) (« 72): Իսկ յոթերորդ դարը, այսինքն՝ 600 թ. արարման օրից ըստ բյուզանդական թվագրման սկսվում է 491 թ. սեպտեմբեր ամսին: Քրիստոնեության վաղ շրջանում աշխարհի տարիքի ընկալմանը հաճախ աստվածաբանական նշանակության վերագրումը (տե՛ս The Teaching of Saint Gregory. An Early armenian Catechism, Translation and Commentary by R. W. Thomson, Harvard Univ. Press, 1970, էջ 166, §667-668) չի բացառում թեոլոգումենաներ փոխանցող աստվածաբանական լեզվի ստեղծաբանական երկակիությունը կամ բազմակիությունը: Ինչ վերաբերում է հայերեն Ազաթանգեղոսի հունարեն տարբերակին, որն իր նախնական օրինակով թվագրվում է, ամենայն հավանականությամբ, 464-468 թթ., ապա այդտեղ յոթերորդ դարի սկզբի մասին ակնարկը բացակայում է (տե՛ս վարը ծան. 28, հենց աղբյուրներում հանդիպող տարբեր տիպի օրացույցների ժամանակագրական համարժեքության նշանակությունը հին եւ հատկապես հայկական փաստաթղթերի թվագրման համար): Հույնը կկարգա, դրան որպես հիմք ծառայող, ավելի հին հայերեն խմբագրությանը համապատասխան

(հետեւաբար այն պետք է տեղադրվի Կորյունի «Վարք Մաշտոցի» - մոտ 445թ. - եւ 464 թվականի միջեւ). «*γοταν αι επτα των ενιαυτων εβδομαδες πληρωθωσιν*» (*La version grecque ancienne du Livre arménien d'Agathange, éd. crit. par G. Lafontaine, Louvain-la-Neuve, 1973, § 30, էջ 197-198*): Այն, ինչ մենք ասացինք չի բացատում, որ հայերեն Ագաթանգեղոսը իր ներկայիս վիճակում հետազայում հավանաբար խմբագրվել կամ ձեւափոխվել է, ինչպես, հենվելով տարբեր տվյալների վրա, ենթադրել են Պ. Պետերսը եւ Մ. վան էսբրուկը (տե՛ս անդ 35-36): Վերջինիս աշխատություններից տես նաեւ «Ագաթանգեղոսի բնագրի պատմութիւնից», Պատմա-բանասիրական հանդես, 1984, 2(105), 28-34):

18. Ե. Տեր-Մինասյանց, եղիշէի Վարդանանց Պատմութիւնը, (նշվ. ծան. 13-ում), ներածություն, էջ 57-58: Այս կապակցությամբ Ակինյանի տված բացատրությունները, (նշվ. ծան. 3-ում), I, էջ 293-296, մեզ բռնազրոս են թվում:

19. Կարմիր մականունը հիշատակված է Սերեոսի մոտ (գլ. է., Աբգարյանի հրատ., Երեւան, 1979) եւ Անանյանի կողմից հրատարակված «Գիր մերոյ հարցն» հիշատակարանում (տես նաեւ վարը ծան. 34):

20. Եղիշէի ստեղծագործության ամբողջության տարբեր միավորների միջտեքստային կապերի վերաբերյալ որոշ տեղեկություններ կարելի է գտնել Ակինյանի «Եղիշէ Վարդապետ»-ում (տե՛ս վարը ծան. 52), ուր նա ներկայացնում է մեր հեղինակի գրական արտադրանքը: Թոմսոնը կատարել է մի շրջահայում, որում նա սահմանափակվել է Պատմության ուսումնասիրությամբ՝ *Elise*, (նշվ. ծան. 4-ում), *Introduction*, էջ 11-21: Տե՛ս նաեւ Բ. Սարգսեան, Եղիշէի եւ Զաքարիա Կաթողիկոսի Ի Թաղումն Քրիստոսի ճառերն եւ նիկողիմոսի Աւետարանը, Սբ. Ղազար, Վենետիկ, 1910:

21. Տե՛ս Ս. Արեւշատյան, «Պղատոնի երկերի հայերեն թարգմանության ժամանակը», Բանբեր Մատենադարանի, 10 (1971), էջ 12:

22. Լրացուցիչ մանրամասներ ստանալու համար տե՛ս, Ա. Մուրադյան, Հունարան դպրոցը եւ նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Երեւան, 1971, էջ 100-102:

23. *East of Byzantium*-ում. *Syria and Armenia in the Formative Period, Dumbarton Oaks Symposium, 1980, N. G. Garsoïan, Th. F. Mathews, and R. W. Thomson, Ed.s, Dumbarton Oaks Center for Byzantine Studies, Washington, D. C., 1982, էջ 175-186*: Հունարան դպրոցի մասին նորագույն եւ հաջող հոդվածներից հիշենք՝ G. Mouradyan, «Notes on Some Linguistic Characteristics of the Hellenizing Translations», *Le Museon*, 112 (1999), էջ 65-71: Միակ նկատողությունը որ կուզեինք անել այն

է, որ կարելիոր է թվում նման ուսումնասիրություններում ավելի հստակորեն զանազանել հունարենի նմանությունները կատարված պատճենումներու այն տեսակները, որոնք բնավ հակառակ չեն մաշտոցյան լեզվի ներքին սկզբուքներին եւ ոգուն այն մյուսներից, որոնք որոշակիորեն կը զարտուղեն դրանցից:

24. Ավելի մանրամասն շարադրանքի համար տե՛ս նաեւ Ա. Մուրադյան, Հունարան դպրոցը, (նշվ. ծան. 22-ում), մասնավորապես էջ 27-32, 94-96:

25. Սա Լուի Մարիեսի տված վերնագիրն է (տես ծան. 55), որն, անկասկած, ավելի լավ է արտահայտում եզնիկի մտադրությունը նրա ներածության հենց առաջին բառերից:

26. S. J. Voicu, «La patristica nella letteratura armena (IV-X sec.)», *Complementi interdisciplinari di patrologia, a cura di A. Quacquarelli, Roma, 1989*, էջ 670:

27. Հարցի էության պարզ եւ միանգամայն ճշգրիտ շարադրանքը տալիս է Պ. Անանյանը, «Ներսես Բ. Աշտարակեցի. Պատմական յիշատակարան մը Դուինի Բ. Ժողովքի մասին», Քննութիւն-ում (նշվ. ծան. 5-ում), էջ 100-105 (հոդվածն ամբողջությամբ էջ 74-119, արտատպված՝ Բազմավէպ-ից, CXV (1957) 111-121, CXVI (1958) 64-72, 117-131): 105-114 էջերում հեղինակը ներկայացնում է խնդրի սեփական լուծումը, որից մենք որոշակի հեռավորություն կպահպանենք:

28. Ավելի մանրամասն շարադրանքի համար տե՛ս, Ed. Dulaurier, *Recherches sur la chronologie arménienne technique et historique. Ouvrage formant les prolégomènes de la collection intitulée Bibliothèque historique arménienne, Paris, MDCCCLIX*: Ավելի նոր՝ է. Բ. Աղայան, Ակնարկներ Հայոց տոմարների պատմության, Երեւան, 1986:

Գի Լաֆոնտենը (տե՛ս ծան. 17), իսկ նրանից հետո Թոմսոնը (*Agathangelos, History of the Armenians, Translation and Commentary by R. W. Thomson, Albany, State Univ. of New York Press 1976*) շատ ցածր են գնահատում այն դատողությունները, որոնք հենվում են տոմարների համեմատության վրա: Առաջինը գրում է. «Մեր կարծիքով, մենք ոչ մի արդյունքի չենք կարող գալ հունարեն թարգմանության տարեթվի հարցում, եթե հիմնվենք յԱ.ի (հունարեն Ագաթանգեղոս) երկու համապատասխանությունների՝ հոռի-սեպտեմբեր եւ սահմի-հոկտեմբերի վրա, քանի որ հույն թարգմանիչը հաստատապես գիտական հաշվարկ չի կատարել տեսնելու համար, թե երբ է բյուզանդական տոմարի սեպտեմբերի 26-ը համապատասխանել հոռի ամսվա 26-ին եւ հոկտեմբերի 7-ը՝ սահմի ամսվա 7-ին (էջ 37)»: Այս փաստարկումը պատկանում է այն փաստարկների շարքին, որոնք, լատինական ասութեամբ, *si quid probant, nimis probant* (եթե ինչ-որ բան կապացուցեն,

շափազանց շատ կապացուցեն): Եվ իսկապես, համապատասխանության ամբողջ արժեքը հիմնվում է այն վարկածի վրա, որ թարգմանիչները պետք է որ գիտական հաշվարկներ արած չլինեին իրեն նշած թվականների համապատասխանությունը ստուգելու համար, (քանի որ այդ գիտական հաշվարկները, ինչպես եւ մեր բերած հաշվարկները, կարող էին մի քանի դարով ետ գցել), այլ պարզապես նրանք տվել են տոմարների համապատասխանությունը այնպես, ինչպես այն եղել է հենց այն տարում, երբ նրանք գրում էին: Իսկ ինչ վերաբերում է թոմսոնին, ապա դժվար է հասկանալ, թե ինչ է նա հաստատում. «This simple equivalence was a common of rough reckoning and does not necessarily prove that the translation was made when the two dates coincided» (Notes, էջ 475, « 210, 1): Եթե խոսքը լիներ դեպի անցյալը ուղղված, հետահայեաց հաշվարկի մասին, ապա ի՛նչ «rough reckoning»: Այդ հաշվարկը կպահանջեր «գիտական հաշվարկներ», ինչպես ասում էր Լաֆոնտենը եւ, բնականաբար, մենք չէինք կարողանա բացառել, այդ դեպքում, սխալների հնարավորությունը: Իսկ եթե, ընդհակառակը, խոսքը ընթացիկ տարվա համապատասխանության մասին է (վարկած, որը մենք շատ հնարավոր ենք համարում, գրեթե ստույգ), ապա այն մեզ կտար, սկզբունքային առմամբ, առավելագույն արժանահավատ եւ ճշգրիտ ժամանակագրական տեղեկություն: Անկասկած, նույնիսկ այդ դեպքում մենք չենք կարող բացառել սխալի տեսական հնարավորությունը, օրինակ՝ այլ ժողովուրդների ընթացիկ տոմարների մասին գրչի անբավարար տեղեկությունների պատճառով:

29. Դիոսկորոսը մահացել է 454 թ.:

30. Հարցը կարող է էլ ավելի առաջ մղվել, այնպես, ինչպես դա արվել է վերջերս: Եվ իսկապես, ոմանք վկայությունը կարդում են որպես Թուղթ է., Թովթ Ե.-ի փոխարեն: Այն բանը, որ Թուղթ-ը կարող է հեշտությամբ բացատրվող սխալ լինել Թովթ-ի փոխարեն, դժվար չէ հասկանալ: Մյուս կողմից էլ Ե-ն կարող է է-ի սխալը լինել (եւ փոխադարձաբար): Ուստի, երկու ընթերցումներից լավագույնը ընտրելով, մենք կունենանք Թովթ է (համապատասխանում է սեպտեմբերի 4-ին) Թովթ Ե-ի փոխարեն: Անկասկած, այստեղ մենք պետք է դիտարկենք նաեւ Բ-ի եւ Դ-ի սխալ, որը հնարավոր է, շնայած այն բանին, որ զուրկ է դրական ցուցմունքներից: Այս վարկածի դեպքում սեպտեմբերի 4-ը = Հոռի 6-ի համապատասխանությունը ստանալու համար հայկական տոմարի 4 տարվա ժամանակաշրջանը ետ է գնում մինչեւ 472-476 թթ., իսկ ավելի ճիշտ 472 թ. հուլիսի 31-ից մինչեւ 476 թ. հուլիսի 29-ը. տե՛ս Ռ. Հ. Վարդանյան, Հայոց տոմարական եղանակը, թարգմանական բնագրերի ժամանակը, Երեւան, 1993, էջ 41: Չնայած այն բանին, որ այս վարկածը կամայական տարրեր չի ներմուծում, եւ որ նրա կառուցվածքը բավականաչափ

կապակցված է, այնուամենայնիվ է-ի տարբերակը հայտնվում է մեկից ավելի սխալ պարունակող նվազ լավ տարբերակների համատեքստում: Հետեւաբար, շատ հնարավոր է թվում, որ է-ն լինի ե-ի սխալը եւ ոչ թե հակառակը: Հայկական ավանդույթները հենց սկզբից, ամենայն հավանականությամբ, սեպտեմբերի 2-ի տարբերակին է հակված եղել. սա պետք է որ բացատրվի որպես շփոթության արդյունք, որի պատճառը մեզ հայտնի չէ, եւ որն իր ազդեցությունն է ունեցել հենց թարգմանության կատարման ժամանակ: Ամեն դեպքում խոսքը ժամանակագրական թեթեւ տեղաշարժի մասին է, որը մեծ նշանակություն չունի հունարան դպրոցի սկզբնավորման նկատմամբ ծավալվող մեծ վեճերում:

31. Հայ բանասիրության մեծ «զարտուղին», Ակինյանը՝ ամենատարօրինակ, բայց եւ միանգամայն ամենահմուտ բանասերը, որ երբեւէ ապրած լինի, խնդրո առարկա թարգմանության թվագրումը ետ է մղել մինչեւ VII դ. սկիզբը, որպես հիմք ընդունելով լուծյան մի փաստարկ (տե՛ս վերը II, Ա, i եւ II, Գ նման փաստարկների մասին): Մեզ բոլորովին հավաստի թվացող նրա հերքումի համար տե՛ս Անանյան, Ներսես Բ. Աշտարակեցի, նշվ. ծան. 27-ում, էջ 115-119: Վերջերս Վրթանես Քերթոզի կաթողիկոսական փոխանորդության զուգահիսյող ուշ թվագրման վերաբերյալ միտքը պաշտպանել է *Andrea Schmidt-Á. «Das armenische «Buch der Briefe». Seine Bedeutung als quellenkundliche Sammlung für die christologischen Streitigkeiten in Armenien im 6/7 J.H.»*, *Logos. Festschrift für Luise Abramovski, Berlin - New York, 1993*, էջ 523. Այս թվագրումը հեղինակի կողմից առաջարկվել ու փաստարկվել էր նվազ ճշգրտումով, որպես «բազում տարիներ» («mehrere jahre») Դվինի ժողովից հետո, (տե՛ս վարը, ծան. 32), իր նախորդ աշխատության մեջ «*Die Refutatio des Timotheus Aelurus gegen das Konzil von Calcedon. Ihre Bedeutung für die Bekenntnisentwicklung der armenischen Kirche Persiens im 6. JH»*, *Oriens Christianus*, 73 (1989), էջ 149-163, հատկապես էջ 155-159: Կուզի աշխատության ձեռք բերած առանձնահատուկ կարեւորությունը Հայոց եկեղեցու ծոցում VII դ. ընթացքում, որը շատ լավ ընդգծել է Շմիտը, մեզ իրավունք չի տալիս, մեր կարծիքով, թերագնահատելու ներքին եւ արտաքին տվյալների ծանր կշիռը, որոնք որպես Կուզի թարգմանության ժամանակաշրջան են մատնանշում մի թվական, որը տատանվում է V դ. վերջին քառորդի եւ VI դ. 60-ական թվականների միջեւ:

Տիմոթեոս Կուզի անձի եւ դերի մասին հետքադիկեզոնյան վեճերի ընթացքում շատ հետաքրքիր նպաստ է բերել վերջերս *Philippe Blaudeau-ն*, «*Timothe Aelure et la direction ecclésiiale de l'Empire post-*

chalcédonien», REByz, 54 (1996), էջ 107-133: *St' u նաեւ La Narratio de rebus Armeniae. Edition critique et commentaire par G. Garitte (Corpus Scriptorum Christianorum Orientalium, 132, Subsidia, t. 4), Louvain, 1967, էջ 115-116.*

32. Հայոց եկեղեցու ավանդական պատմագրությունը մեզ է հասցրել Դվինի երկու ժողով, որոնք տեղի են ունեցել VI դ.: Առաջինը՝ Բարգեն Օթմսեցի կաթողիկոսի հայրապետության օրոք (506), երկրորդը՝ Ներսես Բ. Բագրեւանդացու օրոք (555): Գիրք Թղթոցի հրատարակումից հետո հարց է ծագել, թե այդ կաթողիկոսների օրոք մեկ, թե մի քանի ժողովներ են տեղի ունեցել: Մեր կարծիքով Բարգենի հայրապետության օրոք միայն մեկ ժողով է տեղի ունեցել, չնայած այն բանին, որ նրա երկրորդ նամակը մենք հարազատ ենք համարում: Ներսես Բ-ի ժամանակ, ընդհակառակը, պետք է որ երկու ժողով տեղի ունեցած լինեն՝ 553-ին եւ 555-ին կամ էլ, ավելի հավանորեն, մի ժողով, որը երկար է տևել եւ ունեցել է բազմաթիվ նստաշրջաններ, ինչպես ենթադրել է Կարապետ Վարդապետը (Տեր-Մկրտչյան, որը հետագայում եպիսկոպոս է ձեռնադրվել) իր Հայոց եկեղեցուց Պատմութիւն աշխատության I մասում, Վաղարշապատ, 1908 (վերահրատարակվել է Երուսաղեմում, 1993), էջ 210-213: Այժմ որոշ հեղինակներ որպէս Դվինի III ժողով են նշում 553 թ. ժողովը. օրինակ, Աբել Աբեղա (Օղլուգյան), Մատենագրական հետազոտութիւններ Մովսէս Վարդապետ Երզնկացու գրական առեղծուածի շուրջ / *Untersuchungen zum literarischen Nachlass des Movses Vardapet Jersengatzi* (Ազգային Մատենադարան/ Nationalbibliothek), 238. արտատպված՝ Հանդէս Ամսօրեայ-ից, CIV (1990) 1-78, CV (1991) 51-74, CVII (1993) 1-76), Վիեննա, 1993, էջ 147: Սակայն մենք հետեւում ենք ավանդական տեսակետին, համաձայն որի Դվինի I ժողովը տեղի է ունեցել 506 թ., իսկ երկրորդը՝ 553-555 թթ.: Մանրամասների համար տե՛ս Պ. Անանյան, «Բարգէն Կաթողիկոսի երկու նամակները. Ամպեղիս Եպիսկոպոս Քերսոնի եւ Անատոլիս Երէց, Մ. Խորենացիի եւ Յովհ. Եպիսկոպոսապետի գրութիւնները, «Գիրք Թղթոց»ի յիշատակարանը, Բազմավէպ, CLIII (1985), վերատպված Քննութիւն-ի մեջ, (նշվ. ծան. 5-ում), էջ 46-60. նույնը, «Ներսէս Բ. Աշտարակեցի», (նշվ. ծան. 27-ում): Քանի որ ըստ վերը հիշատակած Գիրք էակաց-ի հիշատակարանին Հովհաննէս կաթողիկոս Գաբեղյանը դեռեւս կենդանի էր 576-577 թթ., ապա նա պետք է, որ մահացած լիներ հենց այդ տարում եւ ոչ 574 թ., ինչպես ընդունված է համարել, եւ Անանյանն էլ միանում է այդ կարծիքին («Ներսէս Բ.», էջ 86): Եթե դա այդպես է, ապա Ներսես Բ-ի հայրապետության սկիզբը պետք է տեղադրել 549-550 թթ. եւ ոչ 548 թ.: Հետեւաբար ժամանակագրական տեղեկությունը այն մասին, որ նրա հայրապե-

տույթյան շորրորդ տարում Դվինում ժողով է կայացել (552-553), ճշտվում է ավելի մեծ ճշգրտությամբ:

33. *La Narratio*, նշվ. ծան. 31-ում: Այս հրատարակությունը տալիս է, միեւնույն ժամանակ, այս հարցին վերաբերող բոլոր այլ աղբյուրների ամփոփված համայնապատկերը:

34. Պ. Անանյան, «Ներսէս Բ. Աշտարակեցի», (նշվ. ծան. 27-ում), էջ 75-77:

35. Այս փաստաթղթերի ամբողջությունը ավելի լավ պատկերացնելու համար տե՛ս հատկապես *La Narratio*, (նշվ. ծան. 31-ում): Բացի դրանից, տե՛ս Անանյան, «Ներսէս Բ. Աշտարակեցի». նույնը, Զաքարիա Հայոց Կաթողիկոսի եւ Աշոտ Իշխանաց Իշխանի թղթակցությունը Փոստ Պատրիարքի եւ նիկոզայոս Ա. Պապի հետ, (Հայագիտական գրադարան «Բազմավէպ», 35), Սբ. Ղազար, Վենետիկ, 1992, էջ 28-29: K. Maksoudian, «The Chalcedonian Issue and early Bagratids. The Council of Širakawan», *REArm*, XXI (1988-89), 334-335, մերժում է նամակի հարազատությունը: Այս խնդրի վերաբերյալ տե՛ս նաեւ *La Narratio*, էջ 372-375: Անանյանը ծանոթ չէ Մազսուտյանի հոդվածին:

36. Տե՛ս Վանատուր, Բանասիրական յօդուածներու ժողովածոյ, Երուսաղեմ, 1993, էջ 80-81:

37. Տե՛ս A. Schmidt, «Das armenische «Buch der Briefe»», (նշվ. ծան. 31-ում), էջ 329, ծան. 67: Այս նույն հետազոտողի հաջորդ ուսումնասիրությունը «*Warum schreibt Petrus der Iberer an die Armenier? Ein pseudonymer Brief und die armenisierung der syrischen Plerophorien*», *Horizonte der Christenheit, Festschrift für Friedrich Heyer für seinen 85 Geburtstag, herg. von M. Kohlbacher und M. Lesinski (Oikonomia, Quellen und Studien zur Orthodoxen Theologie, 34)*, Erlangen, 1994, էջ 250-267 վիճարկում է Գիրք Թղթոց-ում Պետրոս Իբերացուն վերագրվող կարճ նամակի հարազատությունը եւ ծագումը:

38. Շմիտի փաստարկը, որը հիմնվում է «երկու էներգիաների» մասին արվող ակնարկների վրա (հմմ. հատկապես «ոչ երկուս բնութիւնս կամ երկուս ներգործութիւնս» արտահայտությունը), մեզ վճռորոշ չի թվում: Փաստորեն, եթե անհրաժեշտ լիներ մեկնաբանել այդ արտահայտությունը իբրեւ հերքում երկու ներգործության եւ երկու կամքի վարդապետության, ապա մենք պետք է, անկասկած, սպասեինք այդ բանավեճի զարգացմանը եւ խորացմանը: Մենք ունենք դրա ցայտուն օրինակը Կոնստանդնուպոլսի պատրիարք Գերմանոսին ուղղված Ստեփանոս Սյունեցու պատասխանում, որը պահպանվել է նույն Գիրք Թղթոց-ում: Ավելին, Պետրոսի նամակում ամենեւին էլ ակնարկ չի արվում

«երկու կամքի» վերաբերյալ: Ընդհակառակը, մենք կարծում ենք, որ համատեքստում հիշատակված արտահայտությունը հեշտությամբ կարելի է բացատրել Լեոնի Տոմարի հայտնի «*Agit enim utraque forma...*» ասացվածքի նմանակությամբ, ուր *agit*-ը (հունարեն՝ *ἐνεργει*) հայերեն է թարգմանվել որպես ներգործել (հմմ. Սկզբնագիրք Տոմարի Սրբոյն Լեոնի եւ Սահմանի Սուրբ Ժողովոյն Քաղկեդոնի, աշխատասիրեալ յԱշակերտաց Մեծին Մխիթարայ Աբբահօր, Սբ. Ղազար, Վենետիկ, 1905, էջ 17, ծան. 1): Ավելացնենք, որ եթե նամակը գրվել է V դարից հետո, ապա դրա վերագրումը Պետրոս Իբերացուն, որը Հենոտիկոնի հակառակորդն էր, որն իր հերթին ընդունել էր Հայոց Եկեղեցին, շատ խնդրական է թվում: Այս տեսակետից նույնիսկ անհարազատության վարկածի առկայության դեպքում այդ նամակի վերագրումը Պետրոս Անտիոքացուն շատ ավելի հավանական է թվում:

39. Մենք կարող ենք ինքներս մեզ հարց տալ, թե բավարար հիմք կա՞րդյոք Պետրոսի նամակի հասցեատիրոջ անձի տակ անձամբ կաթողիկոսին տեսնելու համար: Դրա ժամանակագրական սահմանները կհամապատասխանեն Հովհան Մանդակունու եւ, միգուցե, Գյուտ Վանանդեցու հայրապետության վերջին տարիներին, եթե վերջինիս մահը տեղագրվի 478 թ. կամ քիչ ավելի ուշ: Այնուամենայնիվ, մեզ թվում է, որ պետք է բացառվի նամակը Գյուտին հասցեագրված լինելու ենթադրությունը, քանի որ հաշվի առնելով նրա լավ հարաբերությունները հետեւողական քաղկեդոնական Լեոն Բ-ի հետ, մեզ թույլ չեն տալիս բացատրություն գտնել Պետրոսի նամակի բարեկամական շեշտին: Բյուզանդացիների վարքագիծը խորապես փոխվում է Լեոնի հաջորդների գալստյան հետ: Հավատքի հարցերում «Հռոմի երանելի կայսեր» հետ միաբանության սկզբունքը, որը հանդիսավոր կերպով հռչակվել էր Դվինի Ա. Ժողովի ժամանակ, եւ որն անկասկած արտացոլում էր հին եւ արմատավորված մի ավանդույթ, կարող էր հնարավոր դարձնել, արդեն Մանդակունու հայրապետության օրոք, նախորդ մոտեցումների որոշ վերանայում, որի առաջին պարզորոշ արտահայտությունը, Եկեղեցու ծայրագույն Առաջնորդի մակարդակով, ի հայտ է գալիս մի քանի տարի անց Բարգեն Կաթողիկոսի մոտ. հմմ. վարը, Գ.

40. Տե՛ս Պ. Անանյան, «Գիւտ Կաթողիկոս Վանանդացի եւ Թէոդորեսոս Կիրացի Եպիսկոպոսին երկու նամակները, ուղղուած Պարսկահայոց Եւսեբիոս եւ Եւզաղ Եպիսկոպոսներուն», Քննութիւն-ում, (նշվ. ծան. 5-ում), էջ 28-40 (արտատպված Բազմավէպ-ից, CXLIV (1986), 7-19):

41. Մեր կողմից «պաշտոնական» տերմինի կիրառության վերաբերյալ տե՛ս B. L. Zekyan, «*La rupture entre les Eglises géorgienne et arménienne au début du VII^e siècle. Essai d'une vue d'ensemble de*

l'arrière-plan historique», REArm, n.s., XVI (1982), 164. այստեղ ավելի պատմական, քան իրավաբանական տեսակետից դիտարկվող պաշտոնականությունը պահանջում է, որ հիշյալ ակտը մեկուսացված մի իրադարձություն չհանդիսանա, որը հետեւանքներ չի թողնի եկեղեցու կյանքում, նույնիսկ եթե այն նախաձեռնվել է Կաթողիկոսի կողմից: Դվինի Բ. Ժողովի մասին, որպես բյուզանդական աշխարհի հետ խզման եւ Քաղկեդոնի ժողովի դատապարտման պահի, տե՛ս նաեւ ծան.ներ 27 եւ 32:

42. *Arsen Sapareli, Ganq'opisatws kartvelta da somexta (Վրաստանի եւ Հայաստանի պառակտումը), քնն. հր. ներածություն եւ ծանոթագրություններ՝ Զ. Ալեքսիձե (Sakartvelos ist' oriis c'q'aroebi, 17, Kartuli saist'orio mc'erlobis dzeglebi, I), Tbilisi, 1980, « IX, էջ 86:*

43. Լ. Մելիքսեթ - Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի եւ Հայերի մասին, I, Երեւան, 1934, էջ 40:

44. *Տե՛ս, Զ. Ալեքսիձեի քննական հրատարակության ծանոթագրություններում (ծան. 42), IX, 21, էջ 171: Մենք մեր շնորհակալությունն ենք հայտնում ծիսագիտության դոկտոր Փագա Շուրգայային, որը հաստատել է մեր ենթադրությունները խնդրո առարկա լեզվաբանական տվյալների վերաբերյալ: Մենք շնորհակալություն ենք հայտնում նաեւ մեր գործընկեր, պրոֆեսոր Լուիջի Մագարոտտոյին վրացերեն տեքստերի ընթերցանության հարցում նրա օգնության համար:*

45. *Н. Адонц, Армения в эпоху Юстиниана. Политическое состояние на основе нахарарского строя, Санктъ - Петербург, 1908, գլ. V, « 126, ծան. 1 (վերատպված է Երեւանում, 1971 թ. որպես Издание второе, Կ. Ն. Յուզրաշյանի ներածությամբ էջ 3-20). անգլերեն թարգմանությունը ընդարձակ հավելվածներով եւ ծանոթագրություններով Armenia in the Period of Justinian. The political Conditions Based on the Naxarar System, translated with partial revisions, a bibliographical note and apendices by N. G. Garsoïan, Notes, Ch. V, n. 66, p. 414:*

46. Մ. Աբեղյան, Հայոց հին գրականութեան պատմութիւն, I, Բ. հրտ. Բեյրութ, 1955, էջ 309 - 312:

47. Դարձյալ մենք նկատի ունենք Հայաստանի հենց սիրտը (տե՛ս, վերը II, Ա, ii) եւ ոչ թե պարզապես նրա ծայրամասերը եւ սահմանամերձ շրջանները: Դրանցում տիրող իրավիճակի մասին տե՛ս N. G. Garsoïan, «Somme Preliminary Precisions on the Separation of the Armenian and Imperial Churches: I. The Presence of 'Armenian' Bishops at the First Five Oecumenical Councils», *Kathêgêtria. Essays Presented to Joan Hussey Porphyrogenitus*, 1988, էջ 249-285 [նշենք, որ Armenian-ը

չակերտների մեջ է առնված]; «*Quelques précisions préliminaires sur le schisme entre les Eglises byzantine et arménienne au sujet du Concile de Chalcédoine. III Les évêchés méridionaux limitrophes de la Mésopotamie*», REArm, n.s., XXIII (1992), 39-80:

Ինչ վերաբերում է եկեղեցական գործերին, ապա Հայաստանի «սիրտ» ասելով մենք հասկանում ենք կաթողիկոսների օրինական հաջորդությունը, եկեղեցական ժողովները եւ հայ գրողների այն մեծամասնությունը, որոնց տիրող կամ գերիշխող միտումը հայոց կրոնական մտքի եւ զգացմունքների արտահայտություն է հանդիսանում: Ուստի մենք դժվարանում ենք հասկանալ, թե ինչպես կարելի է զուգահեռ տանել հակաթոռ կաթողիկոսների եւ օրինական կաթողիկոսների միջեւ, շնայած այն բանին, որ առաջինները կարող էին ունենալ նախարարների եւ ժողովրդի մի մասի նեցուկը (տե՛ս, օրինակ, G. Winkler, «*An Obscure Chapter*», ծան. 26): Հակապապերը նույնպես ունեին այդ նեցուկը, հակառակ դեպքում նրանց գոյությունն անգամ հնարավոր չէր լինի: Սակայն այդ փաստը նրանց չէր դարձնում հռոմեական կաթողիկեության ներկայացուցիչներ:

48. Տե՛ս B. L. Zekiyani, «*La rupture entre les Eglises géorgienne et arménienne*», նշվ. ծան. 41-ում, էջ 153-173, հատկապես, էջ 165-168, 172-173: N. G. Garsoïan, «*Quelques précisions préliminaires sur le schisme entre les Eglises Arménienne et Byzantine. II. La date et les circonstances de la rupture*», *L'Arménie et Byzance. Histoire et culture*, (Byzantina Sorbonesia, XII) Paris, 1996, էջ 99-112: Պ. Անանյան, «Բարգէն կաթողիկոսի երկու նամակները», (նշվ. ծան 32-ում), էջ 44-60. Նույնը, «*Ներսէս Բ. Աշտարակեցի*», նշվ. ծան 2եւ-ում: Վերջին երկու հեղինակներից ոչ մեկը ծանոթ չեն այս ծանոթագրության մեջ նշված առաջին ուսումնասիրությանը, սակայն նրանց կողմից ներկայացրած իրադարձությունների մեկնաբանությունն ունի որոշակի մերձավորություն: Այդ ընդհանրությունը միզուցե հանդիսանում է իրադարձությունների տրամաբանության հետ առաջարկված մեկնաբանության կապի նշան: Տե՛ս նաեւ. J.-P. Mahé, «*La rupture arméno-géorgienne au début du VII^e siècle et les réécritures historiographiques des IX^e-XI^e siècles*», *Il Caucaso: cerniera fra culture dei Mediterraneo alla Persia (sec IV-XI)*, 20-26 aprile 1995, t. II, (Settimane di Studio del Centro Italiano di Studi sull'Altro Medioevo, XLIII), Spoleto 1996, էջ 927-958, որը տալիս է այս հարցի status quaestionis-ի հաջող շրջահայումը:

49. Վարդանանց պատերազմի նախօրեին բյուզանդացիների վարած քաղաքակությանը վերաբերող մի ակնարկում C. L. Sanspeur-ը գրում է. «Մարկիանոսի դեմ իր տրամադրվածությամբ ոգեշնչված Եղիշեն իզուր է

նրան որակում որպես «փոքրոգի»։ նրա հիմնական նպատակը, որի համար նրան գովեստով «գերազանց կայսր» են անվանել, ֆինանսական իրավիճակի շտկումն էր եւ արտաքին աշխարհի հետ լավ հարաբերությունների վերականգնումը» (*«La neutralité de Byzance face à l'insurrection arménienne contre la Perse (450)»*, REArm n.s., XVI (1982), 153: Միգուցե շատ ճիշտ է, որ Բյուզանդիայի այդ պահի շահերը պահանջում էին այնպիսի վարքագիծ, որպիսին որդեգրել էր Մարկիանոսը: Սակայն խնդիրը դա չէ: Խնդիրն այն է, որ երկրների շահերը կարող են շհամընկնել եւ նույնիսկ միմյանց հակասել: Իսկ մենք շատ լավ գիտենք, որ հին եւ միջնադարյան պատմիչների բանակը դիտարկում էր ամեն ինչ եւ հենց պատմությունը իրենց շահերի տեսակետից: Հիշենք թեկուզ, թե ինչպես անտիկ աշխարհի ամենանրբին ու քաղաքակիրթ ազգը՝ հույները, այլացեղներին առհասարակ նկատում են որպես «բարբարոս»: Կարծում ենք, որ մենք՝ «ժամանակակից պատմաբաններս», ավելի արդարացի մոտեցում կցուցաբերեինք անցյալի եւ, հատկապես, «ծայրեզրային» ժողովուրդների պատմագրությունների հանդեպ, եթե ճիշտ կերպով հաշվի առնեինք նրանց ներկայացրած հեռանկարների տարբերությունները, դրանց շուտափույթ կերպով որպես ինչ-որ մեկի դեմ «վրդովվելու» եւ դիրքորոշում ընդունելու պիտակ կպցնելու փոխարեն: Իրականում մեզ՝ ժամանակակիցներիս համար, լինենք արեւմուտքի ներկայացուցիչներ, թե արեւելքի, մեծ բախտ է անցյալի պատմագրության մեջ հայտնաբերել այլ հեռանկարներ, քան Հունաստանի, Հռոմի կամ Բյուզանդիայի վրա կենտրոնացված հեռանկարները:

50. B. L. Zekiyán, «L' 'idéologie' nationale de Movsès Xorenac' i et sa conception de l'histoire», Հանդէս Ամսօրեայ, C I (1987), 482, նշվ. ծան. 41-ում:

51. «Introduction» Histoire de l'Arménie par Moïse de Khorène-Nouvelle traduction de l'arménien classique par A. et J.-P. Mahé (d'après V. Langlois), avec une introduction et des notes, Paris 1993, էջ 90:

52. Եղիշեին վերագրվող հարազատ կամ ոչ, հրատարակված եւ չհրատարակված ստեղծագործությունների մեզ հայտնի ամենից ամբողջական ցուցակը ներկայացրել է Ակինյանը. Եղիշէ Վարդապետ (նշվ. ծան. 3-ում), էջ 366-458: Ակինյանը Եղիշեին է վերագրում նաեւ Ղազարոսի հարությանը նվիրված ճառը (Ի Յարութիւն Ղազարու), որը հրատարակվել է Մամբրե Վերձանողի ստեղծագործությունների շարքում:

53. Տե՛ս հատկապես, R. W. Thomson, «The Maccabees in Early armenian Historiography», The Journal of Theological Studies, n.s.,

XXVI/2 (1975), 329-341:

54. Մենք գերադասում ենք բերել տեքստերի, հաճախ հազարամյա ավանդությամբ սրբագործված վերնագրերը, որոնք դարձել են գրեթե ժամանակաշրջանի, մշակույթի եւ քաղաքակրթության խորհրդանիշը: Հոմերոսը մնում է Հոմերոս նույնիսկ ամենագիտական լեզվում, ինչպիսիք էլ լինեն բանասիրության նույնիսկ ամենամիաձայն եւ ամենից ինքնավստահ հետեւությունները, ոչ թե պարզապես հարմարության համար, այլ այն պատճառով, որ նա հանդիսանում է ամբողջ մի քաղաքակրթության խորհրդանիշ:

Զխախտելով համամասնությունները, այնուամենայնիվ ասենք, որ մեր ականջներն արդեն հոգնել ենք հայկական «փոքր» բնագավառում «կեղծ» կամ նման նորարանական դարձվածքների անվերջանալի ցուցակներից, որոնցով գիտական (հաճախ վիճելի) բանասիրությունը ծանրաբեռնում է նույնիսկ ստեղծագործական պարզ հիշատակումը: Ինքնին հասկանալի է, որ այս խոսքերը չեն վերաբերում այն դեպքերին, երբ անհրաժեշտ է լինում տարբերակել իսկապես շփոթված հեղինակներին կամ նույնիսկ հեղինակի հարազատ եւ ոչ հարազատ ստեղծագործությունները, ինչպես «կեղծ-Ոսկեբերանը» կամ հայկական օրինակ բերելու համար՝ «կեղծ-Յաննիս»:

55. L. Mariès, *Le De Deo d'Eznik de Kolb connu sous le nom de «Contre les Sectes». Etude de critique littéraire et textuelle, extr. de REArm VI (1954), էջ 11-12, éd. critique du texte arménien par † L. Mariès et Ch. Mercier, Patrologia Orientalis, XXVIII/3 (1959), էջ 409-538; traduction franç., notes et tables: Patrologia Orientalis, XXVIII/4 (1959), էջ 541-776*, հրավիրել է ուշադրությունը այդ փաստի վրա: Ամեն դեպքում հանգիստություններ կան նաեւ Արտաշատի ժողովի հավատո հանգանակից դուրս, որը մեջբերում է եղիշեն:

56. Այս թարգմանության մեջ պարունակվող տարբեր ժամանակագրական տվյալների համաձայն եւ ըստ օրացույցի հաշվարկների այն պետք է, որ արված լինի 422-423 թթ. (հմմտ. Ռ. Հ. Վարդանյան, Հայոց տոմարական եղանակը, (նշվ. ծան. 30-ում), էջ 11-13: Սակայն, անկախ տվյալների նման մեկնաբանությանը տրվելիք արժեքից, մենք անհրաժեշտություն չենք տեսնում սույն թվագրման հիման վրա ժխտել խնդրո առարկա թարգմանության վերագրումը Աբրահամ Զենակացուն, ինչպես դա անում է Վարդանյանը:

57. Եղիշեի ստեղծագործության ամբողջությանը արված բոլոր հղումները, բացառությամբ այն դեպքերի, երբ կան հատուկ նշումներ, հենվում են վերը հիշատակված 1859թ. վենետիկյան հրատարակության վրա. Սրբոյն Հօրն Մերոյ Եղիշեի Վարդապետի Մատենագրութիւնք:

58. «Հակահանրություն» այնքանով, որքանով չի բացառվում գլոսասաների, ընդմիջարկումների առկայությունը, ինչպես նաև որոշ գրվածքների իսկությունը ստուգելու համար հետագա ուսումնասիրության հնարավորությունը. տվյալ դեպքում մենք նկատի ունենք Մկրտության ճառը:

Հայր Մեր-ի մեկնության եւ Մկրտության ճառի միջեւ մխիթարյան հրատարակիչների դրած *caveat* (զգուշացի՛ր) ազդարարությունը (էջ 206), առաջին հերթին, զգուշավորության նշան է: Վենետիկի մխիթարյանները խորապես համոզված էին իրենց մոտ հրատարակվող հայ հեղինակների «Հակահանրության» մասին: Այնուամենայնիվ, այդ հեղինակների ստեղծագործություններում նրանք արձանագրում էին որոշ բանաձևերի եւ թեոլոգունանանների առկայություն, որոնք հազիվ թե ուղղափառ համարվեին այդ ժամանակաշրջանի հոռմեական շրջանակների քարացած աստվածաբանության կողմից: Ուստի, հրատարակելով այդ ստեղծագործությունները, նրանք այլախոհների համբավ ձեռք բերելու վտանգին էին ենթարկվում, իսկ դա կարող էր լուրջ հետեւանքներ ունենալ, ինչպիսին էին իրենց վերապրումի արժեքավոր միջոցի՝ տպարանի փակվելու վտանգը եւ նույնիսկ Միաբանության լուծարումը: Հաճախ ինքնապաշտպանության նրանց միակ զենքը այն փաստարկն էր, որ նրանք հիշեցնում էին, որ նույնիսկ լատին Հայրերի եւ նրանց մեծագույն կերպարի՝ Սբ. Օգոստինոսի գրվածքներում երբեմն հանդիպում են մութ հատվածներ, որոնք կարող են սխալ մեկնաբանությունների տեղիք տալ: Հենց այդ բանն են նրանք անում 362 էջում Եղիշեի որոշ արտահայտությունները մեկնաբանելիս, նրա «Վասն Դատաստանին եւ ահաւոր Գալստեան» փոքրածավալ աշխատության մեջ, որը նվիրված է ննջեցյալներին:

Եղիշեի ստեղծագործության ամբողջության միասնականությունը ընդունում են նաև հայ հին հեղինակների լեզվաբանական եւ ոճական նրբությունների այնպիսի գիտականեր, ինչպիսիք են Ակինյանը (Եղիշէ Վարդապետ, (նշվ. ծան. 3-ում, էջ 410-412) եւ Քիպարյանը (Պատմութիւն Հայ հին Գրականութեան, Վենետիկ, 1992, էջ 166) ունենալով հանդերձ տարածայնություններ հեղինակի թվագրման հարցում (Քիբարյանի դիրքորոշման զարգացման համար հմմտ. 1944 թ. առաջին հրատարակությամբ լույս տեսած նրա աշխատությունը նույնի հետմահու հրատարակությանը հետ, որը մեջբերված է այստեղ): Ռ. Քոմսոնի հակադիր կարծիքը [«A Seventh Century Armenian Pilgrim on Mount Thabor», *The Journal of Theological Studies*, n.s., XVIII (1967), 28] հավանաբար առաջին ընթերցանության թողած տպավորության հետեւանքն է, որն, ի դեպ, հասկանալի է, սակայն, որը հետագայում չի խորացվել: Խոսքն անկասկած միաձեւ միասնության մասին չէ, քանի որ

ոճական առանձնահատկությունների զարգացումը հանդիսանում է մեծ գրողի գրական ուղու բաղկացուցիչ մասը:

59. «Eliše as Witness of the Ecclesiology of the Early Armenian Church», *East of Byzantium: Armenia and Syria in the Formative Period, Dumbarton Oaks Symposium 1980*, N. G. Garsoïan, Th. F. Mathews and R. W. Thomson Ed.s, Dumbarton Oaks Center for Byzantine Studies, Washington D. C. 1980, էջ 187-197:

60. Ռ. Քոմսոնը իրավացիորեն գրում է «Եղիշեն միակ հայ պատմիչը չէ, որն օգտվել է Մակարայեցիների Գրքերից». տե՛ս R. W. Thomson, «The Maccabees in Early Armenian Historiography», *The Journal of Theological Studies*, n.s., XXVI/2 (1975), էջ 329-341: «However other writers quote from those books to illustrate certain specific episodes, whereas Eliše patterns his whole interpretation of the Armenian revolt on the general situation there described as well as making specific comparisons, for example, between Yazgerd and Antiochus» (Eliše, նշվ. ծան. 4-ում, էջ 12, ծան. 25):

61. Եղիշեի ստեղծագործության ամբողջության միասնականությունը ընդունող Ակինյանը (տե՛ս ծան. 58) կասկածում է այս ճառի հարազատության վրա (նույնը, էջ 446-447): Մենք չենք կարծում, որ նա իրավացի է, հետևյալ պատճառներով. ա) այն բառերի շարքում, որոնք Ակինյանը ներկայացնում է որպես Եղիշեի համար ոչ հատկանշական եւ որոնք, հետեւաբար, տեղիք են տալիս անհարազատության կասկածներին, գոնե մեկը շատ բնորոշ է Եղիշեին. տեսաւորութիւն - տեսիլք իմաստով (տե՛ս վերը, III, Ա, i), բ) շարադրութիւն բառը, որը Ակինյանը նշում է որպես Եղիշեի ստեղծագործությանը ոչ բնորոշ բառ, օգտագործված է մի համատեքստում, որը հանդիպում է Վասն հոգւոց մարդկան աշխատության մեջ, շնայած եւ տարբերվող համատեքստում: Ահա այդ երկու հատվածները. «Այս է շարադրութիւն ազգակցութեանն Մարիամու առ Եղիսաբեթ» (ի Մկրտութիւն, 208). «Մարդ յերկնէ եւ յերկրէ ... պարզ եւ թեթեւագոյն յերկնէ, ծանր եւ շարադրական յերկէ: Զի թէ զայլ ազգաց զգայականաց զբնութիւն աստ իմանամք ...» (Վասն հոգւոց ..., 374-375), գ) շեշտված կապը, այդ ճառում եւ Վասն յիշատակաց մեռելոց աշխատության մեջ, Մկրտության եւ Հաղորդության միջեւ մարդու վերանորոգ անապականության իմաստով, դ) սկիզբ/կատարած (էջ 209) երկատումը, որը բնորոշ է Եղիշեի գրվածքների համար (տե՛ս III, Ա, ii, 12): Մենք կարող ենք բազմապատկել այդ ճառի եւ Եղիշեի ստեղծագործության ամբողջության մնացած գործերում առկա նման զուգահեռ օրինակները: Այնուամենայնիվ, մեր ուսումնասիրության ներկա փուլում չէինք ցանկանա վերջնականապես

բացառել, որ այս ճառի բնորոշ գծերի ավելի խորացված ուսումնասիրությունը կարող է փոխել մեր կատարած հետեւության կողմնորոշումը: Այդուհանդերձ մեզ հաստատ է թվում այն, որ ամեն դեպքում այս ճառը պատկանում է եղիշեի գրվածքներին բավականաչափ մոտ գտնվող շրջանակներին:

62. Ագաթանգեղոս եւ իւր բազմադարեան գաղտնիքը, Վենետիկ, Սբ. Ղազար, 1890, էջ 400 - 408:

63. Տե՛ս *The Teaching of St. Gregory. An Early Armenian Catechism*, transl. by R. W. Thomson, Harvard Univ. Press, Cambridge, MA, 1970, էջ 38: Թոմսոնը տեղյակ չէ իրենից առաջ Սարգսյանի կատարած վերագրմանը կամ գոնե չի հիշատակում այդ բանը: Իսկ ինչ վերաբերում է Սբ. Գրիգոր Լուսավորչին ավանդական վերագրման հարցին, ապա Թոմսոնը շատ լավ է ամփոփում դրա գաղափարը եւ պատճառները մեսրոպյան վերագրման վարկածում. «an attempt to sketch the lynes of the Armenian theological tradition and gain for it the authority of the Illuminator» (անդ), ուր խոսքը վերաբերում է իր քրիստոնեական ինքնության պատմական գիտակցումը ժողովրդին տալու հարցին: Վերջերս Սեն Արեւշատյանը նույնպես միացել է այդ կարծիքին, Մեսրոպ Մաշտոցին վերագրելով նաեւ Հաճախապատում կոչվող ժողովածուն. «Մեսրոպ Մաշտոցի փիլիսոփայական հայացքները», Պատմա-բանասիրական հանդես, 1996, 1-2 (143-144), էջ 91-97:

Ժամանակին, մինչ Թոմսոնի եւ Արեւշատյանի կողմից Վարդապետության վերագրումը Մեսրոպ Մաշտոցին, Հայր Անանյանը առաջ է քաշել Թեոդորոս Մոպսուեստցուն այդ գործի վերագրման վարկածը (Վարք Սբ. Մեսրոպ Մաշտոցի, նշվ. ծան. 12-ում, էջ 378-403): Համաձայն լինելով ականավոր բանասերի այն մտքին, որ այս գրվածքն ակնհայտորեն պատկանում է անտիոքյան կնիքը կրող քրիստոսաբանական ավանդությանը, այնուամենայնիվ, մենք չենք տեսնում դրա հեղինակությունը Անտիոքի շրջան տեղափոխելու հրատապ անհրաժեշտություն: Ոչ միայն չկա եւ ոչ մի վկայություն, որը կհակասեր վաղ քրիստոնեական շրջանի այդ խոշոր կենտրոնից դեպի Հայաստան ներթափանցող հզոր ազդեցության հնարավորությանը, այլեւ, ընդհակառակը, մենք ծանրակշիռ պատճառներ ունենք ենթադրելու, որ Հայոց եկեղեցու նախեփեսոսյան շրջանում անտիոքյան ազդեցությունը շատ հզոր էր, միգուցե եւ ամենահզորը, եւ քրիստոսաբանության ասպարեզը բացառություն չէր կազմում: Դրա ավելի քան պերճախոս վկայությունն է Սրբոց Թարգմանչաց գործունեության նախնական փուլում V դ. առաջին տասնամյակներում, Ս. Հովհան Ոսկեբերանի ստեղծագործությունների ճակատագիրը, որի քրիստոսաբանությունը կրում է անտիոքյան ավանդության ակնհայտ նշանները. այդ

ստեղծագործությունների թարգմանության համամասնությունները երբեւէ համեմատության մեջ չեն կարող դրվել եկեղեցու մյուս Հայրերի ստեղծագործությունների թարգմանությունների հետ:

64. Շ. Ռընոն այս ճառի համար առաջարկում է VI-VIII դդ. թվագրում որպես հիմք ընդունելով «այսօր» ժամանակական մակբայը եւ այն մեկնաբանելով Պայծառակերպության տոնի համեմատությամբ, որը վկայված է VI դարից սկսած [տե՛ս *Le Lectionnaire de Jérusalem en Arménie. Le Cašoc*, I, *Introduction et Liste des manuscrits, Patrologia Orientalis, XLIV/4, (1989), 437-438*: Հեղինակը հղում է նաեւ Թոմսոնին, *A Seventh-century Armenian Pilgrim (նշվ. ծան. 58-ում)*, իր թեզին լրացուցիչ կշիռ տալու համար (էջ 438, ծան. 32)]: Մենք, ընդհակառակը, կարծում ենք, որ Պայծառակերպության ճառը «ճառերի» մի շարքի մասն է կազմում, շարք, որը հղացվել էր ավելի որպես «մտքի բարձրացում» կամ մտորումներ Տիրոջ կյանքի խորհուրդների մասին (տե՛ս վերը ծան. 1) եւ որ «այսօր» ժամանակի մակբայը վերաբերում է պարզապես խորհրդի հիշողությանը, այժմեականությանը: Իսկ ինչ վերաբերում է Ակինյանի, իսկ նրանից հետո Թոմսոնի փաստարկներին, որոնք վերաբերում են եղիշեի ճառում հիշատակված Թաբոր լեռան երեք մատուռներին, որը նրանց դրդել է ավելի ուշ թվագրում առաջարկել, ապա մենք կարծում ենք, որ դա հապշտապ հետեւություն է: Ճիշտ է այն, որ լեռան վրա գտնվող երեք «բազիլիկների» մասին առաջին հիշատակությանը մենք հանդիպում ենք Պիաչենցայի Անանուն-ի մոտ, մոտավորապես 570 թ.: Նույնիսկ եթե մենք այդ թվականը կամ դրան նախորդող տարիներն ընդունենք որպես *terminus a quo* (չնայած այն բանին, որ դա կարող է լուծյան փաստարկ լինել), ապա դրանից բոլորովին էլ չի հետեւում, որ այդ բազիլիկների կառուցից առաջ այդ տեղում ոչինչ չկար: Հակառակը, ոմանք նույնիսկ հարց են տվել «*Waren diese Hütten schon zu Stein geworden oder zeigte man drei Höhlen?*» (K. Kopp, *Die heiligen Stätten der Evangelien, Regensburg, 1959*, էջ 303. Անանունի վկայությանը նախորդող ժամանակաշրջանի վերաբերյալ լրացուցիչ մանրամասների համար տե՛ս նույնը, էջ 302-305): Ավելին, արդեն XIX դ. հնագիտական տվյալների հիման վրա Դը Վոգյունեն կարող էր գրել. «Հավատքից դրդված դեռ շատ վաղ շրջանում այդտեղ եկեղեցիներ եւ վանքեր են կառուցվել: Կրոնական շինությունների շուրջը մի ամբողջ քաղաք է խմբավորվել... Ավերակներով եւ լայնատերեւ կաղնիներով շրջապատված, նշմարվում են երկու եկեղեցիների մնացորդներ. մեկը կարծես թե շատ հին է, իսկ մյուսը թվագրվում է հաշակրաց արշավանքների ժամանակաշրջանով... Առաջինը ավելի մեծ հետաքրքրություն է ներկայացնում ... Այդ փոքր շինությունը նման է IV-V դդ. մատուռներին: Ինչ վերաբերում է ինձ, ապա ես

չեմ վարանում այն Սրբազան Երկրի ամենահին կրոնական շինություններից մեկը համարել» (*M. De Vogüé, Les églises de la Terre Sainte, Paris, MDCCCLX, p. 353*): Եվ չկա եւ ոչ մի փաստ, որը մեզ ստիպեր մտածել, որ դա միակ կրոնական կառույցն է եղել Քաբոր լեռան վրա մինչեւ 570 թվականը: Եղիշեին նվիրված իր աշխատության երրորդ հատորում Ակինյանը, ինչպես նաեւ Քոմսոնը նրանից հետո, անտեղյակ են այս խնդրին: Ավելացնենք նաեւ, որ հակառակ օտար աղբյուրների լռության, հայ վանականների ներկայությունը Սուրբ Երկրում գրեթե ստույգ պետք է նկատել: Նույնինքն Շ. Ֆրնուի կատարած կոթողային աշխատանքը հայկական ճաշոցի եւ նրա երուսաղեմյան շատ վաղ կապերի մասին, Մայքլ Ստոնի հրատարակությունները Սինայի հայկական արձանագրությունների մասին, շատ կանուխ դարերից սկսյալ, ավելի քան բավական փաստեր են Սուրբ Երկրում հայ վանականության հնագույն ավանդների մասին:

65. Դա Քեոդոսիոս Կրտսերին հասցեագրված հայերի նամակում է, որով նրանք վերջինիս օժանդակություն են հայցում. «նմանապես նա [«մեր նախնի Տրդատը»] Քրիստոսի հանդեպ հավատքը ստացավ Հռոմի սուրբ եպիսկոպոսապետից (ի սուրբ եպիսկոպոսապետէն Հռովմայ)»: Ինչպես հենց համատեքստից, այնպես էլ Խ Քարոզութիւն Առաքելոց ճառի հետ զուգահեռից պարզ է դառնում, որ խոսքը «նոր Հռոմի» մասին չէ, որը գոյություն չուներ այն ժամանակ, երբ Տրդատը քրիստոնեություն էր ընդունում: Նամակի մեջ եղած պնդումը անկասկած ակնարկ է Տրդատի եւ Սբ. Գրիգոր Լուսավորչի Հռոմ կատարած ճանապարհորդությանը, որը վկայված է երկու ավանդություններով՝ Ագաթանգեղոսի հունարեն եւ հայերեն տարբերակներով: Այս ճանապարհորդության արժանահավատության վերաբերյալ տե՛ս Լ. Ս. Կոզյան, «Հայոց Եկեղեցին» մինչեւ Փլորենտեան ժողովը, Բեյրութ, 1961, էջ 103-105 (հեղինակը, որը ներկայացնում է նաեւ հարցի տեքստային եւ քննական վիճակը, ժխտում է, միգուցե գերքննական մտահոգությամբ, որը հետեւանքն է նրա ձեռնարկման շատագուրվական բնույթի եւ հենց իր աստվածաբանական մտահոգությունների, ավանդության տվյալների նույնիսկ հավանականությունը): Անապատական, Համառոտ պատմութիւն Հայ-լատին յարաբերութեանց սկիզբէն մինչեւ 1382 թ., Բ. հրատ., Անթիլիաս, Լիբանան, 1981, էջ 26-31: Հ. Պ. Անանյանը գրում է. «*Benché il viaggio possa essere ritenuto un fatto storico, tuttavia nel Medio Evo esso diede origine ad una leggenda ...*» («*Gregorio Illuminatore*» *Bibliotheca Sanctorum, VII, Roma 1966, սյուն. 183*): Ինչ վերաբերում է մեզ, ապա մենք լուրջ նախնական *caveat* չենք տեսնում ոչ պատմական համատեքստում, ոչ էլ տեքստային քննության տեսակետից, քանի

որ փաստը շարադրված է Լուսավորչի Կյանքի նախնական հունարեն խմբագրության մեջ. տե՛ս G. Garitte, *Documents pour l'étude du livre d'Agathange*, (*Testi e Studi* 127), *Città del Vaticano*, 1946, par. 181-189, *commentaire*, էջ 328 – 331: Եվսերիոս և Սիլվեստրոս պապերին շփոթելու վերաբերյալ, նույնը, էջ 213 - 233: Տես նաև մեր հոդվածը, *Les disputes religieuses du XIV s, prélude des divisions et du statut ecclésiologique postérieure de l' Eglise Arménienne, Actes du Colloque «Les Lousignan et l'Outre-Mer»*, Poitiers - Lusignan 20-24 oct. 1993, *Programme com'Science, Conseil Régional Poitou-Charentes*, ծան. 1, էջ 312-313:

Վերքի գիտողությունը («*Bemerkungen zur palästinischen Ortskunde aus altarmenischen Schriftstellern*», *Հանդես Ամսօրեայ*, XLI (1927) 817-826, հատկապես 822-824) այն մասին, որ Հռոմի և Աթենքի համար անցյալ անկատար ժամանակի օգտագործումը («Հռոմ ուր անդ թագաւորութիւն էր», «Աթէնք՝ ուր ճարտարապետք փիլիսոփայիցն էին») պետք է որ Կայսրության անկումից (476) և Աթենքի Ակադեմիայի փակվելուց հետո գրված լինելու նշանը լիներ, մեր կարծիքով ծանրակշիռ չէ: Այդ անցյալ անկատար ժամանակը շատ լավ բացատրվում է հենց *consecutio*-ով (շարահյուսական համահետեմամբ), քանի որ գլխավոր նախադասության գործողությունը տեղի էր ունեցել հեռավոր անցյալում:

66. L. Mariès, *Le De Deo d'Ezrik*, նշվ. ծան. 55-ում, էջ 33:

67. R. Murray, *Symbols of Church and Kingdom. A Study in Early Syriac Tradition*, Cambridge Univ. Press, 1975, reprinted with correction 1977, էջ 14-15: Տե՛ս նաև վերը ծան.ներ 59 և 60: Իրականում խոսքը, միգուցե, դարձյալ բավականին ինքնատիպ հայկական բնութագրի մասին է: Ընդհանրապես հայերի բնավորության և մշակույթի մեջ կարելի է հանդիպել այս բավականին պարադոքսալ գծին. հայերը շատ հաճախ հանդես են բերում նույնքան խորը պահպանողականություն, որքան արտահայտված հակում նորամուծությունների հանդեպ և նույնիսկ որոշակի հեղափոխական կամ «անիշխանական» ոգի: Այսպիսով հայերենը դասվել է այն լեզուների շարքը, որոնք պահպանել են հնդեվրոպական լեզվի ամենից արխայիկ կողմերը և միեւնույն ժամանակ այն հեղաշրջել է հնդեվրոպական համակարգի որոշ գծերը: Մեսի ասպարեզում Մկրտության խորհրդի վերաբերյալ G. Winkler-ը իր *Das Armenische Initiationsrituale*, (*Orientalia Christiana Analecta*, 217) Roma, 1982, ուսումնասիրության մեջ անհերքելի կերպով ցույց է տվել, թե ինչպես է հայկական ծեսը, շնայած հետագա բազում զարգացումներին, պահպանել իր ամենից արխայիկ կողմերը, որոնք ասորական ծագում ունեն և որոնք նույն մաքրությամբ չեն պահպանվել ասորական պատարագում: 1996

եւ 1997 թթ. Վատիկանի Արեւելագիտական Ինստիտուտում պաշտպանվել են երկու դոկտորական թեզեր, ուր լուսարանվել է նման մի իրողութիւն: Առաջինի հեղինակն է Կ. Գուշերոտտին: Զեռնադրման հայկական ծեսի հիման վրա նա ցույց է տալիս, որ այն կիլիկյան շրջանում լատին ծեսի ավանդներով հարստանալով հանդերձ, այնուամենայնիվ, կարողացել է իր նախնական ձեւի մեջ պահպանել ծեսի արխայիկ կորիզը: Երկրորդը, որի հեղինակն է Միքայէլ Ֆրնտրզյանը, վերաբերում է ժամագրքին եւ բացահայտում է, որ այդ պատարագի ինքնատիպ կառուցվածքը անփոփոխ է մնացել շնայած հաջորդական զարգացումներին:

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՒՈՍՅԱՆ

ՀԱՎՈՒՅ ԹԱՌԻ ՎԱՆՔԻ ԵՒ ԱՊԻՐԱՏՅԱՆ ՏՈՀՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ՏՎՅԱԼՆԵՐ

Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը հեղինակային բնագրից բացի պարունակում են բազմաթիվ հավելումներ: Գրիգոր Գ Պահլավունի (1113-1166) կաթողիկոսի պատվերով կազմած եւ դեպքերի արձանագրումը 1163 թվականով ավարտած Անեցին իր երկն անվանել է «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտ ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ»: Նա որդեգրել է Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնի» սկզբունքը՝ թվականների զուգադիր սյունակները տեղադրել է էջերի կենտրոնում, իսկ տեղեկությունները զետեղել դրանց աջ եւ ձախ կողմերում: Այն հատվածներում, ուր տեքստը ծավալով շատ է, աղյուսակն ընդհատվում է, եւ սկսվում սովորական շարադրանքը՝ էջի լայնքով, որի ավարտին կրկին հաջորդում են աղյուսակները: Բնականաբար, ամեն տարվա դիմաց ժամանակագիրը զուգադիր տեղեկություն չունի, ուստի աղյուսակներում բավականաչափ ազատ տեղեր են մնում: Հենց դրանք էլ գրավել են հետագայի ընդօրինակող գրիչներին ու բանիմաց ընթերցողներին (ձեռագրերի տերերին), որոնք տարբեր տեղեկություններով յուրովի «լրացրել» են ազատ տեղերը: Դրա արդյունքում ժամանակագրությունը մեծապես «աճել է»: Արշակ Տեր-Միքելյանը 1893 թ. Վաղարշապատում ձեռքի տակ ունենալով 13 ձեռագիր (հնագույնը՝ 13 թդ դ., մեծագույն մասը՝ 17-րդ դ.) Անեցու երկը հրատարակել է այդ հավելումներով¹:

Ուսումնասիրելով ժամանակագրության ամենավաղ՝ հեղինակի ապ-

¹ Սամուելի Բահանայի Անեցոյ Հաւամունք ի գրոց պատմագրաց՝ յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Արշակ Տեր-Միքելյանի, Վաղարշապատ, 1893 (այսուհետեւ՝ Ա ն ե յ ի):

րած դարաշրջանի երեք ձեռագրերը², համոզվեցինք, որ հրատարակության մեջ Անեցու բուն շարադրանքը, հատկապես 10-12-րդ դարերի հատվածում, ծավալով եռակի անգամ զիջում է հետագայի հավելումներին: Իսկ ժամանակագրության շարունակողները շատ ավելի առաջ են գնացել: Մատենադարանի թիվ 7261 ձեռագրում այն հասնում է 1702 թ., 10202-ում՝ 1692 թ. եւ այլն: Ժամանակագրության հետագա շարունակող-լրացնողները հավանաբար նման վարձուների համար հիմնավորում են տեսել Անեցու երկի վերնագրում «յաղագս գիւտ ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս» (այս եւ հաջորդ ընդգծումները մերն են - Կ. Մ.), արձանագրելով իրենց համար «ներկա» ժամանակի դեպքերը: Հենց այդպես է վարվել, օրինակ, Ստեփանոս Օրբելյանը, որը ձեռքի տակ ունենալով Անեցու ժամանակագրության լրացված եւ Հայոց ՈՆԲ (1193) թվականով ավարտվող օրինակ, պատշաճ է համարել այն շարունակել՝ «...բերել հասուցանել մինչ ի մերս ժամանակս»³:

Սամվել Անեցու՝ Մատենադարանում պահվող մատյաններն ուսումնասիրելիս պարզ դարձավ, որ ժամանակագրության այն ձեռագրերը, որոնք ծանոթ չեն եղել Արշակ Տեր-Միքելյանին, պարունակում են ցայժմ չհրատարակված բազմաթիվ տեղեկություններ եւ ժամանակագրական միավորներ, որոնց ուսումնասիրությունն ու հրատարակումը պատմագիտական մեծ ու փոքր նորություններ է բերելու: Այս առումով հատկանշական է Մատենադարանի թիվ 3681 մատյանը, որտեղ Սամվել Անեցու երկը միջարկվել է մի շարք հավելումներով, որոնք ուշագրավ տեղեկություններ են պարունակում Գառնիի, Հավուց թառի վանքի պատմության եւ այդ համատեքստում Ապիրատյան (Հասանյան) իշխանատոհմի վերաբերյալ:

Արճեշի Ուռնկար վանքում 1315 թ. Հայրապետ կրոնավորի ընդօրինակած այս ձեռագիրը գրված է թղթի վրա (16,5x12 սմ), բոլորգրով: Անեցու ժամանակագրությունը զբաղեցնում է 2ա-89բ էջերը (ամբողջ մատյանն ունի 116 թերթ, երկրորդ մասը՝ «Յաղագս աղանդոյն Մայրագոմեցւոյ», գրված է այլ գրով): Ձեռագրի առաջին թերթին Հայրապետ

² Կ. Մաթևոսյան, Սամվել Անեցու ժամանակագրության հնագույն ձեռագրերը, ակադեմիկոս Ն. Մառի ծննդյան 140 եւ մահվան 70-ամյակների տարելիցի ժողովածու, խմբագիր՝ Պ. Մուրադյան, Երեւան, 2005, էջ 37-48:

³ Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբելեանի, հրատարակության համար պատրաստեց Ա. Աբրահամյանը, Երեւան, 1942, էջ 21, 31: Ստ. Օրբելյանի հեղինակության հարցում հայտնված կասկածներն այժմ համոզիչ կերպով հերքված են: Տե՛ս է. Բաղդասարյան, 13-րդ դարի մի ժամանակագրության հեղինակի մասին, «Պատմաբանասիրական հանդես», 1971, թիվ 2, էջ 210-216:

գրչի հիշատակարանն է, ուր նշվում են ձեռագրի վերաբերյալ հիմնական տվյալները. «Գրեցաւ գիրքս երկրիս Արճիշո ի Ս(ուր)ք ուխտս որ Ուռնկար անուանակոչի սրբոյն... (ի) խնդրոյ ս(ուր)ք եւ խստակրան ընդրեալ վարդապետի Յովհաննէս, ձեռամբ Հայրապետի սուտանուն կրանաւորի եւ յոյժ մեղաւորի: Արդ, որք հանդիպիք սմա՝ յիշեցէք զՅովհաննէս վարդապետ եւ ծնողսն իւր եւ դուք յիշեալ լիջիք: Ի Թվականիս ԶԿԴ (1315)»⁴:

Ձեռագրում պահպանվել են նաեւ Աթանաս կազմողի հիշատակարանը (էջ 90ա), ըստ որի նա 1548 թ. «յերկիրս Զրաբերթոյ» (գավառ Արցախում) մատյանը կազմել է Հովհաննէս վարդապետի պատվերով:

Հնդհանուր առմամբ մատյանի թերթերը շատ մաշված են, բաց թանաքով գրված բնագրի տեքստը տեղ-տեղ համարյա անընթեռնելի է դարձել: Անեցու ժամանակագրությունն այստեղ ներկայացված է հիմնականում անաղարտ բնագրով, ավարտվում է նույն տեղեկությամբ, ինչպես որ հնագույն երեք ձեռագրերում⁵: Սակայն հետազայում ինչ որ մեկը ժամանակագրության տարրեր հատվածներում այս կամ այն դեպքի վերաբերյալ եղած տեղեկություններին հավելումներ է արել, նաեւ նոր տեղեկություններ մուծել: Բարեբախտաբար, նա գրել է մուգ թանաքով, որը բնագրի համեմատ ավելի ընթեռնելի է: Ներմուծված հատվածները գլխավորապես Գառնիի եւ Հավուց թառի պատմությանն ու փառաբանությանն են վերաբերում: Դրանց հեղինակի ինքնությունը պարզվում է ձեռագրի 83բ-84ա էջերի ստորին լուսանցում պահպանված հիշատակարանի շնորհիվ. «ԶԳԲ (1343)⁶ սահմի: Ես նուաստ Նաթ (Նաթանայել, Կ. Մ.) եպ. Հայոց թառոյ յոյժ ...ել եւ անմխիթար տրտմել եկի լալագին աշա(ւք) ...կացի ի Մաղբսբերդ Զ(6) ամիս եւ յԱստուած հաւատարիմ հ(ոգե)որ եղբայրն իմ Ամիրզայն մեծաւ սիրով ընկալաւ զիս եւ (83բ) քաղցրութեամբ մխիթարեց, Աստուած զինքն մխիթարէ, ամէն (էջ 84ա)»: Իր բարերար Ամիրզային Հավուց թառի Նաթանայել եպիսկոպոսը հիշատակում է նաեւ 45բ էջի ստորին լուսանցի հիշատակարանում «Քրիստոս Աստուած պահեայ զպարծանաց եղբայրքն զպարոն Ամիրզայն եւ զԹանզութն եւ փրկեայ ի շարեաց»: Երրորդ անգամ Ամիրզան եւ նրա ազգականները հիշատակվում են ձեռագրի երկրորդ մասում, 93բ էջում սկսվող եւ 94ա էջում

⁴ Մատենադարան, ձեռ. 3681, էջ 1բ: Այս եւ ձեռագրի մյուս հիշատակարանները, ինչպես նաեւ ժամանակագրության մեջ մուծված հետազայի հավելումները հրատարակվում են առաջին անգամ:

⁵ Կ. Մ ա թ ե լ ո ս յ ա ն , նշվ. աշխ., էջ 44-45:

⁶ Թվականի մասը խիստ մաշված է, հատկապես վատ է երևում տասնավորը: Ձեռագրի հիշատակագրություններն ընդհանրապես գրված են էջերի ստորին լուսանցներում, աղյուսակներից ներքեւ եւ շատ մաշված են:

հայտնի առաջնորդ Զաքարիան ապրել է 15-րդ դարում, առաջին անգամ հիշվում է 1423-ին¹¹:

Հարկ է նշել, որ Նաթանայելի հիշատակարանից բացի, ձեռագրում կան 14-րդ դարի կեսերի գործիչների անուններ պահպանած նաև այլ, ցավոք խիստ մաշված, հիշատակագրություններ: 4ա էջի ստորին լուսանցում կարդացվում է. «...աց սրբոցն միջնորդութեամբ ազա(տեա՞) (զՇրվ)անշահն ի յանարի(նաց)», 5ա էջում «...այ զպարոն Քամարն եւ զՇրվանշահն ի ձեռա... եւ ժառանգեցայ զտունս հայրէնի: Ամէն»: Շրվանշահը հիշվում է նաև ձեռագրի վերջում 114բ-115ա էջերում պահպանված աղոթք-մակագրության մեջ, ուր նշված «ամենափրկիչը» թույլ է տալիս գրության վայր համարել Հավուց թառը. «(Քրիստոս) որդի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, սուրբ Աստուածածնիդ միջնորդութեամբ... ամ խաչիդ եւ սուրբ ամենափրկիչիդ եւ սուրբ... (114բ)...(պ)ահ(պանեա) զՇրվանշահ յանարինացն շարեն... հաստատէ...» (115ա):

Քամարը եւ Զաքարյան Շահնշահ Գ-ը, որի եղբայրն է Շրվանշահը, ըստ Բագնայրի ավետարանի 14-րդ դարի կեսերի մի հիշատակարանի¹², հիշվում են Հավուց թառի նույն ժամանակաշրջանի արձանագրություններից մեկում¹³: Այս երեքը միասին հիշատակվում են նաև Հովհաննավանքի մի անթվական արձանագրության մեջ¹⁴: Այսպիսով մեր ձեռագիրը արժեքավոր հիշատակություններ է պահպանել նաև Զաքարյան տոհմի վերջին շառավիղների մասին:

Անեցու ժամանակագրության ընդօրինակությունը Նաթանայել եպիսկոպոսի ձեռքն է հասել արդեն բավական վնասված (այն հավանաբար ժամանակին տուժել է ջրի ազդեցությունից): Թերեւս այդ է պատճառը, որ Նաթանայելը որոշ էջերում Հայրապետ գրչի բաց թանաքով գրած տողերի կամ առանձին բառերի վրայից անցել է իր գործածած մուգ

¹¹ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 304:

¹² Բագնայրի ավետարանի 14-րդ դարի մի հիշատակարանի գրիչը խնդրում է հիշել «...արապակ Շահանշահին եւ եղբար իւրոյ պարոն Շրվանշահի...»: Գ. Յ Ն Վ Ա Ե Փ Ե Ա Ն, Յիշատակարանց ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 891, Գ. Հ Ն Վ Ա Ե Փ Ե Ե Ա Ն, Հավուց Քառի ամենափրկիչը..., էջ 29:

¹³ «(Շնոր)հին Աստուծոյ եւ ողորմութ(եամ)բ մեր պա(րոն)ացն (դիտովայ) Քամարին եւ արաբակ Շահանշահի...»: Գ. Հ Ն Վ Ա Ե Փ Ե Ե Ա Ն, Հավուց Քառի ամենափրկիչը..., էջ 29-30:

¹⁴ Ոմն Ամսայշանի արձանագրության սկզբում նշվում է Քամարի իշխանությունը, ապա շարունակության մեջ ասվում է. «...վասն արեշատութեան պարոնաց մերոց եւ պարոն արապակ Շահանշահի եւ Շրվանշահի...» (Կ. Ղ ա Ֆ ա դ ա Ր Ե Ա Ն, Հովհաննավանք եւ նրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 101):

թանաքով (էջ 54ա, 60ա, 61ա, 71ա, 72ա, 78ա, 79ա, 80բ, 83բ, 89ա, 89բ, 90ա եւ այլն), հավանաբար նաեւ փշացած 81 թերթը փոխարինել է նորով ու արտագրել տեքստը¹⁵: Կարծում ենք՝ նրա միջամտությամբ է փոխվել նաեւ ժամանակագրության վերնագրի բառերից մեկը՝ «Սամուելի քահանայի հաւաքմունք ի հնոց պատմագրաց...» (էջ 2ա):

Որտե՞ղ էր ժամանակավորապես ապաստանել նաթանայել եպիսկոպոսը: Անիի մերձակա Մաղասբերդից (Մաղասաբերդ) բացի այդ անունով ուրիշ ամրոց հայտնի չէ: 1222 թ. այն հիշատակվում է հետեւյալ կերպ՝ «...ի յԱնի քաղաքին դռան ի վերա բերդ եւ անունն Մաղասբերդ...»¹⁶: Հարկ է նշել, որ 14-րդ դարի 40-ական թվականներին Անին տակավին պատկանում էր մոնղոլների գերիշխանությունն ընդունած Զաքարյաններին¹⁷: Ավելացնենք, որ մշտապես Անիի հետ սերտ կապ ունեցող Մաղասբերդի մասին 1222 թվականից հետո մինչեւ 17-րդ դարը այլ տեղեկություն հայտնի չէր, եւ նաթանայելի հիշատակարանը մասամբ լրացնում է այդ բացը:

Հիշատակարանների տվյալները նկատի ունենալով, ձեռագրի անցած ուղու մասին կարող ենք հետեւյալ ենթադրությունն անել: 1315-ին Արճեշի Ուռնկար վանքում Հովհաննես վարդապետի պատվերով Հայրապետ գրչի ընդօրինակած մատյանը որոշ ժամանակ անց հայտնվել է Մաղասբերդում: 1343-ին հավանաբար հալածանքների պատճառով Հավուց թառի նաթանայել եպիսկոպոսը ապաստանել է այստեղ, իր հոգեւոր եղբայր Ամիրզայի մոտ: Այս մասին նա գրում է Մաղասբերդում վեց ամիս մնալուց հետո, եւ պատահական չէ, որ հիշատակարանի առաջին բառը ամսանվան հիշատակությունն է՝ «սահմի»: Սա ենթադրել է տալիս, որ նա հենց այդ ժամանակ է ձեռք բերել մատյանը եւ հիշատակագրել իր հետ կատարվածը, նաեւ երախտագիտությամբ հիշատակել Ամիրզային: Անեցու ժամանակագրության մեջ հավելումները նա հավանորեն կատարել է Հա-

¹⁵ Այս էջում ժամանակագրության այն հատվածն է, որ Սամվել Անեցին Բագրատունյաց քաղաքապետության անկման մասին փոփոխ ողբ է գրել հենց ժամանակագրական նեղ սյունակի մեջ, եւ որի այսօրինակ գրությունը հատուկ է ժամանակագրության հնագույն ձեռագրերին (Կ. Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 43-44): Սա մի հավելյալ վկայություն է, որ Հայրապետ գրչի ունեցած նախօրինակը բավական հին է եղել:

¹⁶ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 131:

¹⁷ Վահրամ Զաֆարյանի, Շահնշահ Գ-ի, ինչպես նաեւ Անիում նրանց նշանակած պաշտոնյա Գրիգոր Խուցեսի ու նրա որդիներ Ասիլի եւ Պարոնի գործունեության մասին պահպանված մի շարք տվյալներ վկայում են, որ ֆաղաֆն այդ շրջանում համեմատաբար բարվոք վիճակում էր գտնվում Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն , Երկեր, հ. Գ, Երևան, 1977, էջ 343, 4. Մ ա - բ ե լ ո ս յ ա ն , Անի, Ս. էջմիածին, 1997, էջ 331, 364-365:

վուց թառ վերադառնալուց հետո, դատելով դրանցում եղած որոշ արտահայտություններից («առ որ մերն կայ», «ի Հայոց թառոյ, ի յաստ»): Հենց այստեղ են հիշատակագրություններ գրվել նաեւ պարոն Քամարի ու Շրվանշահի վերաբերյալ (էջ 4ա, 5ա, 115ա): Ավելի ուշ ձեռագիրը տարվել է Արցախ, որտեղ 1548 թ. այն կազմել է Աթանասը:

Այժմ ծանոթանանք նաթանայել եպիսկոպոսի՝ Սամվել Անեցու ժամանակագրության մեջ կատարած հավելումներին¹⁸:

Ա

Ձեռագրի 49ա էջում փրկչական ՅԺԲ (312) թվականի, Տրդատ Գ թագավորի 22-րդ տարվա եւ Գրիգոր Լուսավորչի կաթողիկոսության 6-րդ տարվա դիմաց սյունակում գրել է. «Յայսմ ամի շինեց արքայն Հայոց Տրտադ զարմանալին տեսողաց զհովանոցն քեան իւրոյ արեորդին Խոստրովիթիսթոյ ի գեղաքաղաքին ի Գառնի, որ այժմ կոչի Սարաւոյթ Գրդատայ, առ որ մերն կայ գերեզման ս(ուր)բ հայրապետացն Հայոց Տէր Գէորգայ եւ երիցս երանելի սուրբ ճգնաւորին Տէր Մաշտոցին եւ Տէր Յովանեսի, եւ սուրբն Գրիգոր շինեց զՍուրբն Գրիգոր եկեղեցին ի Գառնի եւ կանկնեց նշանք տէրունականս»:

Բ

52ա էջի աղյուսակում փրկչական ՆԺԷ (417) թվականի դիմաց Սահակ Պարթեւի աթոռակալության մասին Անեցու գրածը¹⁹ նաթանայելը շարունակել է՝ «Եւ արար սկիզբն շինվածոյ մեծա... եւ վայելչաշէն զարմանակերտ եւ հոյակապ ուխտին Հայոց թառոյ եւ ժողովեց կրաւնաւորս ԳՃ (300) հնտակերս եւ բոկազնայ»:

Նույն էջի ստորին մասում եղած գրությունը դժվարընթեռնելի է: Հայոց դպրության սկզբնավորման, Մեսրոպ Մաշտոցի եւ Սահակ Պարթեւի մասին Անեցու գրածը²⁰ շարունակված է՝ «... (հայրա)պետն Սահակ եւ Մաշտոց վարդապետն հիմնարկեցին եւ անուանեցաւ աթոռ Հայոց եւ թառ թարգմանութե(անց)... (Հաւ)ուց թառ ան(ուան)ալ»:

Գ

52բ՝ փրկչական ՆԻՁ (426) թվականի եւ Սահակի կաթողիկոսության 10-րդ տարվա դիմաց գրված է. «Յասմ ամի շինեց սուրբ հայրապետն Հայոց Սահակ զՍուրբ Կաթողիկէն ի Գառնոյ ձորին ի վերա գետին եւ

¹⁸ Մեջբերումներում պահպանում ենք բնագրի ուղղագրությունը, նաեւ տառասխալները, միայն բացելով համառոտագրությունները՝ սբ., (սուրբ), տր. (Տէր), ւծ (Աստուած):

¹⁹ Ա ն ե ց ի , էջ 68:

²⁰ Նույն տեղում:

ժողովեց բազում կրանաւորս հնտակեր եւ բոկագնայ եւ հաստատեց վանք եւ ինքն առանձնանայր ի Հայոց թառոյ ի յաստ եւ անուանեց (...)»²¹ Գետոց վանք (եւ այ)ժմ ունի զտեղիս զայս սուրբ ուխտն (Հայոց) թառ»:

Դ

62թ՝ փրկչական ՈՄԴ (654) թվականի դիմաց ներսես Գ Շինողի գործունեության՝ Ս. Գրիգորի (Զվարթնոց), Դվինի Ս. Սարգսի եւ Խոր վիրապի եկեղեցիների կառուցման մասին Անեցու հայտնած տեղեկությունը²² նախանայելը շարունակել է. «Եւ ի Գառնի ի վերայ բլրին որ հայի ի դաշտն Դվնայ շինել զեկեղեցին յանուն Եղիայ մարգարէին»:

Ե

63ա՝ Արուծի եկեղեցու օծման ժամանակ մկրտված եւ հետագայում նահատակված Դավիթ Դվնեցու մասին Անեցու տեղեկությունը²³ նախանայելը շարունակել է՝ «Եւ սուրբ գլուխն նորայ (Դավիթ Դվնեցու - Կ. Մ.) կայ ի Հաւուց թառ եւ այլ նշխարքսն կայ ի»²⁴:

Զ

71թ՝ փրկչական ՊՀԹ (879), հայոց ՅԻԶ (326+ 551= 877) թվականի եւ Գեւորգ Գառնեցու կաթողիկոսության 3-րդ տարվա դիմաց նախանայելը գրել է. «Եւ սուրբ հայրապետն եւ մեծ պատրիարզն Հայոց սուրբն Գէորգ վերստին նորոգեց զնախադրական ուխտն Հաւուց թառ եւ պայծառացոյց, փարթամացոյց գոյիւք եւ ...նի ժամանակս»:

Է

77ա՝ հայոց ՆԻԵ (976) թվականի դիմաց գրված է. «Եւ ոմանք ասէն թե Վասիլ կայսրն Աշոտ թագաւորին պարգեւեց զԱմենափրկիչ խաչն եւ մասն տէրունական խաչեն, որ Աստուածընկալ ասեն (եւ կ)ան երկուքն ի Հ(այ)ոց թառ մեծափայծառ փառաւք»:

Ը

78ա՝ փրկչական ՌԴ (1004), հայոց ՆԾԱ (451+ 551= 1002) թվականի դիմաց գետեղված է հետեւյալ մեծարժեք տեղեկությունը. «Գէորգ

²¹ Այս մասում երկու տառ կա՝ «տո» կամ «աո», որոնք չեն կապվում Գետոց վանք անվանը, որը հիշատակվում է նաև Բիշ հետո:

²² Ա ն ե ց ի , էջ 83:

²³ Ա ն ե ց ի , էջ 84:

²⁴ 64թ էջում «Սուրբ իմաստասէրն Յոհան կաթողիկոս» բառերով սկսվող Օձնեցուն եւ Քաղկեդոնի ժողովի նզովմանը վերաբերող հատվածում նաքանայելի առած հավելումն անընթեռնելի է, սակայն պահպանված բառերից դատելով հատվածը պատմատեղագրական տվյալներ չի պարունակում:

իշխանաց²⁵ իշխանն, որդի Հասանայ, եղբար Ապիրատին վերըստին

The image shows a historical document with a table. The table has several columns and rows. The columns contain numbers and some text. The rows contain text and numbers. The document is written in Armenian script. There are some handwritten notes and corrections in the margins.

նորոգեց զնախադրական հռչակաւոր սուրբ ուխտն զՀաւուց թառ և շինեց զփառաւոր զհրաշալի Կաթողիկէն Ք(9) խորանաւ: Եւ արար զանձագին զմերձակա գեղն զԿոխթ ի Գագիկ շահանշահէ և Յովանիսէ և ետ Հաւուց թառոյ Սուրբ Կաթողիկէին հայրենիք և ետ ի հայրենե(ա)ց իւր զԳետոց վանսն և զՀովայսն վանքագեղ և ժողովեաց ԳՃ (300) կրանաւոր»²⁶:

թ

Նույն էջում մեկ այլ հատված կա, որը բավական եղծված է: Առանձին մասերում կարդացվում է հետևյալը. «Եւ աստ ասեն եկել ի Հա(յս

²⁵ Բառը կրկնված է:

²⁶ Հավելվանը հաջորդում է Անեցու բնագրի այն հատվածը, որը վերաբերում է Բագնայրի հիմնադրմանը՝ «Մմբատ Մագիստրոսն շինեաց...»: Այն նաբանայելի ժամանակ այնքան մաշված է եղել, որ նա սև բանաձևով անցել է «Մմբատ» բառի ու դրան հաջորդող մի հանի տառերի վրայից:

Վասի)լ կայսր... ոնք են զխաչն... զսուրբ ամենափրկիչն եւ պարգեւ(եաց)... մեծահրաշ եւ բազում ակամբ յաւրինեալ... զլուխս դրոշային... յերեւան գեղա(ք)աղաքին, որ ասեն երկ(ու)... եւ ի սուրբ նշան... տէրունական սուրբ նշան...»:

ժ

90ա՝ հայոց Ռժէ (1168) թվականի դիմաց Հայոց թորոս իշխանի մահվան մասին Անեցու հաղորդումը՝ «Յայսմ ամի մեռաւ մեծ իշխանն Հայոց թորոս»²⁷, շարունակված է՝ «Եւ կատարեցաւ նոր վկայն Քրիստոսի սուրբն Յովսէփ ի Դվին քաղաքի ի յազգականաց իւրոց եւ էր ազգաւ ի պարսից եւ Սարգիս քահանայ առե(ա)լ զլուսայ... նշխար նորա տարաւ ի գերադրականն ի Հայոց թառ եւ անդ հանկու... եւ յետոյ շինեց... նորա»:

Այժմ փորձենք խմբավորել եւ ծանոթագրել նաթանայել եպիսկոպոսի կատարած հավելումները: Հեղինակի հայտնած տեղեկությունները երեք կարգի են՝ Գառնիի եւ Հավուց թառի մասին այլ աղբյուրներից հայտնի տեղեկություններ, հայտնի տեղեկությունների լրացումներ եւ առաջին անգամ շրջանառվող տեղեկություններ:

Ա եւ Գ հատվածները վերաբերում են Գառնիին: Տեղի «հովանոցի» կառուցումը Տրդատ Գ-ին վերագրելու ավանդույթը գալիս է դեռեւս Մովսէս Խորենացուց²⁸, իսկ «սարաւոյթ Տրդատայ» արտահայտությունն առաջին անգամ հանդիպում է Կիրակոս Գանձակեցու մոտ²⁹:

Ավելի հետաքրքրական է Գառնիում թաղված կաթողիկոսների մասին ասվածը՝ «...առ որ մերն կայ գերեզման ս(ուր)բ հայրապետացն Հայոց Տէր Գէորգայ եւ ...Տէր Մաշտոցին եւ Տէր Յովանեսի»: Միմյանց հաջորդած այս երեք հայրապետներից միայն Մաշտոց Ա եղիվարդեցու համար է վկայված Գառնիում թաղված լինելը՝ «...Մաշտոց... փոխի առ Աստուած եւ նշխարք ոսկերաց նորա հանգուցեալ եղեւ ի Գառնի, մերձ առ հովանոցին Խոսրովիդիստոյ...»³⁰: Այստեղ հայտնաբերվել է նաեւ ընդամենը յոթ ամիս աթոռակալած կաթողիկոսի 897 թվակիր

²⁷ Հմմտ. Մատենադարան, ձեռ. 5619, էջ 107ա, Մատենադարան, ձեռ. 3613, էջ 70բ:

²⁸ «...շինեալ եւ տուն հովանոց...ի համար ընդ իւրոյ Խոսրովիդիստոյ...» (Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը եւ ներած. Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Երևան, 1991, էջ 241-242):

²⁹ «Այր ոմն առաքինի... Յովհաննէս անուն ի քաղաքազիւղէն Գառնոյ, ուր զարմանալի սարաւոյթն է Տրդատայ» (Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, աշխատասիրութեամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 348):

³⁰ Ստեփանոսի Տարօնեցոյ Պատմութիւն, աշխատասիրութեամբ Ստ. Մալխասեանցի, ՍՊԲ, 1885, էջ 160, Մ . Օ Ր Մ Ա Ն Ե Յ Ա Ն , Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 1184:

արձանագրություններ տասականաբարը³¹: Բայց ծնունդով գառնեցի էր նրա նախորդ Գեւորգ Բ Գառնեցի կաթողիկոսը (877-897): Հովհաննես Դրասխանակերտցին (898-929) հայտնում է, որ նա մահացել է Վասպուրականում և թաղվել «ի քնարանի Ջորոյ վանաց», այնուհետև նշելով Մաշտոցի կարճատեւ հաջորդելը, նրա թաղման վայրի մասին լուր է³²: Հովհաննեսն ինքն էլ վախճանվել է Վասպուրականում, բայց թաղման տեղի մասին ստույգ վկայություն չկա³³: Հետաքրքիր է, որ Կիրակոս Գանձակեցին նրան համարում է ծնունդով գառնեցի՝ «Սա էր այր իմաստուն և բանաւոր ի քաղաքագեղջէն Գառնոյ, ուստի սուրբ հայրապետն Գէորգ էր»³⁴:

Եթե հավատանք նախանայել Հավուցթառեցուն, որ այս երեք հայրապետները թաղված են եղել Գառնիում, ապա կարելի է ենթադրել, որ ինչպես Մաշտոց Եղիվարդեցու մասին է գրված, թե հողին են հանձնել «նշխարք ոսկերաց նորա» (Ասողիկ), կարող էին նույն կերպ Գառնի փոխադրած լինել Գեւորգ Գառնեցու մասունքները, մանավանդ, որ նա սերտորեն կապված էր ծննդավայրի հետ: Այդ դեպքում հասկանալի կդառնանա, թե ինչու է Գառնիում թաղվել այս բնակավայրի հետ ուղղակի կապ չունեցող նրան հաջորդած կաթողիկոսը՝ Մաշտոց Եղիվարդեցին: Հնարավոր է, որ նույն ձեւով Գառնի են հասել նաև այս կողմերի ծնունդ Հովհաննես Դրասխանակերտցու (Ասողիկը նրան կոչում է Գվնեցի) մասունքները: Ամեն դեպքում 14-րդ դարում ապրող նախանայել եպիսկոպոսը եթե ոչ փաստական, ապա ավանդական մի հիմք ունեցել է այս երեք հայրապետների հանգստարանը Գառնիում տեղորոշելու համար:

Գառնիի մասին նախանայելի հայտնած հաջորդ տեղեկությունը, որ Գրիգոր Լուսավորիչը կառուցել է տեղի Ս. Գրիգոր եկեղեցին և խաչքարեր կանգնեցրել, այլ աղբյուրներից հայտնի չէ: Լուսավորչին բազմաթիվ եկեղեցիների հիմնադրում է վերագրվում ողջ Հայաստանով մեկ, բայց Տրդատի արքայական դղյակ Գառնիում նրա հայտնվելը օրինաչափ պիտի համարել: Նախանայելի գրածի մեջ «կանկնեց նշանք տէրունականս» խոսքերը իրականությունը շատ ավելի մոտ են, քանզի հայտնի է, որ Լուսավորիչն իր այցելած տեղերում խաչեր էր կանգնեցնում, որոնց տեղում հետագայում եկեղեցիներ էին կառուցվում: Գառնիի կենտրոնում

³¹ Հ. Պետրոսյան, Գառնին 9-14-րդ դարերում, Երևան, 1988, էջ 27:

³² Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, աշխարհաբար բարգմ. և ծանոթագր. Գ. Քոստանյանի, Երևան, 1996, էջ 184-187:

³³ Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 1240-1242:

³⁴ Կիրակոս Գանձակեցի, էջ 82:

պահպանվել է բազիլիկ եկեղեցու ավերակներ, որը «միանավ, հարավային ավանդատնով եւ հարավային ու հյուսիսային սյունասրահով տուֆակերտ կառուցվածք է՝ բնորոշ 4-5-րդ դդ. հայկական ճարտարապետությանը»³⁵: Հնարավոր է, որ այս եկեղեցին է նախանայելը Ս. Գրիգոր անվանել:

Գառնիի մյուս եկեղեցու կառուցումը՝ Դվինի դաշտահայաց մասում, նախանայելը վերագրում է ներսես Գ Տայեցուն (641-661): Գառնիի եկեղեցիներից 7-րդ դարի է համարվում հեթանոսական տաճարի արեւմտյան կողմում գտնվող արտաքինից շրջանաձեւ, քառախորան եկեղեցին, որի ճարտարապետական մանրամասներն առնչություններ ունեն Ջվարթնոցի հետ³⁶: Եկեղեցու կառուցման եւ անվան մասին վկայություն է պահպանվել Մատենադարանի թիվ 4166 ձեռագրի 1346 թ. մի հիշատակարանում. «Ի Հայոց թուին ձլ (681) շինեցաւ Սուրբ Սիոն ի Կուրապաղատին ի Վերայ Գառնոյ հողահատին տէր ներսիսի հրամանաւ»³⁷: Բ. Առաքելյանն ու Գ. Կարախանյանը հիշատակարանում նշված թվականը ուղղում են՝ ձԸ (659)³⁸, քանի որ 681-ին ներսես Տայեցին վաղուց մահացել էր: Եկեղեցու ճարտարապետությունը հանգամանորեն անդրադարձել է Տ. Մարությանը³⁹: Եթե հիշատակարանում եկեղեցին կոչվում է Ս. Սիոն, որը կաթողիկոսի հրամանով կառուցել է «կուրապաղատը», ապա ըստ նախանայելի, եկեղեցին կրել է Եղիա մարգարեի անունը, իսկ կառուցողն անմիջականորեն կաթողիկոսն է:

Բ եւ Գ հատվածները վերաբերում են Հավուց թառի հիմնադրմանը: Նախանայելն այն վերագրում է Սահակ Պարթեւին եւ Մեսրոպ Մաշտոցին, հետեւելով այս շրջանի վանքերի վերաբերյալ գոյություն ունեցող ավանդությունը⁴⁰, նաեւ յուրովի ստուգաբանում է վանքի անունը՝ «աթոռ Հայոց» եւ «թառ թարգմանութե(անց)», որոնցից մեկի՝ երկրորդ, իսկ մյուսի՝ առաջին բառերից է առաջացել «Հայոց թառ» անվանումը: Յավոք շարունակությունն անընթեռնելի է, եւ չենք կարող ասել, թե նախանայելն ինչպես է բացատրում «Հայոց թառի» եւ «Հաւուց թառի» զուգադրումը: Իր

³⁵ Հ. Պ ե տ ռ ո ս յ ա ն , նշվ. աշխ., էջ 25:

³⁶ Ա. Ս ա հ ի ն յ ա ն , Գառնիի անտիկ կառույցների նարտարապետությունը, Երևան, 1983, էջ 198-201:

³⁷ ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 352:

³⁸ Բ. Առաքելյան, Գ. Կարախանյան, Գառնի III, 1946-56 թթ. պեղումների արդյունքները, Երևան, 1962, էջ 29:

³⁹ Տ. Մարության, Գառնիի բոլորակ տաճարի նարտարապետության առանձնահատկությունները, Հայաստանը եւ Քրիստոնյա արեւելքը, ժողովածու, Երևան, 2000, էջ 217-225:

⁴⁰ Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն , Հավուց թառի ամենափրկիչը..., էջ 16:

գրություններում նա օգտագործում է երկու ձևեր էլ:

Հավուց Թառի հիմնադրման մասին նախանայելը նշել է նաև Սերաստիայի Ս. Նշանում պահված վերը նշված ձեռագրի անթվական հիշատակարանում, ավելացնելով Գրիգոր Լուսավորչի անունը⁴¹:

Վանքի հիմնադրման մասին գրում է նաև վերը նշված 1346 թ. հիշատակարանի գրիչը. «Շինեցաւ սուրբ եւ հռչակաւոր բազմաժողով մեծ մենարանն Հայոց Թառ ի սուրբ Թարգմանչացն՝ ի Սահակ հայրապետէ Հայոց եւ ի Մեսրոփ վարդապետէ ԴՃ եւ ԻԳ (423) ամի ծնընդեանն Քրիստոսի...»⁴²: Ինչպես վերը տեսանք, նախանայելը նշում է վանքի հիմնադրման փրկչական ՆԻՁ (426) թվականը:

Քննվող հատվածում ուշագրավ է նաև առաջին անգամ «Գետոց վանք» տեղանվան հիշատակութունը, որին կանգրադառնանք ստորև:

Ե եւ Ժ հատվածները վերաբերում են Հավուց Թառում թաղված Հայ եկեղեցու սրբերին: 701 թ. Դվինում նահատակված եւ հենց այստեղ Ս. Գրիգոր եկեղեցու մոտ թաղված Դավիթ Դվնեցու վարքը հայտնի է⁴³: Նախանայելը միակ հեղինակն է, որ գրում է Դվնեցու գլուխը Հավուց Թառում թաղելու (վերաթաղելու) մասին:

12-րդ դարում Դվինում նահատակված «նոր վկա» Հովսեփ Դվնեցու եւ նրա՝ Հավուց Թառում թաղված լինելու վերաբերյալ հայտնի են նաև այլ սկզբնաղբյուրներ⁴⁴, նախանայելն ավելացնում է, որ գերեզմանի վրա շինություն է կառուցվել⁴⁵:

է եւ Ռ հատվածները վերաբերում են Հավուց Թառում պահված սրբազան խաչերին եւ մասնավորապես Ամենափրկիչ անունով հայտնի, այժմ Ս. էջմիածնում պահվող, Քրիստոսին խաչից իջեցնելու քանդակա-

⁴¹ «Գիրքս Հայոց քառոյ է, որ է աղօթատեղ սուրբ Լուսաւորչին, եւ հաստակառոյց հաստատեաց եւ հանդիսացոյց տեղի քարգմանութեան... սուրբ հայրապետն Սահակ եւ սուրբ վարդապետն Մեսրոփ եւ ետոյ նորոգեաց սպարապետն Գորհ իշխան», նույն տեղում, էջ 24:

⁴² ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 351:

⁴³ Հ ո վ հ ա ն ն ե ս կ ա թ ո ղ ի կ ո ս Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի , էջ 94-99, Շ ն ո ր հ Բ ա ր Բ . Գ ա լ ու տ ե ա ն , Հայագրի սուրբեր, Երևան, 1997, էջ 228-229:

⁴⁴ Վ ա ր դ ա ն Ա ր ե լ ե լ ց ի , Տիեզերական պատմություն, աշխարհաբար քարգմանությունը Գ. Բ. Քոստանյանի, Երևան, 2001, Ք ո վ մ ա Մ ե ծ ո փ ե ց ի , Պատմագրություն, աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի, Երևան, 1999, էջ 96, էջ 175, Հայոց նոր վկաները (գիտական հրատ.), աշխատասիրությամբ Յ. Մանանդեանի եւ Հ. Անատեանի, Վաղարշապատ, 1903, էջ 46-60:

⁴⁵ Հովսեփ Դվնեցու եւ հետագայում Հավուց Թառում թաղված նշանավոր հոգևորականների դամբարանի մասին տե՛ս Գ . Ս ա ր գ ա յ ա ն , Վկայաբանությունները որպես պատմա-աշխարհագրական սկզբնաղբյուր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայոց պատմության հարցեր, թիվ 6, Երևան, 2005, էջ 179-181:

պատկերը ներկայացնող նշանավոր փայտյա խաչին: Գ. Հովսեփյանն այս կապակցությամբ ընդարձակ հետազոտություն է կատարել, որի սկզբում փորձում է պարզել սրբության ծագումը: Նա անդրադառնում է 1013 թ. Գրիգոր Մագիստրոսի կորած արձանագրությանը, որի վավերականության վերաբերյալ բազմաթիվ կասկածներին հակառակ, այն «կեղծիք համարելու» հիմք չի տեսնում: Վկայակոչելով հին ու նոր շրջանի մի շարք տեղեկություններ (մասնավորապես Մանուել Բջնեցու գրած գանձը)՝ նա ուսումնասիրության առաջին մասը եզրափակում հետևյալ խոսքերով՝ «Հակասությունների մի բավիղ, որ թվում է, թե դժվար է միջից դուրս գալ»⁴⁶: Հետո, իհարկե, նա փորձում է հարցը պարզել, հօգուտ Մագիստրոսի արձանագրության տվյալների ստույգության⁴⁷: Ամենափրկիչի ծագման մանրամասն քննությունը դուրս է մեր նպատակից, պետք է միայն նկատենք, որ նախանայել Հավուցթառեցին այս մասին գրում է իր ժամանակի համար բավականին շրջահայեցությամբ, խոսքը սկսելով «ոմանք ասէն թե» բառերով: Ըստ նրա Ամենափրկիչը եւ Տերունական խաչի մասունքը, որն անվանում է «Աստուածընկալ», Աշոտ Թագավորին է տվել Վասիլ կայսրը: Նույն բանի մասին պատմում է երկրորդ (Թ) հատվածում, բայց այստեղ Հայոց Թագավորի անունը չի ընթերցվում, դրա փոխարեն պահպանվել է «յնրեւան գեղա(ք)աղաքի» անունը, որտեղ, դատելով համատեքստից, որոշ ժամանակ պահվել են Ամենափրկիչն ու Տերունական խաչի մասունքը:

Զ եւ Ը հատվածները վերաբերում են Հավուց Թառում կատարված շինարարական աշխատանքներին: Առաջինը առայժմ միակ վկայությունն է այն մասին, որ Գեւորգ Գառնեցի կաթողիկոսը վանքը «վերստին նորոգեց», պայծառացրեց եւ նվերներ տվեց:

Երկրորդ հատվածն առավել տեղեկաշատ է եւ մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Մինչեւ այժմ Մխիթար Այրիվանեցու կարճ հաղորդմամբ հայտնի՝ «Շինի եւ Հաուց Թառն ի Գէորգեայ իշխանէն Քեղոյ»⁴⁸ տեղեկությունը նախանայելը հարստացրել է Քեղի (Գեղի) ամբողջի տեր Գեւորգ իշխանի ծագման մասին եզակի վկայությամբ՝ «Գէորք իշխանաց իշխանն, որդի Հասանայ, եղբար Ապիրատին»:

⁴⁶ Հավուց Թառի ամենափրկիչը..., էջ 10:

⁴⁷ Նույն տեղում, էջ 15:

⁴⁸ Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 57: Գեւորգին Հավուց քառի «նորոգող» է համարում նույն նախանայելը նաեւ վերը նշված անբավական հիշատակարանում: Նույն բանը նշում է Մանուել Բջնեցին իր գրած գանձի մեջ, վանքը համարելով. «Մեծոյ մենաստան, զոր կանգնեաց արեայն եւ Գեորգ իշխան» (Հավուց Թառի ամենափրկիչը..., էջ 24, 92):

Ովքե՞ր են Հասանն ու Ապիրատը: Կեչառիսի Ս. Գրիգոր եկեղեցու 1003 թ. շինարարական արձանագրության մեջ կարդում ենք. «ԵՍ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՈՍՈՍ, ՈՐԴԻ ՀԱՍԱՆԱ ՇԻՆԷՑԻ ԶԷԿԷՂԷՑԻՍ»⁴⁹: Մատթեոս Ուռհայեցին նույն իշխանին անվանում է «Ապիրատ ոմն, որ էր մեծ իշխան Հայոց, որդի Հասանայ»⁵⁰: Մատենագրական աղբյուրները (Մխիթար Անեցի, Վարդան Արեւելցի, Մխիթար Այրիվանեցի, Սմբատ Սպարապետ) Ապիրատ անունով են կոչում Հասանի որդի մեծ իշխանին, որը կառուցել է Կեչառիսի վանքը, եւ որը նույն Կեչառիսում, Արզականում Գորգ քահանայի թողած 1001 թ. արձանագրության⁵¹ եւ Տեկորում իր դստեր գրած արձանագրության մեջ⁵² Գրիգոր Մագիստրոս է անվանվում: Հայագետները խնդրի լուծման միջոց են առաջարկել՝ իշխանին վերագրելով Գրիգոր Ապիրատ երկանունը⁵³:

Նաթանայել Հավուցթառեցու հաղորդած տեղեկության՝ Գրիգոր Ապիրատի եւ Քեղի ամրոցի տեր Գեւորգ իշխանի եղբայրներ լինելու հանգամանքի բացահայտման շնորհիվ, այժմ ավելի հիմնավորված են դառնում նրանց զորության մասին վկայությունները: Մասնավորապես Մխիթար Անեցուց օգտված Վարդան Արեւելցու եւ նրանց հետեւող Մխիթար Այրիվանեցու հաղորդումները, թե Ապիրատը տեր էր 12 000 հեծյալի⁵⁴, այնքան էլ համոզիչ չէին թվում: Մինչդեռ այժմ պարզ է դառնում, որ Հասանի որդիների իշխանությունը տարածվում էր Վարաժնունիքից (Կեչառիս), մինչեւ Գառնիի շրջանն ու Քեղի, թերեւս ներառում նաեւ Երեւանը, որտեղ, պատմիչի հաղորդմամբ, ջրանցք է կառուցել Գրիգոր Ապիրատը⁵⁵:

Գեւորգ իշխանի տոհմի մասին մինչ այժմ ոչինչ հայտնի չէր, սակայն հոր անվան հայտնի դառնալով, այժմ հնարավոր է նրա ժառանգներին փնտրել հենց նույն Հավուց թառում: Այստեղ մի խաչքարի վրա պահպան-

⁴⁹ Մ. Հասարթյան, Կ. Մաթեոսյան, Վ. Գեւրիկյան, Կեչառիս 1000, Ս. էջմիածին, 2004, էջ 10:

⁵⁰ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն (աշխարհաբար քարզմ. և ծանոթագր. Հ. Բարթիկյանի), Երեւան, 1991, էջ 16:

⁵¹ «...Ի ԹԱԳԱՆՈՐՈՒԹԵԱՆ ԳԱԳԿԱ ԱՇԽԱՐՀԱԿԱԼԻ, ԳՐԻԳՈՐԻ ՀԱՅՈՑ ՄԱԳԻՍՏՈՍԻ... », Գ. Սարգսյան, Գրիգոր-Ապիրատ Հասանյան. Հիմնադիր Կեչառիսի վանքի (վիմագրական նոր վկայություն), «Հին Հայաստանի մշակույթը» ժողովածու 12, Երեւան, 2002, էջ 111:

⁵² «ՆՂԱ (1042)... եւ Տիկ(ն)աց Տիկին դուստր Քրգորոյ Մագիստրոսին... », Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 135:

⁵³ Գրիգոր Ապիրատի գործունեության և Ապիրատյան տոհմի մասին տե՛ս Կ. Մաթեոսյան, Հազարամյա Կեչառիսի հիմնադրման պատմությունից, «էջմիածին», 2004, Ա, էջ 77-91:

⁵⁴ Վարդան Արեւելցի, նշվ. աշխ., էջ 103, Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն, էջ 58:

⁵⁵ Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն, էջ 58:

ված վանքի թվակիր ամենահին արձանագրությունը հետևյալն է. «Յիշէ Քրիստոս զՀասան, զորդի Սմբատա, զժառաքս եւ ողորմեա նմա, ամեն, թվ. ՇԼ (1081) էր»⁵⁶: Եթե նկատի ունենանք իշխանական տոհմերի մոտ թոռանը պապի անունով կոչելու սովորությունը, ապա կարող ենք ենթադրել, որ Գեւորգ իշխանի որդին կրել է պապի անունը՝ Հասան, եւ նրա ժառանգներն են Սմբատն ու նրա որդի Հասանը: Անուղղակիորեն այս ենթադրության օգտին է խոսում այն, որ Գրիգոր Ապիրատի երկու որդիները Ապլջահապ եւ Վասակ անուններն էին կրում: Գրիգոր Ապիրատն իր զավակներից մեկին հոր անունով շի անվանակոչել ամենայն հավանականությամբ այն պատճառով, որ իր եղբոր՝ Գեւորգի որդին արդեն կրում էր այդ անունը:

Եվս մի նկատառում: Իշխանատոհմի անունը մինչեւ այժմ հիշվել է երկու ձեւով՝ Ապիրատյան կամ Հասանյան: Տոհմին նվիրված առաջին եւ առայժմ միակ ուսումնասիրության հեղինակ Ներսես Ակինյանը 1956 թ. Ներսես Լամբրոնացուն նվիրված մենագրության Գ մասը վերնագրել է «Ազգաբանութիւն Պահլաւունեաց, Հասանեանց, Թոռնիկեանց եւ Հեթումեանց»⁵⁷: Տոհմանունը վերնագրում Հասանյաններ նշելով՝ Ն. Ակինյանը տեքստում եւ տոհմաձառում նրանց անվանում է Ապիրատյաններ: Մենք եւս նախորդ հրապարակումներում այդ անունն ենք նախընտրել, նկատի ունենալով Գրիգոր Ապիրատի ավանդը տոհմի զորացման գործում, նաեւ պատմիչների (Մխիթար Անեցի եւ նրանից մեջքերում կատարած Վարդան Արեւելցի) հաղորդումը՝ «Զսմանէ (Գրիգոր Ապիրատի մասին - Կ. Մ.) ասեն յաննշանից մեծացեալ, եւ վասն խելացի եւ առատ ձեռացն մինչեւ լիներ տէր երկոտասան հազար հեծելոց, որ եւ շինեաց զսուրբ ուխտն Կեչառու...»⁵⁸: Սակայն այժմ Հասանի Գեւորգ որդու մասին տեղեկության ի հայտ գալով իշխանատոհմը Հասանի անունով կոչելն ավելի նպատակահարմար է թվում:

Երբ է Գեւորգ իշխանը կառուցել Հավուց թառի Կաթողիկե եկեղեցին: Մխիթար Այրիվանեցու եւ Նաթանայելի հայտնած թվականները ներդաշնակ են: Առաջինը, որ դեպքերը նշում է տասնամյակներով, 1001 -

⁵⁶ Գ . Հ ո վ ս ե փ յ ա ն , Հավուց Թառի ամենափրկիչը..., էջ 17: Գ. Հովսեփյանը, որ վանքը Պահլավունիներինն է համարում, Հասանին եւ Սմբատին այդ տոհմի ներկայացուցիչներ է կարծում (նույն տեղում, էջ 20):

⁵⁷ Ն. Ակինյան, Ներսես Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 327-457:

⁵⁸ Վարդան Արեւելցի, էջ 103, Կ. Մաթևոսյան, Հազարամյա Կեչառիսի..., էջ 82-83:

Ստեփանոս Օրբելյանը Գրիգոր Ապիրատի թոռ, Բարսեղ Ա Անեցի կաթողիկոսի եղբայր Գրիգորին կոչում է «Շիրակայ իշխանն՝ Գրիգոր Ապիրատեան» (Ս տ ե փ ա ն ո ս Օ Ր Բ Ե Լ Ե Ա Ն , Պատմութիւն նահանգին Սիսական, Տփղիս, 1910, էջ 320):

1011 թթ. տեղեկությունները թվարկում է հետեւյալ հերթականությամբ՝ «Շինի Սուրբն Գրիգոր աննման ի յԱնի, որ այժմ հանգուցեալ է: Շինի և Հաւուց թառն ի Գէորգեայ իշխանէն Քեղուց», իսկ տասնամյակը եզրափակում է «Սմբատ Մագիստրոսն շինեաց զՔքնայրն»⁵⁹: Բազնայրի առնչությամբ հայտնի է Սամվել Անեցու վկայությունը եկեղեցու նժԹ (1010)⁶⁰ թվականին կառուցվելու վերաբերյալ, իսկ տասնամյակի սկզբում նշված Անիի Գագկաշեն Ս. Գրիգորի կառուցումը ավարտվել է Քրիստոսի ծննդյան 1000-ամյակին, այսինքն 1001 թ.⁶¹: Հետեւաբար Գագկաշենից հետո նշված Հավուց թառի եկեղեցու կառուցումը տեղի է ունեցել նախանայելի նշած ժամանակ: Քանի որ Անեցու աղյուսակում զուգադրված են ժամանակագրական տարբեր համակարգեր, այս տեղեկությունը նշված է փրկչական ՌԴ (1004), հայոց նժԱ (1002), Գագիկ Ա-ի թագավորության 10-րդ (999) և կաթողիկոս Սարգիս Ա Սեւանցու աթոռակալության 11-րդ տարվա (1002) դիմաց: Տրամաբանական է կառույցի ավարտման համար 1002 թվականի ընդունումը, թեև մեկ կամ երկու տարվա տարբերությունը շատ բան չի փոխում: Եթե նկատի ունենանք, որ Գրիգոր Ապիրատը Կեչառիսի Ս. Գրիգոր եկեղեցին կառուցել է 1003 թվականին, ապա կարող ենք ենթադրել, որ Գագիկ Ա-ի վասալ իշխանները, հետեւելով թագավորի ու թագուհու օրինակին, Քրիստոսի ծննդյան 1000-ամյակը նշանավորել են եկեղեցաշինական խոշոր ձեռնարկներով:

Այժմ տեսնենք, թե ինչ է արել Գեորգ իշխանը Հավուց թառում: Ըստ նախանայելի, նա «վերըստին նորոգեց զնախադրական հռչակաւոր սուրբ ուխտն զՀաւուց թառ և շինեց զփառաւոր զհրաշալի Կաթողիկէն Ք(9) խորանաւ»: Գ. Հովսեփյանը, որը Կաթողիկեն համարում էր Գրիգոր Մագիստրոս Պահլավունու կառուցածը, եկեղեցու ավերակները ենթադրաբար տեղորոշել է գավիթի հարավարեւելյան անկյան մոտ⁶²: Հավուց թառի համալիրի և վիճազրերի ուսումնասիրությամբ հանգամանորեն զբաղված Գագիկ Սարգսյանը եկել է այն եզրակացության, որ «Կաթողիկե եկեղեցին ոչ թե Գ. Հովսեփյանի նշած կառույցն է, այլ վերջինիս հյուսիսային կողմում գտնվող շինությունը, որից միայն հարավային պատն է պահպանվել: Ցավոք, այս կառույցի ճարտարապետական հորինվածքի մասին չենք կա-

⁵⁹ Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն, էջ 57:

⁶⁰ Մատենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 94ա, հմմտ. Ա ն ե գ ի, էջ 105, Մանր ժամանակագրություններ, կազմեց՝ Վ. Հակոբյան, հ. Ա, Երևան, 1951, էջ 25:

⁶¹ «Յայնմ ժամանակի, յորում լնոյր լրութամբ ամն Ռ (1000) մարմնանալոյ կամ մարդանալոյ Տեառն մերոյ» (Ստեփանոսի Տարօնեցոյ Պատմութիւն, էջ 282):

⁶² Գ. Հովսեփյան, Հավուց Քառի ամենափրկիչը..., էջ 16:

րող որոշակի կարծիք հայտնել, որովհետեւ մյուս պատերը հիմնովին քանդված են, իսկ տեղանքը ծածկված է հաստ հողաշերտով»⁶³:

Նաթանայելի վկայությունից տեղեկանում ենք, որ եկեղեցին սկզբնապես ինը խորան է ունեցել: Ինչպես երեւում է, այն կանգուն ու անխաթար է եղել մինչեւ 1679 թվականի մեծ երկրաշարժը, որովհետեւ 17-րդ դարի կեսերին Սիմեոն Զուղայեցի եպիսկոպոսը Հավուց թառին նվիրված չափածո գրվածքում նշում է՝

«Կաթողիկէս հանդիսարան,
Հաստակառոյց վիմարդեան...
Յոյժ գեղեցիկ ծաղկաց լման,
Բարձրայգումբեթ ու ինն խորան...»⁶⁴:

Նաթանայելի հայտնած տեղեկությունների շարունակության որոշ ձեւակերպումներ վիճաբար արձանագրություն են հիշեցնում: Նա գրում է, որ Գեւորգ իշխանը Կաթողիկեն կառուցեց, «նւ արար գանձագին զմերձակա գեղն զԿոխթ ի Գագիկ շահանշահէ եւ Յովանիսէ եւ ետ Հաւուց թառոյ Սուրբ Կաթողիկէին հայրենիք եւ ետ ի հայրենե(ա)ց իւր զԳետոց վանսն՝ եւ զՀովայսն՝ վանքագեղ»: Ինքնին հետաքրքիր փաստ է, որ Կոխթ (Գողթ) գյուղը 10-րդ դարի վերջին եղել է արքունի սեփականություն, եւ որ այն Գագիկ թագավորից եւ Հովհաննեսից (Հովհաննես Սմբատ) գնել ու որպես սեփականություն Հավուց թառի Կաթողիկեին է տվել Գեւորգ իշխանը: Նկատենք, որ սա Գողթ գյուղի մասին մատենագրության մեջ ամենավաղ հիշատակությունն է:

Գրության շարունակությունը կարծում ենք, պետք է հասկանալ, թե իշխանն իր սեփականությունից «Հովայ» գյուղը, որպես «վանքագեղ», տվել է «Գետոց վանքին», որը նույն Հավուց թառն է: Ինչպես վերը տեսանք (Գ հատված), Սահակ Պարթեւի ձեռամբ «ի Գառնոյ ձորին ի վերագետին» վանքի հիմնադրման մասին խոսելիս Նաթանայելը օգտագործում է «Գետոց վանք» անունը: Հավուց թառի՝ ձորի մեջ եւ գետամերձ լինելու հանգամանքը կարող էր ծնունդ տալ այս անվանը: 1655-ին երեւանցի գրիչ Մկրտիչը Սիմեոն Զուղայեցու գտնվելու վայրը նշում է առանց Հավուց թառ անունը տալու, գրելով որ նա «նստի ի սուրբ մենաստանն Ամենափրկիչ՝ ի ձորն Գառնույ...»⁶⁵:

⁶³ Գ. Սարգսյան, Հավուց թառի հիմնադրման վկայագրի շուրջ, ՀՀ ԳԱ «Լուսեր» հաս. գիտ., 1988, թիվ 4, էջ 68:

⁶⁴ Գ. Հովսեփյան, Հավուց Թառի ամենափրկիչը..., էջ 106:

⁶⁵ Հայերեն ձեռագրերի փէ դարի հիշատակարաններ, հ. Գ, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1984, էջ 681:

Ինչ վերաբերում է Գեորգ իշխանին պատկանած (հայրենիք) և վանքին նվիրաբերված գյուղին, ապա ամենայն հավանականությամբ դա Հովհաննես Դ Ովայեցի կաթողիկոսի (833-855) ծննդավայրն է, որի մասին Հովհաննես Դրասխանակերտցին գրում է՝ «...Յովհաննէս ի գաւառէն Կոտայից ի գեղջէ Ովայից»⁶⁶:

Նախանայել եպիսկոպոսի հայտնած տեղեկությունների շնորհիվ առաջընթաց քայլ է արվում նաև մինչև այժմ Գրիգոր Մագիստրոս Պահլավունուն վերագրվող 1013 թվականի արձանագրության առեղծվածի բացահայտման ուղղությամբ: Արձանագրության քննությանն առանձին հոդված է նվիրել Գագիկ Սարգսյանը, որը համապատասխան փաստերից ելնելով եզրակացնում է, որ «արձանագրության հայտնաբերման և տեղադրության հանգամանքները հնարովի են, հեղինակն է «ընդօրինակողը»..., ի դեմս Քուրդ-Հովհաննես վարդապետ Բագրեւանդցու»⁶⁷: Ժամանակին արձանագրությունը կեղծ համարելու հիմնավորումներ է բերել նաև Ներսես Ակինյանը⁶⁸:

Իսկ Գարեգին Հովսեփյանը, որը գտնում է, թե արձանագրությունը «կեղծիք համարելու ոչ մի հիմք չունինք»⁶⁹, փորձում է ժամանակը համապատասխանեցնել Գրիգոր Պահլավունու կենսագրությանը, այն գրված համարելով «1044 թվականից հետո, երբ Գրիգորը բարձր պաշտոն էր ստացել Բյուզանդիայում»⁷⁰: Գ. Հովսեփյանին «կողմնորոշել» է նաև Մանուել Բջնեցին, հեղինակ, որն ըստ նրա «ապրում էր ժԴ դարի վաթսուհանյան թվականներին» և «ստացել է... մի փառավոր նկարագրող Աստվածաշունչ Անիի Հովհաննես Ոսկեփոր եպիսկոպոսի ձեռքով գրված»⁷¹: Սակայն Մանուելն ու Հովհաննես Ոսկեփորիկը համագործակցել են 15-րդ դարի սկզբներին⁷²: Բջնեցու գրած գանձը լի է հակասություններով և ամենատարբեր տեղեկությունների խառնիխուռն մեկտեղում է: Կարելի է ասել, որ «Մագիստրոսյան» ավանդագրույցն առաջին անգամ այստեղ է

⁶⁶ Հ ո վ հ ա ն ն է ս Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի , էջ 118:

⁶⁷ Գ. Սարգսյան, Հավուց քառի հիմնադրման վկայագրի շուրջ, էջ 70: Ուսումնասիրողը կառույցը քվագրում է՝ 12-րդ դ. վերջ կամ 13-րդ դ. առաջին տասնամյակ: (Նույն տեղում, էջ 68):

⁶⁸ Ն. Ակինյան, Գրիգոր-Ապիրատ, որդի Հասանա, Մագիստրոս, «Ակօս», 1945, թիվ 9, էջ 118:

⁶⁹ Գ. Հովսեփյան, Հավուց Քառի ամենափրկիչը..., էջ 7:

⁷⁰ Նույն տեղում, էջ 8:

⁷¹ Նույն տեղում:

⁷² Կ. Մ ա թ ե ռ ս յ ա ն , Անիի եպիսկոպոս Հովհաննես Ոսկեփորիկ գրիչը, «Էջմիածին», 1985, Ը, էջ 41-43

երեւան գալիս⁷³: Իսկ թե ո՞րն էր դրա առաջացման պատճառը, պարզվում է Սիմեոն Երեւանցի կաթողիկոսի «Ջամբուից»: Այստեղ նշվում է, որ «Գրիգոր Մագիստրոսի ազգից մեկը մյուսին հաջորդելով այս վանքում առաջնորդ է նստում նույն Հավուցթառ գյուղից Զաքարիա վարդապետը»⁷⁴: Այսինքն՝ Հավուց թառի առաջնորդները 15-րդ դարի սկզբներից իրենց համարել են Պահլավունյաց տոհմի ժառանգներ, Գրիգոր Մագիստրոսի հաջորդներ:

Այն հանգամանքը, որ նախանայել Հավուցթառեցու լրացրած հատվածներում ոչ մի խոսք չկա Գրիգոր Մագիստրոս Պահլավունու՝ Հավուց թառի վանքի հետ ունեցած որեւէ առնչության մասին (եթե այդպիսին լիներ, հեղինակը պատճառ չուներ այդ թաքցնելու), ապացուցում է, որ «Մագիստրոսյան» զրույցը 14-րդ դարի կեսերից հետո է առաջացել: Իսկ Հավուց թառի Կաթողիկե եկեղեցու կառուցող Գեւորգ իշխանի տոհմաբանության մասին նորահայտ տեղեկության շնորհիվ կարող ենք ասել, որ եթե Հավուց թառում այնուամենայնիվ եղել է 1013 թվականի մի արձանագրության՝ Գրիգոր Մագիստրոսի անունով, ապա այդ Գրիգորը, Հասանի որդի Գրիգոր Ապիրատն է, Գեւորգ իշխանի եղբայրը:

⁷³ Ըստ հեղինակի, իբր Գրիգոր Մագիստրոսը որդուն ուղարկում է Հռոմ, որտեղից նա բերում է Ամենափրկիչը, այն դրվում է Տարունից (չփոքրված է հին Դարոյնի հետ) եկեղեցում, որից հետո՝

«...Վասիլ արեաի՝ Գեւորգ իշխանի, ոստ Բագրատունի Փոխելով անտի բերեն հրեճուալի տունս Այրարաղի, Յիւր հիմնարկելի ուխտըն հրաշալի որ Հայու քառի»: Այնուհետև՝ «Ով Աստուծոյ տուն, կանկնեալդ ի վերջնոյն, զեր քան զառաջնոյն, Շինեալդ ի սրբոյն Մագիստրոս անուն, ազգաւ Պահլաւուն, Քանգի շնորհատուն ետ լեզ զախտն զտիպն իւր հոմանուն» եւ այլն: Գ. Հովսեփյան, Հավուց Թառի ամենափրկիչը..., էջ 89-92:

⁷⁴ Սիմեոն կաթողիկոս Երեւանցի, Ջամբու, Երեւան, 2003, էջ 387-389, Գ. Հովսեփյան, Հավուց Թառի ամենափրկիչը..., էջ 37-39, Գ. Սարգսեան, Վիճագրագիտական նորոյթներ (Հատուց քառ), Հանդէս ամսօրեայ, 2001, էջ 242-243:

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ 1689 Թ. ԼԵՀԵՐԵՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

1962 թ. սկզբներին Լվով քաղաքի պատմության թանգարանում իմ ուշադրությունը գրավեց մագաղաթե մեծ թերթի վրա 17-րդ դարում գրված լեհերեն մի հրովարտակ, որը շնորհվել է Տիսմենիցա ավանի հայերին: Լեհաստանի թագավորներից ու իշխաններից լեհահայերի ստացած հրովարտակներից պահպանվել է մի քանի հատ, որոնք գտնվում են Լեհաստանի եւ Ուկրաինայի արխիվներում ու թանգարաններում: Մեզ մոտ չկա եւ ոչ մի օրինակ, ուստի այդ հրովարտակը Մատենադարանին հանձնելու խնդրանքով դիմեցի թանգարանի տնօրինությանը, ապա Լվովի քաղխորհրդի մշակույթի բաժնին, ավելի ուշ հարկադրված եղա մեկնել Կիև եւ դիմել Ուկրաինայի մշակույթի մինիստրությանը: 1962 թ. փետրվարի 27-ին մինիստրությունը որոշում կայացրեց այդ արժեքավոր վավերագիրը, որպես նվեր, հանձնելու Մատենադարանին: Տրվեց հրաման (N 15), որի համաձայն մի քանի օր անց (մարտի 2-ին) հրովարտակը դուրս գրվեց թանգարանի գույքամատյանից եւ համապատասխան գրավոր փաստաթուղթ ու ստացական կազմելուց հետո հանձնվեց ինձ: Հրովարտակը բերեցի Երեւան, եւ արդեն 43 տարի է փակցված է մեր ցուցասրահի պահարաններից մեկում՝ մշտապես գրավելով այցելուների ուշադրությունը: Անհրաժեշտ եմ գտնում նշել, որ այդ գործում ինձ շափազանց օգտակար եղավ թանգարանի գիտական աշխատակիցներից Նադեժդա Կորնեեւնա Կրիվոնոսը, որը հետագայում թեկնածուական դիսերտացիա պաշտպանեց Երեւանում նյութ ունենալով Լվովահայերի մշակութային կյանքի պատմության հարցերը:

Տիսմենիցա քաղաքատիպ ավանը, որը հայկական աղբյուրներում անվանվում է Դիսմինից, Դիսմենից, Թիսմանից եւ Թիշմինից ձեւերով, գտնվում է Լվովից հարավ, Իվանո-Ֆրանկովսկ (նախկին՝ Ստանիսլավ) քաղաքից 13 կմ հեռավորության վրա: 1957 թ. ամռանը Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի հանձնարարությամբ, հայերեն ձեռագրեր

որոնելու նպատակով Արեւմտյան Ուկրաինայի նախկին հայաշատ վայրերը շրջելիս պատմաբան Վազգեն Ոսկանյանի հետ եղանք նաեւ այդ ավանում եւ պարզեցինք, որ վերջին պատերազմից հետո այնտեղ մնացած փոքրաթիվ հայերը, որպէս Լեհաստանի քաղաքացիներ, գաղթել էին Լեհաստան: Մնացել էր միայն ուկրաինացու հետ ամուսնացած շուրջ 40-ամյա մի հայ կին, որը խոսում էր գուցուլական մի խրթին բարբառով, այնպէս, որ նրան չէր հասկանում մեզ ուղեկցող ուկրաինացի պատմաբան Վլադիմիր Գրոբովեցկին: Հարկադրված նրա հետ խոսում էինք երկու թարգմանչի օգնութեամբ: Այդ կինը ավանի կետրոնում մեզ ցույց տվեց փլատակների մի հսկա կույտ՝ այն ամենն, ինչ մնացել էր 18-րդ դարում կառուցված եւ մեր այցելութունից ընդամենը մի քանի տարի առաջ քանդված հայկական Ս. Աստվածածին (կամ Ս. Գայեթանոս) եկեղեցուց:

Ոչինչ հայտնի չէր հայ գաղութի վարչական մարմնի եւ եկեղեցու արխիվի մասին: Եվ դա բնական էր: Գալիցիայի եւ Պոկուտյեի տարածքներում տեղի էին ունեցել Առաջին եւ Երկրորդ համաշխարհային պատերազմների մի շարք ավերիչ ռազմական գործողութիւններ, որոնց ժամանակ ոչնչացել էին նյութական ու գրավոր մշակութի բազմաթիվ հուշարձաններ: Մինչ այդ տեղի էր ունեցել սպիտակ շարժն իր բոլոր հետեւանքներով:

1820 թ. Լեհաստանի հայաբնակ վայրերն այցելելիս նշանավոր գիտնական Մինաս Բժշկյանը եղել էր նաեւ Տիսմենիցայում եւ Ս. Աստվածածին եկեղեցում տեսել մի Հայսմավուրք, որի հիշատակարանից մի քաղվածք զետեղել է իր գրքում¹: Նա գրում է նաեւ եկեղեցում պահված մկրտատետրի ծննդոց մատյանի մասին, որից 1713 թ. կատարված մի գրանցում հրատարակել է իր ուղեգրութեան մեջ²: Լեհաստանի եւ Ռումինիայի հայաշատ վայրերից նրա տարած ձեռագրերի ցուցակից, որն այժմ պահվում է Վրաստանի Գիտութիւնների ակադեմիայի Կ. Ս. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտում (հայերեն ձեռագրերի ֆոնդ նո. 28դ), երեւում է, որ Տիսմենիցայում նա նվեր է ստացել մի ձեռագիր՝ «Պատմութիւն կամ վարք սիրոյն Ներսէսի մեծի, ծայրաքաղ արարեալ ի Մեսրոպայ Հարցողմանցոյ ի գաւառէն Վայոցձորոյ» ձեռագիրը: Այլ հետաքրքիր բան Բժշկյանը չի նկատել, ուստի իր այդ ցուցակում, որը նկարագրված է Մատենադարանի հանգուցյալ աշխատակից Սամսոն Լալաֆարյանի կողմից, կատարել է հետեւյալ նշումը. «Ի

¹ Ճանապարհորդություն ի Լեհաստան եւ յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին, շարադրեալ հանդերձ զանազան բանասիրական տեղեկութեամբ տն. Հ. Մինասայ Բժշկեանց վարդապետի ի Մխիթարեան ուխտէ առաջանորդի ի Տարիա, ի Վենետիկ, 1830, էջ 124:

² Նույն տեղում:

Դիամինից – չիք ինչ պիտանի»:

Բայց, ըստ երեւույթին, Մ. Բժշկյանը չի տեսել այնտեղ պահվող մյուս գրչագրերը (կամ ցույց չեն տվել նրան): Հայտնի է, որ դրանից տարիներ անց Վիեննայի Մխիթարյան միաբանությունը Տիամենիցայից ստացել է բավական թվով ձեռագրեր: Հակովբոս Տաշյանի ձեռագրացուցակում տպված են այդ կապակցությունը ձեռագրերի վրա թողնված գրությունները. «Առաքեաց Վ. Հ. Բարթուղիմէոս ի Դիամինիցէ, յամին 1895»: Այս մակագրությունն են կրում միաբանության մատենադարանում պահվող տասնհինգ ձեռագրեր, որոնց թվում 1603 թ. կվովում գրված մի Հայսմավուրք, 1682 թ. Սեմիքլեուշում (Հունգարիա) գրված մի Սաղմոսարան, 18-րդ դարում գրված մի «Այբբենարան», 16-17-րդ դդ. կազմված ամուսնական պայմանագրերի պատճեններ, քարոզգրքեր, աստվածաբանություն եւ այլն: Դրանց մեծ մասը հայատառ-ղփշաղերեն է, իսկ մի ձեռագիր էլ՝ հայատառ-լեհերեն, Ռումինիայի Գեոլա քաղաքում պահվող «Տոնացոյց եւ աւետարանացոյց»-ի մեջ գրված է «Գրեցաւ եւ օրինակեցաւ այս Տոնացոյցս ի Լէհաց երկիրն, ի քաղաքն Դիամենից, ամի Տեառն 1751 փետրուարի 21, աշխատանօք եւ գրովք իմոյ ձեռամբ Տիրացու նիկողայոսի որդւոյ Բասադասի, ի վայելումն Հայոց քահանայից....»³:

Բացի սրանից, տեղեկություն կա այն մասին, որ լեհահայ հայտնի ժամանակագիր, քերական եւ փիլիսոփա Ստեփանոս Ռոշքան Տիամենիցայում գաղութի մեռելոց մատյանի մեջ գրել է Գրիգոր Ամիրյանի կենսագրությունը, որը մեզ չի հասել⁴: Այնպես որ Տիամենիցայում եւս ձեռագրեր են ստեղծվել, եւ այդ բնակավայրը պետք է տեղ գտնի հայ գրչության արժեքավոր քարտեզի վրա, որը կազմել է վաստակաշատ պատմաբան (այժմ հանգուցյալ) Արտաշես Մաթեոսյանը, եւ որը կախված է Մատենադարանի ցուցասրահի մուտքի մոտ:

Ի տարբերություն լեհահայ այլ կենտրոնների, երկար ժամանակ Տիամենիցայում հայերենը եղել է թե՛ խոսակցական, եւ թե՛ գրական լեզու:

³ Ցուցակ Հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց՝ Հ. Յակոբոս վ. Տաշեան, Վիեննա, 1895 (ձեռ. նո. նո. 69, 457, 441, 444, 445, 446, 447, 452, 479, 480, 481, 484, 488, 511, 536):

⁴ Լեհահայ պատմաբան Սաղոկ Բորնշի «Լեհաստանի նշանավոր հայերի կյանքը» (S. Baronz, Żywoty sławnych Ormian w Polsce, Lwow, 1856) մեծաթեմ գրում տեղեկություններ կան Գրիգոր Ամիրյանի վերաբերյալ, որը զգալի դեր է խաղացել Տիամենիցայի հայերի կյանքում: Գրիգոր Ազարիայի Ամիրյանը (1682-1727) հողատեր ունեւոր ընտանիքից էր, նա հոգեւոր մկրտությունը ստացել է Հռոմում: Վերադառնալուց հետո արեւախկուպոս Վարդան Հունանյանի նշանակումով եկեղեցական պաշտոն է ստացել հայկական մեկ այլ գաղութում՝ Հորոդենկայում: 1715 թ. նա նշանակվում է Տիամենիցայի հայերի պրորոշ (ժողովրդապետ), այսինքն՝ ծխական ֆահանա: Փայտաշեն խարխուլ վիճակում գտնվող եկեղեցու փոխարեն նա կառուցում է նոր եկեղեցի, որին կից՝ հոգեւորականների համար հատուկ բնակարան:

Ուկրաինայի պետական պատմական արխիվի՝ Լվովում գտնվող բաժանմունքում մեզ հաջողվեց գտնել մի ուշագրավ մատյան, որը պահվում է «Վիրմենսկա մետրոպոլիչնա կոնսիստորիա» մակագրությունը կրող թղթապանակի մեջ: Այնտեղ գրի են առնված Տիսմենիցայի հայերի «Անարատ հղության Ս. Մարիա տիրուհու» եղբայրության 1732 թ. մինչև 1791 թ. արձանագրությունները, որոնք գրանցված են տեղի առօրյա խոսակցական հայերենով:

Ե՛րբ են հայերը հաստատվել Տիսմենիցայում, եւ ի՞նչ նշանակություն է ունեցել նրանց կյանքում 1689 թ. հրովարտակը:

Տիսմենիցան Մերձկարպատների ամենանշանավոր առեւտրա-արհեստավորական կենտրոններից էր: Առաջին անգամ գրավոր սկզբնաղբյուրներում հիշատակվում է 1145 թ.: Դարեր շարունակ ավանը եղել է լեհ մագնատներ Պոտոցկիների ժառանգական սեփականությունը: Տիսմենիցան շատ հարմար վայրում էր, շորս կողմը մշակովի հողեր էին, անտառներ, նաեւ մոտով հոսում էին ձկնառատ երկու գետեր, իսկ ամենակարեւորը՝ ավանը, գտնվում էր Լվովից Մոլդավիա տանող առեւտրական ճանապարհի վրա: 1448 թ. Տիսմենիցան ստացել էր մագդեբուրգյան իրավունք: Այնտեղ անց էին կացվում մեծ տոնավաճառներ, որոնց մասնակցում էին նաեւ հայ առեւտրականները, որոնք 16-րդ դ. 40-ական թթ. այնտեղ ունեին ապրանքների պահեստներ: Հայկական մշտական գաղութի հիմքը դրվել է 1679 թ. թուրքական մեծ արշավանքից հետո, երբ Կամենեց-Պոդոլսկից այնտեղ գաղթեց 42 հայ ընտանիք:

Լեհական իշխանավորները բարյացակամ վերաբերմունք ունեին հայ գաղթականների նկատմամբ, քանի որ նրանք զարկ էին տալիս արհեստներին ու առեւտրին, նպաստում այդ վայրերի տնտեսական զարգացմանը, իսկ վտանգի դեպքում մասնակցում երկրի պաշտպանությանը: Լեհ մագնատներն ամեն ձեւով աշխատում էին նպաստել հայերի ներգաղթին: Տիսմենիցայի տերը՝ Դոմինիկ Պոտոցկին, եկվոր հայերի համար ապրելու պայմաններ է ստեղծում, իր միջոցներով կառուցում է հայկական եկեղեցի: 1684 թ. նա իր ծախսով քահանա է նշանակում Հակոբ Վարդերեսովիչին՝ իր վրա վերցնելով նրա ոռճիկը վճարելու պարտականությունը:

Ինչպես այլ վայրերում, այնպես էլ Տիսմենիցայում հայերը ձգտում էին արտոնագիր ստանալ քաղաքի տիրոջից, որով վավերացվելու եւ հաստատվելու էին նրանց իրավունքները, եւ հստակ էին լինելու հարաբերությունները քաղաքի տիրոջ հետ:

Ուսումնասիրությունները ցույց են տվել այլեւայլ վայրերում ու տարբեր ժամանակներում հայերին տրված արտոնագրերի խիստ նմանությունը

միմյանց հետ: Օրինակ՝ Յուզեֆ Լյուբամիրսկու կողմից Յազլովեցի հայերին՝ 1751 թ. մարտի 19-ին տված հրովարտակը նույն բովանդակությունն ունի, ինչ Կիևի վոյեվոդ Ստանիսլավ Զալեսիուշ Պոտոցկու կողմից 1743 թ. Մոգիլյով-Պոդոլսկի հայ համայնքին տված հրամանագիրը: Համեմատությունից երևում է, որ Ռաշկովի հայկական գաղութին 1751 թ. տրված հրամանագիրը համարյա բառացիորեն արտագրված է Զոլոչեի հայերին 1688 թ. հոկտեմբերի 29-ին Յան Սորեսկի թագավորի տված հրովարտակից, որը հաստատել է նրա որդի Յակով Սորեսկին 1697 թ. մարտի 23-ին: Սովորաբար հայերը ձեռք էին բերում արդեն շնորհված հրովարտակները, հարմարեցնում իրենց պայմաններին եւ հաստատության համար ներկայացնում իշխանություններին:

Պետք է կարծել, որ այս ձևով էլ հրապարակ է եկել խնդրո առարկա հրովարտակը: Դա տվել է արքունի գանձապահ եւ Խմելնիցկու ստարոստայի տիկին Կոնստանցա Պոտոցկայան՝ Տիամենիցայի տիրուհին, թվականն է 1689-ը: Հետեւելով Դ. Պոտոցկուն՝ Կ. Պոտոցկայան իր վրա է վերցնում հայոց եկեղեցու քայոնձի (քահանայի) ծախսը՝ նշանակելով նրան 60 զլոտի տարեկան ռոճիկ: Նա հայերին ազատում է քաղաքի տիրոջը տրվող բոլոր հարկերից՝ տասանորդից, ոչխարի, մեղվի եւ այլ տուրքերից: Հայերը վճարելու էին միայն պետական՝ Ռեչ-Պոսպոլիտային տրվող հարկը: Նրանց թույլ է տրվում ազատորեն առևտուր անել, գնել այն ամենը, ինչ անհրաժեշտ էր ապրուստի եւ հարստանալու համար: Նա հայերին արտոնում է վաճառել բոլոր տեսակի ալկոհոլային խմիչքներ՝ պայմանով, որ նրանք քաղաքի տիրոջը դրա դիմաց վճարեն հասանելիք տուրքը: Հայերին նա տալիս է դատական ինքնավարության արտոնություն, այնպիսին, ինչպիսին նրանք ունեին լեհական տիրապետության տակ գտնվող մյուս բնակավայրերում: Դատական ինքնավարությունն ինչպես քաղաքացիական, այնպես էլ քրեական գործերի, հանձնվում էր վոյթին եւ հայերի միջից ընտրված ներկայացուցիչներին: Ընտրությունը լինելու էր ազատ եւ համաձայն այն օրենքների, որոնք կիրառվում էին ողջ երկրում: Դատարանի որոշումներից դժգոհ անձինք վերադատության գանգատով կարող էին դիմել իրեն՝ կալվածատիրուհուն: Կ. Պոտոցկայան հայերին է հանձնում այնտեղի հողերը, ուր նախկինում գտնվել է Պշենիչնիկովյան լճակը՝ ազատելով այդ հողերը բոլոր կարգի տուրքերից: Հրովարտակի ներքեի մասում եւ լուսանցքում եղած գրություններից երևում է, որ այն 18-րդ դ. մի քանի անգամ հաստատվել է Պոտոցկիների կողմից:

Ինչպես տեսնում ենք, Տիամենիցայի հայերին տրված են ճիշտ այնպիսի իրավունքներ, ինչպիսին նրանց հայրենակիցներն ունեին կվովում, Կամենիցում, Յազլովեցում ու այլ վայրերում: Զափազանց կարեւոր էր, անշուշտ, դատական ինքնավարության արտոնությունը, որը հայերին դնում էր արտոնյալ

վիճակում: Տեղական դատարաններն իրավունք չունեին դատելու հայերին նույնիսկ այն դեպքում, երբ նրանք մեղանշում էին օրենքի դեմ օտարների հետ ունեցած գործերում:

Ռեչ Պոսպոլիտայի սահմաններում դատական ինքնավարությամբ օժտված բոլոր համայնքներում կիրառության մեջ էր Մխիթար Գոշի Կանոնագրքի հիման վրա կազմված Լեհահայոց դատաստանագիրքը, որը 1519 թ. հաստատել էր Զիգմունդ 1-ին Լեհական թագավորը:

Քաղաքային ինքնավարությունը նորություն չէր հայ բնակչության համար: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դեռևս 11-13-րդ դդ. Հայաստանի մի շարք քաղաքներում կային ավագների խորհուրդներ, «զլխավորք քաղաքին», որոնց զլուխ էին անցած քաղաքապետ կամ ամիրա-քաղաքին կոչվածները, որոնք քաղաքային ինքնավարության մարմիններն էին: Այդպիսի խորհուրդներ կային Անիում, Դվինում, Խարբերդում, Նախճավանում, Արծնում եւ Կարսում: Ավագների խորհուրդը «լուծում էր քաղաքի կյանքին վերաբերող առավել կարևոր հարցերը, այն է՝ ո՞ւմ իշխանությունը պետք է ենթարկվեր քաղաքը, ի՞նչ չափով հարկեր պետք է վճարեին քաղաքի բնակիչները եւ նրատարբեր դասերը»: Այս ժամանակ էլ ահա, որպես հետեւանք քաղաքային ինքնավարության զարգացման, առաջանում են քաղաքային դատարանները⁵:

Միջնադարյան Հայաստանի քաղաքներում առաջացած ինքնավարությունը դեռևս բարձր զարգացման չհասած, ծանր հարվածներ ստացավ եւ խափանվեց մոնղոլական տիրապետության ժամանակ: Այդ զարգացումը, կարելի է ասել, ինչ-որ չափով շարունակվեց գաղթաշխարհի կենտրոններում: Սելջուկ-թուրքերի եւ ապա մոնղոլների հարձակման պատճառով հեռանալով հայրենիքից եւ հաստատվելով այլ երկրներում, հայ գաղթականները շարունակում էին ապրել նախկինի պես եւ գործնական կյանքում կիրառում հայրենիքից բերած եւ այդ վայրերում բազմացվող դատաստանագրքերը: Կյանքի նոր պայմանները ստիպում էին գաղթականներին փոփոխություններ մտցնել իրենց օրենքներում: Մոռացվում էր լեզուն, բայց չէին մոռացվում օրենքները, թարգմանվում էին հայերին հասկանալի լեզուներով, իսկ օտար տիրակալները, հարգելով հայերի իրավունքը, թույլ էին տալիս ղեկավարվել իրենց ազգային դատաստանագրքով: Փոխվում էին նաեւ տերմինները:

Խոսելով Տիամենիցայի հարեւան Ստանիսլավ քաղաքի հայերի ինքնավարության մասին, լեհ ուսումնասիրող Չեսլավ Խովանեցը գրում է. «Որոշակի արտաքին այնպիսի ձեւեր, ինչպես վոյթը, լավնիկները, խորհուրդը,

⁵ Խաչիկյան Լ. Ս., 1280 թվականի երգնկայում կազմակերպված «եղբայրությունը», ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1954, N 6, էջ 78-80:

ավագները՝ հայերը վերցրել են մագդեբուրգյան իրավունքից: Սակայն դա ոչ թե ստանիսլավյան նորամուծություն էր, այլ հայոց իրավունքի տարրերի դարավոր հասարակական կյանքի արտահայտություն՝ մագդեբուրգյան քաղաքային հիմնարկությունների ֆոնի վրա, հիմնարկություններ, որոնց գոյության պայմաններում էլ ձևավորվեցին հայկական կազմակերպության հատուկ ձևերը, որոնք արտաքուստ հիշեցնում էին մագդեբուրգյան, բայց ներքուստ՝ իր ամբողջ ոգով հասկացողություններով եւ կոչմամբ համապատասխանում էին հայոց իրավունքին»:

Հայերին ընդունելով իրենց քաղաքի բնակիչների շարքը, հնարավորություն տալով նրանց ազատորեն զբաղվել եկամտաբեր գործերով՝ Պոտոցկիները լրջորեն մտածում էին քաղաքի տնտեսության առաջընթացի մասին, եւ նրանք շսխալվեցին: Հայ արհեստավորները լեհաստանում հռչակված էին որպես կաշվի մշակման լավագույն վարպետներ: Նրանք մշակում եւ շուկա էին հանում մեծ քանակությամբ տարբեր տեսակի ու գույնի բարձրորակ կաշվեղեն: Լեհ հեղինակների վկայությամբ, Տիսմենիցայում հաստատված կաշեգործներն իրենց մասնագիտությունը սովորեցնում էին նաեւ լեհերին եւ ուկրաինացիներին: Շատ շանցած այդ ավանը դառնում է կաշվի մշակման խոշոր կենտրոն՝ մեծ եկամուտներ բերելով նաեւ Պոտոցկիներին:

Հրովարտակի ուժով ձեռք բերելով ազատորեն առևտուր անելու իրավունք, Տիսմենիցայի հայերն ակտիվորեն մասնակցում էին տարանցիկ առևտրին, առևտրական հեռավոր ուղևորություններ կատարում հատկապես դեպի Արեւելքի երկրները եւ եռանդուն կերպով մասնակցում տոնավաճառներին: Նաեւ նրանց գործունեության հետեւանքով էր, որ այդ բնակավայրը հռչակվեց որպես առևտրի նշանավոր կենտրոն: Այդ ավանի կարեւոր դերը առևտրական գործարքների մեջ երևում է նաեւ այն ժամանակ տարածված խոսքից՝ «գները թելադրում է Տիսմենիցան»:

Հայկական ինքնավարության առկայությունը Տիսմենիցայում նպաստում էր այն բանին, որ այլեւ վայրերից մեծ թվով հայ վաճառականներ գալիս էին մասնակցելու տոնավաճառներին: Հետաքրքրական է, որ լեհահայ դատարանների իրավասության մեջ էր մտնում նաեւ այլ վայրերից եկած հայերի գործերի քննության իրավունքը: «Այդ ազգի եկվորների միջեւ եղած գործերը, - ասվում է Յան Սորեսկու 1680 թ. հոկտ. 29-ի հրովարտակում, - որ քննվում են տոնավաճառների ժամանակ պետք է լինին նույն ազգի (հայերի) վոյթի իրավասության տակ»: Միաժամանակ բացատրվում է այդօրինակ արտոնություն տալու նպատակը. «Դա արվելու է այն բանի համար, որպեսզի եկվոր վաճառականները որեւէ դատավորի կողմից անիրավության շենթարկվեն եւ

դրանից հետո շտորշեն այստեղի տոնավաճառներից»:

Ստացած իրավունքների շնորհիվ գաղութն ամրապնդվում է նյութապես: 18-րդ դ. եկեղեցու բոլոր ծախսերը կատարում էր համայնքը: Այդ եկեղեցին, նախկին փայտաշենի փոխարեն, նրանք կառուցել էին 1719 թ.:

Նրանց նյութական մեծ հնարավորությունների մասին է վկայում 18-րդ դ. միմյանց ետեւից ստեղծված հոգեւոր եղբայրութիւնները, որոնցից մեկը կտրիճվորաց, այսինքն՝ երիտասարդական կազմակերպութիւնն էր:

1739 թ. գաղութի կյանքում տեղի է ունեցել աննախընթաց իրադարձութիւն՝ բացվել է հայկական դպրոց, որը գործել է երկար ժամանակ: 1895 թ. Վիեննա ուղարկված ձեռագրերի մեջ եղել է նաեւ մի «Այբբենարան», որը պատկանելիս է եղել «Գրիգորի Մոշորոյ վարժապետին Հայոց ի Թիսմինից, յամի 1879»: Ոչինչ հայտնի չէ այդ դպրոցի, այնտեղ դասավանդված առարկաների եւ ուսման դրվածքի մասին: Պետք է կարծել, որ Ս. Ռոշքան, որը հեղինակ է բառարանների եւ լեհահայոց համար կազմել է հայոց լեզվի քերականութեան ձեռնարկ, անպայման ինչ որ ձեւով մասնակցութիւն ունեցել է նրա ստեղծման գործում:

Տիսմենիցայի հայերի համար բացասական ազդեցութիւն են ունեցել համաճարակները, որոնք պարբերաբար մոլեգնում էին Լեհաստանում, մեծ թվով զոհեր խլելով բնակչութիւնից:

Հաճախակի փոփոխվող քաղաքական կացութեան, պատերազմների ու արշավանքների եւ ի վերջո՝ Լեհաստանի մասնատման պայմաններում ծանր վիճակում էր հայտնվում տնտեսութիւնը, առեւտրական սահմանափակումները հետեւում էին միմյանց, դժվարանում, երբեմն էլ համարյա անկարելի էին դառնում առեւտրական ուղեւորութիւնները, բարձրանում էին մաքսային մասհանումները, խափանվում էին տոնավաճառները: Այդ ամենը չէին կարող բացասական ազդեցութիւն չունենալ ազգային փոքր համայնքի վրա, որի կազմը հետզհետե նոսրանում էր:

ԱՐՄԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ

«ՂԱՓԱՆԳՎՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» «ԵՐՐՈՐԴ» ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՏՈՒՄԸ

1720-ական թթ. հայոց ազատամարտի հիմնական սկզբնաղբյուրներից մեկը՝ «Ղափանցվոց պատմություն»-ը, մեզ է հասել երեք հեղինակային բնագրերով՝ նախնական երկու գրառումներով (պատումներով) եւ նրանց հիման վրա նույն հեղինակի՝ մխիթարյան Ղուկաս վրդ. Սեբաստացու կազմած «Համապատում» ամփոփիչ բնագրով¹: նախնական պատումներն իրականում ոչ այլ ինչ են, քան ազատամարտի մասնակիցներ Ստեփանոս Շահումյանի եւ Տեր-Ավետիք քահանայի բանավոր հաղորդումների ճշգրիտ արձանագրումը, որի հավաստիությունն ու Համապատումի հետ ունեցած լուրջ տարբերությունները քննել եւ ներկայացրել ենք առանձին հոդվածաշարով²: Բնագրագիտական հետազոտությունն իր հերթին հնարավորություն ընձեռեց, համա-

¹ Տե՛ս Դավիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցոց», աշխատասիրեց Սամուել վրդ. Արամյան, Վենետիկ-Ս. Ղազար, 1978 (այսուհետեւ՝ Պատմութիւն Ղափանցոց), էջ 62-92: Այս հրատարակության բնագրային մասը հոդվածիս շարադրանքի մեջ, համառոտագրություններով, հղելու ենք ըստ հետեւյալ հատվածների. ՊՄՇ՝ Պատում Ստեփան Շահումյանի, էջ 119-130. ՊՏԱ՝ Պատում Տեր-Ավետիք քահանայի, էջ 131-143. Համապատում Համապատում բնագիր, խմբագրեց Ղուկաս վրդ. Սեբաստացի, էջ 147-181. Զորացուցակ՝ Դավիթ-բեկի զորավարների ցանկը եւ Տեր-Ավետիքին նվիրված ներքողը, էջ 143-145:

² Ա. Մ. Այվազյան, «1720-ական թվականների Սյունյաց ազատագրական շարժման պատմությունից (սկզբնաղբյուրների համադրման փորձ)».- Պատմա-բանասիրական հանդես (այսուհետեւ՝ ՊԲՀ), 1990, No. 2 (129), էջ 119-134: Ն ու յ ն ի՝ «Դավիթ-բեկի Հայաստան գալու ժամանակն ու հանգամանքները».- ՊԲՀ, 1990, No. 3 (130), էջ 76-85: Նույնի՝ «Թրաղարձություններն Այսրկովկասում 1723 թ. եւ արցախահայերի առաջին օգնական ռազմերը Սյունիք».- ՊԲՀ, 1990, հմր. 4 (131), էջ 63-80: Ն ու յ ն ի՝ «Թրաղարձությունները Ղափանում եւ նախիջևանի խանությունում 1724 թ.».- ՊԲՀ, 1991, հմր. 2 (133), էջ 102-114: Ն ու յ ն ի՝ ««Ղափանցվոց պատմության» հավաստիությունն ու կառուցվածքը».- ՊԲՀ, 1992, No. 1 (134), էջ 85-100: Հոդվածաշարն ամփոփված է 1992 թ. պաշտպանված քեկնածուական դիսերտացիայում ««Ղափանցվոց պատմությունը» եւ 1720-ական թվականների հայ ազատագրական շարժման ուսումնասիրությունը»:

ժամանակյա սկզբնաղբյուրների օգտագործմամբ, զուգահեռաբար կատարել նաև պատմահամեմատական վերլուծություն՝ 1720-ական թթ. հայոց ապստամբությանը վերաբերող կարեւոր բացահայտումներով ու սրբագրումներով հանդերձ:

Այսուհանդերձ, «Ղափանցվոց պատմության» բնագրագիտական-պատմագիտական ուսումնասիրությունն ավարտված համարել չի կարելի: Մասնավորապես, քննության է կարոտ Համապատումի շարադրանքի համար հիմք ծառայած այլ լրատուների եւ, ըստ այդմ էլ, մեզ չհասած լրացուցիչ նախնական գրառում-պատումների գոյության հարցը: «Ղափանցվոց պատմության» վենետիկյան բնագրերի հրատարակողը՝ Ս. վրդ. Արամյանը, հիմնվելով Մխիթարյան միաբանության ժամանակագրության վրա, ենթադրում էր, որ հնարավոր այլ լրատուների մեջ կարող էր լինել Հովհաննես անունով մի «պատանի», որը 1736 թ. առևտրական խնդիրներով հասել էր Վենետիկ՝ «ի Հաբանդ (իմա՝ Ղափան³ - Ա. Ա.) երկրէ Հայաստանեայց»: «Եթե ժամանակագրության մեջ անցած է այդ Հովհաննես երիտասարդին անունին հիշատակությունը, - գրում է Ս. Արամյանը, - ըսել է սովորական անձնավորություն մը չէր, այլ պետք էր ասիկա ալ ըլլար Ղափանի նշանավոր տոհմերեն մեկուն զավակը, որ Ստեփան Շահումյանին նման, Դավիթ-բեկի ձեռնարկին քայքայումեն վերջ, կդիմեր Վենետիկ... Այդ թվականին Վենետիկի մեջ կային 20է ավելի ղափանցի վաճառականներ: Կրնա ըլլալ, որ այս Հովհաննես երիտասարդն ալ Շահումյանին նման եղած է Դավիթ-բեկի զինակիցներեն մեկը, որ Վենետիկ գալեն վերջ, հարաբերության մտնելով մխիթարյան հայրերուն հետ՝ անոնց պատմած է ազատագրական պատերազմներու մասին իր գիտցածները»⁴: Ս. Արամյանը հիշեցնում է նաև, որ Դավիթ-բեկի զորավարների ցանկում նշվում են Հովհաննես անունով երկու հրամանատար. մեկը՝ Չավնդուրում, մյուսը՝ Մեղրիում⁵: Միաժամանակ Ս. Արամյանն այն կարծիքին էր, որ «այս ենթադրությունը հավանականութենեն անդին շանցնիր»⁶:

Խնդիրն այլ տեսանկյունից քննելով սույն հոդվածում հաստատում ենք, որ Համապատում բնագրի մեջ, բացի Ստեփանոս Շահումյանի եւ Տեր-Ավետիքի պատումներից (մեզ հասած ՊՄՇ-ն եւ ՊՏԱ-ն), օգտագործվել են նաև այլ՝ մեզ չհասած, նախնական պատում կամ պատումներ՝ գրավոր կամ բանավոր: Բանն այն է, որ Համապատումում Ղուկաս Սերաստացին բերում է որոշ փաստեր, որոնք կամ զգալիորեն տարբերվում են ՊՄՇ-ի եւ ՊՏԱ-ի տեղեկություններից,

³ Ղուկաս Սերաստացին իր անտիպ մի աշխատության մեջ հատուկ նշում է. «Դարձեալ գաւառն Խաբան որ եւ Հաբանդ ասի, բէպէտ այժմ ընդարձակապէս առեալ ունի եւ գԳուրհամ, զՉավնդուր եւ զայլ գաւառս Սիւնեաց աշխարհին, սակայն յատկապէս ունի զՓոբր Սիւնիս եւ զՀայիձոր ուր բնակէր Դավիթ Պէկն ի մտանելն նորա ի Խաբան...». - տե՛ս Ե . Փ է չ ի կ յ ա ն . ««Դավիթ Բէկի» պատմական աղբյուրները եւ Մխիթարյանն». - «Բազմավեպ», ԴԶ, 1938, No. 6-9, էջ 175:

⁴ Պատմութիւն Ղափանցոց, Առաջաբան, էջ 85:

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում, էջ 86:

կա՛մ նրանցում առհասարակ արձանագրված չեն: Հոդվածը ՊՍՇ-ՊՏԱ-Համապատում բնագրերի որոշ հատվածների տեքստաբանական համեմատություն է (զուգահեռ պատմագիտական հետազոտությամբ), որը, ինչպես կտեսնենք, լիովին թույլ է տալիս դրականորեն պատասխանելու առաջադրված հարցին:

Բարգուշատի արշավանքին վերաբերող գրվագը

Նախորդ ուսումնասիրությամբ պարզվել էր, որ Ա. Շահումյանի պատումն ավարտվում է 1724 թ. օգոստոսի իրադարձությունների արձանագրումով⁷: Տեր-Ավետիքը շարունակում է ներկայացնել Սյունյաց ապստամբության հետագա ընթացքը: 1724 թ. երկրորդ կեսին կամ 1725 թվականի առաջին կեսին Դավիթ-բեկի զորքերն իրագործում են երեք արշավանք (տե՛ս ՊՏԱ, էջ 135. հմմտ. Համապատում, էջ 164-165)⁸:

Ի տարբերություն առաջին երկու արշավանքների⁹ երրորդի վերաբերյալ Տեր-Ավետիքի պատումի եւ Համապատում բնագրի տեղեկությունները նույնական չեն (ՊՏԱ, էջ 135. հմմտ. Համապատում, էջ 164-165): Համապատումի այդ գրվագը շարադրելիս՝ Ղուկաս Սեբաստացին, բացի ՊՏԱ-ից, հավասարապես օգտվել է եւ մի երրորդ՝ մեզ չհասած աղբյուրից (ՊՍՇ-ն այդ իրադարձությանն առհասարակ չի անդրադառնում):

Նոր տեղեկություններ

Այսպես, Համապատումը հաղորդում է նոր եւ արժեքավոր տեղեկություններ, որոնք ՊՏԱ-ում բացակայում են:

Ա.) Նշվում է Մխիթար սպարապետի հրամանատարության տակ գտնվող գնդի թվաքանակը՝ «զՄխիթար սպարապետն իւր հազար ութ հարիւր վառելովք»: Այս թիվն, ի դեպ, Ձորացուցակում բացակայում է (հմմտ. էջ 143-144):

Բ.) Գրանցված են տեղագրական անվանումներ, որոնք ՊՏԱ-ում եւ ՊՍՇ-

⁷ Տե՛ս ՊՍՇ, էջ 129-130. Ա. Մ. Ա յ վ ա զ յ ա ն , «1720-ական թվականների Սյունյաց ազատագրական շարժման պատմությունից», նշվ. աշխ., էջ 134. Ն ու յ ն ի՝ «Իրադարձությունները Ղափանում եւ նախիջեւանի խանությունում 1724 թ.», նշվ. աշխ., էջ 103-105:

⁸ Այս թվագրումը բխում է «Ղափանցվոց պատմության» մեջ կիրառված ժամանակագրական հաշորդականության պահպանման բացահայտված սկզբունքից (տե՛ս ծնք. 2-ում նշված բոլոր ուսումնասիրությունները): Չամչյանի համաձայն նույնպես՝ այս դեպքերը տեղի են ունեցել 1725 թ. (տե՛ս Մ ի ֆ ա յ է լ Չ ա մ չ ե ա ն ց . Պատմութիւն Հայոց. հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 791-792):

⁹ Առաջին հարձակումը ձեռնարկվել է Ղազանկուլի (իմա՝ Կապուտչուղ) լեռան ուղղությամբ՝ «ի վերայ քուրմանաց», իր հետ բերելով ահագին ավար՝ 6300 ոչխար եւ 4130 «զայլ անասուն»: Տասն օր անց Դավիթ-բեկը «դարձեալ առաքեաց զգօսն ի լերինս Կասպելու (իմա՝ Գազբույլ - Ա. Ա.)», «ի վերայ թուրմանին, որք գնացեալ հարին եւ զնոսա անդ, եւ առին զինչս նոցա եւ զանասուն 900, եւ դարձան ի Հալիձոր» (ՊՏԱ, էջ 135):

ում չեն հիշատակված՝ Կարմիր վանք ավանն ու Խոտանանը¹⁰:

Գ) Նշվում է քոչվորների վրա Մխիթարի հարձակման օրվա պահը. «ի վերայ հասանէր նոցա յառաւօտու պահուն»:

Դ) Պարզվում է, որ Դավիթ-բեկը սուգ է անում (զուցե նաեւ հայտարարում) Ֆաթհ-Ալի սուլթանի զորքի դեմ կռվում ընկած եւ գերեվարված հայ ռազմիկների հիշատակին. «...եւ սուգ էառ Դաւիթ ի վերայ քաջին Ստեփաննոսի, եւ այնքան զօրացն ի զուր տարապարտուց կորուսելոյ»¹¹:

Ե) Ճշտվում է, որ Պալի զորավարը, վիրավորվելուց եւ թշնամութիւնքում հայտնվելուց հետո, գիշերներով է ճանապարհվում դեպի Հալիձոր:

Զ) Հաղորդվում է, որ Համապատումը կազմելու պահին, այսինքն՝ 1730-ական թթ. վերջերին¹², Պալին տակավին Հալիձորի մելիքն էր:

Տարբերություններ

Նոր տեղեկություններից զատ, Համապատումը որոշակի տարբերություններ ունի ՊՏԱ-ի համապատասխան հատվածից.

Ա) Ըստ Համապատումի, Մխիթար սպարապետն արշավում է ոչ թե ուղղակիորեն դեպի Բարգուշատ (ինչպես Տեր-Ավետիքի բերանից գրի է առնվել ՊՏԱ-ում), այլ Բարգուշատից Ղափան՝ Կարմիր վանք ավանի կողմերը թափանցած ինչ-որ քոչվոր ցեղի վրա: Այստեղից, ի դեպ, կարելի է անել մի կարեւոր հետեւություն. 1724 թ. վերջին-1725 թ. սկզբին Դավիթ-բեկն իր իշխանության սահմաններում էր համարում մելիք Ֆրանգյուլի Կարմիր վանք կամ Երցվանեկ ավանը: Սա նշանակում է, որ հայոց զորքերն անպատիժ չէին թողել մելիք Ֆրանգյուլի 1724 թ. մարտի վերջին-ապրիլի սկզբին կատարած դավաճանությունը (երբ դարանակալվեցին ու սպանվեցին Թորոս-բեկն ու նրա զորքի մեծ մասը՝ 4600 հայորդի)¹³ եւ որոշ ժամանակ անց գրավել էին վերջինիս սեփական ավանը՝ Կարմիր վանքը:

Բ) Ըստ Տեր-Ավետիքի, Խոտանանի ճակատամարտում հայերը կորցրել

¹⁰ ՊՏՇ-ում Կարմիր վանքը նշված է եռցիվանակ ձեռով (էջ 124): Համապատումի մի այլ տեղում Ղուկաս Սեբաստացին արդեն խմբագրել է. «...մելիք Ֆռանկույն Երցվանեկ աւանին, որ եւ ասի Կարմիր վանք, որ է ի Պարկուշատ գաւառին» (էջ 157): Կարմիր վանքի տեղադրությունը Բարգուշատում Ղ. Սեբաստացին կարող էր մակաբերել մելիք Ֆրանգյուլի՝ Թորոսին ուղղված ուխտադրուժ նամակի հետևյալ տողերից. «...զի եւ ի մեր Պարկուշաքայ Հայոցն քեզ բազում օգնութիւնս առնեմք» (ՊՏՇ, էջ 125. հմմտ. Համապատում, էջ 157):

¹¹ Միաժամանակ, Համապատումից դուրս է ընկել Տեր-Ավետիքի այն հաղորդումը, որ գերությունից Ս. Շահումյանի փախուստի լուրն առնելով՝ Դավիթ-բեկն «ուրախ եղև եւ հրամայեաց երկու օր հանդիսութիւնս առնել»:

¹² Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ-Ս. Ղազար, 1893, էջ 301: Պատմութիւն Ղափանցոց, էջ 86-89:

¹³ Դեպի թվագրումը կատարված է աստ՝ Ա . Մ . Ա յ վ ա գ յ ա ն , «1720-ական թվականների Սյունյաց ազատագրական շարժման պատմությունից», նշվ. աշխ., էջ 130-134:

էին 200 մարդ, մինչդեռ Համապատումը զոհերի թիվը հասցնում է 300-400-ի:

Գ) Տեր-Ավետիքի համաձայն, Պալի զորավարը, վիրավոր վիճակում, կռվի դաշտից Հալիձոր է հասնում 4 օրվա ընթացքում, իսկ ըստ Համապատումի՝ 3 օրում:

Դ) Ի վերջո, հոգուտ երրորդ՝ գրավոր կամ բանավոր, մեզ չհասած նախնական պատում-աղբյուրի գոյության խոսում է այն, որ Համապատումի խնդրո առարկա հատվածում Ս. Շահումյանի անունը հիշատակված է մի ձևով՝ «Ստեփանոս Շահումանեան», որով ո՛չ ինքն է իրեն կոչում «Ես՝ Ստեփաննոս Վարթանէս Շահումբանէս» (ՊՄՇ, էջ 127), եւ ո՛չ էլ Տեր-Ավետիքը, որը նույնպես նրան անվանում է «Ստեփաննոս Վարդանէս Շահումբանէս» (ՊՏԱ, էջ 134) կամ «Ստեփաննոս Շահում Զատայ» (նույն տեղում): Համապատումի որեւէ այլ էջում եւս չի հանդիպում «Ստեփանոս Շահումանեան» ձևեր (հմմտ. Համապատում, էջ 148, 149, 161), ուստի Ս. Արամյանն օժտել է այն «Sic» նշանով: Զորացուցակում անունը հիշվում է որպես «Ստեփաննոս Վարդանէսեան» (էջ 143), իսկ Ս. Ղազար կղզում շինված խորանի վրա արձանագրված է՝ «Ղափանեցիք Շահումեանց տան... պարոն Ստեփան Վարդանէսեան»¹⁴:

Թորոս զորավարի՝ Դավիթ-բեկին ներկայանալու դրվագը

Նախնական այլ պատումի կամ պատումների գոյության օգտին է խոսում նաեւ ՊՄՇ-ի մեջ մուծված հետեւյալ ամբողջական հատվածը.

«Եւ իբրեւ լուան բնակիչքն Զանդրու զգալն Դաւիթ Պէկին՝ դիմեցին առ նա, եւ զառաջինն դիմեաց Թորոսն (ձեռագրում Դորոս)¹⁵, որ բնակէր ի Խորձոր, զալ եւ առնուլ ի նմանէ զիշխանութիւն զօրապետութեան. եւ գնացեալ ի Զանդուր՝ ժողովեաց զարսն տեղւոյն առ ինքն. մնաց անդ» (ՊՄՇ, էջ 122):

Ս. Արամյանը ծանոթագրում է, որ այս «հինգ տողերն ավելի ուշ գրված, տարբեր գրով, հետո առանձին թուղթով փակցված են բնագրին մեջ: Այդ պատճառով թերեւս գրված է Դաւիթ եւ ոչ թե Տաւութ, կամ Դորոս՝ փոխան Թորոսի»¹⁶: Ներմուծված հատվածի տարբեր ձեռագրով գրված լինելը մտածել է տալիս, որ «Երրորդ» կամ այլ լրատուի պատմածի գրի առնողը Ղուկաս Սերաստացին չի եղել: Երբ սրան ավելացնում ենք նաեւ անունների արտասանման տարբերությունը (ՊՄՇ-ում «Տաւութ» կամ «Դաւութ» եւ «Թորոս», բայց երբեք՝ «Դորոս» ու միայն մեկ բացառությամբ՝ «Դաւիթ»¹⁷), ապա ենթադրելի է դառնում, որ այդ հատվածը Ս. Շահումյանի թելադրածն էլ չէ:

¹⁴ Պատմութիւն Ղափանցոց, էջ 116:

¹⁵ ՊՄՇ, էջ 122, ծնր. 10:

¹⁶ Նույն տեղում, ծնր. 9:

¹⁷ ՊՄՇ, էջ 129:

Այժմ տեսնենք, թե մեզ հուզող դեպքն ինչպես է նկարագրում Տեր-Ավետիքը.

«Արդ՝ զայս ամենայն (Դավիթ-բեկի գործունեությունը — Ա. Ա.) իմացեալ, ամենեքեան որք բնակեալք էին ի Չաւղուրն, զառաջինն եկն առ նա Քորոս զօրապեան, եւ ընդ նմա հնգետասան այր: եւ ետ նմա զիշխանություն զօրապետութեան եւ առաքեաց զնա, եւ ընդ նմա զՊայնտուր սպարապետն (sic — Ա. Ա.) ի Չաւղուր» (ՊՏԱ, էջ 132. ընդգծումն իմն է՝ Ա.Ա.):

Նույն դրվագին Համապատումն անդրադառնում է երկիցս: Առաջին անգամ այն տրված է ՊՏԱ-ի վերաշարադրության ետնախորքում¹⁸ եւ, ընդհանուր առմամբ, կրկնում է Տեր-Ավետիքի հաղորդումը.

«Արդ՝ լուր եղեւ ամենայն բնակչացն Ղափանու, թէ Դաւիթ Պէկն եկեալ հասեալ է ի թիկունս Հայոց մեծաւ քաջութեամբ, եւ հասանէին առ նա յամենայն կողմանց. զառաջինն դիմէր զալ առ նա Քորոս՝ սակաւ արամբ, եւ առնոյր ի նմանէ զիշխանութիւն զօրապետութեան, եւ դառնայր ի Չաւղուր՝ յերկիրն իւր, ընդ իւր առեալ նաեւ զՊայնտուր զօրավարն Դաւիթ» (էջ 150. ընդգծումն իմն է՝ Ա.Ա.):

Երկրորդ անգամ այս դրվագը Համապատումում մատուցվում է Ս. Շահումյանի պատումի հիման վրա¹⁹ եւ հիմնականում համապատասխանում է ՊՏԱ-ի մեջ մուծված վերոհիշյալ հատվածի հաղորդմանը.

«Ընդ աւուրս ժամանակացն այնոցիկ՝ իբրեւ լսէր Քորոս ի Խորձոր, որ է ի Չաւղուրն, թէ Դաւիթ (ձեռագրում՝ Քաւիթ²⁰) եկեալ հասեալ է բազում զօրօք ի Սիսան գաւառ, ընդ իւր առնոյր արս իբրեւ երեսուն, եւ զայր հասանէր առ նա. եւ առեալ ի նմանէ զիշխանութիւն զօրապետութեան, վաղվաղակի դարձ առնէր, խաղայր զնայր ի Չաւղուր, եւ զարս տեղոյն առ ինքն ժողովէր, կարգէր կազմէր զնոսա գունդս գունդս, եւ ի վերայ նոցա կացուցանէր հարիւրապետս եւ հիսնապետս» (էջ 154. ընդգծումն իմն է՝ Ա.Ա.):

Սույն հատվածը գալիս է հաստատելու «երրորդ» նախնական պատումի գոյություն փաստը, եւ ահա թե ինչու. 1. Առկա է մեզ հայտնի երեք բնագրերում ընդունված արտասանության ձեւերից եւս մեկ շեղում՝ «Դաւիթ»-ը գործածվում է «Քաւիթ» հնչյունափոխությամբ: Սա չի կարելի վրիպակ համարել, որովհետեւ ՊՏԱ-ի մեջ մուծված զուգահեռ հատվածում կան նաեւ Ս. Շահումյանի կողմից շգործածված «Դորոսը» եւ «Դաւիթը»: 2. Հաղորդվում է

¹⁸ Համապատում, էջ 150-153. հմմտ. ՊՏԱ, էջ 131-133:

¹⁹ Տե՛ս Համապատում, էջ 154-164. հմմտ. ՊՏԱ, էջ 122-130: ՊՏԱ-ի եւ ՊՏԱ-ի զուգահեռ հատվածների եւ Համապատումում դրանց օգտագործման մասին տե՛ս նաեւ Ա. Մ. Այվազյան, «Իրադարձություններն Այսկովկասում 1723 թ. . . .», նշվ. աշխ., էջ 63:

²⁰ Տե՛ս Համապատում, էջ 154, ձևը. 21:

մի տեղեկութիւն, որը Ս. Շահումյանի պատումում (ներառյալ մուծված հատվածը) չկա, իսկ Տեր-Ավետիքի տվյալներին՝ չի համապատասխանում. խոսքը Թորոսի հետ Դավիթ-բեկի մոտ եկած ռազմիկների թվի մասին է՝ 30 հոգի (ՊՏԱ-ում 15 հոգի): Սա ո՛չ վրիպակ է, ո՛չ էլ վերախմբագրում. Համապատումը խմբագրելիս, Ղուկաս Սեբաստացին ձեռքի տակ ունեցել է այս 30 հոգու հիշատակումով առանձին մի աղբյուր եւ այդ իսկ պատճառով Համապատումի՝ խնդրո առարկա դեպքն արձանագրող առաջին (ՊՏԱ-ն վերարտադրող) հաղորդման մեջ զանց է առել Տեր-Ավետիքի ծանուցումը 15 հոգու մասին ու պարզապես գրել է՝ «զառաջինն դիմէր գալ առ նա Թորոս՝ սակաւ արամբ» (էջ 150):

Այսպիսով, Ս. Շահումյանի պատումի մեջ մուծված հատվածը եւ Համապատումի նշված մասը (էջ 154) բխում են մի ընդհանուր, մեզ չհասած աղբյուրից, այն է՝ այլ լրատուի բերանից գրառված «Երրորդ» պատումից: Թե ո՞վ է եղել այս դրվագի երրորդ պատմողը, հաստատապես ասելն անհնար է: Գուցե հե՛նց այն Հովհաննէս անունով պատանին, որի մասին վերն արդեն խոսվել է: Սակայն կարելորն այն է, որ «Երրորդը» (կամ գուցե եւ՝ լրատուները մեկից ավելին են) քաջատեղյակ է 1720-ական թթ. Սյունիքում տեղի ունեցած իրագարծութիւններին. այդ է վկայում հատկապես Մխիթար սպարապետի՝ Բարգուշատից Ղափան թափանցած քոչվորների դեմ արշավանքի մանրամասն նկարագրութիւնը: Այդ է հուշում նաեւ Թորոս զորավարի հայրենի գյուղի՝ Խորձորի հիշատակութիւնը, որը «Ղափանցվոց պատմութեան» մեջ հիշվում է միայն «Երրորդ» պատումի հիման վրա գրված հատվածներում (ՊՄՇ, էջ 122. Համապատում, էջ 154)²¹:

Հալիձորի ճակատամարտի դրվագը

«Երրորդ» պատումի գոյութեան փաստը լրացուցիչ տվյալներով հաստատում է Հալիձորի ճակատամարտի մասին պատմող հատվածը: Համապատումում կան նոր տեղեկութիւններ:

Ա) ՊՏԱ-ում ասվում է, որ օսմանյան հարձակման պահին Դավիթ-բեկի հետ էին մնացել Տեր-Ավետիքն ու մելիք Փարսաղանը (էջ 136), Համապատումում լրացված է, որ այդ երկուսի հետ կային որոշ թվով զինվորներ՝ «զհետ գնացին նաեւ Տէր Աւետիսն եւ Մելիք Փարսաղան՝ սակաւ ոմամբ» (էջ 167):

Բ) Համապատումի եւս մի լրացուցիչ տեղեկութիւն վերաբերում է Ղափանը պաշարած օսմանյան բանակին օժանդակ ուժերի միանալու ժամանակին՝ «յամսեանն իններորդի յետ գալստեան Օսմանցւոց ի Ղափան»

²¹ Գուցե բարբառագետ լեզվաբանները կարողանան «դ»-ն «թ»-ի (Թաիթ) եւ «թ»-ն՝ «դ»-ի (Դորոս) հնչյունափոխության փաստի հիման վրա ենթադրել «Երրորդ» պատմողի ծննդյան եւ բնակության վայրը, ի մտի ունենալով, որ այն պետք է փնտրել, ըստ ամենայնի, Սյունիքում եւ հարող տարածքներում:

(էջ 167)²²:

Գ) Համապատումը նշում է Դավիթ-բեկի հետ Հալիձորում ամրացած գործի ընդհանուր թիվը՝ 350 ուղմիկ (էջ 168):

Դ) Համապատումը մանրամասն նկարագրում է օսմանցիների վերջին գրոհը, որի ընթացքում նրանք գործի էին դրել 26 պաշարող մեքենա (էջ 168), մինչդեռ ՊՏԱ-ում թշնամու այս մեծ գրոհի մասին որեւէ բան չի ասվում (էջ 137):

ե) Համապատումում նկարագրված են նույն օրվա կռվի այլ մանրամասներ եւս, որոնք ՊՏԱ-ում դարձյալ բացակայում են, այն է՝ Տեր-Ավետիքի եւ Մխիթարի հակազրոհից առաջ գործերի առջեւ արտասանված ճառի, նրանց հետ այդ 300 զինվոր ունենալու, գաղտնի դռնով օսմանցիների թիկունք դուրս գալու եւ օսմանցիների աջակողմյան գնդի վրա առաջին հարվածը հասցնելու մասին (էջ 169-170):

Կա մի կարեւոր տարբերություն եւս. Տեր-Ավետիքի համաձայն, հայոց հակահարձակումը տեղի է ունեցել պաշարման 6-րդ օրը (էջ 137), իսկ ըստ Համապատումի՝ 7-րդ օրը (էջ 168): Ըստ ամենայնի, այս բոլոր տեղեկությունները Ղուկաս Սերաստացին քաղել է անմիջականորեն այլ լրատուից կամ նրանից գրառված պատումից:

Ինչպես ժամանակին իրավամբ նկատել էր Մ. Օրմանյանը, 1720-ական թթ. սկսած Միքայել Չամչյանին կարելի է «իբր բնագիր հեղինակ» համարել²³: Արդարեւ, Չամչյանը, թեպետեւ ընդհանուր առմամբ հարազատ է մնում եւ հաճախ բառացիորեն է կրկնում «Ղափանցվոց պատմություն»-ը, այդուհանդերձ նա մի շարք նոր ու հետաքրքիր տեղեկություններ է հայտնում Հալիձորի ճակատամարտի վերաբերյալ²⁴: Այսպես՝ Չամչյանի համաձայն, Դավիթ-բեկի հետ Հալիձորում եղել է ընդամենը 453 զինվոր²⁵: Այս թիվն այնքան հստակ է, որ այն պետք է անպայման վերցված լիներ մի ինչ-որ մեզ չհասած աղբյուրից: Այն նաեւ որեւէ կերպ չէր կարող առաջանալ Չամչյանի այլուր կիրառվող տրամաբանական-կիսակամայական եզրահանգման եղանակի արդյունքում, եղանակ, որը նա երբեմն օգտագործում է թվային տվյալների հետ գործ

²² Միաժամանակ, Համապատումից դուրս է ընկել Տեր-Ավետիքի շափազանց կարեւոր հաղորդումը, ըստ որի Հալիձորի պաշարումն սկսվել է Քառասնորդաց պահի 13-րդ օրը (ՊՏԱ, էջ 136), որը բույլ է տալիս հստակ նշտելու այն՝ փետրվարի 26, 1727 թ. (տե՛ս Ա. Մ. Այվազյան, «Ղափանցվոց պատմություն» հավաստիությունն ու կառուցվածքը», նշվ. աշխ., էջ 88-94, ուր եւ ֆնևված է Հալիձորի ճակատամարտի ժամանակագրությունը):

²³ Մ. Օրմանյան. Ազգապատում, հ. Բ, Կ. Պոլիս, 1912-1914, եւ 1944, էջ 2844:

²⁴ Արդարացիորեն նշելով Չամչյանի՝ Դավիթ-բեկի գործունեությանը նվիրած զրույների՝ «Ղափանցվոց պատմությունից» առաջացած լինելը, Ս. Արամյանը չի նկատել վերջ մեջբերվող նորություններն ու տարբերությունները (Պատմութիւն Ղափանցոց, Առաջաբան, էջ 71-72):

²⁵ Մ. Չամչեանց. Պատմութիւն Հայոց. հ. Գ, էջ 792:

ունենալիս²⁶: Չամչանը՝ որպէս մխիթարչյան միաբան, ինքն էլ կարող էր հանդիպած ու զրուցած լինել Վենետիկում բնակվող կամ այնտեղ այցելութեամբ գտնվող Սյունյաց ազատամարտի վետերանների հետ: Նրա ձեռքի տակ կարող էին լինել նաեւ մեզ չհասած նախնական պատումը կամ պատումները: Սա հաստատվում է Չամչանի եւս երեք հետաքրքրական տեղեկութիւններով, որոնք բացակայում են «Ղափանցւոց պատմութեան» պահպանված բնագրերում: Մեկը վերաբերում է տեղանվանը. օսմանյան բանակը, մոտենալով Հալիձորին, բանակում է «յանկոյս գետոյն Հալիձորոյ՝ մերձ ի կիրճն Ղամպէլու ասացեալ»²⁷: Մյուս երկու տեղեկութիւնը՝ ռազմական բնույթի են. ա) ըստ Չամչանի, օսմանյան բանակի՝ Հալիձորի վրա ձեռնարկած վերջին օրվա մեծ գրոհը եղել է երեք կողմից ու, ըստ այդմ էլ, մինչեւ հայերի հակազրոհը մարտն ընթացել է երեք ուղղութեամբ. բ) սկզբից հայերը փորձել են հետ մղել օսմանցիներին հրացանային համազարկերով, սակայն ի վերջո գործը հասել է սուսերամարտի²⁸:

Այսպիսով, Հալիձորի ճակատամարտի մասին Չամչանի հաղորդած նոր տեղեկութիւնները նույնպէս խոսում են այլ նախնական պատումների գոյութեան օգտին:

Հալիձորի բերդի անկման դրվագը

Միայն Համապատումում են առկա Հալիձորի բերդի անկման կարեւոր մանրամասները: Այս դրվագում անմիջական դերակատարութիւն ունեցած Տեր-Ավետիքն այս մասին խոսում է շափազանց համառոտ, ասելով ընդամենը, թե Դավիթ-բեկի վախճանվելուց ու Մխիթար սպարապետի իշխան ընտրվելուց (1728 թ.) հետո՝ «զկնի միոյ տարւոյ, վասն զի զօրականք միմիանցն ոչ հպատակեցան, ուստի Օսմանցին եկեալ էառ զբերդն Դաւթի, եւ գերի վարեցին զամենայն բնակիչսն նորա. իսկ Մխիթարն փախուցեալ ի նոցանէ...» (ՊՏԱ, էջ 142):

Նրբ ծանոթանում ենք նույն իրադարձութեանը վերաբերող Համապատումի նկարագրութեանը, պարզ է դառնում ինչպէս Տեր-Ավետիքի սակավախոսութիւնը, այնպէս էլ այն, որ այդ տեղեկութիւնները մխիթարչյաններին հաղորդել է այլ լրատու: Պարզվում է, որ Հալիձորի երկրորդ պաշարումից հետո բերդում խռովութիւն է սկսվել ընդդէմ Մխիթար սպարապետի, որը Դավիթ-բեկի նման դիմադրութիւնն անվարան շարունակելու կողմնակից էր²⁹:

²⁶ Այս մասին մանրամասն տե՛ս Ա . Մ . Ա յ վ ա զ յ ա ն , «1720-ական թվականների Սյունյաց ազատագրական շարժման պատմութիւնից», նշվ. աշխ, էջ 125-128:

²⁷ Մ . Չ ա մ շ ե ա ն ց . Պատմութիւն Հայոց. Կ. Պ, էջ 793:

²⁸ Նույն տեղում, էջ 794:

²⁹ Դավիթ-բեկի դիւրոշումը հրաշալիորեն արտահայտված է 1725 թ. գրված մի վավերագրում. «Из Нахчивана турецкой паша посылал к армянам Капанским, к Даутбег баше (sic), чтоб он со своими армянами поклонился турецкому салтану и был бы у турок в подданстве. Но он, Даутбег баша, отказал ему, турецкому

Այդ խոսովության պարագլուխներից մեկը հենց Տեր-Ավետիքն էր, որին էլ երկու հոգու հետ միասին առաքում են օսմանցիների հրամանատարության մոտ՝ «խօսիլ զխաղաղութիւն ընդ նոսա»: Օսմանցիները երգվում են վնաս չհասցնել բերդում պատսպարվածներին, եթե այն հանձնվի առանց դիմադրության: Խոսվարարների համաձայնությունն ստանալով, օսմանցիները Տեր-Ավետիքին պահում են իրենց մոտ: Նույն գիշերով Մխիթարը, իջնելով բերդի պարսպից, հեռանում է: Իսկ երբ առավոտյան բերդի դռները ներսից բացում են, կատարվում է այն, ինչ միանգամայն սպասելի էր, եւ ինչը շատ լավ հասկանում էր Մխիթար սպարապետը.

«այլ անօրէն զօրքն Օսմանցւոց իբրեւ ի ներքս մտին, մերժեցին անարգեցին զերզմունս եւ զդաշինս փաշայիցն, եւ զամենայն այր զօրաւոր կոտորեցին, եւ զկանայս եւ մանկունս զերի վարեցին, ի մենարանս կուտանացն մտին եւ զամենեսեան զերեցին. ապա զպարիսպս բերդին քանդեցին կործանեցին, հարթ եւ հատակ արարին, եւ առին զկին եւ զօրդիսն Մխիթարայ՝³⁰ եւ զամենայն որ ինչ էր անդ, եւ թողին զնացին: Բայց զտէր Աւետիսն փաշայն եթող ի Հալի ձոր: Եւ իբրեւ նորա շունցին անտի, այլ զօրք Օսմանցւոց անդր հասին, որք իբրեւ կամեցան ունիլ եւ սպանանել զնա, նա փախուցեալ ի նոցանէ՝ անկաւ առ փաշայն, որոյ հրամանան առեալ զընտանիս իւր՝ զնաց բնակեցաւ ի Գաղատիայ: Եւ էառ զներումն ի Սրբազան

паше, и сказал, что я де вас не слушаю, в подданстве у вас быть не хочу и буду де против вас стоять доколе жив буду, а когда умру и что после меня останетца, тогда де как хотят, так и делают” (տե՛ս Արխив внешней политики России, фонд Сношения России с Персией, оп. 1, 1725, д. 5, л. 3356):

³⁰ Օսմանցիները գրավել են Հալիձորի բերդը, հավանաբար, 1730 թ. սկզբին եւ ոչ 1729 թ., ինչպես կարելի էր մակաբերել Համապատումի այն հաղորդումից, որ դեպի տեղի է ունեցել Դավիթ-բեկի մահից մեկ տարի անց: Այսպիսի եզրակացության եմ գալիս, վերլուծելով 1730 թ. հուլիսի 10-ին Կ. Պոլսից Մխիթար Սեբաստացուն առաված մի նամակի հետևյալ տողերը. «...նաև ասի թէ տանիկ՝ զՍղնախի հայերն յաղբահարեալ, ու զգերդաստանիս նոցին զերի վարեալ՝ ասելի քան զքսան հազար բերեն աստ» (Պատմութիւն Ղափանցոց, էջ 112. ընդգծումն իմն է՝ Ա.Ա.): Ամենայն հավանականությամբ, խոսքը հենց Մխիթար սպարապետի եւ Հալիձորում գերի ընկած մյուս հայ զորահրամանատարների ընտանիքների մասին է: Նկատի ունենալով այդ ժամանակներում հանապարհորդելու արագությունը, հազարավոր գերիներին Սյունիից Կ. Պոլիս հասցնելը տեսելու էր առնվազն 2-3 ամիս: Հետևաբար, Հալիձորի գրավումը եղել է 1730 թ. զարնան սկզբներին, իսկ Մխիթար սպարապետի հետագա գործունեությունը (նոր զորագնդեր հավաքելն ու կազմակերպելը, Սյունիի բերդերը վերստին ազատագրելը, Օրդուբադը գրավելն ու բնաջնջելը – տե՛ս ՊՏԱ, էջ 142. Համապատում, էջ 179) տեսել է մինչև 1730 թ. վերջերը՝ մինչև նրա ողբերգական վախճանը Խնձորեսկում: Կարելի է անել եւս մեկ հետևություն. եթե հետագայում ազատամարտի մասնակիցները Հալիձորի բերդի անկումը թվագրել են Դավիթ մահից «մեկ տարի անց» նշումով, ապա պետք է կարծել, որ Դավիթ-բեկի մահը տեղի է ունեցել 1728 թ. վերջերին (տարեթվի նշումը տե՛ս Ա. Մ. Այվազյան, «Ղափանցվոց պատմության» հավաստիությունն ու կառուցվածքը», նշվ. աշխ., էջ 85-100): Իսկ հիշատակված 20,000 հայերը գերեւարվել էին, ըստ ամենայնի, ոչ միայն Հալիձորի բերդում, այլև Ղափանի այլ շրջաններում:

Հայրապետէն Հոսմայ» (էջ 178):

Ինչպես արդեն ասվեց, այս բոլոր տեղեկությունները ՊՏԱ-ից բացակայում են: Պատճառը պարզ է. Տեր-Ավետիքը չէր ցանկանում պատմել իր ականհայտ դավաճանության մասին, որին զոհ գնացին հազարավոր մարդիկ: Այնուամենայնիվ, նա, ըստ երեւոյթին, անկեղծորեն զղջում ու տառապում էր իր ահավոր սխալի համար, իսկ սյունեցիները, նրա բազում քաջագործությունները հիշելով, նրան զարմանալիորեն ներել էին ու դեռ ավելին՝ Գաղատիայում գտնված շրջանում հորդորում էին «կրկին արիանալ» եւ Մխիթար սպարապետին փոխարինած «Պալի Պէկին զինուորանալ» (Զորացուցակ, էջ 145):

Այսպիսով, վերը կատարված քննությունը հավաստում է, որ «Ղափանցվոց պատմության» հիմքում ընկած են ոչ միայն Ստեփանոս Շահումյանի եւ Տեր-Ավետիքի հաղորդումները (մեզ հասած ՊՄՇ-ն եւ ՊՏԱ-ն), այլեւ 1730-ական թթ. վենետիկում քաջատեղյակ ուրիշ լրատուների՝ մխիթարյան միաբանների ենթարկած «խաչաձեւ հարցաքննումներն» ու դրանց արդյունքում գրաված մեկ կամ ավելի (մեզ չհասած) նախնական պատումները, մի հանգամանք, որը բոլորովին այլ կողմից է բացատրում պատմական այս երկում տեղ գտած տեղեկությունների բացառիկ հավաստիությունը³¹:

³¹ Երկի արժանահավատությունը գնահատված է, մասնավորապես, աստ՝ Ա. Մ. Այվազյան, ««Ղափանցվոց պատմության» հավաստիությունն ու կառուցվածքը», նշվ. աշխ., էջ 85-100:

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ՀԱԿՈՒՔՅՈՍԵՅԱՆ

ՄԻՄԵՆՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ՝ ՊԵՏՐՈՍ ԵՎ ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՃԱՌԸ

Միմենոն վարդապետի անունով Մաշտոցի անվ. Մատենադարանի թիվ 6196 ձեռագրում առկա է մի ճառ՝ նվիրված Պետրոս եւ Պողոս առաքյալներին: Քանի որ ճառը նտիր այս ժողովածուն ընդօրինակվել է 1227 թ.-ից առաջ, ուստի բնական է հաստատել, որ այստեղ հիշված Միմենոնը ապրել է դրանից շատ առաջ: Միայն մինչ այդ արդեն ճանաչված մի մատենագրի ճառը կարող էր ընդգրկվել Տիեզերական եկեղեցու մեծահամբավ հայրերի եւ ուսուցիչների (Եփրեմ Ասորի, Հովհան Ոսկեբերան, Գրիգոր Նյուսացի եւ ուրիշներ) երկերի հետ: Ճառում սուրբգրային վկայությունները համապատասխանում են հայերեն ընկալյալ թարգմանությանը: Երկի «Ամուք սուրբք, արեգակունք անմարք...» բառերով սկսվող բանաստեղծաշունչ վերջընթեր մասն ունի «Ա-Ք» ծայրակապը: Այս փաստերը թույլ են տալիս ենթադրել, որ ճառը շարադրված է հայ հեղինակի կողմից¹: Ճառի սկզբում

1 Ամեն պարագայի նկատենք, որ ճառը շփոթելի չէ Միմենոն Մետափրաստեսի (+940) Պետրոս եւ Պողոս առաքյալներին նվիրված մեկնողական բնույթի Και τών τεχνών ού μόνον του 'εξ άρχη πατέρα αποδεχόμεφα... սկսվածով երկի հետ. BHG, II, 1493:

Միմենոն «ոգեշահ» վարդապետը նկատում է, որ ինքն այս ներբողական ճառը մտահղացել է գրել Պողոս եւ Պետրոս առաքյալների տոնի օրերին, երբ, ինչպես նկատում է «զկարգս կրանից վերձանէի»: «Վերձանել»-ը անուղղակիորեն կապված է «վերաշարադրել» բայիմաստի հետ: Այս նշանակում է, որ երկիս խորագրում հիշված Միմենոնին, որ կարգավորել է սրբոց տոների համար նախատեսված նրանց պատմությունները, վերձանել, այն է՝ բացատրաբար վերաշարադրել է գրանք, պետք է նույնացնել ժ դարի մատենագիր Միմենոն Աղձնեցու հետ, որ հայտնի է համարնույթ տոնախոսական մի ճառով նվիրված Հովհաննես Մկրտչի եւ Աթանագինեի հիշատակին, ինչպես նաեւ՝ մեկ այլ «Վասն գինի խմողաց, որ արբենան եւ վասն գուսանեաց... եւ վասն պոռնիկ կանանց» խորագրով ճառով: «Միմենոնի վարդապետի ասացեալ պատճառ լուսավորչին...» առաջին ճառում հեղինակը բացատրում է այդ սրբերի հիշատակի տոնակատարման կանոնակարգումը: Պողոս եւ Պետրոս առաքյալներին նվիրված խնդրո առարկա ճառը եւս հետապնդում է նույն նպատակը՝ բացատրել հիշյալ սրբոց տոնի խորհուրդը: Եթե հիրավի այս ճառը պատկանում է Միմենոն Աղձնեցու գրչին, ապա մինչ օրս նրա անունով հայտնի երկու ճառերի վրա կավելանա եւս մեկը, որով առավել ամբողջական կդառնա մեր պատկերացումը նրա մատենագրական ժառանգության մասին²:

Միմենոն վարդապետի ձեռքի տակ, ինչպես երեւում է, եղել են սուրբգրային մեկնություններ, պարականոն նյութեր: Հեղինակն աչքի առջեւ է ունեցել Պետրոս եւ Պողոս առաքյալներին վերաբերող սուրբգրային անվավերներ³: Խոսելով Պետրոս առաքյալի մասին՝ նա գրում է. « Եւ բանիցս ուշ եղեալ իմաստչիք, զոր յաշորդն ասէ ի պատմութեան նորին»: Այս բառերով հեղինակը նկատի ունի Պետրոս առաքյալի վկայաբանությունը⁴: Իսկ «յորժամ վասն իսաչին բանս լռական ասէ» բառերով բացահայտորեն ակնարկում է վկայաբանության «Ով անուն իսաչի ծածկեալ խորհուրդ, ով անճառ շնորհք ի վերայ անուան իսաչիս ասացեալ» խոսքը⁵: Որ Միմենոն վար-

2 Տե՛ս եւ հմմտ. Հ. Քյոսեյան, Միմենոն Աղձնեցու մատենագրությունը,

«Անեմյան մատենաշար», Ա, Երևան, 2002, էջ 173 -- 195:

3 Տե՛ս Քանգարան հայկական հին եւ նոր բարգմանութանց, Գ, Անկանոն գիրք առաքելական, աշխատ. հ. Քերովրէ Զրաբեան, Վենետիկ, 1904, էջ 1 - 61:

4 Տե՛ս «Անկանոն գիրք առաքելական», էջ 51 - 56:

5 Անդ, էջ 53:

դապետն իրապես աչքի առջեւ է ունեցել «Վկայաբանութիւն Պետրոսի առաքելոյ» երկը, ցույց է տալիս հետեւյալ համադրութիւնը.

Վկայաբանութիւն

Ճառ

եւ մինչդեռ շանէր ընդ դուռն քաղաքի տեսանէր զՏէր, զի մտանէր ի Հոռովմ, եւ իբրեւ ետես Պետրոս ասէ ցՏէր. Յետրոս ծանուցեալ ասէր. Տէր յո՞ Յո՞ գաս այսր, Տէր: Եւ Տէր ասէ. Մտանեմ ի Հոռովմ խաչիլ: Պետրոս ասէ. Դարձեա՞լ խաչիս: Եւ ասէ. Այո, Պետրէ, դարձեալ խաչիմ եւ եկեալ ի միտս իւր Պետրոս... դարձաւ ի Հոռովմ... ⁶ :	եւ հանին զնա ընդ դուռն քաղաքին: Ահա երեւեցաւ նմա Տէր, եւ երթաս: Եւ Տէր ասէ. Երթամ ի Հոռովմ խաչիլ: Այո, դարձեալ խաչիմ: Եւ դարձաւ Պետրոս ի տեղի իւր:
---	--

Խոսելով Պետրոսի առաքելական գործունեության մասին՝ հեղինակը նկատում է, թե նա «դէմ եղեալ երթայր առ վիշապն շարայուշ. զՍիմոնէ կախարդի ասեմ եւ զներոնէ: Զի շարաբեր թիւնիք ելից նա զգահազուխ քաղաքի Հոռոմայ, զի անդ պարզեաց նա զկամակորութիւն, զոր եւ ոմն ասաց ի վիշապի մեկնութեանն, թէ ի հալամի վիշապին ձկնոսքն տաւաղին, զի սպանցեն զնա. որ եւ եկն կատարեցաւ առ երանելիքս Պետրոս եւ Պաւղոս»: Ճառագիր հեղինակն այստեղ որոշակիորեն ակնարկում է հայ թարգմանական մատենագրության մեջ Որոգինեսի (185-253/254) անվամբ պահպանված «Խոսք Որոգինիի զիրք Հինգերորդ ասացուած վասն վիշապին, որ ի Յոր պատմի, ի Դաւիթ եւ յայլս» խորագրով միավորը, ուր Յորի գրքում հիշատակված վիշապը (Խ 10, 46) խորհրդապատկերն է համարվում շարի՝ Եգիպտոսի թագավորի. «Ահա յայտնի եղեւ, ուր ասացին Գիրք զվիշապս անուն ահաւոր մեծութեան: Եւ կամակոր նենգութեամբ ի մահաբեր թիւնիցն, որպէս եւ Դաւիթ ասէ զնոյն զսա զայս գազան. «Վիշապն զոր ստեղծեր խաղա[լ] նովաւ» (Սղմ. ԺԳ 26), եւ զկամակոր թագաւորն Եգիպտոսի, որ աւձաձ եւ բանիւ խաւսէր ընդ Մովսիսի...»⁷:

6 Տե՛ս անդ, էջ 52:

7 Տե՛ս «Նշխարներ Որոգինեսի հայկական բարգմանություններից», հրատ. Եզնիկ վրդ. Պետրոսյան, Հայկազուն արդ. Նաչարյան, «Էջմիածին», 1979, Բ, էջ 24: Զեռագրի նկարագրությունն ըստ Յուդակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Հտ.

Ճառը բաղկացած է երկու՝ աստվածաբանական եւ տարփոդական մասերից: Աստվածաբանական բաժինն աչքի է ընկնում դարի մեկնաբանական ձեռքբերումների վրա հաստատված վարդապետական նրբին համադրումներով: Ուշագրավ է «Եվա՝ Պողոս», «Ադամ Պետրոս» խորհրդաբանությունը: Եթե առաջին համադրումը տարբերվում է ժամանակի վարդապետական ըմբռնումից, ապա երկրորդը՝ համապատասխանում է նրան: Բանն այն է, որ «Եվա՝ Պողոս» համադրությունը տարբերվում է ս. Իրինեոսի օրինակարգած վերանորոգության, վերագլխության վարդապետությունից, ըստ որի Եվայի անհնազանդությամբ եղած հանցանքը սրբագրվում է Մարիամ Աստվածածնի հնազանդությամբ: Մինչդեռ Սիմեոն վարդապետը Եվայի սխալի սրբագրումը խորհրդաբանորեն կապում է Պողոս առաքյալի անձի եւ գործի հետ: Այսպես, օգտվելով հինկտակարանյան պարականոններից՝ հեղինակը գրում, որ Եվան թաղված է Սյուքեմում, որը գտնվում է Հակոբ նահապետի 12 որդիներից մեկին՝ Բենիամինին հատկացված տարածքում: Պողոս առաքյալը սերված էր Բենիամինի տոհմից. հանգամանք, որով նա աղերսվում է Եվային: Ծննդոց գրքում պատմվող Եվայի զանցառության եւ մեղքի պարագաները ճառում հարաբերվում են Պողոս առաքյալի գործունեության մանրամասների հետ: Գործադրելով միջնադարում լայնորեն կիրառվող թվի աստվածաբանությունը՝ հեղինակը պահքի համար կանխորոշված քառասնօրեքը (քառասունը) մայրն է նկատում մարդու հինգ զգայարանների: Եթե Եվան վարընթաց զանցառությամբ, այդ զգայարանների աղավաղումով պատճառ դարձավ մեղքի եւ գանահարվեց, ապա Պողոս առաքյալը հանձն առնելով գանահարվել «վասն նախամարն» /«Զպակասութիւն շարշարանաց Տեառն լնում ի մարմնի», Կողոս, Ա 24/ իր վրա է վեցնում նրա մեղքը: Պողոսի այս հանձնառությունը մի տեսակ բժշկարար սպեղանի է դառնում Եվայի համար: Դեռ ավելին, Պողոս առաքյալը ջախջախում է Եվային գայթակղած եւ մեղքի պատճառ դարձած օձին, որի խորհրդապատկերը Հռոմն է ու նրա արյունարբու տերը՝ ներոնը: Ինչ վերաբերում է երկրորդ՝ «Պետրոս՝ Ադամ» խորհրդաբանությանը, ապա այն հարաբերվում է ժամանակի վարդապետական մտքի հետ: Այսպես՝ «ՅԱնանի վարդապետի ասացեալ ի խաչելութիւն Պետրոսի» ճառում պարզի-

Բ, կազմեցին Օ. Եգանյան, Ա. Զեյրունյան, Փ. Անրաբյան, խմբագրությամբ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Եր., 1970, էջ 267:

պարզո կարգում ենք. «Իսկ երանելին Պետրոս երկրորդ Ադամ եղեալ յադին դրախտին եկեղեցւոյ, հիմն հաստատութեան կրկին աճման առեալ զոտս ստանձնեալ ի տան լուացման սուրբ ուղղէր առ վերին աշխարհն ընթանալ...»⁸: Այսպիսով, ըստ այս բացատրութեան, երկրորդ Ադամ է ոչ միայն Քրիստոս, այլև Պետրոսն՝ իրեն վերապահված եկեղեցւոյն առաքելութեամբ:

Միմենոն վարդապետի այս երկը առկա է նաև Վենետիկյան ձեռագրերում, քանզի նոր հայկազյան բառգրքի հեղինակները օգտագործել են նրա բառապաշարը⁹: Այդուհանդերձ, մի քանի բառեր վրիպել են նրանց ուշադրութեանից. այդպիսիք են՝ հոգաբերել, նսեմագոյն, ահավաստակ, իրասակավատես, հրամանադրեալ, մեծատուն, քուզարա, սպասակալութիւն:

Ճառ – Ներբողյանը հրատարակվում է միակ ընդօրինակութեամբ մեզ մատչելի ՄՄ թիվ 6196 ձեռագրի հիման վրա: Այն ճառընտիր է. ժամանակ՝ 1227 թ.: Վայր՝ Խլաթ, Խարձի անապատ: Գրիչ՝ Ներսես: Ստացող՝ Վարդան վրդ.: Թերթ՝ 612: Նյութ՝ թուղթ: Մեծութեան՝ 50x33: Գրութեան՝ երկայուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 38 – 39: Բնագիրը՝ թ. 475ա - 482ա¹⁰:

8 Տե՛ս Հ. Քյոսեյան, Աստվածաբանական բնագրեր, Ուսումնասիրություններ, Ա, Անանիա Սանահնեցի, Ս. էջմիածին, 2000, էջ 179:

9 Տե՛ս ՆԲՀ. Ա, էջ 1130 (Կտառտեալ), 841 (Ժրատւր), Բ, էջ 4 (հալամ), 230 (մարտակոուել), 419 (ներհաս), 860 (տաաղեմ), ընտանեկոտոր (Ա, 783):

10 Ձեռագրի նկարագրությունն ըստ Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Հտ. Բ, կազմեցին Օ. Եգանյան, Ա. Ջեյրունյան, Փ. Անթարյան, խմբագրությամբ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Եր., 1970, էջ 267:

ՄԻՄԷՈՆԻ ՈԳԷՇԱՀ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍԱՅԵԱԼ Ի ՊԵՏՐՈՍ ԵՒ Ի ՊԱՒՂՈՍ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԱԼՍԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Պատմութիւն Պաւղոսի առաքելոյ, որ եւ վերժանողս եւ տաւնասէրս յաւուրս տաւնիս երեւեցաւ, որ եւ զկարգս կրաւնից վերժանէի, ոչ համարեցաւ պատշաճ զանց առնել զյիշատակի տաւնիս, եւ զնորին աղաւթսն յազնակաւնութիւն առի եւ զմիաբան տաւնողացս, զի անսայթաք անցից ընդ արհեստ ճառիս:

Արդ, սկիզբն երանելոյն յազգատոհմիցն արասցուք նման Քրիստոսի ազգահամարիցն ցեղից, որ ըստ մարմնոյ, զի մի վարկալարազի թուեսցի յականջս լսողաց: Արդ, յանուանէ ի բնէ իսկոյն ի ցեղէ որդւոցն Յակովբայ յերկոտասանիցն, որ եւ Բենիամին, որ եւ մետասան կարգէն: Սակս որոյ անդրանիկն Ռուբեն, որ տուեալ էր նմա անդրանկութիւն, քահանայութիւն, թագաւորութիւն, եւ առաւ ի նմանէ վասն շարեացն, որ պղծեաց զանկողինս հար իւրոյ: Վասն որոյ առաւ ի նմանէ այնքան պարգեւան եւ տուաւ կրտսերոյն Բենիամենի, որ է հաւն Պաւղոսի, եւ ժառանգեաց զպատին, որպէս Աբրահամ. զի հասեալ էր բաժին սահմանքն Բեթղաեմի հինգ մասն աւելի քան զեղբայրսն: Որ ապա յաջորդն բերէ զգաղափարն. զիա՞րդ, որ հինգ ասի. վասն զի խորագոյն պատմութիւն ունի բանս, զի այսմ յառաջագիր եղեալ հաւատարմացի բան Տեառն վասն երանելոյն, որ ասաց. Բայ յառաջ քան զաշխարհարարութիւն ընտրեցի անաւթ պատուական եւ հազարապետ իմոյ գանձուց^{1*}, ասէ Տէր ամենակալ վասն Պաւղոսի: Եւ մեր յոյժ հմտագոյն եղեալ այսմ կարգի բայցայայտեցաք ի բաժնի Բեթղաեմի կարգիլ վասն Քրիստոսի առդրէ, որ եւ աշակերտելոց երեւի, որ եւ պարծի եւ ասէ. «նմանողք ինձ եղբրուք, որպէս եւ ես՝ Քրիստոսի»^{2*}: Եւ հինգմասնեա բաժին վասն հինգ զգալեաց նախամարն, որով յանցեաւ: Եւ Պաւղոս բժշկապէտ ի Տեառնէ հրամանաւորեցաւ: Եւ զիա՞րդ վասն Եւայի ասի եւ ոչ Ադամայ: Խորագոյն է բանս. վասն զի Եւայ ասի յայրին ի Սիւքեմ գրեալ ի շիրմի, եւ այրն բաժին Բենիամենի, զոր յաջորդն ի նոյնս յարեալ ցուցանէ, զոր զայ բերէ կարգն. եւ այն, որ առեալ ի տիոց հասակին զվարս ծրականս եւ զսպասակալութիւն արհեստից, եւ զվրէժինդրութիւն արինացն, եւ զյաւժարական

1* Հմմտ. Եփես. Ա 4:

2* Ա Կորնթ. ժԱ 1:

միտսն վասն սրբոյն Ստեփանոսի, որ աճապարեալ ամփոփէր զհանդերձս քարկոծչացն, վասն զի յոյժ շատագով էր հայրենեացն եւ հմտագոյն անարատ լիեալ, նա աւանիկ եւ զվարդապետն գովէ: Արդ, յորժամ լրումն հեթանոսաց եմուտ, եւ Տէր զտնտեսական ամանակն աւարտեալ առանց մեղաց եւ յարուցեալ երեքարեայ ծագեաց ամենայն ազգաց զանուշահոտ յարութիւն, եւ ձեռնադրեալ զլիսաւոր երիցունս զաշակերտեալսն, եւ սիռեաց ընդ ոլորտս ազանց, եւ ետ իշխանութիւն աստուածագործել եւ առնել ժառանգ արքայութեանն:

Աստանաւր հասեալ համբաւ աշակերտացն առ Սաւուղ ներհակ թարգմանեալ: Ապա այնուհետեւ զի՞նչ առնէ. ի դերեւ ելեալ արձակի խրոխտական ի Գամասկոս հալածել զաշակերտեալսն^{3*}: Ահա եւ տեսեալ Տէր, զոր յառաջն ճանաչէր քան զգոյս զպարապական վարսն առ կենցաղականս, որ անփոյթ առնէր վասն աւրինաց հարցն: Նա աւանիկ եւ ամուսնացեալ էր: Բայց չէր փոյթ, այլ զամենայնն ի բաց թողեալ ի հալածանս աշակերտացն պատրաստէր: Մինչդեռ այս հոգաբերեր՝ Պաւլոսի, աստուատ ի վերուստ յանկարծակի հասանէր նմա ամփոփիւն արկեալ ի վերուստ ի ճանապարհի եւ ձայն զարմացման, յորոյ ահէ անկեալ դնէր ի գետնի, եւ բարբառ, որ ասէր. «Սաւուղ ընդէ՞ր հալածես զիս»⁴: Եւ առեալ զվարսիցն, տարեալ ցուցանէ նմա զանճառսն: Եւ ապա այնուհետեւ տուաւ նմա ոգի մարգարէութեան: Եւ իրրեւ առաջի աչաց տեսանէր զփառս գալստեանն, զոր պատրաստելոցն էր ազգաց: Եւ զանեալ եւ խրատեալ ի Տեառնէ, եւ զարթուցեալ ի հրէական կարգացն յարաբարդի առ հեթանոսս եւ ի դերեւ ելանէ հրէական ազգացն: Որ եւ զմարտակոռուելն ընդ անոպա հրէիցն սկզբմունք գրոցդ ցուցանէ ի հոլովմունք տառիցդ: Եւ ամբոխ արարեալ ի վերայ երանելոյն կարգէ ի վերայ նորասասան հալածանաց զանազան կրանիւք, որ եւ ինքն ի կարգ անկեալ ասէ զանցս շարչարանաց ի ծովու եւ ի ցամաքի, յ[ը]նտանեաց եւ յաւտարաց: Նա աւանիկ եւ աւձն Եւայի տեսեալ զվրէժխնդիրն հինգ զգալեաց կախի զձեռանէ նորա, եւ ապա ամբոխ արարեալ ազգատոհմն տան զան անձին նորա հնգիցս քառասնից մի պակաս լինել: Եւ այս ոչ առանց խորհրդոց, որ կարգեալ էր աւրէնս հրէական ազգացն յԱստուծոյ, զոր ի սակաւուց պարզա-

3* Տե՛ս Գործք Թ 1-27, ԻԲ 1-16:

* Զիք նԲՀ:

4* Գործք Թ 4, ԻԶ 14:

բանեցուք ի պէտս լսողաց:

Աւրէնս եղաւ ի դրախտին նախահարն քառասնարեայ պատուիրանապահեալ՝ առնուլ ելանել դասիլ ի կարգս անկելոց դասուն: Եւ ապա առաջագիր եղեալ աւձն կամակոր ոչ տայ յանգ ելանել, եւ գան հասոյց Տեառն վասն քառասնից, ապա դարձուցանէ յայլ եւ յայլ արուեստս, եւ դարձեալ բժշկէ զկտաւոտեալն մեղաւք: Նա աւանիկ տեսանեմք զխորհուրդ փրկութեան քառասնիւ աւարտեալ ի հին եւ ի նոր կարգիւ. եւ այս ոչ առանց արհեստից, որ Պաւղոս գան առնու վասն նախամարն, զոր յառաջագիր արարաք: Քառասուն մայր հինգ զգալեաց, որով գանի անձն երանելոյն: Այլ այս հանդէս ակնարկեալ առաքեալ ասէ. «Զպակասութիւն շարշարանաց Տեառն ընում ի մարմնի^{5*}», զի տա զբժշկութեան սպեղանիսն Եւայի: Պաւղոս վասն սահմանին Բենիամենի, եւ Ինքն՝ Տէրն՝ զԱդամայ՝ զթածարար եղեալ երկրորդ Ադամ: Արդ, յորժամ կամիցիս գիտել միայնգամանս քառասնիցն այսպէս արասցես. զՔառասունն գնա եւթն եւթն, մնա հինգն, որ է մայր հինգ զգալեաց, որ մեղաւ նախամայրն եւ տուաւ արէնս հրէից: Երեսուն եւ ինն միով պակաս գանեալ: Այս խորագոյն է: Յորժամ մեղաւ նախամայրն, թէպէտ եւ հանաւ ի փառացն, այլ ոչ ի սպառ բարկացաւ Տէր, այլ ետ ժամանակ կենաց: Հինգ քառասնից թիւն հինգ մասն գլխաւորի. զայն ոչ գանէ Տէր, այլ ի վերնատանն յաւուր հինգշաբաթոջ ջրով եւ բաժակաւ առողջացուցանէ, զոր աւձն վիրաւորեաց: Եւ անձինն Պաւղոսի գանելն եւ հինգ թիւն ամբողջ պահիլն, այս է անձն Եւայի գանի: Ուր տուն ասացաւ զերկուցն ի յերկնից ներհակ է: Այլ զամենայն զերկուցն ի յերկնից ներհակ է: Այլ զամենայն ժամանակն առաքելական վարդապետութեամբ որսաց ի պատուիրանն Տեառն Յիսուսի նա աւանիկ եւ քանոն կարգաց եւ կրանից գտանէր վասն առաւել սիրոյն Տեառն, որ ցուցաւ նմա յանճառ խորանսն, եւ տայ քաջալեր պնդակազմ լինել առաքելական գնդին, ասէ. «Հարսանիսն պատրաստ է»^{6*} եւ առագաստ՝ Փեսային: Եւ զմեզ հրաւիրակս կարգեաց Տէր, որ մի՛ արեան Քրիստոսի պարտական գտանիցիմք: Արկէք զգործիս ձեր խորս ծովացեալ աշխարհի մեղաց, զի գտանիցիմք կերակուր անմահ Փեսային: Ահաւասիկ գայ եւ գալոց է ժամանակ ճաշոյ, պատրաստքն մտանեն բազմիլ եւ հեղգացեալքն առաքին ի տանջանսն յաւիտենականս: Եւ էր, զոր Պաւղոս գրով եւ յայտնի կացուցանէր

5* Կողոս. Ա 24:

6* Հմմտ. Մտք. ԻԲ 8:

զպատուիրանն, եւ գոչէ համարձակաբար. «Անպարտ եմ ահայ արենէ ամենեցուն»:

Եւ ապա գայր հասանէր ժամանակ մարտիրոսութեան: Եւ նա դեմ եղեալ երթայ առ զլուիս վիշապին, ի Հոռոմ քաղաք, որ յառաջագիր եղեալ էտես նա, զի ի նմա որչացեալ էր աւձն Եւայի: Եւ զմէջս հաւատոյն պնդեալ յանկարծակի հասան ի փանաքի այրն ի վերայ ճոխականի, եւ յանձն էած կարծեցեալն զներոնէ ասեմ:

Եւ որպէս զարեգակն եւ կամ որպէս հողմ հարաւոյ անդ հասեալ փլուցանէր զսառնակոյտ հրապարակսն եւ զթագաւորն յապուշ կացուցանէր, եւ տայր պատասխանի ակն յանդիման եղեալ աներկեւան սրտիւ: Արդ, յայնմ քաղաքի զվիշապն ո՞ կարասցէ համար առնուլ, որ եւ յարկ եւս ի վարձու ունէին, եւ ահ սպառնալեացն եւ խուժան հանապազ կուտէր: Եւ նա նմա Քրիստոսի ջախսեալ զգլուիս վիշապին, որ էր ներոն: Ահաւասիկ եւ քարոզս Պաւղոսի եւ զպերճացեալ թագաւորն յանձն իւր եւ ի փառս զաւրացն, որ ի վերայ ոսկիակուռ աթոռոյն նստեալ եւ ամբոխն աստուած ձայնեալ նմա աւէին: Իսկ նա զայնպիսի փառագարդեալ արքայն ընտանեկտոր կացուցանէր: Նա աւանիկ եւ կամարարն սատանայի Միմոն մոգ եւ կախարդն անդրի կանգներ եւ փառս տայր հռչակեալ ազգաց մատուցանել եւ Հոգի Սուրբ կոչել: Եւ երանելի անձն խաչին Քրիստոսի դիմադրեալ սպան զգոռոզն, եւ ծագեաց անմտանելի արեգակնն ի խաւարային ոգիսն մինչեւ ցայսար ժամանակի: Եւ ապա ոչ հանդուրժեալ զազանարարու եւ իժացեալ զայլն ապականեալ կոչէ զնա ի հրապարակ եւ ասէ. Այ սերմանաքաղ, ուստի՞ եկիր յարեցար ի հռչակաւոր եւ յականաւոր քաղաքս մեր, եւ ամբոխեալ արկանես սէր խաչելոյն առնն, եւ քակեալ հոգաս զամուսնութիւն եւ պահիլ կոյս, մինչեւ ի տան իմ իշխեցեր քակումն ազգականաց իմոց առնել: Եւ ապա զի՞նչ ասէ երանելին սրտապինդ ձայնիւ. Ես աշակերտ եմ, արհնելոյն Յիսուսի, զի նա է Աստուած եւ Հայրն ամենակալ եւ Հոգին Սուրբ, որ եկն փրկել զմեղաւորս, որ եւ զլուխն ես էի: Եւ ազատեաց եւ հրամայեաց քարոզել ամենայն ազգաց, զի թողեալ զգիւացն պաշտանս, լիցին փառարանիչս ամենասուրբ Երրորդութեանն: Եւ դու, որ պերճացեալ կաս ի գահոյս թագաւորութեան հրամանաւ Տեառն իմոյ, դարձիր յամբարշտական⁷ մտացդ եւ ընդունի զքեզ, զի անոխակալ է եւ ոչ կամի զմահ ամբարշտաց, որք որպէս

7* յամպարշտական:

զքեզդ են:

Եւ ապա յայնժամ որպէս զվայրենի գազան արիւնարբու մրմռեալ յարձակէր ի վերայ, եւ ասէ. Սպանանելոյ բան կալցի ի վերայ քո եւ գայցէ կենդանի Աստուածն փրկեսցէ զքեզ: Եւ նա լի Հոգւով Սրբով ասէ. Յորժամ սպանանիցես զիս, առաջի քո երեւիմ: Եւ ահա վճիռ սրոյ հատաւ ի վերայ երանելոյն, որ ջանա շիջուցանել զարեգակն աննուաղելի^{8*}: Այլ նա եւս առաւել պայծառացաւ եւթնպատիկ քան զարեւ: Եւ ահա հատաւ գլուխ երանելոյն սրով ի ներոնէ: Եւ հաւատացելոցն բազում լալիւն լինէր, զի զրկեցան ի քաջ հովուէն: Եւ ահա հրաշափառ սքանչելիս ցուցաւ. զի երեւեալ Պաւղոսի կենդանի մարմնով առաջի ներովնի, եւ ասէ. Աւասիկ կամ կենդանի ծառա Յիսուս Քրիստոսի: Եւ նա զարհուրեալ լինէր ի սքանչման: Եւ ասէ առաքեալն. Դու, որ ոչ հաւատացեր քարոզութեան իմում Տեառն, սատակեսչիր շարաշար տանջանաւք, որ եւ կատարեցաւ իսկ, եւ առ զվարձս վաստակոցն, վասն զի ոչ գնաց ի վաստակս իմաստութեան, նա եւ ոչ ըստ մարդկան տանջեցաւ:

Այլ մեք դարձցուք ի յուզմունս եզանց ամոլիցն, որ էր Պետրոս առաքեալն, եւ ածցուք առ միմեանս, եւ ապա ի մի հաւաքումն արտաճառեսցուք զբանս գովասանականս, զի արարադրեալ զերկիր արգաւանդահող եւ յուռթի եւ ակաւս ձգեսցեն ի դաշտի, այսինքն՝ ի Հռոմ քաղաքի, եւ սերմանեսցեն զցորեան արդիւնաշատ ի ճաշ արքայորդւոյն: Եւ աստանաւր նախախնամութիւնն Քրիստոսի ցուցանի առ երկուս լուսաւորս, որ է Պետրոս եւ Պաւղոս: Եւ վասն Պաւղոսի սակաւուք ասացաւ, զորոյ զկատարումն յաջորդն գլխաւորէ, եւ գայ ի ճահ լրման:

Արդ, վասն Պետրոսի եւ յերկոտասանորդիսն Յակոբայ տայ զշառաւեղն, զի նա ի ցեղէն Զարթոնի գտանի, որ ըստ նաւարկութեան, եւ սմա հասաւ ի վիճակ պաշտաման, զի նախ առաջին Զարթոն կազմեաց, եւ կերակրէր զհայր իւր յորսոյ ձկանցն եւ էհաս նմա վիճակ երկիր ծովահայեաց ընդարձակագոյն: Եւ տեսեալ Արարչին զհնազանդական բարսն վասն հաւրն, արձակէ վճիռ յազգէ նորա զՊետրոս, զի ըստ սովորական նախնեացն կրթական եղեալ ծառայեսցէ Հաւրն երկնաւորի, որ Պաւղոսի ցուցաւ: Սակս այնորիկ յարէ ի մի փառարան համայն գտանին սոքին առաքեալքս՝ Աբրահամու եւ Մելքիսեղեկի, եւ տան տասանորդս միմեանց: Աբրահամ զՍողոմա եւ զԳոմորա զգերութիւնն ցուցանէր եւ զերիս թագաւորսն ի ջրհորսն ընկենու: Եւ երկուքն

8* անուաղելի:

զատանին ոչ միաբանեալ: Աւասիկ երկու եզն ամուլից զսուրբ առաքեալսն ասեմ նախադիր, միապէս խոհակերեալ եւ ապա հանդիպեալ տան տասանորդս ի Հռոմ քաղաքի՝ ոչ միմեանց այլ՝ Հարն երկնաւորի՝ զարիւնսն ասեմ, վասն զի վկայեցին ի վերայ Որդւոյ նորա Յիսուսի, եւ մեռան:

Եւ դարձեալ, որպէս հաւն Պետրոսի ի վերայ յանդնդոց գնայր նաւակ առնել բերէր զպտուղս ծովայինս: Նոյն գունի եւ քաջահաւատն Պետրոս տեսեալ զՏէր եւ հրաման առեալ գնալ ի վերայ խորոցն, եւ պտուղ երեր նա զհաւատս, թէպէտ եւ խանդացաւ շարն ընդ նմա: Որպէս անդ ելեալ Պաւղոս ի նաւակոծ ծփանաց ալեաց եւ ապա իժ եղեալ կախեալ զձեռանէ նորա, զի ետես անդ զյեղափոխելն Եւայի^{9*}: Աստանաւր եւ Պետրոս ի վերայ ալեացն թերահաւատեաց, եւ տայր զչորս սատերս ընկեցիկ առնել ի ծովն: Եւ ապա տեսեալ Արարչին զհանդէս շարին, որ ոչ դադարէր դեռես վասն առաջին մարդոյն, հնարագետէ յայնժամ եւ տա կլանել գնա ձկան, եւ պահեալ անվթար մինչեւ Տէրն յարուցեալ ի մեռելոց գայ ի ծովակն ճաշեալ ընդ նոսա: Եւ ասէ ցՊետրոս. «Աւանիկ կրակետդ եւ ձուկն եւ հաց բերէք»^{10*}: Այսր կերակուր զդարձ ազգաց անուանէ, եւ կրակետդ՝ զհուրն բաժանարար, եւ ձուկն՝ զանմեղութին աւազանին: Եւ այլուր ասացաւ. «Գնացես եւ տեսցես ձուկն մի, եւ բացցես զբերան նորա եւ գտանես սատերս եւ տացես ընդ իմ եւ ընդ քո»^{11*} յաւազակն, զոր ընկեցիկն եղեւ ի ժամ թերահաւատութեանն: Զորք սայտերքն՝ չորք բնութիւն մարդոյն, եւ ծովն շատացեալ՝ յանցանքն, որ ի դրախտին, եւ ձուկն՝ անմեղ մարմին Գառինն Աստուծոյ, որ ամբողջ պահեալ զերկրորդ Ադամ եւ աւազակն՝ սատանայ: Որոյ ինքեանց կամաւորութեամբ Տէրն եւ աշակերտ նորին ետուն ի հաշ զանձինս, զի առ ժամանակ մի յագեցցի աւազակն եւ դոյլ արասցէ, եւ ապա տեսեալ զանշարժ վէմն եւ զխորհուրդ նոր ի նմա: Յորս անկեալ ժամանապահ լինէր ի հաշն հասանելով տայր շարժել զարձանական աշակերտն յուրաստ լինել ի Քրիստոսէ, որ եւ պարծէր մեռանել վասն Քրիստոսի^{12*}, ուստի ի փանաքի կնոջէն այսպէս պարտէր: Դարձեալ աւձն Եւայի հետամտեալ որսաց շարին որպէս զԱդամ, եւ որպէս անդ զԱդամ Տէրն փրկիր, նոյնպէս եւ աստ Պետրոսի տեսանելով ի դեմս աշակերտացն լուծանէ զսառուցեալ հոգին հարաւային հողմով եւ կազմէ զարտա-

9* Տե՛ս Գործք ԻԸ 3-4:

10* Յովհ. ԻԱ 9-10:

11* Մտք. ԺԷ 26:

12* Հմմտ. Հռովմ. ԺԵ 17:

սուան աւագան: Դարձեալ երկրորդ անգամ եւ գլխաւորի առ երիս հարցուկս ասելով. «Սիրե՞ս զիս»:

Բայց արդ, եղբարք իմ սիրելիք, զարհուրեալ երկերուք յայսմ վայրի, որ արձանական վէճն գլորեցաւ, մի՛ ոք յինքն ապաստան լինիցի, այլ՝ յԱստուած: Ո՛վ ոք քան զՊետրոս քաջահաւատ, եւ այնպիսի անցք անցին ի ժամ շարշարանացն, որ եւ հաշիւն լուծաւ, զոր եւ յաշորդն գայ բերէ յիրում կարգին, եւ անդուստ ի վերուստ եւ յետ աստուածասքանչ յարութեանն տա պատան փրկութեան ամենայն յանցաւորաց. զթոյնս իժին յեղափոխել ասէ. «Ասացէք աշակերտացն», եւ բաժանէ եւ տեղի տա, եւ ապա յանուանէ կոչէ եւ ցՊետրոս ասելով: Այս զնախախնամութեան պարգեւն առատապէս ցուցանէ ոչ միայն Պետրոսի, այլ եւ՝ ամենայն յանցաւորաց եթէ ոչ Տեառն այսպիսի արհեստ ի միջի դրեալ, եւ խեղդ ընդ անձին էր արկեալ աշակերտին: Այս եւ առ Դաւիթ մարգարէն տեսաւ, յորժամ անցաւ ընդ պատուեր Տեառն. սպան եւ շնաց եւ տուաւ զաւակ, թէպէտ եւ երկրորդ եղեալ Սաղոմոն: Մարգարէն անյուսաբար զգայր հանապազ: Եւ ապա, յորժամ թագաւորեաց Սաղոմոն երկոտասանամեա, գիտաց մարգարէն, թէ թողան յանցանքն եւ ապա այնուհետեւ տուաւ յոյս ապաշխարողացն: Եւ մարգարէն յուսով մեռաւ վասն հանդերձելոցն: Եւ ապա Աստուած զի՞նչ առնու զթագաւորութիւնն Սաղոմոնի եւ ժառանգէ Քրիստոս թագաւորն միածին եւ կազմէ աւագան կուսածին, զի ամենեքին ազատ որդիք լինիցիմք: Եւ աստուածաբանեալք եւ այլ եւս զարմանք ցուցանի. երեսուն ժամանակաւք հետ ոտին Տեառն շրջեցան, եւ ի բազում վարդապետութեանն լուեալ վասն արքայութեանն, եւ ի ժամ շարշարանացն յաղաթան՝ առ Հայր ասէր վասն աշակերտացն: «Սոքա չեն յաշխարհէ»^{13*}, եւ դարձեալ. «Ան արիք, զնասցուք աստի առ հանդերձեալսն»^{14*}: Եւ ապա զի՞նչ. Յետ յարութեանն, որոց պարտ էր զմարդիկ որսալ, նոքա զսովորական նախնեացն առեալ զուռկանն զնացին ի ծովակն ըստ մարմնոյ ձուկն որսալ: Եւ ապա թոյլ տուեալ Արարչին, զի մի մոռասցին զբնական վարսն, եւ այնու ի խոնարհ զիջանիցին, եւ գիտասցեն, զի յականէ յանուանէ յազգէ Զարողոնի իցեն:

Եւ ապա տեսեալ Արարչին զյիմարական միտսն, գայ առ նոսա եւ հար-

* յաղութսն:

13* Յովհ. փ 16:

14* Մրկ. փ 42, Յովհ. փ 31:

ցանկ. Զիա՛րդ: Եւ նոքա ասեն. «Երթամք ձուկն որսալ»: Եւ ասէ. «Յայսմ հետէ զմարդիկ որսայցէք»^{15*}: Եւ տարեալ զնոսա ի Բեթանիայ արհնեաց: Եւ զԱդամայ ոգին, որ պատուիրանազանցութեամբն գնաց, եւ նա համարեցաւ ընդ անասունս: Աստանար դարձեալ արկ յառաքեալսն եւ նոքա ընկալեալ առին զկենդանականն եւ զարթեան յանասնական բարուցն՝ փոխաբերեալ վասն Ադամայ երկոտասան անդամոցն: Եւ ահայ յայնմ հետէ քաջապինդս եղեալ ի գործս առաքելականս ընթանային ընդ ոլորտս ազանց: Եւ յայնժամ մինչ Պետրոս բազմեալ էր աշակերտաւք երկոտասանաւք յԵրուսաղէմ մարմնական հաց ճաշեալ, եւ կային անդ երախայք՝ դեռ եւս ոչ ընկալեալ զաւազանին շնորհս, եւ ցանկային ի սեղանս, եւ ի պատուաւորաց անտի էին: Եւ Պետրոս յայսմ վայրի բանս ահագինս առնէր պատասխանի, եւ ասէր. Որ զքրիստոսական կնիքն չէ ընկալեալ առանց դիւաց ոչ է: Աւանիկ եւ որ զչար գործէ ի մեծամեծաց կամ ի փոքունց, որ արդեամբք եւ որ բանիւ կամ մտածութեամբ ոչ է առանց դիւաց, եւ անմարթ է գալ ի սեղանս մեր, զի արբաք զհուրն այրիչ ախտից: Աւա՛ղ բանիցս, ապա թէ որ զչարիս գործէ ի սեղանս առաքելոցն չմատչէր: Ապա յո՛ր խաւար երթալոց է, որ զմեզս գործէ եւ յաստուածային սեղանն յանդգնի մերձենալ, ուստի հրշտակք սարսեալ դողան:

Եւ արդ, Պետրոսի զամենայն առաքելական վարդապետութիւնն վճարեալ, դէմ եղեալ երթայր առ վիշապն շարայուչ. զՄիմոնէ կախարդէ ասեմ եւ զներոնէ: Զի շարաբեր թիւնիւք ելից նա զգահագլուխ քաղաքն Հոռոմայ, զի անդ պարգեաց նա զկամակորութիւնն, զոր եւ ոմն ասաց ի վիշապի մեկնութեանն, թէ ի հալամի վիշապին ձկնորսքն տաւաղին, զի սպանցեն զնա, որ եւ եկն կատարեցաւ առ երանելիքս Պետրոս եւ Պաւղոս: Զի այնչափ դեգերանս կալեալ առ վիշապին մինչեւ հատին զուլն նորա, որ է ներոն եւ Միմոն: Զի Միմոն առաջարկ գտանի մանիքեցոցն մանկանցն անիծիցն, զի կանայս ընդ իւր յարաշրջիկ առնելով մարգարէս կարդայր զնոսա եւ զինքն՝ Հոգի Սուրբ, եւ անդրի կանգնէր¹⁶ ի մէջ քաղաքին:

Եւ ապա աղաւթել երանելի առաքելոցն եւ ի հրապարակի առաջի թագաւորին եւ բազմամբոխ ազգացն անարիւնացն վերանայր յաւդս անարէնն

15* Ղուկ. Ե 10:

* ցանգային:

16 կանգէր:

այն Սիմոն առաքյալին դիւարին: Եւ տեսեալ մոլորելոցն իբր Աստուծոյ պաշտան մատուցանէին: Եւ ահա ի գարմացման կացեալ Պետրոսի առաքելոյ, եւ սկսաւ աղաւթել առ Տէր, եւ ծունր եղեալ առաջի հրապարակին վաղվաղակի յանկարծարէն գայ ի բարձանց կախարդն այն անկեալ ի մէջ հրապարակին ցրուեցան անիծեալ ոսկերք նորա, եւ կալեալ զկանայսն սպանին: Եւ տեսեալ ժողովրդոցն զսքանչելիսն հաւատացին ի Տէր եւ ընկալան զբանն կենաց: Եւ ոմանց հարեալ յաղանդ կախարդանացն կային ի նոյն յամառութեանն, եւ բազում շարշարանս ածին ի վերայ սրբոցն:

Եւ ահա հատաւ վճիռ մահու ի վերայ առաքելոցն, եւ հաւատացեալքն զաղաղակ բարձեալ ասէին. Ել գնայ աստի, չէ դեռ ժամանակ մարտիրոսութեան: Եւ նա ունկնդիր եղեալ ասացելոցն: Եւ հանին զնա ընդ դուռն քաղաքին: Ահա երեւեցաւ նմա Տէր, եւ Պետրոս ծանուցեալ ասէր. Տէր, յո՞ երթաս: Եւ Տէր ասէ. Երթամ ի Հռոմ խաչիլ: Այո, դարձեալ խաչիմ: Եւ դարձաւ Պետրոս ի տեղի իւր:

Ո՞վ խորք մեծութեանն Աստուծոյ, ետես Աստուած զբանսարկուին հետաքրքիր շրջել հետիոտին սրբոյն, զի գիտականայր յիսկզբանցն ի բնմէ յառաջնմէ, թէ յեղափոխեցաւ ի Պետրոս փրկագործելն առաջին մարդոյն, եւ ապա ած կացոյց ի վերայ զանազան փորձութիւնս: Եւ բանիցս ուշ եղեալ իմաստիք, զոր յաշորդն ասէ ի պատմութեան նորին, յորժամ վասն խաչին բանս լուսկան ասէ. Հարցաքննելի է եւ նսեմտագոյն¹⁷ բանս վասն խաչին Պետրոսի. զիարդ հրամայէ զլիսիվայր խաչիլ ինքնակամ ոչ դուզնաքեա եւ կամ վայրապար, այլ՝ աստուածահրաշ: Եւ այսպէս պարզաբանի, եւ է բազմամասնեա, բայց մեք նրբագոյնս արասցուք, զի առ հասարակ իմացին եւ զփրկագործն Աստուած հանապազ արհնեսցեն, որ յաղագս մարդկան այնքան վաստակաւորէ:

Խաչն ծառոյն գաղափար է եւ առաքեալն՝ Ադամայ: Զի թէպէտ եւ Քրիստոս շարշարեցաւ, այլ ոչ գաղարէ սպեղանիս դնել վիրացն Ադամայ ի ձեռն սրբոց, աւասիկ դեռեւս տա մատնիլ ի մահ տանջանաց, զի «չեն արժանի շարշարանք ժամանակիս հանդերձելոց փառացն, որ պատրաստեալ է սիրողացն զնա»^{18*}: Յաղագս այնորիկ շղագարէ վասն սրբոց գալ պատիժք մարմնոյ, զի բով փորձական է առ ի զարդ պսակին Քրիստոսի առ դրեալ: Եւ զլիսիվայրն

17* Զիք նԲՀ:

18* Հռովմ. Ը 18:

զայս պատկեր ցուցանէ՝ փոխանակ զի Ադամ լուաւ կնոջն եւ աւծին եւ արար զաջն որպէս զահեակ եւ զգլուխն՝ որպէս զոտս կոխան ամենեցուն: Յեղափոխեալ առաքելոյն յիշելով զնախահար եւ զիւր ուրացութիւնն՝ հրամայէ զլիսիվայր խաշել, զի դարձեալ լիցի առաջին տեսակն, որ ի դրախտին եւ ինքն վարձատրեալ առցէ վարձս ի Տեառնէ: Եւ որ վասն հաշին ասէր. Ո՞վ հաշ լուծեամբ պատուեսցիս. այս խորագոյն բացայայտի, զի զիր հաշին առնու զգաղափարն վասն վեցակի մասինն, որ ծածկարար վասն թշնամուոյն մահանացն է, զոր յառաջարանս ճառիդ եմք ասացեալ, զի ներկեաւ արեամբն Տեառն եւ տուաւ սատակիչ շարին, եւ առաքեալ՝ վասն ազգացն, որ շուրջ կային հաւատացեալք Բանի վարդապետութեան նորա եւ լային, եւ այն, զի մի լուեալ զԲանն, որ ծածկարար զայր ի հաշին խորհուրդն, եւ ասացեալ, թէ առաքեալ վասն այնր պատճառի շարշարի: Եւ ապա անյուսացեալ դառնայցեն յերկրպագութիւն դիւաց եւ առաքեալն զրավաստակ ելանիցէ, այլ ընդ Աստուծոյ, որ զիտէ զամենայն: Եւ զի՞նչ է բանն, որ տանի ածէ կարգս, իմանալ արժան է: Ետես նա զմասն վեցակի, որ զնացոյց նախահայրն պատրանաւք եւ թուեցաւ ընդ շնչականսն մինչեւ յայն, որ Բանն Աստուած պատարագեցաւ եւ դարձաւ ոգին Ադամայ եւ գնաց ի տեղի իւր: Նոյնպէս եւ առաքեալ, յորժամ վասն կնոջն փանաքի առ հաշին զվարդապետն յուրաստ լինէր, գնաց հոգին կենդանական եւ թուեցաւ ընդ անասունս յաղագս այնր պատճառի հաւ խաւսեցաւ: Դարձեալ Տէր տեսանէր ի Պետրոս, եւ նա յիշել զբանն ելեալ ելաց դառնապէս: Զո՞ր բան. Զայն, որ հանապազ զՏէրն վասն Ադամայ վարդապետեալ, թէ՛ «Մարդն ի փառս էր եւ անկեալ ընդ շնչականսն ճարակի»^{19*}: Լուեալ Պետրոս զձայն հաւուն յիշեաց զԱդամ եւ լայր դառնապէս: Եւ աստ ի հաշիս գիտականայր, եթէ Տէրն զփոխարէնս իմ աստ ի խաշիս կամի վճար առնել: Եւ ահա ետես նա, զի շարշարանաւք փայտին գնաց Ադամ ի դրախտն, ծածկարար խաւսի վասն հաշի: Եւ հաւատացեալքն վասն քարոզութեան հալածեալ եւ խաշեալ ասէին, եւ այնու կային հաստատուն ի հաւատսն: Եւ առաքելոյն խաւսեալ ընդ հաւատացեալսն տայ փառս Աստուծոյ եւ աւանդեալ զհոգին գնայ առ Տէր: Եւ որ տուաւ նմա կարգ պաշտաման՝ ունել իշխանութիւն դրան արքունի՝ փակելոյ եւ բանալոյ: Այս երկու պատճառ առ դրէ. առաջին զոխակալութիւն փակել, զի մարդիկ բանս առ Բարձրեալն մի ասացեն, թէ Տէր զիա՞րդ պահեաց ոխս ընդ աշակերտին, եւ առեալ

19* Սղմ. ԽԸ 13, 21:

աւրինակ զմիմեանս սատակեսցեն: Երկրորդ՝ զի յոյս հաստատեսցէ առ մեղուցեալսն, եթէ տա տեղի ապաշխարութեան ամենայն յանցաւորաց, զի ապրեսցին ի բարկութենէն, որ գալոցն է^{20*}, եւ տա պարգեւ ըստ գործս:

Այլ մեք, որ ազդմամբ Հոգւոյն Սրբոյ ածեալ կացուցաք զերկու եզն ամուլեաց, պնդեալ սամետիւք Խաչին Քրիստոսի՝ դնել ահաւս ի Հոռոմ արքայանիստ քաղաքի, զի զիտաց Աստուած համայն յիրաքանչիւր ազգաց առդրեցան նսեմտագոյն վասն երկուց դահեկանացն պահել եւ ապա վարձս տալ ըստ արժանեացն բանս զովասանականս անքակ ի միմեանց արտայայտեսցուք:

Պետրոս՝ արմատ բարի եւ ճիւղ նախնեաց եւ սպասարար Հաւր,

Պաւղոս՝ բան ծածկեալ յարգանդի եւ պտուղ Սիւքեմա անուշահոտ,

Պետրոս՝ գանձ մարգարտաշար եւ զմուռ ծովային Տեառն,

Պաւղոս՝ դասուց առաքելոց դասագլուխ եւ պատան Եւայի եւ Ադամայ վիրացն,

Պետրոս՝ երագ ցանգորդ եւ վաստակաւոր ազգի տեսակաւոր,

Պաւղոս, զաւրաց ազգի յառաջագահ, վասն զի մեղաւ իսկ,

Պետրոս՝ էականին թիւ անդասուց Եւայ գլուխ կարգիս,

Պաւղոս՝ ընթանուր եկեղեցւոյ պսակ եւ ժիր մատուակ,

Պետրոս՝ թուղթ գծագիր, բայց հակառակ Խաչն Յիսուսիւ Տէրամբ,

Պաւղոս՝ ժառանգ Բեթղեմի, բայց արեամբ սրբով գրիս,

Պետրոս՝ իսկակցին Հաւր խաչակից, որ եւ փառակից ես նմին,

Պաւղոս՝ լուծան անէծքն Եւայի քառասուն գանիւք միով պակաս,

Պետրոս՝ խաղաղական գաւազան, բայց մարտէ թշնամուցն,

Պաւղոս՝ ծովամարտիկ, յորմէ ամբարէս^{21*} կերակուր Տեառնորդուցն,

Պետրոս՝ կացուրդ մարտադրին, որ եւ վարձատրիս յիրաւի,

Պաւղոս՝ հացին երկնաւորի սեղան աւրինաց եւ ներհաս Տեառն Յիսուսի,

Պետրոս՝ ձայն առիւծու եւ կատարիչ մանկանցն, որ Սինեա,

Պաւղոս՝ ուղեւոր՝ ճանապարհ եւ արժանաւորիս անճառիցն,

Պետրոս՝ ճանաչող Տեառն եւ յուրաստ փաստաբանական եւ հաճոյ

20* Տե՛ս Մարք. Գ 7, Դով. Գ 7:

21* ամպարէս:

* դէտր:

Տեառն Յիսուսի,

Պաւղոս՝ մատաղ տիաւք ծեր հեթանոսաց եւ քանուն ճշմարտելի Տէր,
 Պետրոս՝ յարուցեալ ի գլորմանէ եւ դարձ քո կեանք է,
 Պաւղոս՝ նախադուն եւ մարտ արինաց եւ ակն սափիրա,
 Պետրոս՝ շուշան անմայր եւ պտուղ քո Խաչի պսակ Յիսուսի,
 Պաւղոս՝ վեց հարիւրիկ առաքելոց եւ ահաւաստակ^{22*} եւթն հազարաց,
 Պետրոս՝ շարշարանացն Տեառն անուն, բայց այժմ սէր է,
 Պաւղոս՝ պատուական դահեկան յերկուց արհեստեալ,
 Պետրոս՝ ջուր մեռային, բայց բաժակ բարի, զի մահ է,
 Պաւղոս՝ ռախունակ ազգաց, զի Տէր դասակարգեաց,
 Պետրոս՝ սարտեար անշարժդ, եւ սրբեաց զբան Խաչին,
 Պաւղոս՝ վարմ հեթանոսաց եւ վարդապետ նոր Մինեա,
 Պետրոս՝ տուփ հաւուն եւ ծուխ զմոեալ եղբարորդոյն,
 Պաւղոս՝ բարուն ճարտասան եւ ընթացրեալ շարին,
 Պետրոս՝ ցուցակ պսակաւորին եւ մշտիկ ցանող ծննդեան աւազանին,
 Պաւղոս՝ հիւթ մահու եւ հիւթ կենաց Քրիստոսի Յիսուսի,
 Պետրոս՝ փարթամ մտաւք եւ իրասակաւատես^{23*} յաղագս բայի,
 Պաւղոս՝ քողարորբ ուռկան եւ բազմակառ ձգեալ առագաստի,
 Պաւղոս՝ քրիստոսական աւազանն սեաւ, զի ըստ արինացն է,
 Պետրոս՝ խռովի Հռոմ, վասն զի Միմենոն մոգ սատակի Տերամբ

Յիսուսի,

Պաւղոս՝ շամոքեալ վասն քո Ներոն, զի մարմին է յաւժարական,
 Պետրոս՝ բարձող կախարդին եւ առաջարկ Քրիստոսի բանին,
 Պաւղոս՝ ծով ամբոխեալ եւ մրմոեալ առիւծ, եւ ծաղիկ անուշահոտ ի
 զարդ Քրիստոսի,
 Պետրոս՝ պարծանք քրիստոսասիրաց եւ գաւազան գուժի,
 Պաւղոս՝ գաւազան սատակման դիւթին Միմենի եւ ակն սուրբ,
 Պետրոս՝ կանուխ արեւելեան եւ խաւար Հռոմայ եւ բաժակ Տեառն,
 Պաւղոս շոկոց հաւատացելոց զլուխ եւ պարծանք լրման եկեղեցւոյ,
 Պետրոս՝ դուն լուսոյ խաւարամածն Հռոմայ եւ ակն լուսատեսակ,
 Պաւղոս՝ հազմ Արարչին եւ հազարապետ Քրիստոսի,

22* ԶԻՔ ՆԲՀ:

23* ԶԻՔ ՆԲՀ:

Պետրոս՝ ռահ արդարութեան եւ զարդ //՛՛ ք

Պաւղոս՝ երեւակ բազմալի եւ երկնաւոր բարունոյն նմանակից
աշակերտ,

Պետրոս՝ ձրիատուր շնորհին առատաձեռն բաշխիչ եւ մշտնջենաւոր
պսակիս Տերամբ,

Պաւղոս սրբոյ մարն Սիոնիի սուրբ որդի եւ յորդորիչ բոլորից փառացն
Յիսուսի,

Պետրոս՝ զաւրաւոր զէն Հոգւոյն Սրբոյ, յորով սատակին փաղանգք
դիւաց,

Պաւղոս՝ զաւրաւոր պատրոյկ ի լոյս անմահութեան յաւիտենից,

Պետրոս՝ վարձ ներոնի սրտացուցիչ հարսինն եւ վէճ անշարժ ի Տեառնէ
ասացեալ նորին,

Պաւղոս՝ երկնային անճառիցն տեսող եւ լսող, վասն որոյ եւ քաջապինդ
գերանիս տերութեամբ,

Պետրոս՝ ճշմարտի նաւապետին որսակից ի նմանէ հրամադրեալ^{24*},

Պաւղոս՝ տունկ բարեփոփոխ ի Տեառնէ արհեստաւորեալ,

Պետրոս՝ ընկղմելոյ առաջնոյն վերստին կանգնումն՝ խաչակցելով
Տեառն Յիսուսի,

Պաւղոս մարտակից քարոզութեանն Տեառն, եւ պակասութեան
չարչարելոյն լցող,

Պետրոս՝ բարունոյն քո խորհրդոյն գիտակ, որ վասն նախնոյն եւ
փոխաբերիս Տերամբ,

Պաւղոս՝ թագ վայելչութեան տեառնընկալին Սիոնի եւ լրումն
աստուածաշահ բնաւից,

Պետրոս՝ յարինեալ ըստ անուանակոչութեանդ վէճ անշարժ եւ
խարխիս հաւատոյ,

Պաւղոս՝ ցանկափակ գրախտին խրամատիչ՝ գերահրաշխք յափշտա-
կեալ,

Պետրոս՝ իսկակցին Հաւր կամակատար եւ սիրով հաւտին, զոր քեզն
հաւատաց

Պաւղոս՝ շաղկապ սիրոյ եւ անաւթ ընտիր ընտրեալ յիսկգրանցն ի
Տեառնէ,

Պետրոս՝ փականք երկնից քեզ հաւատացան, զոր հայցեմք բանալ մեզ

* 2-3 բառ պատուլած:

24* Զիք նԲՀ:

Տերամբ,

Պաւղոս՝ լուծն Քրիստոսի բարւոք ուղղեցաւ ի ձեռն ամուլիցդ արարադրեցաւ զանկոխն Տերամբ,

Պետրոս՝ ուրախակից Տեառն քո եւ պատրաստ բարեկամ Տեառն Յիսուսի Քրիստոսի,

Պաւղոս՝ քրիստոսական հաւատոցն լրութիւն եւ պատարագ անուշահոտ Տեառն Յիսուսի,

Պետրոս՝ քակտումն ստուերին եւ առարկ հաւատոյ նոր Սինա Տերամբ ասացաւ,

Պաւղոս՝ փող տարսոնացի, որով եկեղեցիք արծարծեցան բնակելով քո ի նմա,

Պետրոս՝ իւթեալ ի հրոյ զիւծեալսն ընկրկեցեր մետատունսն^{26*} Քրիստոսի եւ Տերամբ,

Պաւղոս՝ ցուցակ անտեսիցն, իւղ անուշակ, ցանկ հաւատոյ,

Պետրոս՝ բախանեմ սիրող Տեառն վկայեալ գիտողին զքեզ,

Պաւղոս՝ Տարսոնացի քաղաքաւար զամենեսեան տարաւ ընդ քեզ,

Պետրոս՝ վերնոյ քաղաքին քաղաքապետ, ըստ արժանի քում ընտրեալ ի Տեառնէ,

Պաւղոս՝ սրբոյ մանկանցն եկեղեցոյ խրատ բարի եւ յորդորիչ ի սէր Տեառն Յիսուսի,

Պետրոս՝ հազար ամանակի մուտ հազարամ դասուցն ընդունող հաճարանեղ լոյս,

Պաւղոս՝ ջուր քուզարայ^{27*}, ջահ անշէջ ի լոյս Տեառն, ջոկագիր սուրբ,

Պետրոս՝ պայծառացեալ պատրոյկ, պատարագ սուրբ Տեառն, պայման անսուտ,

Պաւղոս՝ շարշարելոյն շարշարակից եւ բեմ սուրբ ընտրեալ զահոյցից Տեառն,

Պետրոս՝ ողջակեզ անարատ, ուղեւոր պատրուճակ եւ ակն սուրբ,

Պետրոս՝ շաղաշար ընդ խաշափայտիդ եւ մարգարիտ պատուական,

Պաւղոս՝ նախագնաց առ Տէրն եւ նախկին բան սուրբ,

Պետրոս՝ յառաջ մարգարիտ եւ Խաչի պսակ եղեալ ի գլուխ մի նայ,

Պաւղոս՝ մատուցեալ պատարագ ի ձեռն ներոնի եւ հաճոյ Աստուծոյ,

Պետրոս՝ անապական Փեսային անմահի եւ բաժակ կենաց,

26* Զիբ նԲՀ:

27* Զիբ նԲՀ:

Պաւղոս դամբարափայլ տիեզերաց լոյս, որոց ի խաւարի նստէին,
 Պետրոս՝ ձայն խաչի եւ պատարագ լուսեամբ եւ սէր փառաց,
 Պաւղոս՝ հացին երկնաւորի անսպառ եւ զուարթ առատ բաշխիչ
 տիեզերաց,

Պետրոս՝ կապեցար ի խաչիդ, արձակեցաւ նախահայրն,
 Պաւղոս՝ ծագմամբ լուսոյ տեսար արքային ներհակէ եւ սէր,
 Պետրոս՝ խորհուրդ անյայտ է, բայց պատարագ յայտնի էառ Տէր,
 Պաւղոս՝ լուան հաւատացեալքն զբանն Տեառն ի քէն կործանին
 անհաւատքն,

Պետրոս՝ ի մահուան քո կապի շարն եւ կործանի ի սպառ անկանգնելի,
 Պաւղոս՝ ժամանակ լրման հասաւ եւ արենագին է,
 Պետրոս՝ թաղումն քո աթոռէ, եւ ամաչի շարն,
 Պաւղոս՝ ընթակաց հրշտակաց եւ յերկրի մաւտակաց Տեառն Յիսուսի,
 Պետրոս՝ երեւակ անստուեր եւ լոյս անսպական եւ ծաղիկ անթառամ,
 Պաւղոս՝ զարգումն ազգաց եւ գեղ ապաշաւանաց անպակաս,
 Պետրոս՝ երջանիկդ առաքելոց եւ մասն կենաց յաւիտենականին,
 Պաւղոս՝ դատաւոր կարգաց եւ դուռն մտից եւ ելից առ լոյսն կենաց,
 Պետրոս՝ գաղափար ծուլից եւ մշակ ժրական ի գործս բարեաց,
 Պաւղոս՝ բարձրեալ քարոզ եւ առ հասարակ աւետարեր վասն Յիսուսի,
 Պետրոս՝ առաջաբան աւետեաց եւ մահ մահուան վախճան Տերամբ:
 Ամուք սուրբք, արեգակունք անմուտք, ծառ կենաց եւ պտուղ շահաւետ
 անուշակք:

Ամուք սուրբք ումեկաւորք նախահայրն եւ բան ընտրողական:
 Ամուք սուրբք վարդ անթառամք, հոտ անուշ ի Տէր եւ հաճոյ Աստուծոյ:
 Բանաւոր բարունակք, բնակարանք Աստուծոյ, բանաւոր ստեղծունք՝
 բողբոջեալ Տերամբ:

Գալուստ Փեսային, գլորելոյն առաջնոյ կանգնումն, գաւազան խրատու
 ազանց ի Տէր:

Դատաւորք ազգաց, դասակք սուրբք, դահիճք շարին, դուռն մտից ի
 Տէր:

Երանեալք յազգաց երկնողք անցալք զբոլոր սեռս Տեառն եւ ընծայիչք
 Յիսուսի Քրիստոսի:

Զաւրավիզն փրկելոց, զարմ երկուց լուսաւորացն, որք ի ձեզ առակեալ
 երկիր պագին Տեառն ի ծագ գաւազանի: Իսկ դուք ամենից, բոլորից Տեառն

կոչեցէք զհանուրս ի փառաբանութիւն զաւակք սուրբք:

էականին պարտեզ էացեալք ի հաւատս էականին, էացելոյն կոչնականք ի Տէր:

Ընթացուցիչք ի սէր Տեառն ընթադրողք հրէիցն, ընտանեակք սուրբք Տեառն:

Քազք ի զարդ եկեղեցւոյ, թառամեցուցիչք շարին, թոշակք արդարութեան:

ժամանակ լրման բոլորից, ժամադիր բարեկամաց ի սէր Փեսային ժառանգք Աստուծոյ:

Ի մարտի մարտադրին ժուժկալք ի հանդիսի պսակք, ի պարտիզի զմուռ կնդրկի Տեառն Յիսուսի:

Լուր Բանին ընթանուրս, լուացեալ արեամբ հաճոյ ընծայք, լուծանզգամաց:

Խաղաղարարք խռովեցելոցս Խաչ պատարագի խրատ յորդորական ի սէր Տեառն:

Մաղիկ անուշահոտ պսակ ի Տեառն, ծաւալ գանձ ծագ մատին Տեառն եւ անապակ սրբութիւն:

Կապ հերեսիոտաց կաւշիկ վիշապին ի մահ. կենաց առիթ հաւատացելոց:

Հրովարտակ Բանին Աստուծոյ, հրաւիրակք ի հարսանիսն Տեառն, հոտ անոյշ ի Տեառնէ տիեզերաց:

Չայն կոչման պատրաստի, ձանիչք^{28*} զբոլոր սեռս ի Տէր, ձայնի Տեառն ընկալիչք:

Ղեւորեալ առ Տէր, բազմաց պողոտեա, ղեկալք հմտագոյն տարող ի Տէր, դամբար սուրբ:

Ճանապարհ անսայթաք ի Տէր, ճարտարապետ շինող զվէմս անտաշս, ճառագայթ մշտագունից սէզ:

Մատուակ բաժակոյն կենաց, մուտ անվեհեր դրանն Տեառն, մատանի անդրանկանն:

Յառաջ ընտրեալ քաջաժիր մշակք, յուսադիրք մեղուցելոց, յանկման կանգնումն վեհերոց Տերամբ:

Նաւակարգ արագագնաց ի Տէր, նաւահանգիստ կենաց, նորումն հաւա-

28* ձայնիճճ:

տոց եւ կրանից եւ կարգաց:

Շրջանակ մարգարտաշար, շաւիղ ուղղեզնացութեան, շառաւեղ բարի ընտրեալ Տերութեամբ Յիսուսի:

Ոսկան արհեստք, որոց ի խաւարի լոյս անստուեր ողորմութեան պատճառ, որով կատարին կամք Տեառն:

Չարշարակից Քրիստոսի, շարշարակցացն պսակք, շնաշխարհի մարգարիտք ի զարդ եկեղեցոյ:

Պարուցն դասագլուխք պարփակելովն ի հաւատացեալն ձեզ փականս պտղալից ծառք վախաւորք^{29*}:

Ջահ ըստանակ լուսոյ, ջուկադիր ազանց, ջուր կենաց՝ առ ի արբուցումն ծարաւոյ բանաւոր ծաղկանց:

Ռահ արքայութեանն հազար ամանակաց, ռետին կենաց հանուրց ռահադուռն լուսոյ կենաց:

Սարսափելի քարոզք Հռոմայ սարսել Տեառն ժողովուրդ կազմեալ սարսուցիչ ազանց:

Վարդ անուշակ ի տան Տեառն, վարդապետք տգիտաց եւ մոլորելոց վարմ շարին, որով ըմբռնեալ տանջի յանխնայ:

Տունկ^{30*} բարի երկնաբերձ, վերուղէշ տախտակ տապանակի լի ամենայն աստուածատուր շնորհիւ տառ գրեալ ձեռաւք մեզ յԱստուծոյ:

Բարունոյն նմանակիցք ամենայնիւ, բախճանական պարտուցն ընկալուչք ի յապայսն Տերամբ:

Յանկոյն որմոյ միջնոյ քակտումն, ցանկ^{31*} շրջապատ երկնաւոր շուշանին, ցրումն գուպարից հերձուածողաց:

Իւթ լիւթեղինացս ի բարի լիւթեղէն տնկոյն դարձումն լիւծելոցս մեզ լիւթ կենաց եւ յոյս բարի ի Տէր:

Փառաց երկնայնոյն տեսաւղ, փառաց Քրիստոսի փառակիցք եւ հաղորդք փակող եւ բացող վերին արքային Քրիստոսի:

Քաղաքին Քրիստոսի քաղաքակիցք Քեւ ապրեալքս ի սատակէն հայցեմք՝ մաղթելով ձեաւք զՔրիստոս շնորհել մեզ բանալ զդրունս երկնից գթովն Իւրով:

29* գուցե՛ վարսաւորք:

30* Տունկ (այսպես եւ այլուր):

31* ցանկ:

Քրիստոսի կենագործողին և արարչին ամենեցուն փառաբանութիւն գոհութեամբ մատուցուք, որ այնպիսի ողորմութեամբ արժանացոյց զձնեալքս աւագանին սրբութեամբ տանախմբել զյիշատակ սրբոց առաքելոցն, որք էլեալ ընդ ոլորտս երկրի աւետարանել զԲանն կենաց և դարձուցանել զկոամոլսն և զմոլորեալսն յանգիտութենէ յաստուածգիտութիւն ծանաթ Աստուծոյ և հաղորդս զամենեսեան առնել, և ի վտակաց քաղցրաբուխ շնորհաց Հոգւոյն ծաւալեալ արբուցանել զվիմացեալ միտս արձանացելոցն, և զապառաժ քարինս անձննդականս ոռոգելով յաղբերէն կենաց, հանելով զսիրտ քարեղէնս և առնել զմարմնեղէնս, ժառանգս Աստուծոյ և որդիս լուսոյ զամենեսեան կացուցանել՝ տալով և բժշկութիւնս աստից. զկազս զնացուցանել, զբորոտս սրբել, զկոյրս լուսաւորել, և զամենայն ցաւս և զհիւանդութիւնս ի մարդկանէ հալածել հաստատել զազգս ամենայն և կարգել աւագան մկրտութեան ի լուսաւորութիւն ամենայն հաւատացելոց, և առնել ժառանգակիցս արքայութեանն երկնից, և հրաման առնել ի Տեառնէ՛ զնալ ի վերայ իժի և քարբի կոխելով զաւձս և զկամակոր վիշապն, որ և զմեզ հաւատացեալս Քրիստոսի յարութեանն, նոցին բարեխաւսութեամբ ազատեսցէ ի պատժոց պատուհասից՝ ազատելով ի մեղաց արժանաւորս արասցէ դասակցութեան նոցին՝ հասանել մասին վիճակի ժառանգութեան սրբոցն ի լոյս և գոհութեամբ ընդ նոսին փառաւորել զՀայրն ամենակալ և զՈրդին միածին և զՀոգին մշտնջենաւոր յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քրիստոսի կենագործողին և արարչին ամենեցուն փառաբանութիւն գոհութեամբ մատուցուք, որ այնպիսի ողորմութեամբ արժանացոյց զձնեալքս աւագանին սրբութեամբ տանախմբել զյիշատակ սրբոց առաքելոցն, որք էլեալ ընդ ոլորտս երկրի աւետարանել զԲանն կենաց և դարձուցանել զկոամոլսն և զմոլորեալսն յանգիտութենէ յաստուածգիտութիւն ծանաթ Աստուծոյ և հաղորդս զամենեսեան առնել, և ի վտակաց քաղցրաբուխ շնորհաց Հոգւոյն ծաւալեալ արբուցանել զվիմացեալ միտս արձանացելոցն, և զապառաժ քարինս անձննդականս ոռոգելով յաղբերէն կենաց, հանելով զսիրտ քարեղէնս և առնել զմարմնեղէնս, ժառանգս Աստուծոյ և որդիս լուսոյ զամենեսեան կացուցանել՝ տալով և բժշկութիւնս աստից. զկազս զնացուցանել, զբորոտս սրբել, զկոյրս լուսաւորել, և զամենայն ցաւս և զհիւանդութիւնս ի մարդկանէ հալածել հաստատել զազգս ամենայն և կարգել աւագան մկրտութեան ի լուսաւորութիւն ամենայն հաւատացելոց, և առնել ժառանգակիցս արքայութեանն երկնից, և հրաման առնել ի Տեառնէ՛ զնալ ի վերայ իժի և քարբի կոխելով զաւձս և զկամակոր վիշապն, որ և զմեզ հաւատացեալս Քրիստոսի յարութեանն, նոցին բարեխաւսութեամբ ազատեսցէ ի պատժոց պատուհասից՝ ազատելով ի մեղաց արժանաւորս արասցէ դասակցութեան նոցին՝ հասանել մասին վիճակի ժառանգութեան սրբոցն ի լոյս և գոհութեամբ ընդ նոսին փառաւորել զՀայրն ամենակալ և զՈրդին միածին և զՀոգին մշտնջենաւոր յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՕԼԳԱ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ

ՀՈՎՀԱՆ ՈՐՈՏՆԵՅՈՒ «ՀԱՒԱՔՈՒՄՆ ՅԱՅՏՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ Ի ՓԻԼՈՆԷ ԻՄԱՍՏՆՈՅ, ՈՐ «ՅԱՂԱԳՍ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԵԱՆ»

Հովհան Որոտնեցու բազմաթիվ դեռեւս չհրատարակված¹ գործերի շարքին է պատկանում նաեւ սույն հրատարակության առարկա դարձած Փիլոն Ալեքսանդրացու «Յաղագս նախախնամության» աշխատության² համառոտված վերապատումը՝ «հավաքումը»³: Գործի վերապատմական

¹ Տե՛ս Գրիգորյան Գ. Հ., Հովհան Որոտնեցու փիլիսոփայական ուսմունքը, Երեւան, 1980, էջ 15-29: Ինչպես խոստովանում է ինքը՝ Գ. Գրիգորյանը, այս ցուցակը ամբողջական չէ եւ կարող է լրացվել այլ երկերով, եթե ստույգ որոշվի դրանց՝ Որոտնեցու կողմից հեղինակվելը (անդ, էջ 14-15): Մինչ օրս Որոտնեցու գործերից հրատարակվել են միայն Արիստոտելի «Ստորոգությունների» եւ Պորփյուրի «Ներածության» մեկնությունները (Հովհաննու Որոտնեցոյ Վերլուծութիւն Ստորոգութեանց Արիստոտելի. համահավաք տեխտը, առաջաբանը եւ ծանոթագրությունները Վ. Զալոյանի, ռուս. թարգմ. Ա. Ադամյանի եւ Վ. Զալոյանի, Երեւան, 1956), ինչպես նաեւ «Յովհաննու Որոտնեցոյ «Հաւաքեալ ի բանից իմաստասիրաց» (С. Аревшатян, С. Лалафарян, Сочинение Иоанна Воротнеци “Об элементах”, ԲՄ 3 (1956), 343-86), «Առ Կորինթացիս Գ Թղթի» մեկնությունը (Vetter P. Der apokryphe dritte Korintherbrief, Vienna, 1894) եւ դավանաբանական բովանդակությամբ մի նամակ (Է. Բաղդասարյան, Հովհաննես Որոտնեցու դավանաբանական գրությունը Կոստանդին Ե Սսեցի կաթողիկոսին, «Էջմիածին», 1973/2, 19-28):

² Տե՛ս Փիլոնի Եբրայեցոյ բանք երեք չէս ի լոյս ընծայեալ աշխատասիրութեամբ Հ. Մկրտիչ վրդ. Ազեբեանց, Վենետիկ, 1822, էջ 1-121:

³ «Յաղագս նախախնամութեան» երկի «հավաքումն» իր համարյա բոլոր ձեռագրերով հանդերձ առաջին անգամ հիշատակվել է Գ. Գրիգորյանի հոդվածում (Գրիգորյան Գ., Փիլոն Ալեքսանդրացու աշխատությունների հայ մեկնությունները, ԲՄ 5 (1960), էջ 99): Նույն հեղինակը իր՝ Որոտնեցուն նվիրված մենագրության մեջ մի քանի անգամ օգտագործում է «Հավաքման» բնագիրը՝ ՄՄ N 1701 ձեռագրի տարբերակով, սակայն, անտեսելով իր իսկ կողմից նկատված գործի հարասական բնույթը (Գ. Գրիգորյան, Հովհան Որոտնեցու փիլիսոփայական ուսմունքը, Երեւան, էջ 65-66, ծան.

բնույթն անմիջապես երեւան է գալիս Փիլոնի եւ Ռոտմեցու բնագրերի համադրության շնորհիվ⁴. առաջին իսկ հայացքից հասկանալի է դառնում, որ Ռոտմեցու «Հավաքման» ինքնուրույնությունը սահմանափակվում է առաջին գրքի ներածական տողերով, ոճի թեթեւացմամբ՝ մեկնվող աշխատության հելլենացված լեզուն «դյուրալուր» դարձնելու միտումով եւ, թերեւ, նյութի ընտրությամբ եւ դասավորությամբ: Այս պարագայում աշխարհահռչակ բնագրերի գյուտերին ընտելացած հայագետները, հավանաբար, կհարցնեն, թե արդյո՞ք առհասարակ արժե հրատարակել նման երկրորդական կարգի, ածանցյալ եւ ակներեւ ուսումնական բնույթի մի աշխատություն:

Մեր համոզմամբ, ոչ միայն արժե, այլեւ խիստ անհրաժեշտ է: Ուսումնական նպատակներով կատարված հին թարգմանական բնագրերի տարբեր տեսակի վերամշակումները՝ լուծմունքները, հավաքումները, բառգրքերը եւն՝ մի խոսքով, միջնադարյան հոգեւոր գալրոցներում ստեղծված վերլուծագրությունը (scholiographia) կազմում է ընդհանուր ձեռագիր ժառանգության պատկառելի մասը: Այն արտացոլում է միջնադարյան հոգեւոր կենտրոնների հիմնական գործունեությունը՝ նախկինում ստացած մտավոր արժեքների պահպանումն եւ ավանդումը: Հասկանալի է, որ այս խնդիրը լուծելու համար հարկավոր էր շարունակ դաստիարակել մարդկանց, որոնք, ի տարբերություն մեր ժամանակակից «մասնագետների», ոչ թե մեքենայաբար կուտակում էին իրենց հիշողության մեջ «տեղեկություններ» հեղինակների եւ փիլիսոփայական կամ աստվածաբանական ուղղությունների մասին, այլ, սերտելով բովանդակությունն ու ոճը, կատարելապես

45), մերք վերագրում է մեկնության մեջ հայտնած տեսակետը անմիջապես Ռոտմեցուն (տե՛ս, օրինակ, նույն աշխ., էջ 74, ծան. 43՝ ուսմունք նախախնամության մասին, էջ 95, ծան. 92՝ ուսմունք տեղի մասին, էջ 98, ծան. 99՝ ուսմունք ժամանակի եւ շարժման մասին), մերք կամայականորեն հակադրում է միեւնույն փիլոնյան կշռադատության մի մասը մյուսին՝ իբրեւ առանձին՝ Փիլոնին եւ Ռոտմեցուն պատկանող դրույթներ: Այսպես, ներկայացնելով Ռոտմեցու ուսմունքն ազատության եւ նախախնամության մասին, Գ. Գրիգորյանը իրարամերժ է հայտարարում ինքնիշխանության եւ նախախնամության հասկացությունները (նույն աշխ., էջ 166-68, ծան. 5-8), մինչդեռ առաջինը անմիջապես բխում է վերջինից: Բացի այդ, ինքնիշխանության հասկացության ներմուծումը «Հավաքման» բնագրում Գ. Գրիգորյանը վերագրում է Ռոտմեցուն, թեւ այն բազմիցս հանդիպում է մեկնվող փիլոնյան երկում (տե՛ս «Յաղագս նախ.», Ա, պարբեր. 78, 79, 80, 82):

⁴ Տե՛ս «Բնագրի հրատարակման սկզբունքները եւ օգտագործված նշանները»:

ներսուզվում էին հին բնագրերի մեջ: Դրանով իսկ վարդապետները ոչ միայն մուտք էին գործում նոր մտավոր ոլորտները եւ ձեռք էին բերում այդ ոլորտներում աշխատելու համար անհրաժեշտ մասնագիտական լեզու, այլեւ վարժեցվում էին համապատասխան մտավոր գործիքները՝ ունակությունները, ինչպիսիք են ուշադրությունը, հիշողությունը, կարեւորը ոչ կարեւորից առանձնացնելու կարողությունը, մտքի ճկունությունը, բայց եւ միաժամանակ տրամաբանվածությունն ու հստակությունը եւն: Այս եւ նման ընթացքների համակարգը կազմում է հոգեւոր մշակույթի ներքին, «օրգանական» կողմը, որը դիտելու լավագույն միջոցը հենց վերլուծական գրականության ուսումնասիրությունն է:

Անշուշտ, հին բնագիրն ու մշակողը փոխազդում էին միմիանց: Ոչ միայն սերտվող բնագիրն էր թողնում իր կնիքը վերլուծողի անձի եւ սեփական ստեղծագործության վրա, այլեւ ինքը կրում մշակողի ազդեցությունը: Վերջին ընթացքի ամենապարզ արտահայտումը բնագրային ընդմիջարկություններն ու բնագրի գրչական աղավաղումներն են, որոնցից շատերն առաջացել են հենց վերլուծագրական աշխատանքի արդյունքում: Հետեւաբար, վերլուծագրական ժառանգության ուսումնասիրությունը կարող է իր ծառայությունը մատուցել նաեւ տեքստաբանության ոլորտում: Նույն ընթացքը, սակայն, ունեցել է ավելի նուրբ դրսեւորում: Վերապատմական բնույթի մեկնությունները, ինչպիսիք են լուծմունքներն ու հավաքումները, թույլ են տալիս դատելու, թե ինչպես էր ընկալվում ընթերցվող բնագիրը. ինչպես եւ ինչու փոփոխվում են տրամաբանական շեշտերը եւ շարադրանքի եղանակները, արդյոք այդ փոփոխումները նոր են, թե ավանդական, որքանով ճիշտ է եղել սկզբնական գաղափարների ըմբռնումը, արդյոք պատահական էին բացթողումները եւն: Այսինքն, վերլուծագրությունը հանդես է գալիս իբրեւ հայելի, որի միջոցով կարելի է դիտել այս կամ այն հնագույն բնագրի իրական գործառությունը տվյալ մշակույթում:

Մյուս կողմից էլ, այն փաստը, որ այս կամ այն վարդապետը զբաղվել է որեւէ հին աշխատությամբ եւ մատուցել է այն ինչ-որ լսարանի, հիմք է տալիս ոչ միայն փնտրելու այդ աշխատության հետքերը ի՛ր եւ իր ունկնդիրների երկերում, այլեւ առհասարակ ավելի հստակ պատկերացնել տվյալ դպրոցի կրթական ավանդությունները:

«Հավաքման» ստեղծման ժամանակը եւ հեղինակը.

«Հավաքման» թվագրումը, ինչպես եւ հեղինակի ստույգ որոշումը կախված են դրա ամբողջական խորագրի մեկնաբանումից: Եթե «երկասիրութեանց Յովհաննու Որոտնեցւոյ» բառակապակցութիւնը վերաբերում է հենց «հավաքմանը», ապա կարելի է հասկանալ այնպես, որ Որոտնեցին ինքը վերամշակել էր արդեն եղած լուծմունքը՝ իր սեփականը կամ մեկ ուրիշինը: Սակայն եթե նույն արտահայտութիւնը կապված է «յայտնաբանութիւն» բառի հետ, ապա դա կնշանակի, որ Որոտնեցու «Յաղագս նախախնամութեան» երկի վերաբերյալ տրված բացատրութիւնները ի մի է բերել եւ հարաստութեան է վերածել դպրապետի աշակերտներից մեկը⁵: Երկու տարբերակն էլ անհավանական չեն, թեւեւ երկրորդի օգտին կարող է խոսել այն, որ «Հավաքման» հետ ծանոթ լինելու հետքերը բացահայտվում են Գրիգոր Տաթևացու մոտ. մինչդեռ հայտնի է, որ նա է եղել Որոտնեցու դասախոսութիւնների հիմնական գրագրողը⁶: «Գիրք հարցմանց» ժողովածուի «Ընդդէմ նոցա որ զհարկն եւ զբախտն ասեն» բաժնում⁷, բացի թեմատիկ զուգահիշակցութիւններից, որոնք բացատրելի են միեւնույն աղբյուրին՝ Փիլոնի աշխատութեան ծանոթ լինելու պարագայով, առկա է հետեւյալ «Հավաքումն» հիշեցնող տեղին⁸.

⁵ Որոտնեցու պարագայում այս ընթացքը սովորական է, հմմտ. այլ վերլուծությունների խորագրերը. «Եռամեծի Հովհաննու Որոտնեցւոյ Հայոց փիլիսոփայի եւ վարդապետի Հաւաքումն համառօտ վերլուծութեան Ստորագութեանցն Արիստոտէլի աշխատասիրեալ ի Գրիգորէ աշակերտէ», «Յովհաննու Որոտնեցւոյ Համառօտ լուծմունք Պերի արմենիաս գրոցն, հաւաքեալ ի Գրիգորէ աշակերտէ», «Համառօտ լուծմունք Աստուածաբանի ի լուսաւոր բանից արդիւնական վարժապետի Հովհաննէ Որոտնեցւոյ, հավաքեալ աշխատասիրութեամբ աշակերտի նորին Գէորգայ Երզնկացւոյ» (տե՛ս Գրիգորյան, 1980, էջ 15, 18, 29):

⁶ Տե՛ս Аревшатын С.С., Философские взгляды Григора Татеваци, Ереван, 1957, сс. 28-29.

⁷ Գրիգոր Տաթևացի. Գիրք հարցմանց, Երուսաղեմ, 1993, էջ 12-13:

⁸ Որն, իր հերթին, քերես առաչացել է Դիոնիսիոս Արիսպագացու շատ ավելի բարդ կռադատության ազդեցության ներքո, հմմտ. Դիոնիսի Արիսպագացու Եպիսկոպոսի Արենացոցն Առ Տիմոթէոս Եպիսկոպոս՝ Յաղագս Աստուածային Անուանց, IV, 19 (The Armenian Version of the Works Attributed to Dionysius the Areopagite, ed. by R. W. Thomson, Lovanii, 1987 (CSCO, vol. 488, Ser. Arm. 18), p. 170).

Գիրք հարցմանց

...Աստուած ոչ է պատճառ
չարեաց, այլ միայն բարեաց: Եւ
այս վասն բազում պատճառի:
Նախ՝ զի բարին էութիւն է. ուստի
յայտ է՝ զի հակադարձին առ
միմեանս. զի ամենայն որ բարի
է՛ է՛ է. եւ ամենայն որ է՛ է՛ բարի
է: Իսկ շարն ո՛չ է էութիւն:

Հավաքումն

Դարձեալ՝ բարի է նախա-
խնամութիւն, եւ շարն ուրեմն [ոչ] է
նախախնամութիւն. եւ զի շարն ոչ է
է՛, ամենայն հարկիւ եւ ընդդիմակ
նմին բարին է՛ է: Եւ զի հակա-
դարձին սոքա. ամենայն որ է՛ է,
բարի է, եւ ամենայն բարի է՛ է, եւ
նախախնամութիւն զի բարի է,
ապա ուրեմն եւ է՛ է:

Թվագրման երկրորդ հանգամանքը կապված է ՄՄ 1701 ձեռագրի հետ: Այն ընդօրինակել է Արիստակես Սերաստացին⁹ Հովհանն Որոտնեցու ավագ եւ ամենամտերիմ աշակերտներից մեկի՝ Ավագ վանքի վանահոր՝ Գեւորգ Երզնկացու դեռեւս կենդանի լինելու օրօք¹⁰: Ձեռագրի հիշատակարանի առաջին մասը, որը թվագրված է 1383 թվականով, իրականում պատկանում է ոչ թե Արիստակեսին, այլ Գրիգոր Տաթևացուն, եւ վերաբերում է միայն Արիստակեսի ժողովածուի մեջ զետեղված «Մեկնութիւն Ստորոգութեանց եւ Յաղագս մեկնութեան գրոցն Արիստոտէլի Յովհաննու Որոտնեցոյ» աշխատությանը: Այս հիշատակարանի նախագաղափար ձեռագիրը (ՄՄ N 5931)՝ «Հաւաքումն» չի պարունակում¹¹: Դա նշանակում է, որ Արիստակեսն իր մատյանի մնացած նյութը, ուստի եւ «Հավաքման» բնագիրը, քաղել է այլ աղբյուրից: Իսկ եթե հաշվի առնենք, որ Արիստակեսի՝ բավական հմուտ եւ

⁹ Այս գրչի ձեռնով ընդօրինակվել են եւս երեք մատյաններ. ՄՄ 753/1405թ. (Մանրուամունք), ՄՄ 763/1408 թ. (Մանրուամունք), ՄՄ 5118/1412 թ. (Ոսկեփորիկ Գրիգորի Տաթևացոյ): Բոլոր ձեռագրերը ստեղծվել են Ավագ վանքում, բոլորի հիշատակարաններում հիշատակվում է Գեւորգ Երզնկացին:

¹⁰ Գեւորգ Երզնկացու նահատակ վախճանը եղավ 1416 թվականին, տե՛ս Հ. Ա. Անառյան, Հայոց անձնանունների բառարան, Հատ. Ա, Երևան, 1942, էջ 102:

¹¹ Լ. Խ ա շ ի կ յ ա ն , ԺԳ դարի հիշատակարաններ, 1950, էջ 554: Նույն ձեռագրի հիշատակարանում հիշատակվում է նաև Գեւորգ Երզնկացին «համշիրակ եղբայր» մակդիրով արտահայտություն, որի կիրառությունը բնական է Գրիգորի, բայց ոչ հիշատակարանն ընդօրինակող Արիստակեսի համար:

Որոտնեցու անմիջական շրջապատի հետ շփվող գրչի կողմից ընդօրինակված «Հավաքման» բնագիրը արդեն ունի խոշոր բացեր եւ գռեհկացված ընթերցվածներ, ապա կարելի է եզրակացնել, որ այն ժամանակ, երբ մեզ հետաքրքրող բնագիրը հասել է գրչին, այն արդեն ուներ որոշ պատմություն եւ ինչ-որ քանակով ընդօրինակություններ, այսինքն ստեղծվել է 1412 թվականից շատ ավելի վաղ:

«Հավաքման» առանձնահատկությունները

«Յաղագս նախախնամութեան» երկի Որոտնեցու կողմից մեկնվելու փաստն ինքը արժանի է հատուկ ուշադրության: Սակայն Որոտնեցու եւ նրա աշակերտների վրա փիլոսոֆիայի մտքի ազդեցության լիարժեք ուսումնասիրությունը հնարավոր կլինի միայն այն ժամանակ, երբ ամբողջությամբ կհրատարակվի մեծ դպրապետի մեկնողական եւ քարոզչական ժառանգությունը: Այստեղ մենք կբավարարվենք «Հավաքման» բնագրի մի քանի դիտարկումներով:

Առաջինը կապված է նախախնամության խնդրի քննարկման ընդհանուր երանգավորման հետ: Փիլոն Ալեքսանդրացու երկում Փիլոնն ու Ալեքսանդրոսը ոչ միայն ազգակիցներ են եւ փոխադարձ համակրանքով կապված զրուցակիցներ, այլեւ հավասարապես բարձր փիլիսոփայական մշակույթում կրթված անձնավորություններ, որոնք ոչ միայն տիրապետում են նյութին, այլեւ վարժված են քննարկման այն եղանակում, որը թույլ է տալիս հասնել խնդրի լուծմանը հարց ու պատասխանի ձևով: Այս ձևը չի կարող համարվել փրճարանություն. այն հեռու է նաեւ սոկրատյան-պլատոնյան տրամախոսության եղանակից, քանի որ վերջինում հարցեր տալու իրավունքն ու հմտությունը վերագրվում է միայն «մանկաբարձ» ուսուցչին (*Theaetetus*, 149a-151s), որն օգնում է անգիտակից աշակերտին ծննդաբերել, այսինքն՝ վերհիշել մարմնական կյանքով մթազնված իմացությունը (*Phaedrus*, 72d-91d), իսկ ծննդաբերելուց հետո զննում է ծնածի կենսունակությունը: Փիլոնի տրամախոսության մեթոդն ավելի մոտ է Արիստոտելեսի խնդիրները ներկայացնելու եւ հետազոտելու եղանակին. դրանք չեն առաջանում «ոչնչից», այլ ծագում են նախկինում ձեւավորված փիլիսոփայական միջավայրից՝ որոշակի տեսակետներից, հասկացություններից, տրամաբանման եղանակներից եւն: Քննվող խնդիրը ձեւափոխելու կամ դրա

նոր լուծման հասնելու համար հարկավոր է վերլուծության ենթարկել այս ամբողջ ժառանգությունը, հստակ դիրքորոշվել առկա մտավոր տարածության մեջ: Այս պարագայում նախկին փիլիսոփայության կողմից «հարցնող» Ալեքսանդրոսի դերը ոչ պակաս կարևոր է, քան «պատասխանող» Փիլոնինը:

«Հավաքման» մեջ մթնոլորտը խիստ փոխվում է: Համակրանքի եւ հանդուրժողության բոլոր արտահայտումները բացառվում են, քննարկումը վերածվում է հերքման: Փոխվում է նույնիսկ գրուցակցին դիմելու եղանակը՝ այսպես, խաղաղարար կոչը՝ «Կալ զքեզ. քանզի ոչ անգէտ եմ այսորիկ...»¹² վերածվում է սաստման. «Կա՛լ զքեզ եւ դադարեա՛ ի հայհոյելոյդ»¹³: Որոտնեցին Փիլոնի երկը ընկալում է որպես կովանների զինանոց եւ կազմում է «ընդդիմութիւն», որն ուղղված է հավաքական անձնավորության, Աստծո նախախնամության գոյությունը բոլոր շննդունողների դեմ: Հետաքրքիր է սակայն, որ երանգի նման փոփոխումը նկատելի է արդեն Եվսեբիոս Կեսարացու «Ավետարանական նախապատրաստություն» երկում: Այս գործում, որի շնորհիվ մեզ է հասել Փիլոնի «Յաղագս նախախնամութեան» անհետացած հունարեն բնագրի զգալի մասը, ներածելով խոշոր մեջբերումը, Եվսեբիոսն ասում է. «Այս նույն այրը (իմա՝ Փիլոնը – Օ.Վ) իր՝ «Յաղագս նախախնամութեան» գործում խիզախորեն խոսում է այն մասին, որ ամբողջը կառավարվում է նախախնամության կողմից, բերում է անաստվածների առարկությունները եւ հերքով պատասխանում է նրանց: [Այս աշխատության] ամենամեծ եւ ամենաանհրաժեշտ մասը, թեեւ այն կարող է չափազանց երկար թվալ, ես համառոտված ձևով բերում եմ [իմ գրքում]»¹⁴: Ի դեպ, Եվսեբիոսի տեղեկությունն այն մասին, որ նա Փիլոնի երկից թողել է միայն ամենակարեւորը, նույնպես քողարկում է որոշակի միավածություն. Կեսարացին առաջին հերթին հեռացնում է փիլոնյան բնագրից, ամենեւին էլ ոչ միամիտ, Ալեքսանդրոսի հարցերն ու առարկությունները: Հովհան Որոտնեցին,

¹² Փիլոնի Եբրայեցոյ բանք երեւ... 1822, էջ 93 (II եւ 72):

¹³ Հավաքումն, Բան երկրորդ, [72]:

¹⁴ ὁ δὲ αὐτὸς ἀνὴρ καὶ περὶ τοῦ προνοίᾳ διοικείσθαι τὸ πᾶν ἐν τῷ περὶ προνοίας νεανικώτατα διέξεισιν, τὰς τῶν ἀθέων ἀντιθέσεις προτάξας καὶ πρὸς αὐτὰς ἐξῆς ἀποκρινάμενος, καὶ τούτων δὲ, εἰ καὶ μακρότερα δόξειεν, ἄλλ' ὡς ἀναγκαῖα τὰ πλείστα συντεμῶν ἐκθήσομαι. Praeparatio Euangelica 13,7. Մեջբերվում է ըստ Eusebii Caesariensis Opera, recogn. Guil. Dindorfius, vol. 1-2, Leipzig, 1867.

հավանաբար, շարունակում է այս՝ ինչ-ինչ ճանապարհներով հայ վարդապետներին հասած «վիճաբանական» ավանդությունը:

Երկրորդ կարեւոր հանգամանքն այն է, որ Որոտնեցու՝ Փիլոնի աշխատության վերապատումն ամբողջական չէ: Բացեր կան եւ շարադրանքի ընթացքում եւ վերջում բացակայում են փիլոնյան բնագրի 76-113 պարբերությունները: Սակայն, մեր կարծիքով, այստեղ պետք չէ ենթադրել ո՛չ «Հավաքման» բնագրի վնասված լինելը, ո՛չ էլ «Հավաքման» համար հիմք ծառայած լուծմունքի անավարտությունը: Նախ, «Հավաքման» ստեղծողը թերեւս աշխատել է հավասարեցնել Փիլոնի աշխատության առաջին եւ երկրորդ գրքի վերապատումների ծավալները: Երկրորդ, ավելի կարեւոր գործոնը հավանաբար այն է, որ վերապատումի շեն ենթարկվել այս կամ այն պատճառով անընդունելի կամ ավելորդ թվացող դրվագները: Այսպես, բաց թողնելով հոմերոսյան վեպի քննադատությունը (Յաղագս նախ. Բ, 35-37), կամ «Ֆայդրոս» պլատոնյան տրամախոսությունում շարադրվող բանաստեղծական մոլեզնության մասին ուսմունքը (Յաղագս նախ. Բ, 43-44), հավաքողը չէր ցանկանում քննարկել բնագրերը, որոնք հայերեն թարգմանված չեն եղել, եւ իրենց հերթին կպահանջեին ծավալուն լրացուցիչ պարզաբանումներ: Ինչ վերաբերում է երկրորդ գրքի ավարտական մասին, ապա նրա իմաստային կորիզը՝ աշխարհի բոլոր բաղկացուցիչների «օգտավետությունը» ընդհանուր բնական համակարգի, ուստի եւ մարդու համար, արդեն բերվում է «Հավաքման» վերջում որպես դրույթ, որը լուսաբանված է մի քանի օրինակներով: Նույն դրույթի մնացած լուսաբանումները, որոնք բերվում են «Յաղագս նախախնամութեան» շարադրված մասում, թերեւս այդքան էլ անհրաժեշտ չեն համարվել:

Հրատարակման սկզբունքները եւ օգտագործված նշանները

Սույն հրապարակումը կատարվում է Երեւանի Մատենադարանի երեք ձեռագրերի հիման վրա¹⁵.

¹⁵ Յավոբ, անհասանելի է մնացել Երուսաղեմի թիվ 3393 ձեռագիրը: Ձեռագրերի ցուցակներից բացակայում է նաեւ այս մատյանի նկարագրությունը: Նույնպես անմատչելի է եղել Վենետիկի թիվ 969 / ԺԴ դար (տե՛ս Մայր ցուցակ Հայերեն ձեռագրաց, Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, կազմ. Բ. Սարգսեան, Վենետիկ, 1914, հատ.Բ, № 253, էջ 729-730):

A = ՄՄ 1701 / 1412թ.: Ավագ վանք (Երզնկա), գրիչ՝ Արիստակես Սերաստացի, թ. 8բ - 29ա:

B = ՄՄ 1931 / ԺԵ դ., գրիչ՝ Գրիգոր եպս., թ.125ա - 131ա:

C = ՄՄ 3860 / ԺԸ դ., գրիչ եւ ստացող՝ Գրիգոր Կարապետյան, թ. 148ա - 162բ:

Որպես հիմք ընդունվեց լավագույն *B* բնագիրը, որի հետ հաճախակի համաձայն են նաեւ *A*-ի ընթերցվածները: *C* բնագիրը լի է գրչական սխալներով, բացերով եւ թույլ ընթերցվածներով, ուստի եւ հիմնական բնագրում համարյա թե չի արտացոլվում:

Փիլոնի «Յաղագս նախախնամության» եւ Որոտնեցու «Հավաքման» համադրության արդյունքները ցուցադրված են «Հավաքման» մեջ հետեւյալ կերպ. քառակուսի [] փակագծերում նշված է վերապատմվող հատվածի համարը¹⁶. փիլոնյան արտահայտությունները, որոնք կրկնվել են բառացի, ընդգծված են: Այն բառերը, որոնք վերցված են եղել ոչ ընթացիկ, այլ որեւէ այլ հատվածից, նույնպեւ ընդգծվում են, թեք փակագծերում / / նշվում է այն հատվածի համարը, որից ծագում է տվյալ բառը կամ արտահայտությունը:

Քանի որ փիլոնյան գործի դրվագները վերաշարադրության մեջ երբեմն տեղերով փոխվում են, քառակուսի փակագծերում տրված պարբերությունների համարակալումը «Հավաքման» մեջ նույնպես երբեմն խախտվում է:

Ուղիղ եւ անուղղակի մեջբերումներն Աստվածաշնչից նշվում են անմիջապես բնագրում (ուղիղ մեջբերումները նաեւ տրվում են շղագրով), քառակուսի փակագծերում:

Հրատարակչի ծանոթագրությունները բերվում են բնագրից հետո, հղումը բնագրում կատարվում է անկյունավոր փակագծերում գտնվող աստղիկով եւ հոռմեական թվով, օրինակ՝ < *V >: Ծանոթագրությունները

¹⁶ Համարները դրվում են ըստ Մ. Ավգերյանի «Յաղագս նախախնամութեան» լատինական քաղցմանության եվրոպական վերահրատարակումներում ընդունված համարակալման. [G.E.Richter]: *Philonis Judaei opera omnia. Textus editus ad fidem optimarum editionum*, Leipzig, Schwickert 1828 –1930, t.8, pp. 45 – 100; *Idem, editio stereotypa*, Leipzig, Tauchnitz 1851-53, t.8, pp. 52 – 113; *Philon d’Alexandrie, De Providentia I et II, Introduction, traduction et notes par Mirelle Hadas – Lebel (Les oeuvres de Philon d’Alexandrie, t.35), Paris, 1973.*

վերաբերում են միայն Ռրոտնեցու օգտագործած աղբյուրներին եւ շեն մեկնարանում «Հավաքման» համար հիմք ծառայաց Փիլոնի երկը¹⁷:

Տարընթերցումները բերվում են սովորական տողատակ հղումների ձևով: Եթե տարընթեռնելի է ոչ թե մեկ բառ, այլ մի ամբողջ հատված, այս հատվածից առաջ հիմնական բնագրում գրվում է || նշանը: Խոշոր բնագրային բացը ձեռագրում, բացի || նշան ստանալուց, վերցվում է նաև ձեւավոր փակագծերի մեջ, {} նշանը կրկնվում է նաև տողատակում, համապատասխան ձեռագրի տառանիշից առաջ:

Սրբագրումները բերվում են հիմնական բնագրում քառակուսի փակագծերում. տողատակում նշվում են բոլոր ձեռագրային ընթերցվածները:

Սխալ, բայց այս կամ այն առումով հետաքրքիր տարընթերցումները նշվում են շղագրով:

Եթե ընթերցվածները տարբերվում են միայն հոգերով, ապա տողատակում երկար բառի դեպքում բերվում է միայն բառավերջը՝ տարբերվող հոգով կամ հոգախմբով:

Ակնհայտ գրչական սխալները հաշվի չեն առնվել, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնական բնագրում առաջարկվել է սրբագրում:

¹⁷ Նման ծանոթագրությունները կարելի է գտնել, օրինակ, վերոհիշյալ՝ Փիլոն Ալեխանդրացու ֆրանսերեն M. Hadas-Lebel-ի քարգմանման մեջ:

ՀԱՒԱՔՈՒՄՆ ՅԱՅՏՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ Ի՝ ՓԻՂՈՆԷ ԻՄԱՍՏՆՈՅ՝ ՈՐ ՅԱՂԱԳՍ
ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԵԱՆ ՅԱՌԱՋԻՆ՝ ԲԱՆԷ՝

ՅԵՐԿԱՍԻՐՈՒԹԵԱՆՅ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՐՈՏՆԵՅՈՅ ԼՈՒՍԱԻՈՐ ԲԱԲՈՒՆԱՊԵՏԻ
ՏԵԱՌՆ ԻՄՈՅ՝

[Ա]

Որք⁵ ի բաղբաղանս անբաղայա/71/ եւ յաներաժիշտ/54/⁶ ձեռնարկս
հայթայթանաց իմաստակարժ մակաժելով/6/ յաժին, գօրէն նիւքահարակ
պահարաց/54, 75, 81/ եւ ի բնէ անբաժ նշուլից յառաքինի խորհրդոց,
զառանցեալ համբաւեն զաշխարհս ոչ⁷ եղեալ յումեքէ՝ որոյ ո՛չ սկիզբն
եղելութեան եւ ո՛չ⁸ կատարած/13/ ապականութեան գոլ⁹: Եւ ընդ¹⁰ այսուիկ¹¹
բառնան եւս զնախախնամութիւն բոլորիցս՝ ընդ որով եւ զարարչականն¹²
պատճառ. որպէս լիակատարն ամբարիշտ էպիկուրոս/50/ ասէր՝ ոչ գոլ
Աստուած: Զոր եւ առ ժամս թողցուք առ նա զպատասխանիս, թերեւ
խոստովանեալ յամենեցունց¹³ գոլ Աստուած, մանաւանդ թէ հետակայ¹⁴ ի
սկզբանէդ նախախնամութեան եւ սորա իմասցի գոլ ընդդիմադրութիւն¹⁵:

Բայց արդ՝ ուղղեսցուք առ թերակատարսն¹⁶ եւ անազղակ/6/
յաժմունսն¹⁷, որ ինքնագոյ¹⁸ ըստ նիւթոյն՝ իսկ զարդուցն¹⁹ միայն գոլ

¹ C է ի

² B առաջին

³ C բանէ եր

⁴ A Հայոց: C մերոյ | Օգնեա Տէր իմ:

⁵ A եւ որք

⁶ C -տս

⁷ C չիք

⁸ C չիք

⁹ C գոլ

¹⁰ B ընդդէմ

¹¹ C այսմիկ

¹² C -ան

¹³ C յամենեցուն

¹⁴ C յետագայ

¹⁵ C ընդդիմադրութիւն երկրորդ

¹⁶ C -րն

¹⁷ C աժմունսն

¹⁸ C յինքնագոյ

¹⁹ A -ուց

բաղբաղեն զարարչականն²⁰ պատճառ: Եւ զայս հաստատեն կրկին իմն առարկութեամբ²¹: Առաջին²² ասեն. ոչ է պարտ անգործ իմանալ երբեք զարարչականն²³ պատճառ մինչ ի սկիզբն ծննդեան աշխարհի, այլ միշտ անսկիզբն եւ յաւետակից նմին²⁴, ապա յայտ է, թէ ոչ ունի սկիզբն: Երկրորդ՝ առարկեն ասելով. գոլ զաշխարհս մշտնջենաւոր եւ առանց²⁵ ապականութեան. ըստ Սողոմոնի երկիր յաւիտեան կայ [Ժողովող.Ա.4]՝ արդ²⁶, եթէ անվախճան է, հարկ ուրեմն է²⁷ եւ²⁸ անսկիզբն գոլ: Զոր եւ մեզ ըստ իմաստնոյն Փիլոնի նախ պատահելի²⁹ է առ սկիզբն³⁰ գոլոյ աշխարհի եւ ապա զլուծումն առարկութեանց³¹ նոցա³²:

Եւ նախ այսպէս՝ իբր հարցմամբ. եթէ զյաւետակիցն ասացեալ ըստ ձեզ արարչականին, ի նմանէ՞ ասեք զգոլն միշտ եւ թէ³³ ոչ ի նմանէ: Զի թէ ոչ ի նմանէ, զիա՞րդ է³⁴ նա՞ արարչական պատճառ եւ || նա՞ նիւթական³⁵: Իսկ թէ ի նմանէ զգոլն ունի՞ յայտ է³⁶ ի նմանէ եղեալ, իսկ ումեմն³⁷ եղեալն ոչ է անսկիզբն:

Դարձեալ՝ երկու անսկզբունքն³⁸ պատճա՞ռ են միմեանց եւ պատճառելի³⁹, եւ⁴⁰ թէ ոչ: Եւ զիտեմ, զայս ոչ ուրանաս՝ յայնմանէ, զի⁴¹ զմինն⁴² ի⁴³ միոյն ասես⁴⁴ զարդարիլ: Իսկ զայս խոստովանեալ, հարցցուք ի քէն զմիւս

²⁰ A -ան

²¹ A իմաստարկութեամբ

²² C նախ

²³ A արարչական

²⁴ BC նորին

²⁵ C բարց

²⁶ C շիբ

²⁷ AC շիբ

²⁸ A շիբ

²⁹ B նախապատահելի

³⁰ C անսկիզբն

³¹ AC -նցն

³² AC շիբ

³³ B եթէ

³⁴ C շիբ

³⁵ A աննիւթական

³⁶ C շիբ

³⁷ AB ուրեմն

³⁸ AC անսկզբունքն

³⁹ C անպատահաելի

⁴⁰ A շիբ

⁴¹ A շիբ C ի

⁴² BC -ն

⁴³ A շիբ

⁴⁴ C ասէ

դէմն. եթէ ո՞ր ի սոցանէ պատճառ է պատճառելոյն: Զի թէ ասես զնիւթն պատճառ՝ ահա ոչ կամիս անսկիզբն եւ միշտ գոլ զարարիչն⁴⁵: Եւ թէ յայսմանէ⁴⁶ խոյս տուեալ ի բաց հեռանաս, ուրեմն պատճառելի նիւթն է արարչական պատճառին: Եւ թէ պատճառելի է՝ ամենայն հարկիւ սկսեալ է: Իսկ սկսեալն ոչ է անսկիզբն⁴⁷:

[8] Դարձեալ՝ եթէ⁴⁸ էր երբեմն ըստ⁴⁹ քեզ յորժամ⁵⁰ նիւթն անզարդ էր եւ յետոյ ի զարդ եկն. ունի՞ ապա աշխարհս սկիզբն որով զարդարեցաւ: Արդ՝ եթէ նիւթն այն զսկիզբն⁵¹ ի նմանէ՝ ունի ի⁵² զարդ [զալոյ]⁵³, ամենայն հարկիւ եւ զլինելն գոլ ի նմանէ ունի յաղագս ի զարդ [զալոյ]⁵⁴, ապա ոչ է ինքնեղ⁵⁵:

[9-10] Դարձեալ՝ խոստովանելի է ի մասնէ զբոլորն ճանաչել⁵⁶. զոր արինակ ոքն մարդ⁵⁷ կենդանի է եւ բանաւոր՝ ապա եւ⁵⁸ ամենայն մարդ կենդանի է⁵⁹ եւ բանաւոր: Այլ արդ՝ տեսանեմք զի ոքն մարդ ունի սկիզբն լինելութեան, ուրեմն եւ բոլոր տեսակն: Իսկ եթէ մարդս, որ մասն է աշխարհի, ունի սկիզբն լինելութեան, || յայտ է, թէ եւ բոլորն աշխարհիս ունի սկիզբն լինելութեան⁶⁰. ոչ ուրեմն է ինքնագոյ:

[11] Դարձեալ՝ տեսանեմք զոմն մարդ, զի է սկզբնաւորեալ յումեքէ պատճառէ, իսկ նա՝ յայլ ումեքէ, եւ այսպէս ոչ ելանեմք յանբաւս, ըստ որում ոչ է քննութիւն, ապա ի հարկէ զառաջին պատճառն պարտ է գտանել . {|| զի յոչէիցն ոչինչ լինի:

[12] Իսկ առաջին արարչական պատճառն ոչ յումեքէ է. զի թէ էր յումեքէ եւ նա, թերեւս ոչ էր առաջին պատճառ⁶¹}, այլ մի յարարելոցն. ապա⁶² մի է անսկիզբն պատճառ եւ⁶³ արարչականն⁶⁴ բնութիւն յորմէ ամենեքեանք⁶⁵

⁴⁵ AC արարիչն

⁴⁶ C յայսցանէ

⁴⁷ A չիք

⁴⁸ A թէ

⁴⁹ C ընդ

⁵⁰ C յիրաւի

⁵¹ C սկիզբն

⁵² A չիք

⁵³ ABC գոլոյ

⁵⁴ ABC գոլոյ

⁵⁵ C ինքն եղեալ

⁵⁶ A ճանաչելի

⁵⁷ C չիք

⁵⁸ AC չիք

⁵⁹ C չիք

⁶⁰ C չիք

⁶¹ {} C չիք

⁶² C ապա ուրեմն

⁶³ C չիք

⁶⁴ A չիք

⁶⁵ BC ամենայն

սկզբնաւորեցան:

[13] Այս՝ թէ մի է սկիզբն եւ ոչ անսկիզբն եղեալք⁶⁶ գոյքս ամենայն: Իսկ զի եւ⁶⁷ վախճանական է⁶⁸, դատելի է այսպէս. ըստ որում տեսանեմք զոքն մարդ ապականեալ, իմանամք եւ զբոլորն ապականելի՝ նմանապէս եւ ամենայն տեսակք զսոյն կրեն: Արդ՝ եթէ տեսակք աշխարհի մասունք են, որպէս եւ ապականելի, յայտ է, || զի եւ⁶⁹ բոլորն ապականելի, ոչ || է ուրեմն անվախճան⁷⁰ աշխարհս:

[14] Դարձեալ՝ զքոյս առեալ քեզ տացուք. զի թէ անվախճանն գոլ, հարկավորաբար եւ անսկիզբն գոլ ասացէր: Այլ արդ՝ խոստովանելի ցուցաւ եղական գոլ աշխարհս, ապա⁷¹ եւ ապականելի գոլ. իսկ ապականելին զիա՞րդ իցէ մշտնջենաւոր:

[15] Դարձեալ՝ տեսանեմք զտարերս, զի ապականեն զմիմեանս, եւ նոքա սկզբնեղագոյնք են աշխարհի, որպէս հուր ապականէ զերկիր⁷² ի պտղածնութենէ, եւ ջուր զհուր շիջուցանէ, եւ աւղ զջուր⁷³ ցամաքեցնէ⁷⁴, մանաւանդ որպէս ասեն բժշկացն դասք/18/. Ի յաւդոյ լինել բազում պատճառս հիւանդութեան || եւ ապականութեան⁷⁵ մարդկան: Արդ զիա՞րդ ինքեանք անապականք⁷⁶, միմեանց եւ այլոց ապականութիւն եւ մահ տուեալ: Ոչ ուրեմն է անապական աշխարհս որպէս ցուցաւ, ապա եւ ոչ ինքնեղ:

|| Այսքան առ այս⁷⁷:

[Բ]

Այժմ պատասխանեսցուք առաջարկութեանցն: Առ⁷⁸ առաջինն⁷⁹ ասելի է. զի թէ եւ յորժամ կամեցաւ արարիչն եւ ստեղծ զաշխարհս, ոչ ասի անգործ եւ դատարկ նախ քան զսկիզբն սորա: Եւ այս վասն բազում պատճառի:

Նախ՝ զի կամք արարչութեան⁸⁰ ոչ յետոյ շարժեցաւ ի նա, այլ անսկիզբն

⁶⁶ A եղեալ

⁶⁷ A չիք

⁶⁸ C չիք

⁶⁹ C եւ զի

⁷⁰ A ուրեմն անվախճան է: C ուրեմն է անվախճան

⁷¹ C ապա ուրեմն

⁷² C զաշխարհս

⁷³ C -րս

⁷⁴ B ցամաքէ

⁷⁵ C չիք

⁷⁶ C չիք

⁷⁷ AC չիք

⁷⁸ AB չիք

⁷⁹ A -ին

⁸⁰ C արարչին

եւ միշտ ընդ ||նմա է⁸¹ եւ կամքն իւր, վասն որոյ ի սկիզբն աշխարհի զառնելն/20/ սկսաւ, եւ ոչ զկամելն:

[21] Երկրորդ՝ զի զաշխարհս ցոյց եւ աւրինակ ասացին նախանկարի՝ իմն իմանալի աշխարհի, որ ի տեսութիւնն Աստուծոյ եւ զերեւելիս⁸² զայս աշխարհ ի նոյն կերպարան ձեւագրեալ: Յայսմանէ եւ Պաւղոս ասէ. նախ քան զլինելն աշխարհի ընտրեաց զմեզ [Եփես.Ա.4]: Ապա յայտ է, զի է Աստուած ||իմանալեացն միշտ արարիչ, եւ զգալեացն⁸³ սկիզբն լինելոյ տուեալ:

Երրորդ՝ զի որպէս ունի հիւան զհիւանելն, եւ ոչ միայն ի հիւանելն է՝ եւ կոչի հիւան, այլեւ նախ քան զգործն⁸⁴, եւ որպէս արեգակն եւ⁸⁵ նախ քան զծագելն է՝ եւ ասի արեգակն, թէպէտ դեռ [ոչ]⁸⁶ ծագեցաւ առ մեզ, թերեւ իմացեալ ||այսպէս եւ զԱստուծոյ⁸⁷ միշտ գոլ⁸⁸ արարիչ ոչ իցէ յանցումն:

Առ երկրորդն ասելի⁸⁹ է, թէ⁹⁰ մշտակայութիւն տարերց ոչ անեղութեան նոցունց⁹¹ հետեւի՝ այլ ըստ կամաց արարչին, զի մնաց[ին]⁹² առանց կործանելոյ, որպէս եւ ||Պղատոն < * I > ասէ⁹³. Եթէ⁹⁴ արարիչն հրատարակէր առ երկնայինսն, թէ ըստ բնութեան ձերում էք ապականացու, բայց ըստ կամաց իմոց⁹⁵ էք անապական: Բայց սակայն կամքս իմ⁹⁶ զօրաւոր է քան զապականութիւն բնութեան ձերոյ. վասն այն ոչ ապականիք: Իսկ բանն⁹⁷ Սողոմոնի ո՞չ իմացեալ լինի վասն անփոփոխ գոլոյ երկրի, այլ վասն կարող զօրութեան⁹⁸ արարչին, զի մի⁹⁹ գործն¹⁰⁰ նորա¹⁰¹ խափանեսցի երբեք [Նեեմի.2.3/ Ա Մակ.Թ.55]. զոր ոչ միայն այսպէս, այլեւ¹⁰² նորոգութիւն

⁸¹ AC նմանէ

⁸² A -սս

⁸³ A -ցս

⁸⁴ C զգործելն

⁸⁵ AC շիֆ

⁸⁶ ABC շիֆ

⁸⁷ C Աստուծոյ

⁸⁸ A զԱստուծոյ այսպէս գոլ միշտ: C այսպէս եւ Աստուծոյ միշտ գոլն

⁸⁹ C ասացեալ

⁹⁰ C շիֆ

⁹¹ C նոցուն

⁹² AB մնացելն: C մնացին

⁹³ AB ասէ Պղատոն

⁹⁴ AC թէ

⁹⁵ AC ձերոց

⁹⁶ B շիֆ

⁹⁷ B գրանն

⁹⁸ AB զօրութեանէ

⁹⁹ C շիֆ

¹⁰⁰ A գործ

¹⁰¹ C շիֆ

¹⁰² C այլեւ յետ

գերարնապէս փոխեցին եւ պայծառացին, ըստ¹⁰³ այնմ որ ||ասէ Եսայի¹⁰⁴.
Եղիցի երկին նոր եւ երկիր նոր [Եսայի ԿԶ. 22]:

Այսքան առ այն, թէ մի է սկիզբն, եւ թէ եղական եւ ապականելի է
աշխարհս:

[Գ]

Իսկ որք¹⁰⁵ շամբուշ/19/ եւ հեռալի/14/ անբան հակառակութեամբ
յուզիղ հանճարոյ այլափոխութեամբ սխալեալ անխնամութիւն համբաւեն
զաշխարհագուծն/29,55/ նախախնամութեանց, այսպիսի իմն վատթար
պատճառս¹⁰⁶ ձեռնարկեն շնչածին/36/ մտաւք. այսինքն շանդեաց ի վերա
անշնչից/38,54/ եւ կարկուտ դալարաբեր երկրի/37/, անձրեաց եւ պտղոց
երբեք¹⁰⁷ նուագութիւն եւ երբեք առաւելութիւն, ամբարշտաց եւ արդարոց ի
միասին ի նմին ժամու պատուհաս կրել ի պատերազմի եւ¹⁰⁸ ի նախ¹⁰⁹ եւ ի
տարածամ մահու ժանտախտից եւ ի սովոյ¹¹⁰, այլեւ արժանաւոր արանց
յաղքատութեան¹¹¹ եւ անբարշտաց ի բարեբախտ կեանս՝ յայսցանէ եւ¹¹² ի
նմանեաց սոցա կարծեն ոչ գոլ յառաջախնամութիւն: Զոր եւ այսպէս նախ
ցուցցուք թէ¹¹³ է՛ նախախնամութիւն, եւ ապա զլուծումն¹¹⁴ տարակուսանացն
որոշապէս դիրալուր բանիւ տացուք:

[2] Ո՛վ դու, որ պարսաւանս դնելով, բառնաս զնախախնամութիւնն¹¹⁵,
յառաջախոհութեամբ եւ խնամաւք բառնաս: Եթէ առանց խոհեմութեան եւ
անխնամութեամբ¹¹⁶, զի՞ թէ անխոհեմաբար կարծիցէ որ¹¹⁷ արդեաւք տգի-
տութիւն զիմաստութիւն բառնալ: Իսկ եթէ նախահոգութեամբ յառաջախնամ¹¹⁸

¹⁰³ A ընդ

¹⁰⁴ BC շիֆ

¹⁰⁵ C որ

¹⁰⁶ B -սն

¹⁰⁷ C երբեք երբեք

¹⁰⁸ C շիֆ

¹⁰⁹ A շիֆ

¹¹⁰ BC սովու

¹¹¹ ABC յաղքատութիւն

¹¹² C շիֆ

¹¹³ A եթէ

¹¹⁴ C լուծումն

¹¹⁵ A -քիւն

¹¹⁶ B անխնամով

¹¹⁷ AC շիֆ

¹¹⁸ C առաջախնամ

լինիս բանիցն քոց¹¹⁹, || ապա է՝¹²⁰ նախախնամութիւն, որով դու դատեցար:

[25] Դարձեալ տեսանեմք զմասն եւ զմասանց մասն զի ունին խնամք. որպէս հայր՝ որդոց, հովիվք՝ խաշանց, նաւաստի՝ նաւի, նաեւ մրջին նախահոգակ եւ մեղու, եւ¹²¹ ծիծառն իմաստուն է: Եւ թէ այս այսպէս է, ապա գոյ եւ բոլորին նախախնամութիւն, յորմէ մասունքն ընկալան:

[26] Դարձեալ իշխանք եւ առաջնորդք որպէս տան միոյ կամ քաղաքաց խնամարկութեամբ նախախոհ¹²² գոլով ի պատրաստել¹²³ զպէտս¹²⁴ ոչ միայն բարեացն, այլեւ անարժանիցն¹²⁵ եւս, որք ընդունին զգով, ապա¹²⁶ հաւրն¹²⁷ եւ իշխանին/52/ ամենայնի¹²⁸ է առաւել խնամարկութիւն ըստ¹²⁹ առաւելութեան խնամարկելոցն:

[33] Դարձեալ ամենայնի¹³⁰ հարկ է յարուեստէ իմեմնէ զարուեստաւորն իմանալ. որպէս ի շինուածոց¹³¹ զշինողն: Այլ արդ տեսանեմք զերկինս ի նոյն ընթաց շարժութեան, զարեգակն եւ¹³² զլուսինն եւ զաստեղս, զջուր եւ զծով սահմանաձեւ¹³³ փակեալ, զերկիր հաստատեալ եւ զլերինս յարմարապէս բարձրացեալ [Սաղմ. 3Գ.17, ՃԳ.9, ՃԽԸ.6]. ապա¹³⁴ գոյ նախախնամութիւն¹³⁵ սոցա, յորմէ ամենեքեան¹³⁶ նոյնպէս կան եւ մնան: Ըստ Արիստոտելի <*II>՝ է՝ ոմն, որ¹³⁷ շարժէ զերկնային¹³⁸ մարմինն¹³⁹:

[40-41] Դարձեալ ի մասանց ներգործական || զգայութեանց երեւի շնչաւոր եւ նախահոգակ/31/ միտս գոլ ի մարդն¹⁴⁰. յորմէ ազգմանէ հրաւիրին

¹¹⁹ C գրոց

¹²⁰ C ապաւէն

¹²¹ C չիք

¹²² A նախահոգ

¹²³ A պատրաստեալ

¹²⁴ C զպէտ

¹²⁵ C անարժանեացն

¹²⁶ C ապա ուրեմն

¹²⁷ C հաւր

¹²⁸ B չիք

¹²⁹ A ընդ

¹³⁰ C ամենայնի

¹³¹ C շինուածոյ

¹³² A չիք

¹³³ AC սահմանաւ

¹³⁴ AC ապա ուրեմն

¹³⁵ C -թինս

¹³⁶ A ամենեքեանն : C ամենայն

¹³⁷ B չիք

¹³⁸ C երկրային

¹³⁹ AC -ին

¹⁴⁰ C մարդոյն

նորա յիւրաքանչիւր գործս¹⁴¹. զի ոչ կարիցէ¹⁴² նիզակ կամ նետ շարժիլ¹⁴³ առանց¹⁴⁴ ուրուք ձգելոյ:

Ապա¹⁴⁵ այլափոխութիւն աւոոց եւ եղանակաց, տուրնջեան եւ գիշերոյ, [շանդի՛ք, կարկո՛ւտք եւ այլ նշանք]¹⁴⁶ յայտնապէս¹⁴⁷ տան իմանալ զաներեւոյթ¹⁴⁸ նախախնամութիւն¹⁴⁹ արարչականն¹⁵⁰ պատճառի:

Դարձեալ՝ եթէ¹⁵¹ գոյ այր իմաստուն եւ արդար, եւ¹⁵² գոյ շար եւ վատթար, այլ արդ ամենայն հարկիւ պիտոյ է¹⁵³ իմաստութիւն եւ արդարութիւն, որովք արդարն արդարանայ, եւ || իմաստունն¹⁵⁴ իմաստանայ, եւ¹⁵⁵ յընդդիմակ շարութենէն¹⁵⁶ շարն¹⁵⁷ || եւ անզգամն¹⁵⁸:

[51] Այսպէս ապա եթէ¹⁵⁹ գոյ նախախնամական, գոյ եւ նախախնամութիւն, որով խնամարկութիւնն¹⁶⁰ ներգործի: Դարձեալ՝ եթէ¹⁶¹ գոյ իմաստութիւն, գոյ եւ նախախնամութիւն¹⁶², որոյ պատճառ է. զի նախահոգութիւն || իմաստութիւն է¹⁶³ եւ¹⁶⁴ իմաստութիւն՝ յառաջախոհութիւն¹⁶⁵, եւ միմեամբք լինին: Այլ արդ՝ գոյ իմաստութիւն եւ գիտութիւն, ուստի ուսանիմք եւ գիտեմք՝ ապա¹⁶⁶ է՛ նախախնամութիւն¹⁶⁷, յորմէ նախախնամիմք եւ նախախնամեմք:

¹⁴¹ C գործ

¹⁴² C կարիցեն

¹⁴³ C շարժել

¹⁴⁴ C քարց

¹⁴⁵ C ապա ուրեմն

¹⁴⁶ AB նշանք՝ շանդիք, կարկոտ եւ այլք : C նշան

¹⁴⁷ C շիք

¹⁴⁸ C շիք

¹⁴⁹ C նախախնամութեան

¹⁵⁰ A շիք

¹⁵¹ C շիք

¹⁵² C շիք

¹⁵³ C է մեզ

¹⁵⁴ A -ուն

¹⁵⁵ C շիք

¹⁵⁶ C շարութեան են

¹⁵⁷ C շարին

¹⁵⁸ C շիք

¹⁵⁹ AC քէ

¹⁶⁰ A խնամարկութիւնն

¹⁶¹ AC քէ

¹⁶² C շիք

¹⁶³ C է իմաստութիւն

¹⁶⁴ B շիք

¹⁶⁵ C նախահոգութիւն

¹⁶⁶ C ապա ուրեմն

¹⁶⁷ B նախախնամութիւնք

[3] Դարձեալ՝ ամենայն որ սկիզբն ունի, յումեք է¹⁶⁸ սկսեալ, եւ սկսեալն յայլմէ ունի զամենայն, եւ զոր¹⁶⁹ ունի՝ կա՛մ ուսաւ, կա՛մ եզիտ, կա՛մ բնութեամբ ունի: Այլ արդ՝ ցուցաւ մարդս սկզբնաւորիլ յարարչական պատճառէ, || ապա է՛ ուրեմն¹⁷⁰ եւ նախախնամութիւն, յորմէ ուսաւ ի նմանէ, կամ եզիտ հանճարով, կամ բնութեամբ, որպէս հայր զորդի:

Դարձեալ՝ բարի է նախախնամութիւն, եւ շարն || ուրեմն է¹⁷¹ անխնամութիւն. եւ զի շարն ոչ է է՛, ամենայն հարկիւ եւ ընդդիմակ նմին բարին¹⁷² է է՛¹⁷³: Եւ զի հակադարձին սոքա. ամենայն որ է է՛¹⁷⁴, բարի է, եւ ամենայն բարի է է, եւ նախախնամութիւն զի բարի է, ապա ուրեմն¹⁷⁵ եւ¹⁷⁶ է է:

[Դ]

Եւ այսպէս յայտնի եղելոյ, թէ գոյ եւ է՛¹⁷⁷ նախախնամութիւն, բե՛ր այժմ զլուծումն տարակուսանաց նոցա հարցաքննապէս առնթեր դիցուք: Բայց նախ գիտելի է զի [46] որպէս հայր զորդիս, նոյնպէս եւ Աստուած յանձանձէ¹⁷⁸ զմարդիկ խնամելով, երբեմն առատ պարգեւաւք, եւ երբեմն երկիւղիւ¹⁷⁹ եւ նուազութեամբ, եւ ամենայն սոքա¹⁸⁰ ի խրատս¹⁸¹ ուղղութեան մարդկան:

Հարցումն¹⁸². Վասն է՛ր կարկուտք եւ այլ¹⁸³ պատուհասք¹⁸⁴, եւ զարդարոյս ինչս ընդ ամբարշտաց կործանեն:

[56] Պատասխանի¹⁸⁵. Ոչ է այն պակասութիւն արդարոյն վասն բազում պատճառի: Նախ՝ զի ստացուած արդարոյն արդարութիւն է, զոր ոչ ոք¹⁸⁶ կարէ

¹⁶⁸ AC չիք

¹⁶⁹ C զամենայն

¹⁷⁰ C ապա ուրեմն է: A ուրեմն չիք

¹⁷¹ C է ուրեմն

¹⁷² C բարի

¹⁷³ C չիք

¹⁷⁴ C չիք

¹⁷⁵ AC չիք

¹⁷⁶ B չիք

¹⁷⁷ C չիք

¹⁷⁸ C յայնցանէ

¹⁷⁹ A երկեղիւ

¹⁸⁰ C ոք

¹⁸¹ BC խրատ

¹⁸² C հարց

¹⁸³ C չիք

¹⁸⁴ AC պատահաւք

¹⁸⁵ C դարձեալ

¹⁸⁶ C չիք

զրկել: Ապա ուրեմն¹⁸⁷ նա ոչ տրտմի ընդ մարմնական ստացուածոց պակասութիւն, իսկ եթէ¹⁸⁸ տրտմի, ոչ է արդար ասէ, այլ պարգեւաբ եւ վարձուք պաշտէ զԱստուած:

Երկրորդ՝ զի մի փքասցի ամբարտաւանութեամբ, իբր թէ իմոյքն մնացին եւ այլոցն [կորեն]¹⁸⁹ < * III >: Երրորդ՝ զի նախագետ է¹⁹⁰ նախախնամութիւն, զի մի շարեաց ինչք¹⁹¹ պատճառք¹⁹² լիցին¹⁹³, բառնա զգոյքն:

[59] Հարցումն¹⁹⁴. Վասն է՞ր արդարն եւ ամբարիշտն համազոյգ կորնչին || ի պատերազմի, ի նաւի¹⁹⁵, ի սով[ոյ]¹⁹⁶, ի ժանտախտութեան եւ յայլսն¹⁹⁷:

[60] Պատասխանի. Առաջին¹⁹⁸ պատճառն¹⁹⁹ է²⁰⁰, զի ոչ ոք գիտէ եթէ²⁰¹ արդար էր. զի ծածուկ են ի մարդն բարքն²⁰²:

[61] Իսկ նախախնամութիւն ճշմարիտ գիտէ, եւ ամենայն ինչ յայտնի է նմա²⁰³, ապա յայտ է զի²⁰⁴ ոչ կորուսանէ զարդարն²⁰⁵ ընդ ամբարշտին:

[62] Երկրորդ՝ զի թէ եւ || լինիցի²⁰⁶ իսկապէս արդար, ոչ է համազոյգ մահ²⁰⁷ նորա եւ ամբարշտին²⁰⁸. զի թէ եւ պատերազմ²⁰⁹ հասանիցի, || ոչ խռովի²¹⁰ միտք նորա, այլ անախտ մնա միշտ նոյնպէս:

Երրորդ՝ զի միշտ զնոյն ցանկայր եւ կամէր, այսինքն զմահ մարմնոյ, իսկ ամբարիշտն սիրէ զկեանս մարմնոյ. ապա²¹¹ ոչ է միապէս պատիժ²¹² մահն²¹³

187 AB չիֆ

188 A թէ

189 ABC կորեան

190 C չիֆ

191 C -ֆն

192 C պատճառ

193 A լինիցին

194 C հարց

195 C ի նաւի, ի պատերազմի

196 C ի սովու

197 C յայլուր

198 A առին

199 AC -առ

200 C չիֆ

201 A թէ

202 AB բարիֆն

203 AC նմին

204 BC թէ

205 C արդարն

206 C լինի

207 C մահն

208 ||A չիֆ

209 B պատերազմն

210 C չիֆ

211 C ապա ուրեմն

212 C -մն

երկոցունցն:

[63] Չորրորդ՝ զի շնորհ ունի արդարն՝ ոչ երկնչել ի մահուանէ՝ որպէս վկայքն վասն Աստուծոյ, եւ յայտ է, զի²¹⁴ եւ արդարութիւն նորա ոչ վրդովի ի մահուն. ըստ իմաստասիրի, որ ասէ < *IV >. Ի բաց տար ի քումմէ²¹⁵ [կարճմտութենէդ]²¹⁶, զի զարդարութիւն ոչ ինչ կարէ ստնանել²¹⁷, որպէս յառաջ ասացաք: Իսկ ամբարիշտն միշտ երկնչի ի մահուանէ²¹⁸ ապա²¹⁹ ոչ է միապէս մահ նոցա²²⁰:

[64] Եւ դարձեալ՝²²¹ զի արդարն²²² յուսով²²³ նախախնամութեանն²²⁴ ասէ մխիթարի²²⁵, որպէս եւ Առաքեալ²²⁶. Ոչ այսու կենաւքս միայն || եմք յուսացեալ²²⁷, [Ա. Կորն. ԺԵ.19] ասէ²²⁸: Իսկ ամբարիշտն ոչ ունի զյոյս²²⁹ բարեաց հատուցման, ապա²³⁰ առավել պատժի ամբարիշտն քան զարդարն ի մահ պատերազմի եւ յայլոցն:

[54] Հարցումն²³¹. Վասն է՞ր շանդիք²³² եւ²³³ կարկուտ²³⁴ հարկանեն զանշունչ նիւթ²³⁵ այսինքն զքարինս²³⁶ եւ զայլ ինչ:

[39] Պատասխանի. Զի մարդիկ խրատեսցին եւ երկիցեն, որպէս եւ²³⁷ երկրագործք²³⁸, ի սերմանել զսերմանս ցորենոյ²³⁹, զաւղս հարկանելով,

²¹³ C այն

²¹⁴ C չիք

²¹⁵ A ի քումն է

²¹⁶ A կարճամտութենէ էդ: B կարճմտութենէ: C կարճմտութիւն

²¹⁷ C ստանալ

²¹⁸ C մահու

²¹⁹ C ապա ուրեմն

²²⁰ C սոցա

²²¹ A երրորդ: C հինգերորդ

²²² C արդարութիւն

²²³ C յուսով եւ

²²⁴ AC -քեան

²²⁵ C մխիթարին

²²⁶ C առաքեալ ասէ

²²⁷ ABC յուսացեալ եմք

²²⁸ C չիք

²²⁹ C յոյս

²³⁰ C ապա ուրեմն

²³¹ C հարց

²³² C շանթք

²³³ B չիք

²³⁴ C կարկուտք

²³⁵ C նիւթք

²³⁶ C քարինս

²³⁷ C չիք

²³⁸ C երկիւղած երկագործք

²³⁹ B ցորեն

զթռչինս²⁴⁰ ի բաց մերժեն:

Հարցումն²⁴¹. Վասն է՞ր ||կարկտիւ կամ երաշտով զպտղածնութիւնս²⁴² երկրի խափանէ²⁴³:

Պատասխանի. Առաջին պատճառ՝ զի վայելչութիւն²⁴⁴ եւ զգեղեցկազարդութիւն²⁴⁵ երկրիս²⁴⁶ բառնայ յանարժանիցն բնակելոց²⁴⁷: Երկրորդ՝ զի մի լիցին²⁴⁸ նոցա²⁴⁹ դարձեալ պատճառք եւ արարչականք շարեաց, որպէս ի գիներբուս զգործելի անօթս/36/²⁵⁰ յիմարութեան բառնայ²⁵¹:

[72-73] Երրորդ՝ զի որպէս պտղոցն²⁵² պակասութեամբ²⁵³ ցաւեցաւ²⁵⁴ եւ²⁵⁵ խայթեցաւ²⁵⁶ սիրտ քո՝ ուսցիս թէ դու յորժամ զայլոց ինչք²⁵⁷ զրկէիր՝ այսինքն կամ զհոգոյդ, եւ կամ²⁵⁸ զայլ մարդկան²⁵⁹, նոյնպէս²⁶⁰ եւ նոքա ցաւէին, եւ դու ոչ գիտէիր:

[54] Հարցումն²⁶¹. Վասն է՞ր եւ զոմանս յամբարշտաց ||հարկանէ շանդին, այսինքն²⁶² կայծակն:

Պատասխանի. Առաջին²⁶³ զի պատժեսցի վասն մեղաց՝ զի ոչ երբեք շանդի եւ արդար: Երկրորդ՝ զի եւ այլքն²⁶⁴ ուսցին²⁶⁵ եւ խրատեսցին դառնալ ի մեղաց՝ զի մի ամենայն ազգ մարդկան²⁶⁶ կորիցէ²⁶⁷ նոյնպէս:

240 A -իւն

241 C հարց

242 A շիբ

243 C խափանի

244 C վայելչութիւն

245 C գեղեցկութիւն

246 A շիբ

247 BC բնակելոյ

248 BC լիցի

249 C ի նոցա

250 C յամօթ

251 AC բառնան

252 AC -ոց

253 C -թեամբն

254 A ցաւեցար: C ցաւեցեր

255 C շիբ

256 C յաղթեցաւ

257 C ինչքն

258 AC շիբ

259 A մարդիկն

260 A շիբ

261 C հարց

262 C ի հրէշտակէ շանդին որպէս

263 C առաջին պատեառ

264 A այլ: B այլի

265 A տեսցեն

266 A մարդիկ

Հարցումն. Վասն է՞ր ի տարերացդ տայ ||մարդկան ահ²⁶⁸. այսինքն շանդի²⁶⁹, կարկուտ, երաշտ եւ զայլսն²⁷⁰:

Պատասխանի. Նախ՝ զի յամենայն ժամ²⁷¹ մեզ մերձաւորք են, եւ վասն այն²⁷² առաւել երկնչիմք: Երկրորդ՝ զի որպէս մարդիկ զգործս²⁷³ բարիս ի շար փոփոխեն, եւ նախախնամութիւն Աստուծոյ զպատճառս²⁷⁴ կելոյ²⁷⁵ մեզ դարձուցանէ ի պատիժ եւ ի սատակումն մարդկան: Երրորդ՝ զի ծանիցեմք թէ է՛ ոմն նախախնամող եւ տեսանող գործոց մերոց²⁷⁶, որ զցողն ի հուր փոխէ. նաեւ ի կարկտէն հուր հանէ, եւ ի միջոյ ամպոյն. որպէս է մարդ, որ ի միջոյ քարանց հուր հանէ²⁷⁷ արուեստի:

Հարցումն²⁷⁸. Վասն է՞ր անարժանք ի մեծութեան են եւ բարեբախտք²⁷⁹ ամենայնիւ, եւ արդարք ի տնանկութիւն²⁸⁰ եւ ի սով, եւ ի հիւանդութիւն:

[64-65] Պատասխանի. Ոչ է բարեբախտութիւն կարծելի զառատութիւն մեծութեան եւ զառողջութեան²⁸¹, եւ զայլոցն ամբարշտաց²⁸² ոմանց: Նախ՝ զի ոչ են մնացական, այլ անցաւորք, եւ անօգուտք, որպէս ասէ. Կրիստոս²⁸³ Պափտուպոս²⁸⁴, որ ոսկեղէն յորձանս²⁸⁵ ունէր, զի՞նչ օգտեցաւ: Քսերֆսէս բազմամբոխն ու՞ր է: Աղեֆսանդր Մակեդոնացի²⁸⁶, ||որ բոլոր աշխարհի տիրեց²⁸⁷, ո՞չ է մեռեալ եւ այլն նմանապէս: Երկրորդ՝ զի սոքա ոչ կարեն անախտ առնել զհոգին: Երրորդ՝ զի միշտ ի հոգք եւ ի ցաւս պահեն զստացողն: Եւ դարձեալ²⁸⁸ տայ այսպիսեացն մեծութիւն, զի բառնալովն առաւել ցաւեսցին

²⁶⁷ AC կորիցեն

²⁶⁸ A մարդկան մահ

²⁶⁹ C շանդի եւ

²⁷⁰ C զայլս

²⁷¹ C չիք

²⁷² B չիք

²⁷³ C ի գործս

²⁷⁴ C -առ

²⁷⁵ AC -ոյն

²⁷⁶ B մեր

²⁷⁷ C հանեն

²⁷⁸ C հարց

²⁷⁹ AC բարեբախտ

²⁸⁰ C տնանկութեան են

²⁸¹ A զառողջութիւն մեծութեան

²⁸² A -ացն

²⁸³ B Կրիստոս

²⁸⁴ A Պափտուպոս

²⁸⁵ C արձանս

²⁸⁶ C Մակեդոնացի

²⁸⁷ BC չիք

²⁸⁸ AC չիք

և կսկծեսցին:

[66] Իսկ արդարն ի սով կամ ի հիւանդութիւն²⁸⁹. Եւ այս է ի նախախնամութիւն²⁹⁰ տուեալ: Նախ՝ զի ոչ կարեն սոքա զհոգոյն անախտութիւն փոխել: Երկրորդ՝ զի այլ առաւել բազմանայ առաքինութիւն²⁹¹ հոգոյն: Երրորդ՝ զի զնորա կամս²⁹² կատարէ նախախնամութիւնն²⁹³, զոր միշտ ցանկայ արդարն զնուագութիւն մարմնոյն: Զորրորդ՝ զի թէ իցէ ||ինչ ի նմա տկարութիւն²⁹⁴, եւ զայն եւս փոխեսցէ յուղղութիւն եւ յարիութիւն²⁹⁵, զի ամենեւիմբ²⁹⁶ մաքրեսցի:

[69] Դարձեալ ասես²⁹⁷, թէ զիա՞րդ արդարն հիւանդանայ կամ խոշտանգի: Եւ զիա՞րդ իցէ արդար, յորժամ այսպիսեացս ոչ համբերեսցէ, կամ զաղքատութիւն եւ զանիրաւ զրկումն²⁹⁸ իբրեւ զմեծութիւն ոչ ընդունի, որպէս²⁹⁹ զհայր համբերութեան Յոր:

Այսքան առ այս:

[Ե]

[77] Բայց զի ոմանք այլ իմն³⁰⁰ [շնչորսական]³⁰¹/78/ ձեռնարկութեամբ ի բաց ձգեալ³⁰² զսանձս³⁰³, նախախնամութեան զամենայն գործ ի բախտ եւ ի ծնունդ վիճակեալ յաստեղաց ասեն մատակարարիլ³⁰⁴: Եւ զայս վասն բազում սպտճառի: Նախ՝ զի ոչ կամին համբերել զառողջ կեանս առնուլ ի նախախնամութենէն: [78] Երկրորդ՝ զի ||յիննիշխան գորութենէն³⁰⁵ զրկեսցին: Երրորդ՝ զի հայրայրմունս կամին գտանել շարեացն գործոց, իբր թէ ոչ է ի խորհրդոց իւրեանցն³⁰⁶:

[79-80] Զոր մեք ճշմարիտ հարցմամբ յանդիմանեսցուք զնոսա: Նախ

²⁸⁹ B ի հիւանդ

²⁹⁰ A նախախնամութեան: C նախախնամութեանց

²⁹¹ C զառաքինութիւն

²⁹² C կամսն

²⁹³ A նախախնամութիւն

²⁹⁴ A ի նմա ինչ տկարութիւն: C ինչին մատակարարութիւն

²⁹⁵ C յարութիւն

²⁹⁶ A յամենեւիմբ

²⁹⁷ A ասեն

²⁹⁸ AC զրկում

²⁹⁹ BC իբրեւ

³⁰⁰ C իմն

³⁰¹ ABC շնչորսական

³⁰² AC ձգել

³⁰³ B -ձն

³⁰⁴ AC մատակարարել

³⁰⁵ A յիննիշխանութենէ: C իննիշխանական գորութեան

³⁰⁶ C իւրոց

այսպէս՝ եթէ³⁰⁷ ուղղիչք եւ վերակացուք քաղաքաց արդա՞րք են, թէ³⁰⁸ անիրար: Եթէ անիրարք՝ զիա՞րդ իցեն դատաւորք արդարութեան, այսինքն զուգակշռիչ հատուցման: Իսկ եթէ արդարք, զի՞նչ իցէ արդարադատութիւն³⁰⁹, յորժամ զգործունեայս³¹⁰ շարեաց³¹¹ պատժեն ի դատաստան մահու. զի ակամա կամաւք, այսինքն³¹² բռնութեամբ աստեղաց³¹³ վարեցան ի նոյնն³¹⁴: Դարձեալ՝ օրէնք ազատա՞ց եղան, եթէ անազատաց: || Եւ զի ոչ անազատաց³¹⁵, յայտ է յայսմանէ³¹⁶, զի ոչ ունին անասունքն³¹⁷ զօրէնս³¹⁸: Իսկ եթէ ազատաց՝ եւ զիա՞րդ իցեն ազատք, յորժամ զրկեալ են յանձնիշխանութենէ³¹⁹ եւ³²⁰ եղեալ³²¹ ընդ կապոյ³²² եւ ընդ լծոյ³²³ ծննդեան:

[81] Դարձեալ՝ հայրատանջ եւ մայրատանջ³²⁴ զիա՞րդ կրեսցէ պատիժ. կամ³²⁵ շուն կին ի խառնակութիւնս³²⁶ յաստեղա՞ց³²⁷ բռնի մղեալ:

[82] Դարձեալ՝ եթէ գոյ փառք եւ գովեստ³²⁸ առափնեացն եւ պարսաւանք վատթարաց, ըստ որում եթէ³²⁹ գովելի են գեղեցիկքն, ուրեմն յայտ է, զի գոյ եւ³³⁰ անձնիշխան³³¹ ազատութիւն:

[83] Դարձեալ՝ տեսանեմք զչարիս³³² յերկիւղէ մահու եւ տանջանաց խորշեալ, նաեւ յընդդիմակէն զբազումս ի բարեաց ի շարիս փոփոխեալ. ուրեմն գոյ ինքնակամութիւն ի նոսա եւ ոչ հարկ աստեղց³³³:

³⁰⁷ C չիք

³⁰⁸ AB եթէ

³⁰⁹ A արդարութիւն: C արդարութիւն դատաւորութեան

³¹⁰ A գործունեայս

³¹¹ B շարաց

³¹² BC չիք

³¹³ AC -ցն

³¹⁴ BC նոյն

³¹⁵ C չիք

³¹⁶ B յայսմանէ

³¹⁷ C -ունք

³¹⁸ AB օրէնս

³¹⁹ A յիննիշխանութենէ: C յիննիշխանութեան

³²⁰ C չիք

³²¹ BC չիք

³²² AC կապոց

³²³ AC լծոց

³²⁴ AC -ջն

³²⁵ C որպէս

³²⁶ A պոռնկութիւն: C խառնութիւնս

³²⁷ C չիք

³²⁸ A գով

³²⁹ C չիք

³³⁰ C չիք

³³¹ C անձնիշխանական

³³² A շարիս

³³³ A աստեղաց: C աստեղութեան

[84] Դարձեալ՝ Հրէայք ամենեքեանքն³³⁴, որք են ընդ թլպատութեան արինաւք, [86] եւ եգիպտացիքն ընդ պաշտամամբ գարշելեաւք, եւ զնոյն արէնս³³⁵ յայլ եւ յայլ ժամանակս, հարք առ որդիս փոխանցելով, կարիցէ՞ որ ասել զամենեսեան զնոսա ի ||մի եւ³³⁶ նոյն աստղ ծնեալ, զի զմի եւ զնոյն ||ունին արէնս³³⁷ հարկի: եւ ոչ երբեք. ապա³³⁸ արէնք ըստ³³⁹ կամաց տիրեն նոցա, եւ ոչ աստեղց³⁴⁰ ծննդեան: [87] Դարձեալ՝ պատերազմ հասեալ ի վերա քաղաքի ուրուք, եւ առհասարակ սատակելոյ եւ ժանտախտի անորոշաբար ըմբռնելոյ, կարիցէ՞ որք³⁴¹ ասել զմի եւ զնոյն ծնունդ գոլ ամենեցուն. եւ ուր է ծննդեանն անփոփոխ անուն³⁴²:

[88] Դարձեալ՝ հարկ է ամենայն գոյ³⁴³, որոյ³⁴⁴ մասն ընդ լինելութեան³⁴⁵ եւ ապականութեան³⁴⁶ է, եւ բոլորն ընդ լինելութեան եւ ապականութեան գոլ. այսպէս ապա որոյ մասն ընդ նախախնամութեան է, պարտ է եւ զբոլորին³⁴⁷ ընդ նախախնամութեան գոլ: Արդ, եթէ եւ նոքա ընդ նախախնամութեան են, զիա՞րդ³⁴⁸ տիրեն ի վերա այլոց ինքնիշխան կամաց փոխելով, եւ կամ ընդ լծոյ կապանաց ըմբռնելով³⁴⁹:

[87] Դարձեալ՝ զիա՞րդ խոստանան յերկրորդ ծննդենէն զառաջին ծնունդն, այսինքն զսերմանցն³⁵⁰ զու՞րն³⁵¹ եւ զե՞րբն³⁵² աստեղն³⁵³ գիտել. զի կարի արագ եւ փոյթ անցանի³⁵⁴ եւ խուսափի, եւ ոչ կան ի նոյն շարժումն ընթացից, որպէս ասեն որք կատարեալ³⁵⁵ իմաստունքն են³⁵⁶ յայս: Ճ|

³³⁴ A ամենեկեան

³³⁵ AB յարէնս

³³⁶ AC շիֆ

³³⁷ A արէնս ունին

³³⁸ C ապա ուրեմն

³³⁹ A ընդ

³⁴⁰ AC աստեղաց

³⁴¹ B շիֆ

³⁴² C անունն անփոփոխ անունն

³⁴³ AB շիֆ

³⁴⁴ A որոց: C շիֆ

³⁴⁵ A լինելութենէ

³⁴⁶ A ապականութենէ

³⁴⁷ C բոլորին

³⁴⁸ C զիա՞րդ եւ

³⁴⁹ A ըմբռնելոյ

³⁵⁰ ABC -նց

³⁵¹ A զու՞ր

³⁵² A զե՞րբ

³⁵³ C աստղն

³⁵⁴ C անցանէ

³⁵⁵ C կատարեալք

³⁵⁶ B շիֆ

Դարձեալ՝ յԱրիստոտելէ³⁵⁷, զի թէ ամենայն իրք ի³⁵⁸ հարկէ լինի <*V>. նախ՝ զի ոչ լինի զանազանութիւն³⁵⁹ մշտնջենաւորացն եւ փոփոխականաց³⁶⁰, զի նոքա միայն են հարկիւ, որ³⁶¹ նոյնպէս են³⁶² յամենայն ժամանակի: Երկրորդ՝ զի ոչ եւս զանազանին բանաւորքն³⁶³ եւ խորհրդաւորքն ի յանբանիցն եւ յանխորհրդոցն: Երրորդ՝ զի ոչ լինի բնութենէ³⁶⁴ բերք եւ ոչ արուեստից: Չորրորդ՝ զի ոչ լինի ի կամաց գործք ինչ, եթէ ամենայն ինչ³⁶⁵ հարկ է: Հինգերորդ՝ զի ոչ լինին զիպուածք ինչ. բարեբաստութիւն կամ վատաբանութիւն³⁶⁶: || Այսքան յառաջին բանէ որ Յաղագս նախախնամութեան ի Փիլոնէն հաւաքեալ³⁶⁷:

Նորին բան³⁶⁸ երկրորդ վասն նախախնամութեան

[Ա]

Իսկ ի միւս օրն ընդ այգն մթին՝ եկն Աղեքսանդրոս առ Փիլոն քեռորդի գոլով նմա: Եւ վասն նախախնամութեանն³⁶⁹ ասացեալ յերիկեան աւուրն դարձեալ տարակուսեալ, որ երեւի ի բանս նորա, [խնդրի]³⁷⁰ վասն³⁷¹ երկուց իրաց³⁷², այսինքն շարեաց եւ բարեաց ոմանց: Եւ վասն³⁷³ ասացելոցդ³⁷⁴ բերէ արինակ յանուանէ զոմանս՝ կարծելով թէ ոչ է նախախնամութիւն: || Այլ մեք վասն զիւրալուր լինելոյ³⁷⁵ բանիդ՝ զիցուք երեք հարցուածս³⁷⁶:

[3] Նախ՝ զայս ասէ, թէ որպէ՛ս գոյ նախախնամութիւն, յորժամ շարքն եւ անզգամքն բարեբախտք են. ի մեծութեան եւ ի հեշտութեան կեան³⁷⁷, եւ բարիքն եւ³⁷⁸ իմաստունքն աղքատք եւ թշուառականք³⁷⁹, եւ թէ³⁸⁰ գոյ

³⁵⁷ C յԱրիստոտելէ դարձեալ

³⁵⁸ C չիք

³⁵⁹ C զանազան ի

³⁶⁰ C փոփոխականաց

³⁶¹ C որք

³⁶² C են միշտ

³⁶³ A բանաւոր

³⁶⁴ C բնութեան

³⁶⁵ C չիք

³⁶⁶ {} A չիք: C վատաբանութիւն

³⁶⁷ B չիք

³⁶⁸ B չիք

³⁶⁹ AC -թեան

³⁷⁰ ABC խնդիր

³⁷¹ C չիք

³⁷² C կողմանց

³⁷³ B չիք

³⁷⁴ A ասացելոյդ

³⁷⁵ C չիք

³⁷⁶ A չիք

³⁷⁷ A կան

³⁷⁸ A չիք

նախախնամութիւն, յայնժամ այնպիսի³⁸¹ հանդիսադիր³⁸² || է Աստուած³⁸³, որ յաղթողացն պատիժ տայ³⁸⁴, եւ յաղթեցելոցն³⁸⁵ պսակ. զի առաքինիքն յաղթողք են³⁸⁶ ամենայնի³⁸⁷, եւ շարքն յաղթեալք: [5] Երկրորդ՝ զի Պողիկրատէս գոռոզն, որ է³⁸⁸ բռնաւոր, զամենայն շարիս գործէր, եւ զաստուածոց սպասաւորսն իրրեւ զանասուն³⁸⁹ || ընդ մեջ հերձել՝ խաղ առնելով³⁹⁰, իբր թէ նորա են արժանաւոր³⁹¹ զորք աստուծոցն:

[6] Եւ Դիոնէսիոս Սիկիլացոց բռնաւորն, որ զազգակիցն իւր, եւ զայլս³⁹² բազումս յարձաթահանսն նգով սպանանէր. այն որ եւ զմեհեանսն կողոպտէր եւ սորա այսպէս ի վայելս հեշտութեան վախճանեցան:

[7] Եւ որդին³⁹³ Դիոնեսեայ ոչինչ գործեալ յայսցանէ, թափառական շրջէր ի Կորնթոս: Արդ՝ զիա՞րդ ասեմք այսոցիկ պատճառ զԱստուած, որ եւ ոչ արդար մարդ այլոց մեղուցեալ³⁹⁴ զայլս պատուհասէ³⁹⁵: Եւ ոչ վարդապետ զժանրուսումնութիւն³⁹⁶ աշակերտին յազգակցէն խնդրէ, եւ ոչ³⁹⁷ բժիշկ փոխանակ հիվանդ ծնողաց՝ զողջ որդին խտրեսցէ:

[8] Զի սխալանք³⁹⁸ դատաստանի մարդկան այս են. տկարութիւն, տարակուսանք, ժամանակի անպարապութիւն³⁹⁹, դարձեալ ընկերութիւն⁴⁰⁰, ազգակցութիւնք, աղաչանք, պատրանք, կաշառք, յոյս⁴⁰¹ աւգտի եւ սոցա⁴⁰² համամանք⁴⁰³: Իսկ Աստուած այսոցիկ ոչ է ընդունակ, զի

379 C թշուառական

380 C շիք

381 A այսպիսի: C յայնպիսի

382 C հանդիսատուր

383 C շիք

384 C կա

385 AC յաղթելոցն

386 C էք

387 C ամենայնի

388 C էր

389 C -նս

390 C շիք

391 A արժանատուր

392 A զայլ

393 C որդիքն

394 C մեղաց

395 C պատուհասեն

396 C ժանրուսումնութիւն

397 B շիք

398 C սխալականք

399 C անպարտութիւն

400 B ընկերութիւնք: C ընտրութիւն

401 A յոյս

402 C սոքա

403 C սահմանքն

արդար դատաւոր է:

[9] Երրորդ՝ ասէ զբարեացն թշուառութիւն, թէ Սոկրատէս իմաստասէրն, որ միշտ տեսութեան էր հետեւեալ եւ Սոկրատէս⁴⁰⁴ աննախանձարար⁴⁰⁵ ուսուցանէր, ընդ գիտութեան կշիռ եւ զբարեգործութիւնսն⁴⁰⁶, նա⁴⁰⁷ ի խենեշ մարդկանէ սատակեցաւ⁴⁰⁸:

[10] Եւ Զենոն Ելացի, որ մարդասէրն էր, տանջեցաւ, Սոկրատէս⁴⁰⁹ զլեզուն ծամեաց եւ ընկեց առաջի տանջողացն, զի մի ակամայ ի խիստ տանջանացն⁴¹⁰ զեկուսցէ զընկերսն⁴¹¹:

[11] Եւ Անաքսարքոս իմաստասէրն, ի նիկոկրիոն Կիպրացոց բռնաւորէն իբր զցորեան ի սանդ փոճոքեցաւ⁴¹², որ եւ [խորել]⁴¹³ ասէր Սոկրատէս Անաքսարքոս: Յայսցանէ ամենեցուն երեւի, թէ ո՛չ է նախախնամութիւն:

Պատասխանի Փիլոնի .

[15] Վասն առաջնոյն գիտելի է, նախ՝ զի Աստուած ոչ միայն քաղաւոր, այլեւ հայր կոչի: Արդ՝ որպէս զանապուր որդիսն, այսինքն ամենայնիւ թիւրքն⁴¹⁴ եւ հաշմքն, որ ոչ կարեն ապրել, հայր ոչ թշնամանէ, այլ խնամէ, եւ առաւել քան զայլ եղբայրսն, գիտելով, թէ այն միայն է նոցա ապրանք, զոր ինքն տայ, եւ յայլուստեքէ⁴¹⁵ ոչ կարեն գտանել՝ այսպէս եւ Աստուած Հայր տայ այնպիսի վատացն մեծութիւն, զի այն միայն է Սոկրատէս կեանք, եւ այլ կենաց եւ բարեաց ակն ոչ ունին: Եւ կամ այնով տայ նոցա⁴¹⁶ ժամանակ, զի թերեւս ուղղեսցին. զի յոյժ մարդասէր է եւ քաղցր:

[16] Երկրորդ՝ ասէ. ոչ է բարեբախտութիւն կարծել զմարմնական մեծութիւն եւ զփառս մարդկան, թէեւ քան⁴¹⁷ [զ]Կրիստոս մեծատուն իցէ, եւ քան⁴¹⁸ զԼինգուս սրակնագոյն, եւ քան զԱմենտիլա յերկարակեաց, եւ քան զԳանիւմիդէս գեղեցիկ:

⁴⁰⁴ C զայլս

⁴⁰⁵ A զայլ նման նախանձարար: C զայլս անանցարար

⁴⁰⁶ A բարեգործութիւնսն: C բարեգործութիւն

⁴⁰⁷ AB նախ

⁴⁰⁸ AC սատակեցաւ

⁴⁰⁹ C եւ որ

⁴¹⁰ A տանջողացն

⁴¹¹ C -րն

⁴¹² C փոճոքեցաւ

⁴¹³ ABC հարել: Փիլոն՝ խորել

⁴¹⁴ C թիւրք

⁴¹⁵ AB այլուստեք

⁴¹⁶ C չիք

⁴¹⁷ C չիք

⁴¹⁸ C քան եւ

[18] Զի այնչափ վատթար է ոսկի եւ արծաթ, որ հողն, որ նոցա արծնէ⁴¹⁹, բոյս ոչ բերէ, եւ ոչ ինքեանք կերակրելիք են՝ եւ վկայէ այսմ սովն. այլ բեռն⁴²⁰ || են ծանունք⁴²¹ աշխարհի, այլեւ պէսպէս պատերազմ⁴²² բերեն. այլեւ ոչ են մնացական: Նոյնպէս եւ ոչ⁴²³ կեանքն յերկար՝ զի մահն փոխէ: Այլեւ ոչ գեղեցկութիւն, որ եւ ի նկարս գոն: Եւ ոչ ուժգնութիւն, զի անասնոց է, մանաւանդ թէ եւ սակաւ ինչ հիւանդութեամբ տգեղանան եւ տկարանան:

[19] Այլեւ ոչ փառաւորիլն ի վատթարաց է ինչ. զի նմանն⁴²⁴ ընդ նմանն խնդայ, եւ ինքն վատթար է⁴²⁵ քան զնոսա:

[16] Դարձեալ՝ [ինքեանք]⁴²⁶ որ մեծատունքն են, ունին ահ⁴²⁷, տրտմութիւն, երկիւղ, ծառայ եղեալ տրփանաց, ցանկութեանց, հեշտաբաղձանաց⁴²⁸ եւ այլոցն, [26] որպէս Դիոնէսիոս, Սիկելացւոց բռնաւորն այնպիսի ապարանք շինեաց, որ մլականաւ շափ խանդակ փորեաց շուրջ || եւ ապա⁴²⁹ զտունն եւ զմուտն նեղ եւ դժուարին եւ տախտակամած ի ներքոյ, զի ոտնաձայն լիցի. եւ այնպէս⁴³⁰ երկնչէր, մինչ զի⁴³¹ զկինն իւր մերկ հրամայէր ածել առ ինքն:

[27] Որ եւ սոյն բռնաւորս⁴³² յերբեմն ժամանակի յիշելի ճաշ պատրաստեաց բազմախորտիկս, եւ յորժամ նստաւ Պղատոն < *VI > իմաստասէրն, սրեալ տապար կախեաց ի վերոյ⁴³³ նուրբ լարով, իսկ յորժամ ետես Պղատոն, ոչ իշխէր յառնել վասն յերկիւղի, եւ ոչ⁴³⁴ ի սեղանոյն վայելել. որ եւ ասէր⁴³⁵ բռնաւորն, թէ այսպիսի[ք] են⁴³⁶ կեանք մեծատանց ի վերա երկրի: Ապա⁴³⁷ ոչ է բարեբախտութիւն մեծութիւնս մարդկան: Դարձեալ՝ զի մեծատունք որպէս

⁴¹⁹ A արծն

⁴²⁰ C շիֆ

⁴²¹ C ոչ են ծնունդի

⁴²² AC -մն

⁴²³ B շիֆ

⁴²⁴ C նման

⁴²⁵ C շիֆ

⁴²⁶ AB զինքեանք: C զինք

⁴²⁷ C ահ եւ

⁴²⁸ C հեշտ բաղձանաց

⁴²⁹ A շիֆ

⁴³⁰ A այսպէս

⁴³¹ C շիֆ

⁴³² A -ուր

⁴³³ C վերա

⁴³⁴ C շիֆ

⁴³⁵ B ասէ

⁴³⁶ A շիֆ

⁴³⁷ C ապա ուրեմն

անասունք պարարին վասն պատարագի բազմամսութեան, այսպէս⁴³⁸ եւ նոքա բազումս դարմանելով ի⁴³⁹ խողխողել հասանեն⁴⁴⁰ յետոյ:

[28] Եւ են բազումք որ անդէն վաղվաղակի պատիժս կրեն ըստ դատաստանի, որպէս ի բազմաց զսակաւ⁴⁴¹ յիշեցից. զի ի Փովկիդայ⁴⁴² արեւնք էին զմեհեանագերծն կամ ի վախէ արկանել, կամ ընկղմել, կամ այրել: Երեք արք կողոպտեցին զմեհեանն որ ի Դելփիա էր՝ զմինն ընդ քար արկին եւ փարկոծեցին, եւ զմիւսն⁴⁴³ ձին ստահակեալ, քարշեաց եւ ընկղմեաց ի ծով, եւ զմիւսն⁴⁴⁴ մաշարական ախտիւ⁴⁴⁵, այսինքն լերդացաւութեամբ հիւծեալ, եւ կամ ընդ Արեսի մեհեանն որպէս ասեն այրեցաւ⁴⁴⁶: Արդ, զի սոքա ի նոյն ժամուն⁴⁴⁷, վասն նոյն յանցանաց զնոյն պատիժս, որ ըստ արինացն էր, կրեցին, ի դէպ է ասել, թէ ոչ պատահմամբ, այլ ըստ Աստուծոյ դատաստանին տանջեցան⁴⁴⁸, ապա⁴⁴⁹ եւ ամենայն զրկողք եւ անիրաւք⁴⁵⁰ նոյնպէս⁴⁵¹ պատժելոց են⁴⁵², [29] յայտ է, թէ ոչ են նոքա բարերախտք: Երրորդ՝ զի որք զմեծութիւն⁴⁵³ աշխարհի ստանան, նմանեն կուրաց եւ խլից, որ ոչ կարեն ընտրել զառաջի եղեալ իրն, եւ ոչ զձայնս երաժշտականի, զի զխոտանսն⁴⁵⁴ ընտրեն, եւ զընտիրն⁴⁵⁵ խոտեն. [27] որպէս ժանտատեսիլ բոզք, որք զղժկերպ⁴⁵⁶ տգեղութիւնն պաճուճեալ ծաղկեն գունով եւ հանդերձիւք, զի պատրեսցեն զմարդիկ. այսպէս եւ որք յաշխարհիս իրս հային, պատրին⁴⁵⁷ եւ կորուսանին⁴⁵⁸:

⁴³⁸ B սոքա

⁴³⁹ C շիք

⁴⁴⁰ C հասանելն

⁴⁴¹ C զսակաւ

⁴⁴² C Փովկիդայ

⁴⁴³ A միւսն

⁴⁴⁴ A միւսն: C ի միւսն

⁴⁴⁵ C ախիւ

⁴⁴⁶ AB այրեցան: C այրացաւ

⁴⁴⁷ A ժամու

⁴⁴⁸ C տանջանացն

⁴⁴⁹ C ապա ուրեմն

⁴⁵⁰ C շիք

⁴⁵¹ C նոյն

⁴⁵² C էր

⁴⁵³ A մեծութիւն

⁴⁵⁴ A խոտանս

⁴⁵⁵ A -րսն

⁴⁵⁶ C զժանդակերպ

⁴⁵⁷ C պատրեն

⁴⁵⁸ C կորուսանեն

[23] Եւ կամ որպէս որք⁴⁵⁹ յարքունիս ընթանան եւ զարտաքոյ պայծառութիւն տեսեալ ի ներքս ոչ մտանեն, այլ անդէն ի նոյն պատշգամին⁴⁶⁰, այսինքն աստիճանացն երկիր պագանեն, այսպէս նոքա զմարմնաւոր իրս աստի կենացս տեսեալ հնազանդին եւ զհոգեւորն արհամարհեն, զի շունին պայծառ տեսութիւն:

[29-30] Իսկ առ երկրորդն, որ ասէ ||այս առաջինն⁴⁶¹, թէ բռնաւորք, որք⁴⁶² շարշարեն |զմարդկան⁴⁶³, հանգստեամբ⁴⁶⁴ վախճանին, նախ պատասխանէ՝ թէ ոչ որպէս⁴⁶⁵ տեսանէ մարդ, տեսանէ Աստուած [Յովբ.ժ.4] . զի մարդ յերեսս⁴⁶⁶ հայի⁴⁶⁷, եւ Աստուած ի սիրտն, եւ ոչ ||է պարտ զքո՞⁴⁶⁸ դատաստանդ⁴⁶⁹ ուղղիդ համարել⁴⁷⁰ քան զԱստուծոյն, զի արդար է դատաստան նորա, եւ յախտէ իմեքէ ոչ փոփոխի, որպէս մարդկան⁴⁷¹, ապա⁴⁷² արդարութիւն ճշմարտութեան նորա ոչինչ թողու առանց⁴⁷³ հատուցանելոյ:

[31] Երկրորդ՝ զի բռնաւորք խիստ յերբեմն երբեմն⁴⁷⁴ ժամանակի պիտանիք են⁴⁷⁵ աշխարհի, որպէս պատուհասն, որ գրեալ է յաւրէնս, պիտանի է վասն յանցաւորաց, այսպէս եւ նոքա վասն շարեաց մարդկան⁴⁷⁶: Վասն այն Աստուած տայ⁴⁷⁷ նոցա զաւրք եւ փարթամութիւն, զի անհնար է առանց⁴⁷⁸ խակ ոգոց սրբիլ մարդկան⁴⁷⁹ եւ դառնալ ի շարեաց. եւ որպէս իշխանք զայնոսիկ, որք սպանողք են գողոց եւ մարդասպանաց⁴⁸⁰, այն որ ջալատ կոչեն, կերակրեն եւ խնամեն՝ ոչ եթէ վասն արժանաւոր բարուց նոցա, այլ զի

⁴⁵⁹ C կոյրբ

⁴⁶⁰ C պատգամին

⁴⁶¹ C շիբ

⁴⁶² A որ

⁴⁶³ C զմարդիկ

⁴⁶⁴ C հանգստեան

⁴⁶⁵ C շիբ

⁴⁶⁶ AB երեսս

⁴⁶⁷ A հայցի

⁴⁶⁸ C պարտ է քո

⁴⁶⁹ AC դատաստանն

⁴⁷⁰ A համարիլ

⁴⁷¹ BC մարդիկ

⁴⁷² C ապա ուրեմն

⁴⁷³ C քարց

⁴⁷⁴ C շիբ

⁴⁷⁵ C կին

⁴⁷⁶ C մարդիկ

⁴⁷⁷ AB շիբ

⁴⁷⁸ C քարց

⁴⁷⁹ C մարդիկ

⁴⁸⁰ C -ացն

զայնպիսի գործսն⁴⁸¹ կատարեսցեն. այսպէս եւ շար բռնաւորք⁴⁸² երկրի:

[32] Երրորդ՝ զի որպէս հուր, որ⁴⁸³ ծախէ զնիւթս, ապա եւ ինքն ընդ նմին շիջանի, այսպէս եւ բռնաւորք՝ ընդ շարշարել եւ հատուցանել զպատուհաս մարդկան, ինքեանք իսկ յետոյ⁴⁸⁴ կորնչին⁴⁸⁵ եւ ապականին:

[12] Իսկ առ երրորդն⁴⁸⁶ թէ ընտիրքն⁴⁸⁷ աղքատութեամբ⁴⁸⁸ կեան եւ դժուարութեամբ վախճանին, պատասխանէ նախ՝ թէ դու ||զակամայ աղէտսն⁴⁸⁹ պատմեցէր. այլ Անաքսագորաս կամաւ եթող զմնացեալ մեծութիւն ի հարց իւրոց, որ եւ զնախիրս եբարձ եթող ընդ վայր արածել, ասելով⁴⁹⁰ թէ չեմք բնաւորեալ խաշնարած լինել երբեք:

[13] Նայել Դիմոկրիտոս եթող զստացուածս՝ եւ իմաստութեան ցանկացաւ. որ եւ գաւառի նոցա յԱրթերացի արէնս⁴⁹¹ էր, որ զայնպիսիսն, որ զտուն հարն շէն չպահէին, ոչ թաղէին, այլ շանց ընկենուին, որ եւ զայս կամէին ընդ նա անցուցանել, թէ ընկերակիցն իւր Հիպոկրատէս չէր յառաջ բերեալ զգիրս իմաստասիրութեանցն Դիմոկրիտայ⁴⁹². եւ ոչ այս⁴⁹³ միայն, այլեւ այլոց՝ թէ հանդիպէր ի⁴⁹⁴ մեծամեծաց, պարգեւս ոչ առնուին: Եւ այս⁴⁹⁵ վասն բազում պատճառի⁴⁹⁶: Զի կամեցան զաղքատութիւն. նախ՝ զի կոյր է ||մեծութիւն փարթամութեանցն⁴⁹⁷ եւ խաւար ածէ մտացն⁴⁹⁸: Վասն այն թողին զնա, եւ լուսաւոր փարթամութիւն ստացան, այսինքն՝ զիմաստութիւն եւ զառաքինութիւն: Երկրորդ՝ զի աւտար է⁴⁹⁹ ի մէնջ եւ ոչ մնացական, վասն այն զբնիկն եւ որ անփոփոխն էր, ստացան գանձ:

[24] Երրորդ՝ զի շար է եւ ապականագործ⁵⁰⁰ առաւել քան⁵⁰¹

481 C գործիսն

482 A -ս

483 A չիք

484 B չիք

485 AC չիք

486 C երկրորդն

487 C ընտիրք

488 C աղքատութեամբ

489 C ակամայ զաղէտսն

490 A չիք

491 B արէն

492 C Դիմոկրիտայ

493 C այսչափ

494 C մի

495 B զայս: C չիք

496 C պատճառաց

497 AC փարթամութիւն մեծութեանցն

498 C մտաց

499 C կին

500 C անապական գործ

զժանտախտ, զի գիտէին, թէ որպէս անձրեւն թանայ արտաքոյ, եւ սառն շնչումն ցրտացուցանէ, եւ յամառն⁵⁰² ջեռնուն⁵⁰³, նոյնպէս հարկ է, որ յայսպիսի վայրս եւ⁵⁰⁴ բնակեալ, ուր հեթանոսաց սովորութիւնքն⁵⁰⁵ գործին, կրել եւ ըստ⁵⁰⁶ նոցա զպատիժս:

[22] Զորորդ՝ զի նոքա զարէն բժշկաց⁵⁰⁷, որք թողուն զարտաքոյսն եւ զներքս ի մարմինն քննեն զտկարութիւնսն⁵⁰⁸, այսպէս եւ նոքա թողին արտաքս զմարմնականսն⁵⁰⁹, եւ ի⁵¹⁰ ներքս զհոգոյն կազմեցին զառողջութիւն. բուն հարին զլեզուէ⁵¹¹ եւ ուղղեցին⁵¹², նոյնպէս ազահութեան եւ զորովայնամոլութեան, եւ զայլն ամենայն ի շափաբերութիւն ածեալ առողջ մնացին հոգով:

[Բ]

[34] Դարձեալ ընդդիմադրութիւն Աղեքսանդրի.

Անբան եւ անիմաստ ինձ⁵¹³ երեւի, որ եւ քեզ եւ ամենեցուն թուի, զի զոր դուզնաբեա մարդ ոչ առնէ, զայն Աստուած գործէ, այսինքն՝ զի այնոցիկ, որ ամբաստանեն եւ պարսաւեն զնա, բարի առնէ⁵¹⁴, եւ որոց բարի խաւսին եւ գովեն⁵¹⁵ չար տայ, որպէս եսիողոս եւ Հոմերոս քերդողքն, որ այնչափ զամենայն աստուծոց ազգէ վատախաւսեցան⁵¹⁶, [38] եւ այնպէս⁵¹⁷ հոշակելիք եղեն յերկրի: Իսկ զԹրակացին [Թամիրայ]⁵¹⁸ կուրացուցին, զոր ոչ ինչ հակառակ երգեաց:

[39] Այլեւ⁵¹⁹ էմպեդոկլէս եւ Պարմենիդէս, եւ այլք սիրողք⁵²⁰

⁵⁰¹ C շիֆ

⁵⁰² A յամառանն: C յամառան

⁵⁰³ B ջեռուն

⁵⁰⁴ C շիֆ

⁵⁰⁵ BC սովորութիւն

⁵⁰⁶ C վասն

⁵⁰⁷ C բժշկել

⁵⁰⁸ C զտկարութիւնն

⁵⁰⁹ B -ան

⁵¹⁰ A զի

⁵¹¹ C զբեզ բնութեան

⁵¹² B ուղղեցին: C ուղղեցեն

⁵¹³ C ինչ

⁵¹⁴ A առնես: C առնեն

⁵¹⁵ B շիֆ

⁵¹⁶ B վատ խաւսեցան

⁵¹⁷ C այսպէս

⁵¹⁸ ABC Թամիրոս

⁵¹⁹ C այլ

իմաստութեանց, որք բարեպաշտութեամբ [կացին]⁵²¹, ոչ ըմբռնեցան ի⁵²² քերդողութիւն զաւրասցեալք⁵²³ յԱստուծոյ:

Պատասխանի Փիլոնի .

[40] Նախ՝ թէ⁵²⁴ ամբաստանելով զքերդողքն, զամենայն մարդիկ ամբաստանեցէր անմտութեամբ, որք ի նոցանէ⁵²⁵ ուսեալք, սքանչելիք⁵²⁶ եղեն: Երկրորդ՝ զի թէեւ թուէր ի բանս նոցա սակաւ ինչ յանցումն, ոչ էր պարտ պարսաւել, այլ վասն բազում եւ մեծամեծ⁵²⁷ աւգտութեանցն գովել. որպէս թէ⁵²⁸ որք գովէ զաշխարհս, ոչ է պարտ ||ի վատթարսն⁵²⁹ հայել⁵³⁰ ի մժղուկս, ի մրշունս եւ յայլսն⁵³¹, այլ զերկնի բնութիւն⁵³² եւ զաստեղաց⁵³³ քննելով, զծովուց⁵³⁴ եւ զգետոց, զկենդանեաց⁵³⁵ եւ զտնկոց յատկութիւնս, եւ զայլսն, զի⁵³⁶ հրաշալիք⁵³⁷ են, ի սոցանէ տալ զգովութիւն: Երրորդ՝ զի բանք նոցա ոչ է հայհոյութիւն աստուածոցն⁵³⁸, այլ է բնախաւսութիւն այլաբանութեամբ ծածկեալ յայնցանէ, որ ոչ են իւղազուխք, այսինքն իմաստունք: [41] Զի Հեփեստոս կաղ պատմեալ իմասցիս զհուր⁵³⁹, զի կաղ⁵⁴⁰ եւ կտուր⁵⁴¹ ունի զշարժմունս: Իսկ Երան⁵⁴² քոյր եւ կին ասացեալ՝ աւղն է, զի ներընդունական⁵⁴³ է եւ կրական: Իսկ զՀերմեայն՝ զող. բանն է, որ ի⁵⁴⁴ ծածուկ մտանէ ի միտս⁵⁴⁵:

520 B -բն

521 ABC կային

522 C շիֆ

523 A զաւրացեալք

524 BC եթէ

525 B նոցանէն

526 BC սփանչելի

527 C մեծ

528 BC եթէ

529 B թարսն

530 A նայել

531 A զայլսն

532 A զբնութիւն

533 A -ացս

534 A զծովու

535 B եւ զկենդանեաց

536 C եւ

537 C զհրաշալիք

538 A աստուածայնոցն

539 A -րն

540 A -ղն

541 C կոյր

542 BC Երայն

543 C ներընդունակ

544 BC շիֆ

նմանապէս եւ այլքն ամենայն նշանակին:

[42] Իսկ զի էմպեդոկլէս եւ նոցայն պար ոչ եղեն քերդողք⁵⁴⁶ աստուածաբանք. նախ՝ զի Աստուած միայն է կատարեալ յամենայնի: Իսկ մարդս⁵⁴⁷ իրաւք ինչ կատարեալ, եւ իրաւք ինչ⁵⁴⁸ պակաս գտեալ⁵⁴⁹, զի է ընդ տկարութեամբ: Երրորդ՝ զի թէպէտ եւ սիրելի են լաւքն, այլ անհասիցն⁵⁵⁰ ոչ է պարտ ցանկալ բռնադատութեամբ: Իսկ սոքա թէպէտ եւ շեղեն քերդողականք, այլ ի բարիոք խորհրդոց ոչ ի բաց կացին, զի զտրամանցանակ կամ տրամաբանակս⁵⁵¹ շարագրեցին՝ այսինքն հարցմունս եւ պատասխանիս. որպէս եւ Պղատոն հետեւեցաւ քերդողականութեան⁵⁵², իսկ յորժամ⁵⁵³ նուազ գտաւ, շրջեալ ի հարցմունս եւ ի պատասխանիս, զՍոկրատեանն եւ զՊիթագորեանն ի բանս իւրում գրեաց, որ շեն ինչ պակաս գեղեցկութեամբ քան զքերդողացն տաղաշափից:

[9]

Դարձեալ առարկէ Աղեքսանդրոս.

[45] Ծնանելի⁵⁵⁴ է աշխարհս՝ թէ անլինելի: Զի թէ ասես⁵⁵⁵ անլինելի է ապա չէ [ընդ]⁵⁵⁶ նախախնամութեան, զի ոչ է եղեալ. ապա եւ ազգ կենդանեաց եւ տունկի իմնանան, զի հարկ է ըստ բոլորին եւ մասանցն⁵⁵⁷ լինել: Իսկ եթէ⁵⁵⁸ ծնանելի ասես՝ նա առհասարակ ամենեցուն բնութիւնն է ծնանելի, զի ոչ ինչ է բաժանումն:

[46] Եւ նախ այս է՝ զի յոչնչէն ոչինչ լինի: Եւ ապա թէ եղեն ի ժամանակի, ոչ նախախնամութիւն, եւ ոչ Արամազդ երեւի մշտնջենատր, այսինքն՝ անեղ: Եւ դարձեալ՝ եթէ լինելի է վասն է՞ր ոչ նուազ եւ ոչ⁵⁵⁹ անլի եղել նիւթն եւ կամ⁵⁶⁰ գործն, որպէս արժան է ի գործ եկելոցն: Եւ կամ ընդէ՞ր

⁵⁴⁵ AC -սն

⁵⁴⁶ B քերդող

⁵⁴⁷ C մարդ

⁵⁴⁸ C չիք

⁵⁴⁹ A գոլ

⁵⁵⁰ A անհասնիցն

⁵⁵¹ AB տրամաբանականս

⁵⁵² C եւ քերթողութեան

⁵⁵³ C յորժամ եւ

⁵⁵⁴ A ծնելի

⁵⁵⁵ AB ասէ

⁵⁵⁶ ABC ըստ

⁵⁵⁷ B մասունքն

⁵⁵⁸ A թէ

⁵⁵⁹ B չիք

⁵⁶⁰ C չիք

չորս տարերս, եւ ոչ⁵⁶¹ աւելի եւ ոչ նուազ:

Պատասխանի Փիլոնի .

[48] Նախ՝ եթէ տացուք ընդ⁵⁶² քեզ անծին եւ մշտնջենաւոր զնիւթն⁵⁶³, որպէս եւ այլ իմաստասերքն⁵⁶⁴ ասեն, զինչ է զարմանք, եթէ յանեղ նիւթոյ մասնաւորն լինի⁵⁶⁵ եւ ապականի, որպէս արուեստաւորք՝ բրուտ կամ հիւսն զնիւթն ոչ ծնանին, այլ զձեւն տան նիւթոյն, եւ են արարիչ նոցա կոչեցեալ, այսպէս եւ Աստուած զառաջին նիւթն⁵⁶⁶ առեալ ի պէտս, գործէր նովա զերկին եւ զերկիր նախախնամութեամբ իւրով: Երկրորդ՝ զի թէպէտ եւ բոլորովին անծին եւ անլինելի իցէ աշխարհս եւ ոչ այնու արգելու նախախնամութիւն⁵⁶⁷ Աստուծոյ:

[49] Զի նախախնամութեան գործ ոչ միայն առնելն է յատուկ, այլեւ պինդ ունելն եւ պահելն⁵⁶⁸ զիւրաքանչիւրն⁵⁶⁹ [իւրով]⁵⁷⁰ կարգի, որպէս եւ⁵⁷¹ տեսանի ահա՛ ամենայն, զի են ի նոյնութեան: Իսկ միւս անկեանն⁵⁷² եթէ⁵⁷³ ծնանելի է ամենայն, եւ եթէ յոչնչէ⁵⁷⁴ է⁵⁷⁵, ասացեալ է բաւականապէս⁵⁷⁶ յառաջին քանն որ յաղագս նախախնամութեան⁵⁷⁷: Իսկ վասն զուգակշիռ լինելոյ նիւթոյն⁵⁷⁸ եւ տեսակին⁵⁷⁹, կշռեաց ասէ Աստուած⁵⁸⁰ նիւթ բաւական առ աշխարհիս լինելութիւն. զի թէ մասնաւոր արուեստագետք կշռեն զնիւթն⁵⁸¹ բաւական գործոյն, քանի՞ առաւել այն, որ զթիս եւ զչափս նախ եզիտ, եւ որ ի սոսա զուգաւորութիւնն են, բաւական հոգասցէ: Իսկ թէ վասն է՞ր միայն չորս տարերս՝ զի աւելին եւ պակասն քան⁵⁸² զսոսա ոչ էին պետք

561 A շիֆ

562 B ըստ: C շիֆ

563 C նիւթն

564 C -րք

565 C շիֆ

566 C նիւթոյն

567 C -թիւնն

568 B պահեալ: C պահել

569 B -րսն

570 ABC յիւրով

571 C շիֆ

572 C -ան

573 C ի վերս

574 C ոչ է

575 AC շիֆ

576 C բնականապէս

577 A -թեանն

578 A նիւթին: C նիւթն

579 C տեսակէն

580 C շիֆ

581 C զնիւթ

582 C շիֆ

|| աշխարհի կազմութեան⁵⁸³, զի անկատար լինէր⁵⁸⁴ եղեալն, իսկ սոքաւք գեղեցկապէս կատարեցաւ: Դարձեալ՝ զի ամենիմաստի է նախ քան զսկիզբն գործոյն զբաւականն⁵⁸⁵ գիտել նիւթ: Իսկ մարդիկ թէեւ իցեն հանճարեղք յարուեստն, սակայն ընդ սխալանաւք են. վասն այն երբեմն ի նուազն յաւելում⁵⁸⁶ եւ զաւելին հատանեն: Իսկ Աստուած զի աղբիւր է հանճարոյ, ստոյգ չափով բաւական առնէ զգործս ամենեցուն զովելի առաւել քան զգործ բնութեան եւ քան զգործ արուեստի:

[Դ]

Դարձեալ Աղեքսանդրոս .

[53] Որք ասեն զանբաւն եւ զունայնն էթէ նորոգ եղեալ է, ոչ են մտաւորք. ապա յայտ է, թէ ոչ⁵⁸⁷ են ըստ⁵⁸⁸ նախախնամութեան, զի նախախնամութիւն զիրն սահմանէ: Այսպէս⁵⁸⁹ եւ ոչ տեղին, զի եւ նա ունայն է, || նոր ի⁵⁹⁰ մարմնոյ ըմբռնեալ, որպէս

⁵⁹¹ ասեն իմաստունքն⁵⁹², ապա եւ ոչ երեւոյթն՝ այսինքն եղերքն. նաեւ ոչ եւ⁵⁹³ ձեւ աշխարհի, զի է բոլորածեւ, որ բնութեան⁵⁹⁴ է բերք. ապա⁵⁹⁵ եւ ոչ որ ի մէջ սոցա ըստ նախախնամութեան է: Դարձեալ՝ զի եւ ժամանակն անբաւ է⁵⁹⁶ ըստ բոպէից եւ մասանց: Եւ թէ այսպէս, ապա եւ հատած⁵⁹⁷ ժամանակին, այսինքն արն եւ ամիսն ոչ են ըստ նախախնամութեան:

[54] Յայսցանէ յայտ է, թէ եւ անմարմին բանն տրամախաւսական, զի նա եւս անբաւ է եւ ինքնակատար, զի ընդ⁵⁹⁸ մասանց իւրոց կատարի, ապա⁵⁹⁹ եւ⁶⁰⁰ հանճարն, եւ տեսիլն արուեստից, որպէս ճարտասանական || եւ

⁵⁸³ C կազմութեան աշխարհի

⁵⁸⁴ AC լինել

⁵⁸⁵ AC -ան

⁵⁸⁶ C յաւելոյն

⁵⁸⁷ B չիք

⁵⁸⁸ A ընդ

⁵⁸⁹ B ապա

⁵⁹⁰ A նորին

⁵⁹¹ A այսպէս

⁵⁹² AC իմաստասէրն

⁵⁹³ BC չիք

⁵⁹⁴ A բնութեամբ

⁵⁹⁵ C ապա ուրեմն

⁵⁹⁶ A չիք

⁵⁹⁷ C հատած

⁵⁹⁸ A յոր: B յընդ

⁵⁹⁹ C ապա ուրեմն

⁶⁰⁰ C չիք

երաժշտական⁶⁰¹, ոչ են ըստ նախախնամութեան:

Պատասխանի Փիլոնի .

[55] Արդ՝ վասն տեղոյն, որ ասես, թէ նորոգ ոչ է եղեալ, ծանիցես յարինակաց. որպէս որք քաղաք շինեն, զմասն ինչ յերկրէ պարսպեն շուրջանակի, որպէս Մակեդոնացին զԱղեքսանդրիա⁶⁰² յեգիպտոս⁶⁰³ եւ թեսեսա զԱթենս⁶⁰⁴ յԱտտիկէ⁶⁰⁵, զի ընդ կազմութեան քաղաքին եւ տեղին ընդ նմին երեւեցաւ: Այսպէս եւ Աստուած⁶⁰⁶ ընդ կազմելոյն զմեծաբաղաբա⁶⁰⁷ զայս⁶⁰⁸ աշխարհ, ընդ⁶⁰⁹ նմին ծնաւ եւ զտեղին, զոր արինակ ի⁶¹⁰ մարմնոյն ստուերն. քանզի ի մարմնոյ լրութիւն է ըմբռնեալ, որպէս դու արժանի համարեցար. վասն այն տեղին է⁶¹¹ ի մարմին, եւ ոչ մարմին⁶¹² ի տեղի:

[56] Իսկ վասն ձեւոյն աշխարհի գիտացես, զի Արարիչն նախիմացութեամբ կազմեաց զաշխարհ ի ձեւ բոլորակ վասն բազում պատճառի: Նախ՝ զի ||արագաշարժ է⁶¹³ բոլորակ ձեւն: Երկրորդ⁶¹⁴ զի բոլորապէս յամենայն կողմանց անխոնարհելի ի մէջ իւր պահեսցէ զմիջնատարերքս: Երրորդ՝ զի կատարեալ է բոլորակաձեւն⁶¹⁵, ըստ⁶¹⁶ որում ոչ յաւելու կարէ եւ ոչ նուազել, ըստ գովողացն Պղատոնի ի⁶¹⁷ Տիմէի <*VII>:

[57] Իսկ վասն ժամանակին ծանիր, զի զանբաւութիւն⁶¹⁸ ժամանակին Աստուած ոչ արար, որպէս թէ ժողով ինչ կամ համբար՝ շուրջ կամ այլոց⁶¹⁹ իրաց, զի Աստուած զէ՛ն առնէ եւ ո՛չ զոչ է՛ն. այլ արար Աստուած⁶²⁰ զաւր, եւ զամիս, եւ զտարի ի շափից շրջագայութեանց արեգական եւ լուսնի եւ այլ

⁶⁰¹ A շիֆ

⁶⁰² A Աղեքսանդրիա: C եւ յԱղեքսանդրեայ

⁶⁰³ C եգիպտոս

⁶⁰⁴ C յԱթէնս

⁶⁰⁵ C յԱտտիկէ ամ

⁶⁰⁶ C շիֆ

⁶⁰⁷ A զմեծ բաղաբա

⁶⁰⁸ C այս

⁶⁰⁹ A ըստ

⁶¹⁰ A շիֆ

⁶¹¹ C շիֆ

⁶¹² C -նն

⁶¹³ C արագ շարժէ

⁶¹⁴ BC -դն

⁶¹⁵ BC բոլորակ ձեւն

⁶¹⁶ A ընդ

⁶¹⁷ AC եւ

⁶¹⁸ AC անբաւութիւն

⁶¹⁹ A այլ

⁶²⁰ C շիֆ

մոլորակաց վասն պիտոյից ծննդեան կենդանեաց եւ տնկոց: Զոր արինակ հայր ծնանի գորգի՝ այն⁶²¹ գործ բնութեան է, իսկ հետք ոտից որդոյն՝ հետեանք է⁶²² նմին: Եւ զոր արինակ կազմութիւն դաւապին գործ է արուեստաւորին, իսկ շարժումն՝ հետեանք գործոյն, այսպէս իմասցիս զշարժումն երկնից⁶²³ արարչականք գոլ ժամանակաց մասանց եւ բոպէից:

[58] Այլ որ⁶²⁴ եւ⁶²⁵ զբանն ընդ ունայնին եւ անբաւին անարժան⁶²⁶ ի մէջ բերէր, զի արժանի եղեւ մարդս բանիւ եւ ուսմամբ լինել [տեսանող]⁶²⁷ գործոցն Աստուծոյ, զի ո՛չ այլ ինչ են տեսուածք արուեստից, եթէ ոչ ընդհանրից⁶²⁸ իրաց հասումն, որպէս երաժշտականն եւ այլն. նոյնպէս եւ տեսութիւն մտացն եւ հանճարն՝ զընդհանուրն⁶²⁹ տեսանէ, զոր Աստուած յառաջագոյն գործեաց մտաւք, || զոր եւ մտաւքն⁶³⁰ հասանէ: Զնոյն յառաջ բերեալ ի ձեռն հէգի եւ մասանց բանին, ցուցանէ հաստատուն եւ ճշմարիտ գոլ:

[Ե]

|| Աղեքսանդրոս ասէ⁶³¹.

[60] Զի՞նչ ասէք պատճառ, որ երկիրս ի մէջ եւ ի ներքոյ է հաստատեալ, եւ ջուր ի վերոյ, եւ աւղ եւ հուր քան զնոսա բարձր: Իսկ թէ զմեզ հարցանէք, պատրաստ եմք ի պատասխանին. զի հարկաւորութիւն բնականին ծանունքն զթեթեւքն⁶³² արտաքս ճնշեցին ի վեր կոյս, այսինքն յերկիր⁶³³ զջուր, եւ⁶³⁴ ի ջրոյն աւղ⁶³⁵, եւ ի նմանէ հուր, եւ ի հողմոյ եւ ի հրոյ արփին⁶³⁶ թռեալ, լայն մեծ շրջապատեալ զամենայն, որպէս ասէ Էմպեդոկլէս. զոր արինակ ի սափոր լի ջրով աւազ եւ եւղ լնուցուն, աւազն ի վայր⁶³⁷ գնացէ, եւ⁶³⁸ ջուրն ի

⁶²¹ A այն [n']r'[պէս ']

⁶²² A շի՛

⁶²³ A շի՛

⁶²⁴ A շի՛

⁶²⁵ BC շի՛.

⁶²⁶ C արժանի

⁶²⁷ ABC տեսող

⁶²⁸ BC ընդհանրի

⁶²⁹ C -ուր

⁶³⁰ B եւ գոր մտովն: C շի՛

⁶³¹ A Աղեքսանդրոս: C ասէ Աղեքսանդրոս

⁶³² C զթեթեւն

⁶³³ AC երկիր

⁶³⁴ C շի՛

⁶³⁵ A աւղն

⁶³⁶ C արփն

⁶³⁷ C շի՛

⁶³⁸ C շի՛

միջին վայր, եւ ձէթն⁶³⁹ ի վերոյ վասն առաւել թեթեւութեան:

[61] Եւ անտեղի է ասել զբազմութիւն ջուրց որ ոչ ըմպի⁶⁴⁰, ըստ նախախնամութեան գոլ, այլ ի ճնշելոյն յերկրէ, որպէս⁶⁴¹ քիրտն արտաքս հոսեալ, եւ ի հովիտս ժողովեալ եղեւ ծով: Նոյնպէս աւդ ի ջրոյ եւ յերկրէ՝ որպէս գոլորշիք ի բաղանիս⁶⁴², եւ վասն այն ի միմեանս փոփոխին, զի միմեանց են:

Փիլոն .

[62] Նախ ծանի՛ր, զի ոչ ամենայն մարմին ունի ծանրութիւն. զի զթեթեւն⁶⁴³ ի վեր ճնշեսցէ, որպէս աւդ եւ հուր: Երկրորդ՝ զի մեծ աւգտութիւն է աշխարհի բաղկացութիւն յակառակացն⁶⁴⁴, ուստի ամենայնք եղեն: Երրորդ՝ զի աւդ եւ հուր բնական ունին զվերին շարժումն, եւ ոչ յերկրէ եւ ոչ ի ջրոյ վեր⁶⁴⁵ ճնշեն: Իսկ երկիր զի ընկալաւ զմիջին վայր⁶⁴⁶ նախախնամութեամբ արարչին, նախ՝ զի ի միջին կիտէն ոչ ի բաց սողոսկի, զի կայան նորա միջին կէտն է: Երկրորդ՝ զի մինչ նա ի միջին կէտն ուղիղ կայ⁶⁴⁷, ամենայն տարերքն որ շուրջ զնովաւ են հաստատական⁶⁴⁸, վասն այն եղեն ամենայնս բոլորակաձեւ⁶⁴⁹:

[63] Եւ տայ արինակ զգունդն եւ զստեղէն զինտսն⁶⁵⁰. այն ճախարակն⁶⁵¹ է, որ⁶⁵² ի փոքր տղայոց ձեռն տան, որ շուտով ի յոտք ելնէ, կամ գունդն եւ կոճան նորին. գունդն է վասն թեթեւ ձեւոյն, եւ ստեղէն զինտն զշրջանակութիւն⁶⁵³ դիւրաւ քերէ⁶⁵⁴: Արդ՝ որպէս սոքա ոչ են ինքնէակ⁶⁵⁵, այլ ի հիւսնէ արուեստեալ, այսպէս եւ որք զդաս⁶⁵⁶ եւ զկարգ աշխարհիս տեսանեն, պարտին ի միտ ածել եւ գովել զիմաստութիւն արարչին, եւ ոչ է պարտ

⁶³⁹ C ձէթ

⁶⁴⁰ C ըմպի

⁶⁴¹ C շիք

⁶⁴² AC -իսս

⁶⁴³ A թեթեւն

⁶⁴⁴ C հակադարձեացն

⁶⁴⁵ AC վերա

⁶⁴⁶ AC վայրն

⁶⁴⁷ C գայ

⁶⁴⁸ C հաստատ կան

⁶⁴⁹ C բոլորաձեւ

⁶⁵⁰ A զինդսն

⁶⁵¹ BC ճախարակ

⁶⁵² C շիք

⁶⁵³ C զշրջականութիւն

⁶⁵⁴ C քերէ

⁶⁵⁵ C ինքնէակ

⁶⁵⁶ A զդասս

բնական հարկին տալ զզանազանութիւն սոցա՝ զի⁶⁵⁷ անբարշտութիւն է:

[64] Իսկ վասն առավելութեան⁶⁵⁸ ջուրց, զի թէեւ ի բնութեանց ասես, բնութիւնն ոչ բերէ ||աւելորդ ինչ⁶⁵⁹. քանի՞ առաւել ի գործս Աստուծոյ: Այլ նախախնամութիւնն Աստուծոյ արար զջուրս բազումս ||վասն բազում⁶⁶⁰ աւգտութեան: նախ՝ երկնի եւ աստեղաց, որպէս ասեն թէ ի ծովէ սնանին, զմաքրագոյն⁶⁶¹ ի խոնավութեանց յինքեանս⁶⁶² ձգեալ ծծեն: եւ վկայ են այսմ եղանակք⁶⁶³ գարնան, զոր ի ձմեռն⁶⁶⁴ ժողովէ արեգակն ի ծով կոյս խոնարհեալ, վասն այն ի գարունն անձրեւ է: եւ ոչ միայն նա, այլեւ ամենայն⁶⁶⁵ աստեղք. եւ յայտ է ի ցաւղոյն, որ ընդ արշալուսն⁶⁶⁶ յերկիր ձգեն առաւել զովացեալ⁶⁶⁷, զոր այլք⁶⁶⁸ ի ||ճառագայթից արեգական⁶⁶⁹ ասեն սասանեալ եւ յերկիր թափեալ:

[65] Երկրորդ՝ երկրի է աւգտութիւն, որպէս ասացաք յանձրեւաց⁶⁷⁰: Երրորդ՝ աւգտութիւն է կենաց մարդկան, զի սովաւ ի կղզիս եւ ի բոլոր աշխարհիս շրջին, փոխանակելով զբարութիւն⁶⁷¹ առ միմեանս, որպէս յայտ է ի նաւահանգիստս⁶⁷² քաղաքաց. զի որպէս կենդանիք ||կարաւտ են⁶⁷³ միմեանց, այսպես եւ աշխարհս ոչ ||է ինքնարաւական⁶⁷⁴:

[66] Իսկ որք սանձարձակ լեզուաւ իշխեն⁶⁷⁵ հայհոյել զմասունս գոյութեան, իբր թէ աւելորդ է ծով, եթէ⁶⁷⁶ երկրի քրտունք⁶⁷⁷ է, նոցա ամբարշտութեան պատճառն այն է, զի որք ոչ սպասաւորեն որովայնին իւրեանց, ոչ հարկաւոր բաղբաղեն:

⁶⁵⁷ C քէ

⁶⁵⁸ C առաւել

⁶⁵⁹ C աւելորդին

⁶⁶⁰ C շիք

⁶⁶¹ B -գոյնն

⁶⁶² B յինեան

⁶⁶³ B յեղանակք

⁶⁶⁴ B ձեռն

⁶⁶⁵ C շիք

⁶⁶⁶ C արշալոյսն

⁶⁶⁷ C զորացեալ

⁶⁶⁸ C շիք

⁶⁶⁹ C արեգական ճառագայթից

⁶⁷⁰ A անձրեւաց

⁶⁷¹ A -քիւնն

⁶⁷² AC -խտ

⁶⁷³ C կօտորեն

⁶⁷⁴ C էին բաւական

⁶⁷⁵ C զի են

⁶⁷⁶ C եւ քէ

⁶⁷⁷ C տունք

[67] Իսկ աւղ կենդանական է տնկոց եւ կենդանեաց շնչաւորաց, զի ի նմանէ կերակրիմք ի ծննդենէ⁶⁷⁸ մինչ ի վախճան ի քուն եւ յարթնութեան: Եւ վկայ քեզ յորժամ սակաւ ինչ դառն խառնուած հասանի յաւղդ, զժանդախտն⁶⁷⁹ առնէ:

[2]

|| Աղեքսանդրոս ասէ .⁶⁸⁰

[69] Ասացէր թէ յերկինս սխալն եւ աւելայանցն հալածեալ է: Արդ՝ տեսանեմք նախ՝ զանմուլար աստեղքն, || զի վասն⁶⁸¹ անբաւութեան միտք եւ թիւք⁶⁸² տկարանան շափել: Դարձեալ՝ մոլորականքն⁶⁸³ ընդդէմ նոցա են ոչ միայն թուով եւ շարժմամբ զնացից, այլեւ առ⁶⁸⁴ միմեանս են հակառակ⁶⁸⁵, || յամբ եւ⁶⁸⁶ արագ ընթացիւք. զի երկուք⁶⁸⁷ ի սոցանէ միայն հետեւին արեգական⁶⁸⁸ Փայլածուն ի մուտս արեւուն եւ Արուսեակն առ ելս, որ է Լուսաբերն:

[70] Իսկ Լուանի լոյսն ընդունայն է ասել, թէ նախախնամութեամբ առնու լԱրեգակնէ⁶⁸⁹, այլ որպէս հայելին բնաւորեալ է կերպարան⁶⁹⁰ ընդունել եւ նա՛ զլոյսն, որպէս Լուսընկալ կոչէ զնա էմպեդոկլէս: Եւ կամ զինչ աւգուտ է յարեւմտից աստեղաց, որ ծագեն եւ մտանեն. զի Սայլ⁶⁹¹ միայն է յայտնի: Մեծութիւն տուրնջեան եւ զիշերոյ զի՛նչ աւգուտ է մարդկան: Զի այլափոխ շրջանակք արեգականն⁶⁹² առ որս բերեալ լինի, առնէ զամառնային եւ զձմեռնայինն: Եւ || վկայէ բնական հարկն⁶⁹³, զի պակասի լոյս Արեգականն Լուանի⁶⁹⁴ ընդդէմ անցեալ ի ժամ նորանալոյն, նոյնպէս եւ Լուսինն ծածկի ընդ ստուերաւ երկրի, յորժամ առ ուղիղ գծան ի դէմ⁶⁹⁵ Արեգականն լինի եւ գունդ երկրիս ի

⁶⁷⁸ B ծննդէ

⁶⁷⁹ A ժանդախտն

⁶⁸⁰ AB չիք

⁶⁸¹ AB վասն զի

⁶⁸² C թիւք

⁶⁸³ C -անք

⁶⁸⁴ C չիք

⁶⁸⁵ C հակասութիւն

⁶⁸⁶ C յամար է

⁶⁸⁷ C երկու

⁶⁸⁸ C արեգական եւ

⁶⁸⁹ A -նէն

⁶⁹⁰ C -անն

⁶⁹¹ B Սայլն

⁶⁹² C -ան

⁶⁹³ A բնական հարկն վկայէ

⁶⁹⁴ C չիք

⁶⁹⁵ C ընդդէմ

մէջն: եւ զի՞նչ աւգուտ է⁶⁹⁶ մեզ յայսցանէ:

Պատասխանի Փիլոնի .

[72] Կա՛լ զքեզ եւ դադարեա՛ ի հայհոյելոյդ. զի թէպէտ եւ ի մարդկանէ անգիտելի է պատճառն այսոցիկ եւ ի յոյժ բնախաւսիցն, այլ || Արարչին⁶⁹⁷ սոցա եւ Աստուծոյ⁶⁹⁸ վայել է ճշմարիտ պատճառն. զի մեր խորհուրդս առ նորայն է, իբրեւ զնշոյլ բազմակի առ ճառագայթն⁶⁹⁹ արեգականն⁷⁰⁰:

[73] Եւ զի նախ՝ զանձուարիցդ⁷⁰¹ ասացէր, գիտելի է, զի բնութեամբ ցուրտ են, եւ ունին զաւրութիւն⁷⁰² շերմական, վասն այն բարէխառնեն եւ մաքրեալ⁷⁰³ պարզեն զաւր, որ է պատճառ կենդանական շնչաւորաց եւ տնկոց: Եւ բազում են, զի ոչ զմի մասն⁷⁰⁴, այլ զբոլոր պարարեթութիւն աւղոյդ⁷⁰⁵ անաւրացուցանեն: Իսկ շափ բազմութեան սոցա մեզ⁷⁰⁶ անյայտ է⁷⁰⁷. որ արարն, գիտէ, ըստ այնմ. Ո՞ր թուէ զբազմութիւն աստեղաց զամենեսեանս⁷⁰⁸ [Սաղ. ՃԽԶ. 4]:

[74] Իսկ թիւ մոլորակացդ յաւգուտ⁷⁰⁹ եղեւ ամենայնի⁷¹⁰, որք պարապով զիրաքանչիւրսն տեսանեն մարդիկ: Զոր եւ⁷¹¹ ոչ միայն բանիւ, այլեւ զգայութեամբ⁷¹² աչաց տեսանեմք զաւգուտն, որպէս արեգական⁷¹³ եւ լուսնի, նմանապէս⁷¹⁴ եւ այլոց⁷¹⁵ գոն, որպէս ասէ Քրիստոս եւ Կլեանթէս, երէ⁷¹⁶ Արարիչն ոչինչ եթող ի ստոյգ յաւգտութենէ ըստ⁷¹⁷ այսմ⁷¹⁸ բաղկացութեան⁷¹⁹. զի թէ գոյր այլազգ լաւ մատակարարիլ⁷²⁰ աշխարհի, այնմ ոչ ինչ արգել եւ

⁶⁹⁶ A չիք

⁶⁹⁷ B Արարչի: C Արարիչն

⁶⁹⁸ A Աստուծոյ սոցա եւ ճշմարիտ Արարչին

⁶⁹⁹ BC -այթս

⁷⁰⁰ C -ան

⁷⁰¹ AC -իցն

⁷⁰² C զգաւրութիւն

⁷⁰³ C մաքրեն եւ

⁷⁰⁴ C մասանց

⁷⁰⁵ C -ոյն

⁷⁰⁶ C մեզ

⁷⁰⁷ AB չիք

⁷⁰⁸ A - նսն C եւ այլն

⁷⁰⁹ A աւգուտ

⁷¹⁰ B ամենի: C յամենայնի

⁷¹¹ C չիք

⁷¹² C զօրութեամբ

⁷¹³ C զարեգական

⁷¹⁴ C նոյնպէս

⁷¹⁵ AC -ցն

⁷¹⁶ A թէ

⁷¹⁷ C ընդ

⁷¹⁸ C այնմ

⁷¹⁹ C բաղկացութեամբ

⁷²⁰ A մատակարարել: C մատակարարիչ

խափան գոյր Աստուծոյ:

[75] Իսկ եթէ⁷²¹ որ հարցանէ՝ վասն է՞ր Արեգականն⁷²² մի եղև եւ⁷²³ Սայլքն⁷²⁴ երկու՞ զի զամենայն զոր ինչ պիտոյն⁷²⁵ է ընու Արեգակն⁷²⁶ եւ աւելորդ⁷²⁷ խոտան է ի գործս Աստուծոյ: Իսկ Սայլքն⁷²⁸ լինին մի ի հիւսիս յաւգուտ⁷²⁹, եւ ||միւսն ի հարաւ, զի⁷³⁰ միշտ յայտնի գոլով, առաջնորդեն նաւելոցն⁷³¹ ի⁷³² ծով, որպէս Արեգակն ցամաքայնոցս⁷³³:

721 AB թէ

722 A արեգակն: C -ան

723 AC չիք

724 C այլք

725 C պիտոյ

726 C գևրեգակն

727 AC -րդն

728 C զայլքն

729 AB աւգուտ

730 C ի միւսն հարաւ, զոր

731 BC -ոց

732 C զի

733 C եւ Քրիստոսի յուտոյն մերոյ փառք յախտեանս: Ամէն:

Ծանոթագրություններ

I. Ընդ բնութենէ ձեր ... էք անապական

Տե՛ս «Տիմէի» թարգմանութեան մեջ¹. « ... ասէ զսոսա հրատարակելով որ զայս ամենայն ծնա՛ զայս ինչ. Աստուածք աստուածոց՝ որոյ ես եմ գոյացուցիչ, եւ հայր գործոց, որք ի ձեռն իմ ելեալ՝ անլոյծք, իմ կամեցեալ: Իսկ արդ ամենայն կապեալն՝ լուծանելի է, սակայն զբարեօք յարմարեալն եւ զունոզն բարեօք լուծանել կամիլն՝ շարի է: Վասն որոյ եւ քանզի եղեք՝ անմահք իսկ ոչ էք, եւ ո՛չ առանց լուծման ամենեւին, բայց ոչ լուծցիք, եւ ոչ մահուան մասին հանդիպիցիք, մեծագունի տակաւին եւ իսկագունի իմոյ կամացս հանդիպեալք շաղկապի քան զայնոսիկ՝ որով շաղկապեցաք՝ յորժամ լինէիք:»

II. Ըստ Արիստոտելի՝ է ոմն, որ շարժէ երկնային մարմին

Այս բանաձևեր չի կարելի վերագրել Արիստոտելին, քանի որ արիստոտելյան առաջին շարժիչը՝ մշտապես անշարժ մնացող, անփոփոխ, ո՛չ շափ, ո՛չ ծափալ, ո՛չ բաղադրիչ մասեր ունեցող, ողջ աշխարհին (հետեւաբար՝ եւ երկնային մարմինն՝ եթերին) շրջաբերական շարժում հաղորդող մի սկզբունք է, որն, ի տարբերութուն Պլատոնի «զեմիուրգոս»-արարչի, չունի անձնավորութեան եւ ոչ մի բնութագրի: (տես՝ Ֆիզիկա, VIII): Շարժիչ Աստծո մասին պատկերացումն ավելի հստակ կերպով արտահայտված է «Վասն աշխարհի» կեղծ-արիստոտելյան գործում²:

III. Այս՝ «Յաղագս նախախնամութեան» մեջ բացակայող գաղափարը, հավանաբար, հետեւյալ տեղի վերապատումն է. «Իսկ խնդալ եւ ոտնահար լինել ի վերայ թշուառութեանց՝ զի թէպէտ յիրաւի է, մարդկան անգ է» (Այնոցիկ, որ ի կինելութեան խնդրոց եւ լուծմանց Դ, ԾԲ (QG IV, 52)³:

IV. Ի բաց տար ի քումմէ [կարճամտութենէզ], զի զարդարութիւն ոչ ինչ կարէ ստնանել

Այս միտքն արտահայտող «փիլիսոփան» թերեւս ինքը՝ Փիլոնն է: Հայ միջնադարյան աղբյուրներում նկատելի են Ալեքսանդրացուն պարզապես «փիլիսոփա» անվանելու ավանդույթի հետքերը. տե՛ս, օրինակ, Խոսրով Անձեւացու Մեկնութիւն ժամակարգութեան, էջ 98-99⁴:

V. Դարձեալ յԱրիստոտելէ, զի թէ ամենայն իրք ի հարկէ լինի

Տեղին վերագրված է Արիստոտելին սխալմամբ. տե՛ս «Տիմէի» թարգմանութեան մեջ (էջ. 91). «եւ այն որ թուիցի զգայական զոլ անբան կարծմամբ, եւ լինի, եւ կորուսանի ճշմարտապէս, ոչ երբեք է. եւ ամենայն եղեալ՝ ի պատճառէ ումեմնէ ի հարկէ լինի. զի ամենայն իրի անհնար է առանց պատճառի ի կինելութիւն հասանել»

¹ Պլատոնի իմաստասիրի Տրամախօսութիւնք. Երփիոռն, Պաշտպանութիւն Սոկրատայ եւ Տիմէոս. Ի Վենետիկ, 1877, էջ 106-7:

² Արիստոտելի իմաստասիրի Թուղթ առ Աղեմսանդրոս թագաւոր. Պատմութիւն յաղագս աշխարհի//Դարի Անյաղթ փիլիսոփայի մատենագրութիւնք եւ Թուղթ Գիտայ կարողիկոսի առ Դափթ, ի Վենետիկ, 1932, էջ 517-542:

³ Փիլոնի Եբրայեցոյ Մնացորդի ի Հայս, աշխատասիրութեամբ Հ.Մկրտիչ վրդ. Ազերեանց, Վենետիկ, 1826:

⁴ Մեկնութիւն ժամակարգութեան, արարեալ երանելոյն Խոսրովու Անձեւացեաց Եպիսկոպոսի, եւ կարգադրեալն Մովսէսի գիտնական վարդապետի, Յօրթագիւղ, 1840

ԱՐՇԱԿ ԲԱՆՈՒՉՅԱՆ

ԵՂԻՉԵՒՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆՈՐԱՀԱՅՑ ՊԱՏԱՌԻԿՆԵՐԸ

Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» երկը բանասիրական բազմակողմանի քննության է ենթարկվել շուրջ երկու հարյուր տարի: Հայագետների՝ մեկը մյուսին հաջորդող բազմաթիվ սերունդներ են անդրադարձել հայ ժողովրդի «վասն հայրենեաց» եւ «վասն հաւատոյ» մղած 450-451 թթ.-ի ազատագրական, հերոսական ապստամբության պատմությանն ու այդ պատմության ականատես-մասնակից Եղիշեի երկին ու ինքնությանը: Մեջտեղ են եկել «Վարդանանց պատերազմի» ոչ միայն պատմա-քաղաքական գնահատականներով ու վերլուծություններով հաճախ իրարամերժ, կարծիքներ ու տեսակետներ, այլեւ նորօրյա հետազոտողի սեղանին է դրվել հեղինակի կենսագրությանն ու նրա գործին վերաբերող ժամանակագրական եւ աղբյուրագիտական ստվար, տարաբնույթ վարկածներով լի մի ժառանգություն, որոնցով զբաղվելը ժամանակ է պահանջում¹:

Ըստ էության, Երվանդ Տեր-Մինասյանի հրապարակումներից եւ քննական հրատարակությունից հետո², Եղիշեի եւ նրա երկի շուրջ ծավալված

¹ Հատկապես ժԹ դարի վերջերից մինչեւ Ի դարի 60-ական թվականները Եղիշեի «Վարդանանց պատմության» բուն բանավեճի շրջանն էր: Այս բանավեճի ամենահայտնի հեղինակներից են Եր. Տեր-Մինասյանը, Մ. Արեղյանը, Հ. Ք. Արմենը, Վ. Հացունին, Գր. Տեր-Պողոսյանը, Գր. Խալաթյանը, Բարգեն Կյուլեսերյանը, Նիկ. Ադունցը, Ներսես Ակինյանը եւ այլոք: Հիշված եւ այլ այլ հեղինակների վաստակի մասին տե՛ս Հ. Անասյան, «Մատենագիտություն» - Եղիշեի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Ի լոյս ածեալ բաղադատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ Ե. Տեր-Մինասեանի, Երևան 1957, էջ՝ 204-219. Ինչպես նաեւ Երվանդ Տեր-Մինասյանի 1971 թ.-ի աշխարհաբար բարգմանության «Մատենագիտություն»ն (էջ՝ 223-226) ու Պողոս Ատուն Զեֆիյանի «Եղիշեի երկը որպէս վաղ հայկական եկեղեցու եկեղեցաբանության վկայություն» հոդվածը, էջմիածին, 1990, Ա, էջ 40, ծնթ. 2:

² Տե՛ս Երվանդ Տեր-Մինասյանի հետևյալ կարևոր հրատարակումներն ու հրատարակությունները՝ «Եղիշեի Վարդանանց պատմությունը եւ նրա նորագույն ֆննադատը», Տեղեկագիր

բուն բանասիրական բանավեճը թվում է, թե մարել էր, տիրող տեսակետ թողնելով ե. Տեր-Մինասյանի միակ արժանահավատ եւ գիտականորեն հիմնավորված հետեւյալ եզրահանգումը՝. «Եղիշեի «Վարդանանց պատմության» սկզբնագիրն անկասկած ե դարի երկրորդ կեսի 460-464 թվականների գործ է, գրված է ականատես մարդու կողմից, ե վերաբերում է 451 թվի ապստամբությանը: Բայց, ինչպես մեր բոլոր հին մատենագիրները, այնպես էլ Եղիշեի պատմությունը հետագայում, զուցե ե է դարում, թերեւս նույնիսկ 572-ի ապստամբության ե նրան հետեւող պատերազմների դեպքերի ու հիշողությունների ազդեցությամբ, կարող է մասնակի կետերում ենթարկված լինել որոշ խմբագրման»¹:

Կարծես ամեն ինչ ասված է: Սակայն, մեր օրերում եւս, արտերկրյա հանդեսներում եւ առանձին հրատարակութուններում շարչրկվում են Եղիշեի ապրած ժամանակի եւ «Վարդանանց պատերազմի» մասին մտացածին, «բանասիրական մտավարժանքների» արդյունք եզրակացութուններ, որոնք, հաճախ անտեսելով իրենց կարծիքները հերքող աշխատութունները, «գերքննադատության» հովերով տարված՝ Եղիշեին ու նրա պատմական գործը տարուբերում են տարբեր ժամանակների մեջ²:

Այսուհանդերձ այս բանավեճում առաջադրված հարցերի քննարկումը դուրս է սույն հրապարակման նպատակներից: Հողվածիս շարժառիթը վերջերս Մատենադարանին նվիրաբերված Ժէ դարի ձեռագիր «Ժամագրքի» կազմի փեղկերին կից մագաղաթե, երկաթագիր պատառիկ-պահպանակների հայտնաբերումն է: Վերծանելով պարզեցինք, որ այն Եղիշեի «Վարդանանց պատերազմի» է. եղանակից հատվածներ ունեցող մի մասունք է³:

ՍՍՀՄ գիտությունների Ակադեմիայի հայկական ֆիլիալի, Երևան, 1943, թիվ 3, էջ 63-98:

«Եղիշեի Վարդանանց պատմության մասին եղած ֆննությունների շուրջը», Տեղեկագիր ՀՍՍՀ գիտությունների Ակադեմիայի, Հասարակական գիտություններ, Երևան 1944, թիվ 1-2, էջ 89-103:

«Եղիշեի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ Եր. Տեր-Մինասեանի, Երևան, 1957 թ. (այս հրատարակության համար այսուհետ «գիտական հրատարակություն» ձևով): Ինչպես նաև՝ Եղիշե, «Վարդանի եւ հայոց պատերազմի մասին», աշխարհաբար քարզմանություն, ներածությամբ եւ ծանոթագրություններով, Երևան, 1971 թ.:

¹ Տե՛ս Եղիշե, «Վարդանի եւ հայոց պատերազմի մասին», աշխարհաբար քարզմանություն, Եր. Տեր-Մինասյան, Երևան, 1971 թ., էջ 16:

² Այս մասին տե՛ս Ա. Այվազյան, «Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագիտության մեջ» աշխատությունը, Երևան 1998 թ.: Եղիշեի մասին էջեր 155-169:

³ Ձեռագիրը մուծվել է Մատենադարանի հայերեն հիմնական հավաքածու եւ կրում է 11140 համարը:

Մինչ այս նորահայտ ձեռագրի եւ պատառիկ-պահպանակների վերծանությանն ու ուսումնասիրությանը անցնելը, փոքր-ինչ անդրադառնանք «Վարդանանց պատերազմի» հայտնի եւ առ այսօր անհայտ երկաթագիր պատառիկներին:

Պետք է ասել, որ «Վարդանանց պատերազմի» գիտական հրատարակության մեջ պատառիկ-պահպանակներ չեն օգտագործվել¹: Եր. Տեր-Մինասյանի հիմնական նպատակը եղել է Եղիշեի՝ «Վարդանանց պատերազմի» շրջանառության մեջ գտնվող բնագրի «ձեռագրաց բաղդատությանը» քննությունը, եւ այդ իսկ նպատակով իր քննության հիմքում դրել է «Անձեւացյաց օրինակ»²: Չեռքի տակ եղած պատառիկ-պահպանակներն այս բնագրի համար նոր, արժեքավոր տարրնթերցումներ չեն տվել, ուստի եւ հայագետն իրավամբ անիմաստ է համարել մի քանի փոքրիկ հատված պարունակող պատառիկներն ամբողջական ձեռագրերի կողքին դնելը³: Ուրեմն Եղիշեի երկի «խմբագրումներ»ի, «հավելված» կամ առավել եւս «համառոտած» հատվածների մասին գիտական հրատարակությունում խոսք լինել չի կարող: Այն արդեն իսկ «խմբագրված» օրինակի գիտական հրատարակություն է:

Եղիշեի երկի նախնական, մինչեւ «խմբագրում»ը կամ «խմբագրումներ»ը եղած բնագրի վերականգնումը բնագրագիտական-աղբյուրագիտական լուրջ աշխատանք է պահանջում: Այս գործին մեծապես կարող են նպաստել ոչ միայն Ղ. Փարպեցու եւ Եղիշեի երկերի առնչություններն ու այլեւայլ աղբյուրների հետ աղերսները, այլեւ գիտական հրատարակության տարրնթերցումների ու պատառիկ-պահպանակների ուսումնասիրությունը: Հատկապես, եթե նկատի ունենանք, որ վերջիններս «Վարդանանց պատերազմի» հնագույն օրինակներից մնացած մասունքներ են: Ըստ որում, մեզ հայտնի պատառիկների մեծ մասը նոր ընթերցումներ են տալիս, որոնք գիտական հրատարակության համար օգտագործված ձեռագիր

¹ Օգտագործված տպագիր եւ ձեռագիր օրինակների եւ առհասարակ ֆննության սկզբունքների մասին տե՛ս Եր. Տեր-Մինասյանի 1957 թ.-ի հրատարակության ընդարձակ «Առաջաբանն» ու «Ներածությունը» (էջ Ե-ՄԹ):

² Տե՛ս նույն տեղում, էջ ԺԸ:

³ Գիտական հրատարակության ԽԶ-ԽԷ էջերի ծանոթությունում Արովի՝ Վենետիկից բերած նյութերի շարժում հիշատակում է երկու պատառիկների, ինչպես նաեւ Ղևոնդ Տայեանի՝ 1911 թ.-ին Վենետիկում հրատարակած «Եղիշեի չորս եղանակները հնագույն գրչագրի մը մէջ» աշխատանքը, որի համեմատության հիմք եղած ճառընտիրը ֆննության համար օգտագործել է, իսկ հավելվածում տպագրված պատառիկ պահպանակները՝ ոչ: Ինչպես ինքը՝ հեղինակն է գրում նույն ծանոթությունում. «...համեմատությունը ցույց տվեց, որ դրանք ոչ մի աչ՛ի ընկնող այլընթերցված չեն տալիս, որ մեզ հայտնի շիներ մեր ձեռքին եղած որեւէ ձեռագրից»:

ու տպագիր օրինակների հետ միասին կարող են նոր լույս սփռել Վարդանանց հերոսամարտի վիճելի հարցերի վրա:¹

Եղիշեի «Վարդանանց պատերազմի» գիտական հրատարակությունը նախորդել է Մատենադարանի հայերեն ձեռագրերի «Ցուցակ ձեռագրաց» առաջին եւ երկրորդ հատորների հրատարակությանը²: Թե Մատենադարանում պահվող հազարավոր ձեռագրերից որ մեկի մեջ կարող էին «Վարդանանց պատերազմի» հատակտորներ լինել, մեծանուն հայագետը կարող էր եւ չիմանալ: Իսկ պատառիկ-պահպանակների հավաքածուն համալրած նոր նմուշները, ըստ ամենայնի, նա չէր էլ տեսել: Սակայն հրատարակված պատառիկներն, անշուշտ, չեն վրիպել նրա ուշադրությունից: Ավելորդ չենք համարում թվարկել այդ օրինակները՝

Ա. 1893-ին Ֆ. Կ. Կոնիբերի հրատարակած Կոնի համալսարանի թիվ 15 ձեռագրի կազմից դուրս եկած երկու մագաղաթե թերթերը³, որոնք պարունակում են Եղիշեի «Վարդանանց պատերազմի» Ե. եղանակի 146-171 եւ Զ. եղանակի 9-10 նախադասությունները⁴: Ընդ որում՝

ա) Աա. թերթի ձախ սյունակը վնասված է, եւ յուրաքանչյուր տողում պահպանված 1-5 գրերով հնարավոր չի լինում պարզել Ե. եղանակի 146-րդ նախադասությանը նախորդող հատվածը: Սակայն, ինչպես հրատարակիչն է պնդում, իր համեմատած Մոսկվայի 1892 թվականի հրատարակության օրինակը թույլ չի տալիս վերականգնել այդ հատվածը:

բ) Աբ. էջում պակասում է 151-152 հատվածը՝ «Եւ քանզի զարնանային ... զվայ եւ զաւաղ բարեկամացն»:

գ) Բբ. էջում պակասում է Ե. եղանակի 171-րդ նախադասությունից

¹ Երվանդ Տեր-Մինասյանն ինքն է հուշում մեզ իր գիտական հրատարակությունից հետո կատարելիք աշխատանքները. «Բայց, ինչպես մեր բոլոր հին մատենագիրները, այնպես էլ Եղիշեի պատմությունը հետազայում, գուցե եւ է. դարում, թերեւս նույնիսկ 572-ի ապստամբության եւ նրան հետեւող պատերազմների զեպքերի ու հիշողությունների ազդեցությամբ, կարող է մասնակի կետերում ենթարկված լինել որոշ խմբագրման»: Նույնը տե՛ս նաեւ «Եղիշեի Վարդանանց պատմության մասին եղած ֆենությունների շուրջը», Տեղեկագիր ՀՍՍՀ գիտությունների Ակադեմիայի, Հասարակական գիտություններ, Երևան 1944, թիվ 1-2, էջ 89-103:

² Առաջին հատորը հրատարակվել է 1965-ին, իսկ երկրորդը՝ 1970-ին:

³ Կոնիբեր Ֆ.Կ., Եղիշեի պատմության հատակտոր, «Հանդէս Ամսօրեայ», 1893, էջ 129-133: Ստորագրված է «Կոնիբի Փր. Կ.»:

⁴ Նախադասությունների համարները ըստ «Մատենագիրք Հայոց», մատենաշարի: Ա հատոր, Ե. Դար, Անթիլիաս-Լիբանան, 2003թ.: Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» երկը գտնվում է 521-764 էջերում: Հատորը հրատարակության է պատրաստվել «Հայ դասական մատենագրության քվային գրադարանում»: Մատենաշարն հրատարակվում է «Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության» եւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության համագործակցությամբ:

«բեկաւ անկաւ զաւրուքին ուժոյն իւրոյ, ...» մինչեւ Ջ. Եղանակի 7-րդ նախադասութեան կեսը «...հրամայեաց սպանանել ի նոցանէ...»: Այս ամբողջի փոխարեն Ն. Եղանակը, առանց Ջ.-ի վերնագրի, միմյանց է կապում հետեւյալ հատվածով «...իսկ (°) ի գնդին Հայո՞ցսն ինչ յամրոցի, եւ երթեալ զաւրն պարսից գալ ի խաղաղութիւն, որոյ եկեալ...»: Կոնիքերի այս հրատարակութեան մասին բազմաթիւ հրապարակումներ են եղել: Միտալված չենք լինի, եթե ասենք, որ Եղիշեի դեմ սանձազերծված հարձակումների շարժառիթներից մեկը հենց այս պատառիկն է եւ հատկապես Ն-Ջ. գլուխների տարանջատում շունենալը:¹

Բ. Պատառիկներին վերաբերող երկրորդ հրապարակումը Հ. Աստուրյանի 1906-ին «Բազմավէպում» հրատարակած հոդվածն է²: Արեւմտյան Հայաստանում իր ճամփորդութեան ընթացքում տեսած մի քանի ձեռագրերի մասին պատմելուց հետո, հեղինակը հայտնում է, որ Մարաշում ձեռագրերից «...մեկուն կողքին, ներսի կողմը...» գտել է «...Եղիշէէն կտորներ, որոնք...» իրեն «...ձեռագրէն աւելի յարգի թուեցան, եւ առանց մեծի դժուարութեան» կարողացել է «ստանալ զանոնք...»: Այս պատառիկների ներկայումս ուր գտնվելն առայժմ հայտնի չէ: Հեղինակի «...կրցայ ստանալ զանոնք...» արտահայտությունից կարելի է եզրակացնել, որ վերցրել է այս պատառիկները: Պատառիկն ունի Եղիշեի Ա., Բ., Դ. եւ Ն. եղանակներից հատվածներ: Ինը մասի բաժանված չորս թերթ է: Գրությունը՝ եռասյուն: Գիրը՝ երկաթագիր: Տողերի քանակը ենթադրում է, որ 35 պետք է եղած լինի: Նյութը՝ հին թուղթ է: Թղթի հնությունից եւ գրության ձևից կարծում է, որ պատառիկը ԺԲ. դարի է: Հեղինակն այն համեմատել է Վենետիկի 1903 թվականի հրատարակության հետ:

Հաջորդ հրապարակումը Հայր Աբեղ Տայեանի՝ 1911-ին Վենետիկում հրատարակած «Եղիշէի չորս եղանակները հնագոյն գրչագրի մը մէջ» աշխատանքի հավելվածում առկա երկու պատառիկներն են³: Սրանցից առաջինը Մխիթարյան միաբանությունում շրջանակի մեջ առնված Եղիշեի Ե.-

¹ Ցավոք, ձեռքի տակ չունենեմ այս պատառիկի լուսանկարը, որ կարողանանք հնարավորին չափ ավելի տեղեկություններ փառել: Մանավանդ, որ Կոնիքերն ինքը Բբ. էջի վերձանության համար նշում է, թե «...10-րդ տողին համար՝ պէտք է կրկին անգամ համեմատել հատակոտորը, վասն զի գուցէ տառերէն մէկ ֆանին սխալ կարդացած ըլլամ»: Նույնպէս Բբ. էջի երկրորդ սյունակի 18-19 տողերը: Իսկ որոշ տեղերում է, կարծում ենք, սխալ է վերձանում: Ինչպէս օրինակ նույն Բբ. էջի վերջին տողում «զի մինչ» բառակապակցությունը կարդացել է «զի մի ոչ»:

² Աստուրյան Հ., Եղիշէի Պատմութեան նորագիտ հատակոտորներ, «Բազմավէպ», 1906, էջ 7-9, 59-64 եւ 110-114:

³ Հ. Ա. Տայեան, Եղիշէի չորս եղանակները հնագոյն գրչագրի մը մէջ, Վենետիկ, 1911:

րդ եղանակի սկիզբն է.

Գ. «Վկայութիւն Սրբոյն Վարդանա եւ Հմայեակա եւ Վահանա եւ Սահակա Հայոց Սպարապետաց եւ ամենայն սուրբ արանց ուր մեռան ի Քրիստոս, Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն սէր երկրաւորս եւ այնպէս աներկեղս առնէ զմարդիկ իբրեւ զանմարմինս Որպէս անտատին ի սկզբանէ ի տեսանել բազում տեղիս Սիրովն Աստուծոյ...»:

Գ. Իսկ երկրորդը Սեբաստիայում Ի. դարի սկզբում գտնված մի ճաշոցի պատառիկ-պահպանակների արտագրություն-վերծանություններ են¹: 1910-ական թվականներին այս պատառիկի բնօրինակը տեսել է Թ. Գուշակյանը եւ վերծանելով, ավելի ուշ, 1932-ին հրատարակել է «Սիօն» ամսագրում²: Պատառիկը հատվածներ ունի Եղիշեի Ե. եւ Ը. եղանակներից: Մագաղաթե շորս թերթեր են: Երկայուն, գիրն ուղղագիծ երկաթագիր: Մատենադարանում թվագրել են Ժ.-ԺԱ. դարերով: Ունի ուշագրավ տարրնթերցումներ: Բարեբախտաբար այս պատառիկը ներկայումս գտնվում է Մատենադարանի պատառիկների հավաքածուում եւ կրում է 1887 համարը³, ուստի սրա մասին կխոսենք Մատենադարանի պատառիկների հետ միասին:

Վերոհիշյալ շորս օրինակներով էլ սահմանափակվում են Տեր-Մինասյանի ձեռքի տակ եղած պատառիկները: Ինչպես արդեն նշել էինք, օգտագործված ձեռագրերից տարրեր, նոր ընթերցումներ շտանալով այս պատառիկներից, Տեր-Մինասյանը դրանք չի օգտագործել գիտական հրատարակությունում:

Ե. Վերջերս լույս տեսավ պրոֆ. Կ. Յուզբաշյանի կազմած Ա. Պետերբուրգյան հավաքածուների հայերեն ձեռագրերի ցուցակը⁴, որտեղ 423

¹ Հ. Ղ. Տայեանի հաղորդման համաձայն «...օրինակութիւն էր ամբողջ Հ. Ներսէս Սարգսեանի, որ ետեւի յիշատակարանին մէջ սա ծանօթութիւնը դրած է. «46 զլուխ բանիցն զաղափարեցան ի Մարգուան ի դպրատան Հայոց ի սեպ. 26-1844, ի բոլորգիր անբուական օրինակէ աղօթագրաց, որոյ ի կատարածին կայր եւ քաղաքի ի Մաշտոցէ»»: Տայեանի այս ծանօթությունը կապ չունի Եղիշեի պատառիկների հետ, քանի որ, ինչպես հետո պարզեցինք, պատառիկները միջին մեսրոպյան երկաթագրով գրված մագաղաթյա թերթեր են: Իսկ ծանօթությունը վերաբերում է տեխնոլոգիական հիշատակված «Աղօթագրքին» եւ «Մաշտոցին»:

² Թ. Գ. Գուշակեան, «Հատուկտորներ Եղիշեի Վարդանանց պատմութենէն», Սիօն, 1932, էջ 210-218; Ստորագրված՝ «Թ.Ե.Գ.»: Պատառիկների այս հրատարակության վերծանությունը միջնորդավորված չէ, ավելի խնամով է կատարված եւ նախընտրելի է:

³ Պատառիկը 1965-ին Մատենադարանին է նվիրաբերել Մատենադարանի մեծ բարերար Հարություն Հազարյանը, որի հավաքածուում այն կրում էր 16, 17 եւ 18 համարները:

⁴ К.Н. Юзбашян, «Армянские рукописи в петербургских собраниях», Каталог.-Православный «Палестинский сборник», Выпуск 104, С. Петербург-2005.

համարի ներքո (էջ 193) հեղինակը համոռոտ տեղեկություններ է տալիս Կ. Կոստանյանի շուրջ 50-ի հասնող պատառիկների հավաքածոյի մասին¹: Մասնավորեցնելով միայն C44⁴² համարը կրող «Եղիշեի վարդանանց պատմության» պատառիկը, ցուցակի հեղինակը ընդհանուր տվյալներ է հաղորդում պատառիկի չափերի մասին (այն է՝ 19.5x11.7), այնուհետև էջերի ու տողերի համարներով համապատասխանեցնում է պահպանված հատվածները Ե. Տեր-Մինասյանի գիտական հրատարակության հետ: Ցուցակից տեղեկանում ենք նաև, որ պատառիկների սույն հավաքածոյի զգալի մասը մագաղաթից է, եւ կան որոշ քանակությամբ մանրանկարներ: Ցավոք ձեռագրագիտական տվյալներն այսքանով սպառվում են: «Եղիշեի վարդանանց պատմության» Ս.Պետերբուրգյան պատառիկի մասին մանրամասներ մեզ հայտնի են դառնում «Հանդէս Ամսօրեայ» հայագիտական ուսումնաթերթում հրատարակված պրոֆ. Պարույր Մուրադյանի «Հայկական ձեռագրական հավաքածոները Ռուսաստանում եւ Եղիշէի պատմութեան մի նոր պատառիկ»ը վերտառությամբ հոդվածից եւ պահպանված հատվածի վերծանությունից²: Այն է՝ պատառիկն ունի երկու առանձին թերթեր, պահպանվել են հատվածներ Եղիշեի Գ եղանակի 117-124; 150-154 նախադասություններից: Գրությունը՝ անցման շրջանի ուղղագիծ երկաթագիր է, պահպանված տողերի քանակը՝ 21 (վերնամասից պակասում է 2-3 տող), նյութը՝ հաստ եւ ողորկ թուղթ է:

Եղիշեի «Վարդանանց պատերազմի» հատվածներ ունեցող պատառիկների մասին մեզ հայտնի վերջին հրատարակումները այսքանով սահմանափակվում են:

Մատենադարանի հայերեն պատառիկների հավաքածուում պահվում են ութ մագաղաթե երկաթագիր, եւ մեկ թղթե բոլորգիր, պատառիկներ: Սրանցից մեկը (վերը հիշված թիվ 1887-ը) ճառընտիրի մաս է, մեկը՝ (թիվ 354-ը) Յայամաուրքի, շորսը (հմրք. 1107; 1197; 1201; 1202-ը), ըստ ամենայնի, հենց պատմագրքի մասեր են: Մատենադարանի պատառիկ-պահպանակ ունեցող ձեռագրերից «Վարդանանց պատերազմի» մասունքներ ունեն են միայն երեքը՝ հայերեն հիմնական հավաքածուի ձեռ. թիվ 744-ը, թիվ 8985-ը եւ վերջերս

¹ Կ. Կոստանյանի Պատառիկների հավաքածուն ներկայումս գտնվում է Ռուսաստանի Գիտությունների Ակադեմիայի Արեւելագիտության ինստիտուտի Ս. Պետերբուրգյան բաժանմունքի գրադարանում եւ գետեղված է C43-C44 համարների ներքո:

² Պ. Մուրադյան, «Հայկական ձեռագրական հավաքածուները Ռուսաստանում եւ Եղիշէի պատմութեան մի նոր պատառիկ», Հանդէս Ամսօրեայ հայագիտական ուսումնաթերթ. Թիւ 1-12, 2006թ., էջ 54-62:

նվիրաբերված ձեռ. թիվ. 11140-ը: Բնկալ ձեռագրերից՝ առաջինը 1638-ին Աղճալդալայում գրված ժողովածու է (գրիչ եւ ստացող՝ Յովանէս), իսկ երկրորդը ժ.Ձ. դարում օրինակված ժամագիրք: Ձեռ. 11140-ը ժ.է. դարում օրինակված ժամագիրք է: Այսպիսով «Վարդանանց պատերազմի» մեզ հայտնի մասունք-պատառիկների տասներեք օրինակներից հրատարակվել են միայն հինգը:

Ստորեւ ներկայացնում ենք նորահայտ՝ ՄՄ 11140 ձեռագրի նկարագրությունը եւ պատառիկ-պահպանակի հնագրագիտական, բնագրագիտական եւ ժամանակագրական քննությունը:

Նկարագրություն Բնկալ ձեռագրի

Ժամագիրք: ժ.է դար: Վայրը՝ անհայտ: Գրիչ, ծաղկող, կազմող, ստացող՝ անհայտ: Թերթեր՝ 153: Պրակներ՝ Ա(10)+Բ-Ձ(12)+Է(11)+Ը-ԺԳ(12): Մեջքի կար՝ ունի սնթելերի երեք անցք (ա-գ), վերից վար մեկը մյուսից հեռու են՝ եզրից ա-ն 2սմ, ա-ից բ-ն՝ 3,5սմ, բ-ից գ-ն՝ 3,5սմ, գ-ից ներքեի եզրը՝ 2սմ: Նյութը՝ մագաղաթ: Մեծություն՝ 10x7x3,9: Գրություն՝ միասյուն:

Գրադաշտը՝ լայնքը - մեջքից՝ 1սմ, սյունակ՝ 6x3,7; լուսանցային գրության համար սյունակից՝ 0,8սմ, սյունակից եզրը՝ 2,3սմ: Բարձրությունը՝ վերին եզրից՝ 1սմ, սյունակ՝ 6սմ, սյունակից ներքեի եզրը՝ 2,5սմ: Ընդհանուր՝ 6x3,7: Տող՝ 15, (0,4սմx3,6սմ): Գիր՝ բոլորգիր, պրականիշերը՝ նոտր:

Գրության տող՝ 0,1սմ: Կազմ՝ կաշեկազմ, դրոշմազարդ տախտակ:

Մանրանկար՝ ճակատազարդ, լուսանցազարդ: Զարդագրեր՝ հանգուցագիր: Լուսանցազարդեր՝ կարմիր:

Գրչության հիշատակարան՝ 153բ «Զմեղապարտ գծագրողս յիշեսչիք ի մաքրափայլ յաղօթս ձեր միով հայր մեղայի. և դուք ///» (անավարտ):

Հիշատակարան հետադայի՝ 1ա. - «Վայ և եղևիկ յնվդոկացի Ակոբ դպրիս. և անարժան սպաս[ատրի] Ս[ուր]բ Քառասնիցն. որ վ[աս]ն ծովացեալ մեղաց իմոց.՝ զմիս մօր եւ շնորհալի որդեակն իմ տ[ի]ր[ա]ց[ո]ւ Աւետիքն ժանտացաւօք առ Ա[ստուա]ծ փոխեցաւ. և եղև փեսայ Ք[րիստոս]ի [ԻՁ. (26) ամաց] զոլով: .ՌՄԻԱ. (1772) թուին յուլիսի .ԺԳ. (14) օրն կրակի:

¹ Այսուհետ այն ձեռագիր մատյանների համար, որոնցից պատրաստվել են պահպանակներ, օգտագործելու ենք «մայր ձեռագիր» եզրը, իսկ այն ձեռագրերի համար, որոնց մեջ «մայր ձեռագրի» բերբերն օգտագործվել են որպես պահպանակներ, օգտագործելու ենք «բնկալ ձեռագիր» եզրը: «Բնկալ ձեռագիր» եզրը մեզ առաջարկել է Մատենադարանի գլխավոր ավանդապահ Գ. Տեր-Վարդանյանը, որի համար շնորհակալ ենք և կարծում ենք այն լավագույնս բնորոշում և համապատասխանում է իր իմաստին:

Ով զգիրքս վայելէ. և զ[զիրս] կարդ[ա]յ. Յօժար սրտիս Ողորմի տայ: Տէր Յիսուս իրեանն զըթայ. Ամէն. Հ[ա]յր մ[եր]:»:

բ. Հիշատակագրություններ դժվար ընթեռնելի՝ 77բ, 129ա:

Պահպանակ՝ Եղիշէ, «Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին»: Մասն՝ է եղանակից: Ժամանակը՝ ժԲ դար: Պահպանված հատվածները կարդալ՝ Բբ-Աա՝ 35-36; 42: Աբ-Բա՝ 55-56; 62-63: Դբ-Գա՝ 310-311; 314-316: Դա-Գբ՝ 317-319; 321-324:

Թերթեր՝ 4 (ԱԲ+ԳԴ), մեկական թերթեր երկայնքով ծալված: Կտրատված՝ ԱԲ-ն՝ ներքին եզրով, ԳԴ-ն՝ պահպանվել է միջին մասը: Պրականիշեր՝ շեն պահպանվել: Նյութ՝ մագաղաթ: Մեծություն՝ ԱԲ՝ 9x13,5; ԳԴ՝ 10x13,5: Գրություն՝ երկայուն: Գիր՝ մանր ուղղագիծ երկարագիր: Տող՝ Բբ-Աա; Աբ-Բա-Տ: Դբ-Դա; Դա; Գբ-10: Գրության տող՝ 0,7սմ: Սյունակների շափեր՝ Ա սյունակ՝ 7սմx[19սմ]; Բ սյունակ՝ կիսված 3,5սմ+[3,5սմ]x[19]սմ: Սյունակների միջև՝ 1,5 սմ:

Մայր ձեռագիրը տեսականորեն հնարավոր է վերականգնել միայն պատառիկի մանրամասն հնագրագիտական-ձեռագրագիտական քննությամբ: Վերականգնելով մայր ձեռագրի պատկերը՝ թերեւս հնարավոր կլինի պարզել՝ պահպանակը Պատմագրքի, թե ճառընտիրի մաս է:

Համեմատության համար օգտագործել ենք թե՛ Երվանդ Տեր-Մինասյանի քննությամբ հրատարակված 1957 թ.-ի հրատարակությունը, եւ թե՛ «Մատենագիրք Հայոց» մատենաշարով հրատարակված նույնի վերահրատարակությունը¹: Վերջինս համեմատությունների համար բավական դյուրություն է ստեղծում, քանի որ յուրաքանչյուր եղանակի ներսում նախադասությունները համարակալված են: Պատառիկ-պահպանակի մեր վերծանության մեջ օգտագործել ենք թե՛ այդ համարակալումը, եւ թե՛ տարրընթերցումները²:

Մայր ձեռագրի գրության դաշտի շափերը վերականգնել ենք՝ նկատի առնելով այն հանգամանքը, որ պահպանակներ Ա.-Բ.-ում պահպանվել են ձեռագրի ներքին լուսանցքի մասերը: Սա նշանակում է, թե Ա. եւ Բ. պահպանակների առաջին սյունակները վերջանում են, եւ պակասող հատվածները երկուսում էլ կարող են զետեղվել միայն բ. սյունակների վերելում: Պակասող հատվածների նիշերի քանակը հաշվել ենք «Վարդանանց

¹ Տե՛ս էջ 227, ծնթ. 4:

² Թե բնագիրը եւ թե տարընթերցումները երկու հրատարակություններում էլ՝ երկրորդը առաջինի հետ, ստուգել ենք: Ի պատիվ «Մատենագիրք Հայոց» մատենաշարի պատրաստողների, պետք է ասել, որ բնագիրը բավական բարեխղճորեն է վերահրատարակվել:

պատերազմի» գիտական հրատարակությունում, համադրելով այս տվյալը մեկ տողում գրերի առավելագույն քանակի հետ՝ պարզել ենք, որ պահպանակներում տողերի քանակը կարող էին լինել¹

էջերում սյունակից սյունակ Պահպանակի էջերը	Գրերի քանակը	Տողեր՝ ենթադրելի և պահպանված	տողեր
ԲԲ-Աա.	645	32+ 8	40
Աբ-Բա.	451	21+ 8	29

Այսօրինակ հաշվումներում հնարավոր է վրիպել առավելագույնը 1-2 տողի չափով: Սակայն տողերի քանակի այսպիսի մեծ տարբերությունը (29-40՝ 11 տող) միայն կարող է նշանակել, որ պահպանակների բնագիրը հատվածների պակաս ունի: Գիտական հրատարակության համար օգտագործված եւ ոչ մի ձեռագիր բնագրային այսպիսի տարբերություն չունի, որով եւ այս պահպանակը ավելի է կարելուովում:

Փորձենք Ա.-Բ. պահպանակների բնագրային քննությամբ պարզել, թե որ հատվածներն են պակասում պահպանակի այս էջերում:

Պահպանակի ԲԲ.-Աա. էջում չի պահպանվել 36-րդ նախադասության «...հա[նզչել եւ տեսանէր...]» մասից մինչեւ 42-րդ նախադասության «...[Յայնժամ ծշմարտեալ գիտաց մոզպետն. Եթէ ոչ այլ ընդ այլոյ տեսանէր որ երեւցան նմա, այլ ի ևոցուց յանձանց]» սյունակից սյունակ հատվածը: Գիտական հրատարակության տարբերություններով հնարավոր է դուրս հանել միայն 36-ից «գի», 37-ից «Ձի՛նչ է այս մեծ սքանչելիս.», 38-ից «լուսոյ», 39-ից «իմ», «վասն կեշտիս այսորիկ», մեկ «եւ» եւ մեկ «իւնձ», իսկ 42-ից «նմա» բառերն ու բառակապակցությունները: Այս հատվածների դուրս հանելը մեծ տարբերություն չի տալիս, եւ տողերի քանակը նվազում է մինչեւ 29-ի:

Պահպանակի Աբ.-Բա. էջում չի պահպանվել 56-րդ նախադասության «...գ[այս ամենայն բանս...]» մասից մինչեւ 62-րդ նախադասության «[...ոչ եւ]ս...» սյունակից սյունակ հատվածը: Գիտական հրատարակության տարբերություններով հնարավոր է դուրս հանել միայն 56-ի կամ «ամենայն» կամ «բանս» բառերը, որոնք տողերի քանակը երկու էջերում էլ

¹ Պահպանակներում ա. սյունակի վերջին գրից մինչեւ բ. սյունակի առաջին գիրը ընդհանուր առմամբ պակասում է Բ.-ում 645 գիր, իսկ Ա.-ում 451 գիր: Պակասող հատվածների գրերի այս տվյալները բաժանել ենք մեկ տողում առավելագույն գրերի քանակին, այն է 20-ի, եւ պարզել, որ Բ.-ում տողերի ընդհանուր քանակը կարող էր լինել 32, իսկ Ա.-ում 21: Նույն հաշվումները կատարելով Գ. եւ Դ. պահպանակների հետ, պարզվում է, որ պակասող տողերի քանակը 16-ական է:

համապատասխանեցնելու ոչ մի հնարավորություն չեն տալիս:

Այս էջում ուշագրավ է նաեւ այն, որ ա. սյունակում պահպանված առաջին տողի՝ 55-րդ նախադասության, «ւք արդ. փոք[քր համարիմք մեք]» (նկ.-ը ստորեւ) հատվածի առաջին երկու «ւք» գիրը, չի կարող «արդ. փոքր» բառերին նախորդել: Գիտական հրատարակությունում այս բառերին նախորդում է «վաստակոց մերոց» բառերը: Նույնի տարընթերցումներով «ւք» վերջավորությունը չի խմբագրվում:¹ Վերահիշյալ «վաստակոց մերոց» բառերն առհասարակ այլ ընթերցում չունեն:



Նկ-ում «ւք արդ փո[քր]» հատվածը, Պահպանակ Ար-Բա:

Պահպանակի բնագիրն ավելի հետաքրքիր է դառնում հաջորդող հատվածներում: Վերծանության տարընթերցումների համեմատությունից պարզվում է, որ պահպանված հատվածներում բնագրային տարբերությունները ինքնատիպ են եւ այլ ձեռագրերից տարբեր: Համեմատության համար առդիր ներկայացնենք գիտական հրատարակության (ԳՀ) տեքստը՝ նախադասությունների համարներով ու տարընթերցումներով, ապա՝ պահպանակի (Պհպ.) համապատասխան հատվածը.

ԳՀ-55. «...արդ փոքր համարիմք մեք² զչարչարանս³ զայս առ սէր փոխարինին,⁴ զոր էարկ⁵ առ⁶ ազգս մարդկան»:

Պհպ.-55. «...արդ փո[քր համարիմք մեք] զչարչարա[նս զայս առ] սէր փոխարի[նին, զոր էարկ] առ ազգս մար[դկան]»:

Այնուհետեւ շարունակությունը բոլորովին տարբեր է:

¹ Նախորդող տեխտը «ւք» վերծանության փոխարեն այլ՝ «ոք», «դք», «գք» կամ այլ ընթերցումներ չի տալիս:

² > մեք; մեզ] մեք

³ զչարչարանքս; զչարչարանս

⁴ առ միոյ փոխարէնին

⁵ զոր արկ նա; էարկ նա; էարկն; արկ

⁶ նա+ առ

ԳՀ-55. «Իբրև լուսա գայս ամենայն¹ բանս² մոգպետն ի դահնապետէ³ անտի, խոովեցաւ, պղտորեցաւ⁴ ի միտս իւր, եւ հատաւ քուն յաչաց նորա գրագում գիշերս»:

Պհպ.-55. «...բա]զումս խաւսե[ցաւ վասն հաւատ]ոյն որ ի քս[...պա]տմեցին մոգ[պետին...]⁵»:⁶

Մինչ պահպանակի Աբ.-Բա. էջի ա. սյունակի առաջին տողի «Էք» բառավերջին վերստին դառնալը, ասենք, որ Բբ.-Աա. երեսի վերջից, այն է 44-ի «երթ[այր ի վանս իւր...» մասից 55-րդ նախադասութեան «արդ. փոքր» բառերի միջև պակասող հատվածում գրերի քանակը 2431 է, որ տողում տեղավորվող գրերի հնարավոր առավելագույն (20) քանակին բաժանելով ստանում ենք 121 տող: Ասել է, թե մեկ թերթի ա. երեսի վերջից բ. երես բացակայում է 121 տող, իսկ երկրորդ երեսի ա. սյունակի 8 տողի հետ՝ 129 տող: Մշո Տոնականը՝ հայերեն ամենամեծ ճառընտիրը (70,25x50,25), եռասյուն է, յուրաքանչյուր սյունակում ունի 45 տող, մեկ տողում մինչև 18 գիր, մեկ էջում 4860 գիր⁷: Եթե ընդունենք, որ պահպանակը ճառընտիր է, ապա Բբ.-Աա. էջում սյունակից սյունակ 40 տողերը բաժանելով 129-ի կպարզվի, որ մայր ձեռագիրը քառասյուն է եղել, իսկ գուցե եւ ավելի: Միեւնույն ժամանակ Դբ.-Գա. եւ Գբ.-Դա. էջերի պակասող տողերի հաշվարկը թույլ չի տալիս այսպիսի փորձերի դիմել: Այս համեմատությունը մեկ անգամ եւս հաստատում է, թե պահպանակի բնագիրը մի սովոր հատված չի ունեցել:

Գիտական հրատարակությունում փորձել ենք գտնել պահպանակի «արդ. փոքր» բառերին նախորդող «Էք»-ով վերջացող եւ «արդ» բառով սկսվող բառակապակցություն, պարզելու համար, թե արդյո՞ք գրչական վրիպակի հետ գործ ունենք: Սակայն մեր պրպտումները արդյունք չտվեցին: Փնտրեցինք այս հատվածի տարբերակներում եւ չգտանք ոչ մի ընթերցում, որ վերջանար «Էք» վերջավորությամբ եւ հաջորդեր «արդ» բառը: Վերոնշյալ 44-55 նախադասություններում առանց հաջորդող «արդ» բառի «Էք»-ով վերջավորություն ունեն շորս բառեր: Որոնք են՝

¹ > ամենայն

² > բանս

³ ի դահնէ

⁴ խոովեցաւ եւ պղտորեցաւ

⁵ «Իբրև լուսա... նորա գրագում գիշերս»] «...բա]զումս խաւսե[ցաւ վասն հաւատ]ոյն որ ի քս[...պա]տմեցին մոգ[պետին...]:»

⁶ Զպահպանված հատվածներում, ուղիղ փակագծերից ներս տեխտի մեր վերծանությունը ուղիղ գրերով են, ընկալյալ բնագրի միջոցով վերականգնվածները՝ շեղ:

⁷ Ա. Մաթևոսյան, Ե՞րբ եւ որտե՞ղ է գրվել Մշո Տոնական-ճառընտիրը, Բանբեր Մատենադարանի (ԲՄ), քիվ 9, էջ 138, Երևան. 1969: Հմմտ. ՄՄ ձեռ. քիվ 7729:

50-ում «...վշտալուս...» եւ «... ժառանգեսցոմ» (վերջինս նախադասութեան վերջում):

51-ում «...առ նոբամ» (նախադասութեան վերջում):

54-ում «...կամամ ...» (նախադասութեան մեջ):

Համոզված կարելի է ասել, որ պահպանակի բնագիրը 44-55 նախադասութիւններէ միջեւ չի ունեցել մի սովոր հատված: Ծիշտ այսպես պահպանակը Բբ.-Աա. էջում ամբողջութեամբ բացակայում է 43-րդ նախադասութիւնը: Իսկ 44-ից պահպանվել է միայն.

44. «եւ առաւել [զահի հարաւ ի մ]եծ սփանչել[եացն, եւ դող]ային ամենա[յն մարմինքն] նորա[■], եւ թ[մբբեալ կիսամա]հ լիներ ի վեր[այ տանեացն մի]նչեւ ցառա[ւաւտն. եւ յար]ուցեալ երթ[այր ի վանս իւր...]:»

Նույնը ԳԶ-ում

44. «եւ փանգի անհնարին շարժեցաւ¹ ի մեծ սփանչելեացն, եւ դողացին² ամենայն մարմինքն[■] ³, եւ թմբբեալ⁴ կիսամեո⁵ լիներ⁶ ի վերայ տանեացն մինչեւ յառաւաւտն.⁷ եւ ի ծագել լուսոյն⁸ իբրեւ զբազմարեայ հիւանդ յարուցեալ երթ[այր ի վանս իւր]⁹, այլ եւ ոչ ումեք իշխեաց ամենեւին պատմել զոր ինչ ետեսն»:]

Ակնհայտ է, որ պահպանակում նախադասութիւններն ավելի սեղմ են: Ի մասնավորի ԳԶ-ում երկու խոշոր տարբերութիւն կա.

– «եւ փանգի անհնարին շարժեցաւ» փոխարեն «եւ առաւել [զահի հարաւ]»

– «մինչեւ յառաւաւտն. եւ ի ծագել լուսոյն իբրեւ զբազմարեայ հիւանդ յարուցեալ երթայր» փոխարեն «մինչեւ ցառա[ւաւտն. եւ յար]ուցեալ երթայր»

Ուղիղ փակագծերում տեքստը վերականգնել ենք ամենահավանական համարած բառակապակցութեամբ, որ կարող էր մեկ տող[—] 20 գիր սահմանագիծը չհատել: Գիտական հրատարակութեան տեքստով նույն հատվածը հնարավոր չէր մեկ տողի վրա տեղավորել:

Այսպիսով Ա.-Բ. պահպանակները մեզ հնարավորութիւն չեն տալիս

¹ > եւ; եւ փանգի անհնարին շարժեցաւ] եւ առաւել [զահի հարաւ]

² դողացին; դողացան] եւ դողային; դողացեալ

³ մարմինքն նորա] մարմինք; մարմինք նորա

⁴ թմբեալ

⁵ կիսամահ

⁶ լիներ

⁷ յառաւաւտն; ցառաւտն, ցառաւաւտն

⁸ եւ ընդ ծագեալ լուսոյն; եւ ընդ ծագել; արեւուն] լուսոյն

⁹ ի վանս իւր երթայր

ճշտելու մայր ձեռագրի իրական շափերը: Ավելին՝ կատարված հետազոտության արդյունքում պարզվում է, որ բացակայում է 43-րդ նախադասությունը, 44-րդ նախադասությունը անհամեմատ սեղմ է, իսկ 44-55 նախադասությունների միջև պակասող հատվածներ կան:

Ինչ վերաբերում է Գ-Դ. պահպանակներին, ապա սրանց ուսումնասիրության արդյունքում ստացած 15-ական տողերի եւ Գա.-Գբ. դարձերեսի 12 տողերի պակասը թույլ է տալիս մոտավորապես վերականգնել մայր ձեռագրի շափերը: Այսպիսով, տողերի պատկերը Գ. եւ Դ. պահպանակներում հետեւյալն է.

էջերում սյունակից սյունակ Պահպանակի էջերը	Գրերի քանակը	Տողեր ենթադրելի եւ պահպանված	տողեր
Գբ-Գա	308	15+ 10	25
Գա.-Գբ. դարձերես	252	12+ 10	22
Գբ-Գա	317	15+ 10	25

Պահպանակի Դբ.-Գա. էջում ա.-ից բ. սյունակ անցումում չի պահպանվել 311-րդ նախադասության «զընկերակի[ցսն իր եւ ասէր...» հատվածից մինչեւ 314-ի «[...յամենայն]է...» բառը: Գիտական հրատարակության տարընթերցումներով դուրս կարող են գալ միայն 311-ում «իւր» բառը, իսկ 314-ում «զայս» բառը:

Պահպանակի Գա.-Գբ. էջից էջ անցումում չի պահպանվել 316-րդ նախադասության «բարբառ ի վերուստ» մասից մինչեւ 319-ի «[ընդ Ստեփան]ոսի» մասը: Գիտական հրատարակության տարընթերցումներով կարող են դուրս գալ 316-ում «ծեր» բառը, 317-ում «Քրիստոսի» եւ «իսկ» բառերը:

Պահպանակի Գբ.-Դա. էջում ա.-ից բ. սյունակից սյունակ անցումում չի պահպանվել 319-րդ նախադասության «ցՅովսէ[փ. Մատիր,...]» մասից մինչեւ 321-ի «եւ միանգամայն...» մասը: Տարընթերցումներով դուրս կարող է գալ միայն 320-ի «Յի[սուս]» բառը:

Տարընթերցումներով բնագրի տարբեր օրինակներում պակասող այս բառերը մեկ տողի տարբերություն անգամ չեն տալիս: Ընդ որում ոչ գիտական հրատարակության բնագիրը եւ ոչ էլ տարընթերցումները բնագրի համառոտման կամ հավելման էական այլ ընթերցումներ չեն տալիս:

Մեզ մնում է ապավինել միայն պահպանակի Գա.-Գբ. էջից էջ անցումում

պակասող 12 տողին ավելացնել պահպանված 10 տողերը եւ ընդունել, որ մայր ձեռագիրը ունեցել է 22 տող, ըստ այդմ համարել, որ բնագիրը երկուսից երեք տողի (40-60 գրի) տարբերություն ունի, իսկ գրության դաշտի բարձրությունը եղել է 23սմ:¹

Փորձենք վերջին այս հաշվումը ստուգել միջնադարում ճարտարապետության մեջ ընդունված երկրաչափական մի կանոնով, որով անկախ մասշտաբից, ցանկացած տարածություն հնարավոր է բաժանել ներդաշնակորեն համաչափ ավելի փոքր մասերի:² Այս կանոնի էությունը հետևյալն է. գրության դաշտի բարձրությունը հավասար է գրության նյութի լայնությանը (մագաղաթին կամ թղթին) կողմերի 2:3 համամասնությամբ: Այս կանոնի հիմնական պայմանն է՝ թերթի լայնության 1/9-րդ մասով ստեղծվում է ներքին լուսանցքը, 2/9-րդով՝ արտաքին լուսանցքը, թերթի բարձրության 1/9-րդ մասով ստեղծվում է վերին լուսանցքը, 2/9-ով՝ ստորինը:

Կանոնն օգտագործելու համար բարեբախտաբար պահպանակներում պահպանվել են սյունակների լայնքի ու միջին լուսանցքի (սյունակների միջև եղած տարածության) չափերը: Սյունակներից յուրաքանչյուրն ունի 7սմ լայնք, իսկ միջին լուսանցքի լայնքը 1,5սմ է, ուրեմն եւ գրության դաշտի լայնքը 15,5սմ է ($2 \times 7 + 1,5 = 15,5$): Իսկ քանի որ գրության դաշտի լայնքը բարձրության 2:3 մասն է, ուրեմն գրության դաշտի բարձրությունը պետք է լինի 23,25 սմ ($(15,5 : 2) \times 3 = 23,25$): Ինչը որ, շնչին տարբերությամբ, համապատասխանում է մեր գրերի քանակով գրության դաշտը ճշտելու վերջին փորձին: Այսպիսով, գրության դաշտի չափերն են $15,5 \times 23,5$: Վերոհիշյալ կանոնի կիրառմամբ վերականգնվում են նաեւ ձեռագրի իրական չափերը, այն է 23×35 :

Մատենադարանում պահվում են շուրջ հարյուր երկաթագիր ձեռագրեր: Սրանցից Ավետարաններ կամ Ավետարանի մասեր են 61-ը, նոր կտակարանի մասեր՝ երկուսը, երեքական ճաշոց, ճառք եւ Մեկնություններ, երկու Մաշտոց, այնուհետեւ մեկական ժողովածո, Տիմոթեոս Կուզի «Հակաճառություն», Գրիգոր Նարեկացու «Մատյան Ողբերգության», Կյուրեղ Երուսաղեմացու

¹ 22-ը գրության տողերի համար, իսկ 1սմ-ը գրության դաշտի տողատման վերին ննչագիծը, որ գրության տող չի դառնում, այլ մնում է իբրև վերին սահմանագիծ, ի տարբերություն ստորին ննչագծի, որ գրության տող է դառնում:

² Л. И. Киселева, Западно-европейская книга XIV-XV вв., Ленинград, 1985, стр. 34.

«Կոչումն ընծայության»¹ եւ Մշո ճառընտիրը: Մշո ճառընտիրը, ինչպես արդեն նշել էինք, ունի 45 տող, եւ այն իր տեսակի մեջ չափերով միակ եւ ամենամեծ հայերեն ձեռագիրն է (70,5x55): Ստորեւ ներկայացված ցանկը վերը թվարկված ձեռագրերի տողերի նվազագույն եւ առավելագույն քանակների եւ չափերի պարզ համադրումն է: Անշուշտ ձեռագրագիտական, եւ ի մասնավորի հնագրագիտական բոլոր տվյալների հանրագումարով միայն կարելի է սպառիչ եզրակացություններ անել: Ձեռագրի չափերից կարող ենք պատկերացում կազմել՝ թե մատյանը «առտնին», «առձեռն», «ծիսական» թե այլ նպատակների համար է օրինակվել:

	տողեր	Ձև. նվազ չափերը	Ձև. առավ. չափերը
Աւետարան	15-25	14,3x10,3	42x32,5
Գործք եւ բողոքք առաքելոց	15	31x24	--
Թողքք Պօղոսի առաքելոյն	17	18,5x12,5	--
Ժողովածու	27-33	21,3x16,3	--
«Կոչումն ընծայութեան»	21	27x23	--
Ճաշոցք	17-21	21x16	39x24,5
Ճառք	20-25	25,5x18,5	--
Մեկնութիւնք	21-30	28x21,7	37,5x25,5
Մաշտոցք	17-24	25,5x17	40,25
«Մատեան Ողբերգութեան»	22	22,5x15	--

Մայր ձեռագրի վերականգնված 35x23 չափերից կարող ենք միայն ենթադրել, որ այն ավելի շուտ ճառընտիրի մաս է, քան թե Պատմագրքի:²

Պահպանակի գրության ժամանակը

Պահպանակի գիրը կանոնավոր մանր ուղղագիծ երկաթագիր է, գրի բարձրությունը՝ 0,3սմ, ստեղնի լայնքը՝ 0,1սմ: Ուշագրավ են թե գլխագրերը՝

¹ Ս. Քոլանջյանի վերականգնած օրինակը: Տե՛ս Ս. Քոլանջեան, Նորահայտ պատառիկներ Կիւեղ երուսաղեմացու Թ. դարի գրչագրից, «Բանբեր Մատենադարանի», 1960, թիվ 5, էջ 201:

² Կարելի է անշուշտ պարզել նաև մայր ձեռագրի քերքերի բանակը, սակայն մեզ համար պարզ չէ, քե եղիչի «Վարդանանց պատերազմի» որ խմբագրության հետ գործ ունենի:

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ

Եւ թե Շ, Չ, Պ, Ջ, գրերը՝

Հ Չ Պ Ջ

Պահպանակի ժամանակը ճշտելու ամենահեշտ ճանապարհն, անշուշտ, պահպանված գրերը թվակիր երկաթագիր ձեռագրերի գրչության հետ համեմատելն է: Իսկ պահպանվել են այբուբենի գրեթե բոլոր տառերը: Պակասում են միայն «ժ»ն եւ «ն»ն: «Հայկական հնագրության արժույթ» գրերի ժամանակագրական աղյուսակում՝ պահպանակի գրերի հետ արտաքին նմանությամբ ամենամոտ ձեռագրերը երկուսն են, մեկը 1173-ին Դրազարկում (Կիլիկիա) գրչագրված Մատենադարանի թիվ 3845 «Թուղթք Պողոսի» մատյանն է (ՄՄ3845)², իսկ մյուսը՝ 1174-ին Եդեսիայում գրչագրված Չեսթեր Բիթի գրադարանի թիվ 554 Ավետարանը (ՉԲ554)³: Անշուշտ կարելի է այսքանով հարցը պարզված համարել, եւ ասել, որ պահպանակը, Կիլիկյան կամ Եդեսիայի գրչության օջախների միջավայրում օրինակված, ժԲ դարի ձեռագիր է: Սակայն, ինչպես ցանկացած գիտության, այնպես էլ հնագրագիտության հիմնական առաքելությունը առաջադրված խնդիրը հնարավորինս պարզաբանելն ու իսկությանը մոտենալն է:

Ամուր հնագրագիտական-ձեռագրագիտական հետազոտությամբ ստեղծված հենքը թույլ կտա բնագրագիտական-աղբյուրագիտական ուսումնասիրություններին լինել առավել տրամաբանված եւ փաստարկված: Ուստի շարունակելով պետք է նկատենք, որ նույն գրչի ձեռքի տակ անգամ, հաճախ միեւնույն էջում գրերը կարող են այնպես տարբերվել գծագրությամբ, որ եթե ուրիշ մի էջում լինեք, պիտի ենթադրեինք, թե այլ գրչի գիր է: Այդպիսի գրեր

¹ M. Stone, D. Kouymjian, H. Lehman, Album of Armenian paleography, Aarhus, Danmark, 2002, pg. 199-201, 516, plate 41, 42.

² Գ. Յովսէփեան, Յիշատակարանք ձեռագրաց, Հատոր Ա., Անթիլիաս, 1951, էջ 449-450: Ա. Մաքեուսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, Երևան, 1988, էջ 209-210:

³ Der-Nersessian, S. 1958, The Chester Beatty Library. A Catalogue of the Armenian Manuscripts, Dublin, pg.12-14. Ա. Մաքեուսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, Երևան, 1988, էջ 217: Ա. Մաքեուսյանը հիշատակարանը փաղել է ՄՄ 6273 ձեռագրից, Փիրղալեմյան, Նշխարք, էջ 26-27:

են պահպանակում մի քանի անգամ տարբեր դիրքերում պահպանված «Ձ» եւ «Ջ» գրերը, որոնք մեկ նման են Ավետարանի, մեկ՝ «Թուղթք Պողոսի» մատյանի գրին (տե՛ս նկ.1): Հստակ տարբերվում են «Յ» գիրը: Չնայած պիտի ասել, որ մնացած բոլոր գրերը, մանր, ոչ էական բացառություններով, մեկը մյուսին նման են: Այսուհանդերձ մեկ-երկու տվյալի համընկումով կամ տարբերությամբ չի կարելի վստահ ենթադրություններ անել: Միայն հնագրական տվյալների համադրմամբ առավելագույն համընկումները կարող են թույլ տալ ճշտելու պահպանակի գրչության մոտավոր ժամանակը, պարզաբանել գրչության կենտրոնը եւ նույնիսկ ճշտել գրչի անունը:

Ամփոփելով ստորեւ ներկայացնում ենք պահպանակի մայր ձեռագրի վերականգնված նկարագրությունը եւ բնագրային կարեւոր ընթերցումները:

Մայր ձեռագիրը

Ճառընտիր՝: Եղիշէ, «Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին»:

Մասն՝ է եղանակից: Ժամանակ՝ ժԲ դար: Վայր՝ [Կիլիկիա ?]:

Պահպանված հատվածները կարդալ՝ Բբ-Աա՝ 35-36; 42: Աբ-Բա՝ 55-56; 62-63: Դբ-Գա՝ 310-311; 314-316: Դա-Գբ՝ 317-319; 321-324:

Թերթեր՝ 4 (ԱԲ+ԳԴ), մեկական թերթեր երկայնքով ծալված: Չափեր՝ [23x35]: Կտրատված՝ ԱԲ-ն՝ ներքին եզրով, ԳԴ-ն՝ պահպանվել է միջին մասը: Պրակահիշեր՝ չեն պահպանվել: Նյութը՝ մագաղաթ: Ներկա չափերը՝ ԱԲ-ն 9x13,5; ԳԴ-ն 10x13,5: Գրություն՝ երկայուն:

Գրի դաշտ՝ (վերականգնված) [23,5x15,5]: Տող՝ Բբ-Աա; Աբ-Բա-8: Դբ-Գա; Դա; Գբ-10: Գիր՝ մանր ուղղագիծ երկաթագիր: Գրության տող՝ 0,7սմ: Գեղարվեստական հարդարանք՝ չիք:

Սյունակների չափերը՝ Ա սյունակ՝ 7սմx[23,5սմ]; Բ սյունակ՝ կիսված 3,5սմ+[3,5սմ]x[23,5]սմ: Սյունակների միջեւ՝ 1,5 սմ:

Տող՝ [22]: ԱԲ-ում՝ 8; ԳԴ-ում՝ 10: Երկարությունը՝ [15,5]: Տողի բարձրությունը՝ 1սմ: Տողամիջյան հեռավորություն՝ 0,7սմ: Տողատման ձեւը՝ ճնշմամբ:

Գրի բարձրությունը՝ 0,3սմ: Ստեղնի լայնքը՝ 0,1սմ, ստեղնի գրության տողի հետ անկյունը՝ 56°: Գրերի միջին քանակը տողի վրա՝ 17-20: Գրերի քանակը էջում 2x(20x22)=880:

Բնագրագիտական

Երվանդ Տեր-Մինասյանի քննական բնագրում օգտագործված ձեռագրերը պակասող մասեր ունեն Եղիշեի «Վարդանանց պատերազմի» հետեւյալ հատվածներում:

- Ճառընտիրներում՝ Ե. եղանակի 4-44; 86-109 նախադասությունները:
 Զ. եղանակում 1-104; 1-107; 1-167; 112-156,
 Է. եղանակում 214-283,
 Ինչպես նաև Զ. 167-է. 20 նախադասությունները:
 Պատմագրքերում՝ Ե. եղանակի 80-88 եւ
 Զ. եղանակում 19-24 նախադասությունները:

ՄՄ 11140 ձեռագրի պահպանակներում բացակայում են՝

- է. եղանակի 44-55 նախադասությունների միջեւ մի ստվար հատված,
- 43-րդ նախադասությունը բացակայում է ամբողջությամբ:

Պահպանակի էական, քննական բնագրում շհանդիպող ընթերցումներից են նախադասություններ 44-ի եւ 55-ի տարընթերցումները:

Շատ էական է միայն պահպանակում հանդիպող՝ «եւ միս եպիսկոպոսն Թագիկ անուն յԱսորեստանի» հատվածում «Թագիկ» ընթերցումը (նախ. 322):¹

Եղիշեի «Վարդանանց պատերազմի» 1957թ-ի գիտական հրատարակությունից հետո նոր բնագրագիտական-աղբյուրագիտական աշխատանքներ չեն կատարվել, կամ գոնե մեզ հայտնի չեն: Չնայած որ շատ են Եղիշեի «Վարդանանց պատերազմի» գեղարվեստական, աստվածաբանական, կրոնադավանաբանական եւ այլ հարցերի մասին պատմաքաղաքական վերլուծություններով հրապարակումները:

Հայ ժողովրդի կենսամիլիտոսոփայության վրա հսկայական ազդեցություն թողած Եղիշեի երկը, որով դաստիարակվել, ոգեշնչվել եւ ազատագրական սրբազան պատերազմի են նետվել բազմաթիվ սերունդներ, այսօր, այնուամենայնիվ, լուրջ քննության, վերարժեւորման կարիք ունի: Երկրորդելով Եր. Տեր-Մինասյանին՝ ասենք, որ Եղիշեի «Վարդանանց պատերազմի» սկզբնագիր

¹ Գիտական հրատարակությունում կան «Թաքիկ» եւ «Թողիկ» ընթերցումները: Համաձայն Հր. Անաոյանի «Հայոց անձնանունների բառարան»ի Ե. դարի երկու Թաքիկ է հայտնի, որոնցից՝

ա. «Թաքիկ, աշակերտ Ս. Մեսրոպի, մասնակցեց նրա հուղարկավորության եւ քաղման հանդեսին (439թ.): Եղավ կրոնավոր Օշականի նորակերտ տանարում: - Խոր. Գ. կէ. - գրված Թաղիկ՝ Կոր. 27. Փ. Կոր. 32, 34: - Չամչ. Ա. 534 եւ Ազգապ. 393 նույն են համարում»:

բ. «Թաքիկ եպիսկոպոս Բասենի, մասնակցեց Արտաշատի ժողովին (449թ.)՝ պատասխանելու համար Միհրնեսեհի նամակին: Ղեկնարկներից առաջ հշվեց Պարսկաստան եւ նահատակվեց Ասորեստանում, այն է Խուժաստան (454թ.): - Եղիշ. 22, 139. Փարպ. Իգ., խբ., Վրդ. Իէ., - Թաղիկ՝ Յայսմ. Յուլ. 31 - սեռ. Թաքիկ՝ Փարպ. Խբ.»:

Տե՛ս Հր. Անաոյան, Հայոց անձնանունների բառարան, Երևան. 1944:

օրինակը վերականգնելու համար, հետագա խմբագրումների, հավելումների ու համառոտումների տրամաբանությունն ու պատճառները, հնարավոր ներմուծումների նպատակն ու ոճը պարզելը, պատմագրքի բնագրային-խմբագրական շերտերը ու դրանց կատարման ժամանակը ճշտելը երկի բնագրագիտական-աղբյուրագիտական քննության նպատակը պետք է լինի: Իսկ երկի հնագույն օրինակներից մնացած մասունքների՝ պատառիկ-պահպանակների ուսումնասիրությունը այս աշխատանքներին կարելուր նպաստ կարող են բերել:

Մինչ բնագրագիտական-աղբյուրագիտական այդօրինակ մի աշխատանքի անցնելը՝ առաջիկայում լույս կրնձայենք Եղիշեի «Վարդանանց պատերազմի» եւս 7 պատառիկների վերծանություններ:

Պահպանակ Բբ-Աա. 35-36, 42

	1	[նզչել, եւ տեսանէր զանձ
	2	ն իւրաքանչիւր կապելո
	3	ցն, զի իբրեւ զկանթեղ ան
	4	շիջանելի վառեալ բորբ
	5	ոքէր: 37 Ջահի մեծի հարաւ, եւ
	6	ասէր ընդ միտս իւր... 40
	7	եւ ոչ կարէր
	8	համարէն կալ ի վերայ իրացն
	9	երեւման: 41 եւ մինչդեռ յայսմ
	10	մտաց խորհրդի էր, դարձեալ
	11	սուրբքն յիւրաքանչիւր իշ
	12	տեկացն կանգնեցան կացին
	13	ի սովորական պաշտամանն:
34 «...նա եւ մեր զահի հարեալ եմք եւ յոյժ երկնչիմք, յորժամ տեսանեմք զայնպիսի անհնարին նեղութիւնս»:	29 30 31 32	42 Յայնժամ ճշմարտեալ զիտաց մոզպետն. եթէ ոչ այլ ընդ այլոյ տեսանէր որ երեւեց աւն նմա, այլ ի նոցունց յանձանց]
34 ն ԱՌ ԱԾ ԵՒ ԶՓԱՌԱԲԱՆՈՒ ԹԻՒՆՆ՝ 35 ԻԲՐԵՒ ԼՈՒԱԻ ԶԱ ՅՍ ՄՈԳՊԵՏՆ, ՅԱՐՈՒՅԵԱԼ ԵՐԹԱՅՐ ԻՆՔՆԻՆ Ի ՄԵՋ ԳԻ ՇԵՐԻՆ ՅԵՐԴ ԲԱՆԴԻՆ՝: 36 ԵՒ Հ ԱՅԵՅԵԱԼ Ի ՆԵՐՔՍ ԸՆԴ ՄՈՒԹ ԳԻՇԵՐՈՅՆ՝, ԱՅՆ ԻՆՉ ԼԻՆԵՐ ՆՈՅԱՅ Ի ՊԱՇՏԱՄԱՆԷՆ ՀԱ	1 2 3 4 5 6 7 8	42 ՓԱՅՂԵՐ ԼՈՒՍ[աւորութիւնն:] ⁴³ 44 ԵՒՍ ԱՌԱԻԵԼ [զահի հարաւ ի մ] ԵՍ ՍՔԱՆՉԵԼ[եացն, եւ դող] ԱՅԻՆ ԱՄԵՆԱ[յն մարմինքն,] ՆՈՐԱ՞, ԵՒ Թ[մբրեալ կիսամա] ՀԼԻՆԵՐ Ի ՎԵՐ[այ տանեացն մի] ՆՉԵՒ ՅԱՌԱ[աւտն. եւ ... յար] ՈՒՅԵԱԼ ԵՐԹ[այր ի վանս իւր,

³⁴ [...նեղութիւն]ն (նեղութիւնս; նեղութիւնսն) առ ա[ստուա]ծ եւ զփառաբանութիւնն (> առ աստուած եւ զփառաբանութիւնն)

³⁵ իբրեւ (եւ իբրեւ) լուա զայս (> լուա զայս; զայս լուա) մոզպետն, յարուցեալ երթայր ինքնին (~ ինքնին երթայր) ի մէջ (ի մէջ) գիշերին յերդ (յերդ; յերդս) բանդին (~ բանդին ի մէջ գիշերին; բանտի; գիշերի)

³⁶ եւ հայեցեալ ի ներս (ի ներս) ընդ մութ (մութն) գիշերոյն (գիշերին), այն ինչ լինէր (լսէր) լինէր) նոցա ի պաշտամանէն (պաշտմանէն) հա[նզել,]

⁴² ... [այդ ի նոցունց յանձանց] փայղեր (փայլէր) լուաւորութիւնն:

⁴³ > Յայնժամ կրկին անգամ զահի հարաւ եւ ասէ. «Մ'ւմ ի կապելոցն եղև այսպիսի յայտնութիւն. նս եւ ոչ զմի որ ոչ գիտեմ, եւ ոչ լուեալ է իմ ի հարցն յառաջնոց»;

⁴⁴ եւս առաւել [(եւ (> եւ; եւ քանզի անհնարին շարժեցաւ) եւս առաւել [զահի հարաւ]) զահի հարաւ ի մ]եձ սփանչել[եացն, եւ դող]ային (դողացին; դողացան) եւ դողային; դողացեալ) ամենա[յն մարմինքն] նորա⁴⁴ (մարմինքն] մարմինք նորա), եւ թ[մբրեալ (թմբրեալ) կիսամա]ն (կիսամեռ) լինէր (լինէր) ի վեր[այ տանեացն մի]նչև ցառա[աւտն. (յառաւաւտն; ցառաւտն) եւ ի ծագել լուսոյն (եւ ընդ ծագեալ լուսոյն; եւ ընդ ծագել; արեւուն] լուսոյն] իբրեւ զբազմարեւայ հիւանդ յար]ուցեալ երթ[այր ի վանս իւր (ի վանս իւր երթայր), այլ եւ ոչ ումեք իշխեսաց ամենեւին պատմել զոր ինչ ետեսն»:]

Պահպանակ Ար-Բա. 55-56, 62-63

	1	այս ամենայն բանս մոզպեան
	2	ի դահնապետէ անտի, խոտզ
	3	եցաւ. պղտորեցաւ ի միտս իւր,
	4	և հասաւ քուն յաչաց նորա
	5	զբազում գիշերս: 57 Իսկ յա
	6	ւուր միոջ յերկնուն պա
	7	հուն յարուցեալ երթայր առ
	8	նոսա միայնիկ մնչիկ, և ոչ
	9	զոր առնայր ընդ իւր ի սպաս
	10	աւորացն: 58 Եւ իբրև Եհաս
	11	ի դուրս տանն, հայէր ընդ
	12	ծակ մի ի ներքս և տեսանէր
	13	ըստ առաջին տեսլեանն. բայց
	14	նորա ի քուն կային խաղաղիկ:
	15	59 Հեղարար կարգաց յանուանէ
	16	զեպիսկոպոսն, քանզի քաջ իսկ գիտէր պարսկերէն: 60
	17	եկն ի դուրս և հարցանէր. «Ո՞վ ևս դու: 61 «Ես ինքն իսկ
	18	եմ, ասէ. Կամիմ ի ներքս մտանել և տեսանել զձեզս: 62 Եւ
		իբրև եմուտ ի մէջ սրբոցն, ոչ և
	19	⁵⁵ ԻՔՊ ԱՐԳ ՓՈ
[քր համարիմք մեք]	20	ՋՋԱՐՋԱՐԱ
[նս գայս առ]	21	ՍԵՐ ՓՈԽԱՐԻ
[նին, զոր էարկ]	22	ԱՌ ԱՋԳՍ ՄԱՐ
[ղկան»: ...բա]	23	ԶՈՒՄՍ ԽԱԻՍԵ
[ցաւ վասն հաւատ]	24	ՈՅՆ ՈՐ Ի ՔՄՊ
[...պա]	25	ՏՄԵՅԻՆ ՄՈԳ
[պետին... ⁵⁶ Ի]	26	ԲՐԵՒ ԼՈՒԱԻ Զ
		⁶² Ս ԵՐԵԻԵՐ ՆՇԱՆՆՊ. ԵՒ ՊԱՏ
		ՄԵԱՅ ՆՈՅԱՊ ՋԵՐԻՅ ԵՐԵԻ
		ՈՒՄՆ ՍՔԱՆՉԵԼԵԱՅՆՊ:
		⁶³ ԵՏ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՂԵՒՈՆԳՊ
		ԵՒ ԱՍԷ. «ԱՍՏՈՒԱԾ, ՈՐ ԱՍԱՅ Ի ԽԱԻ
		ԱՐԻ ԼՈՅՍ ԾԱԳԵԼՊ, ՈՐ ԵՒ ԾԱ
		ԳԵԱՅ ԵՒ ԼՈՒՍԱՒՈՐԵԱՅ ԶԱՆ
		ԵՐԵՒՈՅԹ ԱՐԱՐԱԾՄՊ, ՆՈՅՆ
		զարութիւն և այսար ծագեաց...»:

⁵⁵ արդ փո[քր համարիմք մեք] (> մեք; մեզ] մեք) զչարչարա[նս (զչարչարանքս; զչարչարանսս) գայս առ] սեր փոխարի[նին, (առ միոյ փոխարէնին) զոր էարկ] (զոր արկ նա; էարկ նա; էարկն; արկ) առ (նա+առ) ազգս մար[ղկան»: ...բա]զումս խաւսե[ցաւ վասն հաւատ]ոյնորի ֆս[...պա]տմեցին մոզ[պետին...]

Ընկալցալ բնագրի «Իբրև լուա... նորա զբազում գիշերս» հատվածի փոխարեն «...բա]զումս խաւսե[ցաւ վասն հաւատ]ոյն որ ի ֆս[...պա]տմեցին մոզ[պետին...]]»:

⁵⁶ [...ի]բրև լուա զ[այս ամենայն...]

⁶² [Եւ իբրև եմուտ (էմուտ) ի մէջ սրբոցն, ոչ և]ս երեւեր (երևուիւր; երևուեր նմա այլ) նշաննՊ. և (այլ] և; > և) պատմեաց նոցաՊ (> նոցա; երևումն նոցա) զերից (զերկիցս; զերկից) երևումն սֆանչելեացնՊ: (> սրանչելեացն; զսրանչելեացն)

⁶³ Ետ պատասխանի ՂեւոնղՊ (+ երէցն; Ղեւոնղ երէցն; Ղեւոնտ երէց; + երէց; + էրեց) և ասէ. «Աստուած, որ ասաց ի խաւարի (խաւարէ) լոյս ծագելՊ, որ և (> որ և; > որ) ծագեաց և լուսաւորեաց իմաստութեամբ (+ իմաստութեամբ; > իմաստութեամբ) զաներևոյք արարածսՊ (զարարածս), նոյն...»:

Պահպանակ Գա-Դք. 310-311; 314-316

<p>³¹⁰ԵԿ ԿՈՂՄՆ ՅԵՐԿԻՐ ԱՆԿԵԱԼ, ԵՒ ԴԱՐՁԵԱԼ ԱՆԴԷՆ ՊԱՏՍՊ ԱՐԷՐ, ԱՌՆՈՅՐ ՁԵՌՆՆ Ի ՎԵՐ՞. ԱՂԱՂԱԿԵԱՅ ՄԵԾԱԻՉԱՅՆ ԻՒ ԵՒ ԱՍԷ՞. «ԸՆԳԱԼ, Տ[Է]Ր, ԶԿԱՄ ԱԻՈՐ ԶՊԱՏԱՐԱԿՄ ՈՐ ԻՆՁԷ Ն ԶԻՍ ՔԵԶ ՄԱՏՈՒՅԻ ԲՈՂՈՐՈՎ ԻՆ,՞ ԵՒ ԽԱՌՆԵԱ ԶԻՍ Ի ԳՈՒՆ Դ ԶԻՆՈՒՈՐԱՅՆ»՞: ³¹¹ԴԱՐՁԵԱԼ ՔԱԶԱՅԼԵՐԵՐ ԶԸՆԿԵՐԱԿԻ</p>	<p>1 2 3 4 5 6 7 8 9 10</p>	<p>³¹⁴Է ՓՐԿԵԱ ԶՆՈՍԱ [Տէր եւ պա] ՀԷ ԶԱՄԵՆԱՅՆ ՈՍ[կերս նոցա]:] ԵՒ ՄԻ Ի ՆՈՅԱՆԷ Ո[չ կորիցէ] ³¹⁵ԵՒ ՄԻՆԶԳԵՌԵՌԵՍ Յ[ոյժ ի մարմն] ՈՅՆ ԷՐ՞ՍԿՍԱԻ [խրովք ա] ԶԱԻՔՆ ԶԱՅԵՏԵԼ[տեսանէր] ՅԵՐԿՆԻՅ ԻՋԵԱԼ[եկեալ գունդս բազում հրե] ՇՏԱԿԱՅ՞ ԵՒ ՎԵՏ[պսակ ի ձեռ] ԻՆ ՀՐԵՇՏԱԿԱՊԵ[տին: ³¹⁶Դ] ԱՐՁԵԱԼ ԵՒ ԼՍԵԻՆ[բարբառ ի վերուստ,]</p>
<p><i>ցան իւր եւ ասէր. «Հա՛ պա առաքինիք, Եհա ժամ կատարման մերոյ. խցէք զաչս մարմնոյ վայր մի, եւ այժմ տեսանէք զյոյսն մեր Քրիստոս»: 312 Եւ թաւալելով ընդ արիւն անձինն իւրոյ ասէր. «Աւրհնեցի՛ց զՏէր յամենայն ժամ, հանապազ արհնութիւն նորա ի բերան իմ: 313 Ի տէր պարծեսցի անձն իմ, լուիցեն հեզք եւ ուրախ եղիցին՞»: Եւ ասելով զսաղմոսս զայս կատարէր մինչեւ ցայս տեղի. “Բազում նեղութիւնք են արդարոց. յամենայն</i></p>		

³¹⁰ [Եւ նորա յահ]եկ (յահեակ; ահեակ) կողմն յերկիր (> յերկիր) անկեալ (ի վայր անկեալ), եւ (> եւ) դարձեալ անդէն (անդրէն) պատուպարէր [պարապարէր !], առնոյր ձեռնն (զաչ ձեռն; զաչ ձեռնն) ի վեր՞. աղաղակեաց մեծաւ ձայնիւ եւ ասէ՞. «Ընգալ (ընկալ), Տ[Է]ր, զկամաւոր զպատարագս՝ (պատարագս) որ (զոր) ինձէն (եւ ինձէն) զիս քեզ մատուցի բոլորովին (բոլորովմբ; բոլորովին; զբոլորովին; բոլորովիմ),՞ եւ խառնեա զիս ի գունդ զինուորացն (սուրբ զինուորացն; զինուորաց)»՞:

³¹¹ Դարձեալ քաջայլերէր զընկերակի [ցան իւր եւ ասէր....]:

³¹⁴ [...յամենայն]է փրկեա (փրկէ) զնոսա [Տէր եւ պա]նէ զամենայն ոս[կերս նոցա (ոսկերս նոցա)] եւ մի ի նոցանէ ո[չ կորիցէ (> եւ մի ի նոցանէ ոչ կորիցէ; կորիցեն)]:

³¹⁵ Եւ մինչդեռեա յ[ոյժ (եւ մինչդեռ կայր ոյժ; յուշի] ոյժ; յուժի մարմնոյն) ի մարմն]ոյն էր՞ սկսաւ (սկսաւ] սակաւիկ մի; սակաւ; սակաւ մի) [խրովք (խրով) ա]շխմն (աշխմ; աշօքն իսկ) հայեցել (հայեցեալ) [տեսանէր] յերկնից իջեալ (տեսանէր յերկնից եկեալ տեսանէր!; երկնից) [եկեալ (եկեալ իջանէր; եկեալ իջեալ; > եկեալ) գունդս (գունդ) բազում հրե]շտակաց՞ եւ վեց[պսակ ի ձեռ]ին (ի ձեռն) հրեշտակապե[տին:

³¹⁶ [դ]արձեալ եւ (> եւ; > եւ) լսեին[բարբառ ի վերուստ, որ ասէր....]


Պահպանակ Դա-Գր 317-319; 321-324

<p>որ ասէր. «Քաշալերեցարուք, սիրելիք իմ, զի ահա մոռացայք զվշտալի կեանսդ, եւ հասէք երանելի պսակացդ, որ ձերով ճարտարութեամբդ կազմեցէք. ասէք զիք յիրաքանչիւր զլուխ: 317 Զի նիւթ պատրաստական ի ձէնչ գործեալ հիւթեցաւ, իսկ ճարտարութիւն գործոյդ յամենասուրբ ձեռացն Քրիստոսի կազմեցաւ. զոր ի սպասաւորաց այտի իսկ</p>		<p>փ. «Մատիր, յառաջեա ընդդէմ սրոյն, զի դու աստիճանաւ ի վեր ես քան զամենեւեան»: 320 եւ զայս իբրև ասաց, կարգեցան կացին մի ըստ միտջէ. եւ առ ճեպ տաղնապի ստիպելոյ դահճացն՝ միանգամայն հատին ընկեցին զպարանոցս երանելեացն առաջի սուրբ եպիսկոպոսին. եւ նորա ընդ հանել ողւոցն աղաղակեաց եւ ասէ. «Տէր Յիսուս, ընկալ զոգիս մեր ամենեցուն, եւ խառնեա զմեզ ի գունդս սիրելեացն քոց»: 321 եւ միանգամա</p>
<p>³¹⁷ [... ընդ Ստեփան] ՈՍԻ ԼԻՆԻՑԻՔ ՊՍ [ակակից]: ³¹⁸ ՆԱ ԵՒ ԶԱՅՆ ԵԻՍ [քաշապէս] ՏԵՍԱՆԵՐ, * ԶԻ Դ [եռ եւս] ԻՆ ՇՈՂԱՅՐ ՍՈՒՐՆ Ի ՎԵ [րայ սարա] ՆՈՑԱՑ ԵՐԱՆԵԼԵ [ացն: ³¹⁹ Զոր] ԻԲՐԵԻ ԵՏԵՍ ՍՈՒ [րբն Ղեւոն]Տ*, ԵԹԵ ՈԶ ԶՄԻ [մի կամին հ] ԱՐՅԱՆԵԼ ԵՒ ԴԱՏԵԼ*, [այլ միանգ] ԱՄԱՅՆ ՀՐԱՄԱՆ Ե [ղեւ մահու,] ԱՍԷ ՅՅՈՎՍԷ</p>	<p>1 2 3 4 5 6 7 8 9 10</p>	<p>³²¹ ՅՆ ԿԱՏԱՐԵՑԱՆ Ի ՏԵՂԻՈՋՆ: ³²² ԵՒ ԵԹԵ ԶՄՈԳՊԵՏՆ ԵԻՍ, ՈՐ ՀԱԻ ԱՏԱՑ Ի ՔՍ, ԿԱՄԻՍ Ի ՀԱՄԱՐ ԱՐ ԿԱՆԵԼ, ԹՈՒՈՎ ԵԻԹՆ*. ԹՈՂ ԶԵՐԿՈՒՍՆ, ՈՐ Ի ՎԱՐԴԵՍՆ ԿԱՏ ԱՐԵՑԱՆ*, ԵՒ ՄԻԻՍ ԵՊԻՍԿՈՊ ՈՍՆ ԹԱԳԻԿ ԱՆՈՒՆ* ՅԱՍՈՐ ԵՍՏԱՆԻ*: ³²³ ԲԱՅՑ ԱՆԴԵՆ Ի ՏԵՂԻՈՋՆ ՎԵՑՆ*, ³²⁴ 324 ՍԱՀԱ Կ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՇՏՈՒՆԵԱՑ.</p>


³¹⁷ [... ընկալեալ՝ ընդ Ստեփան] ոսի լինիցիք պս[ակակից] (պսակակիր; «ց»պսակակից):
³¹⁸ Նա եւ զայն եւս (զայն իսկ) [քաշապէս] տեսաներ, * զի ղ[եռ եւս] ին շողայր սուրն ի վե[րայ սարա] նոցաց երանելե[ացն] (սրբոցն] երանելեացն):
³¹⁹ [Զոր] (զոր եւ; զաս] զոր) իբրև ետես սու[րբն Ղեւոն]տ* (ղեւոնդ), եթե ոչ (ոչ եւս; > եւս) զմի[մի (> մի) կամին հ]արցանել եւ դատել* (> եւ դատել), [այլ միանգ]ամայն հրաման ե[ղեւ մահու,] ասէ ցՅովսէ[փ. (ցերանելին Յովսէփ; ցսուրբն Յովսէփ) «Մատիր, յառաջեա...]]
³²¹ [եւ միանգամա]յն կատարեցան (+ ամենեքեան; + ամենեքին) ի տեղոջն (ի նմին տեղոջ; տեղոջն սորա):
³²² եւ եթե (եթէ) զմոզպետն եւս, որ(> եւս; որ եւ] եւս որ) հաւատաց ի Քս, կամիս (կամիցիս; կամիցիս ի) ի համար արկանել (ընդ նոսա ի համար արկանել; համար արկանել ընդ նոսա), քուով եւթն.* (են եւթն; եւթն են) քող զերկուսն (զերկուսն եւս; > եւս), որ ի Վարդեսն (վարդէսն; վատդէսն; վատգետոյն; վրդեսն; վրդդէսն; վարդգէսն, վատդէտսն; վարդեսն; վարդէն, վարդեան; վաղէսն) կատարեցան,* եւ (> եւ) միա եպիսկոպոսն Թագիկ (Թաթիկ; Թողիկ) անուն* յԱսորեստանի* (ի յԱսորեստանի):
³²³ Բայց անդեն ի տեղոջն վեցն,* (> վեցեքին; վեցեքին սորա; վեցքս; վեցեքեան սորա; > որոց անուանքն (անուանք) են (> են) այսոքիկ)
³²⁴ Սահակ եպիսկոպոս յիշտունեաց. (ոշտունեաց; ըոքշտունեաց; յըոշտունեաց; յըոքշտունեաց; ըոշտունեաց)

ՊԱՆՊԱՆԱԿ	ՉԲ 554	ՄՄ 3845	ՊԱՆՊԱՆԱԿ	ՉԲ 554	ՄՄ 3845
Ա Ա Ա	Ա	Ա			
Բ	Բ	Բ	ՄՄ	Մ	Մ
ԳԳԳ	Գ	Գ	Յ	Յ	Յ
ԴԴԴ	Դ	Դ	ՆՆՆ	Ն	Ն
ԵԵԵ	Ե	Ե	ՀՀՀ		Հ
ԶԶԶ	Զ	Զ	ՈՈՈ	Ո	Ո
ԷԷ	Է	Է	ՉՉ		Չ
Ը	Ը	Ը	ՊՊ		Պ
ԹԹԹ	Թ	Թ	ՂՂ	Ղ	Ղ
	ժ		Խ	Խ	Խ
ԻԻԻ	Ի	Ի	ԱԱ	Ա	Ա
ԼԼ	Լ	Լ	ՎՎ	Վ	Վ
ԽԽԽ	Խ	Խ	ՊՊՊ	Պ	Պ
ԾԾ	Ծ	Ծ	ՐՐ	Ր	Ր
ՊՊ	Պ	Պ	ՏՏ	Տ	Տ
ՅՅ	Յ	Յ	ԻԻ	Ի	Ի
Չ		Չ	Փ		Փ
ՂՂՂ	Ղ	Ղ	ԲԲ	Բ	Բ


Նկ. 1 Պանպանակի գրերի համադրությունն թվակիր երկարագիր ձևագրերի հետ:




Նկ. 2, Պահպանակ Բբ-Աս. 35-36, 42:



Նկ. 3, Պահպանակ Աբ-Բա. 55-56, 62-63:



Նկ. 4, Պահպանակ Գա-Գր. 310-311; 314-316:



Նկ. 5, Պահպանակ Գա-Գր 317-319; 321-324:

ՀԵՆՐԻԿ ԲԱԽՉԻՆՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ԲԱՂՈՒԵՅՈՒ ՏԱՂԵՐԸ

Ուշ միջնադարի տաղասաց Սարգիս վարդապետ Բալուեցու գրական ժառանգությունից հայտնի է տասնյոթ տաղ, որ բանաստեղծն ինքը գրի է առել 1759 թվականին ստացած մի ձեռագիր գրքի վերջին էջերում: Մինչև 19-րդ դարի 90-ական թվականները այն գտնվել է Կեսարիայի սր. Սարգիս վանքի ձեռագրատանը: Տրդատ Պալյանը, Կեսարիայի վիճակի առաջնորդական պաշտոնը վարելիս (1887-1911), կազմել է հիշյալ վանքի ձեռագրերի ցուցակը, ուր կա նաև մեզ հետաքրքրող ձեռագրի (N 7) նկարագրությունը¹: Ըստ այդ նկարագրության, ձեռագիրը բաղկացած է եղել 166 էջից, գրիչը, գրչության վայրն ու թվականը՝ անհայտ: Ձեռագիրն սկզբից մինչև 154-րդ էջը ընդգրկել է Սիմեոն Զուղայեցու «Տրամաբանութիւնը», իսկ 155-րդ էջում գտնվել է աշխատության վերջաբան-հիշատակարանը, որը Տ. Պալյանը սխալմամբ վերագրել է ձեռագրի գրչին²: Նույն էջում Սարգիս Բալուեցին, որպես հետագա ստացող, թողել է հետևյալ հիշատակարանը. «Շնորհեցաւ գիրքս այս ընծայ ինձ՝ Սարգիս վարդապետիս Բալուեցոյ, ձեռամբ առն ումեմն հոգեսիրի Կարապետ կոչեցելոյ, որոյ որդիքն... (անունները գրված չեն) կոչեալ, առ ի յիշատակ հոգւոց իւրեանց եւ հանգուցելոց ի Տէր: Որ եւ Քրիստոս աստուած ընկալցի ի փառս իւր եւ հատուցէ վարձս վաստակոց իւրեանց ի միւսանգամ գալստեան, շնորհելով արքայութիւնն երկնից անգրաւ յաւիտենից. ամէն: Եղեւ այս՝ թվին ՌՄԸ (= 1759), ապրիլի ԻԸ (28), ի Տրովաղայ, առ դրան Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Ստեփաննոսի գեղեցիկ տաճարացս»³:

¹ Տ. Պալյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Թուրքիա, հատոր Ա, Կեսարիոյ վիճակ, տետր Ա՝ Ցուցակ հայերէն ձեռագրաց սուրբ Սարգսի վանոց ի Կեսարիա, Կոստանդնուպոլիս, 1892, էջ 16-22:

² Անդ, էջ 16, հմմտ. Սիմեոն Զուղայեցի, Գիրք տրամաբանութեան, Կ. Պոլիս, 1728, էջ 232-233:

³ Անդ:

Հիշատակարանից հետո ձեռագրի 156-166 էջերում Բալուեցին գրի է առել իր տաղերը հետեւյալ վերտառութեամբ՝ «Տաղք ասացեալք ի տէր Սարգիս վարդապետէ Բալուեցոյ՝ աշակերտէ տեան Միքայէլ կաթողիկոսի Կիլիկեցոյ»⁴: Տ. Պալյանն իր ցուցակում ընդօրինակելով դրանք, նշել է, թե «սույն տաղք՝ թվով 17, ինքնագիր են հեղինակին, ընդօրինակութիւնքն տես վարը»⁵: Սակայն ձեռագրացուցակում ընդօրինակված է ոչ թե 17, այլ՝ 16 տաղ: Հավանաբար ծանոթագրութեան 17-ը տպագրական վրիպակ է⁶:

Բ. Կյուլեսերյանը իր «Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիո» աշխատութեան մեջ, առանց աղբյուրը նշելու, տեղեկացնում է, թե 1770 թվականին «Բալուեցի Սարգիս վարդապետ «Ողբերգական Տաղ» մը նվիրած է Գաբրիել կաթողիկոսին՝ անոր նահատակութեան առթիւ»⁷: Գուցե եւ այս տաղը, որ մեզ չհաջողվեց հայտնաբերել, նույնպես գտնվել է Տ. Պալյանի նկարագրած ձեռագրում եւ հավանաբար ծավալուն լինելու պատճառով տեղ չի գտել նրա ձեռագրացուցակում:

Ուշագրավ մի վկայութիւն է թողել Կիլիկիայի կաթողիկոս Եփրեմ Ա-ն (1771-1784) իր տոհմի՝ Աջապահյանների ազգաբանութեան մեջ: Նա վկայում է, որ իր հորեղբոր՝ Միքայել Ա. Աջապահյան կաթողիկոսի կյանքի պատմութիւնն, իրեն կանխելով, գրել է «ոմն յաշակերտաց նորա (Միքայելի - Հ. Բ.) ըստ իւրոյ եզականի իմաստութեանն քաղցրաշար շարադրութեամբ, զիմս ասեմ վարժապետ՝ զՍարգիս մեծիմաստ վարդապետն...»⁸: Շատ հավանական է, որ այս Սարգիս վարդապետը նույն ինքը՝ Սարգիս վարդապետ Բալուեցին է: Հիշենք, որ վերջինս, իր իսկ վկայութեամբ, եղել է աշակերտը «Տեան Միքայել կաթողիկոսի Կիլիկեցոյ», այն է՝ Միքայել Ա. Աջապահյանի (1737-1758): Եթե իրոք այդպես է, ապա պիտի ընդունենք, որ Սարգիս Բալուեցին ոչ միայն եղել է Միքայել կաթողիկոսի աշակերտն ու կենսագիրը, այլեւ նրա եղբորորդուն՝ Եփրեմի ուսուցիչներից մեկը:

Եղած տվյալներով հնարավոր չէ որոշել Սարգիս Բալուեցու ծննդյան ու մահվան թվականները: Ծնված պետք է լինի 18-րդ դարի սկզբին: Մականունից կարելի է ենթադրել, որ ծագումով Բալու քաղաքից էր:

⁴ Անդ, էջ 17-22:

⁵ Անդ, էջ 16:

⁶ Աղբյուր ունենալով Տ. Պալյանի ձեռագրացուցակը, Հ. Անառյանը գրել է. «Սարգիս Վարդապետ Բալուեցի. աշակերտ Միքայել կաթողիկոսի Կիլիկիո. տաղասաց. ունի 17 տաղ, որոնց ինքնաձեռագիրը՝ 1759 թվից, մնում է այժմ» (Հ. Անառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երևան, 1948, էջ 158):

⁷ Բ. Կյուլեսերյան, Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիո, Անթիլիաս, 1939, էջ 504:

⁸ Հ. Տաշյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, հ. Ա, Վիեննա, 1895, էջ 359:

Թուրքերի ճնշման հետեւանքով Բալուի հայերից շատերը թողնելով հայրենի քաղաքը, հաստատվել են Կիլիկիայի խոշոր կենտրոններում, հատկապես՝ «վաճառաշահ» Ադանայում: Բալուեցի հայերի «գրեթե հինգերորդ մասը գաղթած է Կիլիկիայի կեդրոնն՝ Ատանա», - գրում է Ս. Էփրիկյանը⁹: Ինչպես պարզվում է Սարգիս Բալուեցու հիշատակարանից, նա եւս հաստատվել է Ադանայում (Տրովադա):

Բալուեցու ապրած ժամանակաշրջանում Կիլիկիան վաղուց արդեն կորցրել էր իր վաղեմի փառքը եւ զորութունը: Կործանվել էր հայոց թագավորութունը, եւ հայերի մեծ մասը գաղթել կամ բնաջնջվել էր: Երկիրը դարձել էր ինքնակոչ թուրք իշխանների ու գավառապետների կռվախնձոր: Այս պայմաններում տակավին իր գոյութունն էր պահպանում Սսի կաթողիկոսարանը: Սակայն Կիլիկիայի կաթողիկոսները, ինչպես վկայում է ժամանակագիրներից մեկը, «ոչ եւս կարացին կալ մնալ յանդորրու յաթոռ իւրեանց, այլ երերեալ, տատանեալ շրջէին տեղեաց ի տեղ, ի քաղաքէ քաղաք, երբ գտանեին սակաւ ինչ հանգստութիւն՝ յաթոռն դառնային, բայց ոչ կարէին երկար մնալ անդ՝ ի սակս տառապանացն, զոր կրէին յապստամբ բռնակալացն վասն դրամոյ»¹⁰: Այս իրավիճակում Կիլիկիայի իրար հաջորդած երեք կաթողիկոսները՝ Միքայել, Գաբրիել եւ Եփրեմ Աջապահյանները, շարաշար սպանվեցին թուրք բռնապետների կողմից: Ինչպես տեսանք, Սարգիս Բալուեցին այդ կաթողիկոսներից առաջինի աշակերտն էր եւ վերջինի ուսուցիչը: Հավանաբար, նա սերտ կապերի մեջ է եղել Գաբրիել կաթողիկոսի հետ, որի եղբրական մահվան առթիվ գրել է մեզ անհայտ «Ողբերգական տաղը»:

Իր կյանքի մեծ մասը Բալուեցին ապրել է Ադանայում: Քաղաքն այդ ժամանակ ունեցել է հայ եպիսկոպոսական աթոռ՝ առաջնորդությամբ Գրիգորիս եպիսկոպոսի: Այնտեղ գործում էին 13-14-րդ դարերում կառուցված երկու փառահեղ եկեղեցիներ՝ Սուրբ Ստեփանոս, որտեղ եւ սպասավորել է Սարգիս վարդապետ Բալուեցին: Հատկանշական է, որ բանաստեղծն իր կրոնական տաղերից մեկը նվիրել է Աստվածածնին, մյուսը՝ Ստեփանոս Նախավկային:

Հավանաբար, Սարգիս Բալուեցին զբաղվել է նաեւ գրչությամբ: 18-րդ դարի կեսերին, այն եկեղեցիներում, ուր գործել է նա, ընդօրինակվել են մի շարք ձեռագրեր, որոնց գրիչն է Հովհաննեսի եւ Մարգարտի որդի Սարգիսը: Վերջինս իրեն կոչել է «մարմնաքանձ» եւ «յողուածաքանձ» մականուններով,

⁹ Ս. Էփրիկյան, Բնաշխարհիկ, հ.Ա., Վենետիկ, 1902-1907, էջ 729:

¹⁰ «Դիվան Հայոց պատմության», գիրք Դ, Թիֆլիս, 1899, էջ 720, տե՛ս նաեւ էջ 729-30:

չնշելով սակայն, իր բալուեցի կամ վարդապետ լինելը¹¹: Ուշագրավ է, որ Սարգիս գրիչը ի թիվս այլ ձեռագրերի գաղափարել է նաև Սիմեոն Ջուղայեցու «Տրամաբանութիւնը», հավանաբար օրինակ ունենալով 1759 թվականին Բալուեցու ստացած ձեռագիրը: Գաղափար օրինակն, ըստ երեւութին, եղել է անբավարար վիճակում, եւ գրիչն, իր վկայութեամբ, բավական աշխատել է նրա սրբագրութեան վրա¹²:

Թերեւս որոշ ժամանակ Բալուեցին ապրել է նաև Սիս քաղաքում, որտեղ առիթ է ունեցել աշակերտելու Միքայել Աջապահյանին: Սա ժամանակի կրթված մարդկանցից էր. Կիլիկիայի կաթողիկոս է ընտրվել քսան տարեկան հասակում եւ իր կաթողիկոսութեան քսաներորդ տարում սպանվել է Կիլիկիայի բռնակալներից մեկի՝ Ղոջանօղլու Յուսուֆ աղայի կողմից¹³: Հայտնի չէ, թե Բալուեցին երբ եւ ինչ պայմաններում է աշակերտել Միքայելին: Պարզ է միայն, որ նա չափազանց սիրել է իր ուսուցչին, նրան համարել «գերապանձ դիտող» եւ այնքան հպարտ է եղել նրան աշակերտած լինելու համար, որ այդ փաստը հատուկ նշել է իր տաղերի խորագրում: Բայց իր սիրո եւ երախտիքի լավագույն վկայութիւնը, ըստ երեւութին, մեզ անձանոթ այն վարք-կենսագրութիւնն է եղել, որ նա, հավանաբար, գրել է Միքայելի նահատակութիւնից (1758) հետո: Եփրեմ կաթողիկոսի վկայութեամբ, ինչպես տեսանք, այդ կենսագրականը գրված է եղել «ըստ իւրոյ եզականի իմաստութեանն քաղցրաշար շարագրութեամբ»:

Ըստ երեւութին, Սարգիս Բալուեցին վարդապետական աստիճան է ստացել հենց իր ուսուցիչ Միքայել կաթողիկոսից՝ նրա գահակալութեան վերջին տարիներին: Տաղասաց վարդապետը Կիլիկիայում բավական մեծ անուն եւ համարում է ունեցել, սերտորեն կապված է եղել Սսի կաթողիկոսարանին: Այդ իսկ պատճառով նրան է վստահվել Աջապահյանների տոհմից՝ Եփրեմի կրթութեան գործը: Վերջինս հետագայում իր ուսուցչին մեծարելով անվանել է «մեծ-իմաստ վարդապետ»: Հավանաբար Բալուեցին իր աշակերտին այլ գիտութիւնների հետ մեկտեղ սովորեցրել է նաև բանաստեղծական արվեստի գաղտնիքները: Այդ են վկայում Եփրեմ Ա-ի չափածո ստեղծագործութիւնները:

¹¹ Ն. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. Բ, Երուսաղեմ, 1967, էջ 526, Մ. Քեշիշյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի մատենադարանին, հ. Ա, Վիեննա, 1964, էջ 294:

¹² Ն. Պողարյան, Մայր ցուցակ, հ. Գ, Երուսաղեմ, 1968, էջ 161: Ըստ երեւութին, Սարգիս Բալուեցուց տարբեր է մահտեսի Սարգիս Բալվըցին, որը 1749 թվականին իր կնոջ՝ Կուզայի հետ Երուսաղեմում ստացել է մի Շարակնոց (Ն. Պողարյան, Մայր ցուցակ, հ. Ե, Երուսաղեմ, 1971, էջ 499):

¹³ Բ. Կյուլեւերյան, նշվ. աշխատ., էջ 490:

րը¹⁴: Ի դեպ, եփրեմ կաթողիկոսը թողել է նաև իր տոհմի՝ Աջապահյանների ինչպես արձակ, այնպես էլ շափածո պատմությունը¹⁵:

Թե որ հասակից է Սարգիս Բալուեցին զբաղվել տաղերգությամբ, անհայտ է: 1770 թվականին նա դեռ ապրում եւ ստեղծագործում էր: Այդ թվականին դաժանորեն սպանվել է Միքայել կաթողիկոսի եղբայրն ու հաջորդը՝ Գարրիել Աջապահյանը (1758-1770)¹⁶, եւ այդ առիթով Բալուեցին գրել է հիշյալ «Ողբերգական տաղը»:

Բալուեցու տաղերը ժամանակին տարածված եւ սիրված են եղել: Վիեննայի Մխիթարյանների մատենադարանում գտնվող՝ 1765 թվականին գրչագրված ձեռագիր երգարանում (N 412, էջ 40բ) տեղ է գտել նաև Սարգիս Բալուեցու «Միրայորդոր ծաղկանց հոտոցն» սկսվածքով սիրո երգը¹⁷:

Սարգիս Բալուեցու՝ մեր ձեռքի տակ եղած թվով 16 տաղերից յոթը սիրո երգեր են, երկուսը՝ խրատական բանաստեղծություններ, իսկ մնացած յոթն ունեն կրոնական բովանդակություն: Նրա տաղերի վրա ընդհանուր առմամբ նկատելի է միջնադարյան տաղերգության ազդեցությունը: Կանոնավոր կրթություն ստացած եւ վարդապետի աստիճանի հասած բանաստեղծը քաջ ծանոթ է եղել միջնադարի հայ քնարերգությանը: Իր արվեստով Բալուեցին առավել հոգեհարազատ է իր մեծ ժամանակակիցին՝ Պաղտասար Դպիրին, որի բանաստեղծական դպրոցի ներկայացուցիչներից մեկը կարելի է համարել նրան:

Նկատի ունենալով Սարգիս Բալուեցու տաղերի գրական արժեքը եւ այն հանգամանքը, որ դրանք բնագրային անբավարար վիճակով հրապարակվել են Տ. Պալյանի ձեռագրացուցակում, որից սահմանափակ օրինակներ են մնացել (Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանվում է նրա լուսապատճենը), մենք կազմել ենք այդ տաղերի քննական բնագրերը, որոնք ներկայացնում ենք ստորև:

¹⁴ Անդ, էջ 511-26:

¹⁵ Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 220-21:

¹⁶ Այս մասին տե՛ս եփրեմ Ա-ի հիշատակարանը (Ս. Սյուրմեյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Հալիպի ս. Քառասուն Մանկունք եկեղեցոյ եւ մասնատուրաց, Երուսաղեմ, 1935, էջ 372):

¹⁷ Հ. Տաշյան, Ցուցակ, էջ 863:

Ա

ԱՌ ՍԷՐՆ ՃՇՄԱՐԻՏ

Սիրելի սէ՛ր իմ եւ հոգի,
 Կարօտ եմ քեզ, մերձ իմ երի՛.
 Համեղ 'ւ անուշահամ գինի՛
 Թարց քեւ է ինձ դառն եւ լեղի:

Արդ, արտասուս աղբերանման
 Վասն քո հեղում յարժամ,
 Զի թէ այգի կամ բուրաստան՝
 Թարց քեւ է ինձ սուգ տարածամ:

Բախութին՝ փաստ քանոն սիրոյ,
 Մի՛ թողուր զիս ի մէջ սգոյ.
 Ծաղկունք հոտարուրք, վարդ յարզոյ՝
 Թարց քեւ է ինձ նման փշոյ:

Գոնէ ցո՛յց ինձ տես քո պայծառ՝
 Համպարտիպ լուսով լցեալ.
 Նարդոս ազնիւ հոտով բուրավառ՝
 Թարց քեւ է ինձ հուր մշտավառ:

Իսկօրէն սիրոյդ բաղձանաց
 Կայ անդադար աչերս ի լաց,
 Բարելիր սեղան զարդարած՝
 Թարց քեւ է ինձ կրակ վառած:

Սիրոյ քո այնքա՛ն եմ կարօտ,
 Հոտաւէտ ծաղկամբ լի արօտ,
 Թէեւ խառնիմ անմահից հօտ,-
 Թարց քեւ է ինձ դժոխք անդ մօտ:

Բ

Սիրիելի՛, քո ծառայն եմ ես,
 Գեղաչեայ եւ պայծառ երես,

Ե՛կ յայգին իջցուք դու եւ ես.
Ազնի՛ւ, բերկրուն եղեալ ցնծա՛ ընդ մեզ:

Ազնի՛ւ, պուլպուլի ի սէր վարդին
Ընդ արեւոյն իջեալ այգին՝
Նստիլ վերայ կանաչ թփին.
Ազնի՛ւ, թեւատարած ծա՛փ ընդ ծափին:

Բախութեան օրերն եհաս,
Համայն ծաղկունք բացեալ խիստ խաս,
Կարմիր գինի եւ ոսկեայ թաս.
Ազնի՛ւ, մնամ թէ՛ դու լցեալ ինձ տաս:

Փոյնզգոյն մրգաբեր ծառեր,
Մանտրագորք անշուք, նշաբեր՝
Կարմիր-ճերմակ ծաղկամբ ծաղկեր,
Ազնի՛ւ, որոց հոտոյ եմ զմայլեր:

Իմ սիրելի՛ դու աննման,
Այս օրս է ժամ իսկ ցնծութեան,
Ես եւ դու իջցուք բուրաստան՝
Ի սէր ծաղկանցս պատուական:

Ստուերաւ թաւ ծառոց նստցուք,
Համեղազոր գինին արբցուք,
Մեծաւ սիրով ուրախասցուք,
Փառս արարչէն հանուրց տացցուք:

Ք

Սաստիկ սիրոյդ առ դիպեցայ,
Վասն այն առ սէրդ իմ յարեցայ,
Սրտիս բաղձանք քե՛զ վարկեցայ.
Արի՛ բարձանց, ե՛կ իմ սէր,
Սէ՛ր, սէ՛ր, աննման սէր:

Արեգակնատես աննման,
Իմ գերունակ եւ պատուական,

Քանզի կարօտ եմ անսահման,
Արի՛ բարձանց, ե՛կ իմ սէր,
Սէ՛ր, սէ՛ր, աննման սէր:

Բախճան սիրոյ ըզքեզ գիտեմ,
Վասն այն ճանապարհս քո դիտեմ,
Բա՛ւ վարկեա, տեսոյդ կարօտ եմ.
Արի՛ բարձանց, ե՛կ իմ սէր,
Սէ՛ր, սէ՛ր, աննման սէր:

Պահար անգին՝ ծովուց ընծայ,
Արի, տեսոյդ սիրտ իմ ցնծայ,
Քան զքեզ սիրելի ինձ ոչ կայ.
Արի՛ բարձանց, ե՛կ իմ սէր,
Սէ՛ր, սէ՛ր, աննման սէր:

Ի մէջ ծաղկանց վարդի հանգոյն,
Տեսլեամբ շքնաղ, պայծառագոյն
Ե՛կ, ցնծութիւն իմ յարահուն,
Արի՛ բարձանց, ե՛կ իմ սէր,
Սէ՛ր, սէ՛ր, աննման սէր:

Սահման սիրոյդ անբաւելի,
Վերնոյն շնորհօք գիտեմ քեզի,
Մերձի՛ր առ իս՝ ես քեզ գերի.
Արի՛ բարձանց, ե՛կ իմ սէր,
Սէ՛ր, սէ՛ր, աննման սէր:

Դ

Սիրայորդոր ծաղկանց հոտոյն
Է՛ջ ի պարտէզ առաւօտուն,
Առ զիս ընդ քեւ, ի՛մ ցնծութիւն,
Ուրախ լեր, սէ՛ր իմ սիրասուն:

Բախարար քաղցրրիկ բաժակ,
Լցեալ լի ոսկեայ ըմպանակ,
Գեղեցիկ շրթամբ կարմրակ

Արդ, ուրախ լեր, սէ՛ր իմ անքանակ:
 Իսկ քաղցրաձայն թռչունք համայն
 Ի սէր քո իջին բուրաստան,
 Սաւառնելով սէր քո խայտան.
 Ուրախ լեր, սէ՛ր իմ սլատուական:

Վաղ առաւօտ ցօղն իջանի,
 Տերեւ ծաղկանցն փայլփայլի,
 Արփին սլայծառ արեւ ծագի.
 Ուրախ լեր, սէ՛ր իմ սիրելի:

Բամեալ սրտով բազմիմք սեղան
 Հետ սիրելեաց զարմանազան,
 Դրուատեսցուք երգ քաղցրաձայն.
 Ուրախ լեր, սէ՛ր իմ աննման:

Արդ, ով չքնաղ, ի՞նչ եղեւ քեզ,
 Բա՛ց զբերանդ, խօսի՛ր ընդ մեզ,
 Պաղուկ ջրեր, կանանչ պարտէզ.
 Ուրախ լեր, սիրելի՛ իմ հեզ:

Երանի թէ մնայիր աստ,
 Ռ՛վ իմ ուրախութեանս փաստ,
 Տեսեր զիս՝ մի՛ լինիր ուրաստ.
 Ուրախ լեր, սէ՛ր իմ բարբրաստ:

Ե

Սիրելի՛ իմ քաղցրահայեաց, նազելի,
 Քեզ աւետի՛ս՝ ձմեռն էանց,
 Նաեւ ձայն տատրակի հնչեաց.
 Եկ նի՛ստ ընդ վիմով,
 Եկ նի՛ստ ընդ վիմով.
 Յանկալի՛, ցնծասցուք սիրով:

Ահա արգելք մեր ծաղկեցան, նազելի,
 Գոյն զգոյն ծաղկոք փթթեցան,

Ստուերք արեգական¹⁸ դարձան.

Եկ նի՛ստ ընդ վիմով,

Եկ նի՛ստ ընդ վիմով.

Յանկալի՛, ցնծասցուք սիրով:

Բամե՛ա փութով դու ի բարձանց, նազելի՛,

Շողշողելով վերայ լերանց,

Քանզի պայման սիրոյդ էանց.

Եկ նի՛ստ ընդ վիմով,

Եկ նի՛ստ ընդ վիմով.

Յանկալի՛, ցնծասցուք սիրով:

Գիտե՛ս, հրով քոյին ազդու, նազելի՛,

Բորբոքեցայ, արի շիշո՛,

Միշտ բաղձանօք բաղձամ գտես քո.

Եկ նի՛ստ ընդ վիմով,

Եկ նի՛ստ ընդ վիմով.

Յանկալի՛, ցնծասցուք սիրով:

Ի քէն հեռի գոլով անձն իմ, նազելի՛,

Օր ըստ օրէ հիւժեալ մաշիմ,

Առանց քեզ ունայն է կեանք իմ.

Եկ նի՛ստ ընդ վիմով,

Եկ նի՛ստ ընդ վիմով.

Յանկալի՛, ցնծասցուք սիրով:

Սիրոյ քոյին յոյժ խեւացայ, նազելի՛,

Քանի որ ի քէն հեռացայ,

Վասն այն այժմոյս ի քեզ դարձայ.

Եկ նի՛ստ ընդ վիմով,

Եկ նի՛ստ ընդ վիմով.

Յանկալի՛, ցնծասցուք սիրով:

Վերին կամարաց աննման, նազելի՛,

Արփնորեկ աչերոյդ խորան՝

¹⁸ Այս բառի փոխարեն բնագրում դրված է նրա գաղափարագիրը:

Բամից ցաւոց դեղ սպեղան.

Եկ նի՛ստ ընդ վիմով,

Եկ նի՛ստ ընդ վիմով.

Յանկալի՛, ցնծասցուք սիրով:

Գրունք շրթանց քոյին շքեղ, նազելի՛,

Այտիցդ գեղն զէտ բիւրեղ,

Պարծառափայլ եւ լուսահեղ.

Եկ նի՛ստ ընդ վիմով,

Եկ նի՛ստ ընդ վիմով.

Յանկալի՛, ցնծասցուք սիրով:

Երանի տամ քեզ ունողաց, նազելի՛,

Տեսոյդ հանդէպ դեգերողաց,

Ի մէնջ զիա՞րդ շրջիս ի բաց.

Եկ նի՛ստ ընդ վիմով,

Եկ նի՛ստ ընդ վիմով.

Յանկալի՛, ցնծասցուք սիրով:

2

Արգաւանդ, պտղատու այգոյ նոր ծաղիկ, սէ՛ր իմ, նոր ծաղիկ,

Բուրի ի քէն հոտ կեցութեան անուշիկ, անուշիկ,

Զմայլեցոյց սիրահարեալս քոյդ հոտիկ, սէ՛ր իմ, քոյդ հոտիկ.

Ո՛վ աննման, ե՛կ, մի՛ թողուր զիս միայն, զիս միայն,

Ե՛կ, մի՛ մնար, ե՛կ, ոչ կարմիր կալ միայն, կալ միայն:

Բուրաստանի նման փթթեալ ծաղկալի, սէ՛ր իմ, ծաղկալի,

Ի քէն ձօն պարգեւաց գերարփի, գերարփի,

Պարտէզ հոգւոյս ոռոգես, ջուր կենդանի, սէ՛ր իմ, կենդանի.

Ո՛վ աննման, ե՛կ, մի՛ թողուր զիս միայն, զիս միայն,

Ե՛կ, մի՛ մնար, ե՛կ, ոչ կարմիր կալ միայն, կալ միայն:

Գարնանային եղանակի կարմիր վարդ, սէ՛ր իմ, կարմիր վարդ

Ոսկեճաճանջ, ահանակերտ գլխոյ զարդ, գլխոյ զարդ,

Գոհար ահանց հիւսեալ սսակ իբր զվարդ, սէ՛ր իմ իբր զվարդ,

Ո՛վ աննման, ե՛կ, մի՛ թողուր զիս միայն, զիս միայն,

Ե՛կ, մի՛ մնար, ե՛կ, ոչ կարմիր կալ միայն, կալ միայն:

Դրախտ նորագուարճ համայն բարեօք լի առատ, սէ՛ր իմ, լի առատ,
 Շքեղատիպ, լուսացնցուղ, անարտ, անարատ,
 Բաժակ ոսկի՛ լցեալ սիրով անապակ, սէ՛ր իմ, անապակ,
 Ո՛վ աննման, ե՛կ, մի՛ թողուր զիս միայն, զիս միայն,
 Ե՛կ, մի՛ մնար, ե՛կ, ոչ կարմիր կալ միայն, կալ միայն:

Երջանկատես, շքնաղատիպ ամենից, սէ՛ր իմ, ամենից,
 Մոց քո պարտէզ շնորհիւ լցեալ բարելից, բարելից,
 Յետնեալ ծառայս ա՛ռ ի ծոց քո բարելից, սէ՛ր իմ, բարելից,
 Ո՛վ աննման, ե՛կ, մի՛ թողուր զիս միայն, զիս միայն,
 Ե՛կ, մի՛ մնար, ե՛կ, ոչ կարմիր կալ միայն, կալ միայն:

ՎԱՐԴՆ ԱՍԷ

Ահա գարունն եկեալ եհաս,
 Խեղճուկ պուլպուլ քանի՞ մէկ լաս,
 Ի սար, ի ձոր երթաս եւ գաս,
 Հանդէպ ծառոյս նստեալ ողբաս,
 Մի՛ լար, իմ ժամանակն եհաս.
 Բացուիլ փայլուն որպէս էլմաս:

ՊՈՒԼՊՈՒԼՆ ԱՍԷ

Քանի աշնան հողմերն պաղ
 Փշեց՝ իմ սրտիկն ելից աղ,
 Զի շորացոյց ծառղ շքնաղ,
 Վասն այն ասեմ հազար աւաղ.
 Առաւօտուն ես վաղ ընդ վաղ
 Մինչ հայիմ քեզ՝ լինիմ զբաղ:

ՎԱՐԴՆ ԱՍԷ

Իսկապէս ցուրտ հովըն աշնան
 Զիս շորացոյց քեզ (յ)անդիման,
 Հարաւաշունչ հողմըն գարնան
 Վեր ընծիւղեաց զիս զէտ շուշան.
 Այժմ արձակեմ ճիւղ հրաշագան,
 Ունելով վարդ՝ կարմիր ինքեան:

ՊՈՒՂՊՈՒՂՆ ԱՍԷ

Ուրեմն եմ գամ քեզի մօտիկ,
 Շինեմ զբոյնս իմ խորոտիկ,
 Իմ ցանկալի վարդ խտուտիկ,
 Հագեր ես կանանչ տերեւիկ,
 Միշտ ծիծաղիս որպէս մանկիկ,
 Բուրելով հոտ քո անուշիկ:

ՎԱՐԴՆ ԱՍԷ

Կարի գանգատ ունիմ ի քէն,
 Դու ողբալով կառնես ինձ գեն,
 Զի սիրելի կարծիս յինէն,
 Սակայն անհաշտ ունիս ինձ քէն,
 Այդ արտասուքն հեղա(ա)լ ի քէն
 Հուր կու դառնայ, կայրէ զիս մէն:

ՊՈՒՂՊՈՒՂՆ ԱՍԷ

Ինձ պարտ էր քեզ մեղադրել,
 Զքոյդ ի քեզ մատուցանել,
 Որպէս ոխ ունիմ սիրադ անել,
 Որ կու բացուիս ինձ շեմ ձայներ.
 Մի՞թէ ունիս ինձ պէս ընկեր՝
 Վասն քո շրջող միշտ երեր:

Ը**Ի ԴԷՄ ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ ՅԻՍՈՒՄԻ**

Սոսկալի աւուրն ահաւոր ուրբաթոյն մեծի,
 Զոր հեղուսիք բեւեռեցին զքեզ, Տէ՛ր, ի խաչի,
 Զհանդուրժեալ շարշարանաց հանուրցդ արարչին,
 Խաւարեցաւ լոյս արեւոյն ի միջօրէին:

յԱհէ աստուածային փառաց քոյին սասանէր
 Երկիր՝ հիմանց տատանելով, սաստիկ դղրդէր,
 Վարագոյր տաճարին վերուստ ի վայր պատառէր,
 Մահ անմահիդ մահկանացուաց յայտնի քարոզէր:

Քամք աստեղաց սգաւորեալ ի սուգ նստէին.
 Ընդ խաւարիլ արեգական ինքեանք լռէին,
 Զօրք հրեղինաց մի առ միով յերկիր ճեպէին,
 Զքեզ ի խաչին տեսեալ՝ Տե՛ր եւ Աստուա՛ծ կարդային:

Պոչելով անդ՝ է՛լի, է՛լի՝ փառակցին քո հօր,
 Հալածեցին գիշերն ի մէնջ՝ ծագելով նոր օր,
 Որով յայտ (յ)անդիմանեցաւ բանսարկուն հօր,
 Ի յահէն փախուստ արշաւէր՝ մնալով անգօր:

Իջիր դու բանական հոգով, ուր էին կապեալ
 Հոգիք նախահարցն ի դժոխս՝ յոյժ տարակուսեալ,
 Զոր եւ կանուխ գալուստին քո՝ նոցա ծանուցեալ.
 Զմիտս նոցին անջինջ գրով կայր տալաւորեալ:

Սուրբ յարութեամբ քո վերածեր զԱզամն առաջին
 եւ ընդ նմին ազատեցեր ծնունդս նորին,
 Որով զուարճացեալ ցնձան բանակըք վերին,
 Քանզի նոքօք լցեր զթիւ անկելոց դասին:



Ի ԴԷՄՍ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՅՆ

Սուրբ հոգի, անսուեր լուսատու եւ լոյս,
 Անվայրափակ արեւ, անկելոյս իմս յոյս,
 Ծխով մեղաց սեւացաւ զհոգի գերոյս,
 Լուսաւորեալ գերիս, փայլեցո՛ղ զէտ լոյս:

Անձն իմ որպէս երկիր ջրոյդ ծարաւի,
 Ուստի կարդամ առ քեզ լուր վաղվաղակի,
 Զի թէ անփոյթ առնես՝ անձն իմ նուաղի,
 Իբրու խոսպան այգի փուշ պտղաբերի:

Բենոյդ աղաղակեմ՝ մի՛ դարձուցաներ
 Զերեսս քո յինէն, ո՛վ դու անկեղծ սէր,
 Իմ աղետիցս գոյժ մի՛ անտես առներ,
 Ապա թէ ոչ կորուսեցելոցն եմ ընկեր:

Գերոյս լեր օգնական, ո՛վ դու Սուրբ հոգի,
 Որով մէզ խաւարին յինէն փառատի,
 Ձի ճանապարհ վերնոյն Երուսաղէմի
 Քոյին նպաստութեամբ ինձ առաջնորդի:

Ինձ լսելի արա ցնծութեան ձայն քո,
 Թէ՛ եկ առ իս, ազնիւ ծառայ իմ յարգոյ,
 Ի քեզ անկայ յորովայնէ մօր իմոյ,
 Ուրեմն եւ զիս հրաւէր ձայնիւ բերկրեցո՛:

Սուրբ եւ մաքուր անուամբ թէ կեցուցես զիս,
 նաեւ ողորմութեամբ փրկես զգերիս,
 Յայն ժամ յայտ (յ)անդիման իսկ ծանուցանիս,
 Ինձ՝ շնչին ծառայիս, Տէ՛ր, բացափայլիս:

Ճ

Ի ԴԻՄԱՅ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՅՆ

Սահման սիրոյ երկնածորան, որ ի վերուստ ծագեցար,
 Հանգոյն մեղրածաշակ շրոյ՝ հողեղինաց արբուցար,
 Ո՛ր, լոյսդ անստուեր երրորդ ժամու՝ մետասանիցն ցուցար,
 Առ ի վերուստ իբրեւ զցօղ իմաստ քոյին կաթեցաւ, կաթեցաւ:

Անմահ բանին հօր փառակից, դու համագոյ Սուրբ հոգի,
 Որք սպասեալ հօր աւետեաց անսուտ բանին կենդանի,
 Ո՛ր, ուստի հրաքատակ երկնից սիրաշարժ, ո՛վ բաղձալի.
 Առ ի վերուստ իբրեւ զցօղ իմաստ քոյին կաթեցաւ, կաթեցաւ:

Բարունեաց լցուցիչ աղբիւր՝ աննիազ, առատահոս,
 Տուիչ թարգմանութեան լեզուաց՝ յայտնիչ խորոց բարբերոյս.
 Ո՛ր, նաեւ յոմանց խաւար մտաց լուսաւորիչ մշտալոյս,
 Առ ի վերուստ իբրեւ զցօղ իմաստ քոյին կաթեցաւ, կաթեցաւ:

Գումար դասուց մետասանից քեզ սպասեալ մնային
 Ի վերնատանն՝ ակն ունելով ըստ խոստման Սուրբ Միածնին,
 Ո՛ր, ի ժամ իշման քո առ նոսա՝ պարառելով հրճուէին,
 Առ ի վերուստ իբրեւ զցօղ իմաստ քոյին կաթեցաւ, կաթեցաւ:

Իմանալի կենաց վտակ, դու կենսատու ամենից,
 Որ եւ զարդարեցեր շնորհիւ զդասըս մետասանից,
 (Ո՛ր), ուստի զհոտ քո տարածեալ սփռեցաւ ծագս բնաւից.
 Առ ի վերուստ իբրեւ զցօղ իմաստ քոյին կաթեցաւ, կաթեցաւ:

Սրբացուցիչ հոգ(ւ)ոց մերոց, ո՛վ Սուրբ Հոգի գերունակ,
 Միշտ օրինես լուսազարդիք՝ անհամեմատ եւ անքանակ,
 Ո՛ր, յարկ առնելով երեքանձնեայ եւ բնութեան միայնակ,
 Առ ի վերուստ իբրեւ զցօղ իմաստ քոյին կաթեցաւ, կաթեցաւ:

ԺԱ

ՆՈՐԻՆ ԱՍԱՅԵԱԿ ԽՐԱՏՕՐԷՆ

Սուտ, անցաւոր, պատիր կենաց, անձն իմ, քանի՞ մէկ խարիս,
 Պանդխտացեալ ի կեդարեան մութ վրանի բնակիս,
 Արդ, վերջապես մեռանելով դու ի հողոյ վիճակիս,
 Որով զազիր, գարշ եւ վատթար մարմնով ի հողոյ վիճակիս:

Բենակիր սուրբ առաքեալ Պօղոս զքեզ խրատէ.
 Ո՛չ զբաղել սիրով կենոյս պարսաւելոյ՝ յորդորէ,-
 Գեղաշէն վերինըն Սիօն գնալ՝ քեզ միշտ խրատէ,-
 -Ոչ ունիմք մեք քաղաք աստէն մեզ մնալոյ,- բարբառէ:

Իսկ Սողոմոն համանման մեծաւ փողով գոչէ զայս.
 - Ունայնութի՛ւն ունայնութեա՛նց, վարկպարագի է կեանս այս,
 Սարսափելի մեծ ատենին խղճահարեալ զղջանաս,
 Բայց անօգուտ ապաշումամբ, քանզի աստէն խոտանաս:

Վայր ի վերայ վայր կարդաս,
 Անձն իմ, քեզէն ողբալի,
 Բինոյն երեսացն վարեալ,
 Գիւաց լինիս փարելի:
 Արդ, մի՛ մնար դու, ո՛վ անձն իմ,
 Պարտաւոր մեղաց գերի,
 Եպերենաց քոյր հաշիւն
 Տո՛ւր աստէն զղջմամբ սրտի:

ԺԲ

ՆՈՐԻՆ ԱՍԱՅԵԱԼ Ի ԴԷՄ ԱՆՁԻՆ ԻԻՐՈՅ

Արդ, ընդէ՞ր տրտում ես, սիրտ իմ վարանեալ, աւա՛ղ,

Կամ թէ ընդէ՞ր խռովեա զիս յուսահատեալ,

Խոստովանիր¹⁹ Քրիստոս փրկիչ բարերար, անձն իմ.

Յուսա՛ ի նա, զի նա է կեանք կեցուցիչ,

ո՛հ, ո՛հ, մեղաց ազատիչ:

Նա որ վասն իմ ազատութեանն սակի, աւա՛ղ,

Ոչ գարշեցաւ առնուլ մարմին մեղսալի,

Մի՛ երկբայիր, թէ զքեզ փրկել ոչ կամի.

Յուսա՛ ի նա, զի նա է կեանք կեցուցիչ,

ո՛հ, ո՛հ, մեղաց ազատիչ:

Աստուածն բան մարմնով հովիւ կոչեցաւ, աւա՛ղ,

Սիրով քոյին անիծից բարձրացաւ,

Այլ եւ ազդու սրով սաստիկ խոցեցաւ.

Յուսա՛ ի նա, զի նա է կեանք կեցուցիչ,

ո՛հ, ո՛հ, մեղաց ազատիչ:

Որոյ վիրաց կրկին վտակ մաքրարար, աւա՛ղ,

Արին եւ ջուր բղխեաց՝ մեղաց սրբարար,

Յնձա՛, սիրտ իմ, զի նա է քեզ հաշտարար յաւէտ.

Յուսա՛ ի նա, զի նա է կեանք կեցուցիչ,

ո՛հ, ո՛հ, մեղաց ազատիչ:

Ի ԴԷՄ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Սրբուհի կո՛յս՝ համատարած արարածոց արարչին

Դու ես ծնող անախտարար՝ բարձո՞ղ երկանց եւային,

Յո՛յս իմ, անարատ կոյս:

Անքանակ միութեան խառնարան՝ անժամանակ փեսային,

Տաղաւար հօրն երկնաւորի ազատարար զաւակին.

Յո՛յս իմ, անարատ կոյս:

¹⁹ Բնագրում խոստովանիմ:

Բենոյն իջեւան թագունի՜ տապան կենսունակ բանին,
 Մա՛ռ կենաց՝ տնկեալ, Մարա՛ մ, աներկեւան դրախտին.
 Յո՛յս իմ, անարատ կոյս:

Պերագոյն երկնաձիր հացին գերամբարձ սեղան նորին,
 Աշտանակ ոսկեղէն՝ կերտեալ լուսընկալ նոր խորանին.
 Յո՛յս իմ, անարատ կոյս:

Իմանալի տնկոյն ստեղ՝ բարունակ սուրբ ողկուզին,
 Սրովբէից տարփալի տաճար, ամպ թեթեւ՝ կո՛յս տիրածին.
 Յո՛յս իմ, անարատ կոյս:

Սիրաշարժ հայրառաք բանին, տալիթա՛յ, լոյս լուսածին,
 Զուր կենաց՝ պասքեալ բնութեանս, յորդարուխ սուրբ դրախտին.
 Յո՛յս իմ, անարատ կոյս:

Վանիչ խաւարի մթութեան,
 Անհամեմատ կո՛յս Աստուածածին,

Բամից արարչին լուսոյ
 Դուռն երկնամոյժ տաճարին.

Յո՛յս իմ, անարատ կոյս:

Անպարագիր արփոյն շաւիղ,

Պարագրող կո՛յս անքնին,

Երկնային դասուց գեր ի վեր

Տիրամայր կոյս՝ մայր բանին.

Յո՛յս իմ, անարատ կոյս:

ԺԴ

Ի ԴԻՄԱՅ ԱՐԲՈՅՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ

Սուրբ Ստեփանոս՝ քաղցրաձայն հաւ,

Ակնաբաց զիտես ընդ հարաւ,

Հազարապետ բանին անբաւ.

Սուրբ Ստեփանոս՝ մաքրամիտ հաւ.

Միածնին անարատ վկայ,

բարձրուղեշ արմաւ:

Արդ դու խաշելոյն խաշակիր,
 Արդիւնաբեր մշակ ընդիր,
 Քո սուրբ արիւնդ հեղաւ (յ)երկիր,

Սուրբ Ստեփանոս աստուածակիր,
 Բանին հօր եւ հոգւոյն տաճար,
 Վկա՛ յ գերընտիր:

Բամեալ քարինոս որպէս շուշան,
 ԶՅիսուս տեսեր դէմ (յ)անդիման,
 Կանգնեալ ընդ յաջմէ հօր էական,
 Սուրբ Ստեփանոս՝ գուշակ գարնան.
 Անմարմնոց դասքն ի հանդէս քո
 պարառեալ ցնծան:

Քերագոյն՝ նման անմարմնոց,
 Հանդիսադիր եղել սրբոց,
 Որպէս զգառն ի մէջ գայլոց.
 Սուրբ Ստեփանոս, դու հայր սրբոց,
 Սաքրող աղ համեմիչ նեխեալ մեր
 հոգւոց:

Ի հանդիսի քո կատարման
 ժողովք հրէից գումարեցան,
 Սողոս կամէր զլոյսդ անխափան
 Սուրբ Ստեփանոս, շիջանիլ [զայն].
 Քեզ բացեալ յերկնից պատուհան
 եւ լոյս ցնծութեան:

Սիրով հոգւոյն գոլով լցեալ,
 Եղեւ երկնից դուռն բացեալ,
 Յիսուս անդուստ խրախուսեալ.
 Սուրբ Ստեփանոս՝ շնորհիւ լցեալ,
 Սրբասուն մարմնոյդ հոյլք վերին
 ի պատիւ իջեալ:

Վարդագոյն կաթիլք քո արեան,
 Աննման մարմնոյդ որ հեղան,
 Բամից ցաւոց մեր սպեղան,
 Սուրբ Ստեփանոս՝ ցող քաղցրութեան,
 Ծովածուփ կենցաղոյս ունայն
 փրկառիթ տապան:

Գու իսկ ուռկան բանին կենաց
 Արկիր ի ծով հոգիս մարդկանց,
 Պօղոս կարգիւ հանէր ի բաց.
 Սուրբ Ստեփանոս՝ աղբիւր կենաց.
 Քարոզութեամբ քո դասեցեր
 Ընդ հրեշտակաց հոգիս մարդկանց:

Երկնաձիր պարգեւաց երկիր,
 Տապանակ՝ ոսկեայ, կենսակիր,
 էական այգոյն գերընտիր.
 Սուրբ Ստեփանոս՝ մշակ ընտիր,
 Քեզ աղաչեմ բարեխօսեա՛
 բանին գերընտիր:

ԺԵ

Ի ՎԵՐԱՅ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ԳՐԻԳՈՐԻ
 Ի յելից կուսէ հրաւէր հարսանեաց
 Առաքելաշնորհ բանիւ քարոզեաց,
 Հարսնարանին մեզ պարակից արտադրեաց
 Սուրբն Գրիգոր Լուսաւորիչ Պարթեւաց,
 Զոր ի մարմնի անմարմնապէս գեր փայլեաց:

Սրբութեամբ ընկալաւ լուծ կենարարին,
 Արօրապէս հերկեաց զսիրտ արքային,
 Սերմն կենաց բանին էառ ի նմին,
 Սուրբն Գրիգոր Լուսաւորիչ Պարթեւաց,
 Զոր ի մարմնի անմարմնապէս գեր փայլեաց:

Անմահութիւնս մեր աղն պատուական
 Խառնեալ (յ)եղաշրջեաց սուրբ անապական,

Զի ծանտրութիւն աղին կրեաց մեզ փոխան
 Սուրբն Գրիգոր Լուսաւորիչ աննման,
 Որով եղաք շնորհաց հոգւոյն կայարան:

Բենւոյն բանիւ ի յանձն էառ զկիրք խաշին,
 Մեզ կարապետ եղեւ երկնի կամարին,
 Խնդրեալ եգիտ սուրբ մարգարիտն այն անգին,
 Սուրբն Գրիգոր Լուսաւորիչ [մերային]
 Ազգս Հայոց կոչեաց սեղան սուրբ հացին:

Գեղեցկապէս շրջէր լերանց գագաթան,
 Զի Եսայի ետես ի վաղ վաղորդեան.
 Բարձրաբարբառ փողէր համբաւ հաշտութեան
 Սուրբն Գրիգոր Լուսաւորիչ սրբազան.
 Իսկապէս նոր արեւ մեղաց մթութեան:

Իմանալի որթոյն ողկուզ սուրբ ընտիր,
 Գինի ուրախարար շնորհաց՝ գերընտիր,
 Որով զմայլեցոյց զմեզ լիալիր.
 Սուրբն Գրիգոր Լուսաւորիչ բարելիր
 Բանիւ շնորհաց արար մեզ աստուածակիր:

Սուրբ բերանոյն ծորէր ոտին՝ ցաւոց դեղ,
 Յորդորելով, թէ՛ մտերո՛ւք դուռն ընդ նեղ,
 Ազգս Հայոց ծնաւ ողջոյն զէտ բիւրեղ,
 Սուրբն Գրիգոր Լուսաւորիչ արփնագեղ
 Տարամերժեաց մեզ ի ռահէն մահատեղ:

Վառեա՛ լուսով քոյին,
 Անտես միտք հիքոյս,
 Բախացո՛ միտք հիքոյս,
 Դառնալի ոգւոյս,
 Ահա անկեալ փարիմ
 Ի Պատուական քոյս,
 Ո՛վ սուրբ Գրիգոր,
 Միջնորդ լեր վասն իմ խեղճոյս,
 Երջանիկդ պաղատիմ
 Տալ ինձ շնորհաց լոյս:

ԺԶ

Ի ԴԷՄՍ ԱՆԱՌԱԿԻՆ

Ի հայրենի գթոյն տարամերժեցայ,
 Հայրենատուր շնորհացն վատնող գտայ,
 Ընտանի խնամոց նորին հեռացայ,
 Ի թակարդ թշնամոյն անկեալ մահացայ:

Սառուցեալս ի սիրոյ կենսառիթ տեղւոյն
 Տարադէպ մերժեցայ զօրաց հրարուն,
 Քանզի ցանկալով մահածին պտղոյն՝
 Անկայ ի ձեռս անմարմին շարին անքուն:

Անհնարին դիմօք, յարաժամ ոգով
 Շրջապատեալ եղէ մեղսամած մտով,
 Վարեալ արգիլեցայ կալանս՝ լի բոցով,
 Ուրանօք հուր անշէջ անլոյս մնալով:

Բամբ խաւարասէր անհաշտ թշնամեաց
 Յաւէտ զիս ընդ իւրեանս ունին ակնաբաց,
 Օր ըստ օրէ փութան հնարս տանջանաց,
 Առադրեն լալ աշաց, կրճտել ատամանց:

Գերիս անմխիթար վարանեալ այսպէս,
 Միշտ ցանկայի եղջերամբ յագել խոզապէս,
 Ուստի զելսն իրացն եղել հանդէս,
 Թէ զիս՝ րդ փրկիցիմ անմարմին մայլէս:

Իսկ իմ եկեալ ի միտ՝ առ այն խորհելով,
 Թէ քանի՛ք կան վարձկանք հօրս ընթեր կալով,
 Դարձայց եւ ես՝ մեղա՛յ առ քեզ՝ գոչելով,-
 Ընկալ եւ զիս՝ ընդ ծառայս քո դասելով:

Սաստիկ սիրով դարձեալ առ նա ողբալով,-
 Քեզ առաջին մեղա՛յ, հա՛յր իմ,- գոչելով,
 Ուստի նա բնական գթոյն շարժելով
 Ել ընդ առաջ սիրով համբոյր ինձ տալով:

Վաղվաղակի ասէ՛ երթեալ փութացէ՛ք,
Արդ զեզն պարարակ զենեալ մատուցէք,
Բախացեալ այսօր հրճուեալ ցնծացէք,
Գարձման անառակի որդւոյն խնդացէք:

Ահա երէց եղբայրն իմ եկեալ ասէ,-
Պարգեւապերճ փառօք զիա՞րդ զարդարէ,
Եղեռնագործ ձեռացն զարդ շնորհէ,
Տալով իշխանութիւն ի թիւս մեր կարգէ:

Բարկացեալ լի ցասմամբ ի բաց հրաժարէ,
Առաջարկեալ զիւր արդիւնս ցուցանէր,-
Լաւ է ինձ յարաժամ բացեայ կալ՝ ասէր.
Ոչ մի վասն իմ շետուր, ձայնիւ բողոքէր:

Հիւժեալ որդոյ ասէ՛ միշտ մոլի²⁰
Յանկութեամբ շար գործոց վարեցաւ գերի,
Ուստի աւանդ քոյրին վատնեսցի ի մարմնի,
Յագմամբ քաղցր եղջերին գոլով գայրենի:

Էական բնութեամբ հայրն բարերար
Ասէ՛ Ո՛վ դու որդեակ իմ, մի՛ բարկանար,
Սա մինչեւ ցայսօր որպէս մեռեալ կայր,
Այսօր կենդանացաւ, պարտ է քեզ խնդալ:

²⁰ Հավանաբար տողում մի բան պակաս է:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԽԱԺԱԿ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

**ՑՈՒՑԱԿ ՁԵՌԱԳՐԱՅ Ս. ԱՍՏՈՒԱԾՆԱՅ ԵԿԵՂԵՅԻՈՅ ԹԱՎԱՍՈՒ. ՀԱՃԻ ՊԵՅ
ԿԻՐԻՒՆԼԵԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ՁԵՌԱԳԻՐ ԳՐԵԱՆՔ**

(ԿԱԶՄԵՅ ՏՐԴԱՏ ՎՐԴ. ՊԱԼԵԱՆ)

1968 թուականին, երբ պրպտումներ էի կատարում Փարիզի նուպարեան մատենադարանում, մեր ուշադրութիւնը գրաւեց մի ձեռագիր տետր՝ կարուած «Տրդատ Պալեանի ցուցակ հայերէն ձեռագրաց ի Թուրքիա» Ա. հատորի առաջին եւ երկրորդ տպագիր տետրերի հետ նոյն կազմում (թիւ 4661 Cote III, 7.9.):

Այդ ձեռագիր տետրակը վերնագրուած էր «Ցուցակ հայերէն ձեռագրաց Ս. Աստուածածնայ Եկեղեցւոյն Թալասու վերին Թաղի. հատոր Ա. Կեսարիոյ վիճակ տետր Գ.»: Այս տետրը, համաձայն սկզբում դրուած «Ընդանուր տախտակ ձեռագրաց»-ի, պիտի բաղկացած լինէր երկու մասից: Առաջին մասը պարունակում է 14 ձեռագիր «Կեսարիոյ վիճակ»-ի Թալասու վերին Թաղի Ս. Աստուածածնայ Եկեղեցու, իսկ երկրորդ մասը բաղկացած է 5 ձեռագրից, որոնք պատկանում էին Հաճի Պէյ Կիրիւնլեանին:

Բնագիրը սեւագիր է, գրուած է փոխնիփոխ մատիտով եւ թանաքով

անորակ թղթի երկու երեսների վրայ, որով եւ տեղ-տեղ ճապաղուած է, խառնուած եւ դժուար ընթեռնելի, որի հետեւանքով անկասկած մեր արտագրութեան մէջ սպրդած են սխալներ: Բայց եւ այնպէս նշումներ ունի մաքրագրութեան համար, որով եւ առաջնորդուել ենք արտագրելիս:

Ինչպէս յայտնի է, Տրդատ Պալեանի այս ձեռագրացուցակը դեռեւս հրատարակուած չէ առանձին գրքով, բայց նրա առաջին մասը, որ ինչպէս մասնանշեցինք, ընդգրկում է Թալասի Վերին Թաղի Ս. Աստուածածնի 14 ձեռագրերը, հրատարակուած է Կ. Պոլսում լոյս տեսած «Լոյս» շաբաթաթերթի 1905 թուի էջերում (էջ 661, 664, 776-778, 827-828, 967-971, 1138-1140, 1249-1251):

Մեզ շաշոդուեց պարզել արդեօ՞ք ցուցակի երկրորդ մասը հրատարակուած է, թէ՛ ոչ: Այս նշխարը փրկելու համար հրատարակութեան ենք յանձնում, պահպանելով բնագրի ուղղագրութիւնը՝ իր սխալներով հանդերձ: Բացում ենք բոլոր յապաւումները եւ աւելացրած գրերը դնում ենք ուղղանկիւն փակագծերի մէջ:

Բնագրում, եթէ յստակ չեն կարդացվում եւ տարակուսելի են, ուղղանկիւն փակագծերի մէջ դնում ենք հարցական նշան: Թուային արժէք ունեցող գրերը դարձրել ենք գլխագիր եւ նրանց առջեւ, փակագծերի մէջ, դրել ենք արաբական թուանշանով համարժէքը: Յատուկ անունները, որոնք բնագրում ընդհանրապէս փոքրատառ են գրուած, դարձրել ենք գլխագիր: Գլխագիր ենք դարձրել նաեւ նախադասութիւնների սկզբնատառերը: Ձեռագրերի նկարագրութեան մէջ հանգամանքների ցուցիչները բնագրում մերթ ընդգծուած են երկու գծով, մերթ՝ մէկ գծով: Միօրինակութիւնը պահպանելու համար, հետեւելով Պալեանի տպագիր ձեռագրացուցակների օրինակին, ամենուրեք դարձրել ենք գլխագիր*:

* Մեր խոստման համաձայն, տպագրում ենք հանգուցյալ Խաժակ Տէր-Գրիգորյանի՝ Նուբարյան մատենադարանում հայտնաբերած Տրդատ վրդ. Պալեանի ձեռագրացուցակի պահպանված մասը՝ առանց միջամտության: Որոշ շտկումներով Խ. Տէր-Գրիգորյանի ներկայացրած նյութը հրատարակված է նաեւ Գ. Տէր-Վարդանյանի «Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Կեսաբիայ, Զմիւռնիայի եւ ի շրջակայս նոցին. կենսամատենագիտութիւն Տրդատ եպիսկոպոս Պալեանի: Երեւան, 2002» ձեռագրացուցակում, էջ 102-109 - (Խմբ.):

Յ Ո Ւ Յ Ա Կ

ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՅ

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԱԼԱՍՈՒ

ՎԵՐԻՆ ԹԱՂԻ

ԵՒ ԿԻՒՐԻՒՆԼԵԱՆ ՍԵՓԱԿԱՆ-1893

ԿԱԶՄԵՅ

ՏՐԴԱՏ ՎՐԴՊ. ՊԱԼԵԱՆ

ՀԱՏՈՐ Ա.

ԿԵՍԱՐԻՈՅ ՎԻՃԱԿ-

ՏԵՏՐ Գ.

ՀԱՃԻ ՊԷՅ ԿԻՒՐԻՒՆԼԵԱՆԻ ՍԵՊՀԱԿԱՆ

ՁԵՌԱԳԻՐ ԳՐԵԱՆՔ

ԹԻԻ 1. ԱԻԵՏԱՐԱՆ (1 տառի տեղ դ գործածած)

ԿԱԶՄ հին արեւելեան, տախտակեայ կաշէպատ, կազմին ներքին կողմը կտաւ փակցուած է. ՄԵՄՈՒԹԻԻՆ 25.5x16.5 հարիւրդ մէթր. ԹՈՒՂԹՔ 253 կամ 506 էջք. ԳԻՐ մանր երկաթագիր մեսրոպեան տառ. ընտիր սեւ մելան. ԳՐՈՒԹԻԻՆ միասիւնակ. 19x11 հրդմ. ՏՈՂ 22. ՀԱՆԳԱՄԱՆՔ թեւ մաքուր պահուած է, բայց վերջին թղթերուն ծայրերն քիչ մը մաշած. նիւթ թուղթ փամփակեայ. փոքր ինչ դեղնագոյն եւ ողորկեալ. ԿԻՍԱՆՈՐԱՆ թղ. 77ա. 122ա. 198ա. ԽՈՐԱՆՔ թղ 1բ. Եւսերեայ. թղ. 2 նաեւ: Թղ. 4ա: ՊԱՏԿԵՐՔ թղ. 3բ Մատթ. 121 բ. Ղուկաս. թղ. 197. Յովհ. Հին ձեւերով նկարուած. ԳԼԽԱԳԻՐՔ սեւ մելան. մեծ երկաթագիր. ԴԱՏԱՐԿ թղ. 1ա, թղ. 3. թղ. 197ա. ՊԱԿԱՍ թղ. 76 մկրատուած է. ԺԱՄԱՆԱԿ գրութեան ՈՒԳ (=1174). ՏԵՂԻ Եղեսի ընդ հովանեաւ Ս. Վասիլ: ԳՐԻՉ Բարսեղ. Տէր զսրբազան քահանայ Գրիգոր. Տեղեկութիւնք. սկիզբն եւ վերջն մէկ մէկ մագաղաթեայ թղթեր կան Աւետարանի հատածի. 2 թղ. 1ա դատարկ երեսին վրայ օտար գրիչ մը նօտրագրով անընթեանելի ձեւով զղջման ձեւով մեղայ մը գրած է 112: Աւետարանս այս բաւական թանկագին գործ մըն է: ԵԶԵՐՉԱՐԴՔ. Թուով 176. ամէնն ալ կարմիր գոյն եւ փոքր կլորակներ են. մի քանի հատ միայն մեծագոյն. եւ 226ա եզերզարզը գլուխ Յովհ. Աւետարանչի:

ՄԱՏԵԱՆՍ Է ԱԻԵՏԱՐԱՆ

1. Թղ. 4ա-75բ. Աւետարան ըստ Մաթէոսի. սկիզբն Գիրք ծննդեանց Յիսուսի Քրիստոսի որդոյ Դաւթի որդոյ Աբրահամու.

2. Թղ. 77ա-121ա. Աւետարան ըստ Մարկոսի. Սկիզբն Աւետարանի ՅիՔի, որպէս եւ գրեալ է յէնա մարգարէ.

3. Թղ. 122ա-196բ. Աւետարան ըստ Ղուկայ. սկիզբն Քանդի բազումք յաւժարեցան վերըստին կարգել զպատմութիւն.

4. Թղ. 198ա-252բ. Աւետարան ըստ Յովհանն. սկիզբն Ի սկզբանէ էր բանն, եւ բանն էր առ Ած, եւ Ած էր բանն.

Յիշատակարանք

1. Թղ. Յբ. (առաջին պատկերի վրայ մատենիս գրչէն) - Աւետարանչիս բարեխաւսութեամբ Տէր ողորմեա Գրիգի (Գրիգորի) կրանաւորի որ ստացաւ զաւետարանս յարդար վաստակոց իւրոց:

2. Թղ. 74բ. Զմեղապնդեալ գրչիս յիշեա յաղ.

3. Թղ. 196բ. Փառք Փրկչին եւ յիշատակ գրչիս, զԲարսեղ մեղապնդեալ գրիչս յիշեսչիք աղաչեմ աղաչեմ.

4. Թղ. 253 - գլխ. յշտ. Փառք Ամենասուրբ Տէրութեանն եռակի սեռահիւսակ տեսակի ամէն ամէն. Արդ շնորհին Տեառն սկսա եւ ողորմութեան նորին կատարեցի զսուրբ եւ զածայարմար պատուիրանս, զհոգիաբուլս աղբիւրս, ուստի յետոմադիր դրախտէն որ է նոյն ինքն Աստուածութիւնն, յորոց բխեաց ի մեզ աղբիւրն կենաց հոգին սուրբ, ուստի շորեքվտակեան գետս հոսել յեկեղեցի, եւ լուսաւորեաց զհաւատս Քի. զբանաւոր կենդանիքս որ հաւաքեալ կան ի գաւթի սուրբ եկեղեցւոյ, յորոց իբրեւ ի հոտոյ խնգոց եւ ի տաշխից եւ ի բազում զանազան հոտոց անուշից լցան ամենայն տիեզերք, փայլմամբ լուսոյ արեգականն արդարութեան, ուստի ցայթմ. շառաւեղ ի.. լուսաւորեացան նուազելի փայլմամբ զփիւրս (զսփիւռս՝ - Խ.) հեթանոսաց, ես Բարսեղս փցուն գրիչս եւ յետինս յամենայն ոք մեծ ջանիւ եւ աշխատութեամբ(ք) ի յանգ ածի զսայ, ի թուականիս հաոց ՈՒԳ (1174) ի մեծ եւ հռչակաւոր քաղաքիս Եղեսեայ ընդ հովանեաւ սրբոյ Հայրապետիս Վասլի:

Արդ որք ընթեռնոյք կամ ընդաւրինակէք զմեռեալս մեղաք յիշեսչիք ի Տէր, եւ զծնողան իմ ննջեցեալք ի Քս, զի սովոր է մարդասէրն ի ձեռն այլում աղաւթից այլում ողորմել. ընդ նմին եւ զստացող սբ Աւետարանիս զսրբազան քահա[նայ] զԳրիգոր որ ցանկացաւդ եղեալ պատուիրանիս Տն. որում զնմանութիւն բերելով յինքեան զանուանակցին իւրս զԼուսաւորչին ո եւ որք յիշեք յիշեսչիք եւ դուք ի Տէ(ք), :::: Եւ անմահին փառք յաւիտեանս յաւիտենից ամէն ամէն:

2. ԱԻԵՏԱՐԱՆ (1 տառի տեղ դ գործածած)

ԹՈՒՂԹՔ 311 կմ 622 էջք. ՄԵՄՈՒԹԻԻՆ 18.5 x 14.5 հրդմ. ԿԱԶՄ հինարեւելեան, տախտակեայ կաշէպատ, առաջին երեսն արծաթապատ միջինը խաչգիր բոլորագիր մաքուր, գրութիւն երկսիւնակ. 13x9.5 հրմ. սիւնակաց միջեւ

եղած միջոցն 1 հրդմ. ՏՈՂՔ 21. ՀԱՆԳԱՄԱՆՔ մաքուր պահուած է. նիւթ թուղթ փամփակեայ, ողորկեայ. ՊԱՐԱՊ թղ. 1, 2ա, 3բ, 4ա, 5բ, 6ա, 7բ, 8ա, 9բ, 10ա, 11բ, 12ա, 13բ, 14ա, բ, 15ա, 244ա, 310բ, 311: ԽՈՐԱՆՔ թղ. 2բ, 3ա, Խորան Եւսեբեայ. թղ. 4բ, 5ա, 6բ, 7ա, 8բ, 9ա, 10բ, 11ա, 12բ, 13ա. համաձայնութիւն, եւ թղ. 16ա, 105ա, 161ա, 245ա, Աւտ թց (դժուարընթեռնելի - Խ.) պատկերք. թղ. 15բ, Մատթէոս, 164բ մարկոս 160բ Ղուկաս, 244բ Յովհ. ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԴՔ թուով 202. ծաղենակար եւ պատկեր են. ԶԱՐԴԱԳԻՐՔ՝ ԹՈՉՆԱԳԻՐՔ են ամէն գլխոյ սկզբնագրերն, ԳԼԽԱԳԻՐՔ կարմրաւ են, վարի լուսանցքը ՎԿՍՈՒԹԻՒՆՔ գրուած են. ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐՔ յը. 101բ, 156բ, 160ա, 243, 308բ, 310բ. գրիչ Բարդամ Դպիր: ԺԱՄԱՆԱԿ ոհգ (= 1627): ՏԵՂԻ Սերաստիա ընդ հովանեւ Ս. Աստուածածնին. Տէր Պետրոս քահանայ. ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ, մատենիս սկզբն եւ վերջն երկուական թղթեր կան երկաթագիր գրուած Աւետարանի եւ Ածաշունչի հատածք. Բ. Ած, Տր, Յս, Քս բառերս պարբերութեանց մէջ կարմրաւ գրուած են: Մատեանս է Աւետարան.

1. Թղ. 16ա-101բ. Աւետարան ըստ Մատթէոսի.

2. Թղ. 102ա-104ա. Սկիզբն գլխոց եւ նախադրութիւն Մարկոսի աւետարանին.

3. Թղ. 105ա-156ա. Աւետարան ըստ Մարկոսի.

4. Թղ. 157ա-160ա. Սկիզբն գլխոց եւ նախադրութիւն Ղուկայ աւետարանին.

5. Թղ. 161ա-243բ. Աւետարան ըստ Ղուկասու.

6. Թղ. 254ա-308ա. Աւետարան ըստ Յովհաննու.

ՄԱՏԹ. Գիրք ծննդեան Յի Քի որդւոյ դաւթի, որդւոյ Աբրահամու, Աբրահամ ծնաւ զԻսահակ, Իսահակ ծնաւ զՅակոբ, Յակոբ ծնաւ զՅուդա.

ՄԱՐԿ. Սկիզբն Աւետարանի Յի Քի որպէս եւ գրեալ է ի մարգարէս ահաւասիկ ես առաքեմ զհրեշտակն իմ առաջի քո որ հանդերձեայք

ՂՈՒԿԱՍ. Քանզի բազումք յաւժարեցին վերստին կարգել.

ՅՈՎՀ. Ի սկզբանէ էր Բանն եւ Բանն էր առ Ած եւ Ած էր Բանն, նա էր ի սկզբանէ առ Ածն. ամենայն ինչ նովաւ եղեւ եւ առանց նորա եղեւ եւ ոչինիչ, որ ինչ նովաւ: Կեանք եւ կեանքն էր

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ.

1. Թղ. 101բ. Մատթէոս մարդ անուանեցաւ. զմարդկութիւն Տեառն սկսաւ, յԱբրահամէ պատմել կարգաւ եւ զոր արար մինչեւ յարեաւ: Երեքկնելով: չորեք տասնեաւ, քառասուն ազգաւ յառաջ տարաւ, բայց Յովակիմ այն որ թողաւ, զի անարժան համարեցաւ:

2. Թղ. 156բ. Այս Մարկոսի ասի առիւծ. զի սիգաճեմ է չէ գծուծ. արագ

յորսս այսմ բռնէ բոյժ, սոյն հարթ արար զբանս իւր գծուծ:

3. Թղ. 160ա. Զըստացաւ զբոցս զուշգնամցի մահդասի Յովանէսն, ի Տէր յիշե՛լ աղաչեմ: Մաղթեմ եւ զիս յիշելու:

4. Թղ. 243բ. Այս Ղուկասու եզն ասացին, որպէս իսկ նա հերկէ զգետին, կրկին անխոնջ վասն պտղին. նոյնպէս յերկարէ բանք սորին:

5. Թղ. 308ա. Այս Յովանէս արժուանման, թռեաւ մտաւք անհասական, առ ի պատմել բանիւ մարդկան, զանճառ էիցս հանրական:

6. Թղ. 308բ. (Գլխաւոր յիշատակարան). Փառք անեղի, անհասի, անբաւի, անքննելի, անզննելի, անհետազոտելի, եռանձնակի միասնական սուրբ երրորդութեան յաւիտեանս յաւիտենից ամէն: Գրեցաւ սուրբ աւետարան ի թվին հայոց ռհզ (= 1627) ի հայրապետութեան Տեառն Մելքիսեթի եւ ի թագաւորութեանն Տաճկաց. ի քաղաքն Սերաստիա, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, եւ սուրբ Սարգսին. ձեռամբ նուաստ եւ ներգեւեալ Բարաղամ դպրի. ի խնդրոյ պատուական եւ ճգնազգեաց քահանայի Պետրոսի, վասն զի բազում փափաքանաւք եւ ըղձալի սրտիւ ետ զսա գծել եւ նկարակերտել, ի յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց: Արդ աղաչեմ զամենեսեան որք ընթեռնոյք զսա, յիշեսջիք զվերոյ գրեալ քահանայ. եւ զհայրն իւր զմահտասի Յովանէսն, եւ զըմայրն իւր զՏովաթ, եւ զերիցակինն զՇամամ, որ հանգուցեալ է առ Քս. եւ զհարազատ եղբայրն իւր զՄարուգէ, եւ զըհաւրեղբայր/ր/ն // իւր զմահտասի Յոհան. եւ զկենակիցն իւր զՄարիամ: Որ ըստացան զսա եւ եղին յիշատակ հոգոց իւրեանց եւ ննջեցելոց իւրեանց, եւ ամենայն արեան մերձաւորացն: Քս լուսաւորէ զիւրեանց հոգին, եւ զիւրեանց ննջեցելոցն հոգիքն արքայութեան արժանի առնէ ամէն:

Յիշեսջիք աղաչեմ եւ զիս զնուաստացեալս, եւ զլցեալս զանազան շարաք.գ / / / / / / (այսպես 19 տող) դամ. եւ զԴաւիթ հայրն իմ եւ զԴոհալ մայրն իմ, եւ զեղբայր, որ գրեցի զսա, յոյժ կորացեալ հոգով, եւ խաւարեալ խորհրդով, եւ պղծեալ ցնորիւք, աղտեղեալ ի գործս, թիւրեալ ունելով զառաջնորդականս զկնի շարին ի նորին կամսն, զոր աղաւթիւք ձեր եւ ողորմութեամբն իւրով ուղղեսցէ զսա Տէր, այլ եւ յոյժ անարհեստ ի գործս, միայն ողորմութիւն Աստուծոյ, եւ յոյժ ձեռնատութիւն եւ աղօթք եղբարցս, յայս շափս եւսժ զոր շունէի ակն: Յիշեսջիք աղաչեմ եւ զուսուցիչն իմ զԳրիգոր քահանայ, եւ զժընաւդս նորա, եւ զննջեցեալքն իւր, զամ մերձաւորսն: Արդ ամէնողորմն, եւ անարգամեծարն Աստուած, որ զփոքրն պահանջէ, եւ մեզ որ յիշեմքս ի ձէնջ, եւ ամենայն աշխատելոցն ի գիրս յա՛յս եւ ի սպասաւորութիւն մեր. եւ գրողն աւրինակիս, ի տուողի, ամենայն հաւատացելոց իւրոց, եւ նմա փառք յաւիտեանս յաւիտենից ամեն: Որ մեզ լի սրտիւ եւ ծունր կրկնելով Աստուած ողորմի ասէ, եւ մեզաց թողութիւն խնդրէ, եւ իւրն ողորմեսցի Աստուած, որում փառք յան-

տեանս ամէն:

7. Թղ. 310բ. (Այլ գրիչ նորագոյն նոտրգիր) յիշատակ է այս Ավետարանը զալամբօյցի տէր Մելքոնի որդի Համբար, օվ որ կարդայ հար մեղաի յիշեսցէ ոճկ (= 1711)-ին:

Այս ավետարանին մէջ հետեւեալք կան.

1. Թղ. 234 բ Լուսանցքին վրայ յաւելուած մը կայ. եւ երեւեցաւ նմա հրեշտակ յերկնից. եւ զաւրացուցանէր զնա. եւ էր տազնապի, եւ մտադիրութեամբ եւս կայր յաղաւթս, եւ հոսէին ի նմանէ քրտունք, իրրեւ զկայլակս արեան, ոլոռն ոլոռն հեղեալ ի յերկիր:

Սոյն պարբերութեան ստորեւ գրուած է - նոր բան է ի հին թրգանն շկայ.

2. Հետեւեալ եւս. Թղ. 257ն. Լուսանցքը:

Ձի հրեշտակ Տեառն ըստ ժամանակին իջանէր յաւազանն, եւ յուզէր զջուրան, եւ որ նախ շարժումս ջուրոյն իջանէր, բժշկէր, ոչ ունելով նշան հիւանդութեան:

Սոյն պարբերութեան ստորեւն ալ է - նոր բան է շկայ ի հին արիւնակն:

3. ԸՆՆԴԷՄ ԵՕԹՆ ՄԱՀԱՅՈՒ ՄԵՂԱՅ ԵՒ ԳԻՐՔ ՈՐ ԿՈՉԻ ԸՉԳՕՆ

ԹՈՒՂԹՔ 191 կամ 382 էջք. Ձգոնի էջերուն վրայ առանձին թուանշան գրուած է էջերու վրայ. ՄԵՄՈՒԹԻԻՆ 21.5x15.3 հրդմ. կազմ. նոր արեւելեան տախտակեայ կաշեպատ. ԳԻՐ նօտրգիր, բայց սղագրութիւն եւ նշանագիր շատ կայ: Երկու գրեանց գիրն ալ միեւնոյն գրչի գործ է: ԳՐՈՒԹԻԻՆ միասինակ 16x9.5 հրդմ. 16.5x10 հրդմ. ՏՈՂՔ 31. ՀԱՆԳԱՄԱՆՔ մաքուր պահուած է. նիւթ թուղթ պինդ եւ ողորկեալ. ՊԱՐԱՊ թղ. 1-3, թղ. 96բ-99բ. եւ 101բ. եւ 188ա-191բ. վե՛րԱԳԻՐՔ կարմրաւ գրեալ են. ԳԼԽԱԳԻՐՔ մատիտով գրուած են. յշտկգրութի շունի, հետեւաբար ՏէՐ անձանօթ. Տեղի անձանօթ. ԳՐԻՉ անձանօթ. ՏԵՂԵ-ԿՈՒԹԻԻՆՔ մատենիս կազմի ներքին կողմ դեղին մէյ մէկ թղթեր կան փակցուած ու մէյ մէկ առանձինն. սոյն թղթի միոյն վրայ գրուած է. 1888 յունվար. 25 Ձգոն. Յարութիւն Ա. Կիրիւնլեան - /որ ծախու առած է/:

Մատեանս է.

Ա. Ձէն ընդդէմ վիշապին եօթն գլխենուոյ, այսինքն ընդդէմ եօթն մահացու մեղաց: Արտահանեցեալ ի լատինացւոց գրեանց, եւ շարագրեցեալ ի Պետրոս վարդապետէ Թիֆլիզեցւոյ.

1. Թղ. 4ա. Գլուխ Ա. Յաղագս հպարտութեան, տայցեն թէ հպարտութիւնն իշխիցէ զգայուէ //, կմ բանից քոց. /2 պրակ/

2. Թղ. 6բ. Գլուխ Բ. յաղագս անուանելոյ շարութեան հպարտութեանն, սկիզբն, սկիզբն ամ մեղաց է հպարտութիւնն

4. Թղ. 10ա. Գլուխ Գ. Հպարտութիւնն ատելի է առաջի Աստծոյ եւ մարդկան, սկիզբն առ այս ասէ սբն Սգոստինոս, թէ գրեթէ ոչ գոյ այնպիսի գրուած, եւ գիրս սրբոց, ուր ոչ հնչիցի ձայնս այս. (2 պրակ).

5. Թղ. 12ա - Գլուխ Դ. ցրուեաց զամբարտաւանս ի մտաց սրտից. յաղագս պատժոյ հպարտութեան, սկիզբն թէպէտ դատաւորն պատժեաց (2 պրակ)

6. Թղ. 14բ.

7. Թղ. 16ա - Գլուխ Ե. Դեղ եւ դարման ընդդէմ հպարտութեան. Սկիզբն. մարդ՝ մեծագոյն շարութեանն հպարտութիւն (2 պրակ)

9. Թղ. 19բ. Գլ. Զ Յաղագս այլոց դեղոց ընդդէմ հպարտութեան. սկիզբն որպէսզի ոք կարիցէ բուժել հպարտութիւն իւր. (2 պրակ)

Այս գլուխս ունի 6 այլեւայլ պատմութիւններ հպարտութեան վրայ.

Վախճան ընձեռուածոյն՝ որ յաղագս առաջնոյ գլխոյ վիշապին զհպարտութեան:

Բ. ՅԱՂԱԳՍ ԱԳԱՀՈՒԹԵԱՆ

1. Թղ. 22ա-24բ. Գլ. Ա. Յաղագս անյազ որպիսութեան եւ անճահ զբաղմանց ազահութեան. սկիզբն Բան. Ազահն ոչ լւանի ընչիւք, եւ որ սիրէ զհարստութիւն զպտուղ ոչ առնէ ի նմանէ. Սկիզբն. Վիպասանք նմանեցուցանեն ազահութիւն (2 պրակ)

2. Թղ. 25բ. Գլուխ Բ. Թէ ազահութիւն է սկիզբն ամենից շարեաց. (2 պրակ)

3. Թղ. 29բ. Գլ. Գ. Թէ ազահն ատելի է առաջի Այ եւ մարդկան (2 պրակ)

4. Թղ. 33ա. Գլ. Դ. Թէ ազահութիւնն է նշան դատապարտութեան (2 պրակ)

5. Թղ. 36բ. Գլ. Ե. Դեղ ընդդէմ ազահութեան. (2 պրակ/sic/)

Այս գլուխս եւս ունի 9 պատմութիւնք ազահութեան մասին:

Գ. ՅԱՂԱԳՍ ԲՂՋԱԽՈՂՈՒԹԵԱՆ

1. Թղ. 41բ. Գլ. Ա. Յաղագս շարագոյն որակութեանն բղջախոհութան. (2 պրակ)

2. Թղ. 44բ. Յաղագս թէ հուրն ցանկութեան է դիւրին. եւ համանգամայն դժուարին. (2 պրակ)

3. Թղ. 48բ. Յաղագս թէ բղջախոհութիւնն որքան ատելի է Այ, այնքան սիրելի է դիւաց. (2 պրակ)

4. Թղ. 51բ. Յաղագս խստագոյն դատաստանի եւ պատժոյ բղջախոհաց (2 պրակ)

5. Թղ. 54ա. Դարձեալ Յաղագս պատժոյ բղջախոհաց.

6. Թղ. 55ա Յաղագս դեղոց ընդդէմ բղջախոհութեան մարմնոյ.
Այս գլուխն ալ ունի 10 զնզն պատմութիւնք բղջախոհութեան վրայ

Դ. ՅԱՂԱԳՍ ԲԱՐԿՈՒԹԵԱՆ

1. Թղ. 58ա. Գլ. Ա. Յաղագս վատթար որակութեան եւ վնասու բարկութեան. (2 սրակ)

2. Թղ. 60ա. գլ. Բ. Թէ բարկութիւնն պատճառ է բազմաց կարեաց (2 սրակ)

3. Թղ. 63բ. Գլ. Գ. Յաղագս թէ բարկութիւնն գարշելի է ի յերկինս եւ յերկրի

4. Թղ. 67ա. Գլ. Դ. Յաղագս թէ գոյ եւս բարկութիւն բարի

5. Թղ. 69բ. Գլ. Ե. Յաղագս սպեղանոյ բարկութեան.

Այս գլուխն ալ ունի 14 զանազան պատմութիւնք.

Յաղագս որկրամոլութեան

1. Թղ. 73բ. Յաղագս յոռի բարուցն որկրամոլաց.

2. Թղ. 76ա. Թէ զեխութիւնն է պատճառ բազում չարեաց եւ յանկարծահաս մահուան.

5 պատմութիւն կայ:

Նախանձ

1. Թղ. 79ա. Գլ. Ա. Յաղագս թշուառական կենացն նախանձոտաց.

2. Թղ. 81ա. Գլ. Բ. Յաղագս մեծի թշուառութեան նախանձու, որ է մեղք սատանայական.

3. Թղ. 84ա. Գլ. Գ. Թէ նախանձոտն պատժի խստաբար.

Ունի 7 պատմութիւն

Յաղագս ծուլութեան

1. Թղ. 86ա. Գլ. Ա. Յաղագս բնութեան եւ գործոց ծուլութեան.

2. Թղ. 86բ. Գլ. Բ. Ե- ծուլութիւն է մայր բազում չարեաց.

3. Թղ. 88բ. Գլ. Գ. յաղագս պատժոյ ծուլից, զոր Աձ սպառնայ.

4. Թղ. 90բ. Գլ. Դ. Սլաք ընդդէմ ծուլութեան.

Ունի 5 զնզն պատմութիւն

Թղ. 94ա-96ա. Յանկ գլխոց այսորիկ գրգկան. եւ ցուցակ պատմութեանց

Թղ. 100ա.

Բ. Գիրք որ կոչի Լզգօն, արարեալ սրբոյն Յակոբայ Մեծբնայ Հյրտին, ըստ խնդրոյ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, ներթուում կենարարին ներմարմնութեանն ԳՃ եւ հնգին:

ՀԱՏՈՐ Ա.

1. Թղ. 100բ. Յանկ գլխոց
2. Թղ. 101ա. Թուղթ Ս. Գրիգորի մերոյ Լուսաւորչին՝ առ սուրբն Յակոբ Մծբնայ եպսն. Սկիզբն. Բայց քեզ. սիրելի իմ. հարց եւ խնդիրս եղաւ.
3. Թղ. 102ա Սրբոյն Յակոբայ Մեծբնայ եպսի, պատասխանի թղթոյ Ս. Գր. Լուսրչին. Սկիզբն. վասն հաւատոյ. ճառ Ա. Զթուղթ հրովարտակի քոյ ընկալայ ես եւ իբրեւ
4. Թղ. 107ա. Վասն օրինակի սիրոյ. ճառ երկրորդ. Սկիզբն. Հաւանութիւն ամ օրէնք եւ մարգարէք՝ յերկուս պատուիրանս կախեալ կան, որպէս ասաց Տէր.
5. Թղ. 113բ. Վասն օրինակի պահոց. ճառ երրորդ. Սկիզբն. Ընտրեալ են պահք սուրբք առաջի եւ ի պահեստի են իբրեւ զգանձ յերկինս, եւ զէն են ընդդէմ շարին:
6. Թղ. 119ա. Օրինակ աղօթից. ճառ Չորրորդ. Սկիզբն. Սրբութիւն սրտի՝ է աղօթ, առաւել քան զամենայն աղօթս, որ ի ձայն բարձր բարբառոյ ոք կայցէ.
7. Թղ. 123ա. Օրինակ պատերազմի. ճառ հինգերորդ. Սկիզբն. Այս հոգք խորհրդեան անկանի ինձ յայսմ ժամանակի՝ վասն խոռով շարժմանն.
8. Թղ. 130բ. Օրինակ ուխտաւորաց. ճառ վեցրդ. Սկիզբն. Իրաւի է բանս, զոր ասեմս. եւ ամենայն ընդունելութիւն արժանի զարթնուլ ի քնոյ յայսմ ժմկի.
9. Թղ. 138ա. Օրինակ ապաշխարութեան. ճառ եօթներորդ. Սկիզբն. Անպարտ միմիայն է յամենայն ծնունդս, որ զմարմին զգեցաւ Տէր մեր Յի Քի. ոպ. եւ ինքն իսկ վկայեաց.
10. Թղ. 143բ. Վս յարութեան մեռելոց. ճառ ութերորդ. Սկիզբն. Հակառակութիւնք հանապազ այսր լինին, զիա՞րդ, ասեն, յառնեն մեռեալք, կամ որո՞վ մարմնով գան.
11. Թղ. 149ա. Վս խոնարհութեան. ճառ իններորդ. Սկիզբն. Բարւոք է խոնարհութիւնն յամենայն ժամ, յամ նեղուեաց ապրեցուցանէ զայսոսիկ, ոյք մերձենան առ նա.

ՀԱՏՈՐ Բ.

Ճառք Ս. Յկրչ Մծբնյ Հյրպին ընդդէմ հրէից, գրեալ առ սբն Գ. Լուսաւորիչն մեր.

1. Թղ. 156բ. Վասն թլփատութեան. Սկիզբն. Իբրեւ օրհնեաց Աձ զԱբրահամ, եւ արար զնա գլուխ ամ հաւատացելոց արդարոց՝ եւ ստուգից.

2. Թղ. 161բ. Վս Զատկաց. Սկիզբն. Ետ սրն հրաման Մովսիսի՝ առնել զԶատիկ ի չորեքտասաներորդ առաջնոյ ամսոյն, եւ ասաց.

3. Թղ. 162բ. Վս Շաբաթու՝ ընդդէմ հրէից. Սկիզբն. Հրամայեաց Տէր Մովսիսի ծառայի իւրոյ՝ աւուրն շաբաթու զի պահեսցեն որդիքն Իսրայէլի, եւ ասէ.

4. Թղ. 167ա. Օրինակ ցուցանելի վս ընտրութեան կերակրոց. Սկիզբն. Յոյժ իմս երկուացեալ աստ անդեն /SiC/ միտք, եւ խորհուրդք տգէտ եւ տխմար մարդոյ վս ինչ ինչ.

5. Թղ. 171բ. Վս հեթանոսացն մտանելոյ փոխանակ ժողովրդեանն հրէից. Սկիզբն. Կանխաւ կոչեցեալք էին հեթանոսք յամ լեզուաց ի ժառանգութեան բարձրելոյն՝

6. Թղ. 174բ. Յուցանի, թէ Քս է որդի Այ. Սկիզբն. Պատճէն բանից ընդդէմ Հրէից զի հայհոյեն զժողովուրդն հեթանոսաց. եւ ուրանան եւ ասեն.

7. Թղ. 178բ. Օրինակ ցուցանելի ընդդէմ Հրէից՝ վս կուսութեան եւ սրբութեան. Սկիզբն. Կամ է ինձ, սիրելի իմ, ի հարկէ, զի տաց քեզ հաւանութիւն ի նոսա.

8. Թղ. 182բ. Յանդիմանութիւն ընդդէմ Հրէից. վս զի ասեն, թէ կայ մեզ ժողովեալ. Սկիզբն. Բարբառ սբ Այ լսելի եղև, եւ առաքեաց զնա հանել զժողովուրդ իւր լեզիպտոսէ.

(Յիշատակար շունի)

4. ԺՈՂՈՎԱԾՈՅ

ՄԵԿՆ. ԵՐԳՈՅ ԵՐԳՈՅՆ ԵՒ ՄԵԿՆ. ՏԵՍԼԵԱՆ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ

ԹՈՒՂԹՔ 311 կմ 622 էջք. ՄԵՄՈՒԹԻԻՆ 20.8x15.6. հրդմ. ՊԱՐԱՊ. Թղ. 1, 29, 96, 311. ԿԱԶՄ արեւելյան տախտակեայ կաշէպատ, ներքին երեսը կապոյտ կտաւ փակցուած է. ԳԻՐ բոլորագիր մաքուր, ԳՐՈՒԹԻԻՆ երկսիւնակ 13.5x9 հրդմ. սիւնակաց միջև եղար բացութիւն է 3/4 հրդմ. ՏՈՂՔ 22-24. հանգամանք մաքուր պահուած է. ՆԻԻԹ Թուղթ հաստ փայլուն, ՎԵՐՆԱԳԻՐՔ, ԶԱՐԴԱԳԻՐՔ են ամէն զլիսոց սկզբնագրերն, կիսախորան՝ Թուով Թղ. 14ա, 142բ խորան Թղ. 30ա, 97ա. ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԻ ԳՐԻԶ.ՏԷՐ.ՏԵՂԻ.ՏԵՂԵԿՈՒԹԻԻՆՔ.ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԴՔ. Թուով 2+ 1+ 1+ 1+ 1- (պահուած է բնագրին հարազատ, որից պարզ երեւում է, թէ ցուցակը թերաւարտ է եւ սեւագիր վիճակում - Խ.)

Մատեանս է ԺՈՂՈՎԱԾՈՅ

Ա. Սկիզբէն 3 Թուղթ պատրած է, որքն նօտրգրով գրուած են եղեր, որուն մնացորդն Թղ. 4ա. նմոյշ մը հետեւեալն. Վասն ուղտանկ հարթելոյ. Ե. բուրճն պարտ է որ հարթես.

Բ. 1. Թղ. 4բ. Քարոզ կրկին աստիճանաց՝ որք են վարդապետք եւ հայրա-

պետք. Սկիզբն. Սքանչելի այրն Այ մարգարէն Զաքարիաս ցուցանէր զտեսիլ մարգարէութեան իւրոյ.

2. Թղ. 7բ. Գրիգորի եռամեծի եւ քաջ հռետորի եւ զերահոշակ փիլիսոփայի. քարոզ վս գաւազան եւ իշխանութի տալոյ եւ վարդապետութեան կարգ կոչեցելոյ եւ քարոզութեան հրաման նորընծայ վրդպին. Սկիզբն. Ի բանն որ ասէ մրպէս աշաքեաց զիս Հայր... (2 գլուխ).

Գ. 1. Մարդակազմութիւն - Յաղագս մարդակազմութեան ամ անդամոց գոյացուի բոլոր մարմնոյն եւ ամ զօղածոցն. սկիզբն՝ Ստուգն ճարտարօք ընտրած իմաստասիրաց եւ բժշկական, վարդապետք հելլենացւոց եւ յունաց եւ երբայեցւոց վարդապետք եւ իմաստուն բժշկանց ընտրած, յիմանալոյ զբան մարդոյն, զստեղծուածքն, զանդամքն, զբնութիւնքն, զօղուածքն եւ զջիւն, եւ զլեղին եւ զջրհեղս, թէ որպէս գոյացան.

2. Թուղթ 10ա. Յաղագս ստեղծման զլիսոյն եւ յղեղան. Սկիզբն. Ասէ իմաստունն Գալիանոս, թէ արար աստուած զգլուխ մարդոյն եւ հաստատեաց ի ներ ըղեղն եւ զամենայն իմաստութիւնն.

3. Թղ. 18ա. Վասն ըստեղծման աչացն որ ստեղծեաց Ած. Սկիզբն. Յօրինեաց ած զաչքն // վասն տեսութեան մարդոյն.

4. Թղ. 18բ. Վասն ստեղծման ականջացն որ ստեղծեաց Ած. Սկիզբն. Յօրինաց զականջն վասն լսելոյ.

5. Թղ. 19ա. Վասն ըստեղծման քթին. Սկիզբն. Ստեղծեաց Ած. ըզքիթն որ զամենայն ինչ հոտ լան եւ վատթարն յիմանայ.

6. Թղ. 79բ. Վասն ըստեղծման բերանին. Սկիզբն. Ստեղծեաց Ած. զբերանն վասն ուտելոյ.

7. Թղ. 20ա. Վասն սրտին. Սկիզբն. Ստեղծեաց Ած զսիրտն թագաւոր ամենայն անձին.

8. Թղ. 20բ. Վասն թոքին. Վասն լերդին:

9. Թղ. 22ա. Վասն երիկամացն. Վասն լեղուցն. Վասն բաղարշտին. Վասն երիկամացն. Վասն երկուսանն. Վս ստամոքացն. Թղ. 24ա. Վասն աղէճորտին. Վսոսկերացն եւ ջիւացն. Թղ. 26ա. Վս անդամոց.

Դ. Թղ. 30ա-95բ Մեկնութիւն Երգոց Երգոյն Սողոմոնի

Ե. Թղ. 17ա-142ա (Անվերնագիր) Սկիզբն. Հնագոյն նաւավարին զկնի նաւելոյ ի բազում ամիսս եւ յամս ի վերայ անշափ ծովուն յովկիանոսի կարծելով թէ վերջին սահմանքն, եւ եզերքն յաշխարհի, վերջանային անդ

Զ. Թղ. 142բ-310ա Մեկնութիւն յայտնութեանն Երանելոյն Յովհաննու աւետարանչին (գլ. 1Գ)

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Թղ. 31ա Գլխաւոր յիշատակարան. Փառք... արդ՝ գրեցաւ հոգիակեցոյց տառս եւ ոսկիաբողբոջ բողաստանս՝ եւ երկնահրաւէր գանձս, որ կոչի մեկնութիւն Երգոց Երգոյն Սողոմոնի, եւ մեկնութիւն տեսլեան երանելոյն Սբյն Յոհաննու Աւետարանչին, ձեռամբ յեւքառացի Տէր Յովհաննէս անարժան իրիցու ի Թուահաշութիւնս մերում ՌԲՃԳ (1754) մարտի ամսոյ է. եւ ի հայրապետութեան Սրբոյ էջմիածնի Տն Աղէկսանդր Կաթուղիկոսի Ամենայն Հայոց. եւ ի առաջնորդութեան նահանգիս մերոյ Տր Դաւթի արքեպիսկոպոսի: Արդ՝ որք հանդիպիք այսմ աստուածայնոյ գանձարանիս, յիշեսջիք արեւելցի ի գիւղէն Անապատցի Սարգիս ամուճան, որ այսմ ամի Աժ փոխեցաւ, սայ ըստացաւ ի հալալ արդիւնոյ եւ արդար վաստակոց իւրոց, եւ ետ յիշատակ նոյն առաջնորդի ձեռնասուն աշակերտին Տէր Պետրոս զգօնամիտ վարդապետին որ էր լուսարար Սբյ Ամլորդոյն շնորհատու շիրիմին, զոր Տր Յս բարեաւ խաղաղութեամբ վայելել տացէ անջնջելի ընդ երկայն աւուրքք, ամէն: Եւ դարձեալ կրկին երես անկեալ աղաշեմ զի եթէ ընթեռնելով կամ օրինակելով յիշեսջիք զանարժանս ի մաքրափայլ յաղօթս ձեր, զստացօղ զրքիս Սարգիս ամիճան եւ ըզգրող տառիս, եւ ձեր յիշողաց եւ մեր յիշեցելոցս, եւ արժանի լիցին զերանաւէտ ձայնին անթառամ պսակին, որ է ասէ եկայք արհնեալք հետ իմոյ. ժառանգիցէք զանսպառ ուրախութիւն եւ արհնեալ արքայութիւնն, ամէն:

5. ԿԱՆՈՆԳԻՐՔ

ԹՈՒՂԹՔ 222 կամ 444 էջք. ՄԵՄՈՒԹԻՒՆ 20x15 հրդմ.0 ԿԱԶՄ արեւելեան տախտակից կաշեպատ: ԳԻՐ բոլորգիր անվարժ գրչի գործ: ԳՐՈՒԹԻՒՆ միասիւնակ 16x11.5 հրդմ. ՏՈՂՔ 23-24. ՀԱՆԳԱՄԱՆՔ բաւական լաւ պահուած է. նիւթ թուղթ հաստ. ՎԵՐՆԱԳԻՐՔ եւ ԵՐՔԵՄՆ ԳԼԽԱԳԻՐՔ կապտագոյն են. ՅՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ Թղ. 70ա. 94ա. 221ա. 222բ. ԺԱՄԱՆԱԿ ՌՂ. (= 1641). Գրիչ Թումասոմն. ՏէՐ գրիչն. ՏԵՂԻ Ղայա բունար. մատենիս մէջ տեղ-տեղ պարբերութեանց վրայ գծեր քաշած է նոյն իսկ գրիչն. եւ տեղ-տեղ լուսանցից վրայ ալ յաւելումներ ըրած է, գրութեան ժմնկ մոռացածներն յաւելցնելով. ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ սկիզբն երկու եւ վերջն մէկ պարապ թղթեր կան:

Մատեանս է ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

1. Թղ. 1ա-15ա, Կանօնք եւ կրթօնք սրբոյ առաքելոց Տն մերոյ Յսի Քսի.
2. Թղ. 15ա- 23բ. Երկրորդ առաքելական կանոն գլխուք Զն. [85]
3. Թղ. 23բ-24բ. Սահմանք կանոնաց սբ Առաքելոցն Թաթէոսի.

4. Թղ. 24բ-29ա. Անկուրիա կանոնիս. Գլուխ Ի. [20]
5. Թղ. 25ա-33ա. Կանոն Նիկիական, Ի. [20]
6. Թղ. 33ա-34ա. Կոստանդիանոսի Թագաւորի առ եպս. եւ առ...
7. Թղ. 34ա-38բ. Կանոնք Գ. [3] Նիկիականք զոր եղին ՅժԸ. [318]
8. Թղ. 38բ-39բ. Կանոնք Սբյն Գրիգորի Առաքելոյ Հայոց. գլ. Լ. [30]
9. Թղ. 40ա-51բ. Կանոնք Աթանասի. Գլուխ Զէ. [87]
10. Թղ. 52ա-56ա. Երանելոյն Մակարայ Եղմի հյպտին
11. Թղ. 56ա-57ա. Կոստանդնուպալիսի ի ժողովոյն, գլ. Գ. [3]
12. Թղ. 57ա-62ա. Սահմանք կանոնադրութեան Գր. Ածարանի Ազիազու եպսի.
13. Թղ. 62ա-78ա. Կանոնք Բարսեղի, Առ Ակեղաքոս. գլ. Ծա. [51] (Առն Ակեղաքոս)
 1. Թղ. 70ա. Տր Ած Թող զանցանս Թումասիս, եւ անարժանիս եւ ծնողաց եւ նախ/ն/եաց իմոց Գարձեալ Մկրտիչ եպս ահրի եւ ծնողաց եւ նախնեաց նոցին, եւ որ ձեռնատու եւ աւժարական կենօք ի գիր տառիս եւ որք սրտի մտօք յիշեն եւ քեզ փառք յօրտեանս, ամէն:
 14. Թղ. 71բ-94ա. Գիր կանոնական Ս. Բարսեղի վսն պէսպէս եւ բիւրապատիկ ախտից գլ. ՄԶԲ. [272]
 2. Թղ. 94ա. Տր Ած Թողուի մեղաց շնորհես Թումասիս եւ ծնողաց իմոց, եւ զարմիցս եւ քեզ փառք յօրտեանս ամէն:
 15. Թղ. 94ա-96ա. Կանոն Տն Եփրէմի.
 16. Թղ. 95ա-100բ. Կանոնք Ներսէսի կթղկսի եւ Ներշապհոյ Մամիկոնէից եպսի. գլ. Լէ. [37]
 17. Թղ. 100բ-103բ. Կանոնք ի Կեսարիայ (եպս. Ի.), գլուխ Ժ. [10]
 18. Թղ. 103բ-106բ նէոյ Կեսարիա, գլ. Ի. [20]
 19. Թղ. 106բ-110բ Գանգրայ, գլ. ԻԳ. [23] կամ ԻԵ. [25]
 20. Թղ. 110բ- 117բ. Անտիոքայ, գլ. ԻԵ. [25]
 21. Թղ. 117բ-119բ. Խոստովանուի Անտիոքայ ժողովոյն.
 22. Թղ. 119բ-123բ. Կանոնք որ սահմանեցին յԱնտիոքայ.
 23. Թղ. 123բ. Կանոնական գիր Տն Եպիփանու ասացեալ.
 24. Թղ. 124ա Կանոն Կիւրղի Աղէքսանդրացոյ.
 25. Թղ. 125ա-131ա. Կանոնք Ս. Սահակայ յաղագս քորեպսի.
 26. Թղ. 131ա-135բ. Նորին Ս. Սահակայ թէ ոպ սահմանեցօ կարգ ուխտի եւ որոշումն վանաց.
 27. Թղ. 135բ-138ա. Նորին թէ որպէս պարտ է եպսց ունել վանս ի սրյ եկեղեցոյ
 28. Թղ. 138ա-144բ. Ի Թղթի աստ. ապաշխարուե բանք ԺԶ. [16]

29. թղ. 145ա-Յովանն /Մա/նդակունոյ հյց կթղկսի բան կանոնական
30. թղ. 146ա-Աբրահամու Մամիկոնէից եպսի, առ Վաշագան Աղուանից
արքայ.
31. թղ. 147բ. Կանոնք Սահակայ վերջնոյ հյց կթղկսի.
32. թղ. 149բ-156ա. Կանոնք Ովանիսի յԻմաստասիրի հյց կթղկսի. գլ. ԼԲ
[32]
33. թղ. 156ա-160բ. Կանովք Սիովնի հյց կթղկսի. գլ. ԻԳ. [24]
34. թղ. 160բ - Սահմանադրուի կանոնի Վաշագանայ Աղուանից Արքայի,
եղեալ ի ժողովն որ ի յԱղուանս եղեւ.
35. թղ. 163ա. Կանոն Դրնայ սբ ժողովոյն գլ. ԺԲ. [12]
36. թղ. 158ա. Սրբոյն եղիշէի կանոնաց գլ. ա. [1]
37. թղ. 172ա. Սահմանք եւ կանոնք կարգի եկեղեցոյ Ս. Ներսէսի հյց հա-
յարպետի . գլ. խդ.[44]
38. թղ. 173բ. Կանոնք Յովաննու Մանդակունեացոյ հյց կթղի. գլ. Է. [7]
39. թղ. 177բ. Կանոնք Յե(պի)փանու Կիպրացոյ եպսի.
40. թղ. 181ա. Հարցումն Թէոդորոսի քհնյի եկեղեցւոյն Կեսարու. առ
Երանելին Եպիփան ի Կիպրոս.
41. թղ. 182բ Կանոնք Յովաննու Եմյ եպսի.
42. թղ. 183ա. Սեպրիանոսի // յՂուկայ // յաւտար(անշ)ին // մի //
43. թղ. 183բ. Ներսէսի կթղկսի եղբար // Տն Գրիգորի հյց կթղկսի վս ազ-
գականութեան
44. թղ. 186ա-196ա Կանոնք // զգուշօրք // քհնցից. համառօտ
45. թղ. 196ա. Եզ(ն)կայ // Կողբացոյ հյց վարդապետի - Նորին բան երկ-
րորդ
46. թղ. 197ա. Վս քհնյգործութիւն // կարդաց // պատրաստուի //
47. 200ա Յաղակս դատաստանաց իջեւանայ ի վանորայս.
48. 200բ Յաղակս դատաստանաց ամուսնութեան եւ քանիանութեան
ազգականաց.
49. թղ. 203ա. Յաղակս // դատաստանաց թէ ըստ աւրինաց եւ կանոնաց
որպէս զուգին եւ թէ որոց ներելի է եւ զորս բաժանելի.
50. թղ. 206ա. Յաղակս // դատաստանաց հաստատուի վաճառաց.
51. թղ. 206բ. -,-,- բաժուց հարսանաց.
52. թղ. 206բ. -,-,- ի ծառէ անգելոց // եւ կախելոց.
- 53 թղ. 207բ. Յաղակս // դատաստանաց սպանելոց ի կենդանաց
54. թղ. 207 բ. -,-,- զմարդ ի ճանապարհս եւ այլ գործ առաքելոց եւ
վնասելոց.
55. թղ. 208ա. -,-,- մանկանց ուսուցալեաց.

56. Թղ. 208բ. -,- դաս//ց արբեցութեան.

57. Թղ. -,-,-,-,-, -այգեգործաց, մշակաց ընկերաւոր մասնաւորաց, հակա-
րալաց // եւ վարձկանց //

58. Թղ. 209ա Յաղագս դատաստանաց հովուց եւ անդէորդաց

59. Թղ. 209բ.,.,.,., նուիրաց յեկղց հող եւ ջուր կմ այլ ինչ.

60. Թղ. 210ա.,.,., վաճառաց.

61. Թղ. 210բ.,.,., բանից արուեստականաց.

62. Թղ. 211ա.,.,., վարձկանաց վնասողաց զգործիս

3. Թղ. 211ա. Աւրհնուի գոհուի եւ փառաբանուի քեզ դատաւոր արդար
Տր իմ Յի Քի փառաւորեալ ընդ Հաւր եւ ընդ Հոգոյց Սրբոյ, որ շնորհեցեր մարդ-
կան ազգի զդատաստանս իրաւացի, որք դատիցեն արդարուք, զդատապար-
տեալսն ստուգուք, եւ զծագրիս դատաստանի վերջագծել զդատաստանս, եւ
արդ հայցեմ Տր բարերար ի քում արդար դատաստանիդ մի դատեսցես զդատե-
ցեալս, այլ ներեսցես դատագրողիս, զդատ վճիռ դատայապարտիս, եւ շնորհե-
ցես ձիր պարգեւաց յառատաձիր ողորմութեանցդ, դասելով աշակողմեանն
ձայնակցելոց արհնաբանիցն, ի թուիս ՌՂ (1641) գրեցաւ տառս ձմռամբ ան-
արժան ԹՈՒՄԱՍԻ, ի գաւառիս որ կոչի Ղայ այ Փուղար, որք հանդիպիք սմայ
յիշման արժանի արարէք զմեզ, եւ զմերսն ամ ծնաւդք իմ եւ զարմիրք:

63. Թղ. 211բ-215բ Համառատ ժողովոյն արիւնաց վերլստին.

64. Թղ. 215բ. Աօրէնք Ածագիրք ի ձեռն Մովսէսի յելից գրոց.

65. Թղ. 218բ. Աւրէնք Ղեւտացւոց գրոց.

66. Թղ. 221ա. Ընդհանրական թղթոյն ներսէսի կթղկս հյց վս խնամու-
թեան

67. Թղ. 221բ. Վս աստիճանաց ազգակցո(ւթեան) երրորդ գրոց, տիտ-
ղոս:

4. Թղ. 222բ. (Այլ գրիչ) յիշատակ է կանոնքս Մկրտիչ եպս հաւրն Մելքո-
նին, մաւրն Մանիարին, հաւր եղբաւր Գրիգոր(ին).

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱԽՏԱԿ ՁԵՌԱԳՐԱՅ ԹԱՎԱՍՈՒ

ԹԻՒ	ԱՆՈՒՆ	ՆԻՒՔ	ԹԵՐՔ	ՄԵԾՈՒ- ԹԻՆ	ԳԻՐ	ԹՈՒՆ- ԿԱՆ	ԳԻԶ	ՏԵՂԸ	ՏԷՐ
1	Շարակնոց	Քուղք	420	11.5x8.5	բոլորգիր	1660	Սահակ դպիր	Վան	S. Նիկողայոս
2	Ժողովածոյ	„	309	15.5x10.5	նօսրգիր	1622	անձանք	անձանք	անձանք
3	Պորփիւր	„	245	19x15	„	1619	Յոհան դպիր	Կամինից	Ղուկաս սրբ
4	Քարոզգիրք	„	384	27x19.5	„	ժԸ դար	անձանք	անձանք	անձանք
5	Սարմա	„	պա- կա	15.5x10.5	բոլորգիր	ժԷ դար	Անտոն Բահանայ	„	„
6	Ճարտասանաբիւն	„	88	20x13	նօսրգիր	1807	Յակոբ Սարկաւազ	Ս. Կոյի վանք	Գրիշը
7	Պատմ. Սոկրատոյ	„	114	19.5x15	խան	ժԷ՝ դար	անձանք	անձանք	անձանք
8	Գանձարան	„	332	18x13	բոլորգիր	1478	Յովսէփ իրէց	Մովք	Գրիշը հն
9	Մաշտոց	„	206	15.74x10.5	խան	1727	Յովսէփ դպիր	Եւ Բասայ	S. Յակոբ Բհնյ
10	Ժողովածոյք	„	206	16.4x10.5	նօսրգիր	1695	Մովսէս Զուղայեցի	անձանք	գուցէ Գրիշը
11	Ձեռնամուծումն	„	84	21.5x15	„	ժՔ դար	անձանք	„	անձանք
12	Գիրք ոսկիկանք	„	243	24.5x20.3	„	1780	Պետրոս եպս	Կիսարիա	Գրիշը

13	Ժողովածոյ Ներածութիւն Պոր- փիտի եւ մկմնու- րիւն Ն. Լամբրոնա- ցոյ	147 283	28.5x21 21x15	„ „	ժԸ դար ժԷ դար	Պեղորգ Աբեղայ	„ անձանօր	„ անձանօր
1	Աւետարան	բոսրք 253	Հանի Պեյ Կիւրիւնեանին պատկանած ձեռագիրք 25.5x16.5	Բարսեղ 1174	Բարսեղ	Եղիսիա	զԱր. Գր. Բա- նա	Պետրոս Բնիկ անձանօր
2	Աւետարան	„ 311	18.5x14.5	Բոլորգիր	1627	Բարդամ դպիր	Սիբաս անձանօր	
3	Զգոն	„ 191	21.4x15.3	Բոլորգիր	ժԷ դար	անձանօր		
4	Ժողովածոյ	„ 311	20.8x15.6	Բոլորգիր	1754	Յովնն. Բնիկ	Էմաուսայ	Սարգիս ամունան Գոյգէ Գրիչ
5	Կանոնգիրք	„ 222	20x15	„	1641	Քոմսա	Ղալայիփուղար	

Rose Varteni CHÉTANIAN

ENQUÊTE SUR LES FRAGMENTS GRECS CONSERVÉS AU
MATENADARAN
D'EREVAN
UN PREMIER BILAN
UMR-CNRS 6125

L'objectif de cette enquête est d'établir, en collaboration avec les conservateurs de la bibliothèque, un catalogue des manuscrits grecs et des fragments grecs conservés au Matenadaran. Ce programme a fait l'objet d'une convention signée entre le Directeur du Matenadaran, M. Sen Arevshatean, représenté par M. Gevorg Ter Vardanian, et M. Gilles Dorival, Professeur à l'Université d'Aix-Marseille I, membre senior de l'Institut Universitaire de France, Directeur de l'UMR 6125.

Certains fragments sont conservés à l'intérieur de manuscrits et d'autres, détachés de la reliure des manuscrits, sont conservés dans des enveloppes.

I. À L'INTERIEUR DES MANUSCRITS 1. Catalogues.

Les manuscrits répertoriés par les catalogues existants

• *catalogue 1965, colonne 1416. 33 manuscrits contenant du grec¹: de M 141 à M 3461 dans le tableau ci-dessous.*

• *catalogue 1970, colonne 1212. 1 manuscrit : M 5554 qui contient un cryptogramme en grec.*

• *catalogue 1970, colonne 1220. 22 manuscrits : M 6122 à M 10711 dans le tableau ci-dessous.*

¹ Le M 2983 est annoncé par erreur par Bihain comme contenant du grec : il contient un lexique italien/ turc (?)

Le M 8193 est un palimpseste.

Certains manuscrits, soit ne sont pas mentionnés dans le catalogue comme contenant du grec [1190], soit sont omis dans la colonne de présentation mais sont bien annoncés à leur propre notice comme contenant du grec [8615], soit encore sont répertoriés dans le catalogue informatique en cours de confection [10616, 10711].

Sur ces 56 manuscrits, 51 sont dénombrés par E. Bihain (1972) dans :

[EB] E. Bihain, «Մաշտոցի անվան Մատենադարանի հունարեն ձեռագրերը», Պատմա-բանասիրական հանդես, 1972, 1 (56), էջ 266-268. «Maštoc'i anvan Matenadarani hunaren jeřagrerə» Patma-Banasirakan handes 1972, 1 (56), pp. 266-268.

[BLF1] B.L. Fonkič, P. Ֆոնկիչ, «Մատենադարանի հունարեն ձեռագրերը», Բանբեր Մատենադարանի, (12), 1977, էջ 305-325. «Matenadarani hunaren jeřagrerə», Panper Matenadarani (12), 1977, pp. 305-325.

Également dans B.L. Fonkič :

[BLF2] B.L. Fonkič, Studia codicologica. In Zusammenarbeit mit J. DUMMER, J. IRMSCHER und F. PASCHKE herausgegeben von K. TREU [Texte und Untersuchungen zur Geschichte der altchristlichen Literatur, 124], Berlin, 1977, pp. 189-195. (N° 317 dans le Répertoire de M. Richard)

Et ils figurent dans le Répertoire de Marcel Richard :

[MR] Répertoire des bibliothèques et des catalogues de manuscrits grecs de Marcel Richard. Troisième édition entièrement refondue par Jean-Marie Olivier (IRHT, CNRS), Brepols-Turnhout, 1995, pp. 283-285.

Hormis le palimpseste 8193 et le cryptogramme 5554 qui n'ont été étudiés par personne, les fragments en grec contenus dans ces manuscrits constituent des pages de garde.

2. Descriptions.

Nombre de ces fragments ont été déjà décrits plus ou moins précisément.

A - Le fragment 141 a été décrit précisément par A. Abrahamyan dans :

Ա. Աբրահամյան, «Դիոսկորիդեսի Պատարիկը», էջմիածին, 8, 7-8

(1951), pp. 44-54.

« *Dioskoritesi Patařkă* », *Ėŷmiacin*, 8, 7-8 (1951), pp. 44-54.

Cette description fait référence à quelques pages d'un ouvrage auquel renvoie également, à propos de ce fragment, E. Bihain :

C. Kühn, *Dioscoridis. De materia medica libri quinque*, Leipzig, 1828/1829, t. I, pp. 499-500.

1828 est la date donnée par E. Bihain ; 1829, celle donnée par E.E. Granstrem, dans l'article ci-dessous où il mentionne également l'existence de ce précieux fragment :

E. E. Granstrem, *Греческие рукописи в собраниях Советского Союза in Византийский Временник, том XI, (1956), pp. 285-291* : liste des publications récentes ou peu connues sur les manuscrits grecs des bibliothèques d'Erivan, Ivanovo, Jaroslav', Tver (Kalinin), Charkiv (Kharkov), Moscou, Odessa, Pskov, Sankt, Peterburg (Leningrad), Tbilissi, avec un aperçu du contenu de ces publications. (N° 307 dans le Répertoire de M. Richard)

B - Une description abrégée mais précise de certaines de ces pages de garde se trouvent dans :

K. Aland, M. Welte, B. Koster, K. Junack, *Kurzgefasste Liste der griechischen Handschriften des Neuen Testaments, Zweite, neubearbeitete und ergänzte Auflage [Arbeiten zur neutestamentlichen Textforschung herausgegeben vom Institut für neutestamentliche Textforschung an der Westfälischen Wilhelms-Universität Münster/Westfalen, 1]* Berlin, 1994.

Il s'agit des M 612 807• 919• 1049 1190² 1197• 1249• 1251• 1297 1547 1624 2105• 2164 2274 3461 6953 7168• 8482 8546• (19 mss.).

C - Parmi ceux-ci, K. Treu donne une description plus détaillée des manuscrits que nous marquons d'un • dans :

[KT4] K. Treu, «Die griechischen Handschriften des Neuen Testaments in der UdSSR. Eine systematische Auswertung der Texthand-

² À propos de ce ms., non signalé par Fonkič, le Répertoire de M. Richard, dans une note, p. 285, s'interroge sur une possible confusion avec le M 1192. Le catalogue du Matenadaran ne le signale pas, en effet, comme contenant du grec. Les deux mss. sont cependant bien distincts et contiennent tous deux des pages de garde en grec.

schriften in Leningrad, Moskau, Kiev, Odessa, Tbilissi und Erevan», [Texte und Untersuchungen zur Geschichte der altchristlichen Literatur, 91] Berlin, 1966, pp. 355-358.

Une description du M 807 figure également dans :

[KT3] K. Treu, *Zu den neutestamentlichen Handschriften in der UdSSR*, dans *Forschungen und Fortschritte*, t. 38 (1964), pp. 118-122.

D - Il décrit en outre les fragments contenus dans les manuscrits 287 812 1201 et donne quelques indications sur le M 8254 qui, avarié, livre un texte très lacunaire, dans :

[KT2] K. Treu, *Fragments of Greek Patristic Manuscripts in Erevan, Kiev, and Odessa*, in « *Studia Patristica Vol. III* ». *Papers Presented to the Third International Conference on Patristic Studies held at Christ Church, Oxford, 1959. Part. I. Introductio, Editiones, Critica, Philologica. Edited by F. L. Cross* [Texte und Untersuchungen zur Geschichte der altchristlichen Literatur, 78] Berlin, 1961, p. 146-154.

E - Dans ce même article, K. Treu mentionne, comme contenant des Lectionnaires mais sans les décrire, les manuscrits 612• 915 1049• 1190• 1297• 1547• 1624• 1634 2164• 2274• 3461• 6122 6953• 8482• (le • signale ici ceux que donne K. Aland dans la Kurzgefasste Liste ...).

F - Toujours dans ce même article, l'auteur mentionne également, sans le décrire, le M 539, rappelle à nouveau le M 8254, disant que ces deux manuscrits contiennent probablement des fragments patristiques.

Pour les manuscrits restants dont il n'a pas approfondi l'étude et qui présentent des morceaux de liturgie et de la musique d'église, il donne les N° 527 591 796 1192 (+ 1251 <<vorn>>, déjà décrit en BC)1373 1424 1544 1601 7095 7371 7378 7470+7477 8163.

Ainsi, sur les 56 manuscrits contenant des fragments en grec,

•14 n'avaient été, à ce jour, examinés par aucun chercheur ou, en tout cas, n'ont fait l'objet d'aucune description : les M 586, 1038, 2168, 7517, 7643, 7650, 8615, 9456, 10382, 10385, 10616 et 10711, ainsi que le palimpseste contenu dans le M 8193 et le cryptogramme M 5554.

•Un examen approfondi a révélé que les pages de garde du M 7378 sont des palimpsestes : le manuscrit comporte une couche

inférieure également écrite en minuscules grecques.

Dans le M 8193, seule la couche inférieure est en grec (minuscules également) : la couche supérieure est écrite en arménien.

• 24 sont décrits (marqués A, B, C, D).

• 18 sont mentionnés par Treu mais restent à décrire (marqués E ou F, sans marque A, B, C, D).

Au total, 32 manuscrits contenant des fragments en grec restent à décrire.

Tableau récapitulatif des fragments dans les manuscrits

Face à chaque N° de manuscrit, la ou les lettres renvoient aux paragraphes A - F ci-dessus.

141	A	287	D	527	F
539	F	586		591	F
612	BE	796	F	807	BC
812	D	915	E	919	BC
1038		1049	BE	1190	BE
1192	F	1197	BC	1201	D
1249	BC	1251	BCF	1297	BE
1373	F	1424	F	1544	F
1547	BE	1601	F	1624	BE
1634	E	2105	BC	2164	BE
2168		2274	BE	3461	BE
5554	Cryptogramme	6122	E	6953	BE
7095	F	7168	BC	7371	F
7378 ³	F	7470	F	7477	F
7517		7643		7650	
8163	F	8193	Palimpseste	8254	D
8482	BE	8546	BC	8615	
9456		10382		10385	
10616		10711			

II. HORS DES MANUSCRITS

20 fragments détachés de la reliure des manuscrits sont conservés

³ L'examen des pages de garde de ce manuscrit a révélé qu'il s'agissait d'un palimpseste. Cette caractéristique a échappé à K. Treu [KT2].

sous enveloppe.

19 d'entre eux sont signalés par le Répertoire de Marcel Richard (1995) et dans les deux articles de Fonkič [BLF1, BLF2]. À cette série, il faut ajouter un fragment N° 20 que personne ne mentionne.

- 17 sont décrits sommairement par E. Bihain, dans l'article déjà signalé [EB]: il s'agit des fragments N° 1, 3 à 14, 16 à 19. (ils sont marqués d'un b dans la liste ci-dessous).

- Parmi ceux-ci, 3 sont décrits dans la Kurzfassste Liste de K. Aland. Il s'agit des N° 1, 7, 9. (marqués d'un A dans la liste ci-dessous).

- K. Treu décrit le fragment 12 dans :

[KT1] K. Treu, «Ein Fragment der Apostolischen Konstitutionen in Erewan», in *Vigiliae Christianae*, t. 11 (1957), pp. 208-211.

et dans l'article [KT2] déjà mentionné il décrit également les fragments 10 et 16. (Ces trois fragments décrits par Treu sont marqués d'un T dans la liste ci-dessous).

- Dans ce même article, il classe parmi les Lectionnaires les trois fragments décrits par K. Aland ainsi que les fragments 13, 14 et 17 sommairement décrits par E. Bihain. Il range parmi les ouvrages de liturgie ou dont le contenu présente de la musique d'église, les fragments 3, 4, 5, 6, 8 et 11. (Ces fragments mentionnés rapidement par Treu sont marqués d'un t dans la liste ci-dessous).

- Dans l'article [KT2] Treu dit n'avoir pas vu les fragments 2 et 15 signalés comme «lateinisch und italienisch»⁴.

K. Treu ne donne aucune indication sur les fragments 18 et 19.

Tableau récapitulatif des fragments hors manuscrits

Face à chaque N° de manuscrit, la ou les lettres renvoient aux paragraphes ci-dessus.

1	Abt	2		3	bt	4	bt
5	bt	6	bt	7	Abt	8	bt

⁴ C'est la réponse qui m'avait également été faite, en 2001, en ce qui concerne le fragment N°2 : il n'avait pas été possible de le voir, car il était alors répertorié comme « italien » et probablement classé comme tel parmi les fragments à caractères latins. En revanche le N° 15 était correctement classé dans cette série et le N° 20 figurait déjà, à cette époque, sous ce même N°, parmi les fragments grecs conservés sous enveloppe.

9	Abt	10	bT	11	bt	12	bT
13	bt	14	bt	15		16	bT
17	bt	18	b	19	b	20	

Trois fragments de cette série n'ont pas été examinés avant cette étude : les N° 2, 15 et 20.

Onze fragments, déjà sommairement décrits, méritent un examen plus approfondi : les N° 3, 4, 5, 6, 8, 11, 13, 14, 17, 18, 19.

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԳՈՀԱՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԲԱՐՈՅԱԽԱՒՍ. ՀՈՒՆԱՐԵՆ ԵՒ ՀԱՅԵՐԵՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ՝ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ
ՏԵԽՆԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՄԲ

(ԵՐՐԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 6), ՊԵՏԵՐՍ, ԼՈՒՎԵՆ, 2005, 215 էջ

(Gohar Muradyan, Physiologus: The Greek and Armenian Versions with a Study of Translation Technique [Hebrew University Armenian Studies 6], Peeters: Louvain, 2005, 215 pages)

«Բարոյախաւս»-ը (*Physiologus*) ամենից տարածված վաղ քրիստոնեական գրական երկերից էր: Գրված լինելով հունարեն, մոտավորապես մ.թ. երկրորդ դարում, երկը թարգմանվել է մի շարք լեզուներով, այդ թվում՝ հայերեն, ղպտերեն, վրացերեն, լատիներեն, հին սլավոներեն եւ ասորերեն: Մի շարք արեւմտյան լեզուներով թարգմանություններ են արվել լատիներենից: Տեքստը բաղկացած է զանազան իրական կամ երեւակայական կենդանիների հատկանիշներին ու քրիստոնյաներին՝ դրանց բերած բարոյական նպաստին նվիրված քառասունութ պատմությունից կամ առակից: Հայկական ավանդություն մեջ «Բարոյախաւս»-ի ժողովրդականության օգտին են վկայում ոչ միայն այդ գործի բազմաթիվ պահպանված ընդօրինակությունները, այլեւ միջնադարյան հայ եկեղեցու գործիչների՝ դրան հաճախակի դիմելու փաստը: Այսպի-

սով, սա հայ մտքի կարեւոր աղբյուր է՝ սկսած քրիստոնեության վաղագույն շրջանից:

Գրախոսվող գրքում Գոհար Մուրադյանը ներկայացնում է հունարեն եւ հայերեն տեքստերի վերանայված դիպլոմատիկ հրատարակություն, որի հիմքում ընկած են հայերենին ամենից մոտ հունարեն մոսկովյան P ձեռագիրը (Սինոդի գրադարան, ձեռ. № 432, 11-րդ դ.) եւ հայերեն ՄՄ2101 ձեռագիրը (1223 թ.): Այս երկու ձեռագրի, ինչպես նաեւ լատիներեն *Physiologus* -ի յ խմբագրության ու հայկական ավանդության ուրիշ վկայությունների հիման վրա Մուրադյանին հաջողվել է վերականգնել հունարեն եւ հայերեն տեքստերի ամենավաղ փուլերը: Բացի այդ, հատորում զետեղված է հայերեն տեքստի ճշգրիտ անգլերեն թարգմանությունը:

Մուրադյանն առաջինը չէ, որ դիմել է «Բարոյախաւս»-ի հայերեն թարգմանությանը: Դրա առաջին հրատարակիչը Պիտրան էր՝ 1855 թ., իսկ 1874 թ. լույս տեսավ Կայիեի ֆրանսերեն թարգմանությունը: 19-րդ դարի վերջին, ապա նաեւ 1904-ին, Ն. Մառը հայերեն առակներին նվիրված վիթխարի աշխատանք ձեռնարկեց՝ անդրադառնալով նաեւ «Բարոյախաւս»-ին եւ ի հայտ բերելով ձեռագրական նոր վկայություններ (էջ 3-6): Սակայն Մուրադյանի ուսումնասիրությունը համալրում է իր նախորդների ջանքերը: Թեեւ հիմք ձեռագիրը՝ ՄՄ 2101 (1223 թ.), նույնն է, ինչ որ Մառի 1904 թվականի հրատարակությանը, Մուրադյանի՝ վերանայված դիպլոմատիկ հրատարակության նպատակն է ստանալ հունարենին եւ այդու՛ իր վաղագույն բնագրային փուլին հնարավորինս մոտեցված հայերեն բնագիր: Ավելին, Մառի 1904 թվականի հրատարակությունը հիմնված էր յոթ ձեռագրի վրա, մինչդեռ ձեռագրային ավանդության Մուրադյանի քննության մեջ հաշվի է առնված ձեռագրերի շատ ավելի մեծ թիվ՝ Մաշտոցի անվան Մատենադարանի երեսունհինգ եւ Նրուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի յոթ ձեռագիր: Նա նաեւ ձեռագրացուցակներում, իր համար անմատչելի ձեռագրերի նկարագրության հիման վրա, գրանք ընդգրկել է իր դասակարգման մեջ:

«Բարոյախաւս»-ի բնագրային պատմությունը շատ բարդ է, եւ Գ. Մուրադյանը մեծ աշխատանք է կատարել տարբեր խմբագրությունների փոխհարաբերությունները պարզաբանելու ուղղությամբ: Նա բացահայտել է բնագրի հետեւյալ խմբագրությունները՝ բուն թարգմանությունը, որն ունի շատ կարեւոր ընթերցումներ պարունակող ենթախմբագրություն, եւ երկու ու՛ համառոտված խմբագրություններ. սրանցից վերջինը, որում առկա են միջին հայերենի լեզվական տարրեր, ունի նաեւ իրենից ածանցյալ երկու ենթախմբագրություն: Նա ներկայացնում է յուրաքանչյուր խմբագրության մանրամասն նկարագրությունը՝ քննելով ինչպես խմբագրությունների ներսում

տարբեր ձեռագրերի, այնպես էլ տարբեր խմբագրությունների միջև եղած տարբերությունները: Հայերեն եւ հունարեն տեքստերի բաղդատությունը ցույց է տալիս, որ հունարեն P ձեռագրի հայերեն թարգմանության եւ լատիներեն Y խմբագրության հարաբերություններն ավելի բարդ են, քան մինչ այդ ենթադրվող ծագումը մեկ նախօրինակից. դրանք դեռեւս հունարենում երեք անկախ զարգացումների արտացոլումն են (էջ 58):

Ի լրումն բնագրի պատմության, Գ. Մուրադյանը ձեռնարկել է թարգմանական տեխնիկայի եւ հայերեն տեքստի լեզվական առանձնահատկությունների քննություն: Ինչպես ինքն է նշում, հայերեն եւ հունարեն տեքստերը բավականաչափ մոտ են միմյանց՝ թարգմանչական հնարքների ուսումնասիրությունն արդյունավետ դարձնելու համար: Պարզվում է, որ «Բարոյախաւս»-ը պատկանում է ամենավաղ դասական թարգմանությունների թվին: Թարգմանչի կիրառած մեթոդների՝ Մուրադյանի վերլուծությունն էապես նպաստում է հունարեն տեքստերի հայերեն մեկնաբանությունների զարգացման մեր ընկալմանը:

Վերջապես, Մուրադյանը ներկայացնում է թարգմանությունը թվագրելու համոզիչ մի դրույթ: Եզնիկ Կողբացու «Բարոյախաւս»-ին ծանոթության հիման վրա Լ. Խաչիկյանը առաջարկում էր թարգմանությունը համարել 470 թվականից վաղ: Իսկ Արեւշատյանն այն տեղադրում էր հունարան թարգմանությունների առաջին խմբում: Ինչպես փաստում է Գ. Մուրադյանը, Եզնիկի «մեջբերումը» նույնական չէ «Բարոյախաւս»-ի համապատասխան հատվածի հետ (էջ 73), սակայն նա նկատել է մեկ այլ բնագրային զուգահեռ, որի դեպքում նա բացառում է, որ Եզնիկը կարող էր դիմել հունարեն *Physiologus*-ին եւ ինքնուրույն թարգմանել իրեն հետաքրքրող հատվածը: Նրա համոզմամբ՝ Եզնիկն օգտվել է հայերեն թարգմանությունից, ուրեմն այն գոյություն ուներ արդեն 5-րդ դարի կեսերին: Եզնիկի հետ այս «փոքր» զուգահեռից բխող եզրակացությունը Մուրադյանն ամրապնդել է հունարեն բնագրում հիշատակվող Ալեքսանդրյան Փամենոթ ու Պարմոթի եւ թարգմանության մեջ դրանք փոխարինող հայկական Մեհեկի ու Արեգ ամիսների հարաբերություններին վերաբերող տոմարական հաշվարկով (էջ 81-82): Ալեքսանդրյան անշարժ եւ հայկական շարժական տոմարների զուգադրումով նա ցույց է տալիս, որ նշված ամիսները համընկել են 124 տարվա ընթացքում 352 թվականից սկսած: Ընդ որում, դրանց համընկնման հավանականությունը նվազել է այդ ժամանակահատվածի ավարտին մոտենալուն զուգընթաց, իսկ 476 թվականից հետո հայկական ամիսները փոխվել են, եւ Փամենոթ ու Պարմոթի անունները Մեհեկիով ու Արեգով թարգմանելն անհնար կլիներ: Այսպիսով «Բարոյախաւս»-ը հիրավի պետք է դասել հունարենից հայերեն արված հնագույն

Թարգմանությունների շարքը:

Մուրադյանի թվարկած միջնադարյան հայ մատենագիրների մոտ «Բարոյախաւս»-ից մեջբերումներին կարող եմ ավելացնել եւս մեկը: Դիոնիսիոս Արիոպագացու հայերեն անանուն լուծմունքներից մեկում, որ ես թվագրում եմ 13-րդ դարի երկրորդ կեսով, բացատրվում է, թե ինչու է առյուծը խորհրդանշում հրեշտակներին: Այս հատվածի հիմքում Հովհան Սկյութոպոլսեցու (6-րդ դ.) հայերեն թարգմանության համապատասխան լուծմունքն է, որն իր հերթին սերում է «Բարոյախաւս»-ից: Պետք է նշել, սակայն, որ հայկական լուծմունքն իր լեզվական արտահայտությունը ավելի մոտ է հայերեն «Բարոյախաւս»-ի, քան Հովհանի տեքստին: Օրինակ՝ դրանում օգտագործվել է «ագի» բառը (հմմտ. «Բարոյախաւս», էջ 88, 2.4), մինչդեռ Հովհանի հայերեն թարգմանության մեջ ունենք «ձետ»: Սա հուշում է, որ հայ մեկնիչը պետք է, որ ծանոթ լիներ հայերեն «Բարոյախաւս»-ին:

Հնարավոր հիմնական դիտողությունն այն է, որ գիրքը կշահեր, եթե օժտված լիներ թեկուզ ամենաընդհանուր բնույթի անվանացանկով: Բացի այդ, Մուրադյանի անգլերենը երբեմն այնքան էլ հստակ չէ, եւ կան որոշ վրիպակներ: Այս դիտողությունները, սակայն, վերաբերում են մանր բացթողումներին եւ չեն նսեմացնում աշխատության արժանիքները: Հաշվի առնելով, որ Մուրադյանը գործ է ունեցել չափազանց բարդ նյութի հետ, եւ որ անգլերենն էլ նրա մայրենի լեզուն չէ, պետք է ընդունել, որ նա գերազանց աշխատանք է կատարել՝ ներկայացնելով ու վերլուծելով հսկայական քանակությամբ խճճված վկայություններ: Հատորը «Ներաշխական համալսարանի հայագիտական ուսումնասիրություններ» շարքի հերթական արժեքավոր նմուշն է:

Սերջիո ԼԱ ՊՈՐՏԱ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՉԵՌԱԳԵՐԻ ԱՃՐ 1993-2006 ԹՈՒԱԿԱՆՆԵՐԻՆ

Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրական հաւաքածուները 1993 թ. Հոկտեմբերի սկզբից ի վեր (տասներկու տարի եւ տասնմէկ ամսուայ ընթացքում) աճել են 283 միաւորով եւ 2006 թ. Օգոստոսի 31ի դրութեամբ ամփոփում են 16.989 ձեռագիր¹:

Այսպէս.

Հաւաքածուներ	Առ 30.թ.1993	Առ 31.լ.2006	Աճք
1. Հայերէն ձեռագրեր	11037	11141	104
2. Հայերէն նոր ձեռագրեր	305	367	62
3. Հայերէն հմայիլներ	428	483	55
4. Հայերէն պատառիկներ	2094	2115	21
5. Արաբատառ ձեռագրեր	2205	2214	9
6. Արաբատառ հմայիլներ	39	54	15
7. Արաբատառ պատառիկներ	130	130	-
8. Այլալեզու ձեռագրեր	331 ²	344	13
9. Այլալեզու պատառիկներ	137	141	4
Ընդամէնը	16.706	16.989	283

Որպէս շնորհակալութեան եւ երախտագիտութեան արտայայտութիւն, ստորեւ, այբբենական կարգով, ներկայացնում ենք 1993 թ. Հոկտեմբերի սկզբից մինչեւ 2006 թ. Օգոստոսի վերջ ընթացքում Մաշտոցեան Մատենադարանին ձեռագրեր նուիրաբեւոյց անձանց, հաստատութիւնների եւ նրանց նուիրած ձեռագրերի անունները՝ Մատենադարանում ձեռագրերի ստացած համարներով հանդերձ: Ձեռագրերը նուիրաբերուել են ինչպէս անձամբ նուիրատուների կողմից անմիջականորէն, այնպէս եւ «Մատենադարանի բարեկամներ» հիմնադրամի միջոցով:

¹ Անտիպ ձեռագրացուցակների հաւաքածուի (Հ^տ 1-177) միաւորների մեծ մասը եւս ձեռագրական արժէք ունի, ուստի ներքին աշխատանքային հաշիւների մէջ սա եւս համարում է ձեռագրական հաւաքածու եւ, սրա ֆանակով հանդերձ, Մատենադարանի ձեռագրական հաւաքածուների հանրագումարային քիւր լինում է 16989 + 177 = 17166: Աւետիք Գեորգեանի նուիրած արաբատառ նիւթերը (տե՛ս ստորեւ) մշակման աւարտից յետոյ բաշխուելու են արաբատառ ձեռագրերի եւ պատառիկների հաւաքածուների մէջ: Նրանց միաւորների ֆանակը կարող է լինել նաեւ 11ից աւելի, այլապէս՝ այդ 11ն աւելացնելով ներկայումս առկայ ձեռագրական նիւթերի ընդհանուր 16.989 քուին, ստանում ենք ուղիղ 17.000, իսկ Անտիպ ձեռագրացուցակների հաւաքածուի հետ միասին՝ 17.177:

² Նախորդ ցանկում «Մատենադարանի ձեռագրերի անը 1985-1993 թթ.» (Բանբեր Մատենադարանի, հտ. 16, Երևան, 1994, էջ 296) այս «331» քիւր վրիպմամբ տպուել է «341», ըստ այդմ եւ հանրագումարը՝ «16.716»:

1. Ազրաշեան Բիւզանդ եւ Մարի, Կ. Պոլիս, 2005 թ. - 1. Կարգաւորութիւն հասարակաց աղօթից, ԺԸ. դ., Հայ. ՀճՐ 11135:
2. Ազատխանեան Յովսէփ, Վալանս, Ֆրանսիա, 1996 թ. - 1. Ուսումնական տետրակներ, 1996 թ., Հայ. նոր ՀճՐ 315Ա,Բ:
3. Ազնաուր Շառլ, Փարիզ, Ֆրանսիա, 2005 թ. - 1. Շարակնոց, 1332 թ., Հայ. ՀճՐ 11130:
4. Ազնաուրեան Սոֆիա, Թիֆլիս, Վրաստան, 1996 թ. - 1. Հմայիլ, ԺԸ. դ., Հայ. հմայիլ ՀճՐ 446, 2. Հմայիլ, 1684 թ., Հայ. հմայիլ ՀճՐ 447, 3. Հմայիլ, ԺԸ. դ., Հայ. հմայիլ ՀճՐ 448, 4. Հմայիլ, ԺԸ. դ., Հայ. հմայիլ ՀճՐ 449, 5. Հմայիլ, 1760ական թթ., Հայ. հմայիլ ՀճՐ 450, 6. Հմայիլ, ԺԸ. դ., Հայ. հմայիլ ՀճՐ 451, 7. Մաշտո՞ց, ԺԸ. դ. Հայ. պտուկ. 2103, 8. Մաշտո՞ց, ԺԸ. դ. Հայ. պտուկ. 2104:
5. Աղազարեան Դանիէլ, Թեհրան, Իրան, 2004 թ. - 1. Ժողովածու, շուրջ 1771 թ., Հայ. ՀճՐ 11122, 2. Մաշտոց, 1769 թ., Հայ. ՀճՐ 11123, 3. Յայսմաուրք, ԺԷ. դ., Հայ. ՀճՐ 11125, 4. Չայնագրեալ երգեցողութիւն սրբոյ պատարագի, Ի. դ., Հայ. նոր ՀճՐ 359, Գրիգոր Աղազարեան, Եկեղեցական պատմութիւն, պրակ Բ., Ի. դ., Հայ. նոր ՀճՐ 360:
6. Ամիրխանեան Ռազմիկ, Թեհրան, Իրան, 1996 թ. - 1. Բարդուղիմէոսի Մարաղացոյ Քարոզգիրք, ԺԶ-ԺԷ. դդ., Հայ ՀճՐ 11065:
7. Այվազեան Գագիկ, Երեւան, Հայաստան, 1999 թ. - 1. Հմայիլ, ԺԹ. դ., Հայ. հմայիլ ՀճՐ 456, 2. Հմայիլ, ԺԸ. դ., Հայ. հմայիլ ՀճՐ 457:
8. Աշճեան Մեսրոպ արքեպիսկոպոս, Երեւան, Հայաստան 2002 թ. - 1. Հմայիլ, 1702 թ., Հայ. հմայիլ ՀճՐ 470:
9. Ասատրեան-Բարխուդարեան Կլարա, Երեւան, Հայաստան, 1995 թ. - 1. Մաշտո՞ց, ԺԸ. դ., Հայ. պտուկ. ՀճՐ 2102:
10. Ասլանեան Պետրոս (Շարժա, Միացեալ Արաբական էմիրութիւններ) եւ Խուդավերդեան Սարոյ (Միլան, Իտալիա), 2002 թ. - 1. նոր կտակարան, 1282 թ. Հայ. ՀճՐ 11103:
11. Աւետիքեան Վազգէն-Սէզար, Կ. Պոլիս, 2005 թ. - 1. Հմայիլ, Հայ. հմայիլ ՀճՐ 483:
12. Բաբայեան-Ֆարդը Գագիկ, Գլենդէլ, ԱՄՆ, 2006 թ. - 1. Յիշատակարան Աւետարանի, 1690 թ., Հայ. պտուկ. ՀճՐ 2114:
13. Բամպուքեան Գէորգ, Կ. Պոլիս, 1993 թ. - 1. Երգարան (հայատառ թուրքերէն), ԺԸ. դ., Հայ. ՀճՐ 11042:
14. Բարթուղեան Երանուհի, նոր Զուզա, Իրան, 2002 թ. - 1. Պատմութիւն Զարմահալ գաւառի Մամուքայ եւ այլ գիւղերի, 1985 թ., Հայ. նոր ՀճՐ 332:

15. Բեռնարդի Ալբերտ, Թեհրան, Իրան, 1997 թ. - 1. Քարոզգիրք, 1834 թ., Հայ. ՀճԲ 11072:
16. Գալուստ Կիւլպէնկեան հաստատութիւն (ի դէմս հայկական համայնքների բաժանմունքի տնօրէն Զաւէն Եկաւեանի), Լիսաբոն, Պորտուգալիա, 2002-2003 թթ., - 1. Ախտարք, ԺՔ. դ., Հայ. ՀճԲ 11104, 2. Ախտարք, ԺՔ. դ., Հայ. ՀճԲ 11105, 3. Խորհրդատետր, ԺԸ. դ., Հայ. ՀճԲ 11106, 4. Աւետարան, 1668 թ., Հայ. ՀճԲ 11109, 5. Աւետարան, ԺԷ. դ., Հայ. ՀճԲ 11110:
17. Գասպարեան Արմէն, Հալէպ, Սիրիա, 1996 թ. - 1. Անորոշ (արմաւենու տերեւների վրայ), ԺԶ. դ., Այլալեզու ձեռ. ՀճԲ 211, 2. Ախտարք, 1852 թ., Հայ. ՀճԲ 11111:
18. Գարեգին Բ. կաթողիկոս ամենայն Հայոց, 2000 թ. - 1. Աւետարան, 1659 թ., Հայ. ՀճԲ 11089, 2. Աւետարան, ԺԷ. դ., Հայ. ՀճԲ 11091:
Գերմանիկեան-Յարութիւնեան Քնարիկ - տե՛ս Կասարչեան Պարգեւ եւ Զարեհ:
19. Գէորգեան Աւետիք, Երեւան, Հայաստան, 2006 թ. - Արարատառ 11 ձեռագրից պահպանուած 121 թերթ:
20. Գէորգեան Ռիմա, Վաշինգտոն, ԱՄՆ, 2005 թ. - 1. Աւետարան, ԺԷ. դ., Հայ. ՀճԲ 11129:
- Գլադունչիկ Եւգենի - տե՛ս Հայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ:
21. Գիւլեկէշ Սարգիս, Կ.Պօլիս, Թուրքիա, 1. Բժշկարան, ԺԸ, Հայ. ՀճԲ 11138, 2. Ախտարք-Հմայիլ, 1672 թ., Հայ. ՀճԲ 11141:
22. Գնունի Վարուժան, Աթէնք, Յունաստան, 1996 թ. - 1. Հմայիլ (Եթովպերէն), ԺԸ. դ., Այլալեզու ձեռ. ՀճԲ 210:
23. Գոյնո Տադասի, Տոկիո, Ճապոնիա, 1994 թ. 1. Մանգա (Պատկերուսոյց), 1812 թ., Այլալեզու ձեռ. ՀճԲ 208:
24. Գուրունեան Գուրգէն, Սոչի, Ռուսաստան, 2004 թ. - 1. Երգարան, 1890 թ., Հայ. նոր ՀճԲ 362:
25. Գրականութեան եւ արուեստի թանգարան, Երեւան, Հայաստան, 1999 թ. - 1. Ժողովածու, 1661 թ., Հայ. ՀճԲ 11078:
26. Գրիգորեան Մարկոս, Ֆրեզնո, ԱՄՆ, 1994 թ. - 1. Տօնացոյց, ԺԷ. դ., Հայ. ՀճԲ 11047:
27. Գրիգորեան Զաւադ (Գուսան Զաւո), Վարդենիս, Հայաստան, 1994, 1996 թթ. - 1. Հաւաքածոյ, 1993-1994 թթ., Հայ. նոր ՀճԲ 310, 2. "Ընտիր երկեր" եւ "Ընտիր երգեր", 1954-1996 թթ., Հայ. նոր ՀճԲ 316Ա,Բ:
28. Եարման Արսէն, Կ.Պօլիս, Թուրքիա, 2003 թ. - 1. Աւետարան, ԺԶ. դ., Հայ. ՀճԲ 11102:

29. Եկաւեան Զաւէն, Լիսաբոն, Պորտուգալիա, 2002-2003 թթ. – Տե՛ս Գալուստ Կիւլպէնկեան հաստատութիւն:
30. Էդգարեան Յովիկ, Նոր Զուղա, Իրան, 2003 թ. - 1. Զայնագրեալ երգեցողութիւնք, ժժ. դ., Հայ. նոր. ՀճՐ 357, 2. Հմայիլ (մասն), 1829 թ., Հայ. հմայիլ ՀճՐ 473, 3. Հմայիլ (մասն), 1840 թ., Հայ. հմայիլ ՀճՐ 474, 4. Հմայիլ (մասն), ժժ. դ., Հայ. հմայիլ ՀճՐ 475, 5. Հմայիլ (մասն), ժժ. դ., Հայ. հմայիլ ՀճՐ 476, 6. Հմայիլ (մասն), ժժ. դ., Հայ. հմայիլ ՀճՐ 477, 7. Հմայիլ (եթովպերէն), Այլալեզու ձեռ. ՀճՐ 216, 8-11. Պարսկերէն շորս հմայիլ, ժժ-ժժ. դդ., Արքաո հմայիլ ՀճՐՔ 51, 52, 53, 54:
31. Թառումեան Արտաշէս, Երեւան, 1994 թ. - 1. Դեղագիրք, 1852 թ., Հայ. ՀճՐ 11046:
- Թերներ Թոնի - տե՛ս “Հայաստան-HSBC” բանկ:
32. Թլութիւնճեան Վազգէն, Բէյրութ, Լիբանան, 1996 թ. - 1. Մանրանկարներ, 1983 թ., Հայ. նոր ՀճՐ 317:
33. Լալաֆարեան Սամսոն, Երեւան, Հայաստան, 1994 թ. - 1. Աւետարան (մասն), 1644 թ., Հայ. ՀճՐ 11051, 2. Աւետարան, ժժ. դ., Հայ. պտակ ՀճՐ 2097, 3. Մանրանկար Խորհրդատետրի, շուրջ 1170 թ., Հայ. պտակ ՀճՐ 2098, 4. Աւետարան, ժժ. դ., Հայ. պտակ ՀճՐ 2099, 5. Բժշկարան, ժժ. դ., Հայ. պտակ ՀճՐ 2100, 6. Տաղք, ժժ. դ. Հայ. պտակ ՀճՐ 2101, 7. Ճաշո՞ց, ժՑ. դ. Վրաց. պտակ ՀճՐ 53, 8. Աղօթքներ, ժՁ. դ. Վրաց. պտակ ՀճՐ 54:
34. Խառատեան Սուրէն, Երեւան, Հայաստան, 2001 թ. - 1. Առակք Մխիթարայ Գօշի, ժժ. դ., Հայ. պտակ. ՀճՐ 2106:
35. Խուղավերդեան Սարոյ (Միլան, Իտալիա) - տե՛ս Ասլանեան Պետրոս:
36. Կաթողիկոսարան հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ (ի դէմս Գարեգին Բ. կաթողիկոսի), Անթիլիաս, Լիբանան, 1993 թ. - 1. Աւետարան, 1568 թ., Հայ. ՀճՐ 11038, 2. Աւետարան, 1561 թ., Հայ. ՀճՐ 11039, 3. Աւետարան, 1649 թ., Հայ. ՀճՐ 11040, 4. Մաշտոց, ժժ. դ., Հայ. ՀճՐ 11041:
37. Կասարչեան Պարգե եւ Զարեհ, Գերմանիկեան-Յարութիւնեան Քնարիկ, Լոնդոն, Անգլիա, 2005 թ. - 1. Յայսմաուրք, 1679 թ., Հայ. ՀճՐ 11131:
38. Կարապետեան Արաքս, Ժնեւ, Շուէյցարիա, 1996 թ. - 1. Անորոշ (եթովպերէն), ժժ. դ., Այլալեզու ձեռ. ՀճՐ 212:
39. Կարապետեան Սամուէլ, Երեւան, Հայաստան, 1996 թ. - 1. Հմայիլ, ժժ-Ի. դդ., Արաք. հմայիլ ՀճՐ 40:
40. Կիլիկեան Լուսին, Միշիգան, ԱՄՆ, 2000 թ. - 1. Ռոստոմ Կիլիկեան, Վասպուրականի եւ Շատախի դէպքերը, Ի. դ., Հայ. նոր ՀճՐ 331:
41. Կիւզէլեան Զարեհ, Կ. Պոլիս, 1994 թ. - 1. Բառգիրք, 1693 թ., Հայ. ՀճՐ 11048:

42. Կնեազեան Կնեազ, Երեւան, Հայաստան, 2006 թ. - 1. Հմայիլ (մասն), ժէ. դ., Հայ. պտուկ. ՀճՐ 2115:
43. Կվաշնեւսի Ալեքսանդր (Լեհաստանի նախագահ), 2001 թ. - 1. Ն. Կոպերնիկոս, Երկնաւորների պտոյտի մասին (պատճէն), Այլալեզու ձեռ. ՀճՐ 215:
44. Հախնազարեան Արմէն, Աախէն, Գերմանիա, 1994, 2004 թթ. - 1. Ղուրան, ժլ. դ., Արքտո. ձեռ. ՀճՐ 2208, 2. "Հայ թագաւորին թագին", 1893 թ., Հայ. նոր ՀճՐ 363:
45. "Հայաստան-HSBC" բանկ (ի դէմս գործադիր տնօրէն Թոնի Թերների), Երեւան, Հայաստան, 2006 թ. - 1. Ժամագիրք, ժէ. դ., Հայ. ՀճՐ 11140:
46. Հայաստանի ազգային գրադարան, Երեւան, 1997 թ. - 1. Աւետարան, 1661 թ., Հայ. ՀճՐ 11068:
47. Հայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ (ի դէմս տնօրէն Եւգենի Գլադունչիկի), Երեւան, Հայաստան: 2006 թ. - 1. Յաղագս եօթն խորհրդոց եկեղեցւոյ, 1681 թ., Հայ. ՀճՐ. 11139:
48. Հայաստանի մաքսային վարչութիւն, Երեւան, 1994, 2005 թթ. - 1. Գրաւիրներ (լատիներէն մակագրութեամբ), ժլ. դ., Այլալեզու ձեռ. ՀճՐ 207. 2. Ալիշէր Նաւոյի, Ֆարհադ եւ Շիրին, ժլ. դ., Արքտո. ձեռ. ՀճՐ 2206, 3. Աստուածաբանութիւն, ժլ. դ., Արքտո. ձեռ. ՀճՐ 2207, 3. Ախտարք, ժէ. եւ ժլ. դդ., Հայ. ՀճՐ 11136, 4. Աղօթք Հայ. պտուկ. ՀճՐ 2113:
49. Հայրապետեան Շահէ քահանայ, Երեւան, Հայաստան, 2005 թ. - 1. Հմայիլ, 1573 թ., Հայ. հմայիլ ՀճՐ 479:
50. Ղազարեան Արամ եւ Սուքիասեան Սահակ, Լիոն, Ֆրանսիա, 1997 թ. - 1. Աւետարան, ժէ. դ., Հայ. ՀճՐ 11069, 2. Տաղարան, ժլ. դ., Հայ. ՀճՐ 11070:
51. Կարլանեան Ադամ եւ Ռիտա, Սան Ֆրանցիսկո, ԱՄՆ, 2003 թ. - 1. Աւետարան, 1707 թ., Հայ. ՀճՐ 11107:
52. Մազլումեան Ալիս, Կահիրէ, Եգիպտոս. 2006 թ. - 1. Տոհմական պատմութիւն, ժլ. դ., Արքտո. ձեռ. ՀճՐ 2214:
53. Մանճրլըք Աիդա, Կ. Պոլիս, 2005 թ. - 1. Ժողովածու (չափածոյ եւ արձակ), ժլ. դ., Հայ. ՀճՐ 11132, 2. Ժողովածու (գուշակողական), ժլ. դ., Հայ. ՀճՐ 11133, 3. Ժողովածու (հայատառ թուրքերէն), ժլ. դ., Հայ. ՀճՐ 11134:
54. Մարգարեան Գրիգոր (Գրիշա), Թեհրան, Իրան, 2001 թ. - 1. Յովհաննէս Արճիշեցի, Մեկնութիւն պատարագի, 1794 թ., Հայ. ՀճՐ 11094:
55. Մարկոսեան Նշան եւ Յասմիկ, Փարիզ, Ֆրանսիա, 2004 թ. - 1. Սաղմոսարան (մասն), ժէ. դ., Հայ. ՀճՐ 11127:
56. Մինասեան Լեւոն, Նոր Զուղա, Իրան, 2002-2003 թթ. - 1. Ներսիսի Շնորհալոյ Ողբ Եղեսիոյ, ժէ. դ., Հայ. ՀճՐ 11099, 2. Շարակնոց, ժէ. դ., Հայ. ՀճՐ 11000, 3. Տաղք եւ Քերականութիւն, ժլ. դ., Հայ. ՀճՐ 11101, 4. Դաւանու-

- Թին հաւատոյ, ժ.Պ. դ., Հայ. ՀճՐ 11112, 5. Պաշտպանութիւն ուղղափառութեան, 1854 թ. Հայ. ՀճՐ 11113, 6. Քարոզք, ժ.Պ. դ. Հայ. ՀճՐ 11114, 7. Գիրք հակաճառութեան ընդդէմ մահմեդականաց, ժ.Պ. դ. Հայ. ՀճՐ 11115, 8. Պատասխանի յազագս հաւատոյ քրիստոնէից, 1668 թ, Հայ. ՀճՐ 11116, 9. Քարոզգիրք, ժ.Պ. դ., Հայ. ՀճՐ 11117, 10. Քարոզգիրք, ժ.Ը. դ., Հայ. ՀճՐ 11118, 11. Գիրք մոլութեանց, ժ.Է. դ., Հայ. ՀճՐ 11119, 12. Վասն Քաղկեդոնի ժողովին (հայատառ թուրքերէն), 1815 թ., Հայ. ՀճՐ 11120, 13. Ժողովածու, ժ.Է. դ. Հայ. ՀճՐ 11121, 14. Նուագարան հայերէն, 1892 թ., Հայ. նոր ՀճՐ 333, 15. Հայկական ձայնագրեալ երգարան, 1893-1894 թթ., Հայ. նոր ՀճՐ 334, 16. Հաւաքածոյ (մասք Ա.ժ.Գ.), ժ.Պ.-Ի. դ.դ., Հայ. նոր ՀճՐ 335, 17. Երատականք, ժ.Պ. դ., Հայ. նոր ՀճՐ 336, 18. Երգարան Տէր Կարապետ Օհանեանի, 1884 թ., Հայ. նոր ՀճՐ 337, 19. Տետր Հայաստանի աշխարհագրութեան, նոր Զուգա՞, 1901-1902 թթ. Հայ. նոր ՀճՐ 338, 20. Յիշատակումներ օր. Աշխէն Դաւթեանի, 1965-1968 թթ. Հայ. նոր ՀճՐ 339, 21. Հայոց գրականութիւնը (համառօտ ակնարկ), Ի. դ. կէս, Հայ. նոր ՀճՐ 340, 22. Աւետիք Իսահակեան, Արու լալա Մահարի, 1939 թ., Հայ. նոր ՀճՐ 341, 23. Հրամանագրերի համառօտ ժողովածու, 1891-1894 թթ., Հայ. նոր ՀճՐ 342, 24. Հայկական ձայնագրեալ արարողութիւն սրբոյ պատարագի, 1895 թ. Հայ. նոր ՀճՐ 343, 25. Քարոզգիրք, ժ.Պ. դ., Հայ. նոր ՀճՐ 344, 26. Պատմութիւն Յովսէփայ Գեղեցկի, 1847 թ. Հայ. նոր ՀճՐ 345, 27. Երգեցողութիւն սրբոյ պատարագի (ձայնագրեալ), 1900 թ., Հայ. նոր ՀճՐ 346, 28. Երգարան Մարիամ Մարկոսեանի, 1903 թ., Հայ. նոր ՀճՐ 347, 29. Քերականութիւն գործնական, ժ.Պ. դ., Հայ. նոր ՀճՐ 348, 30. Քարոզներ, ժ.Պ. դ., Հայ. նոր ՀճՐ 349, 31. Երգարան Լեւոն Մինասեանի, 1934-1960 թթ., Հայ. նոր ՀճՐ 350, 32. Յովսէփ Տէր-Ներսիսեան, Բանաստեղծութիւններ, 1940 թ., Հայ. նոր ՀճՐ 351, 33. Յովսէփ Տէր-Ներսիսեան, Գուսանական գրուածքներ, Հայ. նոր ՀճՐ 352, 34. Բառգիրք օտարազգի բառերի եւ դարձուածների, 1943-1950 թթ., Հայ. նոր ՀճՐ 353, 35. Երգարան, ժ.Պ. դ., Հայ. նոր ՀճՐ 354, 36. Եփրեմ Ասորի, Աղօթք, ժ.Պ. դ., Հայ. նոր ՀճՐ 355, 37. Ուղերձ բանասիրական, 1860 թ., Հայ. նոր ՀճՐ 356, 38. Թուղթ Յուդայի, ժ.Ա. դ., Հայ. պտոկ. ՀճՐ 2107, 39. Սաղմոսք, ժ.Է. դ., Հայ. պտոկ. ՀճՐ 2108, 40. Աստուածաբանութիւն, ժ.Պ. դ., Հայ. պտոկ. ՀճՐ 2109, 41. Հատակտորք, ժ.Պ. դ., Հայ. պտոկ. ՀճՐ 2110, 42. Մասունք եւ կարկատանք, ժ.Է-ժ.Պ. դ.դ., Հայ. պտոկ. ՀճՐ 2111, 43. Հմայիլ (մասն), ժ.Է. դ., Հայ. հմայիլ ՀճՐ 472, 44-53. Պարսկերէն 10 հմայիլ, ժ.Է-ժ.Պ. դ.դ., Արրտա հմայիլ ՀճՐՔ 41, 42, 43, 44, 45, 46, 47, 48, 49, 50:
57. Մնացականեան Գենադի, Երեւան, Հայաստան, 2005 թ. - 1. Ճառ ինչ (վրացերէն), ժ.Գ. դ., Վրաց. պտոկ. ՀճՐ 56:

58. Յակոբեան Քամարա, Երեւան, Հայաստան, 2005 թ. - 1. Ախտարք, ժՔ. դ., Հայ. նոր Հճր 365, 2. Հմայիլ (ժապաւինաձեւ), 1718 թ., Հայ. հմայիլ Հճր 481:
59. Յարութիւնեան Սերգէյ, Երեւան, Հայաստան, 1999 թ. - 1. Աղօթք, ժՔ. դ., Հայ. պտուկ Հճր 2105:
60. Յարութիւնեան (անունն անյայտ), Կոլչուզինո ք., Վլադիմիրի շրջան, Ռուսաստան, 1999 թ. - 1. Հմայիլ, 1678 թ., Հայ. հմայիլ Հճր 459:
61. Յովհաննիսեան Աւո, նոր Զուղա, Իրան եւ Երեւան, Հայաստան, 1994-1995, 2006 թթ. - 1. Տիգրան Արգարեանց, նոր Զուղայի անգիր գրականութիւնը, 1910 թ. Հայ. նոր Հճր 308, 2. Արքաների ժամանակագրութիւն, 1869 թ., Արքաո. ձեռ. Հճր 2210, 3. Մաշտոց, 1635 թ, Հայ. Հճր 11124:
62. Յովհաննիսեան Եղիա, նոր Զուղա, Իրան, 1994 թ. - 1. Ախտարք, 1789-1790 թթ., Հայ. Հճր 11043, 2. Բժշկարան, ժԸ. դ. Հայ. Հճր 11044:
63. Յովհաննիսեան Ռուբէն, Թեհրան, Իրան, 1994 թ. - 1. Հանրապետական շարժումները Պարսկաստանում, 1924 թ. Հայ. նոր Հճր 309:
64. Յովհաննիսեան Պետրոս, Երեւան, Հայաստան, 2003 թ. - 1. Բառարան, ժԸ. դ., Արքաո. ձեռ. Հճր 2213:
65. Յովհաննիսեան Սոնիկ, Թեհրան, Իրան, 1994 թ. - 1. Ֆալէ Հաֆէզ, ժՔ. դ., Արարատառ ձեռ. Հճր 2209:
66. Յովսէփեան Յովհաննէս, Երեւան, Հայաստան, 2001 թ. - 1. Ժողովածու, ժԸ. դ., Այլալեզու ձեռ. Հճր 214:
67. Նաճարեան Հայկազուն ծ. վ., էջմիածին, Հայաստան, 1996 թ. - 1. Աւետարան, 1666 թ., Հայ. Հճր 11060:
68. Ներսիսեան Միշա, Հայկաձոր դ. Շիրակի մարզի, Հայաստան, 1996 թ. - 1. Տաղարան, ժԸ. դ., Հայ. Հճր 11066:
69. Նաֆրազեան Շողեր, Թեհրան, Իրան, 1997 թ. - 1. Մաշտոց, ժԷ. դ., Հայ. Հճր 11071:
70. Չուլակեան Զուլիէտա, Երեւան, Հայաստան, 1994 թ. - 1. Շահ Իսմայիլ եւ Ասլի Քարամ, Ի. դ., Հայ. նոր Հճր 311:
71. Պարսամեան Խաժակ արքեպս., նիւ Եորք, ԱՄՆ, 1994 թ. - 1. Հմայիլ, 1830 թ., Հայ. հմայիլ Հճր 430, 2. Հմայիլ, ժԸ. դ., Հայ. հմայիլ Հճր 431, 3. Աւետարան, ժԱ. դ., Հայ. Հճր 11056:
72. Պետրոսեան Սոնա, Փարիզ, Ֆրանսիա, 1996 թ. - 1. Ժողովածու, 1719 թ., Հայ. Հճր 11067:
73. Պըտըլիկեան Յովսէփ, Կ. Պոլիս, 2000 թ. - 1. Զայնագրեալ ձայնքաղ շարահան, 1942 թ., Հայ. նոր Հճր 328, 2. Զայնագրեալ ձայնքաղ շարահան, 1942 թ., Հայ նոր Հմր 329:

74. Պօղոսեան Մարի-Լուիզ, Փարիզ, Ֆրանսիա, 2005 թ. - 1. Աւետարան ըստ Յովհաննու, Ժ. դ., Հայ. պտուկ. ՀճԲ 2112:
75. Զէքիշեան Տիրուհի, Լոս Անջելես, ԱՄՆ, 2005 թ. - 1. Հմայիլ, 1678 թ., Հայ. հմայիլ ՀճԲ 482:
76. Զանվելեան Մարատ, Առինջ, Կոտայք, Հայաստան, 1. Աւետարան, Ժէ. դար, Հայ. ՀճԲ 11137:
77. Զերմի Թոմաս, Կ. Պոլիս, 1997 թ. - 1. Պատմութիւն կաթողիկէ հայ արքեպիսկոպոսաց Մարդինի, 1898 թ., Հայ. նոր ՀճԲ 320:
78. Զոն Վարդան, Նիւ Եորք, ԱՄՆ, 1995 թ. - 1. Բժշկարան (հայատառ թուրքերէն, անգլերէնախառն), 1864 թ., Հայ. նոր ՀճԲ 312, 2. Բժշկարան (հայատառ թուրքերէն, թարգմ. անգլերէնից), 1866 թ., Հայ. նոր ձեռ. ՀճԲ 313:
79. Սարգսեան Հրաչ սարկաւազ, Երեւան, Հայաստան, 2005 թ. - 1. Եթովպերէն (բով. անորոշ), Այլալեզու ՀճԲ 217:
80. Սալաթեան Վարուժան, Դամասկոս, Սիրիա, 1994 թ. - 1. Աւետարան, ԺԳ դ., Հայ. ՀճԲ 11045:
81. Սաչըլեան Վարուժան, Բէյրութ, Լիբանան, 1994 թ. - 1. Մեկնութիւն գանձին կիյնի, ԺԸ. դ., Այլալեզու ձեռ. ՀճԲ 209:
82. Սիսակեան-Թեքէեան Անի, Մարսէլ, Ֆրանսիա, 1999 թ. - 1. Ժամագիրք, ԺԸ. դ., Հայ. ՀճԲ 11083:
83. Սողոյեան Կարլ Էւ Էմմա, Դեստրոյտ, ԱՄՆ, 1995-1996 թթ. - 1. Աւետարան, Ժէ. դ., Հայ. ՀճԲ 11057, Շարակնոց, Ժէ. դ., Հայ. ՀճԲ 11058, 3. Աւետարան, Ժէ. դ. Հայ. ՀճԲ 11059, 4. Յայսմաւուրք, Ժէ. դ., Հայ. ՀճԲ 11061, 5. Բժշկարան-Ախտարք, ԺԸ. դ., Հայ. ՀճԲ 11062, 6. Յակոբ Արիմեցի, Պատճէն տուժարի, Ժէ. դ., Հայ. ՀճԲ 11063, 7. Ախտարք, ԺԸ. դ., Հայ. ՀճԲ 11064, 8. Հմայիլ, 1734 թ. Հայ. հմայիլ ՀճԲ 443, 9. Հմայիլ, ԺԸ. դ., Հայ. հմայիլ ՀճԲ 444, 10. Հմայիլ, ԺԸ-ԺԹ. դդ., Հայ. հմայիլ ՀճԲ 445:
- Սուբիասեան Սահակ, Կրոն, Ֆրանսիա, 1997 թ. - տե՛ս Դազարեան Արամ:
84. Վարդանեան Պերճուհի, Թեհրան, Իրան, 1995 թ. - 1. Զայնագրեալ պատարագ, 1895 թ., Հայ. նոր ձեռ. ՀճԲ 314:
85. Տէր-Մինասեան Սարգիս, Թեհրան, Իրան, 2003 թ. - 1. Ժողովածու (Սանդուղք գիրք), 1660 թ., Հայ. ՀճԲ 11108:
86. Տէր-Ստեփանեան Արմէն, Երեւան, Հայաստան, 2004 թ. - 1. Լեւոն Էպէյեան, Ժողովածու (հայատառ թուրքերէն), 1950 թ., Հայ. նոր ՀճԲ 361:
87. Տէր-Ստեփանեան Գէորգ Էւ քոյրը՝ Ելենա, Երեւան, 1993 թ. - 1. Աւետարան (վրացերէն), 1788 թ., Այլալեզու ձեռ. ՀճԲ 206:
88. Քիպարեան Վոսմշապուհ (Ժան-Պիէռ), Փարիզ, Ֆրանսիա, 1993 թ. - 1. Աւետարան ըստ Մարկոսի, Ժէ. դ., Հյ. պտուկ. ՀճԲ 2096:

- 89. Քիրքրեան Գէորգ եւ Յովհաննէս, Լոնդոն, Անգլիա, 2002 թ. - 1. Աւետարան, Ժէ. դ., Հայ. Հ^մր 11098:
- 90. Օրմանջեան Յակոբ, Պլովդիւ, Բուլղարիա, 2004 թ. - 1. Հաշուեցուցակ եւ քէօթուկ Յովհաննիսեան տոհմի, Ժէ-ԺԹ. դդ., Հայ Հմր 11126:
- 86. Անունն անյայտ («մի հաւատացեալից», Շահէ քահանայ Հայրապետեանի միջոցով), Երեւան, Հայաստան, 2005 թ. - Բժշկարան, 1929 թ., Հայ. նոր Հ^մր 366, 2. Երգարան (Ջիվանի), 1920ական թթ., Հայ. նոր Հ^մր 367:

Գէորգ ՏէՐ-ՎԱՐԳԱՆԵԱՆ
Գլխաւոր ավանդապահ

1 սեպտեմբերի, 2006 թ.

ՅԱՆԿ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
(1994-2006 թ.)

1. «Բանբեր Մատենադարանի», հ. 16, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., 1 օր., 1994:
2. Շահվելու ուղի Սարհաղի հաշվետումարը. բնագիրը հրապարակման պատրաստեց և ներածությունը գրեց Շուշանիկ Խաչիկյանը, ՀՀ ԳԱ հրատ., Եր., 1994:
3. Հայելի վարուց. աշխատասիրությունը Քնարիկ Տեր-Դավթյանի, ՀՀ ԳԱ հրատ., Եր., 1994:
4. Армянские жития и мученичества V-XVII вв., перевод с древнеармянского, вступ. статья и примечания К. С. Тер-Давтян, изд. «Наури», Ер., 1994.
5. Հայրեններ. աշխատասիրությունը Ա. Շ. Մնացականյանի. «Նաիրի» հրատ, Եր., 1995:
6. Բարկէն Չուգասզեան, Գէորգ դպիր Պալատացու կեանքի եւ գործունեութեան տարեգրութիւն. «Գինդ» հրատ., Եր., 1994:
7. Армянские жития V-XV вв., перевод с древнеармянского и примечания К. С. Тер-Давтян, изд. «Наури», Ер., 1996.
8. Գիրք մակարայեցոց. քննական բնագիրը աշխատասիրութեամբ Հայկ Ամալեանի, Եր., 1998:
9. Գիրք թուոց. քննական բնագիրը աշխատասիրութեամբ Անդրանիկ Զէյթունեանի, Եր., 1999:
10. Codex Echmiadzin. Faximile. Matenadaran manuscript N 2374. Craz, 2001.
11. Codex Etschmiadzin. Kommentar. Heide und Helmut Buschhausen, mit Hilfe von Artasches Matevosyan. Akademische Druck und Verlagsanstalt. Craz/Austria. 2001.
12. Մատեան գիտութեան եւ հաւատոյ. Հնագույն հայերեն թղթյա ձեռագրի 981 թ. նմանահանություն, աշխատասիրությամբ Արտաշես Մաթևոսյանի, Եր., 1995 և 1997:
13. Վազգեն Վեհափառի Աւետարան (Ժ դար). նմանահանություն, աշխատասիրությամբ Արտաշես Մարտիրոսյանի և Տատյանա Իզմայլովայի, «Նաիրի», Եր. 2000:
14. Книга Хрий. Перевод с древнеармянского, предисловие и примечания Гоар Мурадян, Ер. 1999.

15. Թովմա Մեծուփեցի, Պատմագրություն. քննական բնագիրը և առաջաբանը Լ. Խաչիկյանի, Եր. 1999:
16. Григор Татеваци, Толкование Притчей Соломоновых. Перевод с древнеармянского, предисловие и примечания С. С. Аревшатына, изд. «Наури», Ер., 1999.
17. Գ. Տեր-Վարդանեան, Մերոպ Մագիստրոս արքեպիսկոպոս Տեր-Մովսիսեան, «Մագաղաթ», Երևան, 1999:
18. Աստղիկ Գէորգեան, Հայ մանրանկարչութեան մատենագիտութիւն, Կահիրէ, 2000:
19. Ս. Վարդանյան, Հայ բժշկության պատմություն, «Քննասեր», Եր., 2000:
20. Գիրք երկոտասան մարգարէից. քննական բնագիրը աշխատասիրութեամբ Հայկ Ամալեանի, Եր., 2001:
21. Товма Арцруни. История дома Арцруни. Перевод с древнеармянского, вступ. статья и комментарии М. Дарбинян, изд. «Наури», Ер. 2001.
22. Արամ Թովչյան, Մովսես Խորենացու հունական աղբյուրների խնդիրը, Եր., «Սարգիս Խաչենց» հրատ., 2001:
23. Երկրորդ օրէնք. քննական բնագիրը աշխատասիրութեամբ Անդրանիկ Զէյթունեանի, Եր., 2002:
24. Հրավարդ Հակոբյան, Հայոց տերունական սրբապատկերները, «Զանգակ» հրատ., Եր. 2002:
25. Պատնէն տումարի (Է-ժե դդ.). քննություն և բնագրեր աշխատասիրությամբ Զուլիետ էյնաթյանի, աշխատակցությամբ և խմբագրությամբ Գևորգ Տեր-Վարդանյանի, «Քննասէր» հրատ., Եր., 2002:
26. Յուցակ հայերեն ձեռագրաց ի Կեսարիայ, Զմիւռնիայ եւ ի շրջակայս նոցին. նկարագրեց Տրդատ եպիսկոպոս Պալեան: Կազմեց Գէորգ Տէր-Վարդանեան: Կենսամատենագիտութիւն Տրդատ եպս. Պալեանի, կազմեց Կարինէ Աւետեան, «Քննասէր» հրատ., Եր., 2002:
27. Հրաչյա Թամրազյան, Գրիգոր Նարեկացին և նորալատոնականությունը, «Նաիրի» հրատ., Եր., 2004:
28. Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան. Մատենադարանի 1173 թ. ձեռագրի նմանահանություն, «Նաիրի» հրատ., Եր., 2004:
29. Իրինա Դրամբյան, Հեթում Բ արքայի ճաշոցը, (հայերեն, ռուսերեն և անգլերեն), «Նաիրի», Եր. 2004:
30. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադրանի, Հատոր Բ (ձեռ. NN301-600), կազմեցին Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ.

- Անրաբեան, Ա. Քեռչկերեան, ցանկերը՝ Վ. Գեւորիկեանի: «Նաիրի» հրատ., եր., 2004:
31. Աստղիկ Գեորգեան, Անանուն հայ մանրանկարիչներ. մատենագիտութիւն (IX-XVII դդ.), Կահիրէ, 2005:
32. Կորյուն, Վարժ Մաշտոցի. գրաբար, աշխարհարար, ուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, հրատ. պատրաստեց Արմեն Տեր-Ստեփանյան, Երևանի Պետ. համալսարանի հրատ., եր., 2005:
33. Агатагелос, История Армении. Перевод с древнеармянского, предисловие и комментарии К. С. Тер-Давтян и С. С. Аревшатяна, изд. «Наури», Ер., 2004.
34. Դիվան հայոց պատմության. Ղուկաս Կարնեցի (1785-1800), հատոր Բ, աշխատասիրությամբ Վարդան Գրիգորյանի, եր., 2004:
35. «Армянские первоисточники о туркменских государствах Кара-Коюнлу и Ак-Коюнлу», составитель, вступ. статья и комментарии Вартана Григоряна, перевод с древнеармянского Кнарик Тер-Давтян и Ирик Антонян. Под редакцией С. Аревшатяна и А. Аширова. Ашхабад, 1998.
36. Արշակ Ալպոյանեան, Իրաքի հայերը. խմբագրեց և հրատ. պատրաստեց Վարդան Գրիգորեանը, եր. 2003:
37. Արմեն Այվազյան, Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում, եր., 2003:
38. Եղիշէ, Մեկնութիւն Արարածոց. աշխատասիրությամբ Ատն Խաչիկյանի. ծանոթագրությամբ և խմբագրությամբ Հակոբ Քյոսեյանի, անգլերեն թարգմանությամբ Մայիլ Փափազյանի, «Մագաղաթ» հրատ., եր., 2004:
39. Eghishe. Commentary on Genesis. Translated by Michael Papazian, "Magaghat" Publ. House, Erevan, 2004.
40. Մանեա-Էննա Շիրինյան, Քրիստոնեական վարդապետության անտիկ և հելլենիստական տարրերը: (Հայկական և հունական դասական ու բյուզանդական աղբյուրների բաղդատությամբ), եր., «Գոլդ Պրինտի ընդ Դիզայն» հրատ., 2005:
41. Մխիթար Այրիվանեցի, Գանձեր և տաղեր. Աշխատասիրությամբ էլեոնորա Հարությունյանի, «Նաիրի» հրատ., եր. 2005:
42. Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց. քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Մ. Հ. Դարբինյան-Մելիֆյանի. «Մագաղաթ» հրատ., եր., 2006:

43. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հատոր Գ (ձեռ. N 601-900), կազմեցին Օ. Եգանեան, Փ. Անթարեան, Յ. Քլոսեան, ցանկերը՝ Վ. Դեւրիկեանի, «Մագաղաթ» հրատ., Եր. 2006 թ.:
44. Լազարեան առևտրական ընկերութեան հաշունմատեանը (1741-1759 թթ.), աշխատասիրութեամբ Շուշանիկ Խաչիկեանի, Եր., 2006:
45. «Բանբեր Մատենադարանի», հատոր 17, «Մագաղաթ» հրատ., Եր., 2006:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հ Ո Գ Վ Ա Մ Ն Ե Ր

Ս. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ, Աստվածաշունչը եւ հայ փիլիսոփայական միտքը	5
Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ-ՄԵԼԻՔՅԱՆ, Թովմայի «Պատմութիւն տանն Արծրունեաց»-ի աղբյուրները եւ Արծրունի իշխանների ծագումնաբանության առասպելը	15
Մ. Է. ՇԻՐԻՆՅԱՆ, «Սեղրեստրոսի Վարժ»-ը եւ «Դաշանց Թուղթ»-ը.....	53
Պ. Լ. ԶԵՔԻՅԱՆ, Քննադատական դիտարկումներ եղիշէի ընծայված գրական ստեղծագործության ամբողջության վերաբերյալ.....	79
Կ. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ, Հավուց Թաոի վանքի եւ Ապիրատյան տոհմի պատմության նորահայտ տվյալներ.....	147
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Մատենադարանի 1689 թ. լեհերեն հրովարտակը եւ նրա պատմական արժեքը.....	169
Ա. ԱՅՎԱԶՅԱՆ, «Ղափանցվոց պատմության» «երրորդ» նախնական պատումը.....	177

Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Ո Ւ Մ Ն Ե Ր

Հ. ՔՅՈՍԵՅԱՆ, Սիմեոն Վարդապետի՝ Պետրոս եւ Պողոս առաքյալներին նվիրված նաոը.....	189
Օ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ, Հովհան Որոտնեցու «Հաւաքումն յայտնաբանութեան ի Փիլոնէ իմաստնոյ, որ «Յաղագս նախախնամութեան»	213
Ա. ԲԱՆՈՒԶՅԱՆ, եղիշէի Վարդանանց պատերազմի նորահայտ պատասիկները	261
Հ. ԲԱԽԶԻՆՅԱՆ, Սարգիս Բալուեցու տաղերը	289

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Խ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ, Ցուցակ ձեռագրաց Ս. Աստուածնայ եկեղեցոյ Թալասու. Հանի Պեյ Կիրիւնլեանի սեփական ձեռագիր գրեանք, (կազմեց Տրդատ վրդ. Պալեան)	313
R. V. Chétanian, Enquête sur les fragments grecs conservés au Matenadaran....	331
ՍԵՐՋԻՈ ԼԱ ՊՈՐՏԱ, Գրախոսություն	339
Գ. ՏԵՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ, Մատենադարանի ձեռագրերի անը 1993-2006 թվականներին	343
Ցանկ Մատենադարանի հրատարակությունների 1994-2006 թթ.....	353

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 17

BANBER MATENADARANI

Volume 17

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 17

*Համակարգչային շարվածքը, ձեւավորումը նույն Բարթիկյանի,
Սրբազրիչ Շողիկ Զաղոյան:*

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«Մազազաթ» հրատարակչություն

.....
ք. Երևան -375009, Մաշտոցի պող. 53: